Ռ. Հ. Բարսեղյան

Սարքերի տարածումը Հայաստանում

1

Հրատարակչություն

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք



ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

ՀԱՅ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՆԴԱՄԵՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍ

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍԱԿԱԳԵՄԻԱՅԻ



Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՅԿ
ԱՍՏՎԱԾՈՒ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Х. А. БАРСЕГЯН

РАСПРОСТРАНЕНИЕ МАРКСИЗМА В АРМЕНИИ

(1880-е годы—1904 год)

КНИГА ПЕРВАЯ

Издательство АН Армянской ССР
ЕРЕВАН 1967

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Խ.Հ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1880-ական թթ.—1904 թ.)

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ա II 41860

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1967

Խմբագրությամբ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ:

1—6—4

ԱՌԱՋԱԲԱՆ

Հիսուն տարի առաջ, 1917 թվականի հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին), «Ավրորա»-ի հրամանատարները ազդարարեցին մարդկության պատմության նոր դարաշրջանի՝ կապիտալիզմի կործանման, կոմունիզմի հաղթանակի դարաշրջանի սկիզբը: Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը իրենով նշանավորեց մարդկության ճակատագրում համաշխարհային պատմության մեջ արմատական շրջադարձ հին, կապիտալիստական աշխարհից, դեպի նոր՝ սոցիալիստական աշխարհը:

Կես դար է, ինչ սոցիալիզմի հաղթական դրոշը ծածանվում է մեր հայրենիքի վրա: Կես դար է, ինչ սովետական ժողովուրդը, կոմունիստական կուսակցության առաջնորդությամբ, կենսագործում է Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի ուսմունքը՝ մարքսիզմ-լենինիզմը, բազմապատկում մեծ Հոկտեմբերի նվաճումները:

Գիտությունը չգիտե ոչ մի քաղաքական ուսմունք, որն այնքան արագ և ծավալուն տարածված լինի աշխարհով մեկ, համակելով և խանդավառ ընդունելություն գտնելով աշխատավոր հոծ զանգվածների մոտ, ինչպես մարքսիզմ-լենինիզմը: Մարքսիզմը, որպես պրոլետարիատի գիտական աշխարհայացք, օրինական հաջորդն է այն լավագույնի, ինչ մարդկությունը ստեղծել է XIX դարում՝ հանձին գերմանական փիլիսոփայության, անգլիական քաղաքատնտեսության և ֆրանսիական սոցիալիզմի: Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը կանգ չառնելով իրենց նախորդած XVIII դարի ֆրանսիական և ապա ֆոյերբախյան մատերիալիզմի և գերմանական դասական փիլիսոփայության բարձրակետ հանդիսացող հեգելյան դիալեկտիկայի վրա, XIX դարի կեսին մեծագույն հեղաշրջում կատարեցին գիտության և հասարակական զարգացման պատմության մեջ: Նրանք առաջ շարժեցին փիլիսոփայությունը, ստեղծելով ամենահեղափոխական ու ճշմարտացի

ուսմունքը՝ դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմը: Կ. Մարքսը իր դարակազմիկ «Կապիտալ»-ով և այլ աշխատություններով Ֆ. Էնգելսի հետ միասին հիմք դրեց նոր, մարքսիստական քաղաքատնտեսությանը: Կ. Մարքսը՝ թեև իր ուսմունքն առաջին անգամ ձևակերպել է 1844 թվականին, բայց նրա ամբողջական և սիստեմատիկ շարադրանքը տվել է 1848 թվականի սկզբին լույս տեսած «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ում: Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը մարքսիզմի ծրագրային առաջին փաստաթուղթն է, գիտական կոմունիզմի մեծ ստեղծագործությունը, միջազգային պրոլետարիատի հավատո հանգանակը: Վ. Ի. Լենինը բարձր գնահատելով «Մանիֆեստ»-ի նշանակությունը, 1895 թվականին գրել է. «Նրա ոգով է ապրում և շարժվում մինչև այժմ քաղաքակիրթ աշխարհի ամբողջ կազմակերպված ու մարտնչող պրոլետարիատը» [1]:

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, իբրև ազատագրական մտքի սերմնացաններ, սոցիալիզմը ուտոպիայից վերածեցին գիտության, անհերքելիորեն ապացուցեցին կապիտալիզմի կործանման անխուսափելիությունը, մարդկության անցումը դեպի կոմունիզմ:

Մարքսիզմի տարածումը, որ քաղաքական շարժումների և հասարակական մտքի բախտորոշ իրադարձություն է, ժողովուրդների կյանքում ընթացել է տարբեր ճանապարհներով, տեղի և ժամանակի պայմանների համեմատ: Եթե իր ծագման առաջին շրջանի սկզբում մարքսիզմը սոցիալիզմի բազմաթիվ տեսակներից մեկն էր, ապա երկրորդ շրջանում (1872—1904), այն կատարյալ հաղթանակ տարավ:

XIX դարի 40-ից մինչև 90-ական թվականները, Ռուսաստանի առաջադեմ միտքը, ցարիզմի դաժան հալածանքների և վայրագ կամայականության պայմաններում, տենդագին եռանդով որոնում էր հեղափոխական տեսության ստույգ կողմնացույց: Նա այդ գտավ «...**չարչարանքով**, անլուր տանջանքների ու զոհերի, չտեսնված հեղափոխական հերոսության, անհավատալի եռանդի ու անձնվեր որոնումների, ուսման, պրակտիկայում փորձելու, հիասթափումների, ստուգման, Եվրոպայի փորձի վարգացման կեսդարյա պատմությամբ» [2]:

---

[1] **Վ. Ի. Լենին**, Երկեր, հատ. 2, էջ 12: Վ. Ի. Լենինից բերված քաղվածքները վերցված են հեղինակի Երկերի հայերեն հրատարակությունից (ռուսերեն չորրորդ հրատարակությունից թարգմանված) և համեմատված հինգերորդ հրատարակության համապատասխան տեքստի հետ: Հեղինակ:

[2] **Վ. Ի. Լենին**, Երկեր, հատ. 31, էջ 11:

Ռուսաստանում մարքսիզմի ծագման վաղ ժամանակաշրջանում ռուս մարքսիստների անդրանիկ սերունդը անհաշտ պայքար ծավալեց կիսաբակունիստական, բունտարարական, լիբերալ նարոդնիկական և այլ տարատեսակների դեմ: Հասարակական առաջավոր միտքը նախամարքսյան աշխարհայացքից թևակոխեց մարքսիստական շրջանը:

Տակավին 1882 թվականին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի ռուսերեն երկրորդ հրատարակության առաջաբանում, տալով այն արմատական փոփոխությունները, որոնք տեղի էին ունեցել «Մանիֆեստ»-ի առաջին հրատարակությունից հետո ընկած ժամանակաշրջանում, գիտական կոմունիզմի հիմնադիրներն ընդգծել են, որ «Ռուսաստանը ներկայացնում է հեղափոխական շարժման առաջավոր ջոկատը Եվրոպայում» [3]:

Պատմությունը Ռուսաստանի պրոլետարիատի առջև դրել էր ազատագրական մեծագույն միսիա: XIX դարի վերջին, XX դարի սկզբին մարքսիստական մտքի և բանվորական հեղափոխական շարժման կենտրոնը Արևմուտքից տեղափոխվելով Ռուսաստան, ավդարարեց մարքսիզմի պատմության նոր ժամանակաշրջանը: Ռուսաստանում մարքսիստական շարժումն իր ակունքներն առնելով 1880-ական թվականների սկզբներին Գ. Պլեխանովի հիմնած «Աշխատանքի ազատագրություն» խմբի, Պետերբուրգի լենինյան «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» և ապա՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության առաջին ջոկատների միջոցով տարածվեց բովանդակ Ռուսաստանում և նրա ծայրամասերում: Ռուսաստանում բանվորական շարժումը միացավ սոցիալիզմին, միահյուսվեց և անհաղթահարելի ուժ դարձավ:

Մարքսիզմի ծագումը Ռուսաստանում պատմական օրինաչափ պրոցես է: Այն արդյունք է ոչ թե Եվրոպայի հեղափոխական փորձի և մարքսիստական տեսության մեխանիկական ընդօրինակման, մարքսիստական գրքույկների թարգմանության ու տարածման, այլ ռուս հասարակական առաջավոր մտքի ինքնուրույն ու խիզախ որոնումների: Կապիտալիզմի զարգացման և բանվորական հեղափոխական շարժումների ծավալման պայմաններում ռուս առաջավոր մտածողները համոզվում էին, որ սոցիալիզմի մինչև այդ եղած բոլոր տեսությունները սնանկ են, հնացած, բացի Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքից:

---

3 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Երևան, 1952, էջ 8:

Անցյալ դարի 90-ական թվականներին Վ. Ի. Լենինի ծավալած քաղաքական-տեսական գործունեությունը, համարձակորեն առաջ բաշած գաղափարներն ու կանխատեսումները, մարքսիզմն Ռուսաստանում տարածելն ու ստեղծագործաբար կիրառելը, մարքսիզմի աղճատման փորձերի և օպորտունիզմի դեմ մղած անհաշտ հեղեղողական պայքարը, պրոլետարական կադրերին հեղափոխական ոգով դաստիարակելը, Ռուսաստանի մասսայական բանվորական շարժման նոր փորձի գիտական ընդհանրացումը մարքսիզմի զարգացման նոր, լենինյան էտապի սկիզբը դրեցին:

1880-ական թվականներից սկսած բուրժուական պետական ապարատի՝ ոստիկանության և գրաքննության խստագույն սահմանափակումների պայմաններում մարքսիստական ուսմունքի կայծերը թափանցում են նաև հայ իրականության մեջ:

Հայ պարբերական մամուլում արձագանք է գտնում առաջին ինտերնացիոնալի և նրա հոգեկավակ Փարիզի կոմունայի գործունեությունը: Եվրոպայի և Ռուսաստանի բարձրագույն դպրոցներում սովորող հայ երիտասարդությունը ձեռնարկում է մարքսիստական գրականության հայերեն առաջին հրատարակությանը:

XX դարի սկզբին երկրամասի հասարակական-քաղաքական կյանքում առաջացած տեղաշարժերը նպաստավոր պայմաններ են ստեղծում մարքսիզմի գաղափարների տարածման և բանվորական առաջին մարքսիստական խմբակների ստեղծման համար: Կովկասում դա բնավ կապված չէր պատմականորեն կալվածվորվող ազգային տերիտորիաների հետ, այլ արդյունաբերական կենտրոնների ու այլ վայրերի հետ, ուր բանվորների կոմպակտ մասսա կար: Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները սկզբից ևեթ ինտերնացիոնալ կառուցվածք ունեին:

Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումների ազդեցության տակ ձևավորվում են հայկական պրոլետարիատի առաջին հեղափոխական ջոկատները՝ «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» (1892—1895), Թիֆլիսի հայ բանվորների մարքսիստական առաջին խումբը (1898—1900), Ստ. Շահումյանի Զալալօղլու 1899 թ. մարքսիստական խմբակը, Թիֆլիսի Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը (1902), լենինյան իսկրայական սոցիալ-դեմոկրա-

տական կազմակերպությունները և այլն: Ռուսաստանի կոմունիստական շարժման արշալույսին, մեր հայրենիքի տարբեր ազգերի գավակների հետ միասին, Ի. Լալայանցը, Բ. Կնունյանցը, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ս. Տեր-Պետրոսյանը (Կամո), Ա. Մյասնիկյանը, Վ. Կասպարովը (Գասպարյան), Ս. Կասյանը (Տեր-Գասպարյան), Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Բեկզադյանը և տասնյակ ուրիշներ, դարձան լենինյան կուսակցության անձնուրաց գինվորներ: Նրանք, իրենց քաղաքական մկրտությունը ստանալով ռուսական հեղափոխական ավանդում, լենինյան հանճարով տոգորված, աշխատավոր զանգվածներին առաջնորդեցին դեպի նոր, լուսավոր ապագա:

Քաղաքական իրարամերժ հոսանքների ու կուսակցությունների գաղափարական թեժ բանավեճերի, դասակարգային լարված պայքարի բովում, հայ իրականության մեջ դարասկզբին իր ծիլերն արձակած սոցիալ-դեմոկրատական, լենինյան-իսկրայական, բոլշևիկյան կազմակերպությունների եռանդուն գործունեությամբ, մարքսիզմը աստիճանաբար տարածվում է և դառնում հասարակական և հեղափոխական մտքի առաջատար հոսանք: Հիրավի՞, հայ ժողովրդի արևելահայ հատվածի XX դարի հասարակական զարգացման գլխավոր բովանդակությունը հայ պրոլետարիատի ձևավորումն ու դասակարգային հասունացումն է, աշխատավոր զանգվածների քաղաքական ինքնագիտակցության աճը, ազգային-ազատագրական ընդվզումների, սոցիալ-դասակարգային գոտեմարտերի, բանվորական հեղափոխական և ազգարարային շարժումների ճիշտ ընկալումը, նոր աշխարհայացքի՝ գիտական սոցիալիզմի արմատավորումը, որը հանգեցրել է Հայաստանում սովետական կարգերի հաստատման, մարքս-լենինյան գաղափարների և սոցիալիստական հասարակարգի հաղթանակին, կոմունիզմի ծավալուն կառուցման համար մղվող ժամանակակից պայքարին:

Հայաստանում և հայ իրականության մեջ հեղափոխական մարքսիզմի, գիտական կոմունիզմի գաղափարների առաջին և հետևողական տարածողները, անշուշտ, եղել են լենինյանները, բոլշևիկյան կազմակերպությունները: Դա հայ մարքսիստների, լենինյան կուսակցության հեղափոխական գործունեության անկապտելի մասն է:

Մարքսիզմի տարածումը միահյուսվում է նրա գաղափարների ամուր պատվանդանի վրա առաջացած բոլշևիկյան կուսակցության պատմության հետ: Այն միաժամանակ արդյունք է հայ հասարակական մտքի զարգացման ասպարեզում տեղի ունեցած արմատական բեկման: Այստեղից էլ պարզ է, թե հայ ժողովրդի, նրա հասարակական մտքի պատմության լուսաբանության համար ինչպիսի տեսական-

քաղաքական և գիտական կարևոր նշանակություն ունի մարքսիզմի տարածումը Հայաստանում պրոբլեմի մշակումը:

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող սույն մենագրությունը, որ կազմված է երկու մասից. ա) Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1880-ական թթ.—1904 թ.) և բ) Պայքար մարքսլենինյան գաղափարների հաղթանակի համար (Մարքսիստական միտքը Հայաստանում), խնդիր ունի պատմագիտական առումով ցույց տալ հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման և զարգացման ընթացքը, հայ հասարակական, քաղաքական մտքի պատմության մեջ կատարված արմատական շրջադարձը, Վ. Ի. Լենինի ցուցումներով, բոլշևիկյան կազմակերպությունների գլխավորությամբ, հայկական պրոլետարիատի և աշխատավոր զանգվածների մղած ազատագրական, հեղափոխական պայքարը, Հայաստանում մարքսլենինյան գաղափարների տարած հաղթանակը:

Մենագրության առաջին մասում պարզաբանվում են հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման սոցիալ-տնտեսական և գաղափարական նախադրյալները՝ հայկական պրոլետարիատի առաջացումը, բանվորական շարժման առաջին քայլերը: Ռուսաստանի պրոլետարիատի դասակարգային պայքարի ֆոնի վրա քննարկվում են նարոդնիկության, «լեգալ մարքսիզմի», հայ հասարակական-քաղաքական հոսանքների ու կուսակցությունների բնութագրման հարցերը, լուսաբանվում հայ իրականության մեջ մարքսիզմի զարգացման լենինյան էտապի սկզբնաշրջանի պրոբլեմները՝ մարքսիստական խմբակների, լենինյան իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությունը, մարքսիստական գրականության հրատարակման և Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորման պատմությունը:

Հեղինակը մարքսիզմի տարածումը Հայաստանում ձևակերպման տակ հասկանում է ոչ միայն մարքսիստական գրականության հայերեն թարգմանությունները, այլև հայ հասարակական մտքի մարքսլենինյան էտապը, ուտոպիական ու մանրբուրժուական սոցիալիզմի, բուրժուական գաղափարախոսության դեմ հայ լենինյանների մղած պայքարը, մարքսիստական տեսության հարցերի զարգացումն ու պրոպագանդան, սոցիալիզմի միացումը բանվորական շարժմանը, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացումը, բանվորական հեղափոխական և ագրարային շարժումների ծավալումը և բազմաթիվ այլ հարցեր:

Հայաստանում մարքսիզմի տարածումը բացի ընդհանուր օրինա-

չափություններից ունի նաև իր առանձնահատկությունները, որոնք կապված են հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայ և արևմտահայ աշխատավոր կանգվածների հասարակական զարգացման հետ: Գաղափարական ցավատանջ պայքարի ճանապարհով է ընթացել հայ հասարակական մտքի էվոլյուցիան, մարքսիզմը թափանցել Հայաստան, ավելի ճիշտ՝ հայկական իրականություն: Խ. Աբովյանի հիասթափությունը ցարիզմից, հայ ժողովրդի և գյուղացիության ազատագրման Մ. Նալբանդյանի որոնած «ուղիղ ճանապարհը», հայ նարոդնիկության դիմադարձը դեպի լիբերալիզմը, հայ մարքսիստների ու նարոդնիկների միջև կապիտալիզմի ու ազգային-ազատագրական ուղիների հարցում եղած տարաձայնությունները, հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման պրոցեսում կատարված հեղափոխական շրջադարձը, հայ բանվորների և աշխատավոր կանգվածների դասակարգային ինքնագիտակցության համար սոցիալ-դեմոկրատական լենինյան-իսկրայական կազմակերպությունների ծավալած պայքարը դրա առհավատչյան է: Անգիտանալ հայ իրականության մեջ մարքսիզմի թափանցման պրոցեսում իրարամերժ հոսանքների միջև տեղի ունեցած սուր տարաձայնություններն ու բախումները, առանձին դեպքերում եղած խոտորումներն ու նահանջները, նշանակում է ամեն ինչ գունազարդել, հաղթարշավի վերածել ու դրանով իսկ խեղաթյուրել պատմությունը: Պատմական ելևէջների անաչառ նկարագրությունը օգնում է վերականգնելու իսկական ճշմարտությունը, ցույց տալու երկու հակոտնյա գաղափարախոսությունների՝ բուրժուական և սոցիալիստական գաղափարախոսության գոտեմարտը, ճիշտ ընկալելու մարքսիստական ավագ սերնդի հեղափոխական գործերն ու ավանդները:

Հայ ժողովուրդը, որ Սովետական Միության եղբայրական հզոր ընտանիքի իրավահավասար անդամն է, իր ազատությունն ու ազգային վերածնունդը ձեռք է բերել լենինյան կուսակցության առաջնորդությամբ: Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ Վ. Ի. Լենինը առաջինը գծեց նրա ազատագրության միակ ճիշտ և հետևողական ուղին: Իլյիչը հայ ականավոր մարքսիստների, քաղաքական-հասարակական գործիչների ջերմ բարեկամն ու դաստիարակն է: Նրանց անկուգական կյանքը կապված է Վ. Ի. Լենինի և նրա վսեմ ուսմունքի՝ լենինիզմի հետ: Երախտագետ հայ ժողովուրդը իր խոհերով ու ամբողջ սրտով Իլյիչի հետ է: Նա ակնածանքով է հիշում և իր սխրանքներում անմահացնում նրա անունն ու գործերը, մեծ Հոկտեմբերի նվաճումները:

Մեր հայրենիքի անցած հիսունամյա փառապանծ ուղին մարքսիզմ-լենինիզմի հաղթանակի մեծ տարեգրությունն է:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Գրականություն: 2. Սկզբնաղբյուրներ:

1

Թեև հրապարակի վրա մինչև այժմ չկա ամբողջական մի մենագրություն, որը աղբյուրագիտական հարուստ բազայի՝ արխիվային և հրապարակված նյութերի հիման վրա լուսաբաններ Հայաստանում մարքսիզմի տարածման պրոբլեմը, բայց առանձին աշխատություններում այս կամ այն չափով այդ նյութն արծարծվել է: Այդ իմաստով արժեքավոր փաստեր և եզրահանգումներ կան հայ առաջին լենինյանների՝ Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի և մյուսների երկերում: Լինելով մարքսիզմի զարգացման լենինյան էտապի նշանավոր գործիչներ, հեղափոխական մարքսիստներ, նրանք ոչ միայն բոցավառ կրքով պաշտպանել, տարածել և պրոպագանդել են մարքս-լենինյան ուսմունքը, այլև հանդիսացել հայ իրականության նրա առաջին պատմագիրները[1]*: Հայաստանում մարքսիզմի տարածման պատմության առաջին էջերը տակավին գրվել են դարասկզբին: Արդեն այն պահին, երբ երկրամասում իր ծիլերն էր արձակում և բողբոջում պրոլետարիատի առաջավոր ուսմունքը, հայ լենինյաններն իրենց աշխատություններում ցույց էին տալիս նրա ազատարար գերը, պրոպագանդում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի, Գ. Պլեխանովի և նրանց հետևորդների աշխատությունները: Ստ. Շահումյանը գեռևս դարասկզբին էր ցույց տալիս, որ հայ ժողո-*

---

1 Ստ. Շահումյան, *Երկեր, երեք հատորով, հատ. 1, Երևան, 1955, հատ. 2, Երևան, 1957, հատ. 3, Երևան, 1958, Նույնի, Նամակներ, Երևան, 1959,* Ս. Սպանդարյան, *Երկեր, երկու հատորով, հատ. 1, Երևան, 1959, հատ. 2, Երևան, 1959,* Б. М. Кнунянц, Избранные произведения, Ереван, 1958.

վուրդն էլ դուրս եկավ իր նահապետական, սահմանափակ «ազգային» կյանքի շրջանակներից և կապվեց լայն, լուսավոր քաղաքակիրթ աշխարհի հետ։ «Եթե մինչև այժմ,— գրել է Ստ. Շահումյանը,— մենք ունեինք առանձին անհատներ կամ ինտելիգենտական խմբեր, որոնք կրթվելով Ռուսաստանի կենտրոններում կամ Եվրոպայում, ճաշակելով եվրոպական քաղաքակրթության պտուղները, դալիս էին մեզ մոտ «քարոզիչների», «լուսավորիչների» դերով, այժմ մենք ունենք ամբողջ դասակարգեր, որոնք իրենց էությամբ, իրենց օբյեկտիվ դրությամբ, իրենց իրական կյանքով ներկայանում են որպես արդյունք նույն սոցիալ-տնտեսական պայմանների հեղաշրջման, որն ստեղծվել է նաև մեր կյանքում»[2]։ Այնուհետև նա ընդգծում է, որ սոցիալ-տնտեսական կյանքում առաջացած տեղաշարժերը հեղաշրջում են առաջացրել հասարակական գիտակցության մեջ, որ հայ ընթացիկ կյանքի նորույթը, ամենաբնորոշ գիծն այն է, որ «հայկական իրականության մեջ երևան է եկել այն աշխարհայացքը, որը կոչվում է սոցիալիզմ և որի կրողն է բանվոր դասակարգը, պրոլետարիատը»[3]։

Մեծ է հայ առաջին լենինյանների երախտիքը սոցիալիզմի գաղափարների տարածման, մարքս-լենինյան տեսության հարցերի պաշտպանության և զարգացման գործում։

Անդրկովկասում մարքսիզմի տարածման, սոցիալ-դեմոկրատական շարժման զարգացման պատմության լուսաբանման առաջին ձեռնարկողներից է Գ. Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեդ)[4]։ Նրա

---

[2] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 123։

[3] Նույն տեղում, էջ 124։

[4] См. С. Т. Аркомед, Рабочее движение и социал-демократия на Кавказе, с предисловием Г. В. Плеханова. Пер. изд. Женева, 1910: Նույնը հայերեն, Երևան, 1929։ Գ. Ղարաջյանը (1861—1936 թթ.) 1883 թվականին ավարտելով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը՝ մեկնում է արտասահման և մինչև 1889 թվականը սովորում Ժնևի համալսարանում, դալով Կովկաս զբաղվում է մանկավարժական աշխատանքով, ակտիվ մասնակցություն ցուցաբերում տեղական սոցիալ-դեմոկրատական կյանքին, 1902—1906 թվականներին կրում Մետեխի բանտի և Սիբիրի աքսորի դժանությունները, 1908—1917 թվականներին եղել է Շվեյցարիայում, իբրև քաղաքական վտարանդի, հարել է սոցիալ-դեմոկրատական մենշևիկյան ֆրակցիային, հատկապես տխուր էր նրա ուղեղիծը 1917—1920 թվականներին, երբ բացահայտ ելույթներ էր ունենում բոլշևիկների դեմ, բայց միաժամանակ նա ողջունեց Անդրկովկասում սովետական կարգերի հաստատումը, մինչև իր կյանքի վերջը հավատարիմ ծառայեց սովետական իշխանությանը։

«Բանվորական շարժումը և սոցիալ դեմոկրատիան Կովկասում» գրքում փորձ է արված շարադրելու երկրամասում սոցիալիստական շարժման պատմությունը՝ իր ձևավորումից մինչև 1904 թվականը։ «Բանվորական շարժումը...» մենագրության մտահղացումը հեղինակի մոտ առաջացել է 1903 թվականին Սիբիրի աքսորավայրում։ Հետագայում, մեկնելով արտասահման, Գ. Ղարաջյանը նախապատրաստում և 1910 թվականին Գ. Պլեխանովի առաջաբանով այն հրապարակում է ծնևում։ Ժամանակին պարբերական մամուլը, մասնավորապես ՌՍԴԲԿ Կենտկոմի օրգան «Սոցիալ դեմոկրատ»-ը, Կ. Կաուցկու խմբագրությամբ լույս տեսնող «Neue Zeit»-ը և այլն, գրվատել են գրքի արժանիքները [5]։ «Միանգամայն ժամանակին եմ համարում ընկ. Ս. Տ. Արկոմեդի գրած Կովկասի հեղափոխական շարժման պատմության դրվագի լույս ընծայումը,— գրել է Գ. Պլեխանովը։—Այս դրվագը վերականգնում է ընթերցողների հիշողության մեջ այնպիսի՞ փաստեր, այնպիսի գաղափարներ ու պայքարի այնպիսի՞ միջոցներ, որոնք առանձնապես պարզ ու հասկանալի են դարձնում «լիկվիդատորական» դատողությունների խայտառակ անհեթեթությունները... Ընկ. Ս. Տ. Արկոմեդի գիրքը ընթերցողի հիշողության մեջ վերականգնում է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ամենալավ ավանդները» [6]։

Բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ»-ը սրտանց ողջունում էր «այդ բրոշյուրի երևան գալը, որը պարունակում էր փաստական շատ նյութ և արժանի էր ամենալայն տարածման»։ Թերթը միաժամանակ «ընթերցողի ուշադրությունը հրավիրում էր Գ. Վ. Պլեխանովի հետաքրքիր առաջաբանի վրա» [7], որը բացի գրքի արժանիքները մատնացույց անելուց, ոչնչացնող քննադատության էր ենթարկում մենշևիկ-լիկվիդատորներին։

Ս. Տ. Արկոմեդի աշխատությունն, հիրավի, հագեցված է փաստական շատ նյութերով, որոնք այժմ նույնիսկ սկզբնաղբյուր-

---

5 Տե՛ս «Социал-демократ», № 15—16, 12 сентября 1910, стр. 14, «Neue Zeit», № 7, 1910։ Ուշադրավ է այն փաստը, որ Վ. Ի. Լենինը, հեղինակի իսկ վկայությամբ, ՌՍԴԲ(բ)Կ Կենտկոմի անունից նյութապես օգնել է Գ. Ղարաջյանին տպարանից ստանալու գրքի տիրաժը (տե՛ս Ս .Տ. Արկոմեդ, Բանվորական շարժումը և սոցիալ դեմոկրատիան Կովկասում, մաս Ա, 1929, էջ 3)։

6 Տե՛ս Ս. Տ. Արկոմեդ, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, մաս Ա, Երևան, 1929, էջ 20 և 30։

7 См. «Социал-демократ», № 15—16, 12 сентября 1910, стр. 14.

ների դեր կարող են կատարել։ Նրանում խոսվում է երկրամասում բանվորական շարժման ծագման, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացման, Բաքվի, Բաթումի, Բութախիի բանվորական հեղափոխական առաջին ելույթների և «Մեսամե-դասի» խմբի գործունեության մասին։ Սակայն «Բանվորական շարժումը...» աշխատությունը, իր գրական կազմերով հանդերձ, պարունակում էր լուրջ սխալներ։ Հեղինակը մասնավորապես սխալ է լուսաբանել հայ առաջին լենինյան-իսկրայական սոցիալ դեմոկրատական կազմակերպության՝ Հայ սոցիալ-դեմոկրատների միության առաջացման հարցը։ «1902 թվականի կեսերին,— գրել է Ս. Տ. Արկոմեդը,— Թիֆլիսում առաջանում է «Հայ սոցիալ-դեմոկրատների միություն» անունը կրող մի խումբակ, որը իբրև թե «անջատվել էր «Դաշնակցություն» և «Հնչակյան» ազգայնական կուսակցություններից...», բայց «զանվելով դեռևս հայ հեղափոխական (ազգայնական—Խ. Բ.) կուսակցությունների ազդեցության տակ, վերջիններիս հետ չէր կարում իր տրադիցիաները»[8] և այլն։ Ինչ խոսք, որ այս ամենը սխալ է։ Միության կազմավորման շրջանում Գ. Ղարաջյանը, գտնվելով Սիբիրի աքսորում և ապա մեկնելով արտասահման, հավանական է, հնարավորություն չէր ունեցել ավելի մոտիկից իրազեկ դառնալու ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին Բ. Կնունյանցի, Ստ. Շահումյանի, Ա. Զուրաբյանի, Ա. Խումարյանի, Ս. Խանոյանի, Դ. Շահվերդյանի, Ռ. Դաշտայանի և մյուսների ծավալած բազմաբնույթ բեղմնավոր աշխատանքին։ Նման անհիմն մեկնաբանությունները, գուցե, արդյունք են նաև այն բանի, որ ՌՍԴԲԿ II համագումարից հետո Գ. Ղարաջյանը կանգնած էր մենշևիկյան դիրքերի վրա։

Շարունակելով նախահեղափոխական շրջանում Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կնունյանցի ստեղծած լավագույն ավանդները, Ալ. Մյասնիկյանը, Ս. Կասյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Մռավյանը և ուրիշներ[9] դեռևս 20-ական թվականներին սր-

---

[8] Ս. Տ. Արկոմեդ, *Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, մաս Ա, էջ 87—88։*

[9] *Տե՛ս* Ա. Մյասնիկյան, *Հայաստանի կոմունիստական պարտիայի նշանակությունը.* (См. «Известия», ЦК КП Армении (большевиков), № 1, 25 января, 1922, Эривань, *Նույնի, Կուսակցությունները դաղութատիրության մեջ. Թիֆլիս, 1924,* Ս. Կասյան, *Հայաստանի տնտեսական, դասակարգային ստրկատիրան, Թիֆլիս, 1923, Նույնի, Սոցիֆիկները և սոցիֆիզմը, Թիֆլիս, 1928,*

դասավորեցին մարքսիզմի տարածման, հեղափոխական շարժումների և կոմունիստական կազմակերպությունների պատմության շատ հարցերի լուսաբանությունը։

Հայ հասարակական-քաղաքական հոսանքների ու կուսակցությունների, ազգային-ազատագրական շարժումների ու դասակարգային պայքարի, հայ-ռուսական հարաբերությունների, հայ հասարակական մտքի զարգացման էվոլյուցիայի բազմաթիվ պրոբլեմների գիտական մշակման տեսակետից ավանդ է մտցրել Ա. Գ. Հովհաննիսյանը։ «Նալբանդյանը և նրա ժամանակը»[10] երկհատոր մենագրությունում, պատվանդան ունենալով մարքսիզմը, հեղինակը բացում է անցյալ դարի 60-ական թվականների հայ հասարակական-քաղաքական մտքի բարդ ու խճճված ծալքերը, հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանի բազմավաստ կյանքը և գործունեությունը ներկայացնում է որպես հայ իրականության մեջ հետագայում տարածվելիք մարքսիզմի նախաշավիղ։

Հայաստանում մարքսիզմի տարածման հետ կապված առանձին հարցեր, ինչպես վերը նշեցինք, լուսաբանություն են գտել հեղափոխական շարժումների և կոմունիստական կազմակերպությունների պատմությանը նվիրված աշխատություններում, մասնավորապես «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատ-

A II 41860

Ա. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, «Նորք», գիրք երկրորդ, Երևան, 1923, հունվար-մարտ, էջ 97—140, Նույնի, Ֆ. Էնգելսի նամակը «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության նախաբանի փոխարեն։ Նկատողություն։ «Նորք», գիրք չորրորդ, 1924, էջ 125—126, Նույնի, Անցյալի ցավերից։ Էնգելսը Հայաստանի ազատագրման մասին (տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 82, 8 ապրիլի, 1926), Նույնի, Էնգելսը և հայկական հարցը, Մոսկվա, 1931, Նույնի, Դաշնակցության սոցիալական ծագումը, «Նորք», գիրք առաջին, 1927, էջ 149, Նույնի, Դաշնակցության ատիթով, Մոսկվա, 1929, Ա. Մռավյան։ Պատմության ավանդարդում ՌԿ(բ)Կ 25-ամյակի ատիթով, «Նորք», գիրք երկրորդ, 1923, էջ 193—200, Նույնի, Երբ և ինչպես է հիմնադրվել Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը. տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 114, 116, 30-ին հունիսի 1923, հետագայում, 1928 թվականին, հեղինակը մասնակի լրացումներից հետո այն տպագրել է առանձին բրոշյուրով, որը մինչև այժմ մի քանի հրատարակություն է ունեցել։

10 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, Երևան, 1955, գիրք 2, Երևան, 1956։

ՀԱՅ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

2—1647

մության ուրվագծերում»[11]։ Դրանցում գլխավորապես շոշափված են նարոդնիկության, հայ հասարակական հոսանքների բնութագրման, մարքսիստական գրականության հայերեն հրատարակու-

---

[11] «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963։ Մ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1940, Նույնի, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, Գ. Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Երևան, 1955, նույնը՝ սուսերեն, 1957, Նույնի, Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը, Երևան, 1960, Գ. Գալոյան, Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, 1961, Г. Галоян, Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии. М., 1960. Մ. Աղայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, Նույնի, Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957, Ա. Մնացականյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963, Նույնի, Կոմունիստական կուսակցությունը հայ ժողովրդի ազատարարն է, Երևան, 1964, Վ. Ուշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, 1958, Ս. Գուլանյան, Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ, Երևան, 1961, Մ. Արզումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թվականներին, Երևան, 1959, М. А. Адонц, Экономическое развитие восточной Армении. Ереван, 1957. А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в Армянской деревни, Ереван, 1959. В. Ю. Самедов, Распространение марксизма-ленинизма в Азербайджане, Баку, 1962. Л. Е. Горгиладзе. Распространение марксизма в Грузии, «Труды института философии АН Груз. ССР», том V, Тбилиси, 1954. Հ. Դարբինյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 4, Երևան, Վ. Ավետիսյան, Մի էջ Հայաստանի բանվորական շարժումների պատմությունից, Երևան, 1961, Նույնի, Մարքսիզմի տարածումը, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացումն ու բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորումը Հայաստանում (տե՛ս Հայաստանի կոմպարտիայի պատմության ուրվագծերը), В. Аветисян. Распространение марксизма в Армении (пропаганда ленинских идей). Труды объединенной научной сессии по обществ. наукам. Изд. АН Азрб. ССР. Баку, 1957, стр. 261—270. Լ. Արբանդյան, Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունից, Երևան, 1959, Դ. Մուրադյան, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Երևան, 1964, Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, Հ. Ղազարյան, Մաթևոս Մամուրյան, Երևան, 1961, Լ. Խուրշուդյան, Սիսյուռահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964, Հ. Վարդանյան, Անդրկովկասում նացիոնալիզմի դեմ բոլշևիկների մղած պայքարի պատմությունից, 1903—1920 թթ., Երևան, 1962։

թյան և առաքման, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ ռուսական երեք հեղափոխությունների ընթացքում ծավալված դասակարգային պայքարի պատմության հարցերը։ Հրապարակի վրա եղած գրականությունից միայն Վ. Ավետիսյանի «Մարքսիզմի տարածումը...»[12], *Լ. Աբրահամյանի «Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունից։ Մարքս-լենինյան թեորիայի մի քանի հարցերը հայ բոլշևիկյան մամուլում», Հ. Գաբրիելյանի «Հայ փիլիսոփայության մտքի պատմություն» (հատոր 4), Խ. Գուլանյանի «Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ» աշխատությունները և Գ. Կարապետյանի «Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1890—1904)» թեկնածուական դիսերտացիան է*[13], *անմիջականորեն առնչվում քննարկվող պրոբլեմին։*

Անուրանալի են Վ. Ավետիսյանի ջանքերը Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի հեղափոխական գործունեության լուսաբանման, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության, մասնավորապես մարքսիստական երկերի հայերեն առաջին հրատարակությունների, բանվորական հեղափոխական շարժման վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր փաստերի և եզրահանգումների գիտական շրջանառության մեջ դնելու ուղղությամբ։

Լ. Աբրահամյանը, իր իսկ խոստովանությամբ, հավակնություն չի ունեցել «սպառիչ կերպով լուսաբանելու Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման հարցը»[14]։ *«Մեր ուսումնասիրության հիմնական առարկան գիտական սոցիալիզմի գաղափարների (մարքսիզմի—Խ. Բ.) տարածման պատմությունը չէ,— գրել*

---

[12] *Տե՛ս Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1963, էջ 9—63, գլուխ առաջին, Մարքսիզմի տարածումը, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացումն ու բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորումը Հայաստանում (1890—1904 թվականներ)։ Տե՛ս նաև 1958 թվականին լույս տեսած «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր»-ում, և «Ուկրաինական և հայ ժողովուրդների պատմական կապերը և բարեկամությունը» ժողովածուում Վ. Ավետիսյանի հոդվածը, Երևան, 1961, էջ 140—153։*

[13] См. Г. А. Карапетян. Распространение марксизма в Армении (1890—1904 гг.), М., 1953, машинописная 230 стр. (см. Государственная библиотека СССР им. В. И. Ленина).

[14] *Լ. Աբրահամյան, Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունից։ Մարքս-լենինյան թեորիայի մի քանի հարցերը հայ բոլշևիկյան մամուլում, էջ 6։*

է նա,— այլ այն, թե այդ պրոցեսում ինչպես էին բարձրացվում, պրոպագանդվում և մշակվում տեսական պրոբլեմները։ Ընդ որում, այդ պրոբլեմների ամբողջությունից այստեղ առանձնացված են երկու առավել կարևորները՝ ռևոլյուցիայի և ազգային հարցերը»[15]։ Եվ, իրոք, Լ. Աբրահամյանը, հենվելով 1905—1907 թվականների բոլշևիկյան հայ պարբերական մամուլի և այլ աղբյուրների վրա, փիլիսոփայական ասպեկտով շարադրել է պրոլետարական հեղափոխության և ազգային հարցի տեսական դրվածքը ռուսական առաջին հեղափոխության տարիներին։ Աշխատության «Ներածության» մեջ հեղինակը անդրադարձել է նաև Հայաստանում մարքսիզմի տարածման նախադրյալներին։

XX դարի առաջին կեսին Հայաստանում փիլիսոփայական մտքի զարգացման, բուրժուական գաղափարախոսության դեմ մղված պայքարում որոշ հարցեր մեկնաբանված են Հ. Գաբրիելյանի «Հայ փիլիսոփայական մտքի պատմություն» գրքի չորրորդ հատորում։ Հեղինակը փաստական նյութի վերլուծությամբ ցույց է տվել հայ իրականության մեջ դարասկզբից գաղափարական կյանքում՝ փիլիսոփայության բնագավառում կատարված տեղաշարժերը, իդեալիզմի և նրա տարատեսակների դեմ մատերիալիզմի ծավալած պայքարը։ Մարքս-Լենինյան սկզբունքներով նա քննադատում է հնչակյանների, մասնավորապես Ա. Կիտուրի, Ա. Կինճյանի, Ռուբեն Խանազատի, Մանվել Պեչլարյանի, Բ. Սյունիի և այլոց կողմից ճանաչողության մեթոդի հարցում դրսևորված էկլեկտիզմը, «անտեսական մատերիալիզմից» իդեալիստական սոցիոլոգիան կատարած շրջադարձը, ազգային հարցի տեսության բնագավառում թույլ տված դանհկարանությունները։ Հ. Գաբրիելյանը մերկացնում է դաշնակցության «տեսաբանների»՝ Միքայել Վարանդյանի, Գ. Խաժակի, Վ. Նամատարդյանի, Վահան Խորենիի, Եր. Խաթանասյանի և այլոց սուբյեկտիվ իդեալիզմը, ազգային հարցի վոլյունտարիստական ըմբռնումը։ Նա գիտական քննադատության կրակն ուղղում է նաև «սպեցիֆիկների» ու նրանց համախոհների դեմ։ Հ. Գաբրիելյանի աշխատությունը որոշակի քայլ է հայ փիլիսոփայական մտքի պատմության հետազոտման գործում։

Հարցի դրվածքը փիլիսոփայական ասպեկտով է շարադրված նաև Գ. Կարապետյանի «Մարքսիզմի տարածումը Հայաստանում»

---

15 Նույն տեղում, էջ 6։

թեկնածուական դիսերտացիայում, որը 1953 թվականին հեղինակը պաշտպանել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում: Աշխատությունը կազմված է Ներածությունից, երկու գլուխներից՝ ա) Հայ և ռուս ժողովուրդների սոցիալ-տնտեսական, կուլտուր-քաղաքական կապերը, բ) Սոցիալ-դեմոկրատիայի առաջացումը Հայաստանում և Վերջաբանից: Առաջին բաժնում հեղինակը համառոտակի շարադրել է հայ ժողովրդի անցած պատմական ուղին՝ նրա կազմավորումից մինչև 1950-ական թվականները, իսկ երկրորդում՝ ընդհանուր գծերով պատմում է դարասկզբին հայ իրականության մեջ ձևավորված սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մասին: Գ. Կարապետյանի աշխատությունն իր ժամանակին, իբրև առաջին փորձ, ուշագրավ երևույթ էր:

1961 թվականին Հայպետհրատը լույս ընծայեց Խ. Գուլանյանի «Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ» աշխատությունը: Նրանում, հեղինակը մարքսիստական-տնտեսագիտական մտքի տարածման ու զարգացման պատմությունը ուսումնասիրում է Անդրկովկասում բանվորական շարժման և բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության հետ միահյուսված: Խ. Գուլանյանը, իբրև տնտեսագետ, հաջող է նկարագրում Անդրկովկասում կապիտալիզմի առաջացման, հայկական բուրժուազիայի ձևավորման պրոցեսը, բացահայտում Հայաստանում մարքսիզմի տարածման սոցիալ-տնտեսական նախադրյալները, ցույց տալիս Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի դերը մարքս-լենինյան տնտեսագիտական ուսմունքի տարածման, հայ մարքսիստական տնտեսագիտական մտքի կազմավորման գործում: Գիտական որոշակի արժեք են ներկայացնում հեղինակի կազմած վիճակագրական աղյուսակները, հայ պրոլետարիատի աճի վերաբերյալ օգտագործած փաստական նյութերը: Այս բոլորով հանդերձ, վերոհիշյալ աշխատությունը զերծ չէ թերություններից: Նյութի ձգձգվածության և փաստական անճշտությունների հետ միասին, մեկնաբանությունում տեղ են գտել ոչ հստակ ձևակերպումներ:

Մարքսիստական հայ մտքի և Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունը, ամբողջությամբ վերցրած, տակավին չի ուսումնասիրված: Եղած գրականությունը հայտնի չափով նպաստում է «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» բազմապլան պրոբլեմի գիտական մշակմանը: Դրանց արժանիքը բարձ-

բանում է նաև այն իմաստով, երբ տեսնում ենք, թե ինչպես անցյալում, բուրժուական պատմագիտության, այնպես էլ ժամանակակից սփյուռքահայ ազգայնական գաղափարներով թաթախված հեղինակների կողմից խեղաթյուրված ձևով է ներկայացվում Հայաստանում մարքսիզմի տարածման և կոմունիստական շարժման պատմությունը։ Դեռևս 1926 թվականին արտասահմանում լույս տեսավ Դավիթ Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը» գրքի երրորդ հատորը[16]*։ Խոսք չկա, որ նրանում փաստական շատ նյութ է ժողովված և պատկերավոր լեզվով շարադրված, բայց անժխտելի է, որ Դ. Անանունը ճիշտ չի ներկայացնում արևելահայերի հասարակական զարգացման ընթացքը, հայ պրոլետարիատի նախահոկտեմբերյան շրջանի պատմությունը, ամբաստանում է հայ հեռևողական մարքսիստ-լենինականներին, թմբկահարում ս.-դ. հայ կազմակերպության տնաբույս «մարքսիզմը»։*

Դ. Անանունը անտեսելով դասակարգային պայքարը, հայ կալվածատերերին ու մելիքներին համարում էր ժողովրդի «հոգատար հայրն ու փրկիչը»։ Նա թերագնահատում էր գյուղացիության դերը հասարակական կյանքում, որից էլ բխում էր նրա մեկ այլ լուրջ սխալը՝ հայ ազատագրական շարժումների ոչ ճիշտ մեկնաբանումը։ Իր աշխատության երրորդ հատորի առաջաբանում Դ. Անանունը գրել է. «Գրական զբաղմունքի ընթացքում մեզ պաշարել է մի հիմնական խնդիր — ճանաչել հայության հավաքական դեմքը»։ Եվ, իրոք, նա հայությունը փորձում է ներկայացնել որպես «հավաքական դեմք», անտեսելով դասակարգային ներհակությունները, աշխատավոր զանգվածների և հայ հեռևողական մարքսիստների մղած գաղափարական պայքարը «հավաքական հայության» անունից ճամարտակող ազգայնական գաղափարախոսության դեմ։ «Հին ճշմարտություն է, որ բանվորների ազատագրումը իրենց բանվորների գործն է,— գրել է Դ. Անանունը,— բայց նա գոյություն չունի հայ բանվորների համար»[17]*։ Նման իմաստակություններով է համեմել իր հակամարքսիստական դատողությունները Դ. Անանունը։*

Հայաստանում հեղափոխական շարժումների և կոմունիստա-

---

16 Դ. Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը, 1901—1918 թթ., հատ. 3, Վենետիկ, 1926։*

17 «Промысловый вестник», № 9, 1907.

կան կազմակերպությունների պատմության կեղծման, բոլշևիզմի նկատմամբ ունեցած ատելության առաջնությունը, մինչև այսօր էլ, իրավամբ, ոչ որի չեն զիջում դաշնակցական «տեսաբանները»։ Նրանք, առաջվա նման, ապացուցում են, թե Հայաստանում հեղափոխությունը «դրսից է ներմուծվել», որ «բանվորական հեղափոխական և ազգային շարժումներ չեն եղել», որ 1920 թվականի նոյեմբերին Հայաստանում ոչ մի ապստամբություն տեղի չի ունեցել, որ Հայաստանի բոլշևիկները «ռուսական կարմիր բանակին ապավինած, օտար սվիններով օգնությամբ են իշխանությանը տիրացել»[18], և որ դաշնակցությունը կամավոր կերպով է իշխանությունը հանձնել բոլշևիկներին։ Այսպես, Խ. Թութունճյանը գրել է. «Դաշնակցությունը (1920 թ.) դեկտեմբերի 1-ի համաձայնագրով իշխանությունը հանձնեց ոչ թե բանվոր-գյուղացիական իշխանությանը»... այլ Խորհրդային Ռուսաստանի սոցիալիստական ֆեդերատիվ հանրապետության լիազոր դեսպան Լեգրանին»[19]։ Ուրիշ խոսքով նա ուզում է ասել, որ հայ իրականության մեջ, բացի դաշնակցությունից, չկար քաղաքական որևէ այլ ուժ, որ իր ձեռքը վերցներ ժողովրդի բախտը, նրա ճակատագրի տնօրինումը։ Այդ միտքը ավելի բացահայտ ձևով է բանաձևել Սիմոն Վրացյանը։ Խոսելով 1918—1920 թվականներին Հայաստանում իշխանության գլուխ անցած դաշնակցության մասին, նա հայտարարել է. «Ամբողջ ազգը դաշնակցական էր։ Տկար ժողովուրդ մը, երբ մեկ տեսակ մտածողներ ուներ, բոլորը կհետևեն մեկ ուղղության»[20]։ Նման դեպքերում, ասում են, մեկնաբանություններն ավելորդ են։ Բայց ինչպե՞ս չասել, որ դա բացարձակ կեղծիք է։ Վատ կիրքը սահման չի ճանաչում։ Մի ուրիշ անգամ նա ասել է. «Փաստորեն մինչև 1919 թիվը Հայաստանում բոլշևիկյան կազ-

---

18 Տե՛ս Ս. Վրացյան, *Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև*, Պեյրութ, 1953։ Այն առաջին անգամ լույս է տեսել «Հայրենիք»-ի 1940 թ. դեկտեմբերյան և 1941 թ. հունվար-փետրվարյան համարներում, դրրով՝ 1941 թ.։ «Ճակատամարտ» թերթը 1922 թվականի հունվարին գրել է. «Հայաստանում... ո՛չ ապստամբություն տեղի ունեցավ, ո՛չ հեղափոխություն, ո՛չ դասակարգային կռիվ, և ո՛չ ալ պրոլետարական հեղափոխություն, այլ մի պարզ գրավում օտար բանակի կողմից» (տե՛ս «Ճակատամարտ», 14 հունվարի, 1922 թ., Կոստանդնուպոլիս)։

19 Տե՛ս «Արարատ», 31 մայիսի, 1957։

20 Տե՛ս «Զարթոնք», № 219 (7038), 16 հունիսի 1961, «Զրույց Սիմոն Վրացյանի հետ»։ (Արտատպված է «Հուսարեր»-ի 1961 թվականի № 291-ից)։

մակերպություն գոյություն չուներ... Հայաստանում բոլշևիկներ չկային»[21]։

Դաշնակցական անհեռատես գրչակները, ինչպես երևում է, պատմությունից ոչ մի դաս չեն քաղել։ Նրանք տիրացուի պես շարունակում են կրկնել միևնույն, սկզբից ևեթ մերժված, իրենց սին հերյուրանքները։ Պատմական փաստերը գլխովին շրջված, հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը նենգափոխված է Մ. Վարանդյանի (Միք. Հովհաննիսյանի), Ս. Վրացյանի, Վ. Նավասարդյանի, Ռ. Դարբինյանի (Ա. Չիլինգարյան), Գ. Լազյանի, Խ. Թուրմանճյանի և նրանց ձայնափողերի գործերում[22]։

Ասենք ուրիշ ի՞նչ կարելի է սպասել։ Չէ՞ որ դաշնակցությունը գինվորագրվել է միջազգային իմպերիալիզմին։ Իսկ «Իմպերիալիզմի գաղափարական-բաղաքական գլխավոր գենը,— ասված է ՍՄԿԿ ծրագրում, նացիոնալիզմն է, որի հիմնական բովանդակությունն է սոցիալիստական կարգերը գրպարտելը, կոմունիստական պարտիաների բաղաքականությունն ու նպատակները, մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը կեղծելը»[23]։

Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունը սխալ են մեկնաբանում մանրբուրժուական հնչակյան կուսակցության գաղափարախոսները։ Դա նրանց մոտ հին հիվանդություն է, որը ժառանգաբար Սապահ-Գուլյանի միջոցով անցել է Արսեն Կիտուրին, Սիրվարդին (Եղիա Գրիգորյան), Ժիրայր Նայրան, Հ. Գանդրանան (Վանիկ) և այլոց։ Ավելի մեծ սխալ չկա, քան նրանց հոդվածներում, մասնավորապես հնչակյան կուսակցության պատ-

---

21 Ս. Վրացյան. *Հայաստանը բոլշևիկյան մարքի և թուրքական սալի միջև*, Բեյրութ, 1953, էջ 44, 46 և այլն։

22 Մ. Վարանդյան. *Համայնավարություն և համաշխարհային հեղափոխություն*, Կահիրե, 1926, Ս. Վրացյան. *Հայաստանի հանրապետություն*, Փարիզ, նույնի, *Հայաստանը բոլշևիկյան մարքի և թուրքական սալի միջև (երկրորդ տպագրություն)*, Բեյրութ, 1953։ Վ. Նավասարդյան. *Բոլշևիզմը և դաշնակցությունը*, Կահիրե, 1949, Ռ. Դարբինյան. *Բոլշևիզմը և Հայաստանը*, 1920, Երևան, Գ. Լազյան. *Հայաստանը և հայ դատը (վավերագրեր)*, Կահիրե, 1946, նույնի, *Հեղափոխական դեմքեր*, Կահիրե, 1945, նույնի, *Հայաստանը և հայ դատը սուս հարաբերությունների լույսի տակ*, Կահիրե, 1957, Խ. Թուրմանճյան. *Բյուրոյական անանկությունը և իրավ դաշնակցության ուղին*, Բեյրութ, 1959, և այլն։ Սույն մենագրության համապատասխան բաժիններում ավելի հանգամանալից է տրվում վերոհիշյալ գրականության քննադատությունը։

23 ՍՄԿԿ ծրագիրը, Երևան, 1961, էջ 63։

մության[24] մեջ տեղ գտած այն անտարակույս պնդումները, թե՝ «Ռուսաստանում մարքսիզմի առաջին տարածողները հնչակյաններն են եղել, որ «ՌՍԴԲՊ-ի առաջարկ գալուց 20 տարի առաջ հնչակյանները մարքսիզմ են բարոզել»: «Տակավին իրենք (հայ կոմունիստները—Խ. Բ.) չէին ծնած,— գրել է Մ. Արևելքցին,— երբ հնչակյան մամուլը Արևելքի մեջ կմարոզեր բնկերավարական գաղափարները»[25]:

Նրանք ապմկում են, թե՝ «Հայ բաղաբական միտքը երևան եկավ 1887 թ. հնչակյան կուսակցության կազմությամբ»[26], որ «հնչակյան կուսակցության կազմությամբ հայությունը փակեց իր հին պատմության վերջին էջը և բացեց իր պատմության առաջին էջը»[27], որ համայնավարությունը և հնչակյանությունը գաղափարական և սկզբունքային նույն խորքն ու նույն կառույցն ունեն»[28], թե՝ «տարբերություն չկա համայնավարներուն և հնչակյաններուն միջև» և Սովետական Հայաստանը «հնչակյանների իդեալներուն իրականացումն է»[29], որ «հնչակյան կուսակցության բոլոր գործիչները, օրինակ, Ժիրայր, Մուրադ, Փարամազ և այլն, ոչ միայն վար չեն մնար, այլ գերազանց են բոլորին, դժվար թե անոնց հավասարը գտնվի պոլշևիկ կուսակցության մեջ»[30] և այլն:

Նման մոլորություններով են լցված Արսեն Կիտուրի «Սրբազրեցեք հանուն արդարության»[31], Հ. Գանգրունու «Հայ գիրքը և տպագրությունը...» և այլ հոդվածներ[32]: Հնչակյան գաղափարա-

---

24 Պատմություն Ս. Դ. հնչակյան կուսակցության, Ա հատոր, Բեյրութ, 1963:

25 Մ. Արևելքցի, Պատմության համար, «Երիտասարդ Հայաստան», № 45, 19 հոկտեմբերի 1956 թ.:

26 Տե՛ս «Արարատ», № 5920 (244), 29 օգոստոսի 1961:

27 Սիրվարդ, Ութսուն տարի պատանեին վրա, «Երիտասարդ Հայաստան», № 49, 1957:

28 Համայնավարությունը և մենք (խմբագրական), «Արարատ», 14 սեպտեմբերի, 1952:

29 Վ. Ուլենցի, Համայնավարություն, հնչակյանություն և նեոնիականություն (երկու հասարակական բաղաբականություն), «Արարատ», 27 սեպտեմբերի, 6 հոկտեմբերի, 1953:

30 Սիրվարդ, Արդար ընկալություն, «Երիտասարդ Հայաստան», 25 փետրվարի, 1955:

31 Արսեն Կիտուր, Սրբազրեցեք հանուն արդարության, «Արարատ», հոկտեմբեր-նոյեմբեր, 1956:

32 Հ. Գանգրունի, Հայ գիրքը և տպագրությունը (շահեկան վկայություններ հնչակյան գործի մասին), «Արարատ», № 6547, 14 սեպտեմբերի, 1964:

խոսների մոտ բացակայում է ղեկավար քննադատական միտքը, իշխում է սուբյեկտիվիզմը, մանկական անհոգությունը տեսության և պատմության կարևորագույն հանգույցների մեկնաբանման ընթացքում:

2

Ինչ խոսք, որ մարքսիզմի տարածումը Հայաստանում թեմայի պատմագիտական պլանով լուսաբանումը կապված է դժվարությունների հետ: Հարկավոր է հաշվի առնել, որ մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը մարքսիստական գաղափարների տարածումը գերազանցապես կատարվել է ընդհատակյա, անլեգալ, ցարիզմի և նրա տեղական գործակալների ժանդարմական, ոստիկանական, գրաքննչական, դատական, հետախուզական և այլ օրգանների դաժան հսկողության ու հալածանքների պայմաններում: Հեղափոխական գործիչները անձնվիրաբար մաքառելով և հաղթահարելով այդ արգելքները, գտնվում էին կոնսպիրացիոն դրության մեջ, մեծ մասամբ գործում էին կուսակցական ծածկանվամբ, երրորդ անձնավորության միջոցով, ոստիկանության հետապնդումներից ազատ մնալու համար հաճախ փոխադրվում էին մի տեղից մյուսը, էմիգրացիայի դիմում: Ընդհատակում ծավալած կուսակցական-քաղաքական աշխատանքն այդ օրերին դժվար էր գրի առնել: Յուրաքանչյուր ձեռնարկման, յուրաքանչյուր հեղափոխական խոսքի համար շարժումը կարող էր ձախողվել: Դա է պատճառը, որ հավաստի քիչ վավերագրեր են պահպանվել մեծ սխրանքների մասին: Իսկ ժանդարմական ու դատական գործերում գտնվող նյութերը, պարզ է, որ չեն կարող օբյեկտիվորեն արտացոլել իրական վիճակը: Ուստի նման դեպքերում հարկավոր է այդ նյութերը օգտագործել չափազանց զգույշ, համբերատար բաղդատել և վերլուծել:

Սույն մենագրության մեթոդոլոգիական հիմքում դրված են Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի, կոմունիստական կուսակցության ականավոր գործիչների աշխատությունները: Բացի հավատարիմ լենինյաններ Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի և ուրիշ հեղափոխական գործիչների երկերից, օգտվել ենք հրապարակի վրա եղած գրա-

կանությունից, երկրի կուսակցական-պետական արխիվների համապատասխան նյութերից, վավերագրերից, ժամանակի պարբերական մամուլից, փաստաթղթերի և հիշողությունների ժողովածուներից։ Հետազոտվել և շրջանառության մեջ են դրվել հայ ականավոր հեղափոխականներ Ի. Լալայանցի, Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Վ. Կասպարովի, Ա. Մյասնիկյանի, Ս. Կասյանի, Ա. Խումարյանի, Ս. Խանոյանի, Ա. Հովհաննիսյանի, Ս. Լուկաշինի, Ա. Բեկզադյանի, Ս. Տեր-Գաբրիելյանի, Ա. Մռավյանի, Բ. Ղարիբջանյանի և այլոց աշխատություններում զարգացրած մարքս-լենինյան տեսության հարցերը։ Աղբյուրագիտական բազա են հանդիսացել բոլշևիկյան պարբերականները («Իսկրա», «Վպերյոդ», «Պրոլետարի», «Պրավդա», «Պրոլետարիատ», «Պրոլետարիատի կռիվը», «Կայծ» և տասնյակ ուրիշ թերթեր), կուսակցական վավերագրերի և հին բոլշևիկների հիշողությունների ժողովածուները, ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվի (ЦПА ИМЛ при ЦК КПСС), նրա հայկական, վրացական, ադրբեջանական, ուկրաինական ֆիլիալների, Մոսկվայի և Լենինգրադի Հոկտեմբերյան հեղափոխության կենտրոնական պետական արխիվի (ЦГАОР СССР), Մոսկվայի, Բաքվի, Թբիլիսիի, Երևանի պետական կենտրոնական պատմական արխիվների, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Մոսկվայի գրադարանների նյութերը։

ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվում և գրադարանում օգտվել ենք անլեգալ գրականության, պատմա-կուսակցական փաստաթղթերի, «Իսկրա», «Վպերյոդ», «Պրոլետարի», «Պրավդա» բոլշևիկյան թերթերի խմբագրությունների ֆոնդերից, ուսումնասիրել ենք նույն արխիվի տարբեր ֆոնդերի ավելի քան 1200 գործ, որոնք արժեքավոր նյութեր են պարունակում Հայաստանում հեղափոխական և կոմունիստական շարժման, Վ. Ի. Լենինի հետ հայ հասարակական-քաղաքական գործիչների ունեցած կապերի, հայ իրականության մեջ մարքսիզմի թափանցման, Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի դաղափարների տարածման և նրա հաղթանակի համար ծավալված պայքարի վերաբերյալ։

ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվում ուսումնասիրել ենք Վ. Ի. Լենինի (ֆ. 1), Ա. Մյասնիկյանի (ֆ. 4), Ս. Սպանդարյանի (ֆ. 6), Ստ.

Շահումյանի (ֆ. 7), Ա. Մռավյանի (ֆ. 10), Ա. Միկոյանի (ֆ. 11), Մ. Միրաքյանի (ֆ. 18), Վ. Ավանեսովի (ֆ. 19), Ս. Մարտիկյանի (ֆ. 24), Մ. Մելիքյանի (ֆ. 27), Բ. Կնունյանցի (ֆ. 48), Ս. Տեր-Գաբրիելյանի (ֆ. 49), Բ. Ղարիբջանյանի (ֆ. 50), ինչպես նաև Ալեքսանդրապոլի (ֆ. 30), Կարսի, Կաղզվանի, Սարիղամիշի (ֆ. 31), Դիլիջանի, Իջևանի, Շամշադինի (ֆ. 32), Զանգեզուրի, Ղարաբաղի (ֆ. 34), Նոր Բայազետի (ֆ. 36), և այլ ֆոնդերի նյութերը:

Հարուստ են նույն արխիվի պատմական ֆոնդի (ֆ. 33) հավաքածուները, որոնք պատմում են XIX դարի երկրորդ կեսի, XX դարի սկզբի հայ ազատագրական, հեղափոխական շարժումների, հասարակական-քաղաքական հոսանքների ու կուսակցությունների գործունեության, պրոլետարական հեղափոխության անվեհեր մարտիկների մասին: Ուշագրավ տեղեկություններ կան հնչակյանների (ֆ. 45), դաշնակցության (ֆ. 47), սոցիֆիկների (ֆ. 41), հայ էսեռական կազմակերպության (ֆ. 43), ինչպես նաև Դավիթ Անանունի (ֆ. 44), Բաշխի Իշխանյանի (ֆ. 42), Գարեգին Կուզիկյանի (ֆ. 46) և այլոց արխիվներում ֆոնդագրված նյութերում:

Կարևոր աղբյուր են ծառայել Մոսկվայի, Լենինգրադի, Երևանի, պետական կենտրոնական պատմական արխիվների, մասնավորապես իրեղեն ապացույցների, հեղափոխական կոչերի և թռուցիկների հավաքածուները, ժամանակակիցների հուշագրությունները, գրաքննչական կոմիտեների զեկուցագրերը: Մոսկվայի պետական կենտրոնական պատմական արխիվում գտնվող ոստիկանության դեպարտամենտի հատուկ բաժնի ֆոնդի (ДПОО) 1890—1917 թվականների գործերը այս կամ այն չափով բացահայտում են Արևելյան Հայաստանի այն ժամանակվա սոցիալ-տնտեսական վիճակը, հայ իրականության մեջ ծավալված հակացարական, ժողովրդական շարժումները, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությունը, Ռուսաստանի պրոլետարիատի և բոլշևիկյան կազմակերպությունների հետ Անդրկովկասի հեղափոխական մարքսիստական կազմակերպությունների ունեցած կապերը: ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի վրացական ֆիլիալի Ստ. Շահումյանի, Ա. Մյասնիկյանի, պրոկլամացիաների ֆոնդերի, ազրբեջանական ֆիլիալի Ստ. Շահումյանի, հին բոլշևիկների հիշողությունների, Տոմսկի պետական կենտրոնական արխիվի (ֆ. 1, ց. 3, գ. 194, գ. 558), ՍՍՀՄ արտաքին հարաբերությունների արխիվի (ֆ. 4, կապոց 321, գ. 54837, գ. 56822, Չիչերինի և Բ. Լեգրանի ֆոնդերը) և այլ արխիվների նյութերը նույնպես օգտագործվել են մեր կողմից:

Ա. Ռ Ա. Ջ Ի Ն Բ Ա. Ժ Ի Ն

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ, XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. Արևելյան Հայաստանը հայ ժողովրդի համախմբման օջախ: 2. Երկու քաղաքականություն, երկու նպատակադիր: 3. Ռուսաստանի դերը արևելահայերի տնտեսական զարգացման գործում:

1

1828 թվականի փետրվարի 10-ին (22) Թուրքմենչայում Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված երկկողմանի հաշտության պայմանագրով[1] *ավարտվեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը: Ռուսական զորքերի հաղթանակի շնորհիվ Ռուսիայի սահմանները տարածվելով հասան մինչև Արաքսի ափերը:*

Արևելյան Հայաստանն ազատագրվեց իրանական-խանական տիրապետությունից և միացավ Ռուսաստանին, իսկ Արևմտյան Հայաստանը առաջվա նման մնաց սուլթանական Թուրքիայի արյունոտ կրնկի տակ:

Միայն 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո էր, որ Կարսի մարզը, որ բաղկացած էր Կարսի, Սարիղամիշի, Արդահանի և Օլթիի օկրուգներից, միացվեց Ռուսաստանին: XIX դարի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից հետո հայ ժողովրդի երկփեղկված կյանքը պատմականորեն զարգացավ երկու տարբեր ուղիներով:

Հայտնի է, որ Հայաստանում XV դարից բյուզանդական ավերակների վրա հաստատված թուրք-իրանական բռնապետական

---

[1] *Տե՛ս* «Договоры России с Востоком, политические и торговые». Собрал и издал Т. Юзофович, СПб, 1869, стр.214—222.

վարչական, ազգային ու կրոնական դաժան խարականությունը, փաշաների ու խանների կամայականությունները ժողովրդին հասցրել էին անկման վիճակի եզրին: Բնաջնջվում էր պատմության բառուգիներով անցած, վերը կրծքին, ոգը շուրթերին, կատարկված հայ ժողովուրդը: Ոչնչանում էին նրա նյութական ու մշակութային գանձերը: Թուրք-իրանական ֆեոդալական անտանության ծայրաստիճան հետամնացությունը, միջնադարյան ֆեոդալական հողային հարաբերությունները, դիշատիչ հարկային սիստեմը և հարատև ավերիչ պատերազմները անասելի չափով քայքայել էին Հայաստանի տնտեսությունը:

Հայ ժողովրդին սպառնում էր ձուլման և բռնագաղթերի վտանգը: Ռուսաստանի հետ միացման շնորհիվ Արևելյան Հայաստանն ազատագրվեց ֆեոդալական բարբարոսության կապանքներից, դարձավ հայ ժողովրդի ի մի հավաքման, կոնսոլիդացման օջախ, թեև չավարտվեց կոնսոլիդացման պրոցեսը, քանի որ հայ ժողովրդի արևմտահայ հատվածը քաղաքականապես պոկված էր Արևելյան Հայաստանից: Թուրքմենչայի ու Ադրիանապոլի պայմանագրերի ուժով 1828—1830 թվականներին և հետագա տարիներին, Պարսկաստանից և Թուրքիայից զանգվածային հոսանքով հայերը գաղթում էին Արևելյան Հայաստան: Պարսկաստանից գաղթած հայերը ամենից առաջ բնակություն էին հաստատում Երևանի, Ղափանի, Մեղրու, Նախիջևանի, Օրդուբադի և այլ գավառներում, իսկ Թուրքիայից եկածները՝ Ալեքսանդրապոլում, Շիրակում, Լոռի-Փամբակում, Թալինում, Սևանի ավազանում, Ախալքալաքում, Ախալցխայում և այլուր: Օրավուր աճում էր հայ ժողովրդի բնօրրանի՝ որբացած Այրարատյան երկրի հայ բնակչությունը: 1828—1831 թվականների ներգաղթի ընթացքում Պարսկաստանից Արևելյան Հայաստան (Հայկական մարզ[2]) գաղթեց ավելի քան 40 հազար մարդ[3], որից 1828 թվականին՝ 35 560

---

2 Հայկական մարզը ստեղծվել է 1828 թվականի մարտի 21-ի հրամանագրով՝ Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների ու Օրդուբադի գավառի հողերից: 1840 թվականի ապրիլի 10-ից Հայկական մարզը իբրև վարչական ինքնուրույն միավոր դադարեց գոյություն ունենալուց: Անդրկովկասում մտցվեց վարչական նոր բաժանում (տես. В. Н. Иваненко, Гражданское управление Закавказья, Тифлис, 1901).

3 В. Потте, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том IV, вып. 4, СПб, 1877, стр. 732. Պրոֆ. Հ. Ե. Թումանյանի հաշվումներով 45 հազար: Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1965, էջ 43:

մարդ[4]։ Հաղթահարելով թուրքական իշխանությունների հարուցած անասելի արգելքները, 1829—1831 թվականներին Արևմտյան Հայաստանից՝ Էրզրումից, Մուշից, Վանից և այլ վայրերից ներգաղթից մոտ 100 հազար հայ[5]։ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու նախօրյակին ապագա հայկական մարզում կար ընդամենը 25 151 հայ, իսկ երեք տարի անց, 1831 թվականին՝ 82 377։ Նկատենք, որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց առաջ պարսկական դաժան տիրապետության հետևանքով հայ ժողովուրդը ոչ միայն տնտեսական անասելի հարստահարման էր ենթարկվում, բնաջնջվում, այլև զանգվածային տեղահանության։ Ամայացված հայկական շեներում բնակեցվում էին քոչվոր ու ռազմամոլ թուրքական ցեղերը։ Հայկական բնաշխարհի յուրատեսակ հայազրկումը տարվում էր որոշակի քաղաքական նկատառումներով։ Երևանի Սարդարը ծրագրված ձևով Թալինի մհալում բնակեցրել էր այրումի ու թաշանչի քոչվոր ցեղերին՝ Կաֆար-խանի գլխավորությամբ։ Պատմական Արագածոտնում և Ապարանի հարավում տեղավորել էր սեյիդլի և ախսախլի ցեղերին՝ Իսմայիլ-խանի առաջնորդությամբ։ Դարաչիչակի ու Գյոկչայի (Սևանի ավազան) մհալներում շարունակում էր բնակեցնել կարափափախներին՝ Իսմայիլ-խանի, Մարդան-խանի և Նազի-խանի առաջնորդությամբ[6]։

1829—1832 թվականներին անցկացրած «կամերալ ցուցակագրությունները» համոզում են, որ եթե Ռուսաստանի հետ Հայաստանի միացումը ձգձգվեր և մի երկու տասնամյակ էլ շարունակվեր հայերի արտագաղթը և քոչվոր ցեղերի հայկական բնօրրանում վերաբնակեցումը, ապա Արևելյան Հայաստանի պարսկական տիրապետության տակ գտնվող մասում հայության աննշան բեկորներ կմնային։ Այնինչ, միացումից հետո պատկերը փոխվեց։

---

4 См. А. Бадалян, Население Армении со времени присоединения ее к России и до наших дней, «Известия АН Арм. ССР», № 5, 1953, стр. 51.

5 Տե՛ս Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայը, մաս Ա, էջ 442։ Նույնը տե՛ս Ղ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, էջ 400, 402—403։ Ուրիշ աղբյուրների վկայությամբ 1828—1831 թվականներին Անդրկովկաս են գաղթել 105 հազար հայ, այդ թվում Պարսկաստանից 40 հազար, իսկ Թուրքիայից 65 հազար շունչ (см. Собрание актов, относящихся к образованию истории армянского народа, М., 1838, ч. II, стр. 184).

6 Տե՛ս Խ. Հ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917), Երևան, 1959, էջ 12։

Արևելյան Հայաստանի բնակչության ազգային կազմը էապես փոխվեց հօգուտ հայ տարրի ուժեղացման։ Հայ բնակչության տեսակարար կշիռը 1827 թվականի 40 տոկոսից 1831 թվականին հասավ 69,3 տոկոսի[7]։

Հայկական մարզի բնակչության պատկերն ըստ բնակավայրերի հետևյալն էր.

	Միացման նախօրյակին	Միացումից հետո (1831 թ.)
Երևան քաղաքում	2369 մարդ	4132 մարդ
Նախիջևան քաղաքում	719 մարդ	1829 մարդ
Օրդուբադ քաղաքում	—	182 մարդ
Երևանի մահալներում	17704 մարդ	61148 մարդ
Նախիջևանի մահալներում . . .	1971 մարդ	11540 մարդ
Օրդուբադի մահալներում	2388 մարդ	3546 մարդ
Ընդամենը . . .	25151 մարդ	82377 մարդ[8]

Հետագա տարիներին բնական աճի և պարբերաբար շարունակվող ներգաղթերի շնորհիվ, Արևելյան Հայաստանում և ռուսական կայսրության տերիտորիայի վրա հայերը ավելի մեծ չափով աճեցին։ Արդեն 1897 թվականին Կովկասում կար 1 148 673 հայ, իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռուսական կայսրության մեջ ապրող հայերի քանակն անցավ երկու միլիոն հիսուն հազարից[9]։

Հայաստանի բնակչությունը 1831 թվականին կազմել է 161 747, 1873 թվականին՝ 496 140, 1886 թվականին՝ 635 833, իսկ 1897 թվականին՝ 797 855 մարդ[10]։

1900 թվականի հունվարի մեկի դրությամբ Արևելյան Հայաստանի բնակչությունը կազմել է 811 330 մարդ, 1800 թվականի 100 հազարի դիմաց, այսինքն՝ մեկ հարյուրամյակում աճել է 8,1 անգամ, այն ժամանակ, երբ Ռուսաստանում նույն ժամա-

---

7 Տե՛ս Հ. Ե. Թումանյան, Հայաստանի նախասովետական շրջանի ազգաբնակչությունը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1965, էջ 43)։

8 Տե՛ս Ս.. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք, մաս Ա., էջ 337—338, նույնը, Ղ. Գրիգորյան, հիշ. աշխատ., էջ 403։

9 Տե՛ս Ղ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, էջ 404։

10 «Населенные пункты и население Армянской ССР». Статистичес-

նակաշրջանում բնակչությունը աճել է 3,5 անգամ[11]: Հայաստանում բնակչության խտությունը 1800 թ. 1 քառ. կմ-ի վրա կազմում էր 3,2 մարդ, 1886 թվականին՝ 20,8, իսկ 1900 թվականին՝ 26,3 մարդ[12]:

Նկատելի չափով աճում է Երևան քաղաքի բնակչությունը: 1880 թվականին Երևանն ունեցել է 12 449 բնակիչ, 1886 թվականին՝ 14 738, իսկ 1897 թվականին՝ 29 006 բնակիչ[13]: Բացի հայերից, Երևանում, Արևելյան Հայաստանի մյուս քաղաքներում և շրջաններում ապրում էին նաև ռուսներ, աղրբեջանցիներ, վրացիներ և այլ ազգերի մարդիկ: Երևան քաղաքում 1897 թվականին կար 12 523 հայ, 12 516 մահմեդական, 3207 ռուս, 190 լեհ, 64 գերմանացի[14]: Հայաստանում մեծ քանակությամբ այլազգիներ կային հատկապես երկաթուղու շինարարության ժամանակ: Անդրկովկասում կապիտալիզմի ըստ լայնության զարգացումը խորապես փոխեց երկրամասի սոցիալ-տնտեսական կյանքը, որի արտահայտություններից մեկն էլ բնակչության աճն էր:

Արևելյան Հայաստանի և Կարսի միացումը Ռուսաստանին, թեև բխում էր ցարիզմի ռազմա-քաղաքական, գաղութատիրական շահերից, հայ ժողովրդին չփրկեց (չէր էլ կարող փրկել) սոցիալական ու ազգային ճնշումից, այնուամենայնիվ, պատմական առաջադիմական ակտ էր: Քանի որ հակառակ ցարիզմի ազգային-գաղութային ռեակցիոն քաղաքականության, պատմության դիալեկտիկան այնպիսին էր, որ միացումից հետո ռուսահայերի սոցիալ-տնտեսական, քաղաքական-հասարակական, գաղափարական-մշակութային կյանքում առաջացան նոր տեղաշարժեր: «Ռուսաստանի քաղաքական հովանին,— գրել է Ա. Հովհաննիսյանը,— մի հայտնի չափով նպաստավոր էր երկրամասի արտադրողական

кой сборник, Ереван, 1962, стр. 55.

11 П. А. Хромов, Экономическое развитие России в XIX—XX вв., стр. 238.

12 См. М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении, стр. 508.

13 См. Кавказский календарь на 1885 г., отд. III, стр. 218, 1896, отд. V, стр. 56—57, ЦГИА СССР в Ленинграде, ф. 1288, д. 81, лл. 57—58. Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., ст. XXI, Эриванской губернии, 1905, стр. 1: *Շոպենի տվյալներով 1831 թվականին եղել է 164 450 մարդ։* См. И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения к Российской империи.

14 См. ЦГИА СССР в Ленинграде, ф. 1288, оп. 25, д. 81, л. 57—58.

ուժերի զարգացման և նրա ժողովուրդների ընդհանուր կենսամակարդակի բարձրացման համար։ Դրան մեծապես նպաստում էր Իրանին ու Թուրքիային վճարվող անսահման տուրքերի ու հարկերի և տեղական մանր ֆեոդալական իշխանությունների ու մաքսային ներքին սահմանների վերացումը, քաղաքական կենտրոնացված վարչության կազմակերպումը, դրամաշրջանառության և համապետական չափի ու կշռի միասնությունը, տեղական ճանապարհների ու կամուրջների կառուցումները և այլն»[15]։

2

Պատմական այլ ճակատագիր ունեցան արևմտահայերը։ Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը (Վ. Ի. Լենինի բնորոշմամբ Թուրքական Նիկոլայ 2-րդը)[16], իր հայատյացությամբ գերազանցում էր նախորդներին։ Նրա հրամանով արևմտահայ դրական լեզվում գործածությունից հանվում էին «ազատություն», «հավասարություն», «սահմանադրություն», «առաջադիմություն» և դրանց հոմանիշ բառերը, դաժան հալածանք սկսվում քրիստոնյա հպատակների, առանձնապես հայերի նկատմամբ։ «Համիդիի գնդերը», որ համալրված էին խավարամիտ քուրդ ցեղապետների համհարզներով, ասպատակում էին Արևմտյան Հայաստանում, հաշվեհարդար տեսնում խաղաղ բնակչության հետ։

Միայն 1879—1882 թվականներին, Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերում բնակեցվել է ավելի քան 78,645 թուրք[17]։ Սուլթանական Թուրքիան դաժան կերպով խեղդում էր հայերի ազատագրական շարժումները, ֆեոդալական կապանքներով կաշկանդում գյուղացիությանը, բռնագրավում նրանց հողերը, խոչընդոտում երկրի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացմանը[18]։

Անասելի ծանր էր հայերի դրությունը Արևմտյան Հայաս-

---

15 Ա. Գ. Հովհաննիսյան, XIX դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1965, էջ 55)։

16 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 216։

17 См. ЦГИА Груз. ССР, ф. 545, оп. 1, д. 2070.

18 Արևմտյան Հայաստանի այդ ժամանակաշրջանի ծանր կացության և ազատագրական շարժումների մասին տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, Ա. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևելյան Հայաստանում

տանում։ Սուլթանների ավանդական ջարդարարական արյունոտ քաղաքականությունը հասցրեց այն բանին, որ միայն 1895—1896 թվականներին Թուրքերը սրի քաշեցին մոտ 300 հազար հայերի, իսկ 1909 թվականին՝ 30 հազար։ Աբդուլ Համիդի հայաջինջ սպանդը շարունակեցին և ավարտեցին երիտթուրքերը՝ Ենվերը, Թալեաթը և Ջեմալը։ Քաղաքակիրթ Եվրոպայի աչքերի առջև առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերը ձեռնարկեցին բովանդակ Արևմտյան Հայաստանը մեկընդմիշտ կլանելու, «Հայաստանը առանց հայերի» դիվային ծրագիրն իրականացնելու։ Նրանք կանխիբալական մեթոդներով, զանգվածային տեղահանության ենթարկեցին հայերին, պակեցին հայրենի օջախներից, մարելով հայրենի ծխանը, քշեցին Միջագետքի անապատները... Թուրք վանդալները հայերի նկատմամբ ձեռք էին առնում ազամարդկանց կանանցից առանձնացնելու, երեխաներին ծնողներից զրկելու և մահմեդականացնելու, ժողովրդի բնական աճը դադարեցնելու մեթոդներ։ 1915 թվականին, իմպերիալիզմի դարաշրջանում, երիտթուրքերը ոչնչացրին ավելի քան մեկ և կես միլիոն հայեր[19]։ Հայ ժողովրդի մեծ եղեռնն էր դա, արևմտահայության ազգասպանությունը (գենոցիդը)։

(1856—1914), Երևան, 1960, Е. К. Саркисов, Аграрная политика Османского правительства в Западной Армении во второй половине XIX в., Ереван, 1957, его же, Экспансионистическая политика османского правительства в Закавказье накануне и в годы первой мировой войны. Ереван, 1962. Ե. Գ. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ենթադափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, Հ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965. Ռ. Փ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը XIX դ. 70—80-ական թթ.), Երևան, 1965։

19 Թուրքիայում եղած հայերի մասին աղբյուրները տարբեր տվյալներ են հաղորդում։ Թուրքական պաշտոնական «սալնամեների» վկայությամբ 1870-ական թվականներին Թուրքիայում կար 3 600 հազար հայ (см. Мкртич бей Даднан. Армяне Оттоманской империи, Тифлис, 1878, стр. 8)։ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հաղորդած ոչ լրիվ տվյալներով 1878 թ. Թուրքիայում եղել է 2 660 հազար հայ, որից 1 630 հազարը Արևմտյան Հայաստանում (տե՛ս «Արարատ», 1914, էջ 130). «Ամենուն տարեցույցի» տվյալներով, առաջին համաշխարհային պատերազմից առաջ, Արևմտյան Հայաստանում կար 2 միլիոն 26 հազար հայ։ Թուրքիայում եղած հայերի մասին հանգամանորեն տե՛ս Ս. Համբարյան, Ազգարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, էջ 43—44, Հ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, էջ 351—355։

Արևմտյան Հայաստանը խոպան ամայացավ։
Երկու քաղաքականություն, հայ ժողովրդի երկու ճակատագիր։

3

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո ռուսահայերը ազատվեցին ոչ միայն զանգվածային ջարդերից, այլև ձեռք բերեցին տնտեսությունն ու մշակույթը զարգացնելու նոր պայմաններ և, որ գլխավորն է, իրենց բախտը հավերժ կապեցին ռուս ժողովրդի ու նրա առաջավոր ջոկատի՝ ռուսական պրոլետարիատի ազատագրական պայքարին։

XIX դարի երկրորդ քառորդում Ռուսաստանն ապրում էր ճորտատիրական հարաբերությունների սրվող ու խորացող ճգնաժամի, ֆեոդալիզմի քայքայման, նրա ծոցում կապիտալիստական հարաբերությունների զարգացման երկունք։ Ռուսաստանում ստեղծվել էր հեղափոխական իրադրություն։ Ճորտատիրական իրավունքը վերացնելու վերաբերյալ 1861 թվականի փետրվարի 19-ի Ալեքսանդր 2-րդի ստորագրած մանիֆեստը, մինչև 1870-ական թվականները նրան հաջորդած մյուս ռեֆորմները, հավաստում էին Ռուսաստանի թևակոխելը հասարակական զարգացման նոր շրջան՝ ֆեոդալա-ճորտատիրական հարաբերություններից կապիտալիզմին անցման շրջանը։

Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը, ինչպես ցույց է տվել Վ. Ի. Լենինը, ընթանում էր ոչ միայն տեղական շուկայի ընդլայնման հաշվին, հատկապես Ռուսաստանի եվրոպական մասում, այլև ազգային ծայրամասերի ներքին գաղութացման ու տնտեսական յուրացման ուղիով։ Ռուսաստանում կապիտալիզմը զարգանում էր և՛ խորությամբ, և՛ լայնությամբ։ Ցարիզմը գաղութային քաղաքականություն էր վարում Կովկասում, այդ թվում և Հայաստանում։ «Ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ,— գրել է Վ. Ի. Լենինը,— համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում։ Հետռեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր բնակավորված կամ լեռնականներով բնակավորված երկիրը, որ համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից

դուրս էր կանգնած, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի ու ծխախոտի ֆաբրիկանտների երկիր...»[20]։

Կապիտալիզմի բնույթն այնպիսին է, որ այն շարունակաբար իր տիրապետության ոլորտը ընդլայնում է, նորանոր երկրներ գաղութացնում և ոչ-կապիտալիստական հին երկրները համաշխարհային տնտեսության հորձանուտը նետում։ Ռուսական կապիտալիզմը, զարգանալով լայնությամբ, Հայաստանը ներգրավեց իր ոլորտի մեջ, վերածեց ներքին շուկայի։ Իսկ, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «...ներքին շուկայի զարգացման աստիճանը, դա կապիտալիզմի զարգացման աստիճանն է երկրում»[21]։

Ռուսաստանում, այդ թվում՝ Անդրկովկասում, արդյունաբերության զարգացմանը մեծ չափով նպաստել է երկաթուղու շինարարությունը, շոգեքարշ մեքենաների կիրառումը արդյունաբերության մեջ և նահապետական ինքնամփոփվածության հաղթահարումը։ XIX դարի 90-ական թվականներից սկսած Ռուսաստանը, բացի եվրոպական մասից, երկաթուղային ինտենսիվ շինարարություն է ծավալում երկրի խորքերում և ծայրամասերում։ Մինչև 1861 թվականը Ռուսաստանն ուներ 1500 վերստ երկաթգիծ։ Դա շատ քիչ էր։ Հետռեֆորմյան շրջանում՝ 1861—1890 թվականներին, այսինքն՝ 30 տարվա ընթացքում, կառուցվեց ևս 25 605 վերստ և ընդհանուր տարածությունը հասավ 27 093 վերստի։ 1891—1900 թվականներին կառուցվում է 21 782 վերստ երկաթգիծ, իսկ 1901—1905 թվականներին՝ 7 255 վերստ։

Այսպիսով, Ռուսաստանը, ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին ուներ 56 130 վերստ երկաթգիծ։

Ղրիմի պատերազմից հետո, 1865 թվականից սկսած մինչև դարավերջը, Անդրկովկասում կառուցվում են ստրատեգիական, քաղաքական ու տնտեսական նշանակություն ունեցող երկաթգծեր։ 1872 թվականին բացվում է Թիֆլիս—Փոթի երկաթգիծը։ Մինչև 1871 թվականի օգոստոսի 14-ը բացվել էր Փոթի—Կվերիլի գծամասը։ 1883 թվականի մայիսին ավարտվում է երկրամասի գլխավոր մագիստրալի՝ Բաթում—Թիֆլիս—Բաքու երկաթուղու կառուցումը, որը իրար հետ միացրեց ոչ միայն Սև և Կասպից ծովերը, այլև Անդրկովկասի արդյունաբերական երեք խոշոր կենտ-

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 771։

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 67։

ռոնները։ Նույն թվականին շահագործման է հանձնվում Սամարեղի—Բաթումի երկաթգիծը։ 1899 թվականի դեկտեմբերին ավարտվում է Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս երկաթուղու շինարարությունը, իսկ 1902 թվականին՝ Ալեքսանդրապոլ—Երևան գիծը[22]*։ Բացի այս բոլորից, կառուցվում են Բորժոմի, Ճիաթուրի, Քութաիսի, Տկվիբուլի և այլ երկաթուղային գծերը։ 1903 թվականին Անդրկովկասում երկաթուղային գծերի երկարությունը հասավ մինչև 1400 կիլոմետրի։ Դարասկզբին երկրամասը երկաթգծով կապվեց Ռուսաստանի եվրոպական մասի հետ։*

Զարգանում է խճուղային ճանապարհաշինությունը։ Հնամյա շրջաններն ու հումքի աղբյուրները կապվում են կայարանների հետ և դրանով իսկ պայմաններ են ստեղծվում արդյունաբերության և առևտրի արագ աճման համար։

Երկաթուղային ցանցի շինարարությամբ երկրամասում դրությունը որոշակիորեն փոխվում է։ Տնտեսական իսկական շրջադարձ է կատարվում, ամուր հիմք ստեղծվում նոր տնտեսաձևի զարգացման համար։ Օրավուր աճում է ուղևորների փոխադրումը երկաթուղով։ Այսպես՝

1874	*թվականին*	*Անդրկովկասում*	*փոխադրվել է*	*367 793 մարդ,*
1884	»	»	»	*758 192 մարդ,*
1895	»	»	»	*1 800 309 մարդ,*
1904	»	»	»	*7 116 526 մարդ*[23]*։*

---

22 См. **П. И. Лященко,** История народного хозяйства СССР, том II, изд. IV, М., 1956, стр. 120. **К. Орагвеладзе,** К вопросу о развитии капитализма в сельском хозяйстве Закавказья. История классовой борьбы в Закавказье. Сб. статьей. ЗКУ. Тбилиси. 1930. стр. 43. **Г. С. Хачатуров,** Размещение транспорта, М., 1939, стр. 431—456. *Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղու կանոնավոր երթևեկությունը բացվել է 1902 թվականի դեկտեմբերի 5-ին (տե՛ս «Մշակ», 1902, № 273, 11 դեկտեմբերի, նույնը, Թ. Հակոբյան. Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), Երևան, 1963, էջ 104—105։ Միայն Սարգսյան—Երևան գծամասի վրա ծախսվել է 24 միլիոն ոսկի ռուբլի, այդ թվում՝ Ալեքսանդրապոլ—Երևան հատվածի վրա մոտ 12 միլիոն ռուբլի (տե՛ս Ս. Օհանյան, Երկաթուղային տրանսպորտը նախասովետական Հայաստանում։ Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. XXX, էջ 257)։*

23 **К. Орагвелидзе,** К вопросу о развитие капитализма в сельском хозяйстве Закавказья. См. История классовой борьбы в Закавказье, сборник статей, книга первая, ЗКУ — 1930, стр. 44.

Նույն ձևով աճում է ապրանքների փոխադրումը՝ հեռավոր շուկաներում վաճառքի համար։ 1874 թվականին երկաթուղով փոխադրված 9 843 291 փութ ապրանքի դիմաց, 10 տարի անց, 1884 թվականին փոխադրվել է 61 102 367 փութ ապրանք [24]։

Վ. Ի. Լենինը, իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ, անդրադառնալով ծայրամասերի նշանակությանը, ցույց է տվել, որ Կովկասի «տնտեսական նվաճումը» Ռուսաստանի կողմից շատ ավելի ուշ է կատարվել, քան քաղաքականը» [25]։ Տնտեսական այդ նվաճումը սկսվեց հետռեֆորմյան շրջանում։

Հետռեֆորմյան շրջանում Կովկասը մի կողմից գաղութացման էր ենթարկվում, իսկ մյուս կողմից՝ տեղի էր ունենում բնիկ դարավոր «տնայնագործական» արհեստների արատավորումը։ Ռուսաստանի կողմից տնտեսական ներթափանցումը շարունակվեց մինչև դարասկիզբը։

XIX դարի վերջերից երկրամասում սկսում են ուժեղ թափով աճել արդյունաբերությունը և առևտուրը։ Շատ արագ էր զարգանում նավթային Բաքուն, դառնալով Անդրկովկասի արդյունաբերական և բանվորական խոշոր կենտրոն։ 1870-ական թվականներից, Բաքուն ամենաարագ դառնում է նավթարդյունաբերության խոշոր կենտրոններից մեկը։ Արդեն 1873 թվականին Բաքվի նավթահանքերում կար 12 ֆիրմա, 1883 թվականին՝ 79, 1895 թվականին՝ 88, 1898 թվականին՝ 109, 1899 թվականին՝ 104, իսկ 1901 թվականին՝ 167 ֆիրմա [26]։ 1865 թվականին ստացված 557 հազար փութ նավթի դիմաց տասնհինգ տարի անց, 1880 թվականին, արտադրվել է 21,5 միլիոն փութ, 1890 թվականին՝ 242,9 միլիոն փութ, 1895 թվականին՝ 384 միլիոն փութ, 1901 թվականին՝ 671 միլիոն 200 հազար փութ, իսկ 1902 թվականին՝ 637,7 միլիոն փութ նավթ։ Միջնադարյան չնչին բերդաքաղաքից Բաքուն դարձավ Ռուսաստանի արդյունաբերության առաջնակարգ կենտ-

---

24 **Аргутинский-Долгоруков**, История сооружения и эксплоатации закавказской железной дороги за двадцать пять лет ее существования (1871—1896 гг.), Тифлис, 1896, стр. 6.

25 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 3, էջ 770։*

26 См. Обзор бакинской нефтяной промышленности за 1901 г., часть I, Баку, 1902, стр. 5. История классовой борьбы в Закавказье, Сборник статей, книга первая. ЗКУ—1930.

ռոններից մեկը։ 1898 թվականին նավթի հանույթի գծով Բաքուն ոչ միայն հասավ, այլև անցավ ԱՄՆ-ին։ 1901 թվականին համաշխարհային նավթի կեսից ավելին Բաքուն էր տալիս։ XIX դարի վերջին Ռուսաստանում արտահանվող նավթի 95—99 տոկոսը տալիս էր Բաքուն։

Նավթամշակման արդյունաբերության հետ Անդրկովկասում արագ տեմպերով զարգանում էին մետաքսագործությունը, բամբակագործությունը, խաղողագործությունը և տնտեսության այլ ճյուղեր։

Անցյալ դարի 80-ական թվականներից Վրաստանում աճում է մանգանի արտադրությունը։ Կառուցվում են գործարաններ ու ֆաբրիկաներ։ 1885 թվականին Ճիաթուրում թողարկված 3,6 միլիոն մանգանի փոխարեն 1900 թվականին ստացվել է 40 միլիոն փութ։

Թեև դանդաղ, բայց տեղաշարժ էր կատարվում բարածխի արդյունաբերության մեջ։

Երկրամասում արդյունաբերության զարգացումը, բացի նավթից, հիմնականում ընթանում էր լեռնարդյունաբերության և մետաքսի արտադրության գծով, որով հարուստ էր Արևելյան Հայաստանը։ Կապիտալիզմին հատուկ անհամաչափ ելևէջներով, արդյունաբերությունը սկսում է ուղի հարթել XIX դարի 80—90-ական թվականներից, հիմքում ունենալով Ալավերդու և Ղափանի պղնձահանքերն ու գործարանները։

Հնուանֆորմյան շրջանում, 1865 թվականին, Ալավերդու հանքատերերը փայատիրական սկզբունքներով մթացել և մեկ ընկերություն էին կազմել։ Դա խթանեց պղնձի արտադրությունը, որը մինչև այդ կատարվում էր տնայնագործական եղանակով, պղնձի տարեկան թողարկումը հասցնելով երեքից մինչև վեց հազար փութի։ Հույները, որ Անատոլիայից (Գյումիշխանե) տեղափոխվել և 1755 թվականից շահագործում էին Ալավերդու հանքերը, 1880-ական թվականներին շգիմանալով Գետաբեկի (Ադրբեջան) «Սիմենս» գերմանական ընկերությանը պատկանող հանքերի մրցությանը, տեղի տվեցին։ Նրանք 1887 թվականին, 30 տարի ժամկետով, Ալավերդու հանքերի խումբը՝ Ալավերդի, Շամլուղ, Ախթալա, Շահալի, Էլիար, Սիսի-Մադան, Ջիբուխլի վայրերով վարձակալության հանձնեցին ֆրանսիական «Ախթալայի հանքերի կոմպա-

նիային»[27]: Ֆրանսիական կապիտալիստները վերակառուցեցին հանքերը, գործարանները, կառուցեցին «Պիրիտիկ» և «Մանես» նոր գործարանները: Այս և մտցված տեխնոլոգիական փոփոխությունների, բանվորների շահագործման գիշատիչ ձևերի միջոցով, մեծ չափով բարձրացավ պղնձի արտադրությունը: Հետագայում, 1897 թվականի հոկտեմբերի 12-ին Ալավերդու պղնձահանքերի և գործարանի շահագործման իրավունքը հանձնվեց «Կովկասի արդյունաբերական և մետալուրգիական ընկերության»-ը (ԿԱՄԸ), որը եռանդուն գործունեություն ծավալեց, ջանալով համընթաց քայլել Ռուսաստանի արդյունաբերության ընդհանուր վերելքին: Ֆրանսիական մոնոպոլիստները կողոպտում էին Հայաստանի ընդերքը, նրա հանքային հարստությունները: Տարեկան թողարկվող երբեմնի մինչև 6 հազար փթի դիմաց, 1900 թվականին Ալավերդում ձուլվել է 19 682 փութ մաքուր պղինձ, 1901 թվականին՝ 59 769 փութ, իսկ 1904 թվականին՝ 116 019 փութ:

Դարասկզբին Ալավերդու պղնձաձուլական գործարանը վերածվեց մեքենայացված ձեռնարկության: «Կովկաս» պաշտոնական թերթը 1901 թվականին այդ մասին գրել է. «Այստեղ մեքենաների հոնդյունը, շոգու ֆշշոցը ու սուլոցը, հնոց թափվող հանքանյութի թխթխկոցը ձուլվում են մի ընդհանուր աղմուկի մեջ, որը խլացնում է մարդկային ձայնը»[28]:

Արդյունաբերության կապիտալիստական եղանակը XIX դարի 80-ական թվականներին մուտք գործեց նաև Զանգեզուրի՝ Ղաթար Կավարթի պղնձարդյունաբերական գոտին: Ղափանում ձեռնարկատերեր էին Ա. Մելիք-Ազարյանցը, Կոնդուրով եղբայրները, Ղարագյոզյանները և ուրիշներ (ավելի ուշ, 1908 թ. ֆրանսիական կապիտալը մուտք գործեց նաև այստեղ և աստիճանաբար դուրս նետեց տեղական ձեռնարկատերերին): Ղափանում ավելի շատ պղինձ էր ձուլվում, քան Ալավերդում: Զանգեզուրի պղնձարդյունաբերական բոլոր ձեռնարկությունները 1858 թվականին արտադրել են 2 485 փութ պղինձ, 1887 թվականին՝ 15 319 փութ, 1898 թվականին՝ 31 246 փութ, իսկ 1900 թվականին՝ 50 000 փութ: 1897 թվականին կապիտալիստ Մելիք-Ազարյանցի «Սյունիք» գործարանը թողարկել է 34 297 փութ պղինձ: Ղափանում

---

27 Տե՛ս Դ. Մուրադյան, *Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին*, Երևան, 1964, էջ 20: Տե՛ս նաև ЦГИА Ленинграда, ф. 31, оп. 68, д. 6, л. 50.

28 «Кавказ», № 234, 1901.

պղնձի արտադրությունն ավելի աճեց 1900 թվականից հետո։ 1900 թվականին Ղափանում թողարկվել է 51 783 փութ պղինձ, 1901 թվականին՝ 57 820 փութ, 1904 թվականին՝ 68 477 փութ, իսկ 1907 թվականին այն հասավ մինչև 94 051 փթի[29]։

Այնուհանդերձ, Ռուսաստանը պղնձի մեծ պահանջ ուներ։ Այսպես, 1890 թվականին Ռուսաստանում պղնձի սպառումը կազմում էր 613 հազար փութ, այնինչ արտադրվում էր 349,5 հազար փութ[30]։ Հենց այս հանգամանքն էլ նպաստեց Հայաստանում պղնձարդյունաբերության հուժկու զարգացմանը։

Թեև թույլ, բայց առաջընթացի ուղի էին բռնել մետաղամշակման արհեստանոցները։ 1891 թվականին Տեր-Ավետիքյան եղբայրները Երևանում հիմնում են թուջակաղապարման մեխանիկական արհեստանոց, որը, բացի գինու-կոնյակի գործարաններից, սպասարկում էր նաև բնակչության մետաղյա իրերի պահանջները[31]։

Հայաստանի արդյունաբերության մեջ մեծ տեղ էր գրավում սննդարդյունաբերությունը՝ գինու, օղու, կոնյակի արտադրությունը։ Սպիրտի արտադրությամբ Երևանի նահանգը 1890-ական թվականներին երկրամասում գրավում էր առաջին տեղը։ Միայն 1892 թվականին Երևանի նահանգը արտադրել է 5 701 170 աստիճան սպիրտ, իսկ 1899 թվականին՝ 7 872 085 աստիճան, որը կազմում էր Անդրկովկասում արտադրվող խաղողի սպիրտի 33,7 տոկոսը[32]։

Ներսես Թախրովի (Թախրյան) կոնյակի գործարանը, որը հիմնադրվել է 1887 թվականին, առաջին տարում թողարկել է 34 845 աստիճան կոնյակային սպիրտ, իսկ հաջորդ չորս տարիներին արտադրանքն ավելացել է 10 անգամ։ 1893—1894 թվականներին Երևանում բացվում են Կարապետ Աֆրիկյանի, Գեորգ Գյոդալովի (Գյոդալյան), Դավիթ Սարաջևի կոնյակի գործարանները։

---

29 См. Кавказский календарь. 1898, отд. III, стр. 106. Кавказский календарь. 1902. отд. III. стр. 56. Обзор Елизаветпольской губернии за 1910 г., стр. 306—307։ *Նույնը* Գ. Մուրադյան, *Հայաստանը ռուսական առաջին ռեակցիայի տարիներին, էջ 20—23։*

30 Брейтерман. Медная промышленность России и мировой рынок, часть II. Ленинград. 1925. стр. 90.

31 *Տե՛ս «Սովետական Հայաստան», № 12 (10 625), Երևան, 1956, 14 հունվարի։*

32 «Памятная книжка Эриванской губернии на 1909 г.». отд. IV, Тифлис, стр. 109.

Կոնյակի արտադրանքը աստիճաններով [33]

Գործարաններ	1890	1891	1892	1893	1894
Ն. Թաիրյանի	34845	126408	278149	220339	324463
Կ. Աֆրիկյանի	—	—	—	115749	84811
Գ. Գյոզալյանների և Ենոք Մկրտչյանի	—	—	—	31977	202283
Դ. Սալաջևի	—	—	—	—	150439
Ընդամենը . .	34845	126408	278149	368065	767998

1899 թվականին ռուս կապիտալիստ Շուստովը գնում է Թաիրովի և ուրիշ գինու-կոնյակի մի քանի ձեռնարկություններ և է՛լ ավելի ընդլայնում կոնյակի արտադրությունը։

Հայաստանի կոնյակը ճանապարհ է հարթում և դուրս գալիս միջազգային շուկա։ Գինու-կոնյակի և օղու մոտ 80 տոկոսն արտահանվում էր Ռուսաստան և արտասահման [34]։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Հայաստանի արդյունաբերության մեջ որոշակի կշիռ ուներ Երևանի նահանգի (Կողբի) և Կարսի մարզի (Կաղզվանի) և Նախիջևանի քարաղի արտադրությունը։

Այստեղ ևս հաղթահարվում են հանքերի շահագործման կապիտալային ձևերը, արմատավորվող կապիտալիստական հարաբերությունները զսպանակում են արտադրության աճը։ 1895 թվականին Հայաստանում արդյունահանվել է ավելի քան մեկ միլիոն փութ աղ, իսկ 1902 թվականին՝ 2 970 241 փութ աղ [35]։

Արևելյան Հայաստանը թեև զուրկ չէր խոշոր արդյունաբերությունից, բայց տիրապետողը մանր արհեստավորական տնտեսություններն էին։ Պաշտոնական տվյալներով 1900 թվականին Երե-

---

33 См. «Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе», вып. 6, Тифлис, 1896; ЦГИА Груз. ССР, ф. 370, д. 1039.

34 *Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 14։*

35 *Տե՛ս* Сборник статистических сведений по закавказскому краю, ч. I, стр. 212, Кавказский календарь на 1904 г., стр. 65, *նույնը՝* Խ. Գուլանյան, *Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ, Երևան, 1961, էջ 22։*

վանի նահանգում կար 3469 «ֆաբրիկա» ու «գործարան» 8290 բանվորով, իսկ Կարսի մարզում՝ 827 «գործարան» 1266 բանվորով[36]։

Փաստերը ցույց են տալիս, որ 1865 թվականից մինչև 1900 թվականը Հայաստանում արդյունաբերական ձեռնարկություններն ավելացել են 1,3 անգամ, արտադրանքն աճել է 3,3 անգամ, բանվորների թիվը՝ 1,6, իսկ աշխատանքի արտադրողականությունը՝ 2,1 անգամ[37]։ Ինչ խոսք, որ դրանք զգալի չափով ցածր են Ռուսաստանի և Անդրկովկասի արդյունաբերության զարգացման տեմպերից։ Անժխտելի է, որ արդյունաբերական կապիտալը հեղափոխականացնող դեր խաղաց՝ կյանքի կոչելով արտադրողական հզոր ուժերին միայն երկրամասի արդյունաբերական օջախներում։

Հայաստանի արդյունաբերությունը 1895 և 1902 թթ.[38]

Ֆաբրիկաների ու գործարանների տեսակը	1895 թ.			1902 թ.		
	Ձեռնարկությունների թիվը	Բանվորների թիվը	Արտադրանքի գումարը ռուբլիներով	Ձեռնարկությունների թիվը	Բանվորների թիվը	Արտադրանքի գումարը ռուբլիներով
Գինու-կոնյակի . . .	491	1677	811592	463	2118	298492
Մետաքսաթելի . . .	31	370	124950	14	403	120520
Կաշվի	3	153	19310	34	138	31070
Ներկարարական . . .	44	51	5370	64	82	8070
Աղյուսի	22	105	8630	20	81	11320
Կրի	15	76	7940	24	78	20300
Կավի	69	125	10450	70	193	15950
Օճառագործական . .	5	12	1530	4	17	950
Գարեջրի	5	16	12364	5	44	57520
Բամբակապտիչ . . .	—	—	—	185	360	34250
Փայտանագործական-մեխանիկական .	—	—	—	1	11	800

36 Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 2914, оп. 1, ед. хр. 507, л. 6.

37 См. М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957, стр. 453.

38 См. Памятная книжка Эриванской губернии на 1904 г. отд. II, стр. 93. Նույնը, Խ. Գալանյան, *Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը Հայաստանում*, էջ 23։

Որոշակի տեղաշարժեր են կատարվում նաև Արևելյան Հայաստանի առևտրի ասպարեզում։ Հայ առևտրական բուրժուազիան, օգտվելով ստեղծված դրությունից, ընդարձակում է իր գործունեության ոլորտը։ Յարիզմը սկզբնական շրջանում խրախուսում էր եվրոպական կապիտալի մուտքը Կովկաս, որոշ արտոնություններ շնորհելով տեղական վաճառականներին։ Ձեռնարկված միջոցառումները նկատելի չափով աշխուժացնում են առևտուրը։ 1840-ական թվականներին, հայ վաճառականները միայն Ռուսաստանից Անդրկովկաս են ներմուծել տարեկան 2,5 միլիոն ռուբլու (արծաթ) արժողությամբ ապրանք։ «Կովկասյան կալենդարի» տվյալներով 1832—1851 թվականներին եվրոպական երկրներից Անդրկովկաս է բերվել 5743 հազար ռուբլու, իսկ ասիական երկրներից՝ 5247 հազար ռուբլու ապրանք։ Չնայած 1821—1831 թվականներին Ռուսաստանի մաքսային քաղաքականությունը խրախուսում էր եվրոպական ապրանքների մուտքը Կովկաս, բայց հետագայում, 1851 թվականից, վերջ է տալիս, այսպես ասած, արտոնյալ առևտրին՝ Եվրոպայից ներմուծվող ապրանքների վրա նշանակելով բարձր տարիֆի մաքսեր։

Երևանում շատ թե քիչ կապիտալ ունեին վաճառականները։ Նույնը Ալեքսանդրապոլում և ուրիշ վայրերում։ 1870-ական թվականներին Երևանում առևտրական կապիտալի տարեկան շրջանառությունը կազմում էր 300 հազար ռուբլի, Ալեքսանդրապոլում՝ 370 հազար։ 1889 թվականին Երևանում 135 վաճառական զբաղվում էր մանուֆակտուրայի առևտրով[39]։ Դարասկզբին Հայաստանից Պարսկաստան, Թուրքիա և այլ երկրներ էր արտահանվում պղինձ, պղնձե առարկաներ, ներկանյութեր, կաշվե ապրանքներ, բրդյա գործվածքներ։

Փոխադարձաբար աճում է անդրկովկասյան վաճառականության առևտրական շրջանառությունը ռուսական շուկաներում, ռուս վաճառականությանը՝ անդրկովկասյան շուկայում։ Հայ առևտրական կապիտալը, ի վերջո, բախվում է եվրոպական և ռուսական կապիտալին, տեղ-տեղ խաթարվում է նրա ընթացքը։

---

39 См. «Кавказский календарь», 1849, стр. 52, 1852, стр. 457. А. Макаров. Закавказье в торговом отношении. Доклад Т. С. Морозову, М., 1884, Сборник статических сведений о Кавказе под ред. Н. И. Воронова, т. I, отд. I, гл. III, Тифлис, 1869, стр. 29, նույնը, Ե. Գոլանյան, Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության, Երևան, 1959, էջ 67, 69—70։

Ցանքատարածությունների և բերքատվության աճը Հայաստանում 1829—1900 թվականներին[40]

Գյուղատնտեսական կուլտուրաներ	1829		1870		1900		1900 թ., 1829 թ. համեմատ, տոկոսներով	
	Ցանքատարածություն (մասերի մեջ)	Բերքատվություն (խրթի մեջ)	Ցանքատարածություն (մասերի մեջ)	Բերքատվություն (խրթի մեջ)	Ցանքատարածություն (մասերի մեջ)	Բերքատվություն (խրթի մեջ)	Ցանքատարածություն (մասերի մեջ)	Բերքատվություն (խրթի մեջ)
Ցորեն	375	1825,0	98,1	10000,0	228,2	16061,2	601,1	879,3
Գարի	12,5	750,0	48,0	3595,0	76,3	4016,7	610,2	513,0
Կորեկ	10,0	250,0	5,8	475,0	1,0	90,0	10,0	36,0
Ձալթուկ	8,5	1000,0	21,5	2500,0	15,3	2885,1	179,5	288,5
Վարս	1,0	50,0	5,8	191,3	2,3	77,5	230,0	155,0
Քնջութ	1,0	50,0	1,0	111,4	0,2	16,5	18,0	33,0
Բամբակ	8,0	75,0	25,9	276,9	15,3	382,0	190,7	509,0
Այլ կուլտուրաներ	8,5	տվյալներ չկա	7,1	300,5	4,5	250,0	30,0	—
Ընդամենը	87,0		213,2		313,1		394,0	

[40] См. М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957, стр. 533.

XIX դարը հայ ժողովրդի պատմության մեջ նշանավորվեց սոցիալ-տնտեսական նշանակալից պրոցեսներով ու քաղաքական իրադարձություններով: Եռանֆորմյան շրջանում Հայաստանի ժողովրդական տնտեսությունը, առաջին հերթին գյուղատնտեսությունը, ահեղ շոշափելի տեմպերով: Չնայած 1864—1870 թվականներին Անդրկովկասում անցկացրած ագրարային ռեֆորմներն ու օրենքները էական ոչ մի փոփոխություն չմտցրին հայ գյուղացու կյանքում, շահագործման ձևերը մնացին հինը, ուժեղ թափով շարունակվում էր գյուղացիության քայքայումը, բայց, այնուամենայնիվ, Ռուսաստանի հետ միավորվելուց հետո, գյուղատնտեսության մեջ նկատվում են առանձին տեղաշարժեր: Ընդարձակվում են հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները, զարգանում է այգեգործությունը, աճում անասունների գլխաքանակը:

Եռանֆորմյան ժամանակաշրջանի ցանքատարածությունների աճը պատկերում է էջ 48-ի աղյուսակը:

Արևելյան Հայաստանում բամբակի արտադրությունը տարեցտարի աճում և 1892—1893 թվականներին իր բարձրակետին է հասնում: Դարասկզբին Հայաստանի բամբակացան շրջանները տարեկան տալիս էին միջին հաշվով 400 հազար փութ բամբակ[41]:

Բամբակի արտադրությունն ըստ գավառների (1000 փ.)[42]

Գավառները	1887	1889	1891	1893	1895	1897	1899
Երևանի	25,4	35,8	63,4	72,9	60,7	57,1	59,6
Նախիջևանի	11,1	39,0	46,8	51,3	30,0	50,0	9,8
Էջմիածնի	40,0	87,0	86,4	87,1	102,0	17,5	38,4
Սուրմալուի	200,1	167,0	170,0	238,3	101,1	197,5	270,8
Շարուր-Դարալագյազի .	50,0	180,0	97,8	103,4	70,4	64,2	27,5
Ընդամենը	326,6	508,8	464,4	553,0	364,2	386,3	406,1

41 Ս. Գուլիշամբարովի հաշվումներով տարեկան արտադրվել է մինչև 600 հազար փութ բամբակ (см. Гулишамбаров, Обзор фабрик и заводов закавказского края. Тифлис, 1894, стр. 23.

42 Փաստերը քաղված են՝ «Труды съезда хлопководов», т. II. часть I, раздел IV, стр. 131—132, Тифлис, 1913, М. А. Адонц. Экономическое развитие Восточной Армении, стр. 387.

Նշանակալից էին անասնաբուծության աճը և մթերատվության բարձրացումը։ Հայաստանում 1829 թվականին 161 502 գլուխ խոշոր եղջերավոր անասունի դիմաց, 1900 թվականին կար 441 հազար գլուխ։ Այլ խոսքով, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն աճել էր 173,9 տոկոսով։

Այսուհանդերձ, եթե նկատի ունենանք Արևելյան Հայաստանի բնակչության աճը և արդյունաբերության վերելքը, գյուղատնտեսության զարգացումն ընթանում էր դանդաղ և հեռու էր երկրի կարիքները բավարարելուց։

1861 թվականի ռեֆորմն իրենով նշանավորեց Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման ժամանակաշրջանը։ Հայ գյուղացիությունը, որը տարիներ առաջ թոթափել էր պարսկական տիրապետության ծանր լուծը, գտնվում էր դաղութային վիճակում, միանգամից չկարողացավ ազատագրվել ֆեոդալական հարաբերությունների մնացուկներից[43]։ Ճնշման հին, ֆեոդալական ձևը փոխվեց հարստահարման մի նոր ձևով։ Հայաստանը, լինելով շեշտված ագրարային երկիր, բնակչության 90 տոկոսը գյուղացիությունն էր, որը կազմված էր պետական (83 տոկոս), տերունական ժամանակավոր արտոնյալ (16 տոկոս) և խլզան (1 տոկոս) գյուղացիներից։

Վ.Լենինը ռուսական ազգայնամոլ Վ. Պոդոժևը իր «Կովկասյան ակնարկներ» աշխատության մեջ ցարիզմի տիրապետությունը Կովկասում բաժանել է չորս գլխավոր շրջանների։ «Առաջին ժամանակաշրջանը երկրամասում ռուսական տիրապետության հաստատման սկզբնական տարիներն են եղել...

Երկրորդ ժամանակաշրջանը սկսվում է Կովկասի փոխարքայության հաստատումով. դա Ռուսաստանի հետ կուլտուրական միաձուլման, տեղական ազգանունները «ով» վերջավորությամբ փոխարինելու, ռուսաց լեզվի հաղթարշավի ժամանակաշրջանն է։

Երրորդ ժամանակաշրջանը, որը սկսվում է Կովկասի փոխարքայության վերացումից հետո, դա արագ ու բռնի ռուսականաց-

---

43 Արևելյան Հայաստանի եռոեֆորմյան շրջանի ագրարային հարաբերությունները պատշաճ լուսաբանություն են ստացել Վ. Ռշտունու, Մ. Ադոնցի, Հ. Թումանյանի, Խ. Ավդալբեգյանի և այլոց աշխատություններում, իսկ Արևմտյան Հայաստանինը՝ Ա. Համբարյանի մենագրությունում։ Արժեքավոր նյութեր և հետևություններ կան Ա. Համբարյանի «Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը հայկական գյուղում (1860—1920)» մենագրությունում, որը լույս է տեսել 1959 թ. ռուսերեն լեզվով։

ման, բայց դոնները չարդելու արդելքները ոչնչացնելու, ազգայնական հիվանդոտ մտայնությունների և երազանքների բուժման շրջանն է, ըստ որում, այդ բուժումը կատարվում է ցանկացած դեղատոմսով, առանց միջոցների խտրության, մինչև իսկ փոխադարձ ազգային բնաջնջման միջոցով...

Դրան հետևում է կարճ, բայց կովկասյան ծանր խռովությունների ժամանակաշրջանը, որն իրոք ուղեկցվում է հեքիաթային սարսափներով, հայկական հուզումներով, հայ-թուրքական կոտորածներով, այսպես կոչված վրացական հեղափոխությամբ» [44]:

XIX դարի երկրորդ կեսին ռուսական կապիտալիզմը, արտաքին գործոնները և ներքին հասունացած նախադրյալները, թեև դանդաղ, բայց ստիպմանաբար Հայաստանը ներքաշեցին կապիտալիստական հարաբերությունների հորձանուտը: «Հայ ժողովուրդն էլ դուրս եկավ իր նահապետական, սահմանափակ «ազգային» կյանքի շրջանակներից,— 1906 թվականին գրել է Ստ. Շահումյանը,— և կապվեց լայն, լուսավոր քաղաքակիրթ աշխարհի հետ... Եվրոպական կապիտալիզմը, որ տիրապետող արդյունագործական եղանակ էր դարձել Ռուսաստանում վերջին տասնամյակների ընթացքում, մուտք գործեց մեր երկիրը և դրեց իր ուժեղ ու ուրույն դրոշմը հայկական իրականության վրա...» [45]:

---

44 В. П. Погожеев, Кавказские очерки. СПб, 1910, стр. 14.

45 Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 1, էջ 123։*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՅ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Նախադրյալները: 2. Ոչ-հողագործական արտագաղթությունը: 3. Երկրամասի հայ բանվորների դինամիկան:

1

Արդյունաբերական պրոլետարիատը կապիտալիզմի ծնունդ է: Հայ բուրժուազիայի առաջացմանը զուգընթաց ձևավորվել է հայ պրոլետարիատը՝ բանվոր դասակարգը: Հայաստանի այն ժամանակվա տնտեսական հետամնացությունը, երկաթուղային ճանապարհների բացակայությունը և երկրամասի սպեցիֆիկ առանձնահատկություններն էին պատճառը, որ հայ բուրժուազիան կազմավորվեց, նախ՝ Անդրկովկասի արդյունաբերական գլխավոր օջախներում, ապա՝ Հայաստանում: Դա, ինչպես վերը ասվեց, պայմանավորված էր նոսնֆորմյան շրջանում Անդրկովկասում առաջացած սոցիալ-տնտեսական տեղաշարժերով: Գյուղացիության քայքայումը, քաղաքներում ապրանքաշրջանառության ծավալումը, երկաթուղային և խճուղային ճանապարհների կառուցումը, կապիտալի կուտակումը, եվրոպական և ռուսական կապիտալի ներհոսքը, քաղաքային բնակչության աճը, տեղական հումքային պաշարների, էներգետիկ բազայի և բանվորական օժանդակ ուժի օգտագործումը լայն նախադրյալներ հանդիսացան կապիտալիստական հարաբերությունների զարգացման, բանվոր դասակարգի ձևավորման համար:

Առանց բուրժուազիայի, իբրև դասակարգի, պատմության ուսումնասիրության անհնար է հասկանալ կապիտալիզմի շրջանի տնտեսական, գաղափարական և քաղաքական պրոբլեմները, պրո-

լիտարիատի դասակարգային պայքարի և հեղափոխական շարժումների հարցերը, պրոլետարական հեղափոխության հասունացման պայմանները։

Արևելահայ արդյունաբերական խոշոր բուրժուազիան, արմատներ գցելով Բաքվում, աստիճանաբար ճյուղավորվում և տարածվում է Բաթումում, Թիֆլիսում և այլուր։ Հայ խոշոր բուրժուազիայի կյանքում վճռական դեր է խաղացել նավթարդյունաբերությունը։ 1872 թվականից հետո, Ապշերոնյան թերակղզում հաջորդաբար շահագործման են հանձնվում նավթաբեր հողատարածությունները։ Անդուսպ մրցավազք է առաջանում ավելի շատ նավթ արտահանելու, խոշոր կապիտալ կուտակելու համար։ 1872 թվականի 180 դեսյատին նավթագոտու փոխարեն, 1900 թվականին արդեն օգտագործվում էր 906 դեսյատին։ 1879 թվականին միայն Միրզոյանների ընտանիքը (առանց ընկերակցության) ուներ 137 դեսյատին նավթաբեր հող։ Հայերը առանձին և այլ ազգերի ընկերակիցների հետ միասին շահագործում էին 155 նավթահոր, ռուսներն ու եվրոպացիները՝ 79, իսկ մյուս ազգերի կապիտալիստները՝ 61 հոր[1]։

1870-ական թվականներին Բալախանիի նավթահորերի 88 տոկոսը պատկանում էր ադրբեջանցիներին, 9 տոկոսը հայերին, իսկ 3 տոկոսը ռուսներին։ Չնայած դրան, Բաքվում թողարկվող նավթի զգալի մասը պատկանում էր հայ նավթարդյունաբերողներին[2]։

Նոբելի (1874), Ռոշիլդի (1889) և նավթային այլ մագնատների կողքին կապիտալիստական հարաբերությունների զարգացման մեջ են նետվում հայ մեծահարուստ նավթարդյունաբերողները՝ Մանթաշովը, Լիանոզովը, Ղուկասովը, Պիտոևը, Մաիլովը, Արամյանցը, Ավան-Յուզբաշիևը, Թադևոսյանը, Գոլուխանովը, Մատուրյանը, Միրզոյանը, Զուբալովը, Այվազովը, Մելիք-Ազամիրովը, Տեր-Ակոպովը և ուրիշներ։ Առատորեն լցվում էին նրանց ոսկու պարկերը։ Միայն XIX դարի վերջին տասնամյակում Բաքվում արտադրված հում նավթի արժեքը կազմում էր

---

[1] См. Ст. Гулишамбаров, Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района, Тифлис, 1880.

[2] См. Г. Пичикян, Капиталистическое развитие нефтяной промышленности в Азербайджане. См. также К. Орагвелидзе, К Вопросу о развитии капитализма в сельском хозяйстве Закавказья. См. «История классовой борьбы в Закавказье», стр. 47, 108—110 и др.

224 639 500 ռուբլի, որի $^2/_3$-ը պատկանում էր հայ կապիտալիստներին: Բաքվում՝ 5000 մինչև 50 000 ռուբլի արժողությամբ սեփականատերերի 17,5 տոկոսը հայ բուրժուաներն էին, իսկ 50 000 ռուբլուց բարձր սեփականատերերի՝ 23,4 տոկոսը: Բացի այդ, Բաքու քաղաքի և նրա նահանգի առևտրական ձեռնարկությունների 25 տոկոսից ավելին նույնպես պատկանում էր հայերին: Նոբելի ընկերության հիմնական դրամագլուխը Բաքվում դարասկզբին կազմում էր 15 միլիոն ռուբլի, Ռոշիլդինը՝ 6 միլիոն ռուբլի: Նույն ժամանակաշրջանում Մանթաշովի (Մանթաշյան) հիմնական դրամագլուխն անցնում էր 22 միլիոն ռուբլուց, Միրզոյան եղբայրներինը՝ ավելի քան 3 միլիոն էր, Եղիազարյաններինը՝ 2 միլիոն ռուբլի[3]: «Գ. Մ. Լիանոզով և ընկերակցություն» ընկերությունը 1907 թվականին ուներ 2 միլիոն, իսկ 1914 թվականին՝ 30 միլիոն ռուբլի:

Հայ բուրժուազիան ռուսական և մյուս ազգերի բուրժուազիայի հետ միասին միևնույն դասակարգին էր պատկանում, նրանց ընդհանուր շահերը մեկ էին, հայ բուրժուազիան ևս պայքարում էր ավելի շատ շահույթ կորզելու համար:

Տարբեր ազգերի արդյունաբերական խոշոր բուրժուազիայի միջև եղած ազգային շահերից բխող առանձին տարաձայնությունները, դասակարգային առումով էական նշանակություն չունեին: Նրանք նույն ընտանիքի հարազատ զավակներն են:

Նավթարդյունաբերությունը ոչ միայն հարստացրեց Բաքուն, այլև տնտեսական մեծ աշխուժություն մտցրեց Բաթումի, Թիֆլիսի և Երկրամասի այլ քաղաքների կյանքում: 1890 թվականին Բաթումում նավթի արտահանությամբ զբաղվող 18 ձեռնարկություններից 5-ը պատկանում էր հայերին:

Բաքվի նավթը ճոխություն և անսպառ հարստություն շնորհեց հայ բուրժուազիային: Իր կուտակած կապիտալները շրջանառության մեջ դնելով, նա Երկրամասում կալվածքներ էր գնում, խոշոր շենքեր, ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցում: Երկրամասի արդյունաբերական մյուս կարևոր օջախում՝ Թիֆլիսում,

---

3 Տե՛ս Դ. Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870—1900), էջմիածին, 1922, հ. 2, էջ 80*, «Нефтяное дело» № 8, 1916. Концентрация в области нефтяной промышленности, Л. Р., История классовой борьбы в Закавказьи, Сборник статей, книга первая ЗКУ, 1930 (см. **Е. М. Пичикян**, Капиталистическое развитие нефтяной промышленности в Азербайджане, стр. 85.)

նույնպիսի փարթամությամբ էր ծաղկում հայ բուրժուազիան։ Ադելխանովը, Էնֆիաջյանցը, Ալիխանովը, Խուբլարովը, Թայիրյանը, Բոզարջյանը, Կարապետյանը, Գյոզալյանը, Թամամշևը, Սողոմոնյանը և շատ ուրիշ հայ կապիտալիստներ տնօրինում էին թեթև ու սննդի արդյունաբերության, կաշվի և այլ ձեռնարկությունները։

Հայաստանում հայ բուրժուազիայի աջի ընկնող մասը իր ձեռքն էր վերցրել պղնձի ու կաշվի, գինու-կոնյակի և տնտեսական այլ ճյուղերը։

Հայաստանում արդյունաբերական կապիտալի հայ ներկայացուցիչներն էին Մելիք Աղարյանը, Մելիք-Փարսադանովը, Մելիք-Ղարագյոզովը, Մելիք-Ստեփանովը, Աֆրիկյանը, Գյոզալովը, Սողոմոնովը, Խոջամիրովը, Զալաբովը, Բաբախանովը, Մարտիրոսյանցը, Հարությունյանցը, Իսահակյանցը, Ավագովը և ուրիշներ։

Հայ կապիտալիստների մյուս խումբը, առևտրական բուրժուազիան էր, որը կազմված էր մի քանի տասնյակ հազար առևտրականներից։ Խոշոր առևտրականները գերազանցապես գտնվում էին Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում և այլուր։ Հատկապես աջի էին ընկնում Արամյանցը, Անտոնովը, Զանտիոլաղյանը, Աֆրիկյանը, Հովսեփ ու Գրիգոր Թումանյանները և շատ ուրիշներ։

Հայ բուրժուազիայի երրորդ խումբը՝ դա կուլակությունն էր, որը ավելի շատ բազմամարդ էր, և հարստահարում էր գյուղացիությանը, գյուղական պրոլետարիատին՝ բատրակությանը [1]։

Հայ խոշոր բուրժուազիայի վերնախավը գործում էր Հայաստանից դուրս՝ Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում, Դոնի Ռոստովում, իսկ Թուրքիայի հայ խոշոր բուրժուազիայի վերնախավը գլխավորապես Կոստանդնուպոլսում և Զմյուռնիայում։

Արևելահայ բուրժուազիան, չնայած իր շարքերում ուներ միլիոնատերեր, այնուամենայնիվ, առաջանալով Ռուսաստանի դաղութային ծայրամասում, քաղաքական տեսակետից թույլ էր, վախկոտ և անընդունակ էր գլխավորելու հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը։ Դրա գլխավոր պատճառներից մեկն էլ

---

[1] Ինչ վերաբերում է արևմտահայ բուրժուազիային, ապա նա նույնպես միատարր չէր։ Կոստանդնուպոլսի և ծովափնյա մյուս քաղաքների կոմպրադորական բուրժուազիան իր տնտեսական-քաղաքական շահերով, անշուշտ, տարբերվում էր դավառահայ բուրժուազիայից։

այն էր, որ նա պատմական տապարեզ իջավ շատ ուշ, այն ժամանակ, երբ Ռուսաստանում և այլ երկրներում կապիտալիզմն արդեն թևակոխել էր իր վերջին ստադիան և գտնվում էր իմպերիալիզմի նախօրյակին: Հենց այս հանգամանքն էլ հարկադրեց նրան զրկախառնվել ռուսական բուրժուազիայի հետ, խոնարհվել ցարիզմի առջև, միասնական ճակատով պայքարել պրոլետարիատի դեմ, ճնշել հեղափոխական շարժումները:

2

Հայ բանվոր դասակարգի ձևավորման համար հիմք հանդիսացան երկրամասում կապիտալիստական հարաբերությունների ծավալումը, երկաթուղային շինարարությունը, արդյունաբերական կենտրոնների ու քաղաքների զարգացումը:

«Կովկասի ուժեղ դաղութացման պրոցեսին ու նրա հողագործական բնակչության արագ աճմանը զուգընթաց,— գրել է Վ. Ի. Լենինը,— անդի էր ունենում նաև բնակչության՝ հողագործությունից կտրվելու և արդյունաբերությանը հարելու պրոցես...»[5]:

Հիրավի՞: Արդյունաբերական պրոլետարիատի ձևավորման սոցիալական գլխավոր աղբյուրը հանդիսացել է քայքայվող գյուղացիական հողազուրկ մասսան, որն աշխատանք էր փնտրում քաղաքներում:

Վ. Ի. Լենինը, բնութագրելով XIX դարի վերջին Ռուսաստանում գյուղացիության դասակարգային շերտավորման պրոցեսը, նշել է. «Գյուղացիների մոտ ինքնագործ մասն արդեն այն դրության է անցել, որ նրանց «ամենագլխավոր զբաղմունքը» վարձու աշխատանքն է ունևոր գյուղացիների և կալվածատերերի մոտ... Միևնույն «գյուղացիությունը» և շուկա է շպրտում միլիոնավոր բանվորների, որոնք վարձողներ են որոնում, և վարձու բանվորների պատկառելի պահանջ է ներկայացնում»[6]:

Անում է Ռուսաստանի արդյունաբերական պրոլետարիատը, հեղափոխական առաջատար ջոկատը: Այսպես, ճորտատիրական իրավունքը վերացնելու վերաբերյալ 1861 թվականի ռեֆորմից հետո տարի անց Ռուսաստանի եվրոպական մասի կապիտալիս-

---

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 771—772:

6 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 292:

տական խոշոր ձեռնարկություններում կար 706 հազար բանվոր։ 1890 թվականին այն հասավ 1432 հազարի, իսկ 1897 թվականին Ռուսաստանում կար 2 միլիոն 98 հազար ֆաբրիկա-գործարանային և լեռնային արդյունաբերության մեջ աշխատող բանվոր[7]։

1897 թվականին Ռուսաստանի 125,6 միլիոն բնակչությունից 63,7 միլիոնը պրոլետարական և կիսապրոլետարական էր. կամ բնակչության 50,7 տոկոսը, այդ թվում՝ ոչ պակաս 22 միլիոնը պրոլետարներ էին։

Նույն պատկերն էր Անդրկովկասում։ Դարասկզբին միայն Հայաստանի գյուղում պրոլետարական և կիսապրոլետարական բնակչությունը կազմում էր մոտ 330 հազար[8]։

Զանգվածային արտադնացության հոսք է սկսվում դեպի Բաքու, Թիֆլիս, Բաթում, երկրամասի շինարարական տեղամասերը։ Ոչ-հողագործական արտադնացությունն ըստ էության առաջադիմական երևույթ էր։ Իզուր էին Գր. Արծրունու և նրա համախոհների հորդորները՝ արտադնացությունը հայ իրականության մեջ դադարեցնելու, մանր սեփականությանը կառչելու վերաբերյալ։ Արտադնացության սոցիալական էության բացահայտումը անմարսելի մնաց ոչ միայն պահպանողական «Նոր Դար», «Մեղու Հայաստանի» թերթերի հրատարակախոսներին, այլև լիբերալ Գր. Արծրունուն և նրա խմբագրած «Մշակին»։ Սպանդար Սպանդարյանի կողմից պանդխտությունը հայի «գաղթականական ոգով» բացատրելը, ամենից առաջ կապիտալիզմի զարգացման առանձնահատկությունները չընկալելու արդյունք էր։ Իրավացի էր Ալ. Քալանթարը, երբ փորձում էր արտադնացության պատճառները արմատել տնտեսական կյանքում առաջացած տեղաշարժերում։ Արտադնացությունը նպաստում էր բանվոր դասակարգի ձևավորմանը, ստիպելով փոխում և կազմակերպում երեկվա խավարում խարխափող գյուղացուն, բարձրացնում նրա դասակարգային գիտակցությունը, կուլտուրան։ Եվ, վերջապես, այն իր բարերար ազդեցությունն էր տարածում նաև բուն գյուղացիության վրա։ Գյուղացին, ապրելով դրսում՝ աշխատավարձով, ավելի ազատ էր

---

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 644, См. П. И. Лященко, История народного хозяйства СССР, том II, стр. 142, 144, А. Г. Рошин. Формирование промышленного пролетариата в России, М., 1940, стр. 104. Краткая история рабочего движения в России (1861—1917), М., 1962, стр. 50.

8 См. М. А. Адонц. Экономическое развитие Восточной Армении, стр. 527.

ղգում, թուլանում էին նահապետական հին սովորությունները, ելնելով նոր իրադրությունից, կինը ավելի ինքնուրույն էր դառնում՝ տղամարդուն իրավահավասար ճանաչվելու պահանջ դրվում։ Այլ էր դրությունը Արևմտյան Հայաստանում։ Այստեղ բնակչության մի ստվար մասը, որ թողնում էր հայրենի օջախը և աշխատանք որոնում օտար երկրներում, ոչ թե կապիտալիստական հարաբերությունների արդասիք էր, այլ թուրքական վայրագ կարգերի հետևանք։ Ի տարբերություն դրան՝ արևելահայերի արտագնացությունը արդյունք էր կապիտալիզմի զարգացման, գյուղում արագ կատարվող դասակարգային շերտավորման, գյուղացիների քայքայման ու պրոլետարացման, արդյունաբերության կողմից բանվորական ուժի կլանման։ Տակավին 1890-ական թվականներին Ս. Արասխանյանը նկատել է, որ հայկական գյուղերից քաղաք արտագաղթողներն այլևս «պանդուխտներ» չեն, այլ բանվորներ, «որոնց գոյությունն օրգանական կերպով կապված է ներկա արդյունագործության և առևտրի պայմանների հետ»[9]։

Քայքայվող գյուղացին արտագաղթում էր առաջին հերթին Բաքու։ Աճում էր քաղաքային բնակչությունը։ Այսպես, 1897 թվականին, 1863 թվականի համեմատությամբ, երկրամասում քաղաքային բնակչությունը 350 հազարից հասավ մոտ 900 հազարի։ Անդրկովկասում 1897 թվականին կար 1 021 716 հայ։ Նրանք ապրում էին երկրամասի ռուս, վրացի, թաթար (ադրբեջանցի) և այլ ազգերի ժողովուրդների հետ խառը, շերտ ընդ մեջ։ Այսպես, օրինակ, Երևանի նահանգում ապրում էին 439 926 հայ, 313 178 ադրբեջանցի, 15 937 ռուս։ Թիֆլիսի նահանգում՝ 468 537 վրացի, 196 189 հայ, 107 383 ադրբեջանցի, 85 772 ռուս։ Ելիզավետպոլի նահանգում՝ 557 882 ադրբեջանցի, 298 790 հայ, 19 936 ռուս։ Բաքվի նահանգում՝ 667 248 ադրբեջանցի, 52 768 հայ, 78 002 ռուս[10]։ Պատկերը նույնն էր Անդրկովկասի մյուս նահանգներում, գավառներում և քաղաքներում։ Հայ բնակչությունը, բացի Երևանի նահանգից և Կարսի մարզից, կենտրոնացված էր նաև Թիֆլիս և Բաքու քաղաքներում, Ղարաբաղում, Գանձակում, Զանգեզուրում, Բորչալուում, Ախալքալաքում և այլ վայրերում։

---

9 «Մուրճ», N 1, 1890, էջ 8։

10 Տե՛ս Ռուսական կայսրության առաջին ընդհանուր մարդահամարը, 1897, Ս. Պ., 1908։

Ռուսաստանի և Անդրկովկասի զանազան վայրերից անվերջ հոսանքով Բաքու են լցվում տասնյակ հազարավոր մարդիկ, վաճառքի հանում իրենց աշխատուժը, դառնում բանվորներ։ Արդեն 1897 թվականին Բաքու քաղաքում և նրա նահանգում կար ավելի քան 65 հազար բանվոր[11]։ Նրանցից 27,8 հազարը արտագաղթել էին Բաքվի նահանգից, 5,4 հազարը՝ Ելիզավետպոլի նահանգից (հատկապես Զանգեզուրից, Գանձակից և Ղարաբաղից), 15 056-ը՝ եվրոպական Ռուսաստանից (Սարատովի, Տամբովի, Սամարայի, Ռյազանի և այլ նահանգներից)[12]։

Բաքվի նավթարդյունաբերության բանվորների 1897 թվականի ազգային կազմը[13]։

Ազգություններ	Նավթարդյունաբերության բոլոր բանվորների թվում	Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ	Բանվորների թվից նավթարդյունաբերության	Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ
Հայեր	4098	29	589	24,8
Ռուսներ	2406	17,5	1491	49,0
Լեզգիներ	2070	12,9	33	1,0
Տեղական թաթարներ (ադրբեջանցիներ)[14]	1603	11,2	286	9,4
Կազանի թաթարներ	429	4,0	8	—
Պարսիկներ	2822	19,1	473	15,7

[11] См. ЦГИАМ, ф. ДП,00, 1898, д. 5, ч. 71, л. 38 об.

Արխիվային այս փաստաթղթում ասված է, որ Բաքու քաղաքում կան 18 հազար բանվոր, որոնք աշխատում են գործարաններում, արհեստանոցներում և այլ ձեռնարկություններում, Ամբ քաղաքում՝ 4 հազար, Բալախանի-Սաբունչի և Բիբի-Հեյբաթի նավթահորերի շրջանում՝ մինչև 43 հազար, բոլորը միասին՝ 65 հազար բանվոր։

[12] См. Распределение рабочих и прислуги по группам занятий и по месту рождения на основании данных первой всеобщей переписи населения Российской империи 28 января 1897. СПб, 1905, стр. 36—49; И. В. Стригунов. Из истории формирования бакинского пролетариата (70—90)е годы XIX в.), Баку, 1960, стр. 75, 83, 148. Указанные паспортные книги балаханских промыслов фирмы «Товарищества бр. Нобель» см. ЦГИА Азерб. ССР, ф. 798, оп. 3, д. 504, 509, 513, 514, 521, 532 и др. ф. 581, оп. 1, д. 93 и др.

[13] Տե՛ս Խ. Գուլանյան, Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ, էջ 25։

[14] Հարկավոր է նկատել, որ նախահեղափոխական ժողովրդագրությունը

Հայ պրոլետարիատի մեծ մասը գտնվում էր Բաքվում։ Նավթագործ բանվորների 29 տոկոսը հայեր էին (որոշ աղբյուրներով մինչև 32 տոկոսը)։ Նրանց մոտ 43 տոկոսը կադրային էին, իսկ 20 տոկոսից ավելին՝ վարպետներ։ Մեխանիկական գործարանների բանվորների 30,8 տոկոսը նույնպես հայեր էին։ Հայերն ավելի մեծ տոկոս էին կազմում շինարարությունում և ծխախոտի ֆաբրիկաներում։

1904 թվականի սկզբներին Բաքվի նավթարդյունաբերության բոլոր ճյուղերում աշխատող 30533 բանվորներից 7543-ը ռուսներ էին (24,7%), 6784-ը՝ պարսիկներ (22,2%), 5980-ը՝ հայեր (19,6%), 3653-ը՝ ադրբեջանցիներ (12,0%), իսկ 6572-ը՝ (21,5%) այլ ազգիներ [15]։

1880-ական թվականներից սկսած Բաքուն Զանգեզուրից հազարավոր երիտասարդ կարող ուժեր էր կլանում։ Միայն 1884 թվականի 10 ամսվա ընթացքում Զանգեզուրից Բաքու աշխատանք որոնելու են մեկնել 2925 մարդ, այդ թվում՝ Խնձորեսկից՝ 392, Գորիսից՝ 167, Ավալթյանից՝ 142, Խոտից՝ 131, Ուզից՝ 111, Շախաթից՝ 110, Տաթևից՝ 103, Շինուհայրից՝ 92, Բռնակոթից՝ 88, Կոռնիձորից՝ 72, Տոլորսից՝ 71, Մեղրիից՝ 64 [16]։ Իսկ 1902 թվականին Խնձորեսկ գյուղից Բաքու է գնացել ավելի քան 1300 մարդ։ Բաթումի խոշոր գործարանային 4000 բանվորներից 1500-ը հայեր էին։ Նրանք փախել էին Թուրքիայից 1894—1895 թվականներին, մազապուրծ եղել թուրքական կոտորածներից։ 1898 թվականին Երևանի նահանգից մոտ 20 հազար մարդ գտնվում էր պանդխտության մեջ։ Շատ հայ բանվորներ էին աշխատում Թիֆլիսի Ադելխանովի, Էնֆիաջյանցի, Միրզոյանի, Յարալովի և այլոց գործարաններում ու ֆաբրիկաներում։ Միրզոյանի բամբակեղենի ֆաբրիկան, որ գործարկվել է 1870 թվականից, հագեցված էր ժամանակի առաջավոր մեքենաներով, թողարկում էր ոիպս, պարուսինե

սխալ է հաշվել ադրբեջանցի բանվորների թիվը՝ հարավային ադրբեջանցիներին մտցնելով պարսիկների կազմի մեջ։ Այդ շփոթն ուղղելու համար օգտակար ջանքեր են գործադրել Վ. Սամեդովը, Ի. Սարիգունովը, Մ. Իսմայիլովը և ուրիշ հետազոտողներ, ավելի ստույգ դարձնելով ադրբեջանցի բանվորների դինամիկայի պարզաբանումը, որը և նկատի է առնված մեր կողմից։

15 «Обзор Бакинской нефтяной промышленности за 1903 г.», стр. 355, 358, 379.

16 Տե՛ս «Նոր Դար», 1885, № 139։ См. «Материалы по изучению быта государственных крестьян Кавказского края», Тифлис, 1886, том I, стр. 103.

և այլ գործվածքեղեն։ Ֆաբրիկայում աշխատում էին մի քանի հարյուր բանվոր[17]։ Հայ բանվորներն ապրում և աշխատում էին ռուսների, վրացիների, ադրբեջանցիների, հույների և այլ ազգերի զավակների հետ կողք-կողքի։ Նրանց շահերը համընկնում էին ռուսական պրոլետարիատի ընդհանուր, միասնական շահերի հետ[18]։

Արտագնացության էին դիմում Հայաստանի նաև մյուս գավառների ու գյուղերի աշխատավորները։ Շատերը գնում էին առանց ձեակերպման, իսկ մի մասը՝ համապատասխան թույլտվությամբ և անձնագրերով։ 1892—1894 թվականներին անձնագրերով Նոր Բայազետից և Մ. Ղարաքիլիսայից արտագաղթել են ավելի քան 4881 մարդ։ Ահա նրանց տրված անձնագրերի ցուցակը ըստ ամիսների (տե՛ս էջ 62-ի աղյուսակը)։

Արտագնացություն դիմած հայերի մեծ մասը դառնում էր մշտական, որակյալ բանվոր։ Այդ ցույց է տալիս Բաքվի պրոլետարիատի որակական կազմը։ Այսպես, 1899 թվականին Բաքվում աշխատող բանվորների 38,8 տոկոսն ուներ մինչև մեկ տարվա աշխատանքային ստաժ, 43,8 տոկոսը՝ մեկից մինչև 5 տարվա, իսկ 17,4 տոկոսը՝ 5 տարուց ավելի։ 1903 թվականին դրությունն ավելի էր փոխվել։ Բանվորների 50 տոկոսն ուներ մեկից մինչև 5 տարվա ստաժ, իսկ 27,6 տոկոսը՝ 5 տարուց ավելի։ Բաքու արտագաղթողներն ավելի ու ավելի նստակյաց էին դառնում։ Այս թվերը բնութագրում են Բաքվի արդյունաբերական բանվորների պրոլետարական կորիզի հավաքումը։ Կյանքը մեկ անգամ ևս հաստատում էր Կ. Մարքսի «Կապիտալ»-ի նշանավոր տեսությունը, որի համաձայն՝ հենց խոշոր մեքենայական ինդուստրիան էր, որ կատարյալ ու վճռական հեղաշրջում է առաջացնում արդյունաբերական ազգաբնակչության կյանքի պայմաններում, բաժանելով նրան վերջնականապես հողագործությունից և այդ վերջինի հետ կապված նահապետական կյանքի դարավոր ավանդություններից։

Իրավացի էր Ստ. Շահումյանը, երբ 1911 թվականին մարքսիստական «Նոր խոսք» հանդեսում բանավիճելով Պ. Պետրովիչի

---

17 См. Ушикашвили, Несколько слов о фабрике Мирзоева, газ. «Дроэба», № 3, 25 января 1872 г.

18 «Մշակի» տվյալներով 1896 թվականին Կարս—Թիֆլիս երկաթուղու շինարարության վրա աշխատում էին տասը հազար բանվոր (տե՛ս «Մշակ», № 90, 1896)։

Վայրի անունը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
Նոր Բայազետ 1892 թ.	—	195	117	146	9	27	12	18	113	86	95	155	1171
1893 թ.	103	192	98	174	61	30	32	70	179	93	132	83	1247
Մ. Վարաքիլիսա 1893 թ.	—	—	6	16	35	48	51	53	65	75	100	118	570
1894 թ.	126	144	173	186	196	201	206	226	221	224	—	—	1893

19 С. Заваров, Опыт исследования сельскохозяйственного хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1889, стр. 383.

հետ, ցույց տալով նրա նարոդնիկական սխալները, պնդում էր, թե՝ «Գյուղից բաժանվել և զուտ պրոլետարներ դառնալը մի պրոցես է, որ կատարվում է տասնյակ և ավելի տարիների ընթացքում։ Եթե մարքսիստները խոսում են այդ պրոցեսի արագության մասին, նկատի ունեն գյուղացիության հազարավոր տարիների անշարժ ու անփոփոխ կյանքը, նրա կայուն նահապետական աշխարհայացքը և այդ բոլորի իսկապես արագ ու սրընթաց հեղաշրջումը կապիտալիզմի ազդեցության տակ»[20]։

3

Երկրամասի բանվորական դինամիկան ցույց է տալիս, որ դարասկզբին Բաքվում աշխատում էր 65 հազար արդյունաբերական բանվոր, Վրաստանում՝ մոտ 50 հազար, այդ թվում՝ երկաթուղային տրանսպորտում՝ 6000, Բաթումի նավթամշակման գործարաններում՝ 5000—6000, Քութաիսի նահանգում՝ 8000, Թիֆլիսի ֆաբրիկա-գործարաններում՝ 7493, Ճիաթուրի մարգանեցի հանքերում՝ 3400—5000 մարդ[21]։ Միայն Կովկասի հանքարդյունաբերության մեջ աշխատում էր 17603 բանվոր[22]։

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում, երկաթուղային շինարարությունում և այլ տեղերում աշխատող շուրջ

---

20 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 176—177։

21 Պաշտոնական տվյալներով 1899 թվականին Թիֆլիսի նահանգում կար 10 559 արդյունաբերական բանվոր, իսկ Քութաիսի նահանգում՝ 6837 (см. ЦГИАЛ, ф. 2268, оп. 17, д. 36, л. 158—160, оп. 23, д. 53, л. 31—34, 1878, ф. 12, оп. 1, д 1738, л. 53—55, 1896, д. 864, л. 9—11, 1889, Архив Грузинского филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 37, д. 115а, таб. 5, Кавказский календарь, 1898, стр. 80—82, К. С. Квантера, История движения рабочих горноурд. пром. Грузии. Ն. Չախվաշվիլին արխիվային և հրապարակված նյութերի հիման վրա ցույց է տվել, որ Վրաստանում XX դարի սկզբին կար մոտ 50 հազար բանվոր (см. Н. А. Чахвашвили. Рабочие движения в Грузии (1870—1904 гг.) стр. 54. «Վրաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծերում» նշված է, որ Վրաստանում XX դարի սկզբին արդյունաբերական բանվորների ընդհանուր թիվը հասավ 27 հազարի (см. Очерки истории Коммунистической партии Грузии, Тбилиси, 1957, ч. 1)։ «Ուրվագծերի հրատարակությունից հետո անցել է բավական ժամանակ, որի ընթացքում հետազոտողները բազմաթիվ արժեքավոր նյութեր են դիտական շրջանառության մեջ դրել, որը նոր եզրակացությունների իրավունք է տալիս։

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 636։

10 հազար բանվորներից բացի, տասնյակ հազարավոր մարդիկ ժամանակավոր աշխատանքի էին մեկնում արդյունաբերական կենտրոններ։

Հայաստանում նույնպես պրոլետարիատը բազմազգ էր։ Նրա շարքերում կային ռուսներ, ադրբեջանցիներ, վրացիներ, ուկրաինացիներ, հույներ, պարսիկներ և այլ ազգերի ներկայացուցիչներ։ Բոլոր հիմքերն ունենք եզրակացնելու, որ XX դարի սկզբին երկրամասում կար 35—40 հազար կազմակերպված արդյունաբերական հայ պրոլետարիատ, որը կենտրոնացված էր Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, Երևանում, Ալավերդում, Ալեքսանդրապոլում, Ղափանում, Նոր Բայազետում և այլուր[23]։

Այսպիսով, պրոլետարիատի՝ բանվոր դասակարգի ձևավորման գլխավոր նախադրյալները կապիտալիստական հարաբերությունների զարգացումն էր, հայ բուրժուազիայի առաջացումը, երկրամասի արդյունաբերական կենտրոնների և քաղաքային բնակչության աճը, լեռնարդյունաբերության վերելքը, երկաթուղային շինարարությունը։ Խոշոր մեքենայական ինդուստրիան, Ռուսաստանի օրինակով, վերջնականապես անջատում է արդյունաբերությունը հողագործությունից, ստեղծում է «բնակչության հատուկ դասակարգ, որը բոլորովին խորթ է հին գյուղացիությանը, սրանից տարբերվում է կյանքի այլ կառուցվածքով, ընտանեկան հարաբերությունների ուրիշ կարգերով, ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր պահանջմունքների բարձր մակարդակներով»[24]։

Տարագնացները միայն անունով էին գյուղացիներ, իրականում նրանք բանվորներ էին։

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում կատարված փոփոխությունները ոչ միայն կապիտալիզմի զարգացման ահազանգն էին, այլ բանվորական շարժման ուղեհարթը։

---

23 Երկրամասի հայ բանվորների վերաբերյալ փաստերը քաղել ենք արխիվային նյութերից, «Կավկազսկի կալենդարի» համապատասխան տարեթվերից, Կ. Պաժիտնովի, Վ. Սամեղովի, Մ. Ադոնցի, Ի. Ստրիգունովի, Խ. Գուլանյանի և այլոց աշխատություններից։ Կ. Պաժիտնովի հաշվումներով 1900 թվականին Բաքվի նավթարդյունաբերության մեջ աշխատող 25214 բանվորներից 800-ը հայեր էին։ (См. К. А. Пожитнов, Очерки по истории бакинской нефтяной промышленности, М., 1940): Մ. Ադոնցի հաշվումներով 1900 թվականին այժմյան Հայաստանի տերիտորիայի վրա աշխատել են մոտավորապես 8100 բանվոր, այդ թվում՝ պղնձարդյունաբերության մեջ 1643 բանվոր (см. М. А. Адонц. Экономическое развитие Восточной Армении, стр. 526—527).

24 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 709։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՔԱՅԼԵՐԸ

1. Բանվորների դրությունը: 2. Առաջին ծաղիկները: 3. Հայաստանի երկաթուղային բանվորների տարեային պոռկումները:

I

Կապիտալի գոյության պայմանը վարձու աշխատանքն է: Բուրժուազիան անդիմորեն շահագործում է բանվորներին, քամում նրա վերջին հյութերը: Արդյունաբերական քաղաքը կլանում և հալումաշ էր անում գյուղական ծաղիկ երիտասարդությանը: Շատ ծանր էին բանվորների նյութական պայմանները: Մինչև 1880-ական թվականները Ռուսաստանի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատանքային օրը 13—14 ժամ էր: Ինչպես հաղորդել է Մոսկվայի նահանգի ֆաբրիկային տեսուչը, նահանգի 208 ֆաբրիկայում աշխատանքային օրը տևում էր 12 և կես ժամ, 229-ում՝ 13—13 ու կես ժամ, 257-ում՝ 14—14 ու կես ժամ, իսկ 175-ում՝ 15—18 ժամ: Մոսկվայի նահանգի բոլոր ֆաբրիկաներում շաբաթվա աշխատաժամերը միջին հաշվով կազմում էր 74 ժամ[1]*: Բուրժուազիան, որ ամեն ինչ անսիրտ կերպով կապել էր «կանխիկ հաշվից», շահամոլության կեղտաջրում խեղդել ամեն մի սրբություն, հարստահարման ավանդական ձևերը փոխարինել էր «բացահայտ, լկտի, ուղղակի, կոշտ ու կոպիտ շահագործումով»*[2]*,*

---

[1] См. «Сборник статистических сведений по московской губернии», том IV, Пб, 1881, стр. 358.

[2] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, էջ 39,*

Անհամեմատելի պայմաններում էին Անգրկովկասի բանվորները՝ նավթագործները, լեռնահանքային արդյունաբերության, կաշվի, թարածխի և այլ ձեռնարկությունների աշխատողները։ Շատ երկար էր աշխատանքային օրը, անասելի ցածր՝ վարձատրությունը, անմխիթար՝ բանվորների սանիտարական պայմանները։ Մաքսիմ Գորկին, որ այդ ժամանակ երկու անգամ եղել է Բաքվում, հետագայում գրել է. «Նավթահորերը իմ հիշողության մեջ մնացել են որպես մռայլ դժոխքի հանճարեղ ստեղծված պատկերներ»[3]։

Ժամանակի մամուլը, գրականությունը լի էր բանվորների դրության սրտաճմլիկ նկարագրություններով։ Գր. Արծրունին «Մշակի» էջերում, 1872 թվականին, անդրադառնալով Թիֆլիսի Միրզոյանի գործվածքեղենի և Թայիրյանի մոմի գործարանների բանվորների դրությանը, գրել է. «Այդ գործարանում (Թայիրյանի գործարանում—Խ. Բ.) մշտական աշխատողների թիվը 35 է, մեծ մասամբ հայերից։ Աշխատանքը սկսվում է ժամը 5-ին, առավոտյան, մի բանիսների համար 4 ժամին անգամ, և կատարվում է քանի մի նեղ և շնչառության համար ծանր սենյակների մեջ, որոնց օդը ապականված է անտանելի գարշահոտություններով, որը տարածում է ճրագու և ճարպ հալելիս։ Այդ ծանր օդի մեջ, այդ նեղ սենյակներում, մշակները մնում են մինչև 8 կամ 8 ու կես ժամ, այսինքն 14 ժամ շարունակ։ Հաշվելով հաց ուտելու ժամանակը։ Գարշահոտությունը ոչնչացնելու համար չեն գործ դնվում ոչինչ օդամաքրող միջոցները կամ վենտիլացիան։ Տասն և չորս ժամյա աշխատանքից ազատ մնացած ժամանակը, այսինքն գիշերը, մշակներն անցնում են ամենքը մի սենյակի մեջ հավաքված, որը ձմեռ ժամանակ, փակված դռներով մշակի համար դժոխքից պակաս չպիտի լինի...

Այդ ամեն պայմանները աչքի առաջ ունենալով, մենք տեսնում ենք, որ մշակներն ստանում են ամենաչնչին ռոճիկ։ Նրանցից մեծ մասը ամիսը 14 ռուբլի։ Այն մշակը, որը շոգեմեքենայի մոտ է գտնվում և սկսում է իր աշխատանքը ուրիշներից առաջ, այսինքն ժամը 3-ին կամ 4-ին, ստանում է մինչև մեկ ռուբլի։ Մշակների վերակացուն ստանում է 20 ռուբլի։

---

3 **М. Горький.** Собрание сочинений, том 17, стр. 113.

Այնպես, որ այդ աշխատողների մի ժամը վարձատրվում է 4 կոպեկով։ Բացի նրանցից գործարանում ամեն օր աշխատում են 6—7 կանայք, որոնք օրը ստանում են 20 կոպեկ, որը կանե 1 ու կես կոպեկ ժամը։ Ահա ինչպես մենք հոգում ենք այն էակների մասին, որոնց աշխատանքի միջոցով մենք հարստանում ենք»[4]։

Վաստակել «հացը հանապազօրյա»,— այս էր յուրաքանչյուր բանվորի, նրա ընտանիքի անդամի նվիրական բաղձանքը։ Բայց այն ձեռք էր բերվում դառն չարչարանքներով, արյան գնով։ Ալավերդու և Զափանի պղնձագործները օրնիբուն աշխատում էին ոլորապտույտ ձգվող՝ մութ ու խոնավ, օդազուրկ խրամուղիներում։ Հայաստանի ֆաբրիկաներն ու գործարանները գտնվում էին հակասանիտարական դրության մեջ, չկար տեխնիկական անվտանգության ապահովվածություն։

Թեև բանվորական շարժումների ազդեցության տակ 1897 թվականի հունիսի 2-ին ցարական կառավարությունը հատուկ օրենք էր ընդունել բանվորական օրվա կրճատման մասին[5], և այն տարածվում էր նաև Անդրկովկասում, բայց էական ոչ մի փոփոխություն չկատարվեց բանվորների կյանքում։ Ավելի դաժան էին վարվում կանանց և անչափահաս երեխաների նկատմամբ։

Իհարկե, աշխատավարձի այս չափերը կայուն չէին, հաճախ էին փոփոխության ենթարկվում։ Որպես կանոն, շահում էր կամակոր տերը, տուժում՝ աշխատանքային ուժը վաճառքի հանած բանվորը։ Ավելացնենք, իսկ երբ բանվորի շահագործումը գործարանատիրոջ կողմից ավարտվում էր, և բանվորը վերջապես ստանում էր շնչին աշխատավարձը, այն ժամանակ, գիշատիչ անգղների նման, նրա վրա էին հարձակվում բուրժուական հասարակության մյուս հարստահարիչները։ Գնալով բարձրանում էին առաջին անհրաժեշտության ապրանքների գները, և դա էլ ավելի էր ծանրացնում բանվոր դասակարգի դրությունը։

---

4 «Մշակ», № 3, 1872։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 5, էջ 51։ 1897 թ. հունիսի 2-ի օրենքը գործողության մեջ դրվեց 1898 թվականի հունվարի 1-ից։ Օրենքը սահմանում էր ֆաբրիկա-գործարաններում և երկաթուղային արհեստանոցներում 11 ու կես ժամ տևողությամբ բանվորական օր։ Դա Ռուսաստանի բանվոր դասակարգի հաղթանակն էր։

Բանվորների աշխատավարձի չափը և շարժումը 1880—1900-ական թվականներին։

Մասնագիտության անվանումը	1880-ական թվականներ[6]		1890-ական թվականներ[7]		1900-ական թվականներ[8]	
	ռուբլի	կոպեկ	ռուբլի	կոպեկ	ռուբլի	կոպեկ
Բարտաշ	2	50	1	80	1	50
Հյուսն	2	—	1	50	1	60
Որմնադիր	2	—	1	50	1	50
Դարբին	1	50	1	50	2	—
Ներկարար	1	50	2	—	1	—
Մրճահար	1	—	—	80	1	20
Պգնձագործ	2	—	1	—	2	—
Բանվոր	—	30	—	45	—	40
Բանվոր (ձիասայլի հետ միասին)	1	50	3	—	1	40
Փականագործ	2	50	2	—	2	—
Ալաբաստրագործ	1	50	1	50	1	50
Ատաղձագործ	2	50	2	—	2	—
Խառատ	2	50	—	—	2	—
Ծեփագործ	2	—	1	80	1	50
Վառարանագործ	3	—	2	—	3	50
Տակառագործ	2	—	—	—	2	—
Պայթեցնող	1	—	—	—	1	20
Հորատող	—	—	—	80	—	—
Կազմարար	—	—	3	—	—	—
Աղյուսագործ	2	—	1	—	—	—

Այսպես, հացի մեկ ֆունտը 1886 թվականին արժեր 1·5 կոպեկ, իսկ 1901 թվականին՝ 3 կոպեկ, ոչխարի միսը՝ համապատասխանաբար՝ 4 և 10, կովի յուղը՝ 28 և 45, ցորենի ալյուրի փութը՝ 64 և 1 ռուբլի և այլն[9]։

Բանվորները, որ շահագործման կրկնակի լուծ էին քաշում, զրկված էին քաղաքական և քաղաքացիական իրավունքներից։ Նրանք իրավունք չունեին պրոֆմիություններ ստեղծել, բանվորական թերթ հրատարակել։

---

6 Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 149, թ. 6։

7 Նույն տեղում, գ. 127, թ. 7։

8 Նույն տեղում, գ. 258, թ. 10։

9 Տե՛ս Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 121, թ. 10—14, գ. 149, թ. 2—4, գ. 227, թ. 2—7, գ. 458, թ. 5—20, գ. 484, թ. 13—43։ Երևանի նահանգի բանվորների դրության մասին հանգամանորեն տե՛ս Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917), էջ 136—137։

Կապիտալիզմի զարգացման, տեխնիկական առաջադիմության, տնտեսական կյանքի ընդհանուր վերելքի և բանվոր դասակարգի դրության ծանրացման զուգընթաց, բյուրեղանում, ասպիճանաբար բարձրանում է բանվորների դասակարգային գիտակցությունը, սկիզբ են առնում և ծավալվում բանվորական հեղափոխական շարժումները։

2

Ռուսաստանի օրինակով Անդրկովկասի պրոլետարիատը անցյալ դարի 70-ական թվականներից ծավալում է գործադուլային շարժումներ։

Երկրամասի արդյունաբերական բանվորների առաջին գործադուլը տեղի է ունեցել 1872 թ. Թիֆլիսում՝ Միրզոյանի ֆաբրիկայում, և մայիսին՝ Գնաբենի պղնձաձուլական Սիմենս գործարանում[10]։ Միրզոյանի ֆաբրիկայի գործադուլի ղեկավարն էր շամախեցի բանվոր Եղոր Պոպովը։ Գործադուլը, թեև ճնշվեց ոստիկանության կողմից, բայց 13-օրյա պայքարից հետո, գործադուլավորները հաղթեցին։ Վախեցած ֆաբրիկանտը ստիպված էր բարձրացնել աշխատավարձը և աշխատանքի ընդունել գործադուլի օրերին հեռացրած բանվորներին։

Դեռևս 1868 թվականի հոկտեմբերի 20-ին Կողբի աղահատները հրաժարվում են աշխատանքի դուրս գալ, կազմում և տերերին են ներկայացնում իրենց պահանջները։ Դրանից 7 տարի անց, 1875 թվականի մայիս-հունիս ամիսներին, Կողբի աղահատները նորից են ընդհարվում կապալառուների հետ։ Տնտեսական պոռթկումը ավարտվում է աղահատների և կապալառուների միջև կընքված երկկողմանի համաձայնությամբ։ Նույն թվականի հունիսի 4-ին Կողբի աղահանքի կառավարիչի պաշտոնակատարը Երևանի նահանգապետին հաղորդել է աղահատների սպառնացող հուզումները կանխելու նպատակով ձեռնարկած միջոցառումների մասին։ Ինչ խոսք, որ Կողբի աղահատների այդ անդրանիկ ելույթները տարերային բնույթ էին կրում և տնտեսական պահանջներից այն կողմ չէին անցնում[11]։

---

10 См. Н. А. Чахвашвили, Рабочее движение в Грузии (1870—1904 гг.), Тбилиси, 1958, стр. 91; А. Н. Гулиев, Славная победа бакинского пролетариата, изд. АН Азерб. ССР, Баку, 1955, стр. 13.

11 Տե՛ս Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 272, ցուց. 1, գ. 124, թթ. 12—14, գ. 158, թ. 7, գ. 154, թթ. 9—10 և այլն։ «Մեղու Հայաստանի», № 20, 31 մայիսի, 1875։

1876 թվականին բանվորական ելույթներ են կազմակերպվել Փոթի—Թիֆլիս երկաթուղային շինարարությունում:

Բաքվի բանվորների 1881 թվականի ապրիլին ձեռնարկած տարերային ելույթը այդ շրջանի խոշոր իրադարձություններից է: Մի քանի օր շարունակվող մասսայական բանվորական ընդվզումների ընթացքում պրոլետարիատը ընդհարվում է ցարիզմի գործակալների՝ ոստիկանության, զորքի ու կազակային ուժերի հետ: Ժամանակի ռուսական մամուլը արձագանքելով դրան («Նեդելյա», «Ռուսկի կուրյեր»), միակողմանի է լուսաբանել այդ կարևոր երևույթը: Բաքվի բանվորների ելույթը իր վրա բևեռեց Ռուսաստանի ուշադրությունը: Ռուս գրող Գ. Ուսպենսկին «Օտեչեստվենների զապիսկի»-ի 1883 թվականի համարում հանդես է եկել առանձին հոդվածով (ճամփորդական նոթերից)[12]: 1881 թվականի ապրիլի 14-ին սկսված Բաքվի բանվորների ելույթը շարունակվեց 5 օր: Այն քաղաքական աչքի ընկնող երևույթ էր «մազութի թագավորությունում»:

1882 թվականին, գործադուլային շարժման մեջ են մտնում Բաթումիի բանվորները:

Երկաթուղուն սպասարկող Թիֆլիսի գլխավոր արհեստանոցները դարասկզբին դարձան բանվորական հեղափոխական շարժումների հզոր օջախներից մեկը: Գլխավոր երկաթուղային արհեստանոցների աշխատողների 1886 թվականի գործադուլը ապդանշան ծառայեց Անդրկովկասում հետագա տարիներին բռնկված գործադուլների համար: 1892 թվականին գործադուլ են անում Բաքվի Միրզաբեկյանցի ծխախոտի ֆաբրիկայի 250 բանվորները: Նրանք հանդես են գալիս տնտեսական պահանջներով: 1894—1897 թվականներին տեղի են ունենում Բաքվի, Թիֆլիսի ծխախոտի, կաշվի ու կոշիկի գործարանների բանվորների գործադուլները: Դրանք առաջին ծագիկներն էին:

3

«Ամսիս 25-ին Մալխասյանի տպարանի բանվորները գործադուլ են արել, գործադուլի պատճառը ոռճիկի քչությունը և ան-

---

[12] См. газета «Неделя», № 19, 1881, газ. «Русский курнер», № 118, 119, от 2 и 3 мая 1881 г. Г. Успенский, Полное собрание сочинений, том VIII, изд. АН СССР, 1949, стр. 274—291, ЦГИАМ, ф. 102, оп. 168, 1881, д. 1, л. 2, газ. «Каспий», № 24, от 2 марта, № 29, от 13 марта 1883

կանոն վճարելն է։ Ինչպես ասում են, բանվորներն ուր հարկն է, բողոք են տալու, որպեսզի իրենց հասանելիք օրավարձը ստանան։ Այդ տպարանում բանվորներն ստանում են ամսական 3—12 ռուբլի։ Օրական բանում են 14—16 ժամ,— «Մշակ»-ի 1895 թվականի օգոստոսի 5-ի համարում Հայաստանի բանվորական առաջին գործադուլներից մեկի մասին այսպես էր գրում Հայ բանվոր հեղափոխական սոցիալիստի անդամ Արշալույս Խաժակյանը (Ա. Խաժ.)։ Այդ ժամանակ տարերային կերպով գործադուլի ելան ոչ միայն Ալեքսանդրապոլի տպարանների, այլև այլ ձեռնարկությունների բանվորները։

Բանվորական տարերային-տնտեսական առաջին ելույթներին ու պոռթկումներին արձագանքում են առանձնապես Թիֆլիս—Կարս, Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղային շինարարության աշխատողները։ Կայսրության հեռավոր ծայրերում, Հայաստանում կառուցվող երկաթուղու վրա տարբեր տեղերից հավաքված բազմահազար ու բազմալեզու բանվորները ենթարկվում էին անասելի շահագործման, գտնվում էին կենցաղային ծանր պայմաններում։ Կապալառուներն ու ենթակապալառուները շահագործում էին բանվորներին, զիշեր ու ցերեկ ֆիզիկական դաժան աշխատանքում նրանց ուժասպառ անելուց հետո աննշան վարձատրում։ Օրավարձով աշխատող բանվորները, որ եկել էին հայկական գյուղերից, իրենց հասանելիքի առանց այն էլ չնչին վարձի (50—70 կոպեկ) հազիվ մի մասն էին ստանում[13]։ Աշխատողներին երկար ժամանակով աշխատավարձ չվճարելը սովորական երևույթ էր։ Երբեմն կապալառուները բանվորներին մի քանի ամիս աշխատավարձ չտալով, յուրացնում էին նրանց հասանելիքը և փախուստի դիմում։

Հաղարավոր բանվորներ ապրում էին գետնախորշերում, բարաքներում կամ էլ բացօթյա, հնարավորություն չունեին պատրաստվելու ցրտից և անձրևներից։ Այս բոլորը գնալով խորացնում էր բանվորների դժգոհությունը ադմինիստրացիայի նկատմամբ։ Կենտրոնական քաղաքներից եկած, պայքարի փորձ ունեցող աշխատողների ազդեցության ներքո բանվորների դասակարգային ինքնաճանաչությունը ուժեղանում է։ Բանվորները սկսում են կորցնել վաղեմի հավատն իրենց տերերի նկատմամբ, զգալ կոլեկտիվ դիմադրության անհրաժեշտությունը։ Ախթալայի տեղամասի բանվորները, որ ավելի մոտ էին գտնվում Թիֆլիսին, առա-

---

13 См. «Новое обозрение», № 4230, от 23 апреля 1896.

ջինը լսելի դարձրին իրենց դժգոհության ձայնը: 1896 թվականի ապրիլին 200 բանվորներ, որ երկար ժամանակ աշխատավարձ չէին ստացել, գործադիր արին: Նրանք հավաքվեցին Ախթալայում գտնվող գրասենյակի մոտ և պահանջեցին անմիջապես վճարել իրենց հասանելիքը: Երբ կապալառու Բելոբորոդովը հայտարարեց, թե ինքը փող չի ստացել Թիֆլիսից, բանվորները մտան գրասենյակ և առաջարկեցին նրանց իրենց հետ միասին գնալ Թիֆլիս՝ հաշիվները փակելու: Թիֆլիս—Կարս երկաթուղու կառուցման աշխատանքների պետի օգնականը, տեսնելով այդ, տագնապահար հայտնում է Բորչալուի գավառապետին և օգնություն խնդրում: Գավառապետի կարգադրությամբ ոստիկանական պրիստավը՝ ժանդարմների ուղեկցությամբ մեկնում է Ախթալա և ոստիկանական միջոցներով «կարգը վերականգնում»[14]: Բանվորները զգալով, որ իրենց նորից են խաբում, ապրիլի 15-ին, այս անգամ արդեն 400 հոգով, աշխատանքը կրկին դադարեցնում են:

Գործադուլավորների արդարացի պահանջները բավարարելու փոխարեն, լրացուցիչ ոստիկաններ են ուղարկվում և զենքի ուժով կատարում բանվորների դիմադրությունը[15]: Ախթալայի տեղամասի բանվորներին արձագանքեցին երկաթուղու շինարարության մյուս տեղամասերի աշխատողները, որոնք նույնպես անլուր կերպով շահագործվում էին: Օգոստոսի 11-ին բանվորական ընդվզումներ եղան 3-րդ տեղամասում, իսկ դեկտեմբերի սկզբներին՝ Զամանլուի շինարարության մասում: Նորից ոստիկանությունը զենքի դիմեց, որի ընթացքում վիրավորվեց երկու բանվոր: Մեկ տարի անց, 1897 թվականի հոկտեմբերին, բանվորական նոր ելույթներ եղան երկաթուղու շինարարության Կարսի տեղամասում[16]:

Հայաստանի բանվորների առաջին ելույթները տարերային բնույթ ունեին, առաջանում էին տնտեսական հողի վրա, հաճախ

---

14 См. ЦГИА Груз. ССР, ф. 39, д. 126, л. 1. Նույնը Վ. Ավետիսյան, *Մի էջ Հայաստանի բանվորական շարժումների պատմությունից, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, էջ 47—50:*

15 Տե՛ս ЦГИА Грузинской ССР, ф. 39, д. 126, лл. 3—4.

16 «Ռուսաստանում բանվորական շարժման համառոտ պատմություն» գրքում անտեսվել են Հայաստանի բանվորների այդ ժամանակվա հեղափոխական շարժումները: Առհասարակ գրքի հեղինակները հստակ պատկերացում չունեն հայ պրոլետարիատի նախահոկտեմբերյան շրջանի պատմության մասին, որի պատճառով էլ հանգել են այն ոչ ճիշտ հետևության, որ իբր մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Հայաստանը բանվոր դասակարգ չի ունեցել: Եվ ապա՝ Հայաստանում XX դարի սկզբին ստեղծված սոցիալ-

նման էին գյուղացիական բունտերի։ Իր ժամանակի առումով, այնուամենայնիվ, դրանք հեղափոխականացնող նշանակություն ունեին։ Դրանք արձագանքում էին Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորական շարժումներին, իրենց վրա հատկապես կրում էին Թիֆլիսի երկաթուղային գլխավոր արհեստանոցների և դեպոյի բանվորների ազդեցությունը։

1896 թվականին, Պետերբուրգի բանվորների 1895—1896 թվականների նշանավոր գործադուլների օրինակով, Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցներում տեղի է ունենում առաջին խոշոր գործադուլը, որն աչքի ընկավ իր կազմակերպվածությամբ։ Գործադուլավորներից 41 հոգի բանտարկվեցին, իսկ շատերը, որպես «վատնդավոր» և «անբարեհույս», հեռացվեցին աշխատանքից։ Նրանց մեջ էր հայ առաջին լավագույն բանվոր-հեղափոխական, սոցիալ-դեմոկրատ Գ. Մկրտումյանը։ Հատկապես աչքի ընկավ ռուս նշանավոր բանվոր, մարքսիստ Ս. Ալիլուևը[17]։ Նույն թվականի փետրվարի 18-ից մինչև մարտի 11-ը գործադուլ արեցին Թիֆլիսի Էնֆիաջյանցի ֆաբրիկայի բանվորները։

Մինչև 1900 թվականը խոշոր գործադուլներ բռնկվեցին Ռուսաստանի շատ քաղաքներում։ 1894 թվականին Ռուսաստանում արձանագրվել է 77 գործադուլային շարժում, որին մասնակցել է 48,3 հազ. մարդ, 1895 թվականին՝ 127, մասնակցել է 54,5 հազար մարդ, 1896 թվականին՝ 183, մասնակցել է 65,5 հազար մարդ, իսկ 1897 թվականին՝ 258, մասնակցել է 70,4 հազար մարդ[18]։ 1895 թվականի նոյեմբերին Տորնտոնի ֆաբրիկայում «Պայքարի միության» ղեկավարությամբ 500 ջուլհակների կազմակերպած գործադուլը մայրաքաղաքում գործադուլային շարժման նոր վերելքի ազդանշան ծառայեց։ «1895—1896 թվականներից,— գրել է Վ. Ի. Լենինը,— Պետերբուրգի հաշակավոր գործադուլների ժամանակ, սկսվում է բանվորական մասսայական շարժումը սոցիալ-դեմոկրատիայի մասնակցությամբ»[19]։

1898 թվականին Թիֆլիսի բանվորներն անց են կացնում

դեմոկրատական կազմակերպությունները աշխատել են ՌՍԴԲՊ Թիֆլիսի և Բաքվի կոմիտեների անմիջական ղեկավարությամբ (տե՛ս դոցենտ Ս. Շեպրով, «Մայրաքաղաքից մինչև ծայրամասերը» գլուխը (см. Краткая история рабочего движения в России, М. 1962, стр. 161)

17 Տե՛ս ЦГИА Грузинской ССР, ф 34 с, д. 327, 1900.

18 См. «История Коммунистической партии Советского Союза», том I, М., 1965, стр. 189.

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 300—301։

առաջին մայրվկան, հետագայում՝ 1899—1901 թվականին մայրվկաններ են կազմակերպում Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի, Երևանի, Ալեքսանդրապոլի և այլ քաղաքների բանվորներ[20]: Երկրամասի 1870—1890-ական թվականների բանվորական շարժման մեջ նկատվում են էական տարբերություններ: Դա ամենից առաջ պայմանավորված է բանվորության կազմի, նրա տարած քանակական ու որակական փոփոխությունների հետ: Եթե 1870-ական թվականներին բանվորական կորիզը թույլ էր, արտադնացների մի զգալի մասը կապված էր գյուղի հողակտորի հետ, ապա 1890-ական թվականներին բանվորական բանակն ավելի է մեծանում, արտադնացների ճնշող մասը ընդմիշտ կապվում է արդյունաբերության հետ, դառնում արդյունաբերական բանվոր: Տեղի է ունենում բանվոր դասակարգի համախմբումնացում: Մանր արհեստանոցներին փոխարինում են ֆաբրիկա-գործարանները, խոշոր միավորումները, կապիտալիստական շահագործման գիշատիչ ձևերը ուժեղացնում են բանվորների դասակարգային գիտակցությունը, ավելի են սրում հակասությունները, ուժեղանում է բանվորների հետաքրքրությունը դեպի սոցիալիստական գաղափարները: Երկրամասի բանվորների քաղաքական դաստիարակությանը մեծ չափով օգնում են Ռուսաստանի կենտրոնական քաղաքներից եկած բանվորական հոսքը, հեղափոխական պայքարի բովից անցած, քաղաքական մկրտություն ստացած բանվորները: Աստիճանաբար սոցիալիստական գաղափարները ուղի են հարթում և թափանցում բանվորների մեջ, «բանվորներն իրենց մեջ» վիճակից դառնում են «բանվորներն իրենց համար» դասակարգ:

Անդրկովկասի մարքսիստական առաջին խմբերը, որոնց մեջ համատեղ գործում էին ինչպես Ռուսաստանից արտաքսված հեղափոխականները, այնպես էլ հայ, վրացի, ադրբեջանցի և այլ ազգությունների ներկայացուցիչները, հաջողությամբ գլխավորում էին բանվորների առաջին ցույցերն ու ելույթները:

Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման գործում, տնտեսական նախադրյալներից զատ, խոշոր ազդակ հանդիսացան գաղափարական նախադրյալները, որոնք սերտորեն կապված են XIX դարի երկրորդ կեսին Ռուսաստանի հասարակական կյանքում առաջացած տեղաշարժերի, մարքսիզմը ռուսական հասարակական և հեղափոխական մտքի ուղղություն դառնալու և սոցիալ-դեմոկրատական շարժման ծավալման հետ:

---

20 Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Грузии», ч. I, Тбилиси, 1957, В. Ю. Самедов, Распространение марксизма-ленинизма в Азербайджане, Баку, 1962 и др.

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԱՐԲՈՒԶՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐՔՍԻԶՄԸ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՏՔԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

1. Մարքսիստական գաղափարների թափանցումը Ռուսաստան XIX դարի 40—70-ական թվականներին: 2. Նոր տիպի մարքսիզմ: «Աշխատանքի ազատագրություն» խմբի հրատարակությունները:

I

Ռուսաստանը մարքսիզմը երկնել է շուրջ կեսդարյա փոթորկալից պատմությամբ: Անցյալ դարի մոտավորապես 40-ականից մինչև 90-ական թվականները, Ռուսաստանում առաջադեմ միտքը, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, չտեսնված վայրենի ու ռեակցիոն ցարիզմի ճնշման տակ, ագահությամբ որոնում էր հեղափոխական ճիշտ թեորիա, դարմանալի ջանասիրությամբ և խնամքով հետևելով Եվրոպայի և Ամերիկայի ամեն տեսակ և յուրաքանչյուր «վերջին խոսքին» այդ բնագավառում[1]*: Վտարանդության շնորհիվ հեղափոխական Ռուսաստանը անցյալ դարի երկրորդ կեսում ուներ այնպիսի ինտերնացիոնալ բազմապիսի կապեր, հեղափոխական շարժման համաշխարհային ձևերի ու տեսությունների մասին այնպիսի բաջատեղյակություն, որպիսին չուներ աշխարհի և ոչ մի երկիր:*

Մարքսիզմի գաղափարները Ռուսաստան են թափանցել տակավին XIX դարի 40-ական թվականներին[2]*: Ռուսաստանն այն*

---

1 *Տե՛ս* Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 31, էջ 10—11:*

2 *Այդ մասին հանդամանորեն տե՛ս Վ. Ի. Լենինի «Մարքս-Էնգելս մարքսիզմը», Երևան, 1933,* Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին, *Գիտական կոմունիզմի մասին, Երևան, 1965։* В. Котов. Проникновение и распространение марксиз-

երկրներից էր, որի հասարակական առաջադեմ միտքը, մարքսիզմի գաղափարները, նրա ձևավորման առաջին իսկ օրերից, դիմավորեց մեծ ուշադրությամբ և ջերմ ակնածանքով։ «...բոլշևիզմը 1903 թվականին առաջացավ մարքսիզմի թեորիայի ամենահաստատուն բազայի վրա»,— գրել է Վ. Ի. Լենինը։—Իսկ այդ.—և միայն այդ,— հեղափոխական թեորիայի ճշտությունն ապացուցեց ո՛չ միայն ամբողջ XIX դարի համաշխարհային փորձը, այլև առանձնապես հեղափոխական մտքի մոլորումների ու տատանումների, սխալների ու հիասթափությունների փորձը Ռուսաստանում»[3]։

XIX դարի 40—50-ական թվականներին, երբ մարքսիզմի գաղափարները, ուղի հարթելով, նոր էին միայն թափանցում Ռուսաստան, այն ծանոթ էր շատ նեղ խմբերի մարդկանց, գերազանցապես ազատագրական շարժման ղեկավարներին։ Ընդ որում, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի առանձին աշխատությունների բովանդակությանը նրանք հիմնականում իրազեկ էին գերմաններեն և ուրիշ այլ օտար լեզուներով հրատարակություններից։

Ռուսական հասարակական առաջավոր միտքը մի նոր բարձրակետի հասցրին մեծ հեղափոխական դեմոկրատներ Ա. Ի. Գեր-

---

ма в России (с 40-х до 90-х годов XIX в.), М., 1954, **В. Невский.** История РКП(б). Краткий очерк, изд. 2, Л., 1926, **С. Покровский.** Фальсификация истории русской политической мысли в современной реакционной буржуазной литературе. М., 1957, Группа «Освобождение труда» (Библиография за 50 лет). Сост. Всесоюз. б-кой им. В. И. Ленина, под ред. и со вступительной статьей В Невского, М., 1934, **Н. Сергиевский,** Первый транспорт литературы группы «Освобождение труда», «Красный архив», № 5, 1926, «Карл Маркс и царская цензура». Документы. Журн. «Красный архив», т. I (56), 1933, стр. 181—188, **М Валеев,** Н. Е. Федосеев — один из первых марксистов в России. Казань, 1952, **О. Калекина,** Очерки по истории издания марксистской литературы в России (1870—1917 гг.), М., 1962, **Л. Левин,** Библиография произведений К. Маркса и Ф. Энгельса, М., 1948, его же, «Манифест Коммунистической партии» в России, М., 1956, **Ю. Полевой,** Зарождение марксизма в России, М., 1958, **А. Реуэль,** Русская экономическая мысль 60—70-х годов XIX века и марксизм, М., 1956, **Б. Чачин,** Проникновение идей марксизма в Россию 1845—1883, Лениздат, 1948, **В. Самедов,** Распространение марксизма-ленинизма в Азербайджане, ч. I, Баку, 1962, част II, Баку, 1966, «История Коммунистической партии Советского Союза», том I, «Создание большевистской партии», 1883—1903 гг., М., 1965 и др.

[3] Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 31, էջ 10։*

ցենը, Վ. Գ. Բելինսկին, Ն. Գ. Չերնիշևսկին, Ն. Գ. Դոբրոլյուբովը և նրանց մերձավոր գինակիցները։ Հավատարիմ մնալով Մ. Լոմոնոսովի և Ա. Ռադիշչևի առաջավոր ավանդներին, նրանք XIX դարի 40—70-ական թվականներին բեղմնավոր գործունեություն ծավալեցին, ջանալով արթնացնել ժողովրդին, ոտքի հանել նրանց հին, ճորտատիրական կարգերի և ցարական ինքնակալության դեմ։

Ռուսաստանում, Վ. Ի. Լենինի բնութագրությամբ, ազատագրական շարժումն անցել էր երեք գլխավոր էտապներ, համապատասխան ռուսական հասարակության այն երեք գլխավոր դասակարգերի, որոնք իրենց կնիքն էին դրել շարժման վրա։ Դրանք են՝ 1. ազնվականական ժամանակաշրջան, մոտավորապես 1825-ից մինչև 1861 թվականը, 2. ռազնոչինական կամ բուրժուա-դեմոկրատական, մոտավորապես 1861-ից մինչև 1895 թ., 3. պրոլետարականը՝ 1895 թվականից սկսած[1]։ Ազնվականական ժամանակաշրջանի ամենաականավոր գործիչները դեկաբրիստներն ու Գերցենն էին։ Ինչպես դեկաբրիստներն արթնացրին Գերցենին, այնպես էլ Գերցենն ու «Կոլոկոլ»-ն օգնեցին արթնացնելու ռազնոչինցիներին։ Ռուսաստանի ազատագրական շարժման երկրորդ փուլի նշանավոր գեմքը Ն. Չերնիշևսկին է։ Նախամարքսյան հասարակական մտքի պատմության մեջ ոչ ոք այնպես չմոտեցավ գիտական սոցիալիզմին, ինչպես Ն. Չերնիշևսկին։ Կ. Մարքսը «Կապիտալ»-ի գերմաներեն երկրորդ հրատարակության վերջաբանում Չերնիշևսկուն համարել է «ռուս մեծ գիտնական և քննադատ», որը վարպետորեն բացահայտել է բուրժուական քաղաքատնտեսության սնանկությունը[5]։ Ֆ. Էնգելսը նույնպես հիացմունքով է արտահայտվել Ն. Չերնիշևսկու մասին։ 1884 թվականի հունիսի 26-ին Ե. Պապրիցին[6] գրած նամակում Ֆ. Էնգելսը նշել է, որ Կ. Մարքսի հետ միասին նրանք գոհ են նրանով, որ եթե Ռուսաստանում «որոշ գպրոցներ էլ աչքի են ընկել ավելի շատ իրենց հեղափոխական ավյունով, քան գիտական հետազոտություններով, եթե եղել են և դեռ կան զանազան դեգերումներ, ապա մյուս կողմից՝ եղել են նաև քննադատական միտք ու անձնազոհ որոնում-

---

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 297։

5 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. առաջին, Երևան, 1954, էջ 13։

6 Ե. Է. Պապրից (1853—1919) — ռուս երգչուհի, այնուհետև ռուսական երաժշտության ուսումնասիրող։ Նա կապված է եղել Մոսկվայի անվեղալ «Թարգմանիչների և հրատարակիչների ընկերության» հետ (1882—1884), որը ռուսերեն հրատարակեց Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մի շարք երկեր։

ներ մաքուր թեորիայի բնագավառում՝ արժանի մի ժողովրդի, որը տվել է Դոբրոլյուբով և Չերնիշևսկի: Ես խոսում եմ ոչ միայն ակտիվ հեղափոխական սոցիալիստների մասին, այլև ռուս գրականության պատմական բնագրատական այն դպրոցի մասին, որն անսահման շատ բարձր է այն բոլորից, ինչ Գերմանիայում ու Ֆրանսիայում ստեղծել է պաշտոնական պատմական գիտությունը»[7]:

Տասը տարի անց, 1894 թվականին, իր «Ռուսաստանի հասարակական հարաբերությունների մասին» հոդվածի վերջաբանում Ֆ. Էնգելսը գրել է. Նիկոլայ Չերնիշևսկին մեծ մտածող է, «որին Ռուսաստանը անսահման շատ բանով է պարտական և որի գանգազ սպանությունը Սիբիրի յակուտների մեջ երկարամյա աքսորով՝ հավերժ խայտառակության բիծ կմնա Ալեքսանդր II «Ազատարարի» հիշատակին»[8]:

Վ. Ի. Լենինը նշել է, թե Չերնիշևսկու աշխատություններից «դասակարգային պայքարի ոգու շունչ է փչում»[9]:

Հեղափոխական մեծ դեմոկրատները գյուղացիական սոցիալիզմի զաղափարախոսներ էին: Նրանք չէին տեսնում և դեռ չէին էլ կարող տեսնել ամենատաղավոր ուժի՝ բանվոր դասակարգի պատմական դերը:

Վաղամեռիկ «հանճարեղ պատանին»՝ Ն. Դոբրոլյուբովը (նա ապրեց ընդամենը 25 տարի), շատ բան արեց ռուս հեղափոխական մտքի զարգացման համար: Նա մի քանի տարի կանգնած էր ռուսական գրականության, ռուսական մտքի ողջ զարգացման գլուխ: Նա «զգում էր, որ իր աշխատությունները հզոր կերպով արագացնում են մեր զարգացման ընթացքը և նա շտապեցնում էր, շտապեցնում ժամանակը»[10]: Կ. Մարքսը Դոբրոլյուբովին համեմատում էր Լեսինգի և Դիդրոյի հետ[11]: «Ամբողջ կրթված և մտածող Ռուսաստանի համար,— գրել է Վ. Ի. Լենինը,— թանկ է այն գրողը (Դոբրոլյուբովը), որը բուռն կերպով ատում էր կամայականությունը և բուռն կերպով սպասում ժողովրդական

---

7 Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս-քաղաքական գործիչների հետ, Երևան, 1954, էջ 356։

8 Նույն տեղում, էջ 368

9 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 20, էջ 298։

10 Н. Г. Чернышевский, Полное собр. соч., т. VII, 1950, стр. 852.

11 Տե՛ս Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 100։

ապստամբությանն ընդդեմ «ներքին թուրքերի», ընդդեմ ինքնակալական կառավարության»[12]։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի վաղ շրջանի որոշ գործերի մասին գիտեին Ա. Գերցենը և նրա խմբակի անդամները։ 1844 թվականին Վ. Բելինսկու և Ա. Գերցենի գրադարանում պահվում էին Կ. Մարքսի և Ա. Ռուգեի խմբագրությամբ Փարիզում հրատարակվող Գերմանա-ֆրանսիական տարեգրքերի՝ Deutsch=Franzosische Jahrbücher-ի համարները, ուր զետեղված էին մարքսիզմի հիմնադիրների առանձին աշխատություններ, այդ թվում՝ Կ. Մարքսի «Հեգելի իրավունքի փիլիսոփայության քննադատության շուրջը» և Ֆ. Էնգելսի «Հրեական հարցի շուրջը», «Անգլիայի դրությունը», «Քաղաքատնտեսության քննադատության ուրվագծերը» և այլն։ Սակայն Ռուսաստանն Արևմտյան Եվրոպայից բաժանող մտավոր պատնեշները խոչընդոտեցին ռուս մեծ հեղափոխական դեմոկրատներին՝ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի երկերին ծանոթանալու և յուրացնելու դրանցում արտահայտված գաղափարները։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը կապեր էին պահպանում ռուս առաջավոր քաղաքական գործիչների հետ, որն էլ ավելի սերտ դարձավ իրենց կյանքի վերջին տարիներին։ Նրանք նամակագրություն ունեին Պ. Վ. Աննենկովի[13], Ն. Ի. Սազոնովի[14], Պ. Լ. Լավրովի[15], Ն. Ֆ. Դանիելսոնի[16] (Նիկոլայ-օն), Վերա Զասուլիչի[17], Գ. Վ. Պլեխանովի և շատ ուրիշների հետ։

---

12 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 5, էջ 426—427։

13 Պ. Վ. Աննենկով (1812—1887)—ռուս գրականագետ, անցյալ դարի 40-ական թվականներին կանգնած էր ռադիկալ դիրքերում, հետագայում լիբերալ։

14 Ն. Ի. Սազոնով (1818—1862)—ռուս էմիգրանտ Ֆրանսիայում և Շվեյցարիայում, Փարիզի Reforme-ի աշխատակից, 1849 թվականին հրապարակեց կոմունիստական գաղափարներով, հետագայում փոխեց իր համոզմունքները, ցարական կառավարությանը խնդրեց ներել իրեն և թույլատրել մերադառնալ Ռուսաստան։

15 Պ. Լ. Լավրով (1823—1900)—ռուս նշանավոր հրապարակախոս, նարոդնիկության տեսաբան, այսպես կոչված սոցիոլոգիայի մեջ ռուսական սուբյեկտիվ դպրոցի նախահայրը, արտասահմանում՝ Ցյուրիխում և Լոնդոնում, հրատարակված «Вперед» հանդեսի խմբագիրը։

16 Ն. Ֆ Դանիելսոն (1844—1918)—ռուս տնտեսագետ, նարոդնիկության աչքի ընկնող տեսաբաններից մեկը, թարգմանել է Կ. Մարքսի «Կապիտալ»-ի 1, 2, 3 հատորները (1-ին հատորը Գ. Լոպատինի հետ միասին)։ Կ. Մարքսին, հետագայում Ֆ. Էնգելսին հայթայթում էր Ռուսաստանի վերաբերյալ գրքեր և նյութեր։

17 Վ. Ի. Զասուլիչ (1851—1919)—«Աշխատանքի ազատագրություն» խմբի հիմնադիրներից մեկը, ՌՍԴԲԿ II համագումարից հետո հարել է մենշևիկներին։

Պ. Աննենկովը, 1846 թվականին Բրյուսելում հանդիպելով Կ. Մարքսին, ծանոթանում է նրա այդ շրջանի աշխատություններին[18]: Կ. Մարքսը նույն թվականին, մինչև իր երկի հրատարակությունը, նամակով Պ. Աննենկովին ծանոթացնում է «Փիլիսոփայության աղքատությունը» աշխատության բովանդակությունը, որն ուղղված էր Պրուդոնի «Աղքատության փիլիսոփայությունը» գրքի դեմ: 1847 թվականի հունվարի 6-ի նամակով Պ. Աննենկովը Կ. Մարքսին իր երախտագիտությունն է հայտնում՝ Պրուդոնի աշխատության վերաբերյալ հայտնած ճշմարտացի ու պարզ կարծիքի, նրա թողած «կենսարար ներգործության» համար:

Ռուս քաղաքական գործիչների հետ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ծավալած նամակագրությունը վկայում է մարքսիզմի գաղափարները Ռուսաստան թափանցելու նախաբայլերի մասին: Գնալով ուժեղանում էր հետաքրքրությունը Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատությունների նկատմամբ:

1847 թվականին Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանների ուսանողները հետաքրքրություն են հանդես բերում դեպի Կ. Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը»: Իսկ երբ 1859 թվականին լույս տեսավ «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» երկը, այն անմիջապես ջերմ արձագանք գտավ Ռուսաստանում:

«Ռուսաստանում իմ գիրքը մեծ աղմուկ է առաջացրել,— 1860 թվականի սեպտեմբերի 15-ին Կ. Մարքսը գրել է Ֆ. Լասալին,— և պրոֆեսորներից մեկը դասախոսություն է կարդացել նրա մասին: Բացի այդ, ես Ռուսաստանից բազմաթիվ նամակներ եմ ստացել»[19]: Կ. Մարքսի վերոհիշյալ աշխատության մասին դասախոսությունը 1860 թվականի հունվարի 10-ին կարդացել էր Մոսկվայի համալսարանի քաղաքատնտեսության պրոֆեսոր Ի. Կ.

---

18 Կ. Մարքսը Պ. Աննենկովին 1846 թ. դեկտեմբերի 28-ին գրած նամակում այդ առթիվ հիշատակել է. «Ես կուզենայի հնարավորություն ունենալ այս նամակի հետ միասին Ձեզ ուղարկել իմ գիրքը քաղաքատնտեսության մասին, բայց մինչև հիմա ինձ չի հաջողվել հրատարակել ոչ այդ աշխատությունը, ոչ էլ գերմանական փիլիսոփաների ու սոցիալիստների քննադատությունը, որի մասին ես Ձեզ պատմել եմ Բրյուսելում: (Խոսքը «Քաղաքականության և քաղաքատնտեսության քննադատությունը» և «Գերմանական իդեոլոգիան» աշխատությունների մասին է—Խ. Ռ.): (Տե՛ս Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, Երևան, 1954, էջ 26):

19 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т XXV, стр. 371.

Բաքսաը[20]։ Նա գլխավորապես բավարարվել է Կ. Մարքսի աշխատության նշանավոր առաջաբանի դրույթների շարադրմամբ[21]։

Կ. Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը», «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը», Ֆ. Էնգելսի «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» և այլ աշխատությունները ժամանակին ընդհատակյա տարածվել են Ռուսաստանում և աշխույժ արձագանքներ առաջացրել։

Ն. Չերնիշևսկու խմբագրությամբ հրատարակվող «Սովրեմեննիկ» ամսագրի 1861 թվականի № 9—11-ում տպագրվել է Ն. Շելգունովի «Բանվոր պրոլետարիատը Անգլիայում և Ֆրանսիայում» հոդվածը, որի մեջ բառացի քաղվածքներ են բերված Ֆ. Էնգելսի «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» աշխատությունից։ Նարոդնիկ Պ. Լավրովի խմբագրած «Զագրանիչնի վեստնիկ» ժուռնալի 1864 թվականի հունիսյան համարում զետեղված՝ Լ. Ռյուդիգերի «Ազատություն» հոդվածում շարադրված էին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» առանձին գաղափարներ։ 1868 թվականին թարգմանվել և Պետերբուրգում ռուսերեն լեզվով լույս է տեսել Է. Բեբելի «Բանվորական հարցը, նրա ժամանակակից նշանակությունը և նրա լուծման միջոցները» գիրքը, որի վերջում, իբրև հավելված, տրված էր Կ. Մարքսի գրած առաջին ինտերնացիոնալի ծրագրային փաստաթուղթը՝ «Միջազգային բանվորական ընկերության ժամանակավոր կանոնադրությունը»[22]։

«Ռուսսկոյե սլովո» ժուռնալի 1865 թվականի դեկտեմբերյան համարում լույս է տեսել Պ. Ն. Տկաչովի գրախոսությունը՝ Յու. Գ. Ժուկովսկու գրքի վերաբերյալ[23]։ Նրանում նարոդնիկ Տկաչովը,

---

20 Ի. Կ. Բաքսաը (1824—1881)—ռուս բուրժուական տնտեսագետ, հրապարակախոս։

21 См. О. П Калекина, Очерки по истории издания марксистской литературы в России (1870—1917 гг.), М., стр. 14.

22 Թեև գրքի տիտղոսաթերթի վրա նշված է 1869 թվական, բայց, ինչպես Օլգա Պետրովնա Կալեկինան է պնդում, այն լույս է տեսել 1868 թվականի վերջերին (см. Э. П. Калекина, Очерки по истории издания марксистской литературы в России (1870—1917 гг.) Москва, 1962, стр. 14—15: է. Բեբելի աշխատության առաջաբանը և ծանոթագրությունները գրել էր Պ. Տկաչովը։

Պ. Ն. Տկաչովը (1844—1885)—ռուս մանրբուրժուական հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսներից էր, ժնևում հրատարակել է «Набат» հանդեսը։

23 Յու. Գ. Ժուկովսկի (1822—1907)—ռուս բուրժուական տնտեսագետ, «Կարլ Մարքսը և նրա գիրքը «Կապիտալ»-ի մասին» հոդվածի («Вестник Европы», № 9, 1877) հեղինակը։

Ռուսաստանում առաջինն արձագանքելով Կ. Մարքսի «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» աշխատությանը, ընդունում է, որ Մարքսը իր աշխատությունում ճիշտ է ձևակերպել սոցիալական երևույթների ուսումնասիրության մեթոդը։ Բայց նա միաժամանակ մարքսյան քաղաքատնտեսությանը մոտենում էր վուլգար տնտեսական մատերիալիզմի դիրքերից[24]։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններն օտար լեզուներով սկսեցին թարգմանվել տակավին հեղինակների կենդանության օրոք։

Մարքսիստական ամենից շատ տարածված երկերից մեկը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստն» է, որը ռուսերեն առաջին անգամ հրատարակվել է Ժնևում, 1869 թ. Ա. Գերցենի «Կոլոկոլ» ժուռնալի տպարանում, Մ. Ա. Բակունինի թարգմանությամբ[25]։ Իր գրական կողմերով հանդերձ, այդ հրատարակությունը առատապում էր լուրջ արատներով։ Նրանում անարխիստ Մ. Բակու-

---

24 Ֆ. Էնգելսը Պ. Տկաչովի իրեն ուղղած բաց նամակի առթիվ 1875 թվականին «Volkstaat» թերթում հանդես եկավ «Ռուսաստանի հասարակական հարաբերությունների մասին» հոդվածաշարով (տե՛ս «Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ», Երևան, 1954, էջ 252—267, 366—383), որտեղ քննադատում էր գյուղացիական ուտոպիական սոցիալիզմի գաղափարախոսներին, խորապես վերլուծում Ռուսաստանի քաղաքական դրությունը, ընդգծում, որ «Ռուսաստանը, անկասկած, գտնվում է հեղափոխության նախօրյակին» (տե՛ս նույն տեղում, էջ 266)։ «Ռուսական հեղափոխությունը,— գրել է Ֆ. Էնգելսը,— նոր դարձ կտա Արևմուտքի բանվորական շարժմանը, նրա համար կստեղծի պայքարի նոր, լավագույն պայմաններ և դրանով խիստ կարագացնի ժամանակակից արդյունաբերական պրոլետարիատի հաղթանակը, առանց որի ներկա Ռուսաստանը ոչ համայնքի, ոչ է՛լ կապիտալիզմի միջոցով չի կարող հասնել հասարակության սոցիալիստական վերակառուցման (տե՛ս նույն տեղում, էջ 383)։

25 Ն. Ի. Սազոնովը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» մասին գիտեր դեռևս 1850 թվականին։ 1850 թվականի մայիսի 2-ին Ժնևից Լոնդոն Կ. Մարքսին ուղարկած նամակում նա համեմատելով «Կոմունիստական մանիֆեստի» դրույթների հետ, գրել է. «Թանկագին Մարքս... Ձեզ համար որոշ չափով հաճելի կլինի իմանալ, որ ես բոլոր էական կետերում միանում եմ այն ամենին, ինչ Դուք ասել եք Մանիֆեստում, որը Դուք հրատարակել եք Բրյուսելում (խոսքը 1848 թ. Լոնդոնում հրատարակված Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» մասին է—Խ.Բ.)։ Այո՛, բարեկամս... ես եկա այն համոզմունքին, որ լուրջ ռևոլյուցիոնները կարող է լինել միայն կոմունիստ, և ես հիմա կոմունիստ եմ» (տե՛ս Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 32—33)։

նինը խեղաթյուրել էր մարքսիզմի հիմնադիրների գաղափարները[26]։

Ռուսաստանում մարքսիզմի տարածման և պրոպագանդման գործում որոշակի դեր է խաղացել Առաջին ինտերնացիոնալի ռուսական սեկցիան, որը ձևավորվել է Ժնևում 1870 թվականի հունվարին և գործել մինչև 1872 թվականի սեպտեմբերը՝ Հաագայի կոնգրեսը։ Ն. Չերնիշևսկու մի խումբ արժանավոր հետևորդներ, Ն. Ուտինի[27] ղեկավարությամբ ռուս հեղափոխական վտարանդիներից կազմում են Առաջին ինտերնացիոնալի ռուսական սեկցիան, դիմում Կ. Մարքսին՝ լինել իրենց ներկայացուցիչը ինտերնացիոնալի գլխավոր խորհրդում։ 1870 թվականի մարտի 12-ին Ժնևից Լոնդոն՝ Կ. Մարքսին ուղղած նամակում նրանք լավատեսությամբ լցված նշել են. «Ռուս դեմոկրատական երիտասարդությունն այսօր հնարավորություն է ստացել իր վտարված եղբայրների բերանով խորին երախտագիտություն հայտնել Ձեզ այն օգնության համար, որ Դուք ցույց տվեցիք մեր գործին Ձեր թեորիական ու գործնական պրոպագանդայով, և այդ երիտասարդությունը խնդրում է Ձեզ ցույց տալ նրան նոր ծառայություն՝ լինել նրա ներկայացուցիչը

---

26 Ա. Բակունինը «դասակարգը» փոխարինել էր «դասով», «դասակարգային պայքարը» «դասային պայքարով», «ապատամբությունը» «բունտով» և այն։ Վերոհիշյալ թարգմանության գիտական վերլուծությունն առաջին անգամ 1907 թվականին կատարել է հին բոլշևիկ Վ. Վ. Վորովսկին (см. В. В. Воровский, Соч., том I, М., 1933. «Коммунистический манифест и его судьба в России); Այնուհետև այդ մասին հանգամանորեն գրել են նաև Ի. Ի. Պրեյսը (см. «Манифест Коммунистической партии» в русских переводах. (См. Вестник Академии наук СССР, 1948, № 2, стр. 42—45), Լ. Ա. Լենին (см. «Манифест Коммунистической партии» в России. М., 1956, стр. 6—10; его же. Библиография библиографий произведений К. Маркса, Ф. Энгельса, В. И. Ленина. М., 1961). Ο. Պ. Կալեգինան (см. Очерки по истории издания марксистской литературы в России (1870—1917гг.), М., 1962) և ուրիշներ։ Լ. Ա. Լենինի վկայությամբ «Մանիֆեստի» Ա. Բակունինի թարգմանությունից պահպանվել է երեք օրինակ, այդ թվում՝ երկուսը պահվում է ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում, իսկ մեկը ՍՍՀՄ-ի Վ. Ի. Լենինի անվան պետական գրադարանում։ «Մանիֆեստի» ավելի ճշգրիտ թարգմանությունը ձեռնարկել էր նշանավոր հեղափոխական նարոդնիկ Ն. Կիրալչիչը, բայց, ցավոք, այն չի ավարտել (см. Б. Истенберг, А. Я. Черняк, Неизвестный перевод «Манифеста Коммунистической партии», «Исторический архив», № 2, 1959, стр. 224—228).

27 Ն. Ի. Ուտին (1845—1883)—ռուս հեղափոխական էմիգրանտ, Առաջին ինտերնացիոնալի ռուսական սեկցիայի գործիչ. պայքար էր մղում Մ. Բակունինի դեմ, 70-ական թվականների կեսերին հեռացավ հեղափոխական գործունեությունից և վերադարձավ Ռուսաստան։

Գլխավոր խորհրդում՝ Լոնդոնում»[28]։ 1870 թվականի մարտի 24-ին Կ. Մարքսը ռուսական սեկցիայի կոմիտեին հայտնել է, որ այն «ընդունվել է Ինտերնացիոնալի կազմի մեջ։ Ես գոհունակությամբ ընդունում եմ այն պատվավոր պարտականությունը,— գրել է Կ. Մարքսը,— որ դուք առաջարկում եք ինձ՝ լինել ձեր ներկայացուցիչը՝ գլխավոր խորհրդին կից»[29]։ Կես տարի անց, Կ. Մարքսի նախաձեռնությամբ, Ինտերնացիոնալի գլխավոր խորհրդի կազմում մտցվում է ականավոր հեղափոխական Գերման Լոպատինը՝ «Կապիտալի» ռուսական առաջին հրատարակության թարգմանիչը։ Ռուսական սեկցիայի կազմում էին հեղափոխական շարժման ականավոր մարտիկներ Ն. Ուտինը, Անտոն Տրուսովը[30], Ե. Բարաննեվը[31] (Վիկտոր Նեմով), Վ. Տոմանովսկայան (Ելիզավետա Դմիտրիևնա), Ա. Կորվին-Կրուկովսկայան (Ժակլար) և ուրիշներ։

Ռուսական սեկցիան առաջադիր խնդիր ուներ՝ բոլոր հնարավոր միջոցներով Ռուսաստանում պրոպագանդել Ինտերնացիոնալի սկզբունքները, նպաստել Ինտերնացիոնալի սեկցիաների կազմակերպմանը ռուս բանվորների մեջ, օգնել Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի աշխատավոր դասակարգերի միջև կայուն, համերաշխ կապ հաստատելուն և փոխադարձ օգնության միջոցով նպաստել առավել հաջող հասնելու նրանց ընդհանուր նպատակին՝ ազատագրմանը[32]։ Սեկցիայի անդամներն ունեին իրենց տպագիր օր-

---

28 Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 48։

29 Նույն տեղում, էջ 49։

30 Ա. Տրուսով—Առաջին Ինտերնացիոնալի ռուսական սեկցիայի բարուղարը ժնևում։

31 Ե. Բարաննե (Վ. Նեմով)—Առաջին Ինտերնացիոնալի ռուսական սեկցիայի կոմիտեի անդամ։

32 См. «Народное дело», № 1, 1870։ Այն Ն. Ուտինի 1868—1869 թվականներին հրատարակած համանուն ժուռնալի հաջորդն էր։ Նրանում հրատարակվել են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մի քանի աշխատություններ, Առաջին Ինտերնացիոնալի վավերագրեր։ Ռուսական սեկցիան 1871 թվականին հիմք դրեց «Բանվորների միջազգային ընկերության գրադարանին», որի գործունեությանն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում Ա. Կորվին-Կրակովսկայան՝ Փարիզի կոմունայի նշանավոր գործիչ Վիկտոր Ժակլարի կինը։ Վերջինս անձամբ ծանոթ էր Կ. Մարքսին։ Ռուսական սեկցիայի անդամները կապեր էին հաստատել Շվեյցարիայի, Ֆրանսիայի և այլ երկրների բանվորական շարժման հետ։ Նրանցից Ե. Տոմանովսկայան, Ա. Կորվին-Կրուկովսկայան, Մ. Պ. Սաժինը մասնակցել են Փարիզի պրոլետարիատի պայքարին, Կոմունայի հաստատման համար ծավալված բարիկադային կռիվներին։

գանը՝ «նարոդնոե դելոն»։ Նրանք, ակտիվ մասնակցություն ունենալով Ինտերնացիոնալի աշխատանքներին, օգնում էին Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին՝ Մ. Բակունինի և նրա համախոհների անարխիստական, պառակտողական գործունեության դեմ մղվող պայքարում։ Դժբախտաբար, նրանք ևս չդարձան իսկական մարքսիստներ, մինչև վերջ չազատագրվեցին նարոդնիկության գաղափարական ազդեցությունից և մնացին իբրև «սոցիալիստ նարոդնիկներ»։

XIX դարի 70-ական թվականներին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» Ռուսաստանում գլխավորապես տարածվել է ձեռագիր վիճակում։ 1875 թվականի հոկտեմբերի 11-ին ցարական գործակալները նարոդավոլեց Ն. Ի. Կիբալչիչի մոտ հայտնաբերել են «Մանիֆեստի» ձեռագիր մի օրինակ[33]։ «Մանիֆեստի գաղափարները Ռուսաստան էր թափանցում «Վպերյոդ» (տե՛ս № 19, 1875, № 34, 1876), «Վեստնիկ Եվրոպի» (№ 1, 1879) և այլ պարբերականների միջոցով։

Ռուսաստանում մարքսիզմի տարածման, ռուս հասարակական առաջավոր մտքի զարգացման համար գաղափարական հզոր նախադրյալ ծառայեց Կ. Մարքսի «Կապիտալ»-ի առաջին հատորի հրատարակությունը, որը 1872 թվականի ապրիլին Պետերբուրգում իրականացրել են Գ. Լոպատինը[34] և նշանավոր անտեսագետ նարոդնիկ Ն. Ֆ. Դանիելսոնը[35]։ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Գ. Լոպատինի, Ն. Դանիելսոնի հարուստ նամակագրությունից երևում է, թե ինչ ծանր պայմաններում է իրականացվել «Կապիտալի» ռուսերեն հրատարակությունը, որը օտար լեզվով առաջին թարգմանությունն էր։

Կ. Մարքսը 1868 թվականի հոկտեմբերի 12-ին Լ. Կուգելմանին գրած նամակում նշել է. «Սրանից մի քանի օր առաջ մի պետերբուրգցի գրահրատարակիչ ինձ ապշեցրեց՝ հայտնելով, թե տպագրվում է «Կապիտալ»-ի ռուսերեն թարգմանությունը»[36]։

---

33 См. Р. Контор. О процессе Н. И. Кибальчича 1875—1878. «Каторга и ссылка». № 8—9, 1929, стр. 239.

34 Գ. Ա. Լոպատին (1845—1918)—ռուս հեղափոխական նարոդնիկ, Առաջին ինտերնացիոնալի գլխավոր խորհրդի անդամ, 1884—1905 թվականներին Շլիսելբուրգի բերդի կալանավոր, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի բարեկամը։

35 «Կապիտալ»-ը (հատ. 1-ին) առաջին անգամ լույս է տեսել գերմաներեն 1867 թվականի սեպտեմբերին 1000 օրինակ տպաքանակով։

36 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Նամակներ «Կապիտալ»-ի մասին, Երևան, 1954, էջ 206։ «Այդ բանը հաղորդելու առիթ է ծառայել Դանիելսոնի 1868 թ. 18/IX նամակը Մարքսին։ Դանիելսոնը դիմել էր Մարքսին պետերբուրգյան հրատարա-

«Կապիտալ»-ի ռուսերեն հիանալի թարգմանությունը,— 1873 թվականի հունվարի 24-ին գրել է Կ. Մարքսը,— լույս է տեսել 1872 թվականի դարնանը Պետերբուրգում։ 3000 օրինակ հրատարակությունը հիմա գրեթե սպառվել է արդեն»[37]։

Ցարական գրաքննությունը, թույլատրելով «Կապիտալ»-ի հրատարակությունը, ենթադրում էր, որ այն դժվարամարս կլինի ռուս ընթերցողի համար։ Գրաքննիչ Սկուրատովը, ծանոթանալով գրքի առաջին 324 էջերի թարգմանությանը, Պետերբուրգի գրաքննչական կոմիտեին ներկայացրած եզրակացության մեջ գրել է. Կ. Մարքսի աշխատությունը «Ռուսաստանում քչերը կկարդան և առավել ևս քչերը կհասկանան այն»[38]։ Այնինչ, դրանից մի քանի տարի անց, 1880 թվականի հուլիսի 25-ին Մ. Դորբունովա-Կաբուլկովան Ֆ. Էնգելսին գրել է. «Ես խնդրում եմ Ձեզ նաև միայն հաղորդել պարոն Մարքսին, որ նրա «Կապիտալ» երկը լայնորեն տարածված է Ռուսաստանում և ոչ միայն գիտնականների շրջանում, այլ գլխավորապես նրանց մեջ, ովքեր որևէ հետաքրքրություն են ցուցաբերում դեպի սոցիալական գիտությունները և ժողովրդի դրությունը. «Կապիտալ»-ը շատ են կարդում ուսուցիչներն ու ուսուցչուհիները, այսինքն՝ դրանցից նրանք, ովքեր լուրջ են վերաբերվում իրենց պրոֆեսիային։ Բայց որքան շատ է կարդացվում «Կապիտալ»-ը, որքան ավելի են ընթերցողներն ու երիտասարդները յուրացնում նրա

կիչ Պոլյակովի անունից, որը հանձն էր առել «Կապիտալ»-ի առաջին հատորը տպագրել ռուսերեն։ Պոլյակովի մտադրությունը շուտ չիրագործվեց համապատասխան թարգմանիչ չլինելու պատճառով։ 1869 թ. վերջին «Կապիտալ»-ի առաջին հատորի թարգմանությունը հանձնարարվեց Բակունինին։ Բայց վերջինս երկար բաշբշուկներից հետո հրաժարվեց թարգմանությունից, և 1870 թվականի սկզբին «Կապիտալ»-ի թարգմանությունն ստանձնեց Լոպատինը։ Լոպատինը թարգմանեց 2—5 գլուխները, որոնց համապատասխանում են երկրորդ հրատարակության 2, 3, 4, 5, 6-րդ բաժինները։ Սակայն, 1870 թ. վերջին, մտադրվելով Չերնիշևսկուն ազատել, նա աշխատանքն ընդհատեց և վերադարձավ Ռուսաստան։ «Կապիտալ»-ի թարգմանությունը ավարտել վիճակվեց Դանիելսոնին։ 1871 թ. հոկտեմբերի մոտերքը ռուսերեն թարգմանված «Կապիտալ»-ը լույս տեսավ 1872 թ. 27/III—8/IV-ին։ Նույն ժողովածուի խմբագրության ծանոթագրությունը, տե՛ս էջ 206—207։

37 Կ. Մարքս, Կապիտալ, առաջին հատոր, Երևան, 1954, էջ 17։ «Կապիտալ»-ի առաջին հատորի ռուսերեն այդ հրատարակությունը տպագրվել է հաղորդակցության ճանապարհների միներստության տպարանում։

38 См. журнал «Красный архив», том I(56), 1933, стр. 7. В. Ю. Самедов, Распространение марксизма-ленинизма в Азербайджане, Баку, 1962, стр. 154.

հիմնական դրույթները, այնքան ավելի վատ համբավ է վայելում այդ գիրքը մեր դատախազների ու դատաքննիչների մոտ... Մեզ համար այդ գիրքը թանկագին և հարգելի ուսուցիչ է»[39]:

1881 թվականի փետրվարի 16-ին Կ. Մարքսին նույն բովանդակությամբ նամակ է գրել մեկ ուրիշ ռուս հեղափոխական կին՝ Վերա Զասուլիչը: «Ձեզ հայտնի է, որ Ձեր «Կապիտալ»-ը մեծ ժողովրդականություն է վայելում Ռուսաստանում: Չնայած, որ հրատարակությունը բռնագրավվել է, մնացած փոքրաթիվ օրինակները կարդացվում և վերակարդացվում են մեր երկրի ավելի կամ պակաս կրթված մարդկանց լայն շրջաններում և լուրջ մարդիկ ուսումնասիրում են այն»[40]:

Այս ամենն ուրախություն էր պատճառում և թեավորում Կ. Մարքսին, որը 1880 թվականի նոյեմբերի 5-ին գոհունակությամբ նշել է, թե «Կապիտալ»-ը Ռուսաստանում ընթերցում և գնահատում են ավելի, քան որևէ մեկ ուրիշ տեղ[41]:

Բացի ընդհատակյա խմբակներում ուսումնասիրելուց, «Կապիտալ»-ի մասին գրվում էր նաև նարոդնիկական և լեգալ մամուլում: Միայն XIX դարի 70-ական թվականներին Ռուսաստանի մամուլում «Կապիտալ»-ի մասին հրատարակվել է ավելի քան 150 գրախոսություն, անոտացիա և այլ նյութեր[42]:

«Կապիտալ»-ի երկրորդ հրատարակության վերջաբանում Կ. Մարքսն անդրադարձել է Կիևի համալսարանի քաղաքատնտեսության պրոֆեսոր Ն. Զիբերի[43] Դ. Ռիկարդոյի՝ «Արժեքի և կապիտալի թեորիան» աշխատությանը, նշել, որ «այդ արժեքավոր գիրքը... հաջող կերպով ուրվագծելով այն, ինչ նա (հեղինակը— Խ. Բ.) իմ իսկական մեթոդն է անվանում, և այդպես բարյացակամ վերաբերվելով այդ մեթոդի կիրառման իմ անձնական պրիոմներին, հենց դրանով էլ ուրվագծել է ոչ այլ ինչ, եթե ոչ դիալեկտիկական մեթոդը»[44]:

---

39 Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 309:

40 Նույն տեղում, էջ 385:

41 К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, М., 1947, стр. 339.

42 О. П. Калекина, Издание марксистской литературы в России в конце XIX в., М., стр. 29.

43 Ն. Ի. Զիբեր (1844—1888)—ռուս տնտեսագետ, առաջին «լեգալ մարքսիստներից» մեկը:

44 Կ. Մարքս, Կապիտալ, առաջին հատոր, էջ 17 և 19:

«Կապիտալ»-ը Ռուսաստանում աշխույժ բանավեճ առաջացրեց, որին ակտիվորեն մասնակցեցին 70-ական թվականների ռուս տնտեսագիտական և հասարակական մտքի ներկայացուցիչները։ Բանավեճի ազդանշան ծառայեց ռենեգատ Յու. Ժուկովսկու «Կարլ Մարքսը և նրա գիրքը կապիտալի մասին» հոդվածը[45]։ Ի պատասխան Յու. Ժուկովսկու հավակնոտ ելույթի, մամուլում հրապարակվեցին մի շարք նյութեր, այդ թվում Ն. Զիբերի «Մի քանի գիտողություններ Ժուկովսկու հոդվածի առթիվ...»[46], որը Ն. Դանիելսոնը ուղարկել է Կ. Մարքսին, և Ն. Միխայլովսկու[47] «Կարլ Մարքսը պ. Ժուկովսկու դատաստանի առաջ» հոդվածը[48], որը և Մարքսին առիթ տվեց 1877 թվականի նոյեմբերին գրելու իր նշանավոր նամակը «Отечественные записки» խմբագրությանը։ Նրանում Մարքսը նորից է վերաշարադրում Ա. Գերցենին և Ն. Չերնիշևսկուն տված իր գնահատականները, խոր հարգանքով արտահայտվում «ռուս մեծ գիտնականի և քննադատի»՝ Չերնիշևսկու մասին, նշում, թե՝ «Եթե Ռուսաստանը շարունակի ընթանալ այն ուղիով, որով նա ընթացել է 1861 թվականից, ապա նա ձեռքից բաց կթողնի լավագույն առիթը, որպիսին պատմությունը երբևէ ընձեռնել է որևէ ժողովրդի, և կճաշակի կապիտալիստական կարգերի բոլոր տարաբախտությունները»[49]։

Կ. Մարքսը, պատասխանելով իր քննադատներին, պարզաբանում է հասարակական զարգացման օրինաչափությունը, օգնում ճիշտ հասկանալու յուրաքանչյուր էվոլյուցիոն քայլ և դրանք զուգորդելով՝ գտնել երևույթներն ըմբռնելու բանալին։

1878 թվականին Կ. Մարքսի դեմ սուր բանավեճով հանդես եկավ ռուսական բուրժուական սոցիոլոգ և պատմաբան Բ. Չիչերինը, որը Բեզոբրազովի խմբագրությամբ Պետերբուրգում հրատարակվող «Сборник государственных знаний»-ում զետեղեց «Գերմանական սոցիալիստները II. Կարլ Մարքս» հոդվածը, որի մեջ նա փորձում էր հերքել Կ. Մարքսի ուսմունքը։ Դրան իբրև պա-

---

45 См. «Вестник Европы», № 9, сентябрь 1877.

46 См. «Отечественные записки», ноябрь 1877.

47 Ն. Կ. Միխայլովսկի *(1842—1904)—ռուս հրապարակախոս և գրաքննադատ, լիբերալ նարոդնիկության գաղափարախոս,* «Отечественные записки»-ի *աշխատակից, հետագայում խմբագիր։*

48 См. «Отечественные записки», октябрь 1877.

49 *Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 285։*

տասխան ծառայեց Ն. Զիբերի «Բ. Չիչերին[50] Կ. Մարքս» հոդվածը[51], որը հրապարակվել է «Սլովո» ամսագրի 1879 թվականի № 2-ում: Եթե Ռուսաստանում առանձին բուրժուական ֆիլիստերներ անպտուղ բանավեճ էին մղում Կ. Մարքսի դեմ, ապա ռուս հասարակական առաջավոր միտքը հափշտակված ուսումնասիրում էր մարքսիզմը, իսկ հեղափոխական Ռուսաստանը փառաբանում էր Կ. Մարքսին, որին «սիրում էր որպես բարեկամի, հարգում որպես ուսուցչի և մեծարում որպես հոր»[52]:

2

Մարքսիզմի հիմնադիրների երկերի և սոցիալիստական գրականության թարգմանության, ինչպես և մարքսիստական ինքնուրույն աշխատությունների հրատարակման գործում աչքի ընկնող դեր խաղաց «Աշխատանքի ազատագրություն» խումբը՝ Ռուսաստանի մարքսիստական առաջին կազմակերպությունը:

Ռուսաստանում հեղափոխական շարժման ծավալմանը խթանեց Փարիզի կոմունան: Ս. Ստեպնյակ-Կրավչինսկու[53] վկայությամբ, Փարիզի կոմունայի ստեղծմամբ ռուսական սոցիալիզմը

---

50 Բ. Ն. Չիչերին (1828—1904)—ռուսական բուրժուական սոցիոլոգ և պատմաբան:

51 См. «Слово», № 2, 1879, Կ. Մարքսը 1873 թվականի մարտի 22-ին Ն. Դանիելսոնին ուղղած նամակում քննադատելով Ռուսաստանում համայնական հողատիրության պատմական զարգացման վերաբերյալ Չիչերինի հայացքները, գրել է. «Բոլոր պատմական անալոգիաները խոսում են Չիչերինի դեմ»: 1873 թվականի նոյեմբերի 15-ին նույն Դանիելսոնին գրած նամակում Կ. Մարքսը Չիչերինին բնութագրել է որպես «իրեն էնցիկլոպեդիստ երևակայող... տարօրինակ մարդ» (տե՛ս Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 120—121, 127): Ն. Զիբերի մասին հանգամանորեն տե՛ս А. Л. Реуэль, Русская экономическая мысль 60—70-х годов XIX в. и марксизм, М., 1956.

52 Տե՛ս Գ. Լոպատինի նամակը Էլեոնորա Մարքսին, Փարիզ, 28-ը մարտի 1883 (Տե՛ս Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 343):

53 Ս. Մ. Կրավչինսկի (1852—1895)—ռուս հեղափոխական նարոդնիկ, պայքարի տեսորիստական մեթոդի կողմնակից, գործել է Ստեպնյակ գրական ծածկանվամբ, 1877 թվականին Պետերբուրգում սպանել է ժանդարմների շեֆ Մեզենցևին և փախել արտասահման, 1884 թվականից բնակվել է Լոնդոնում, որտեղ կազմակերպել է «Ռուսական ազատության բարեկամների» ընկերությունը:

Թեակոխեց իր զարգացման մարտնչող ժամանակաշրջանը, կարիներից և մասնավոր ժողովներից փոխադրվելով գյուղերն ու արհեստանոցները[54]։ Պ. Լավրովի արտահայտությամբ կոմունան «էլեկտրական հարվածով» փոփոխություններ առաջացրեց սոցիալական հարցի և նրա նշանակության մեջ, Ռուսաստանում սոցիալ-հեղափոխականների եռանդուն համախմբվածություն առաջացրեց[55]։

1880-ական թվականներից սկսած Ռուսաստանում նարոդնիկական շարժմանը ստիպողաբար փոխարինելու էին գալիս հեղափոխական բանվորների կազմակերպությունները։ «Նարոդնայա Վոլյա»-ին կից կազմակերպվող բանվորական խմբակները հրապուրվելով սոցիալիստական գաղափարներով, նոր ուղիներ էին որոնում։ Նրանք փորձում էին ստեղծել ինքնուրույն կազմակերպություն։ Բանվորական առաջին կազմակերպություններից էին՝ բանվորների հարավ-ռուսաստանյան միությունը, որը ձևավորվեց Օդեսայում 1875 թվականին Ե. Զասլավսկու ղեկավարությամբ, «Ռուս բանվորների հյուսիսային միությունը», որը վերջնականապես ձևավորվեց 1878 թվականին, նշանավոր բանվոր-հեղափոխականներ Վիկտոր Օբնորսկու և Ստեպան Խալտուրինի գլխավորությամբ։ Այդ ժամանակաշրջանի բանվոր-հեղափոխականների ամենաականավոր ներկայացուցիչներից մեկը Պյոտր Ալեքսեևն է (1849—1891), որը 1875 թվականին «Համառուսական սոցիալական հեղափոխական կազմակերպության» գործով մյուս գործիչների հետ միասին ձերբակալվեց և նշանավոր «50-ի դատական գործի» ժամանակ ցարական դատարանում անողոքաբար քննադատեց տիրող կարգերը։ Բովանդակ Ռուսաստանով մեկ տարածվեց նրա իմաստուն մարդասիրությունը՝ «Կբարձրանա միլիոնավոր բանվոր մարդկանց մկանոտ ձեռքը, և գինվորների սվիններով պաշտպանված դեսպոտիզմի լուծը փոշիացրիվ կլինի»[56]։

---

[54] См. С. Степняк-Кравчинский, Сочинения, т. 1, М., 1958, стр. 373—374.

[55] ЦГАОР СССР, ф. П. Л. Лаврова, оп. 1, д. 153, лл. 70—71, рукописи «История и русские революционеры» (1886). Цитируем по книге Г. С. Интенберга. Движение революционного народничества, М., 1965, стр. 120.

[56] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 476։ Նույնը՝ Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ, Երևան, 1960, էջ 55—59։ Պ. Ալեքսեևն իր ճառը դատարանում արտասանել է 1877 թ. մարտի 10-ին (22), առաջին անգամ տպագրվել է Լոնդոնում 1877 թ. «Վպերյոդ» ժողովածուում։ Այդ ճառը հեղափոխական դրակա-

Ռուսաստանի հեղափոխական երիտասարդության վրա որոշակի ազդեցություն թողեց հրապարակախոս-նարոդնիկ Ն. Ֆլերովսկու (Վ. Վ. Բերվի, 1829—1918) 1869 թվականին լույս տեսած «Բանվոր դասակարգի դրությունը Ռուսաստանում» աշխատությունը, որի մասին Կ. Մարքսը 1870 թվականի մարտի 24-ին Առաջին ինտերնացիոնալի ռուսական սեկցիայի կոմիտեին գրել է. «Դա մի իսկական հայտնագործություն է Եվրոպայի համար... Դա լուրջ գիտողի, անվեհեր աշխատավորի, անաչառ քննադատի, ուժեղ արվեստագետի և ամենից առաջ այնպիսի մարդու աշխատություն է, որը գայրացած է ճնշման դեմ՝ սրա բոլոր տեսակներով, չի հանդուրժում ամեն տեսակ ազգային զավեշտներ և կրքոտությամբ բաժանում է արտադրողական դասակարգի բոլոր տառապանքներն ու բոլոր ձգտումները»[57]։

Կ. Մարքսը, այնուհետև, նշել է, թե «այնպիսի աշխատություններ, ինչպիսիք Ֆլերովսկու և Չերնիշևսկու աշխատություններն են, իսկական պատիվ են բերում Ռուսաստանին» և ապացուցում են, որ այն «նույնպես սկսում է մասնակցել մեր դարի ընդհանուր շարժմանը»[58]։

Ռուսաստանի բանվորական առաջին այդ կազմակերպությունները զգալի աշխատանք կատարեցին սոցիալիստական գրականության, առանձնապես առաջին ինտերնացիոնալի սկզբունքների տարածման ուղղությամբ։

նության լավագույն նմուշներից է և նախահոկտեմբերյան շրջանում բազմաթիվ անգամ հրատարակվել է նաև հայերեն։ Վ. Ի. Լենինը «Իսկրա»-ի առաջին համարում տպագրված «Մեր շարժման կենսական խնդիրները» խորագրով հոդվածն ավարտել է այսպես. «Մեր առաջ իր ամբողջ ուժով կանգնած է ինքնամոլ ամբոցը, որտեղից մեր գլխին սումբերի և գնդակների տարափ է տեղում, խլելով մեր լավագույն մարտիկների կյանքը։ Մենք պետք է գրավենք այդ ամբոցը, և մենք կգրավենք այն, եթե արթնացող պրոլետարիատի բոլոր ուժերը միացնենք ռուս հեղափոխականների բոլոր ուժերին և դարձնենք մի կուսակցություն, որին կձգտի այն ամենը, ինչ Ռուսաստանում կենդանի է։ Եվ այդ ժամանակ միայն կկատարվի ռուսական բանվոր-հեղափոխական Պյոտր Ակսելի այն մեծ մարգարեությունը, թե «Կրարձրանա միլիոնավոր մարդկանց մկանոտ ձեռքը, և զինվորների սվիններով պաշտպանված դեսպոտիզմի լուծը փոշիացրիվ կլինի» (տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 476)։

57 Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 50։

58 Դեպքն տեղում, էջ 50։ Ն. Ֆլերովսկու այդ աշխատությունը խիստ արգելված էր Ռուսաստանում։ Բայց այն սոցիալ-դեմոկրատական խմբակներում հետաքրքրությամբ ուսումնասիրում էին բանվորները։

Ռուս բանվոր-հեղափոխականների առաջին սերնդի պատմական մեծ ծառայությունն այն է, որ նրանք առաջ քաշեցին քաղաքական ազատության պահանջը: Հենց այդ էլ, Գ. Պլեխանովի գնահատությամբ, ռուս բանվորների հյուսիսային միությունը մերձեցրեց արևմտաեվրոպական բանվորական կուսակցություններին, նրան տալով սոցիալ-դեմոկրատական երանգ[59]: Բայց բանվորական առաջին նարոդնիկական-հեղափոխական կազմակերպությունների անհաջողությունն ամենից առաջ հետևանք էր այն բանի, որ անհրաժեշտ կապ չկար բանվորական շարժման և գիտական սոցիալիզմի միջև: «Մեզ մոտ ևս սոցիալիզմը շատ երկար ժամանակ, շատ տասնամյակների ընթացքում,— գրել է Վ. Ի. Լենինը,— գոյություն է ունեցել կապիտալիստների դեմ բանվորների մղած պայքարից, բանվորական գործադուլներից և այլնից մի կողմ քաշված: Մի կողմից սոցիալիստները չէին հասկանում Մարքսի թեորիան, այն անիրագործելի էին համարում Ռուսաստանի նկատմամբ, մյուս կողմից՝ ռուսական բանվորական շարժումը մնում էր դեռևս կատարելապես սաղմնային ձևի մեջ: Երբ 1875 թվականին կազմվեց «Ռուս բանվորների հարավային միությունը» և 1878 թվականին «Ռուս բանվորների հյուսիսային միությունը», ապա այդ բանվորական կազմակերպությունները ռուս սոցիալիստների ուղղությունից հեռու էին կանգնած. այդ բանվորական կազմակերպությունները ժողովրդի համար քաղաքական իրավունքներ էին պահանջում, ցանկանում էին պայքար մղել հանուն այդ իրավունքների, իսկ ռուս սոցիալիստներն այդ ժամանակ սխալմամբ քաղաքական պայքարը համարում էին նահանջ սոցիալիզմից[60]:

Ռուս սոցիալիստները, հաղթահարելով իրենց սխալները, առաջ ընթացան, յուրացնելով մարքսիզմը՝ այն ստեղծագործաբար կիրառեցին Ռուսաստանում: Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի հիմնադրումը «Աշխատանքի ազատագրություն» մարքսիստական խմբի, Գ. Պլեխանովի և նրա համախոհ-հեղափոխականների մատուցած գլխավոր երախտիքն է:

1882 թվականին Ժնևում, Ռուսաստանում մարքսիզմի առաջավոր պրոպագանդիստ Գ. Պլեխանովի հմուտ թարգմանությամբ, լույս է տեսնում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կու-

---

59 См. Г. В. Плеханов, Сочинения, том III, էջ 186.
60 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 324։

սակցության մանիֆեստը»[61]: Հենց այդ ժամանակ էլ նարոդնիկական «Զարնի Պերեդել» կազմակերպության անդամ Գ. Պլեխանովը, իր իսկ խոստովանությամբ, «դառնում է մարքսիստ»[62]:

Ռուսաստանում մարքսիզմի պրոպագանդան Գ. Պլեխանովը սկսեց 1882 թվականին՝ «Մանիֆեստի» հրատարակությամբ, որը բախտորոշ դեր խաղաց ոչ միայն Գ. Պլեխանովի, այլև Ռուսաստանի հասարակական-քաղաքական մտքի զարգացման պատմության մեջ:

«Մանիֆեստի» ռուսերեն թարգմանությունը Գ. Պլեխանովը կատարել է 1872 թվականի գերմաներեն հրատարակությունից: Բացի «Մանիֆեստից», նրանում ռուսերեն լեզվով առաջին անգամ զետեղված էր «Երկու խոսք թարգմանչից», «Ռուսերեն հրատարակության առթիվ հեղինակների առաջաբանը, հունվար 1882», «Գերմաներեն հրատարակության առթիվ հեղինակների առաջաբանը. 1872 թ.», հատված Կ. Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրքից և «Բանվորների միջազգային ընկերության կանոնադրությունը»: 1882 թվականի ռուսերեն հրատարակության առաջաբանում Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ուրվագծեցին ռուս հասարակական առաջավոր մտքի զարգացման ուղին: Նրանք ցույց տվեցին, որ եթե 1848—1849 թվականների հեղափոխության ժամանակ եվրոպական միապետներն ու բուրժուազիան ռուսական միջամտության մեջ էին գտնում միակ փրկությունը պրոլետարիատից, որը հենց նոր էր սկսել արթնանալ, ցարին հռչակեցին Եվրոպայի պա-

---

61 «Մանիֆեստի» 1888 թվականի անգլերեն հրատարակության առաջաբանում Ֆ. Էնգելսն այն վերագրել է Վերա Զասուլիչին «Սոցիալիստական հարաբերությունները Ռուսաստանում» հոդվածի վերջաբանում (տե՛ս Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 375), Ֆ. Էնգելսը ճշտել և հիշյալ թարգմանությունը համարել է Գ. Պլեխանովինը: «Այս միտքը Մարքսը և ես արդեն ասել ենք 1882 թ. հունվարի 21-ին «Կոմունիստական մանիֆեստի» Պլեխանովի թարգմանությամբ ռուսերեն հրատարակության առաջաբանում» (տե՛ս հիշատակված աշխատությունը, էջ 375):

«Մանիֆեստի» 1900 թվականի հրատարակության մեջ Պլեխանովը նույնպես նշել է, որ 1882 թ. թարգմանությունը կատարել է ինքը:

62 См. «Литературное наследие Г. В. Плеханова», том VIII, ч. I, стр. 17, 22, 208: Գ. Պլեխանովի քաղաքական էվոլյուցիայի մասին տե՛ս **Л. Дейч**, Как Г. В. Плеханов стал марксистом. («Пролетарская революция», № 7, 1922), **В. Кирпотин**, Первая ступень теоретической эволюции Плеханова и переход его к марксизму («Проблемы марксизма», № 5—6, 1931), **И. Б. Мандлин**, Переход Г. В. Плеханова от народничества к марксизму («Вопросы истории», № 12, 1956), **Ю. З. Полевой**, Зарождение марксизма в России, М., 1959, и др.

բազմուխ, ապա նա այժմ «հեղափոխության Գատչինայում պահվող ռազմագերին է»[63], և Ռուսաստանը ներկայացնում է հեղափոխական շարժման առաջավոր ջոկատը։

«Երկու խոսք թարգմանչից»-ում Գ. Պլեխանովը վառ կերպով ցույց է տվել, թե մարքսիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ինչպիսի վիթխարի հեղինակություն էին վայելում Ռուսաստանում, որ նրանց մյուս աշխատությունների հետ միասին «Մանիֆեստը» «նոր դարաշրջան է բացում սոցիալիստական և տնտեսագիտական գրականության մեջ՝ կապիտալի հանդեպ աշխատանքի ժամանակակից հարաբերությունների անողոք քննադատության և ամեն մի ուտոպիային խորթ սոցիալիզմի գիտական հիմնավորման դարաշրջան»[64]։

«Մանիֆեստի» թարգմանությամբ և «Առաջաբանով» Գ. Պլեխանովը մեծ և վճռական բայլ կատարեց դեպի մարքսիզմը, զարգացրեց ուղի հարթեց Ռուսաստանում մարքսիզմի զարգացման ճանապարհին։ «Որքան ավելի էինք ծանոթանում ժամանակակից գիտական սոցիալիզմի տեսություններին,— գրել է Գ. Պլեխանովը,— այնքանով մեր նարոդնիկությունը մեզ համար կասկածելի էր դառնում՝ թե՛ տեսական և թե՛ պրակտիկ առումով»[65]։

1883 թվականին Գ. Պլեխանովին համախոհ հեղափոխական նարոդնիկների «չերնոպերեդելցիների» մի փոքրիկ խումբ (Գ. Պլեխանով, Աքսելրոդ, Վ. Զասուլիչ, Լ. Դեյչ, Վ. Իգնատով), երկար քննարկումներից հետո ձևավորվում է որպես ինքնուրույն մարքսիստական կազմակերպություն՝ «Աշխատանքի ազատագրություն»[66]։ Խմբի հիմնադիրն ու ղեկավարը մարքսիզմի տաղանդավոր տեսաբան ու պրոպագանդիստ, միջազգային բանվորական շարժման ակտիվ գործիչ Գ. Պլեխանովն էր։ Մեծ և անգնահատելի են Գ. Պլեխանովի ծառայությունները հատկապես 1883—1903 թվականներին, երբ նա տվեց մի շարք մարքսիստական արանչելի աշխատություններ՝ ընդդեմ նարոդնիկների և օպորտունիստների։

---

63 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Երևան, 1952, էջ 8։*

64 См. «Литературное наследие Г. В. Плеханова», том VIII, ч. I, էջ 69.

65 «Литературное наследие Г. В. Плеханова» т. XIII, էջ 26.

66 См. «Литературное наследие Г. В. Плеханова», т. VIII, ч.I, էջ 14. **Л. Г. Дейч**, Первые шаги группы «Освобождение труда»,— Группа «Освобождение труда» сбор. 1, М., էջ 17—18: **Ю. З. Полевой**, Зарождение марксизма в России, М., 1959, էջ 138—270.

Ռուս հրապարակախոսներից և ոչ մեկը, նույնիսկ Բելինսկին, Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը այնպիսի ազդեցություն չեն ունեցել ռուսական հասարակական մտքի, ինտելիգենցիայի մի շարք սերունդների վրա, որքան Գ. Պլեխանովը: Նա անձնական նամակագրություն ուներ Ֆ. Էնգելսի, Ժ. Գեդի, Ժ. Ժորեսի, Պ. Լաֆարգի, Վ. Լիբկնեխտի, Ա. Բեբելի, Ֆ. Մերինգի, Ռ. Լյուքսեմբուրգի, Կ. Յեակինի, Դ. Բլագոևի և միջազգային պրոլետարիատի ուրիշ ճանաչված ղեկավարների հետ:

Կ. Մարքսի մահը գիտական կոմունիզմի մեծ հիմնադիրին խանդարեց տեսնելու ռուս մարքսիստների առաջին խմբի գործունեությունը: Մարքսի մահից մի քանի օր անց Գ. Պլեխանովը, Պ. Աքսելրոդը և Վ. Զասուլիչը ռուս հեղափոխականների անունից դիմեցին 1883 թվականի մարտի 29-ին Կոպենհագենում բացվող գերմանական սոցիալ-դեմոկրատիայի համագումարին, երախտագիտությամբ մեծարելով միջազգային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդին և խորապես վշտակցելով ծանր կորստի առթիվ: Նրանք ցանկություն էին հայտնում, որպեսզի համագումարը նախաձեռնություն ցուցաբերի և միջազգային հանդանակություն կատարի ժամանակակից սոցիալիզմի մեծ պիոներին արժանի հուշարձան կառուցելու, որը վկայություն կլինի նրա նկատմամբ բոլոր երկրների սոցիալիստների տածած հարգանքի, ինչպես և ստեղծել ֆոնդ՝ Մարքսի բոլոր երկերի ժողովրդական հրատարակության համար[67]:

Դրանից մի քանի ամիս անց, 1883 թվականի սեպտեմբերի 25-ին, ռուսական պետությունն ականատես եղավ մի համեստ աղդագրի՝ «Ժամանակակից սոցիալիզմի գրադարանի» հրատարակության մասին, որը դրանով իսկ ավետում էր «Աշխատանքի ազատագրություն» խմբի ծնունդը, հանդիսանում նրա ծրագրային առաջին վավերաթուղթը: «Աշխատանքի ազատագրությունը» իր առջև խնդիր էր դրել՝ տարածել մարքսիզմը, գիտական սոցիալիզմի գաղափարները՝ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և նրանց հետևորդների աշխատությունների ռուսերեն թարգմանության միջոցով, ծավալել հեղափոխական միջավայրում իշխող նարոդնիկության քննադատությունը, ռուսական հասարակական կյանքի կարևորագույն հարցերը մշակել, ելակետ ունենալով մարքսիզմը և Ռուսաստանի աշխատավոր զանգվածների շահերը:

---

67 См. «Литературное наследие Г. В. Плеханова», том VIII, ч. I, էջ 26.

Ռուս մարքսիստների անդրանիկ խումբը, կապ հաստատելով Մոսկվայի հեղափոխական ուսանողության «Թարգմանիչների և հրատարակիչների ընկերության» հետ[68], քսան տարվա ընթացքում, 1883—1903 թվականներին, հրատարակեց և տարածեց թարգմանական և ինքնուրույն ավելի քան 250 աշխատություն:

«Աշխատանքի ազատագրություն» խումբը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստից» հետո հաջորդաբար հրատարակեց և գաղտնի ճանապարհով Ռուսաստան տարեց «Վարձու աշխատանք և կապիտալը», «Փիլիսոփայության աղքատությունը», «Լյուդվիգ Ֆոյերբախը», «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն», «Ճառ առևտրի ազատության մասին», «Ֆրիդրիխ Էնգելսը Ռուսաստանի մասին» (Ռուսաստանի հասարակական հարաբերությունների մասին) և այլ աշխատություններ, նրանց կցելով մարքսիզմի սկզբունքները պաշտպանող առաջաբաններ: Վ. Զասուլիչը դեռևս 1881 թվականին Կ. Մարքսին գրած նամակներում թույլատրություն էր խնդրում նրա գործերը թարգմանել և հրատարակել Ռուսաստանում: 1883 թ. նոյեմբերին նա Ֆ. Էնգելսին հարցնում էր. «Չե՞ք համաձայնի արդյոք Դուք, քաղաքացի, մեզ հնարավորություն տալ «Կապիտալ»-ի երկրորդ հատորի թարգմանությունն սկսելու որքան կարելի է շուտ»[69]:

Վ. Զասուլիչի հետ Կ. Մարքսի և «Աշխատանքի ազատագրություն» խմբի անդամների հետ (Վ. Զասուլիչ, Գ. Պլեխանով) Ֆ. Էնգելսի 1881—1895 թվականների նամակագրությունը լուսաբանում է մի կողմից խմբի գործունեությունը մարքսիզմի հիմնադիրների

---

68 Թարգմանիչների և հրատարակիչների ընկերությունը («Общество переводчиков и издателей») կազմավորվել է Մոսկվայում, 1882 թվականին: Նրա հիմնական կազմում էին Մոսկվայի համալսարանի սիրիրցի ուսանողներ Պ. Արգունովը, Վ. Ռասպոպինը, Պ. Սոկոլովը, Լ. Յախնովիչը և ուրիշներ: Բազմաթիվ այլ աշխատությունների հետ միասին «Ընկերությունը» 1883—1884 թթ. վիմատիպ հրատարակել է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մի շարք աշխատություններ, այդ թվում՝ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», «Վարձու աշխատանք և կապիտալ», «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում», «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում», «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» (հրատարակվել է «Ուտոպիական և գիտական սոցիալիզմ» խորագրով), «Անտի Դյուրինգ» (համառոտված) և այլ երկեր, см. О. П. Калекина, Очерки по истории издания марксистской литературы в России (1870—1917 гг.), М., 1962, էջ 58—70.

69 Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 389:

երկերը տարածելու, մարքսիզմը Ռուսաստանում պրոպագանդելու ուղղությամբ, իսկ մյուս կողմից՝ բացահայտում է Ֆ. Էնգելսի հայացքները ռուսական մարքսիստների աշխատանքի բովանդակության վերաբերյալ։ Ֆ. Էնգելսը, ողջունելով «Աշխատանքի ազատագրություն» խմբի երևան գալը, 1885 թվականի ապրիլի 23-ին Վ. Զասուլիչին գրել է. «Ես հպարտանում եմ նրանով, որ ռուս երիտասարդության մեջ գոյություն ունի մի կուսակցություն, որն անկեղծորեն և առանց վերապահումների ընդունել է Մարքսի տնտեսական և պատմական մեծ թեորիաները։ Ինքը Մարքսը նույնպես հպարտ կլիներ դրանով, եթե մի քիչ ավելի երկար ապրեր»[70]։

«Աշխատանքի ազատագրություն» խումբը ինտերնացիոնալ կապեր ուներ Եվրոպայի սոցիալիստական շարժման ակնառոր ներկայացուցիչների հետ։ Այն ավելի ամրապնդվեց 1889 թվականին Լոնդոնում Ֆ. Էնգելսի հետ Գ. Պլեխանովի անձնական հանդիպումից հետո։ 1894 թվականին Պլեխանովը Լոնդոնում նորից տեսավ Էնգելսին, հնարավորություն ստացավ օգտվել նրա տրամադրության տակ եղած հարվածյուռ գրականությունից, ծանոթանալ Կ. Մարքսի գրական ժառանգությանը։ Վ. Զասուլիչը երկար ժամանակ շարունակում էր նամակագրություն Ֆ. Էնգելսի հետ։

«Աշխատանքի ազատագրություն» խմբի բեղմնավոր գործունեության մեջ արժանի տեղ են գրավում նրա անդամների, հատկապես Գ. Պլեխանովի գրած ինքնուրույն մարքսիստական աշխատությունները։ 1881 թվականի վերջերին Գ. Պլեխանովն ընդունեց Ռուսաստանը կապիտալիստական զարգացման ուղին թևակոխելու փաստը։ Նույն թվականի դեկտեմբերին Պ. Լավրովին նա գրել է. «ցավում եմ, որ չկարողացա լսել Ձեր «Կապիտալիզմը Ռուսաստանում» դասախոսությունը։ «Ինչպես Ձեզ հայտնի է, ես պաշտպանում եմ այն հայացքը, որ այդ բանը կատարված է, Ռուսաստանը թևակոխել է իր բնականոն զարգացման ուղին...»[71]։ Գ. Պլեխանովն իր «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը» (1883), «Մեր տարաձայնությունները» (1885), «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը» (1895), «Մատերիալիզմի պատմության ուրվագծեր» (1896) և այլ դասական աշխատություններով հարստացրեց մարքսիզմը։ Վ. Ի. Լենինը

---

70 Նույն տեղում, էջ 388։

71 «Литературное наследие Г. В. Плеханова», том VIII, ч. I, էջ 206.

«Սոցիալիզմը և քաղաքական պայքարը» գիրքն անվանել է ռուսական սոցիալիզմի հավատո հանգանակ։

Ֆ. Էնգելսն իր կյանքի վերջին տարիներին քաջատեղյակ էր Գ. Պլեխանովի «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը», «Մեր տարաձայնությունները», «Մոնիստական պատմահայեցողության զարգացման հարցի շուրջը» և այլ աշխատություններին։

1895 թվականի հունվարի 30-ին Վ. Զասուլիչին ուղարկած նամակում Ֆ. Էնգելսը գրել է. «Գեորգիի գիրքը (խոսքը «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը» աշխատության մասին է — Խ. Բ.), ասպարեզ եկավ խիստ ժամանակին... Ավելի լավ, եթե Գեորգին գուրբոր է հանել»[72]։

Գ. Պլեխանովի աշխատություններն արթնացրին Ռուսաստանի բանվորներին, պտղավորեցին հասարակական առաջավոր միտքը, սոցիալ-դեմոկրատներին զինեցին մարքսիստական տեսությամբ։ Ջախջախիչ հարվածներ հասցնելով նարոդնիկությանը, Գ. Պլեխանովը ցույց տվեց, որ պատմության իսկական կերտողը ժողովուրդն է, որ գաղափարները միայն այն ժամանակ են նյութական ուժ դառնում, երբ տիրապետում են մասսաներին, որ ամենաաչքի ընկնող անհատները դատապարտված են պարտության, եթե չեն հասկանում պատմական պայմանները և գործում են ընդդեմ հասարակության պահանջների։ Գ. Պլեխանովի աշխատությունները հարստացրին ռուսական կուլտուրան, նպաստեցին ռուս մարքսիստների գիտական, մատերիալիստական աշխարհայացքի ձևավորմանը։ Գ. Պլեխանովի աշխատություններով դաստիարակվել է ռուս մարքսիստների մի ամբողջ սերունդ։

«Չի կարելի գիտակից իսկական կոմունիստ դառնալ,— գրել է Վ. Ի. Լենինը,— առանց ուսումնասիրելու, հատկապես ուսումնասիրելու այն բոլորը, ինչ որ Պլեխանովը գրել է փիլիսոփայության վերաբերյալ, որովհետև դա լավագույնն է մարքսիզմի ամբողջ միջազգային գրականության մեջ»[73]։

«Աշխատանքի ազատագրություն» խումբը գործեց մինչև 1903 թվականը. ՌՍԴԲԿ II համագումարը, սերիական մի շարք աշխատություններ հրատարակեց։ «Բանվորական գրադարան»-ի հրատարակություններն աչքի էին ընկնում իրենց մատչելիու-

---

72 Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 433—434։

73 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 103։

թյամբ։ 1888—1892 թվականներին խումբը հրատարակում է նաև «Սոցիալ-դեմոկրատ»-ը[74], որի էջերից բանվորներին պարզաբանվում էին մարքսիզմի սկզբունքները։ Նրանում տպագրվել են Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Կ. Մարքսի դստեր՝ Էլեոնորա Մարքս-Էվելինգի, Պոլ Լաֆարգի, Ժ. Գեդի հոդվածները։

Խումբը սերտ կապեր ուներ Ռուսաստանի հեղափոխականների հետ։ «Աշխատանքի ազատագրություն» խմբի անդամների, հատկապես Գ. Պլեխանովի հետ այդ տարիներին շփվում էին նաև արտասահմանում սովորող մի շարք հայ երիտասարդներ, որոնց մասին խոսք կլինի հետագայում։

Մարքսիստական քննադատական մտքի, բարձրացող բանվորական շարժման և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների պայքարի շնորհիվ փակվում է նարոդնիկության հեղափոխական գաղափարների ավանդական էջը։ «Աշխատանքի ազատագրություն» խմբի և նրա ղեկավար Գ. Պլեխանովի գործունեությամբ մարքսիզմը դառնում է ռուսական հասարակական և քաղաքական մտքի ուղղություն։

Ռուսաստանի հասարակական կյանքում առաջացած այդ փոփոխություններն իրենց ազդեցության ոլորտի մեջ են ներգրավում նաև հայ ժողովրդի ազատագրական պայքարը, որը մինչև հայ իրականության մեջ սոցիալ-դեմոկրատիայի առաջացումը, երկար ժամանակ ընթանում էր պայքարի, որոնումների, հիասթափությունների և հուսախաբությունների ճանապարհով։

---

74 1888 թվականին լույս է տեսել «Սոցիալ-դեմոկրատ» ժողովածուն, 1890—1892 թվականներին նույն խորագրով լույս տեսավ ռուսական առաջին սոցիալ-դեմոկրատական ժուռնալը։ Ընդամենը հրատարակվել է չորս համար։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՆԱԽԱՄԱՐՔՍՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Մեծ լուսավորիչն ու մտածողը: 2. Հայ աստղաբանիկ ուտոպիա-սոցիալիստը: 3. «Հյուսիսափայլ»-ը և նրա դիմաշրջումը դեպի ինքնափոխական լուսավորականությունը: 4. Հայ ինքնափոխական-դեմոկրատական հոսանքը և նրա առաջնորդ Միքայել Նալբանդյանը:

1

Պատմությունը հոսում էր ժամանակի մեջ: Հայ գաղթօջախներում ծավալված մշակութային շարժումը, Ռուսաստանում կապիտալիստական հարաբերությունների արմատավորումը, ի վերջո, նախադրյալներ են ընձեռում Արևելյան Հայաստանում մշակութային կյանքի աշխուժացման համար: Մոսկվայում, Պետերբուրգում, Աստրախանում, Թիֆլիսում, Երևանում և այլուր հիմնադրվում են մի շարք հայ թերթեր և հանդեսներ, որոնք խթանում են լուսավորության տարածմանը:

Դեմոկրատական-առաջադիմական մտայլը, ժողովրդի ողբ բաց աչքը դարձած, առանձին անհատներին կապում էր միմյանց հետ, հուսադրում նրանց, միշտ վառ պահելով ազգային-ազատագրական պայքարի ոգին: Այն լուսաբանում էր հայ հասարակական-քաղաքական կյանքի հակասություններն ու պայքարը, կենսատու քուրայի պես կոփում ժողովրդին՝ ազգահավաքման ու պահպանման գործում, կամրջում պատմական բախտով կտրտակված երկու հատվածների ձգտումները:

Հայ ժողովրդի մտավոր զարթոնքի հասունացմանը, մտավորականության պատրաստմանը մեծ չափով նպաստել են դպրոցները, որոնք ժամանակի մշակութային կյանքի կարևոր օջախներ

Դին, հայ ժողովրդի կոնսոլիդացիայի գործոն։ 1815 թվականին Մոսկվայում հիմնադրված Լազարյան ճեմարանը, 1824 թվականի դեկտեմբերին Թիֆլիսում բացված Ներսիսյան դպրոցը, Երևանի (1837), Շուշու (1838), Ալեքսանդրապոլի (1840) թեմական դպրոցները, այնուհետև Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1874), 1860-ական թվականներից հետո դպրոցական ցանցի ընդլայնումը նշանավորում են արևելահայերի կուլտուր-լուսավորական կյանքի աշխուժացումը։ Շուրջ մեկ դար Լազարյան ճեմարանը և Ներսիսյան դպրոցը գիտելիքներ են տվել հայ երիտասարդությանը, ապավեն դարձել կուլտուր-լուսավորական շարժմանը։

1830 թվականի հուլիսին հոգևորականության կողմից հալածված Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ Խաչատուր Աբովյանը մեկնում է Դորպատ (էստոնական ՍՍՀ-ի այժմյան Տարտու քաղաքը) բարձրագույն կրթություն ստանալու։ Մինչև այդ, 1829 թվականին, նա Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի և նրա գիտական արշավախմբի հետ միասին, իբրև թարգմանիչ, խիզախել, բարձրացել էր Արարատի գագաթը։ Աբովյանի ուսումնասիրությունը, որոնց միտքը և անկուն կամքը անջնջելի տպավորություն գործեցին Պարրոտի վրա, որը և խոստացավ օգնել նրան ուսումը շարունակելու գործում։ Խ. Աբովյանը հայ երիտասարդության համար առաջինը ճանապարհ բացեց դեպի Դորպատ։ Նրան հետևեցին Ստ. Նազարյանը, Վահան Ասկարյանը, Գևորգ Աբիմյանցը, Խաչատուր Ավագյանցը, Դմիտրի Ախշարումովը, Գրիգոր Աղաքիրյանը, Գևորգ Դոդոխյանը, Գևորգ Բարխուդարյանը, Քերովբե և Ռափայել Պատկանյանները, Գևորգ Մերիմանյանը, Համբարձում Փափազյանը, Պետրոս Սիմոնյանցը, Վարդան Աբովյանը (Խ. Աբովյանի որդին), Լևոն Օհանջանյանը և շատ ուրիշներ։ Դորպատի համալսարանում էքստերն կարգով քննություններ են հանձնել Անդրեաս Արծրունին, Ֆրիդրիխ (Նաստի) Նազարյանը (Ստ. Նազարյանի որդին), Իսահակ Մայսուրյանցը և ուրիշներ։ Ոչ լրիվ տվյալներով, 1830—1895 թվականներին, Դորպատի համալսարանում և նրան առընթեր ուսուցչական սեմինարիայում սովորել են մոտ 100 հայ երիտասարդներ[1]։ Դոր-

---

1 Տե՛ս Ա.Բ. Աբեղյան, Դորպատի հայ ուսանողությունը, Վիեննա, 1942, նույնի Խաչատուր Աբովյանը և Դորպատը, Ստեփանոս Նազարյանը և Դորպատը։ Դիվան Դորպատի հայ ուսանողության գրքույկները։

պատյան միջավայրում ձևավորվեցին Խ. Աբովյանի և Ստ. Նազարյանի լուսավորական հայացքները, ծնունդ առան Գ. Դոդոխյանի «Ծիծեռնակ», Ք. Պատկանյանի «Ինձ համար չէ գարնան գալը», Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը», կարոտաբաղձ, ջերմ հայրենասիրական երգերը: Ճիշտ են նկատել, որ «Ռուսների հետ ունեցած մեր այս սերտ առնչության համար պարտական ենք աշխարհաբար գրականության հայր Աբովյանին, որը 1829 թվականին Մասիսի կատարին պարզած գրոշակի մի ուրիշ օրինակը, ուսուցչապետ Պարրոտի միջոցով, հաջորդ տարին տարավ ամբարձրեց այն ժամանակվա Ռուսաստանի գիտության կենտրոն Դորպատում, որը հետագայում մեր գրականության արևելքը դարձավ»[2]:

Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանը, Միք. Նալբանդյանը XIX դարի 50-ական թվականների լուսավորական շարժման նշանավոր դեմքեր են: Խավարի «մթին թագավորության» դեմ պատերազմելով, նրանք իրենց համախոհներով շեփորեցին լուսավորականությունը՝ որպես ազգային կոնսոլիդացիայի միջոց, Ռուսաստանի հետ կապելով հայ ժողովրդի ազգային-մշակութային զարթոնքը:

Դա նախամարքսյան հայ հասարակական մտքի երանգներից էր:

Երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանի հետ, հայ հասարակական միտքը շփման մեջ մտավ ռուս հասարակական առաջավոր մտքի հետ, կրելով նրա անմիջական բարերար ազդեցությունը: Հայ առաջավոր մտածողները, հետևելով բազմադարյան ազգային մշակույթին և գրականության լավագույն ավանդներին, ոգեշնչված ռուս նշանավոր գիտնականների, գրողների, արվեստագետների, հասարակական գործիչների, ազատագրական շարժման կազմակերպիչների, հեղափոխական նարոդնիկության գործունեությամբ, առաջ մղեցին ռուսահայերի մտավոր զարգացումը:

Հայ հասարակական միտքը և մշակույթը առաջադիմության և դեմոկրատական լուսավորության ուղիները հանեց հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ և մտածող Խաչատուր

---

[2] «Հորիզոն», № 290, 11 դեկտեմբերի 1913, տե՛ս Ստեսար [Ստեփան Սարգսյան] «Պետերբուրգի հայ կազմակերպված մտավորականության հիսունամյակը» հոդվածը:

Աբովյանը (1809—1848)։ Շուրջ վեց տարի մնալով Դորպատում, նա ընդարձակեց իր աշխարհայացքը, մտահիկից հաղորդակից դարձավ ռուս և արևմտաեվրոպական հասարակական շարժումներին, յուրացրեց նրանց գիտության ու մշակույթի նվաճումները, ուսումնասիրեց գրական նշանավոր ստեղծագործությունները, Եվրոպայի քաղաքական իրադարձությունները, մասնավորապես ֆրանսիական 1830 թվականի հուլիսյան հեղափոխության արձագանքները Ռուսաստանի ժողովուրդների կյանքում։ Նա քրտնաջան կերպով կարդում է Հոմերոսի, Շեքսպիրի, Գյոթեի, Շիլլերի, Լեսինգի և Հերցենի երկերը, ծանոթանում Ժան-Ժակ Ռուսոյի և գերմանական փիլիսոփաների հայացքներին։

Խ. Աբովյանը, 1836 թվականին վերադառնալով Կովկաս, հայ իրականության թանձր խավարում վառեց լուսավորության ջահը, սիրտն ու հոգին նվիրաբերեց հայրենի բազմաչարչար ժողովրդին։ Նա անհաշտ պայքարի ելավ ընդդեմ բռնության ու կեղեքման, հետամնացության և ազգային կապանքների, հանուն աշխատավոր զանգվածների լուսավորության[3]։ Դորպատյան միջավայրը և Կովկաս արտաքսված դեկաբրիստների ընդհանուր մթնոլորտը Խ. Աբովյանին իր ժամանակի առաջավոր մտածողների շարքը հասցրին։ «Աբովյանին հետ տեսություն բրի,— ժամանակին վկայել է ֆրանսիացի ճանապարհորդ Մ. Վագնները,— և ստուգիս զարմացայ իր հմտության վրա։ Գերմանական փիլիսոփայության և գրագիտության տեսիլները իրեն այնքան ընտանի են, որ նույնիսկ եվրոպական մը օգուտ կրնա քաղել իր կարծիքներեն։ Շիլլերը ջուրի պես գիտե. Լեսինգին, Լեյպնիսին կարծիքները մաղն անցուցեր է և իր ասիական երևակայությունով անոնց նոր դույն մը կուտա։ Գերմանացիի մը չափ կիսոսի գերմանիկ լեզուն և տարակույս չկա, որ այս անձը հայ գրագիտության պատիվ պիտի ընե օր մը։ Տարօրինակ երևույթ մարդկային լուսավորության,

---

3 Խ. Աբովյանի մասին տե՛ս Աշոտ Հովհաննիսյան. Խ. Աբովյան, Երևան, 1933, Հ. Գյուլիմելյան, Հայրենասիրության գաղափարը Աբովյանի մոտ. Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 9, 1941; Ռ. Զարյան, Աբովյանի կյանքը, Երևան, 1940; Հ. Մուրադյան, Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին, Երևան, 1941, նույնի, Խաչատուր Աբովյան, Երևան; Վ. Պարտիզունի, Խաչատուր Աբովյան, Երևան, 1952; Ա. Տերտերյան, Երկեր, Երևան, 1960; Արտ. Ոսկերչյան, Խ. Աբովյանի պատմական դերը, «Սովետական գրականություն և արվեստ», № 9, 1948; Է. Թոփչյան, «Վերք Հայաստանի» վեպի իդեական բովանդակությունը; Ա. Ասատուրյան, Խ. Աբովյանի գրական ժառանգության պատմությունից, տե՛ս Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 9, 1948; Ս. Բազյան, Աբովյանի գրական ժառանգությունը, Երևան, 1966 և այլն։

հայու մը բերանը արձագանք է այնպիսի տեսիլներու, որք մեր մեջ դեռ նոր կտարածվին։ Շիլլերին, Լեսինգին գրությունները Կովկասի լեռներու մեջ կհասատատվին և լսելիք կըլլան և դեռ Եվրոպայի մեջ ժողովուրդ կա, որ այս հեղինակներու անունն անգամ լսած չէ։ Զարմանալի բան պիտի ըլլա, եթե Ասիայի լուսավորությունը Կովկասեն սկսի և Բրոմեթեին ժայռը տեսնի իր շարշարանքին արդյունքը...»[4]։

Խ. Աբովյանի մատուցած մեծագույն ծառայությունը, ամենից առաջ, հայ նոր գրականության, աշխարհաբար գրական լեզվի հիմնադրումն է, որի առաջնը դարձավ «հեղինակի արյունով» շաղաղված, անկեղծ ոգևորության արդասիք[5] «Վերք Հայաստանի» դարակազմիկ երկը։ Ինչպես այդ, այնպես էլ մյուս ստեղծագործությունների գլխավոր բովանդակությունը հայ ժողովրդի ազգային դարթոնքի գաղափարախոսությունն է, պատմական արժեքների վերագնահատումը, ժամանակի սոցիալ-տնտեսական իրադարձությունների լայն ընդգրկումը, քաղաքական հազեցվածությունը, հեղինակի հումանիզմը, ժողովրդասիրությունը, լուսավորական-դեմոկրատական հայացքները, մարտնչող հայրենասիրությունը։

Պատմությունը Աբովյանին էր վիճակել լինել հայ ժողովրդի քաղաքական և մշակութային վերածնության դրոշակակիրը, դեմոկրատական-գյուղացիական լայն զանգվածների գաղափարների ու շահերի արտահայտիչը։

Հիրավի՞, այդպիսին է նա։

Խ. Աբովյանի աշխարհայացքը կենդանի մարմնավորում է ստացել նրա «Երգ երգոց»-ում՝ «Վերք Հայաստանի» վեպում։ Դա ոչ միայն արցունքաբեր ողբ է և «նրանով կարելի է իմանալ էն ժամանակվա մեր աշխարհի հալը», «մեր քաջ հայրերի պատմությունը», այլ կրակոտ հայրենասիրության, ազատասիրության, ժողովուրդների եղբայրության և վսեմ մարդկության, ռուս ժողովրդի նկատմամբ հավերժ բարեկամության և երախտագիտության, ազնիվ մտորումներով օժտված, կռվի կոչող, հայ ժողովրդի ճակատագրով, գոյատևման, նրա ապագայի նկատմամբ

---

4 «Արևմուտք», № 42, 1859։ Թերթի նույն թվականի 3 համարներում (№ 6, էջ 41—42, № 7, էջ 54—56, № 10, էջ 74—76) հրապարակվել է «Խաչատուր Աբովյան» ուշագրավ հոդվածը։

5 Տե՛ս Ստ. Շահումյան, Նամակներ, Երևան, 1959, էջ 239—240։

անսահման հավատով տոգորված հանճարեղ երկ, «ազգային դյուցազներգություն»[6]։

«Վերքը» հայ ժողովրդի կյանքում առաջացած պատմական բեկման ծնունդ է։ Այն հայ ժողովրդի գոյամարտի հերոսապատումն է, առաջադիմության արձագանքը, դեմոկրատական շարժման, հասարակական պայքարի անշեջ կրակը։ Խ. Աբովյանը, որդիական սիրով նվիրված, մեծարելով հայ ժողովրդին, իր պատմա-փիլիսոփայական մտորումները խտացրել է այսպես. «Ո՞վ թուր ունի, առաջ ի՛մ գլխիս խփի, ի՛մ սիրտս խրի, ապա թե ո՛չ քանի բերանումս լեզու կա, փորումս սիրտ, ես լեզապատառ ձեն կտամ. «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, Հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»[7]։ Եվ ապա նա վառված սրտով հորդորում էր ազգին.

> Շունչդ տո՛ւր, հոգիդ, բայց քո հայրենիք
> Մի՛ տուր թշնամյաց, ու անաշխարհիկ
> Ընկնիլ սարն սար, լինիլ չարաչար
> Սառա օտարաց, կամ գերի անճար[8],

Խ. Աբովյանը «հպարտ ու մի ցավ սրտում» իրեն հատուկ ձևերով մերկացնում է ցարիզմի գաղութային քաղաքականությունը. (ինչ խոսք, որ ցարական տիրապետությունը նա իդեալական չէր համարում, ցարիզմի հետ կապած պատրանքները նրան հույս էին ներշնչում, «...որ բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակ ղորանա, մեծանա, դարդերը մոռանա, նա ու էլ եդ՝ իր առաջին փառքին հասնի»[9]) փառաբանում էր ռուս ժողովրդին, ասելով. «Օրհնվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի չար շունչը մեր երկրից հալածեց...»[10]։

Արտահայտելով հայ ժողովրդի խոր և անկեղծ զգացմունքները, Խ. Աբովյանը ռուս ժողովրդի նկատմամբ հայերի երախտագիտությունն արտահայտել է Վոլգա և Զանգու գետերի քույ-

---

6 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1960, էջ 256։

7 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 6։

8 Նույն տեղում, էջ 94։

9 Նույն տեղում, էջ 114, 116։ Մենք համամիտ ենք Ա. Գ. Հովհաննիսյանի այն մտքին, թե «Նիկոլայան ռեժիմի խուլ դիշերին, կորցնելով անցքերն ըմբռնելու քաղաքական ստույգ կողմնացույցը, նա (Խ. Աբովյանը—Խ. Բ.) հասավ հույզերի ողբերգական լարման և ողբերգական լուծման» (տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը», գիրք առաջին, էջ 192)։

10 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 58։

բացման սիմվոլիկ պատկերով։ Սքանչելի է տրված երկու հարևան՝ հայ և վրաց ժողովուրդների ազգային շահերի և պատմական բախտի միասնության գաղափարը՝ դնելով իբրև միասնական ընդհանուր ուղի ռուս ժողովրդի հետ նրանց հավերժ միասնության, հավատարմության և եղբայրական սուրբ դաշինքի պողոտան։ «Մեկ ահագին չորս ջաղացի ջուր՝ մեկ քանդված բլրի տակից, դուրս ա պրծնում... բլրի չորս կողմը պատում, էլ ետ դետինը մտնում ու կնա փայը առած՝ գնում Երևանու դաշտը՝ որ Ապարանու սուրբը էջմիածնին, Վաղարշապատին, Արմավիրին, Մասիսին պատմի, որ գնա տրտում Երասխի հետ, Ջանգին ու Գառնու գետն էլ մեջ անեն ու գնան Քուռն էլ մեջ անեն, իրենց արտասուքը նրանց հետ խառնեն ու տանեն, Կասպից ծովու սիրտն ածեն, նրա ադի ջրումը կորչեն, Պարսից նավերը ջախջախուրդ անեն, ռուսաց նավերը իրանց քամակի վրա տանեն ու բերեն, որ ճամփին չհուսահատվի, չբեզարի, ու էն իր բարի ոտքը մեր աշխարհիցը չկարի...»[11]։

Իր «Բուրքի աղջիկը» նովելում փառաբանելով ժողովուրդների բարեկամությունը, Խ. Աբովյանը ասում էր. «Հավատներս մեկ չի, սրտներս հո՞ մեկ ա... Պատկերդ, հոգիդ հո՞ իմիցն են»[12]։

Այն ժամանակ մեր երկրի ժողովուրդների հավատները դեռ մեկ չէր, մարքսիստական գաղափարախոսությունը չկար։ Դրա համար էլ Խ. Աբովյանի որոնող միտքը, կրակոտ սիրտը՝ հայերի ինքնորոշման համար նեցուկ որոնելով, մտահոգ հարցնում էր.

> Էն ի՞նչ շունչ կելի, որ էս նոր հոգին
> Փչի, վերկացնի քնից մեր ազգին.
> Էն ի՞նչ ձեռք կելի, որ մեր աշխարհքին
> Էլ էդ սիրտ տա ու կանգնացնի կրկին[13]։

Խ. Աբովյանը խտացումն եղավ հայ ժողովրդի երազանքների, ձգտումների, ցավերի, տառապանքների, նրա հոգու և իմաստության, նա եղավ հայ ժողովրդի լեզուն, սրտագին լեզուն,— գրել է Ավ. Իսահակյանը[14]։

---

11 Նույն տեղում, էջ 113—114։

12 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, էջ 25։

13 Նույն տեղում, հատ. III, էջ 165։

14 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 116։

Թեև Խ. Արովյանի պատմաբանասիրական շատ աշխատություններ ժամանակին չհրապարակվեցին, բայց հեղինակի լուսավորական-դեմոկրատական հայացքները, հայ ժողովրդի վերածնունդն ազդարարող պահանջները անցան հաջորդ սերունդներին, թևավորեցին նրանց և հող պատրաստեցին հետագա հեղափոխական-դեմոկրատական սերնդի համար։

2

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո ստիպողաբար ուժեղանում է հայ երիտասարդության Ռուսաստանի և Եվրոպայի բարձրագույն դպրոցներում սովորելու ձգտումը։ 1840-ական թվականներից սկսած տարեցտարի ավելանում են Մոսկվայի, Պետերբուրգի, Դորպատի, Ռիգայի, Կիևի, Խարկովի, Կազանի և այլ համալսարաններում սովորող հայերը։

Հայ ժողովրդի հասարակական զարգացման և մշակութային կյանքում արդասավոր դեր են խաղում Մոսկվայի և Պետերբուրգի բարձրագույն դպրոցները։ Միայն 1861—1903 թվականներին Մոսկվայի համալսարանում սովորել են ավելի քան 450 հայեր։ Դիպլոմներ ձեռք բերելու հետ միասին հայ առաջադեմ ուսանողները ծանոթանում են ժամանակի հասարակական-քաղաքական շարժումներին։

XIX դարի 40-ական թվականներին, արևմտա-եվրոպական ուտոպիական սոցիալիզմի գաղափարական ազդեցությամբ, Ռուսաստանում ձևավորվում է ուտոպիկ-սոցիալիստների հոսանքը [15]։ Ռուս ուտոպիստների աշխարհայացքը, նախամարքսյան սոցիալիստական ուսմունքներին հատուկ նախիրությամբ և դասակարգային սահմանափակությամբ հանդերձ, տոգորված էր քաղաքական ակտիվության և դեմոկրատական ոգով, զարգանում էր ճորտատիրության և ինքնակալության դեմ մղվող պայքարում։

Ապագա հասարակության վերաբերյալ նրանց դրական եզրակացությունները, օրինակ՝ քաղաքի և գյուղի հակադրության,

---

15 Ուտոպիական սոցիալիզմի մասին հանդամանորեն տե՛ս В. П. Волгин, Развитие общественной мысли во Франции в XVIII веке. М., 1958; его же, Французский утопический коммунизм, М., 1960; А. Р. Иоаннисян, Генезис общественного идеала Фурье, М., 1939; его же, Коммунистические идеи в годы Великой Французской революции, М., 1966.

մասնավոր հարստացման, վարձու աշխատանքի ոչնչացումը, հասարակական ներդաշնակության հաստատումը, պետության վերածումը արտադրության հասարակական կառավարման — այս բոլորի մեջ թեև բացահայտ էր նրանց ուտոպիական բնույթը, բայց կային բննադատական տարրեր: Այնուհանդերձ, ուտոպիաները, ինչպես «Անտի-Դյուրինգ»-ում գրել է Ֆ. Էնգելսը,— ուտոպիաներ էին, քանի որ այլ բան էլ չէին կարող լինել այն ժամանակաշրջանում, երբ կապիտալիստական արտադրությունը դեռ այնքան թույլ էր զարգացած: Նոր հասարակության տարրերը նրանք ստիպված էին իրենց գլխից հնարել, որովհետև հին հասարակության մեջ այդ տարրերը տակավին բոլորի համար ակնբախ հանդես չէին եկել, նոր կառուցվածքի իրենց պլանը գծելով, նրանք ստիպված էին սահմանափակվելու բանականությունը դիմելով և հենց այն պատճառով, որ դեռ չէին կարող իրենց ժամանակակից պատմությանը դիմել:

Ուտոպիաների մտածելակերպը երկար ժամանակ իշխում էր XIX դարի սոցիալիստական հայացքների վրա:

Ռուսական ուտոպիստական սոցիալիզմի աչքի ընկնող ներկայացուցիչներից է Դմիտրի Դմիտրովիչ Ախշարումովը (1823—1910): Նա ռազմական պատմաբան, 1812 թվականի հայրենական պատերազմի խիզախ գեներալ Պ. Կոնովնիցինի համհարզ և մարտական ընկեր Դմիտրի Իվանովիչի որդին էր[16]: Ծնվել է Պետերբուրգում, զարգացական տարիներին գիմնազիայում սովորելու ժամանակ մեծ հետաքրքրություն է հանդես բերել զանազան ֆիզիկոմաթեմատիկական գիտությունները, կլանված ընթերցել ռուս դասական գրողների, մասնավորապես Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Ն. Գոգոլի և այլոց ստեղծագործությունները, ընթերցել ֆրան-

---

16 Ախշարումով Դմիտրի Իվանովիչ (1792—1837)—գեներալ-մայոր, 1812 թ. Հայրենական պատերազմի առաջին պատմագիրը՝ «Описание войны 1812 г.» գրքի հեղինակը (см. Военная энциклопедия, под ред. полковника В. Ф. Новицкого, Петербург, 1911, էջ 301): Նրա ավագ որդին՝ Նիկոլայը (1822—1893), 1839 թ. ավարտել է Պետերբուրգի Ալեքսանդրյան լիցեյն, 1840—1845 թթ. աշխատել է ռազմական մինիստրությունում, կոնսերվատիվ ուղղության արձակագիր, իսկ երրորդ որդին՝ Վլադիմիրը ավարտելով Ալեքսանդրյան լիցեյն, 1845—1851 թթ. աշխատել է ռազմական մինիստրության դրասենյակում (см. Дело Петрашевцев, том III, М., 1951, стр. 466—467).

Ախշարումովների հայ լինելը անառարկելի փաստերով հիմնավորել է պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանը Երևանի պետական համալսարանի գիտական նստաշրջանի 1966 թվականի փետրվարի 28-ի պլենար նիստում կարդացած զեկուցման մեջ:

սիական և գերմանական նշանավոր գրողների և սոցիալիստների գործերը: 1846 թվականին թեկնածուի գիտական աստիճանով ավարտելով Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժանմունքը, աշխատում է արտաքին գործերի մինիստրության Ասիական դեպարտամենտին կից արևելյան լեզուների ուսումնական բաժնում: Այդ ժամանակ էլ նա կապվում է Ն. Կաշկինի և ապա՝ իր գիմնազիայի տարիների դասընկեր Ի. Դեբուի միջոցով Մ. Բուտաշևիչ-Պետրաշևսկու ընդհատակյա խմբակների հետ, դառնում ակտիվ պետրաշևական: Նա սերտ կապ ուներ պետրաշևական կորիզի, մասնավորապես Իպպոլիտ և Կոնստանդին Դեբուների (ֆրանսիական հին ազնվական ծագում ունեին), Ա. Եվրոպեուսի, Ի. Սպեշնևի, Ա. Խանիկովի, ռուս նշանավոր գրող Ֆ. Դոստոևսկու և այլոց հետ: Խմբակի անդամները օգտվում էին Մ. Պետրաշևսկու հարուստ գրադարանից: Ժողովներում ակտիվ բանավեճեր էին բացվում ժամանակի հրատապ հարցերի, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում 1848 թվականին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների շուրջը: Բացի Ֆուրյեի աշխատություններից, նրանք մշակել են Բելինսկու նամակը Գոգոլին և այլ ծրագրային նյութեր:

Ն. Կաշկինի խմբակի նիստերին մասնակցում էին «դատարյան ֆուրյեիստները»: Դ. Ախշարումովը, լինելով պետրաշևական, կամ ինչպես ինքն էր ասում, «1849 թվականի ռուս սոցիալիստ», հարել է հեղափոխական-դեմոկրատական ուղղությանը, նպաստել Ռուսաստանում ուտոպիական սոցիալիզմի գաղափարների զարգացմանն ու տարածմանը: Նա հատկապես հրապուրված էր Շարլ Ֆուրյեի ուսմունքով: Իսկ Շ. Ֆուրյեն վարպետորեն տիրապետում էր դիալեկտիկային: Նա գտնում էր, որ պատմական յուրաքանչյուր փուլ ունի իր վերընթաց և վայրընթաց գիծը: Պատմության ամբողջ նախորդ ընթացքը բաժանելով զարգացման չորս աստիճանի՝ վայրենություն, բարբարոսություն, նահապետական շրջան և քաղաքակրթություն, ցույց էր տալիս, որ «քաղաքակրթության մեջ աղքատությունը հենց առատությունից է ծնվում», և որ քաղաքակրթությունը շարժվում է հար նորոգվող հակասությունների «կախարդական շրջանակում»: Դ. Ախշարումովը, հրապուրված Շ. Ֆուրյեի ուսմունքով, կարդում էր նրա մտքակոր աշխատությունները և թեավորվում: 1848—1849 թվականներին Դ. Ախշարումովի գրած բանաստեղծություններում («Եվրոպա, 1845»), պետրաշևյան խմբակի հավաքներին և ֆուրյեական երեկոներին

արտասանած ճառերում, կենսագրական նոթերում, ինչպես և 1870-ական թվականներին ռուսական մամուլում հրատարակած «Հիշողություններ»-ում (այն առանձին գրքով առաջին անգամ տպագրվել է 1905 թ. «Իմ հիշողություններից (1849—1851 թթ.)» խորագրով), ուտոպիական սոցիալիզմի գաղափարները պաշտպանելուց բացի, արտահայտություն են գտել հեղափոխական-դեմոկրատական. տրամադրություններ: Դ. Ախշարումովը գտնում էր, որ ժողովուրդը առաջադիմության շարժիչ ուժն է, և որ հասարակական ֆորմացիան փոխարինվում է մի նոր ֆորմացիայով հեղափոխական ճանապարհով: Դա ավելի պարզորոշ ձևով է արտահայտված ֆուրյեական երևույթի համար 1848 թվականի մարտի 30-ին գրած նրա ճառում, որտեղ հեղինակը, հնչեցնելով տագնապազանգը, եզրակացնում է թե՝ հարկավոր է ոչնչացնել ժամանակակից պետությունը: Ուտոպիական սոցիալիզմի գաղափարախոսության մեջ նման առաջադիմությունը, ամենից առաջ պայմանավորված էր 1848 թվականի ֆրանսիական հեղափոխության ազդեցությամբ, հեղափոխություն, որ մահացու հարված հասցրեց նախամարքսյան սոցիալիզմին:

1849 թվականի ապրիլին 23 պետրաշևականների հետ միասին ոստիկանությունը ձերբակալում է նաև Դ. Ախշարումովին: Նրանցից 13-ին ապրիլի 23-ին ձերբակալեցին Մ. Պետրաշևսկու բնակարանում, իսկ 10-ին նույն օրը տարբեր տեղերում և տարան Պետրոպավլովյան ամրոցը: Նրանց մատնել էր ցարական գաղտնի գործակալ, Պետերբուրգի համալսարանի բանասիրական բաժանմունքի նախկին ուսանող Պ. Անտոնելին: Ռազմա-դատական հանձնաժողովը որոշում է այլ պետրաշևականների հետ միասին մահապատժի ենթարկել Դ. Ախշարումովին: Մահապատիժը իրականացնելու պահին վերադաս իշխանություններն այն փոխարինում են քառամյա պատժիչ վաշտի, իսկ այնուհետև Կովկասում շարային զինվորական ծառայության՝ նրան զրկելով ազնվական կոչումից:

«Իմ հուշերից» գրքում նա պատկերավոր ձևով նկարագրել է այն տառապանքները, որ կրել է հեղափոխական հայացքների համար: Ի դեպ, Նիկոլայ Ախշարումովը նույնպես մի քանի անգամ մասնակցել է Ն. Կաշկինի խմբակի պարապմունքներին, որի պատճառով 1849 թվականի օգոստոսին հարցաքննության են ենթարկել, բայց, լուրջ փաստարկներ չունենալու պատճառով, ազատել են, միայն գաղտնի հսկողություն սահմանելով նրա վրա:

Դ. Ախշարումովի մոտ հայտնաբերած նյութերը ցույց են տալիս, որ նա դեմ էր ամեն տեսակ բռնություններին, հարստությանը, անհավասարությանը, քարոզում էր ապստամբական գաղափարներ։

1848 թվականի աշնանը գրած «Կենսագրական նոթեր»-ում նա իր առջև երեք հարց էր դնում. 1. ինչպիսի՞ն են իմ մտքերն ու հավատը, 2. ազա՞տ եմ ես արդյոք, 3. պատրա՞ստ եմ ես... Առաջադրված հարցերի պատասխանները լիովին հավաստում են, որ Դ. Ախշարումովը համոզված սոցիալիստ էր, Շ. Ֆուրյեի մեծ երկրպագուն, որը երազում էր Ռուսաստանով մեկ հասարակական բոլոր խավերում պրոպագանդել ֆուրյերիզմը։ Դրանում էր նա տեսնում ապագա իդեալական հասարակարգի իրականացման հուսալի ճանապարհը։ Բայց խորապես ծանոթ լինելով ցարական ինքնակալության քաղաքական ծանր պայմաններին և հաշվի առնելով Ռուսաստանի առանձնահատկություններն ու ինչպես վերը նշեցինք, ֆրանսիական հեղափոխությունից հետո առաջացած փոփոխությունները, Դ. Ախշարումովը, բացի լուսավորական-պրոպագանդիստական գործունեությունից, առաջադրում էր ռեֆորմների իր ծրագիրը և հասնում հեղափոխական պայքարի ճանաչման։

1849—1856 թվականներին նա անցկացրեց Առանձին կովկասյան կորպուսի 17-րդ գծային զումարտակում՝ սկզբում իբրև շարքային, իսկ հետո՝ ենթասպա։ Ծառայության հետ միասին նա գրում է սոցիալական անհավասարությունը խարազանող բանաստեղծություններ։

1856 թվականին Դ. Ախշարումովին շնորհվում է պրապորշչիկի կոչում։ Նա իր խնդրանքով փոխադրվում է Ասիական Թուրքիայի ռազմաբեմը։ Ինչ խոսք, որ Դ. Ախշարումովը շփվել է կովկասյան ժողովուրդների, հատկապես նրանց առաջադեմ գործիչների հետ, բայց առայժմ մեր ձեռքի տակ նրա այդ կապերը և հեղափոխական գործունեության մի շարք կողմերը բացահայտող փաստեր չկան։

1857 թվականին Դ. Ախշարումովին վերադարձվում է աղնվական կոչումը։ Նա զորացրվում է բանակից և մայրաքաղաքներում ապրելու իրավունք ստանում։ Իր կյանքի գրեթե 35-ամյա ուղին մաքառումներով անցկացնելուց հետո նա իր մեջ այնքան ուժ ու կարողություն է գտնում, որ 1857 թվականին ընդունվում է Դորպատի համալսարանի բժշկական ֆակուլտետը, իսկ մեկ

տարի անց փոխադրվում Պետերբուրգի բժշկա-վիրաբուժական ակադեմիան, որը 1862 թվականին ավարտում է արծաթե մեդալով։ 1864 թվականին Դ. Ախշարումովը մեկնում է արտասահման, Բեռլինի, Փարիզի, Վիեննայի և Պրագայի նշանավոր կենսաբանների ղեկավարությամբ հարստացնում և կատարելագործում իր գիտելիքները։ 1866 թվականին նա հաջողությամբ պաշտպանում և ստանում է բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։ Այնուհետև նա բժշկա-սանիտարական բեղմնավոր գործունեություն է ծավալում Պետերբուրգում, Օդեսայում, Պոլտավայում, Խերսոնում, Կամենեց-Պոդոլսկում, Ռիգայում, Բաքվում և այլուր, դառնում ռուս առաջավոր բժիշկներից մեկը, հասարակական բժշկության ակտիվ գործիչ, տասնյակ արժեքավոր գիտա-հետազոտական մենագրությունների հեղինակ։ Հայրենական բժշկության զարգացման գործում արժանավոր ավանդ է ներդրել Դ. Ախշարումովը։ Հետազոտում հեռանալով իր երիտասարդական տարիների փայփայած ֆուրյեական՝ ուտոպիական սոցիալիզմի դաղափարներից, նա նվիրվում է բժշկությանը, ամեն ինչ անում մարդու բարօրության համար, վերացական դաղափարներից հեռանալով, գործնական կյանքում ապացուցում իր հումանիզմը, բյուրեղյա մաքրությունը, վայելելով աշխատավոր զանգվածների ջերմ համակրանքը։ Իր «Հիշողություններում» նա ճիշտ է նկատել, թե ռուսական ուտոպիկ-սոցիալիստները մի տեսակ ծանրաշափի նման անմիջականորեն արձագանքում էին Եվրոպայում 1848 թվականին տեղի ունեցած իրադարձություններին, վարդագույն երազանքներով լցված խարազանում անարդարությունը։

Դ. Ախշարումովը գործելով ռուսական միջավայրում, պայքարելով ճարտարիրության և ինքնակալության դեմ, ըստ էության պայքարում էր նաև հայ ժողովրդի սոցիալական և քաղաքական ազատագրության համար։ Հենց դրանով էլ նա կապվում է հայկական իրականության հետ, դառնում հայ անդրանիկ ուտոպիկ-սոցիալիստը, հեղափոխական-դեմոկրատական դաղափարների ջատագով[17]։

---

17 Դ. Դ. Ախշարումովի մասին տե՛ս Д. Д. Ахшарумов, Из моих воспоминаний (1848—1851) со вступительной статьей В. И. Семевского, СПб. 1905; его же, Записки петрашевцев, М., 1930. «Критико-биографический словарь русских писателей и ученых» Венгерова, т. I, 1889, էջ 883. «Врачъ», 1893, № 28, էջ 803—804; там же, 1893, № 31, էջ 875; Е. Шепеловский, Память Димитрия Димитриевича Ахшарумова (некролог), «Русский врач», т. 9,

XIX դարի 50—60-ական թվականները շոնդալից էին ոչ միայն Ռուսաստանի, այլև հայ ժողովրդի մտավոր կյանքում։ Ռուսաստանում առաջացած հեղափոխական իրադրությունը, 1861 թվականի գյուղացիական ռեֆորմը, որ «գյուղացիների ամենատանջիչ թալանում էր, բռնությունների շարան և կատարյալ ծաղրանք էր նրանց նկատմամբ»[18], *նառեֆորմյան գյուղացիական ալեկոծումները նշանավորեցին հասարակական զարգացման նոր փուլը։ Դա մի ժամանակ էր, երբ ազնվական-ազատագրական շարժումներին փոխարինեցին ռազնոչինական (բուրժուա-դեմոկրատական) շարժումները։ Երկրի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքում համապատասխանաբար ազնվականական-հեղափոխական մտավորականությանը հերթափոխի եկավ ռազնոչինականը (տարասեռան), որը ջանում էր ավելի մոտիկից կապվել ժողովրդի հետ և արտահայտել նրա բաղձանքները։ «Գերցենը սանձեց ազատ ռուսական մտքով արտասահմանում,— սա է նրա մեծ ծառայությունը։ «Պոլյարնայա զվեզդա»-ն բարձրացրեց դեկաբրիստների տրադիցիան, «Կոլոկոլը» (1857—1867) սարի պես կանգնեց գյուղացիների ազատագրման համար։ Սարկական լռությունը խախտվեց»*[19],— գրել է *Վ. Ի. Լենինը։*

XIX դարի 50—60-ական թվականներին հայ իրականության մեջ Խ. Աբովյանի վառած լուսավորական պրոպագանդայի կրակը բորբոքելու հետ միասին հայ դեմոկրատիայի առաջ ծառացան

№ 8, էջ 279, 1910; Большая медицинская энциклопедия, том 2, էջ 1230; Б. А. Александровский, Врач-петрашевец Димитрий Димитриевич Ахшарумов, «Врачебное дело», № 1, 1944, էջ 70. Дело Петрашевцев, том I, էջ VI, XV, 151, 153, 154, 157, том II, էջ 9, 100, 114, 173, 241, 287, 401, том III, էջ 3, 5, 9, 25, 28, 30, 31, 33, 34, 37, 51, 53, 57, 58, 60, 61, 65, 69, 73, 79, 87—148, 160—162, 166—169, 180—181, 419, 433, 435, 439, 466—467, Сборник Петрашевцы, под ред. П. Е. Щеголева, М.—Л., том I, II, III, 1928. Отдел рукописей библиотеки СССР им. В. И. Ленина, ф. 135 (В. Г. Короленко), раздел III, картон 56, ед. хр. 55; там же, раздел II, картон 18, ед. хр. 27, ф. 356 (А. Б. Дерман), картон 1, ед. хр. 4: *Վ. Կորոլենկոյին գրած նամակներում խնդրում է օգնել իր «Հիշողությունների» տպագրությանը, քննադատում է ցարական կարգերը։*

18 *Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 130։*

19 *Նույն տեղում, հատ. 18, էջ 16—17։*

ազգային-քաղաքական խնդիրներ։ Աշխուժանում է հայ նոր գրականությունը (աշխարհաբարը հաղթանակում է), գիտությունը, մշակույթը, հրապարակախոսությունը։ «Հայ գրականության և հրապարակախոսության մեջ XIX դարի կեսերին սկսված այս աշխույժը,— գրել է Ս. Գ. Հովհաննիսյանը,— հաճախ դիտվել է որպես «վերանորոգչություն» կամ «վերածնություն»։ Սակայն «վերանորոգչությունից» կամ «վերածնությունից» առավել-իդեական զարթոնքի ու հեղաբեկման մի ժամանակամիջոց էր այս, որի համար ցուցանշական է լուսավորության շրջանի և լուսավորական շարժման հատուկ ձգտումը դեպի գիտության և բանականության հաղթանակը՝ կրոնի և տրադիցիայի հանդեպ, հավատը դեպի հասարակական պրոգրեսը, պայքարը ազգային կյանքի ընդհանուր բարելավման և ազգային-քաղաքական ինքնորոշման համար»[20]։

Դա արևելահայ հասարակական զարգացման այն ժամանակաշրջանն էր, երբ սուր պայքար էր մղվում կղերա-ֆեոդալական կապանքների, հնի, առաջընթացը խափանող երևույթների դեմ, երբ հայ հասարակական մտքի դեմոկրատական ծալքերում խմորվում են ազգային-ազատագրական ձգտումները, հասունանում բուրժուա-դեմոկրատական խնդիրներ։ Լուսավորական պրոպագանդային արձագանքում է 1850 թվականին Թիֆլիսում Գ. Պատկանյանի խմբագրությամբ հրատարակված «Արարատ» թերթը, որի էջերը զարդարում էին Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի առաջին բանաստեղծությունները։ Լուսավորական շարժման արևելահայ կենտրոնի փողհարի դեր է ստանձնում Ս. Նազարյանի և Մ. Նալբանդյանի ստեղծած «Հյուսիսափայլ»-ը, որի ծնունդը՝ «1858 թվականը արժանի է ոսկեղեն տառերով արձանագրվելու ամենայն բանասեր Հայկազնի հիշատակարանի մեջ»[21]։

Ս. Նազարյանը, դեռևս Դորպատում զինվորագրվեց լուսավորական շարժմանը, նրանում տեսնելով հայ ժողովրդի ազգային-քաղաքական զարգացման գլխավոր ուղին։ Թե՛ դորպատյան ուսումնառության տարիներին և թե՛ Պետերբուրգում, Կազանում, Մոսկվայում և Թիֆլիսում իր ծավալած գործունեության ընթաց-

---

20 Աշ. Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գիրք առաջին, էջ 133։

21 Միքայել Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 1, էջ 486։ Նույնը՝ «Հյուսիսափայլ», 1860, № 11, էջ 384։

քում, Ս. Նազարյանը, հարուստ գիտելիքներով ծանրաբեռնված, պայքարում էր հետադիմական ուժերի դեմ, եռանդուն կերպով պաշտպանում աշխարհաբար լեզվի, նոր գրականության ստեղծման, եվրոպական քաղաքակրթության յուրացման պահանջը։ Նա հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի կողմնակիցներից էր։ Ռուսաստանի սահմաններում հայերը «քաղաքականապես ռուս են»,— ահա նրա բանաձևումը։ Ուրիշ խոսքով, Ս. Նազարյանը, շրջանցելով Ռուսաստանի կազմում հայերի ազգային-քաղաքական ինքնորոշման պահանջը, այն համոզմանն էր, թե նրանց մնում է միայն «ազատապես աճել ու զարգանալ, օգտագործել իրենց ի վերուստ տրված քաղաքական ազատությունն ու հնարավորությունները ազգային, մշակութային զարգացման ու առաջադիմության համար» [22]։

«Հյուսիսափայլի» հրատարակության նախաձեռնողը Ս. Նազարյանն էր։ Դեռևս 1854 թվականին նա ծրագրել էր «Ռուսիա» խորագրով ամսագիր հրատարակել «հայերին ռուս լուսավորության ու քաղաքակրթության շրջանը մտցնելու համար» [23]։ Բայց այն չիրականացավ, իհարկե, ոչ իր մեղքով։ 1856 թվականին հայերեն ամսագրի հրատարակության հարցը նորից ծառացավ, «Ռուսաստանում ցրված հայերին ռուս կրթության և գիտության պտուղները մատակարարելու» [24], հայերին «ռուս մտքի և կյանքի շրջանի մեջ մտցնելու», «հայ-ասիացիների և ռուս-եվրոպացիների միջև... հոգևոր բարոյական մերձեցում ստեղծելու» համար։

Այդպիսի ամսագիր դարձավ Ս. Նազարյանի և Մ. Նալբանդյանի «Հյուսիսափայլ»-ը, որի առաջին համարը լույս տեսավ 1858 թվականի մարտին (հունվարյան համար)։ Ս. Նազարյանի խմբագրած «Հյուսիսափայլ»-ը, Մ. Նալբանդյանի եռանդուն ջանքերով արևելահայ իրականության մեջ դարձավ բուրժուա-դեմոկրատական լուսավորչության օրգանը, ռուսական քաղաքակրթության, առաջավոր մշակույթի, գիտության պրոպագանդիստը, իսկ ավելի ուշ նաև նրա հեղափոխական-լուսավորական և հեղափոխական-դեմոկրատական գաղափարների առաջին սերմնացանը։ Թեև խմբագրի և գլխավոր աշխատակցի «դավանությունները»

---

22 Ստ. Նազարյան, *Երկեր, հատ. Ա, էջ 99, 334։*

23 Ա. Ինճիկյան, *Մի նոր էջ «Հյուսիսափայլ»-ի պատմությունից, տե՛ս Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 12, 1953։*

24 *Տե՛ս* Աշոտ Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 141։*

տարբեր էին, նրանց հայացքներում եղած տարաձայնությունները (հատկապես կապիտալիզմի զարգացման երկու հնարավոր ուղիների, հայ ժողովրդի ազատագրման, գյուղացիական հեղափոխության և այլն) օրավուր սրվում և խորանում էին, բայց «Հյուսիսափայլ»-ը «ազատության գրված զինվորի» և նրա համախոհների (Ս. Շահազիզ, Անանիա Սուլթանշահ, Գ. Բաբխուդարյան, Մ. Սադաթյան և ուրիշներ) շնորհիվ շարունակում էր իր առաջատար գործը: Ռեակցիայի դեմ պայքարելու համար նման համագործակցությունը պատմականորեն արդարացված է: «Հյուսիսափայլ»-ի գործունեությունը արևելահայ հասարակական կյանքում առաջադիմական մի այնպիսի շարժում էր, որ անկախ նրա խմբագրի հայացքներից, ուղի էր հարթում նախամարքսյան հայ հասարակական մտքի առաջընթացի համար: Մ. Նալբանդյանն իր վառվռուն գրչով արգասավորում էր «Հյուսիսափայլ»-ի էջերը, շրջագարձ կատարելով դեպի հեղափոխական լուսավորականությունը:

Ինչ վերաբերվում է Ս. Նազարյանին, ապա նա, իբրև իդեալիստ, չկարողացավ հաղթահարել լիբերալ-լուսավորական մտահայեցողությունը, մնաց «եվրոպական քաղաքակրթության» ճանապարհով ընթացող և գյուղացիական հեղափոխության հեռանկարի առաջ ընկրկող արևելահայ բուրժուազիայի գաղափարախոսը:

Մեծ են «Հյուսիսափայլ»-ի ծառայությունները հասարակական զարգացման, հայ ժողովրդի կոնսոլիդացիայի, ազգի ձևավորման, հայրենիքի, կնոջ, ընտանիքի, դպրոցի, մամուլի, ազատության հարցերի քննարկման, աշխարհարար լեզվի, հայ նոր գրականության, հրապարակախոսության ստեղծման առաջարկում: «Հյուսիսափայլ»-ը շարժեց հայ իրականության հետամնացության ճահիճը: «Ո՛չ մի օրագիր, ո՛չ մի ազգի մեջ այնքան ազդեցություն չի արած գրականության վրա,— գրել է Մ. Նալբանդյանը,— այնքան բարի պտուղներ չէ բերած այսպիսի կարճ միջոցում, որքան այդ բազմարդյուն օրագիրը, որ հյուսիսից փայլելով, մի ամենևին նոր լույս թափեց մեր կենդանի բարբառի վրա, առաջին և գլխավոր պատճառ դառնալով կենդանի ազգի մեջ կենդանի լեզվով խոսելու և գրելու»[25]: «Հյուսիսափայլ»-ը ճըշ-

---

25 Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1945, հատ. I, էջ 486։

մարտություն սերմանեց հայ իրականության մեջ, պայքարի դրոշ պարզեց «խավարի թագավորության» դեմ։ «Հյուսիսափայլ»-ի դավանությունը է և մեր սրտի խոստովանությունը»[26],— 1860-ականի սոնանը իր «Հիշատակարանի» վերջում գրում էր Մ. Նալբանդյանը։

4

Արևելահայ նախամարքսյան հասարակական-քաղաքական միտքը հակամարտերում ճյուղավորվում է։ XIX դարի 50—60-ական թվականներին ձևավորվում են հայ հասարակական-քաղաքական հոսանքները՝ արևելահայ դղերա-ազայական, ազգային-պահպանողական, ազգային-լիբերալ և հեղափոխական-դեմոկրատական, որոնք արտահայտում էին այլևայլ խավերի ու դասակարգերի շահերը։ Արևելահայ կղերա-ազայական հոսանքը[27] «Մասյաց աղավնի», «Ճռաքաղ», «Համբավաբեր Ռուսիոյ» և այլ պարբերականների էջերից ռեակցիոն քարոզներ էր կարդում, անձեռնմխելի համարում եկեղեցին ու գրաբարը, մերժում բարենորոգումների, հայ ժողովրդի ազգային ու քաղաքական ինքնորոշման պահանջը, հրապարակախոսության մեջ նոր միայն իր ծիլերն արձակած համադեմոկրատական ուղղությունը։ Բթացնելով ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, լույսից շեղելով դեպի խավարը, այդ ռեակցիոն հոսանքի զաղափարախոսները, Առաքել Արարատյանի բերանով հորդորում էին գրաբար լեզուն և կրոնն են ազգության երկու հատատհիմն սյուները, «ուր էլ որ գտնվելու լինենք, այնտեղ է մեր տունն ու հայրենիքը[28]»։ Իսկ Ս. Ջալալյանը, Ա. Թաիրովը, Հ. Կարինյանը և Գ. Շիրմազանյանը հավատում էին, որ իբրև թե Ռուսիո հայերի վիճակը բարվոք է, նրանք ստանում են քաղաքական այն իրավունքները, արտոնություններն ու ստատուսները, ինչ ստանում են իրենք՝ ռուսները, «սուտ է թե

---

26 Նույն տեղում, էջ 486։

27 Հայ հասարակական հոսանքների մասին հանգամանորեն տե՛ս Ա. Գ. Հովհաննիսյան, XIX դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները (տե՛ս Պատմաբանասիրական հանդես, № 4, 1965, էջ 35—78, № 1, 1966, էջ 34—62, նույնի, Նալբանդյանը և նրա ժամանակը երկհատոր մենագրությունը։

28 Առ. Արարատյան, Սխալանք վարդապետարանին կրոնի ի զգուշություն համազգաց, Տփղիս, 1858, էջ 17։

կա բանություն ու բարձված է ազատությունն»[29]: Կղերա-ազգայական հոսանքի «ուր հաց, անդ կաց» քաղաքական ուղղությունը վնասակար էր, այն արգելակում էր ժողովրդի ազգային կոնսոլիդացիային:

Ազգային-պահպանողական հոսանքը (Մ. Ազարեկյան, Գ. Ախվերդյան, Պ. Շանշյան, Հ. Էնֆիաջյան, Պ. Սիմոնյան և ուրիշներ), «Կռունկ», «Մեղու Հայաստանի», «Հյուսիս» թերթերի և այլ հրատարակությունների միջոցով հակադրվելով կղերա-ազգայական ռեակցիային, նույնպես հենվում էին կապիտալիզմի ուղին բռնած առևտրական բուրժուազիայի վրա: Վտանգված համարելով ազգի և եկեղեցու գոյատևումը, փորձում էին ընդդիմակայել ցարիզմի դաղութային քաղաքականությանը, հենված իր դարը ապրած առևտրական և արհեստավորական համքարության վրա: Հայ ժողովրդի ազատագրությունը նրանք սպասում էին եվրոպական պետություններից կամ էլ «ի վերուստ շնորհվելիք բարենորոգումներից»: Արևելահայ ազգային-պահպանողական հոսանքը առանձին հարցերում թեև մոտենում էր դեմոկրատական խավերին, իրականում հեռու էր դեմոկրատական լինելուց:

Արևելահայ ազգային-լիբերալ հոսանքը, Ս. Նազարյանի ղեկավարությամբ, կողմնակից լինելով լուսավորականությանը, սոցիալական որոշ բարենորոգումների, խթանելով աշխարհարար լեզվի զարգացմանը, բավարարվում էր ռեֆորմիստական պահանջներով, մերժում հեղափոխական պայքարի ուղին: Հոսանքը «արձագանքում էր բուրժուական այն հասարակախավերի հայացքներին,— գրել է Ս. Գ. Հովհաննիսյանը,— որոնց բարեկեցությունը կախում ուներ արդյունաբերական կապիտալի հետ կապված ռուսահայ դաղթավայրերից: XIX դարի 50—60-ական թթ. հենց այդ դաղթավայրերն էլ հանդիսանում էին արևելահայ ազգային-լիբերալների գործունեության հանգրվանները»[30]:

Կղերա-ազգայական և պահպանողական հոսանքների քարացածության և հետամնացության դեմ պայքարելու, բուրժուա-դեմոկրատական լուսավորչության պրոպագանդայի ու ցարիզմի քննադատության հետ միասին, ազգային լիբերալները դեմ էին

---

29 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, էջ 28։

30 Ս. Գ. Հովհաննիսյան, XIX դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները. տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», № 1, 1966, էջ 33։

ազատագրական շարժումներին, ներքևից եկող ազատությանը, ի վերջո, հենվում էին միապետականության վրա, հայտարարելով՝ հայերին ոչ թե քաղաքական անկախություն է հարկավոր, այլ «մարդկային կատարելություն» Ռուսաստանի «կիրթ, աշխարհագետ, մեծահանճար» հոգաբարձության տակ»[31]: «...Հայրենիքը այս բոպեին մեր սրտի և հոգու մեջ է»[32],— ասում էին նրանք:

Գաղափարական իրարամերժ հոսանքների և դասակարգային սուր պայքարի բովում XIX դարի 60-ական թվականների սկզբին ձևավորվում է արևելահայ հեղափոխական դեմոկրատական հոսանքը, որի կազմակերպիչն ու առաջնորդն էր Միքայել Նալբանդյանը (1829—1866):

Մ. Նալբանդյանը[33] հայ հասարակական մտքի նախամարքսյան շրջանի բարձրակետն էր: Շարունակելով ցարիզմի դեմ ընդհարվելու ուղին բռնած Խ. Աբովյանի լուսավորական, ազգային-դեմոկրատական քննադատության ուղղիծը, Մ. Նալբանդյանը իրեն ազատակամ նվիրեց ժողովրդի ազատագրության վսեմ գործին, խորացրեց և հեղափոխական ընթացքի մեջ դրեց այն, իր սրոնումների «փշոտ ճանապարհին» հաղթահարելով գաղափարական խոչընդոտները, «արյուն ու կրակ» թափելով թշնամու վրա, ձեռք մեկնեց ռուսական սոցիալ-դեմոկրատիայի նախորդներին՝ ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատներին: Հաղթահարելով պահպանողական և լիբերալ բուրժուական հոսանքների գաղափարական սահմանափակությունը, նա «հասարակ ժողովրդի» մեջ տեսավ ազգի հենարանն ու վերակենդանության լծակը, դյուղի ու քաղաքի մանր արտադրողների հետ կապված առաջավոր երիտասարդության մեջ նշմարեց նրա զարթոնքի կրողներին, հայ դեմոկրատիայի ազգային-ազատագրական հեռանկարները կողմնորոշեց դեպի արևելքի և արևմուտքի հեղափոխական ըմբոստացումները և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի գլխավորած հեղափոխական շարժումները[34]: «Ռուսիո ազատությունը, ընդ-

---

31 Տե՛ս «Հյուսիսափայլ», 1861, էջ 205:

32 Նույն տեղում, 1860, էջ 72:

33 Մ. Նալբանդյանի մասին հանգամանորեն տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք Ա, 1955, գիրք Բ, 1956:

34 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, էջ 598, նույնի, Միքայել Նալբանդյանը և ռուս հեղափոխական-դեմոկրատների գաղափարական ընդհանրություններն ու քաղաքական կապերը. տե՛ս «Գրական թերթ», № 16 (1324), 15 ապրիլի, 1966:

հանուր մարդկության ազատության վերաբերմամբ, մե՞ծ խորհուրդ ունի...»[35],— գրել է Մ. Նալբանդյանը իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» ծրագրային աշխատությունում:

Մ. Նալբանդյանի սրտում ազատության մեծ հրդեհ էր այրվում, որը բյուրեղացրեց նրա միտքը, տեսանելի դարձրեց կոտորակված հայ ժողովրդի ապագան: Այն ժամանակ գուցե որևէ մեկի մանկությունն այնպես շուտ «Երազի նման», «անդարձ հավիտյան» չի անցել, ինչպես ազատաբաղձ Մ. Նալբանդյանի մանկությունը, որի համար «խիստ նեղ էր» առկա աշխարհը:

Ամբոստ պատանուն «խելքի բերելու» և «հնազանդեցնելու» նպատակով կղերական ռեակցիան ոչ մի միջոցի առջև կանգ չէր առնում: Խավարամիտ կղերականությունից հալածված, կենսախինդ պատանին, Թիֆլիսում, Օդեսայում, Քիշնևում և այլուր դեգերելուց հետո հաստատվում է Մոսկվայում: Լազարյան ճեմարան, Մոսկվայի համալսարան, արտասահմանյան առաջին ուղևորություններ... Ամենուրեք փայլատակում է նրա հուրհրացող տաղանդը, իսկ կղերական ռեակցիան սև սավերի պես հետապընդում է, հալածում: Շարժուն, հարահոս Մ. Նալբանդյանին հանգիստ չկար: Նա օր ու գիշեր կարդում էր, գաղափարապես զինվում, հետախուզում հայ ժողովրդի անցած և դալիք ճանապարհները, կատարում գրական առաջին քայլափոխները... 1858—1860 թվականներին Մ. Նալբանդյանը Ս. Նազարյանի հետ միասին աշխատում է «Հյուսիսափայլ»-ում, նրա էջերը զարդարում «Հիշատակարան կոմս Էմմանուելի օրագրական թերթերից»-ի մարգարնչող հրապարակախոսությամբ, «Իտալացի աղջկա երգը», «Ազատություն» և այլ բանաստեղծություններով: Նրա հյուսիսափայլյան նյութերը հագեցված էին հեղափոխական-լուսավորական պրոպագանդայով: Նրանցում քննարկվում էին ազգության պրոբլեմը, գրական նոր լեզվի (աշխարհաբարի), ազգային լուսավորության, կանանց ազատագրման, խոսքի ազատության, թատրոնի և ժամանակի այլ բազմապիսի կենսական հարցեր: Հայ ժողովրդի կոնսոլիդացման գաղափարը, որ առաջին անգամ քանդհինգամյա Մ. Նալբանդյանը արծարծել էր 1854—1855 թվականներին՝ հայ մատենագիտությանը նվիրված «Յաղագս հայկական դպրության հաւ» խորհրդածությունում, հանդիսանում է այն շրջանի նրա հրապարակախոսության ներքին կենդանի զարկերա-

---

35 Միմայել Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 61։*

կը։ Լուսավորությունը, դպրոցը նա համարում էր ազգության ցեմենտող ուժը։ Ուսումնասիրելով Լ. Ֆոյերբախի, Վ. Բելինսկու և այլոց աշխատությունները, Մ. Նալբանդյանը ստիպողաբար հաղթահարում է «ազգ» և «ժողովուրդ» հասկացողությունների վերաբերյալ իր հայացքներում եղած մշուշը (ազգ է «նաև հասարակ ժողովուրդը») և հասնում հեղափոխական-դեմոկրատական տեսակետի։ Արդեն 1860 թվականին նա գրում էր. «ազգության հաստատանը և լծակը է հասարակ ժողովուրդը»[36], իսկ «Երկրագործության...» մեջ (1862) ասում էր. «ազգ ասելով պիտի իմանալ հասարակ ժողովուրդը»[37]։

Արդեն իսկ «Նկատողություն» հոդվածում (1858) նա համակրանքով էր խոսում ճնշված ազգությունների մասին, հանդելով ազգերի իրավահավասարության սկզբունքին։ Նա իր միտքը բանաձևել է. «Ոչ մի ազգություն իրավունք չունի կուլ տալու և ոչընչացնելու մի ուրիշ ազգություն... Թող ամենայն ազգ պահպանեն յուր ազգության կերպարանքը, թող ապատ և պայծառ ծաղկի ամենայն ազգություն մարդկեղեն աշխարհի մեջ»[38]։

Դեռևս 1858 թվականի վերջերին «Նկատողություն» հոդվածում Մ. Նալբանդյանը գրել է. «Մեր ազգի մեջ այժմ կան հայացքներ, կան ուղղություն, կան ուրեմն և դրոշակներ, կան պատերազմ»[39]։ «Ազգ», «ազգություն», «ժողովուրդ», «ժողովրդական բարեկեցություն» հասկացողությունների հեղափոխական-դեմոկրատական սահմանումներով, Մ. Նալբանդյանը սկսում է գիտակցել հայ ժողովուրդը իբրև բուրժուական ազգ կազմավորման պատմական պրոցեսի ծավալման ընթացքում բացահայտվող դասակարգային ներհակությունները։ Ազգային-ազատագրական շարժումների ծավալման, նրանց բնույթի գնահատման գործում հայ հասարակական-քաղաքական մյուս հոսանքների դեմ մղած հակամարտությունների պահին նա բարձրացնում է հեղափոխական դեմոկրատիայի դրոշը, դառնում հայ «հասարակ ժողովրդի» ազատագրման համար մարտնչող առաջնորդ։ Նա ազգի լուսավորությունը կապում է քաղաքական ազատության պահանջի հետ, սովորեցնում, թե՝ «...ստրկության մեջ չի կարող լուսա-

---

36 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, էջ 452։

37 Նույն տեղում, հատ. III, էջ 45։

38 Նույն տեղում, հատ. 2, էջ 259։

39 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 262։

վորության ծիլը կանաչել»[40]: Մ. Նալբանդյանը, Ն. Չերնիշևսկու, Ն. Դոբրոլյուբովի և «Սովրեմեննիկի» 1859—1860 թվականների համարներում զարգացրած մտքերի ոգով, քաղաքական իշխանության հիմքը համարում էր տնտեսական պատվանդանը: «Մարդիկ պիտո է ամրացնեին յուրյանց նյութեղեն ոտքերը,— գրում է նա,— որ այնուհետև կարողանային գնալ բարոյականի և իմացականի քամակից»[41]: Նույնն էր ասում Չերնիշևսկին. «Քաղաքական իշխանությունը, նյութական բարեկեցությունը և կրթությունը իրար հետ անքակտելիորեն կապված բաներ են...»[42]:

Քաղաքական ազատության հասնելու միակ ելքը հեղափոխությունն է: Մ. Նալբանդյանը, ազատական նվիրվելով աշխատավոր ժողովրդի իրավունքի պաշտպանման սուրբ գործին, այն համարում էր իր կյանքի «բուն խորհուրդը և նպատակը»: Դրան հասնելու համար «...չէ պիտո ընկրկինք ո՛չ բանտի և ո՛չ աքսորի առջև, ո՛չ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լիննենք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությանը նվիրել և սրբել մեր արյունով»[43], գրում է նա 1861 թվականին: Բոցաշունչ հայրենասերը կյանքի խորհուրդ համարելով զենքով ձեռք բերած ազատությունը, հանուն այդ նվիրական գաղափարի, մարտահրավեր է նետում, բացականչելով.

— Ազատություն,— գոչեցի,—
Թո՛ղ որոտա իմ ղլխին
Փայլակ, կայծակ, հուր երկաթ,
Թո՛ղ դավ դնե թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու այն
Պիտի զոռամ, պիտի կրկնեմ
Անդադար ազատությո՛ւն[44]:

Վ. Բելինսկու, Ն. Չերնիշևսկու և Ն. Դոբրոլյուբովի աշխատություններից զատ Մ. Նալբանդյանի աշխարհայացքի կազմա-

---

40 Միքայել Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. II, էջ 264:*
41 *Նույն տեղում, էջ 274:*
42 Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, том IV, стр. 842.
43 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 24:*
44 *Նույն տեղում, հ. I, էջ 41—42:*

վորման գործում բացառիկ դեր են խաղացել Ա. Գերցենի, «Լոնդոնի պրոպագանդիստների», «Զեմլյա ի վոլյա» գաղտնի կազմակերպության հետ ունեցած գաղափարական ընդհանրություններն ու քաղաքական կապերը, 1857, 1858, 1859, 1860—1862 թվականներին արտասահման կատարած ուղևորությունները, ռուս էմիգրանտների հետ ունեցած անձնական հանդիպումները և մերձեցումը:

1859 թվականին Մ. Նալբանդյանը գաղտնի ձևով մեկնում է արտասահման, մարտ-սեպտեմբեր ամիսներին լինում է Վարշավայում, Լոնդոնում և այլուր: Նույն թվականի մարտի 16-ին իր համախոհ Սուլթանշահին Քիշինևից գրած նամակում խնդրել է արտասահմանյան այդ ուղևորության մասին ոչ մեկին չհաղորդել: Փարիզում նա ծանոթանում է «Արևմուտք» թերթի խմբագիր Ս. Ոսկանյանի, իսկ Անգլիայում՝ «Լոնդոնի պրոպագանդիստների» հետ [45]:

«Իրականում հենց նրանք էին այդ դարաշրջանի մեծ գործիչները,— գրել է Վ. Ի. Լենինը ռուս հեղափոխական-դեմոկրատների մասին,— և, որքան մենք ավելի ենք հեռանում նրանցից, այնքան ավելի է պարզվում մեզ համար նրանց մեծությունը, այնքան ավելի է ակնհայտ դառնում այն ժամանակվա լիբերալ-ռեֆորմիստների չնչինությունը, ողորմելիությունը» [46]:

Հեղափոխական-դեմոկրատներին տրված Լենինյան այս փայլուն գնահատականը տարածվում է նաև Միքայել Նալբանդյանի վրա:

Մ. Նալբանդյանը արդյո՞ք անձամբ հանդիպել է Ն. Չերնիշևսկուն և եղել է «նրա ղեկավարությամբ գործող հեղափոխական ընդհատակյա կազմակերպության ամենագործունյա անդամներից մեկը» թե ոչ. այս և մի քանի նման հարցեր տակավին շարունակում են գրաղեցնել ուսումնասիրողների ուշադրությունը: Բայց պատմական ճշմարտություն է այն, որ Մ. Նալբանդյանը Ն. Չերնիշևսկու գաղափարական մարտական զինակիցն էր, «Լոնդոնի պրոպագանդիստներ»-ի ջերմ բարեկամը, ռուս էմիգրանտական հեղափոխական ընտանիքի հարազատ զավակը, Օգարևի և Գերցենի արտահայտությամբ, ոսկի հոգու տեր, հեղափոխության գործին սրբության հասնող չափով նվիրված, անշահախնդիր ու

---

45 См. С. Даронян, Микаэл Налбандян, М., 1963, էջ 51.

46 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 139։

գերազնվագույն մարդ[47]։ Այդ մերձեցման շնորհիվ էլ վերջնակատարելս ձևավորվեցին Մ. Նալբանդյանի հեղափոխական դեմոկրատական, մատերիալիստական աշխարհայացքը։ «Զեմլյա ի վոլյա» կազմակերպությունը Սերնո-Սոլովևիչին և նրա մարտական ընկերոջը՝ Մ. Նալբանդյանին էր վստահել Ռուսաստանում ենթադրվող 1863 թվականի համընդհանուր ապստամբության ժամանակ Կովկասի և Թուրքիայի ազգաբնակչությունը ոտքի հանելու, ազգային-ազատագրական շարժումները ծավալելու գործը։

Մ. Նալբանդյանը «Զեմլյա ի վոլյա»-ի գաղափարներով տոգորված, «Սովրեմեննիկ»-ի և «Կոլոկոլ»-ի գաղափարները մարսած, իր «Երկու տող» (1861), «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» և այլ աշխատություններում յուրովի ընկալում ու լրացնում էր ժամանակի հեղափոխական-դեմոկրատական հայացքները, առաջադրում «ինտեգրալ հեղափոխության» քաղաքական պլատֆորմը։ «Երկրագործությունը...» Նալբանդյանի գլուխ-գործոցն է։ Նրանում քննարկված են քաղաքական, սոցիոլոգիական, փիլիսոփայական, ինտեգրալ բազմապիսի հարցեր, որոնք ոչ թե տեսական ճամարտակություններ են, այլ գործնական-քաղաքական նշանակություն ունեցող կենսական պրոբլեմներ։ «Ի՞նչ է մեր խնդիրը» հարցադրմանը, Մ. Նալբանդյանը պատասխանել է. «...մեր խե՜ղճ ազգի թշվառությունը»[48]։

«Երկրագործության» մեջ Մ. Նալբանդյանը սուր քննադատության է ենթարկում ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը՝ այն բանի համար, որ նրա հռչակած մարդկության փափագած «ազատություն, հավասարություն, եղբայրություն» պահանջը մնաց թղթի վրա, ազգարարային հարցը չլուծվեց, աշխատավոր զանգվածները առաջվա պես մնացին շահագործողների ճիրաններում, ազգաբության ու թշվառության մեջ։ Արձագանքելով Ա. Գերցենին, մասնավորապես «Այն ափից» («С другого берега») ծրագրային հոդվածաշարի գաղափարներին, Մ. Նալբանդյանը, գերցենյան ոճով գրում էր. «Եվրոպան ուշ ծնվեցավ։ Բայց շատ արագ ծերանում է... Այո՛, Եվրոպան կանգնած է այսօր մի դժվար լուծանելի խնդրի առջև, այդ տնտեսական խնդիրն է, մարդը

---

47 Н. П. Огарев, Избранные социально-политические и философские произведения, М., 1960, стр. 463. Աշոտ Հովհաննիսյան, *Միքայել Նալբանդյանի և ռուս հեղափոխական-դեմոկրատների գաղափարական ընդհանրություններն ու քաղաքական կապերը*, «Գրական թերթ», № 16 (1324), 15 ապրիլի, 1966։

48 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. III, էջ 65։

և հացը: Եվ այդ խնդիրը կանուխ, թե ուշ, թեև սոսկալի փոթորիկներով, պիտի լուծվի: Ոչինչ բռնություն, ոչինչ պահպանողական համակարգություն, ոչինչ ընդդիմադրություն, որևիցե կողմից, չէ պիտու կարողանա փակել նորա առաջքը, թեև այսօր հայածակա՞ն և աքսորակա՞ն են այդ ապագայի մարգարեները և առաքելները»[49]:

Մ. Նալբանդյանը, համոզված լինելով գյուղացիական հեղափոխության անխուսափելիության մեջ, հանգում է այն եզրակացության, որ «մարդու և հացի» խնդիրը «կանուխ թե ուշ, թեև սոսկալի փոթորիկներով, պիտի լուծվի», քանի որ ոչ մի բռնություն չի կարող խափանել այն:

Այստեղից էլ հետևում էր Եվրոպայի և Ասիայի ժողովուրդների վերածնունդն ու ազատությունը ապահովելու համար հեղափոխական ճանապարհով բռնապետությունների ոչնչացման Նալբանդյանական քաղաքական ուղեգիծը:

Մ. Նալբանդյանը և նրա զեկավարած հեղափոխական-դեմոկրատական հոսանքը անչափ մեծ դեր խաղացին հայ ժողովրդի արևմտահայ հատվածի, նրա դեմոկրատական մտքի ռահվիրաների (Ստ. Ոսկանյան, Հ. Սվաճյան, Մ. Մամուրյան, Գ. Չիլինկիրյան, Ս. Թագվորյան և ուրիշներ) կյանքում: Նալբանդյանի թե՛ անձնական շփումները (հատկապես արտասահման կատարած ուղևորությունների ժամանակ) և թե՛ գաղափարական ազդեցությունը դարբնեցին և առաջ մղեցին արևմտահայ դեմոկրատական միտքը:

Հիշենք նաև այն, որ հայ իրականության մեջ Մ. Նալբանդյանով սկսած նախամարքսյան մատերիալիզմի շրջանն ավարտվում է Գալուստ Կոստանդյանով, որը «Մեթոդին վրա» և այլ գործերով ստեղծեց մատերիալիզմի մի ամբողջ շարժում, ընձյուղներ արձակեց հայ հասարակական-քաղաքական մտքի ասպարեզում, ցասումով ծառացավ ֆեոդալական և ռեակցիոն մյուս գաղափարախոսությունների դեմ, անուրանալի հետք թողնելով հայ առաջադիմական մտավորականության և հրապարակախոսության վրա:

Մ. Նալբանդյանի դիրքավորումը գյուղացիական հարցում համերաշխում էր «Լոնդոնի պրոպագանդիստներ»-ի հայացքներին: Մ. Նալբանդյանը բոլոր հեղափոխական-դեմոկրատների պես, ագրարային հարցի լուծումը համարում էր կապիտալիզմից

---

49 Նույն տեղում, էջ 81:

խուսափելու, ռուս մանր արտադրողներին պրոլետարականացումից ազատելու միջոց: Նա պաշտպանում էր գյուղական համայնքի վերաբերյալ Գերցենյան տեսությունը: Երկու հնարավոր հեռանկար տեսնելով ագրարային խնդրի լուծման՝ ռեֆորմի և հեղափոխական, նա կանգնած էր հեղափոխական ուղու («կացնի» կոչելու) տեսակետի վրա: Հայ համայնական հողատիրության վրա հանգչող ազգային վաճառականության կազմակերպումը Մ. Նալբանդյանը որակում էր որպես «տնտեսական հեղափոխություն»: Մ. Նալբանդյանը արևմտահայերի ազատագրման գործում կատարելապես մերժում էր արևմտա-եվրոպական պետությունների և ցարական Ռուսաստանի միջամտությունը, անվերապահ կանգնում համադեմոկրատական հեղափոխության դիրքերի վրա: Բայց մյուս հեղափոխական-դեմոկրատների, և նրանց հաջորդած նարոդնիկների պես, Մ. Նալբանդյանը ևս չընկալեց կապիտալիզմի զարգացման օրինաչափությունները, չէր ըմբռնում և չէր կարող ըմբռնել բանվոր դասակարգի պատմական դերը: Նրա պատկերացմամբ բանվորը «խեղճ», «հուսահատ», «գժբախտ», «գործավոր» էր, իսկ կապիտալիստական զարգացումը տնտեսական բնական ընթացքից շեղում: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս «Երկրագործությունը...», նա վստահ էր, որ վաղ թե ուշ հաղթելու է արևմտյան պրոլետարիատը:

«Երկրագործության» մեջ Մ. Նալբանդյանը պաշտպանում էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հեղափոխական պայքարի միասնությունը, դրա մեջ տեսնում «հասարակ ժողովրդի»՝ աշխատավոր զանգվածների ազատագրական պայքարի գրավականը: «Տնտեսական հեղափոխության» ելքը նա տեսնում էր ռուսական համայնքի մեջ, դրանով իսկ հավատարիմ մնալով ռուս հեղափոխական-դեմոկրատների մտքի և՛ ուժեղ, և՛ թույլ կողմերին:

«Երկրագործության» մեջ Մ. Նալբանդյանը կանգնում է ուտոպիական, գյուղացիական սոցիալիզմի դիրքերի վրա: «Վինելով ուտոպիա այն բանի նկատմամբ, թե ինչ տեսակ պետք է լինեն (և կլինեն) հողերի նոր բաժանման տնտեսական հետևանքները,— գրել է Վ. Ի. Լենինը Գերցենի հիմնադրած նարոդնիկական դեմոկրատիզմի մասին,— այն հանդիսանում է գյուղացիական մասսաների, այսինքն՝ բուրժուական-ճորատատիրական արդի, Ռուսաստանի բնակչության մեծամասնությունը կազմող մեծ,

Միքայել Նալբանդյան

Das Kapital.

Kritik der politischen Oekonomie.

Von

Karl Marx.

Erster Band.

Buch I: Der Produktionsprocess des Kapitals.

Das Recht der Uebersetzung wird vorbehalten.

Hamburg
Verlag von Otto Meissner.
1867.

New-York: L. W. Schmidt. 24 Barclay-Street.

Կարլ Մարքսի «Կապիտալ»-ի առաջին հրատարակության անվանաթերթը: Գրքի մեկ օրինակը պահվում է Հայկական ՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանում:

Գ. Վ. Պլեխանով

№ 4

ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍ

ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ

(Թարգմանություն)

ՎԻԵՆՆԱ

1894

Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմ» գրքի հայերեն առաջին հրատարակության անվանաթերթը:

Դմիտրի Ալիշարումով

Ստեփան Զարյանշյան

Գեորգ Ղարաջյան (Ս. Տ. Արկոմեդ)

Հովսեփ Աթաբեկյանց

Վիկտոր Կուռնատովսկի

Գեորգի Ֆրանչեսկի

Միխայիլ Կալինին

Սերգեյ Կիրով

մասսայական դեմոկրատական վերելքի ուղեկիցն ու սիմպտոմը»[50]:

Լենինյան գնահատականը կարելի է տարածել նաև Մ. Նալբանդյանի վրա: Կապիտալիզմի կանխման երաշխիքը տեսնելով համայնական հողատիրության մեջ, նա կարծում էր, թե այդ միջոցով հնարավոր է իրագործել «ազատություն, հավասարություն, եղբայրություն» լոզունգները: Մ. Նալբանդյանի «տնտեսական հեղափոխության» ծրագիրը «հողի և ազատության» համար քաղաքական կարգերի դեմ պայքարի մարտակոչ էր, հայ ազգի «ջարդված մեքենան» վերականգնելու դարման:

Անպարփակ էր Մ. Նալբանդյանի մտահորիզոնը, անսպառ նրա եռանդը: Անգամ Պետրոսպավլովյան ամրոցի մութ խցիկում աշխատում էր օր ու գիշեր, թղթին հանձնում իր մեծ գաղափարները հայ մշակույթի, պատմության, լուսավորության, կրոնի, բարոյականության, փիլիսոփայության, հայ նոր գրականության, էսթետիկայի, գրական քննադատության, սոցիալական և ուրիշ շատ հարցերի վերաբերյալ: Նա գրեց իր նշանավոր քննադատությունը «Սոս և Վարդիթեր»-ի մասին, «Հեգելը և նորա ժամանակը» նկատողությունները, «Մեր լեզվի արմատական բարեփոխման մասին» (հատվածները) և ուրիշ շատ աշխատություններ, բանաստեղծություններ, գրառումներ: Ո՛չ բանաը և ոչ է՛լ աքսորը բնավ չընկճեցին ֆիզիկապես տկար, բայց մտքով հզոր Մ. Նալբանդյանի երկաթյա կամքը: Զարգացման իր էվոլյուցիայի ընթացքում նա տեսական թռիչքներ է գործում, հեղափոխական անցում կատարում իդեալիզմից դեպի մատերիալիզմը: Մ. Նալբանդյանի փիլիսոփայական շրջադարձը տեղի ունեցավ հեղափոխական ճգնաժամի շրջանում: Արժեքավոր են նրա «Հեգելը և նորա ժամանակը», «Երկրագործությունը» և այլ աշխատություններում արծարծած փիլիսոփայական հարցերը, Հեգելի, Ֆոյերբախի և այլոց հայացքների նրա մեկնաբանումները, փիլիսոփայության դերի և նշանակության պարզաբանումները: «Այն փիլիսոփայությունը, որ անմիջապես չի բխում մարդկային կյանքից,—«Երկրագործության» մեջ գրել է Մ. Նալբանդյանը,— և որ չի դադարում դարձյալ մարդկային կյանքի վրա, քանի որ մարդը ապրում է և օդ է շնչում, մենք հրաժարակում ենք նորան իմաստասիրություն և խաբեություն: Մարդն է փիլիսոփայության և՛ հեղինակը, և՛

---

50 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 453:

առարկան... փիլիսոփայությունը երկրագնդի վրա է, մարդն է նորա սիրտը, մարդն է նորա և՛ բնողը, և՛ բնելին: Բայց մարդը, հառաջ քան պիտի գոյանա, հառաջ քան թե գոյանալուց հետո պիտի ապրի, հառաջ, քան թե պիտի բնեն և իմաստասիրեն յուր անձը, յուր կյանքը, յուր անցածը, յուր ներկան, և հառաջ քան թե պիտի մտածեն և հոգաբարձու լինի յուր ապագայի մասին, այս բոլորից առաջ մարդը կարոտ է նյութի»[51]*: Փիլիսոփայության ասպարեզում 1859—1861 թվականներին Մ. Նալբանդյանի կատարած շրջադարձը նոր, լայն հորիզոններ բացեցին նրա առջև, ավելի տեսանելի դարձրին գիտության ու գրականության, արվեստի ու մշակույթի, հրապարակախոսության, լեզվաբանության, պատմության խորքերը, անասելի թափ հաղորդեցին նրա ազգային-քաղաքական գործունեությանը: Մ. Նալբանդյանը հասավ դիալեկտիկական մատերիալիզմին, բայց կանգ առավ պատմական մատերիալիզմի առջև:*

«Նալբանդյանը՝ դա մի խոշոր լույս է հայ իրականության երկնակամարի վրա,— գրել է Ա. Մյասնիկյանը,— սկսած անցյալ դարու կեսից մինչև XX հարյուրամյակը...

Նա հեղափոխական էր իր մտքով ու գործերով, որպես հեղափոխական էլ նա մեռավ... Նա տասնյակ տարիների, երկար ժամանակների միջով ու հարյուրավոր, հազարավոր մեշչանական գլուխների վրայով մեզ է նայում և միանում է արդի մարտնչող բանվորությանը, նրան սատարող ազգաս գյուղացիությանը»[52]*:*

Մեծ է Մ. Նալբանդյանի հմայքը:

«Երբ դիտում ես Նալբանդյանի ապրումներն ու գործերը,— գրել է Ա. Գ. Հովհաննիսյանը,— քո առջևից անցնում է մի կյանք՝ լուսավոր, որպես նրա երգած այն ասողը, որ թռչելով թողնում է հետևից պայծառ գիծ... Բարձրանալով մասնավոր գոյության մակերևույթից՝ նա անցավ մի ամբողջ դարաշրջան, տանելով իր ետևից մասավոր մոլորակների այն հույլը, որոնց լուսատուն էր հանդիսացել նա»[53]*:*

Մ. Նալբանդյանի ուշադրության կենտրոնում մարդն է: Նա

---

51 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 73:*

52 Ա. Մյասնիկյան, *Միքայել Նալբանդյանն ու հայ ինտելիգենցիան: Տե՛ս «Պայքար» (Հավելված «Խորհրդային Հայաստանի»), № 12—13, 1923, Երևան, էջ 1—2:*

53 Աշոտ Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Երևան, 1956, էջ 605:*

գտնում է, որ ազգային հարցի լուծման ընթացքում հարկավոր է ղեկավարվել այն սկզբունքով, թե «մարդը կա, բայց ազգը չկա», այսինքն՝ մարդու պրոբլեմը ավելի մեծ է, քան ազգայինը, հետևապես վերջինս պետք է ենթարկվի առաջինին։ Պատմությունը հար շարժման մեջ ընկալող Մ. Նալբանդյանը մարդու սոցիալական, քաղաքական ազատագրության երկրպագուն էր, ինտերնացիոնալիստ։ Նա, կռիվ հայտարարելով սոցիալական անհավասարության և հարստահարողների դեմ, արիաբար բացականչում էր.

Ներկա օրերում այլ ի՛նչ սև քնար,
Սուր է հարկավոր կտրճի ձեռքին,
Արյուն ու կրակ թշնամու վրա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին 54։

Մ. Նալբանդյանը իր դավանած քաղաքական հայացքներով, ազատագրական պայքարի դաղափարներով, անպարագիծ էրուդիցիայով, հեղափոխական ավյունով, սեգ արծվի պես բացեց թևերը, ճախրեց հայկական երկնակամարում, հարազատորեն արտահայտեց ժողովրդի խոհերն ու զգացմունքները, հայ հասարակական զարգացմանը հաղորդեց նոր բովանդակություն։ Հենց դրանով էլ պայմանավորված է XIX դարի 60-ական թվականների հայ դեմոկրատական մտքի սոցիալ-քաղաքական շրջադարձը։

---

54 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. I, էջ 97։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

1. Հայ նարոդնիկները 1870—1880-ական թվականներին: 2. Ազգային կուսակցությունների առաջացումը և նրանց քաղաքական ծրագրերը: 3. Սոցիալիստներ: 4. Մարքսիստական գրականության հայերեն թարգմանության նախափորձերը: 5. Սովորող հայ երիտասարդությունը հասարակական զարգացման ուղիներում: 6. «Լեգալ մարքսիզմը» հայ մամուլում:

1

Միքայել Նալբանդյանն իր գործունեությամբ հասարակական-քաղաքական առաջավոր միտքը անցյալ դարի 60-ական թվականներին հասցրեց պատմական նոր բնագծերի: Հայ իրականության մեջ մինչև մարքսիզմի հանդես գալը ոչ մեկը Մ. Նալբանդյանի հեղափոխական ուղեգիծը չի ունեցել և նրա պես հանդուն «մինչ ի մահ» չի շեփորել հայ դեմոկրատիայի հեղափոխական զարթոնքի ճշմարիտ ուղին: Այսուհանդերձ, ո՛չ Մ. Նալբանդյանը, ո՛չ նրա զաղափարակիցներից որևէ մեկը, ոչ է՛լ նրանց անմիջական հաջորդները հայ հասարակական-քաղաքական միտքը չհասցրին մարքսիստական բարձրակետին: Երկար ժամանակ, մինչև 1890-ական թվականները այն որոնումների մեջ էր: Հասարակական զարգացման խաչուղիներում բախվում էին քաղաքական տարբեր հոսանքներ, այդ թվում նարոդնիկական, լիբերալ-բուրժուական, պահպանողական և կղերա-աղայական:

1870—1880-ական թվականների արևելահայ դեմոկրատական հոսանքի առաջատարները նարոդնիկներն էին, առաջավոր

մասավորականությունը, հատկապես սովորող երիտասարդությունը: Նարոդնիկությունը, որ իբրև ինքնուրույն հասարակական հոսանք, Ռուսաստանում ձևավորվել է XIX դարի 60-ական թվականներին տարաստիճան (ապնոչին) ինտելիգենցիայի շրջանում և հասարակական-քաղաքական ուժ դարձել 70—80-ական թվականներին, նռուֆորմյան շրջանի հեղափոխական շարժումների ծնունդն է: Հեղափոխական նարոդնիկությունը հասարակական լայն շարժում էր՝ տարբեր հոսանքներով ու երանգներով, որն իր քաղաքական թևերը տարածել էր Ռուսաստանում և նրա ծայրամասերում: Հատկապես աչքի էր ընկնում «Դեպի ժողովուրդը» (գյուղացիները) շարժումը, որը ծավալվեց 70-ական թվականներին: Լինելով գյուղացիական դեմոկրատիայի, գյուղացիական «հեղափոխության» գաղափարախոսները, նարոդնիկները ծրագրային առաջադիր խնդիր ունեին. «...ոտքի հանել գյուղացիությունը սոցիալիստական հեղափոխություն անելու համար՝ ընդդեմ ժամանակակից հասարակության հիմքերի»[1],— գրել է Վ. Ի. Լենինը իր «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները...» աշխատության մեջ: Նարոդնիկությունը, նռուֆորմյան շրջանում, թեև խթանեց հասարակական առաջընթացին, բայց չհասկացավ Ռուսաստանի բուն առանձնահատկությունները: Կապիտալիզմը Ռուսաստանում այն համարում էր «պատահական երևույթ», ժխտում (չէր գիտակցում) բանվոր դասակարգի հեղափոխական դերը, գերագնահատում գյուղացիական համայնքի նշանակությունը, իբրև երկրում սոցիալիստական զարգացման աղբյուր, անսասան հավատ տածում գյուղացու «կոմունիստական բնազդների» նկատմամբ: Իր սխալներով ու տատանումներով հանդերձ, նարոդնիկությունը որոշակի դեր խաղաց Ռուսաստանի հեղափոխական այն շարժումների մեջ, որոնք նպատակամղված էին ռազմա-ֆեոդալական կարգերի ու դրան ոտաստարկող ցարական ինքնակալության դեմ: Վ. Ի. Լենինը, տակավին 1912 թվականին, իր «Երկու ուտոպիա» հոդվածում գրել է, որ անցյալ դարի 80-ական թվականների մարքսիստական գրականության մեջ կարելի է գտնել սխեմատիկորեն կիրառված ձգտում զանազանելու դեմոկրատական արժեքավոր միջուկը և, որ երբեմն պատմաբանները սխեմատիկորեն կուսումնասիրեն նարոդնիկության՝ «դեպի ժողովուրդը» շարժման ձգտումը և հե-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 331—332։

տամուտ կլինեն նրա գլխին այն բանի հետ, ի՛նչը XX դարի առաջին տասնամյակում ստացավ «բոլշևիզմ» անունը[2]։

Այժմ այդ կապը տեսանելի է։ Հեղափոխական նարոդնիկության շարժումները Ռուսաստանում ուղի հարթեցին հասարակական զարգացման համար։

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 455։ Նարոդնիկության մասին բացի Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի, Գ. Վ. Պլեխանովի աշխատություններից հրատարակված են շատ մենագրություններ, գրքեր, վավերագրերի ժողովածուներ, այդ թվում՝ **О. Аптекман**, Две дорогие тени из воспоминаний о Г. В. Плеханова и М. А. Натансоне как семидесятниках. «Былое», 1921, № 16. **его же**, Из истории революционного народничества «Земля и воля» 70-х годов (По личным воспоминаниям), изд. Сурат, 1906, **его же**, Общество «Земля и воля» 70-х годов. Пг., 1924, **его же**, Флеровский-Берви в Чайковцы — «Былое», 1922, № 19, «Процесс 193-х», М., 1906, «Революционное народничество 70-х годов XIX века», Сборник документов, т. I (1870—1875 гг.), М, 1904, **Э. Виленская**, Революционное подполье в России (60-е годы XIX в.), М., 1965, **Б. Итенберг**, Первый Интернационал и революционная Россия, М., 1964, **его же**, Движение революционного народничества, М, 1965, **Ф. Кон**, История революционного движения в России, т. 1, Харьков, 1929, **С. Кунский**, Русское общество и Пражская коммуна, М, 1962, «Деятели революционного движения в России Био-библиографический словарь, т. I, ч I, и II, т. 2, ч. I—IV, М., 1929. **Г. И. Мегрелишвили**, Грузинская общественно-экономическая мысль второй половины XIX века и начала XX века, т. I и II, Тбилиси, 1960 и 1961, **В. Ю. Самедов**, Распространение марксизма-ленинизма в Азербайджане, Баку, 1962, «История классовой борьбы в Закавказье», сб. статей, книга первая, Документы. **А. Санин**, «Самарский вестник» в руках марксистов (1896—1897), журнал «Пролетарская революция» 1924, № 12 (35), էջ 248—282, **С. Лившиц**, Подпольные типографии 60-х, 70-х и 80-х годов. Журнал «Каторга и ссылка», 1929, № 1 (50), **Ш. Левин**, Общественное движение в России в 60—70-е годы XIX в., Соцэкгиз, М., 1958, **Г. Гулбани**, Деятельность русских социал-демократов в Грузии (1890—1904). Автореферат диссертации, изд. Тбилисского государственного ун-та, 1959, **А. М. Егиазарян**, Социально-экономическое развитие Закавказья и эволюция армянского народничества. Автореферат диссертации, представленной на соискание ученой степени канд. эконом. наук. Ереван, 1959. **Р. Казакевич**, Социал-демократические организации Петербурга конца 80-х начала 90-х годов (кружки П. В. Точиского и М. И. Бурсиева). Ленинград, 1960, **А. Реуэль**, Русская экономическая мысль 60—70-х годов XIX в. и марксизм, М, 1956, **М. Сажин**, Русские в Цюрихе, журнал «Каторга и ссылка», 1932, М., **Г. Хачапуридзе**, Проникновение марксизма в Грузию. «Исторический журнал», 1941, № 6, էջ 1—9, **Л. Дейч**, Русская революционная эмиграция 70-х г. Петербург, 1920, **Г. Туманов**, Характеристика и воспоминание. Тифлис, 1913, **П. Тка-**

Անդրկովկասը, հանդիսանալով ցարական կայսրության մի մասը, ապրում էր գրեթե նույն սոցիալ-քաղաքական կյանքով։ Ռուսաստանում հասարակական զարգացման գլխավոր բովանդակությունը որոշում էր բուրժուա-դեմոկրատական հեղափոխության, ագրարային հարցի լուծման համար տարվող պայքարը, առաջադիմության բախտը վճռում էր ագրարային հարցը։ Երկրամասի տարաստիճան ինտելիգենցիայի ներկայացուցիչները, ռուս ժողովրդի զավակների հետ գործելով նարոդնիկական միևնույն խմբակներում, պայքարում էին միատեսակ խնդիրների համար։ Բայց, ի տարբերություն Ռուսաստանից, որի քաղաքական կյանքի առանցքը ագրարային հարցն էր, Անդրկովկասի նարոդնիկական խմբակներին մտահոգում էր նաև ազգային հարցը, ազգային-ազատագրական շարժումների ճակատագիրը։ Ուստի, նրանց 1870—1880 թվականների գործունեության մեջ, համընդհանուր քաղաքական պայքարի հետ միասին, զգալի տեղ էր գրավում ազգային հարցը, ազգային-ազատագրական շարժումների ղեկավարումը։

Իր ձևավորման առաջին իսկ օրերից Անդրկովկասի նարոդնիկական խմբակներում (ավելի ճիշտ անդրկովկասցի նարոդնիկների՝ տարաստիճան ինտելիգենցիայի մոտ) որոշակիորեն նկատվում էր երկու ուղղություն։ Նրանցից մեկը, ինչպես իրավացիորեն նշել է Մ. Ներսիսյանը, «...առաջ քաշելով միայն ազգային հարցը նեղ առումով և այն չկապակցելով դեմոկրատական հեղափոխության ընդհանուր հարցերի հետ, իրեն հեռու էր պահում ընդհանուր, համառուսական հեղափոխական շարժումներից և աշխատում էր վարել բացառապես մեկուսացած ազգային-ազատագրական պայքար»[3]։ Սեպարատիստական դիրքերի վրա գտնվող այդ ուղղության (թևի) կողմնակիցները (Գեորգի Մերեթելի, Ալեքսանդր Սարաջև, Ալիբեկյան և ուրիշներ) կարծում էին մեկուսա-

---

ченко, Революционная народническая организация «Земля и воля», М., 1961. А. Трафимов, Рабочее движение в России 1861—1894, М., 1957. Я. Ярославский, Разгром народничества, М., 1937. Գ. Վարաչյան, *Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918*, նույնի, *Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927*, Լեո, *Թուրքահայ հեղափոխության զարգացումը, հատ. Ա., 1934*, Մ. Ներսիսյան, *Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1940* և այլն։

3 Մ. Ներսիսյան, *Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1940, էջ 14։*

ցած ձևով, առանց համառուսական հեղափոխական շարժումների, հնարավոր է կովկասյան բազմագգ ժողովուրդներին ազատագրել ցարիզմի ճիրաններից և ստեղծել ազգային-պետական միավորումներ կամ էլ Կովկասյան մեկ միասնական պետություն՝ «Կովկասյան ֆեդերացիա»։

Դա սխալ ուղեղիծ էր, որ վարում էին նրանք։

Տարաստիճան ինտելիգենցիայի մյուս ուղղության կողմնակիցները (Մ. Նալբանդյան, Նիկոլայ, Օլգա, Եկատերինա Նիկոլաձներ, Մեսխի, Ն. Գոգոբերիձե, Ի. Ջաբադարի, Ս. Ղարդաշյան, Գ. Զդանովիչ, Դ. Այվազյան և ուրիշներ) կանգնած լինելով համառուսական միասնական պայքարի ճիշտ ուղու վրա, Անդրկովկասի ժողովուրդների ազատագրությունը կապում էին ռուսական հեղափոխական շարժումների, ռուս մեծ ժողովրդի պայքարի հետ, գաղափարական ուժ ստանալով ռուս նարոդնիկությունից, հատկապես Ա. Գերցենի ու Ն. Չերնիշևսկու աշխատություններից։ Նրանցից շատերը ոչ միայն անձնական կապերի մեջ էին ռուս հեղափոխական դեմոկրատների, Մոսկվայի, Պետերբուրգի, Ցյուրիխի, Ժնևի և այլ քաղաքների նարոդնիկական խմբակների հետ, այլև ակտիվորեն գործում էին այդ խմբակներում, աշխատակցում «Կոլոկոլ»-ին և նարոդնիկական այլ օրգաններին։ «Կոլոկոլ»-ում Ն. Նիկոլաձեի հոդվածները արձագանքում էին հեղափոխական-դեմոկրատների հայացքներին։ Այսպես, «Կոլոկոլ»-ի 1862 թվականի հոկտեմբերյան համարում հրապարակած իր մի հոդվածում Նիկոլաձեն գրել է. «Կասկած չկա, որ ժամանակին Վրաստանը անջատվելու է Ռուսաստանից, սակայն այդ անջատումը կարող է տեղի ունենալ միայն պատմականորեն, այսինքն՝ երբ կայսրությունը մասնատվելու լինի առանձին ինքնուրույն, զուտ և ֆեդերատիվ պետությունների։ Վրաստանի համար այդ կլիներ անկասկած մի մեծ բարիք, բայց դա օգուտ կլիներ նաև Ռուսաստանին՝ վերջինիս արևելյան հարաբերությունների տեսակետից։ Իրենց ինքնուրույն լինելու ցանկության մասին անդրկովկասյան երկրամասերը վաղուց են հայտնել Ռուսաստանին՝ տարբեր ժամանակներում՝ Կախեթում, Իմերեթում և Թիֆլիսում տեղի ունեցած երեք ապստամբության միջոցով։ Այդ ապստամբությունները չընդհանրացան և հաջողություն չունեցան այն պատճառով, որովհետև չկար մեկը, որ ղեկավարեր դրանք, մեկը, որ վայելեր հարկ եղած վստահությունը։ Անհաջողության պատճառ էր նաև Վրաստանի և Հայաստանի, միևնույն օրրանի այդ եղբայրների, ան-

համաձայնությունը, որ այնպիսի ուժով հրահրում են ռուսները, որը լիակատար մի դժբախտություն է ամբողջ Անդրկովկասի համար»[4]:

Դժվար չէ նկատել, որ ազգերի ինքնորոշման իրավունքի գաղափարը պարունակող վերոհիշյալ մտքերը անդրադարձնում են ռուս հեղափոխական-դեմոկրատների ազգային հարցի մասին ունեցած հայացքները:

Մ. Նալբանդյանը սերտորեն կապված էր «Լոնդոնի պրոպագանդիստների» հետ: Ժամանակակիցների վկայությամբ, Ն. Նիկոլաձեն, Գ. Ծերեթելին, Ն. Գոգոբերիձեն և շատ ուրիշներ հաճախ են արժանացել Ն. Չերնիշևսկու «սիրալիր ու գրկաբաց վերաբերմունքին», խորհրդակցել նրա հետ, իսկ քա՜նի-քա՜նի կովկասցի ուսանողներ են եղել «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության», «Զեմլյա ի վոլյա», «Կովկասցիներ» (Պետերբուրգ, 1873—1875 թթ.), «Յարմո» (Ցյուրիխ, 1872 թ.) և այլ նարոդնիկական խմբակներում, «դեպի ժողովուրդը» շարժման շարքերում, մեղադրվել «50»-ի, «173»-ի և այլ նշանավոր պրոցեսներով...

Գանձակեցի Ստեփան Ղարդաշյանը (1852—1918), որը դատվել է «50-ի պրոցեսով», ղեկավար դեր է խաղացել Սոֆիա Բարդինայի գլխավորած Մոսկվայի «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» աշխատանքներում:

1864—1871 թթ. նա սովորել է Թիֆլիսում: Դպրոցն ավարտելուց հետո երեք տարի աշխատել է Թիֆլիսում և ապա մեկնել արտասահման ու սովորել Դրեզդենի պոլիտեխնիկական ինստիտուտում: Այստեղ էլ նա մերձենում է ռուս քաղաքական վտարանդիներին, նամակագրական կապ հաստատում Ռուսաստանի հեղափոխական գործիչների հետ, ակտիվ մասնակցություն ունենում կովկասյան ուսանողների 1874 թ. ժնևյան համագումարին, մտնում «Կովկասյան խմբակի» («Кавказский кружок») շարքերը, որը ղեկավարում էր Պետերբուրգի բժշկական ակադեմիայի նախկին ուսանող Ի. Ս. Զարադարին: 1874 թվականին խմբակը միավորվում է արտասահմանում սովորող Ռուսաստանից եկած ուսանողների՝ «Ֆրիչի» խմբակի հետ: Նախապատրաստական որոշ աշխատանքից հետո, 1875 թվականին, նրանք վերադառնում են

---

4 «Колокол», № 147, от 15 октября 1862.

Ռուսաստան։ Ս. Ղարդաշյանը, Կնյազ Կաշակիձե ծածկանվամբ իր ընկերների հետ միասին հեղափոխական աշխատանք է ծավալում Մոսկվայում, Պետերբուրգում, կապ է հաստատում Տուլայի, Օդեսայի, Կիևի, Սարատովի և այլ վայրերի հեղափոխականների հետ, գործուն աջակցություն ցույց տալիս արտասահմանից գրականություն և զենք առաքելու և տարածելու գործին։

Ս. Ղարդաշյանի, Ս. Բարդինայի, Ի. Ջաբադարիի, Դ. Զդանովիչի, Ե. Բումանյանի և այլոց օգնությամբ Վրաստանում հիմնվում է նարոդնիկական խմբակ։ 1875 թվականի օգոստոսի 12-ին Մոսկվայում ձերբակալվում է Ս. Ղարդաշյանը։ Մոսկվայի բանտից տեղափոխելով նրան նետում են Պետրոպավլովյան ամրոցի զնդանները։ Դատվելով «50-ի պրոցեսով», երկու տարի խարկովի կենտրոնական բանտում պահելուց հետո նրան աքսորում են Արևելյան Սիբիր։ Քսանութ տարի բանտերում և աքսորում անցկացնելուց հետո, 1904 թվականին առողջությունը գրեթե կորցրած ազատվում է աքսորից, վերադառնում Կովկաս՝ Մուղանի տափաստանում աշխատելու իբրև երկաթուղային ինժեներ[5]։

1872—1873 թվականներին ժնևում, Ցյուրիխում և հետո Փարիզում ռուս վտարանդիների նարոդնիկական խմբակներին ակտիվ մասնակցություն է ունեցել Եկատերինա Բորիսովնա Բումանովան (1855—1929)։ Շվեյցարիայում նա Սոֆիա Բարդինայի, Վերա և Օլգա Սուրբուտինաների և այլոց հետ միասին եղել է

---

[5] См. «Каторга и ссылка», М., 1927, էջ 9; «Огонек», 1963, № 29, ЦГАОР СССР, ф. 112, оп. 1, д. 9142, л. 142—165. ф. 109, 3 экспед., ф.144, д. 144, ч. 124, том 2; ф. 112, оп. 2, д. 230. Газета «Правительственный вестник», № 39/43, 45—58; 60, 62, 64, 66, 1877; «Процесс 50-и», Сборник, 1906. «Деятели революционного движения в России». Био-библиографический словарь, том II, вып. III, М. 1933, стр. 931, 983, **В. Аветисян,** Об армяно-украинских связях в революционном движении конца XIX—начала XX века, см. Сб. «Исторические связи и дружба украинского и армянского народов». Ереван, 1961, стр. 140—153. *«Բանբեր Հայաստանի արխիվների», № 3, 1966, «50-ի պրոցեսը» ժամանակին լայն արձագանք է գտել մամուլում։ Մարկ Տվենը անգլիական մի պարբերականում գրել է.* «Какое величие души, я думаю, что только жестокий русский деспотизм мог породить таких людей. По доброй воле пойти на жизнь полную мучений, и в конце концов на смерть только ради блага **других** — такого мученичества, я думаю не знала ни одна страна, кроме России». (См. «Огонек», № 29, 1963)

«ցյուրիխյան կոմունա»-յի կազմում, 1875 թվականին վերադառնալով Ռուսաստան, Պետերբուրգում, Իվանովո-Վոզնեսենսկում և Ռուսաստանի արդյունաբերական այլ կենտրոններում Եկատերինա Պետրովնա ծածկանվամբ քաղաքական աշխատանք է ծավալում, 1876 թվականի հոկտեմբերին ձերբակալվում և 1877 թվականի փետրվարին «50-ի պրոցեսով» դատապարտվում է: Աքսորից փախչելով արտասահման, 1886 թվականին ցարական իշխանության օրգանների թույլտվությամբ վերադառնում է Ռուսաստան:

1891 թվականին նա նորից է մեկնում արտասահման, իսկ հետագայում վերադառնում իր ծննդավայրը՝ Թեոդոսիա:

Նարոդնիկական շարժումներին ակտիվ մասնակցություն է ունեցել և «50-ի պրոցեսով» մեղադրվել Եկատերինա Թումանովայի քույրը՝ Հռիփսիմե Բորիսովնա Թումանովան, որը մասնակցել է Խարկովի նահանգի Նովո-Բելգորոդյան բանտից Պյոտր Ալեքսեևի, Ստեփան Ղարդաշյանի և այլոց փախուստը նախապատրաստելուն: Մոսկվայի, Պետերբուրգի, Ցյուրիխի, Կիևի, Օդեսայի նարոդնիկական խմբակներում հայերից աչքի են ընկել Դավիթ Այվազյանը, Օլգա Սաֆարյանը, Կոստանդին Մամիկոնյանը, Մելքոն Մուրզայանը, Ալեքսանդր Փիրումյանը, Արշակ Սաֆարյանը, Գրիգոր Արազյանը, Թամարա Ադամյան-Ներսիսյանը, Հովհաննես Մանուչարյանը և շատ ուրիշներ: Ժանդարմական զեկուցագրերից մեկում նշված է, թե մինչև Կովկասում կապիտալիզմը չզարգացավ, արդյունաբերական և ֆաբրիկա-գործարանային կյանքը չաշխուժացավ, Կովկասի ինտելիգենցիան ռուսական համալսարաններում նարոդնիկության ոգով չդաստիարակվեց, երկրամասում հեղափոխական շարժումներ չկային: 80-ական թվականներին կային «Նարոդնայա վոլյա»-ի առանձին արտաքսված ներկայացուցիչներ: Ինտելիգենցիան Ռուսաստանում դաստիարակվելով Պիսարևի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու և նարոդնիկ-բելետրիստների ազդեցությամբ, կուլտուրտուրեգերի դեր էր խաղում, երազելով Վրաստանը և Կովկասը ազատագրել Ռուսաստանի տիրապետությունից: Այդպես շարունակվեց երկար, մինչև հներին փոխարինեցին նորերը: 90-ական թվականներին կովկասյան երիտասարդությունը հայրենիք էր վերադառնում նոր, մարքսիզմի դրոշով: Հենց այդ ժամանակից էլ Կովկասի հասարակական կառուցվածքը ուժեղ չափով փոխվում է, հարուստ հող և լայն հնա-

բավորություններ են ստեղծվում մարքսիստների՝ սոցիալ-դեմոկրատների գործունեության համար[6]։

Ինչ խոսք, որ այս բնութագրության ոչ բոլոր դատողություններն են ճիշտ։ Բայց ընդհանուր առմամբ ճշմարտության հատիկը ուժեղ է։

Ռուս հեղափոխական նարոդնիկական շարժման ազդեցությամբ է 1881 թվականին ձևավորվել և մի քանի տարի անխափան գործել Մոսկվայի հայ ուսանողների ընդհատակյա խմբակը՝ «Հայրենասերների միությունը»։ Նարոդնիկական գաղափարների խոր ազդեցությունը կրող այդ խմբակի մեջ էին Ներսես Աբելյանը, Թամարա Ադամյանը, Դավիթ Ներսիսյանը, Միքայել Զալյանը, Սիմեոն և Սրապիոն Տեր-Գրիգորյանները և ուրիշներ։ «Միությունը» ստեղծել էր իր ընդհատակյա տպարանը, անլեգալ ձևով հրատարակում էր «Ազատության ավետարեր» թերթը, հեղափոխական կոչեր և թռուցիկներ։ «Հայրենասերների միությունը» իր գլխավոր խնդիրը համարում էր պայքարի միջոցով Հայաստանի ազատության և անկախության նվաճումը։ Միության քաղաքական ուղղությունը պարզորեն երևում է նրա հրատարակություններից։ «Հայրենասերների միության» «պատգամներից մեկն է ազգերի համերաշխությունը,— ասված է «Ազատության ավետարեր»-ում,— ուստի մենք քարոզում ենք սերտ համերաշխություն Հայաստանում բնակվող ազգերի մեջ... Մենք հավասարաչափ հարգում ենք յուրաքանչյուր ազգի լեզուն, կրոնը և անկախությունը, եթե միայն նա չի ձգտում հարստահարել ուրիշներին, արգելք չի դառնում ուրիշների կանոնավոր զարգացման... Ուստի «Հ. Մ.»-ն աշխատելու է, որ երկիրը, հողը իր բնական հարստություններով և աշխատանքի գործիքները դառնան աշխատավորների, բանվորների սեփականությունը։ Եթե Հայաստանի աշխատող, արդյունաբերող ուժերը՝ երկրագործը, արհեստավորը, մշակը տնտեսապես հարստահարվելու են,— «Հ. Մ.»-ի աչքում ոչ մի քաղաքական ազատություն, միտք և նշանակություն չունի։ «Հ. Մ.»-ին ատելի են թե՛ քուրդ ասպատակող շեյխը, թե՛ թուրք

---

6 См. «Каторга и ссылка», Историко-революционный сборник. Тифлис, 1925, № 1 (3), էջ 103—104. Անդրկովկասի հայ նարոդնիկների մասին տես նաև ЦГИА Москва, ДП—V, 1882, д. 2626, ч. 6. ДП—III, 1883, д. 294, д. 688, Б. Федоров, Иван Окладский в Тифлисе «Былое», XXV (1924), էջ 95—96. «Деятели революционного движения в России», Био-библиографический словарь, т. т. I, II, III, IV, V, вып. 1 и 2, Москва.

ճնշող պաշտոնյան և թե՛ հայ հարստահարողները։ Մենք թշնամի ենք ներկա անձնական, բաժան-բաժան կազմակերպության, որտեղ ակարն անօգնական է, իսկ ուժեղը՝ հարստահարող և անգութ։ Մենք քարոզում ենք ընկերական միաբանություն, որտեղ ընդհանուրը հոգում է յուրաքանչյուրի համար, իսկ յուրաքանչյուրը՝ ընդհանուրի համար։ Ահա թե ինչու բոլոր մասնավոր կալվածատերերի և պետության ձեռքի հողերը պետք է անցնեն համայնքների ձեռքը, համայնքը միակ սեփականատերն է, միակ սպառողն է, որովհետև նա միակ աշխատող, արդյունաբերողն է։ Միևնույն ժամանակ համայնքները ներկայացնում են այն սկզբնական քաղաքական տարրերը, որոնցից պետք է կազմվի ընդհանուր քաղաքական դաշնակցություն, ֆեդերացիա»[7]։ Վերը բերած ծավալուն քաղվածքը տարակույս չի հարուցում «Հայրենասերների միության» նարոդնիկական ուղղության մասին։ Գյուղական համայնքի վերաբերյալ նրանց ծրագիրը լիովին ընդօրինակված էր ռուս նարոդնիկներից։ «Հայրենասերների միության»-ը մտահոգում էր նաև ազգային հարցը՝ հայկական խնդրի լուծումը։ Միության 1883 թվականին հրատարակած կոչերից մեկը, որ սկսվում էր.

«Պիտի գոռամ, պիտի կրկնեմ,

Անդադար ազատություն»,— բնաբանով, նվիրված էր արևմտահայության ազատագրությանը։ Այն ժամանակին տարածվել է Անդրկովկասում, հատկապես Երևանում, Բաքվում, Թիֆլիսում և այլուր[8]։ Ինչպես այդ, այնպես էլ տպագրված մյուս նյութերում

---

7 Քաղվածքը բերված է ըստ Մ. Ներսիսյանի «Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում» աշխատության, Երևան, 1940, էջ 22—23։ «Հայրենասերների միության» մասին տե՛ս նաև Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 49/113, գ. 552, Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, էջ 259—263, Ա. Արշարունի, Մոսկվայի համալսարանն ու առաջավոր հայ ինտելիգենցիան, Երևան, 1955, էջ 158—161; Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 237—238, 279—281։

8 Կոչի հայերեն հրատարակված օրինակներից մեկը պահվում է ՍՍՀՄ Մոսկվայի պետական կենտրոնական պատմական արխիվում (ЦГИАМДП, III, 1883, д. 172, л. 114)։ Մի այլ օրինակը Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ (ֆ. 113, ցուց. 1, գ. 552, թ. 1—23)։ Կոչի լրիվ տեքստը վերահրատարակվել է Վ. Պարսամյանի «Հայ ազատագրական շարժումների պատմությունից» աշխատության մեջ (էջ 260—263)։ «Հայրենասերների միությունը» կապ էր հաստատել դաղափարական նույնանման խմբակների և անձանց, այդ թվում՝ Երևանում կազմակերպված

«Հայրենասերների միությունը» մերկացնում էր թուրքական կառավարության հայատյաց, ռեակցիոն քաղաքականությունը, հայ ժողովրդին կոչ անում՝ տապալել սուլթանական դաժան տիրապետությունը, «ապրել ազատասեր ժողովրդին վայել ինքնուրույն կյանքով»[9]: «Մենք ցանկանում ենք Հայաստանի ժողովուրդին ազատված տեսնել բարբարոսների լծից,— ասված է Միության «Հայեր» խորագրով թռուցիկում,— ...Հայաստանի ժողովուրդը իրավունքներ ձեռք բերելու և բարբարոսների լծից ազատվելու համար ունի միայն մի միջոց, այն է՝ արյունով գնել ազատությունը և ցույց տալ քաղաքակրթված աշխարհին, որ հայաստանցին ըմբռնել է ազատության գաղափարը և ընդունակ է այդ գաղափարին զոհել իր ունեցածի ամենաքաղցրը, ամենաագնիվը՝ իր սիրելի որդիների կյանքը»[10]: «Հայրենասերների միությունը» հայերին, առաջին հերթին երիտասարդությանը, մղում էր դեպի գլխավոր նպատակը՝ հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատության նվաճումը: Նա երիտասարդությանը կոչ էր անում «մտնել ժողովրդի մեջ, հայաստանցուն հասկացնել նրա իրավունքները, ցույց տալ անարդարության դեմ կռվելու եղանակներն ու միջոցները «այդ վսեմ գաղափարը իրագործելու ժամանակը, օգնել նրան ամենայն կերպով և անձնվիրաբար»[11]: Միությունը պարզաբանում էր, որ հայրենիքի փրկությունը երիտասարդության ջանքերով պետք է լինի, ազատության դրոշի բարձրացումը նրանց է վստահված: «Հայրենասերների միության» թելերը Մոսկվայից ձգվում էին երկար, հասնում Անդրկովկաս և ապա՝ Արևմտյան Հայաստան: «Ազատության ավետարեր»-ի չորրորդ համարի «Սարսափահար միջոցների (տեռորի) դերը մեր հեղափոխական գործունեության մեջ Տաճկահայաստանում», «Մի բացատրություն» և այլ հոդվածներում բացի Միության նարոդնիկական հայացքների շարադրանքից (համայնքի, անհատական տեռորի և այլն),

---

«Հայասեր-ազգասեր» կազմակերպության հետ։ 1881 թվականի վերջին Երևանում հիմնված հրատարակչական դաշտնի ընկերությունը, մեկ տարի անց, 1882 թվականի նոյեմբերին ձուլվեց «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» Երևանի բաժանմունքին, որի տակ էլ դարձավ «Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը (տե՛ս Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 115 գ., ցուց. 2, գ. 12, թթ. 1—23, Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, էջ 238)։

9 Տե՛ս «Ազատության ավետարեր», № 4, փետրվար, 1884։

10 См. ЦГИАМ ДП—3, 1883, д. 172, лл. 1—4.

11 Նույն տեղում։

պարզաբանված են նաև հայ ազգային-ազատագրական շարժման հետ կապված հարցերը։ Հայ իրականության մեջ վերջացավ ինքնաճանաչման շրջանը, գրել է Թերթը, և սկսվել է իրական, գործնական խնդիրների լուծման, թուրքական լծից ազատագրման համար մղվող պայքարի փուլը։ Հայաստանում կատարվող իրադարձությունները, ճիշտ կերպով նկատել է «Ազատության ավետարեր»-ը, իրենց խոր կնիքն են դնում հայ հասարակական մտքի վրա, աշխատավոր զանգվածներին արթնացնում, և նրանց մեջ բորբոքում հայրենասիրական տրամադրություններ, մղում ազատամարտական պայքարի։ Հայ ժողովրդի կյանքում առաջացած այդ նոր իրադրությունների ծնունդն էր «Հայրենասերների միությունը», որը ջանում էր լինել ոչ միայն խոսքի, այլև գործի կազմակերպություն։ Սերտ շփման մեջ լինելով ռուս նարոդնիկների հետ, «Հ. Մ.» անդամները իրենց ազատաբաղձությամբ ոգեշնչում էին աշխատավորներին, սովորեցնում դասեր քաղել առաջավոր ժողովուրդների հեղափոխական փորձից, անձնվիրաբար ծառայել ազատության վսեմ գործին։ «Հայաստանը կանգնած է հեղափոխության շեմքին,— գրել է Թերթը,— այդ հեղափոխությունից հեռու մնալ մենք չենք կարող, որովհետև իրերի դրությունը նրան պատմական պահանջ է դարձրել։ Մեզ մնում է միայն կազմակերպել նրան և տալ նպատակահարմար ուղղություն»։ Հարկավոր է հայ ժողովրդին արթնացնել դարավոր թմրությունից։ Իսկ դա միայն լուսավորության միջոցով չէ, որ պետք է կատարվեր, այլ հեղափոխական խմբակների, ազատագրական պրոպագանդայի, ժողովրդի միասնության, որին և նվիրել էր իր գործունեությունը «Հայրենասերների միությունը»։ «Ազատության ավետարեր»-ի չորրորդ համարի նյութերից էին «Ազգային երդում» և «Օրահաս» բանաստեղծությունները*, որոնք նույնպես տոգորված էին Հայաստանի ազատագրության գաղափարներով։ «Ազգային երդման» մեջ նկարագրելով հայ քաղաքական կյանքում նկատվող խմորումները, հայ մարտիկի բերանով հեղինակը բացականչում է.

Ահա իմ սուրը, որ ձեռքիս ցոլաց,
Էլ նա չեմ դնիլ վերստին պատյան,
Մինչև չդաղարի հայի սուգ ու լաց,
Մինչև չազատվի ստրուկ Հայաստան...

---

* Անստորագիր են։ Հեղինակը Ռ. Պատկանյանն է։ Տե՛ս Ռ. Պատկանյան, Երկեր, հ. 1, էջ 176—179, 309 (Ազգային երդում, և Երկունք Հայաստանի)։ Տե՛ս նաև «Արմենիա», № 22, 1888, «Տաճկահայերի օրահաս»-ը։

իսկ «Օրահաս»-ում ասված էր.

Երկունքի մեջ է Հայաստան աշխարհը,
Մեզ պիտի շնորհէ մի նոր գոյություն,
Փափագով սպասած ամենքիս շատ դար
Հայոց աշխարհի սուրբ ազատություն...

Երկունքի մեջ է մայր Հայաստանը,— ասում էին «Հ.Մ.» անդամները։ Եվ այդ երկունքի ցավերի մեղմացմանն էլ նվիրաբերում են իրենց ուժերն ու կարողությունները։

Երկրամասում տարբեր ժամանակ գործել են Ռուսաստանից արտաքսված (կամ իրենց կամքով եկած) բազմաթիվ նարոդնիկներ, այդ թվում՝ ծովային սպա Ա. Գլասկոն, որը մերձավոր կապերի մեջ էր «Նարոդնայա վոլյա»-ի, մասնավորապես Ա. Ժելյաբովի և Վ. Ֆիգների հետ, լեյտենանտ Ս. Կոլեշը, Ա. Զախարյաշը (Պոդլյասկայա), Ն. և Ս. Հոֆենգաուզենները (Гофенгаузен), (Ս. Հոֆենգաուզ-Խոմենկովան ծանոթ է եղել Վ. Ի. Լենինի ավագ եղբոր՝ Ա. Ի. Ուլյանովի հետ), Օ. Ապտեկմանը, Մ. Նաթանսոնը, Ն. Ֆլերովը և շատ ուրիշներ [12]։

Բացի հեղափոխական գաղափարների տարածումից, նրանք ակտիվ աջակցություն են ցույց տվել Անդրկովկասում նարոդնիկական խմբակների ստեղծմանը։

Տարատեսակ առաջադիմական ինտելիգենցիայի ջանքերով, նարոդնիկական գաղափարները տարածվում են Անդրկովկասում և ձևավորվում են նարոդնիկական խմբակներ։ Անդրկովկասում նարոդնիկական առաջին կազմակերպությունը հիմնվել է 1875 թվականին Թիֆլիսում և Քութայիսում (երկու խմբակ), որն ուներ ինտերնացիոնալ կազմ։ Հայերից նարոդնիկական այդ անդրանիկ կազմակերպության մեջ էին Արշակ Սաֆարյանը (սովորել է Թիֆլիսի ռեալական դպրոցում), Օլգա Սաֆարյանը (սովորել է մասնավոր պանսիոնում), Վասիլատ Սաֆարյանը (սովորել է Թիֆլիսի կանանց գիմնազիայում), Ալեքսանդր Վերմիշյանը (Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող), Ալեքսանդր

---

[12] См. Е. Серебряков, Революционеры во флоте. Из воспоминаний. Петроград, 1919, Деятели революционного движения в России. Био-библиографический словарь, том III, вып. I, էջ 90—91, «Александр Ильич Ульянов и дело 1 марта 1887 г.», М.—Л., 1927, стр. 279—282. О. Аптекман, Партия «Народного права», журнал «Былое», 1907, № 7 (19), էջ 198—199 и др.

Եվանգուլյանը (Պետերբուրգի ուսանող) և ուրիշներ։ «Դեպի ժողովուրդը» (գյուղացիությունը),— ահա երկրամասի նարոդնիկական առաջին կազմակերպության նշանաբանը։ Նրանք որոշել էին «արտասահմանից և Պետերբուրգից ուղարկվող զանազան հակակառավարական հրատարակությունները թարգմանել տեղական լեզուներով և տպել մոտ ժամանակներս ստացվելիք տպագրական ձեռնադալդահի միջոցով։ Աշխատել այդ հրատարակությունները տարածել գյուղական բնակչության մեջ, մեկնաբանել նրանց իմաստը և, երբ բնակչությունը բավականաչափ նախապատրաստված կլինի, պայմանավորվել իրար հետ, որ ստացված ազդանշանի համաձայն միաժամանակյա ընդհանուր ապստամբություն բարձրացվի՝ ծառայողներին (իմա՝ չինովնիկությանը—Խ. Բ.), հոգևորականությանը՝ ազնվական-կալվածատերերին, որոնցից դժգոհ են, ոչնչացնելու նպատակով»[13]։

Չնայած իր կարճատև գոյությանը, նարոդնիկական այդ կազմակերպությունը որոշակի աշխատանք ծավալեց երկրամասի բազմազգ աշխատավորության, հատկապես գյուղացիության մեջ, նրան հասցնելով նարոդնիկական, հեղափոխական գրականությունը։ Կազմակերպության ղեկավարները կապ էին հաստատել Մոսկվայի, Պետերբուրգի, Վլադիկավկազի, Ժնևի, Ցյուրիխի և այլ վայրերի հեղափոխականների հետ, նրանցից ստանում էին օգնություն։

1881—1882 թվականներին երկրամասում աշխատանք էր կատարում նարոդովոլյան զինվորական խմբակը, որի ակտիվ գործիչներից էր Ալեքսանդրապոլի բերդապահ զորքի հրետանային սպա Սերգեյ Շեպելյովը, իսկ խմբակի կազմակերպիչ Աննա Կորբայի Թիֆլիսից հեռանալուց հետո ղեկավարությունն անցնում է Ս. Տեր-Գրիգորյանի ձեռքը։

1882 թվականի վերջերին հայ մտավորականները (Գ. Միրզոյան, Գ. Ղարաջյան, Կ. Մելիքյան, Ք. Միքայելյան, Ա. Պետրոսյան (Սանդալ), Խ. Մալումյան, Ա. Դաստակյան, Ս. Զավարյան, Գ. Տեր-Մկրտչյան (Միաբան), Ի. Զուրաբյան, Գ. Աղաբաբյան, Հ. Թադևոսյան, Ա. Ադամյան և ուրիշներ) Թիֆլիսում կազմակերպում են նարոդնիկական մի անկախ խմբակ, որը գործել է մինչև 1886 թվականը։ Դա, ինչպես գրել է Գ. Ղարաջյանը, հայ

---

13 См. «История классовой борьбы в Закавказье», кн. I, Приложение II, էջ 31։ Նույնը տե՛ս Մ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, էջ 31։

անդրանիկ նարոդնիկական խմբակն էր Անդրկովկասում[14], որի անդամների մի մասը Ռուսաստանի բարձրագույն դպրոցների սովորողներ էին: Բեև խմբակի անդամները ծանոթ էին Ն. Չերնիշևսկու, Ն. Դոբրոլյուբովի, Պ. Լավրովի (Միրտով), Մ. Բակունինի և ռուս նարոդնիկության ուրիշ աչքի ընկնող գործիչների աշխատություններին, նարոդնիկական հոսանքի գաղափարախոսությանը, բայց և այնպես հստակ ծրագիր չունեին: Նրանց վրա իշխում էր մտքերի ռադիկալիզմը: «Մի տեսակ գյուղացիական, ազգային սոցիալիզմ,— գրել է Գ. Ղարաջյանը,— մի տեսակ արհեստավորական (մանրբուրժուական) սոցիալիզմ, լումպեն պրոլետարական սոցիալիզմ,— ահա թե խմբակի ուղղությանն ինչպիսի բնորոշում կարելի է տալ մոտավորապես»[15]: Ինչպես 80-ական թվականների նարոդնիկական մյուս խմբակները, այնպես էլ հայ անդրանիկ հեղափոխական խմբակը, զտարյուն նարոդնիկական չէր: Խառնաշփոթ դատողությունների հետ միասին, խմբակի անդամները հետաքրքրություն էին հանդես բերում դեպի «հայկական հարցը», ջանում նարոդնիկական գաղափարները տարածել գյուղացիության, արհեստավորության, ուսանողության մեջ: Խմբակը գրավոր պրոպագանդայի առանձին թռուցիկներ արեց, 1884 թվականին հեկտոգրաֆով բազմացրեց Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը, 1885 թվականին հայկական դպրոցների փակման առթիվ հրատարակեց հակացարական բովանդակությամբ «Հայ եղբայրներ և հայ քույրեր» խորագրով թռուցիկը[16], փորձեր արեց տեղերում իր

---

14 Անդրկովկասի նարոդնիկական խմբակների մասին տե՛ս Մ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1940, Գ. Ղարաջյան Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918, նույնի, Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927, նույնի, Իմ կյանքի պատմությունը (հիշատակարան), ձեռագիր օրինակները գտնվում են ՍՄԿԿ Կկ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվում (Գ. Ղարաջյանի ֆոնդում) և ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվում:

15 Գ. Ղարաջյան (Ս. Տ. Արկոմեդ), Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927, էջ 22: Ծանոթագրության մեջ Գ. Ղարաջյանը գրել է. «Խմբակի անդամներից մեկը գտնում էր, որ Սունդուկյանի Պեպոն ընածին սոցիալիստ էր»:

16 «Հայ եղբայրներ և հայ քույրեր» թռուցիկից «Նարոդնայա վոլյան» 1885 թվականի № 11—12-ում լայն քաղվածքներ է տպագրել: Թռուցիկի լրիվ տեքստը հետագայում հրատարակվել է Գ. Ղարաջյանի «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում» գրքույկում (էջ 49—67), համապատասխան մեկնաբանություններով: Տե՛ս նաև ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, ցուց. 5, դ. 17, թ. 1:

ազդեցությունը տարածել, իսկ Ալեքսանդր Պետրոսյանը մի քանի մարդկանց հետ միասին, կարճ ժամանակով, նույնիսկ 1883 թվականին մեկնեց Արևմտյան Հայաստան»[17]:

Անցյալ դարի 60—70-ական թվականներին ռուս հեղափոխականների խմբակները դաստիարակչական ու քաղաքական դպրոց հանդիսացան Անդրկովկասի առաջավոր երիտասարդության համար: Զ. Շվելիձեն իր «Անդրկովկասում հեղափոխական-նարոդնիկական շարժումների պատմության ուրվագծեր» մենագրության մեջ քննարկելով երկրամասում նարոդնիկական շարժման առանձնահատկությունները, նշել է, որ վրացական, հայկական և ադրբեջանական նարոդնիկների ծրագրում մեծ տեղ էր գրավում ազգային հարցը, վրաց նարոդնիկները բեղմնավոր աշխատանք են կատարել գյուղացիական ապստամբություն նախապատրաստելու ուղղությամբ: Հատկապես նրանց պրոպագանդայի շնորհիվ Մինգրելիայում բռնկվել է նման ապստամբություն, բայց նրանք բուն-տարարներ չէին: Անդրկովկասում նարոդնիկները բնավ իդեալիզացիայի չէին ենթարկում գյուղական համայնքը, սեփական դիրքորոշում ունեին կապիտալիստական արտադրության նկատմամբ, թերահավատ էին գեղի անհատական տեսորը և այլն[18]:

Արսեն Կրիտյանի ղեկավարությամբ Ալեքսանդրապոլում 1869 թվականի ապրիլին ստեղծված «Բարենպատակ ընկերությունը» և 1874 թվականին Մեծ Ղարաքիլիսայում Հ. Բալասանյանի ղեկավարությամբ ձևավորված «Կանտոր հայրենյաց սիրո» խմբակը թեև իրենց քաղաքական ծրագրերով ու գործելակերպով հեռու էին նարոդնիկությունից, սակայն կրում էին ժամանակի դեմո-

---

[17] «1882 թ., երբ ես գյուղումն էի,— գրել է իր հուշերում Քր. Միքայելյանը,— ընկեր Դաստակյանից մի նամակ ստացա (առաջին անգամ հայերեն լեզվով), որով նա հաղորդում էր, թե Թիֆլիսի կոմիտեն (նարոդնիկական կազմակերպությունը—Խ. Բ.) բաժանվել է առանձին ազգային խմբակների և հայկական խմբակի դերը այս նամակում բացատրվում էր հետևյալ խոսքերով՝ «Մեր այս կազմակերպությունը ամբողջովին կնվիրի իր գործունեությունը անբախտ հայ ժողովրդի անպաշտպան շահերին» (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, № 4, 1940): Դա այն ժամանակ էր, որ նարոդնիկական խմբակներից անջատվեցին նաև մեծ թվով վրաց նարոդնիկներ, որոնք պաշտպանում էին Ռուսաստանից անջատվելու և անդրկովկասյան ժողովուրդների դաշնակցային պետություն (ֆեդերացիա) ստեղծելու ուղղիծը:

[18] З. Л. Швелидзе, Очерки по истории революционного-народнического движения в Закавказье (60-ые — начало 70-х гг. XIX в.). Автореферат докторской диссертации, Тбилиси. 1966.

կրաատական որոշ տրամադրություններ։ Նրանց առանձին անդամներ կարդացել էին Խ. Աբովյանի, Ս. Նազարյանի, Ս. Շահազիզի, Մ. Նալբանդյանի աշխատությունները, առանձնապես «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր երկը, տարածել Մ. Նալբանդյանի նկարը և նրա հայրենասիրական բանաստեղծությունները։ Ս. Կրիտյանը հորդորում էր. «Սիրելի ազգակիցներ, մի՞թե կարելի է բավարար լույսին ապրել իբրև կույր... թող խավար գիշերներն ու թանձր ամպերը չտիրեն ձեզ»[19]։

Բացի խմբակներից, 70—80-ական թվականներին, լիբերալ նարոդնիկական գաղափարները, թեև թույլ, բայց և այնպես արծարծվում էին նաև հայ մամուլի՝ «Մեղու Հայաստանի», «Նոր Դար», «Փորձ», «Արձագանք», «Մշակ» և այլ պարբերականների էջերում։ Դա ամենից առաջ արտահայտվում էր Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման, ֆեոդալական մնացորդների վերացման, ազգային-ազատագրական պայքարի ծավալման, բանվորական հարցի «լուծման», գյուղացիական շարժումների գնահատման և այլ ասպարեզներում[20]։ Գյուղացիական ռեֆորմի և նրա արդյունքների նարոդնիկական գնահատմամբ հանդես էին գալիս հայ լիբերալ-նարոդնիկներ Հ. Տեր-Մովսիսյանցը, Ալ. Քալանթարը, Գ. Յուզբաշյանը, Ս. Ղորղանյանը և ուրիշներ։ Նրանք քննադատում էին երկրամասում կապիտալիստական հարաբերությունների զարգացման ընթացքը, ուղիներ որոնում դրանից խուսափելու համար։ Հ. Տեր-Մովսիսյանցը 1878—1882 թվականներին ուսանելով Պետերբուրգի և Մոսկվայի բարձրագույն դպրոցներում, մոտիկից ծանոթ էր նարոդնիկությանը՝ «Զեմլյա ի վոլյա», «Նարոդնայա վոլյա» կազմակերպություններին։ «Մեղու Հայաստանի», «Գործ» և այլ պարբերականներում գրած նրա հոդվածները տոգորված են նարոդնիկական գաղափարներով։ Երկրամասում արդյունաբերության զարգացումը կասեցնելու նպատակով Հ. Տեր-Մովսիսյանցը դեմ էր երկաթգծի անցկացմանը։ «Ներքին տնտեսական առաջադիմության համար,— գրել է նա,— հարկավոր են

---

19 Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, էջ 193։ Հիմք չկա եզրակացնելու, թե Կրիտյանը Մ. Նալբանդյանի գործի շարունակողն է։ Մեր ձեռքի տակ եղած արխիվային վավերագրերը (տե՛ս Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 115, ց. 1, գ. 5, թթ. 5—6 և այլն), գոնե այդ են վկայում։

20 Այդ մասին հանգամանորեն տե՛ս Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, XIX դարի երկրորդ կես, ետռեֆորմյան շրջան, Երևան, 1958։

ոչ այնքան երկաթուղիք, որքան կարգին և հարմար գյուղական ճանապարհներ»[21]։ Նա նարոդնիկական այն մոլորություններն ուներ, որոնց համաձայն «տեղական գործարանական արդյունագործությունը» կապիտալիզմ չէ, այլ «ժողովրդական արտադրություն» և որ այդպիսով հնարավոր է խուսափել «այն թշվառ պրոլետարիատից, որ այժմ Եվրոպայի շքեղության փայլը նսեմացնում է»։ Հ. Տեր-Մովսիսյանցը իր նարոդնիկ ուսուցիչների օրինակով, անգիտանում էր (կամ էլ կոծկում) այն փաստը, որ «տնայնագործական արհեստագործությունները նույն կապիտալիզմն են՝ նրա զարգացման տարբեր աստիճաններում»[22]։

Ուշագրավ է այն փաստը, որ Հ. Տեր-Մովսիսյանցը կանգնած էր ժողովուրդների ազատության և համերաշխության սկզբունքների վրա։ Հայ ժողովրդի ազատագրությունը նա կապում էր Ռուսաստանի հետ, ընդգծելով, որ ռուսական օրիենտացիայի բոլոր հակառակորդները շփոթում են «հետագեմ ռուսացնողների կուսակցությունը ամբողջ Ռուսաստանի և ռուս ժողովրդի հետ»[23]։

Մոսկվայի ուսանողական խմբակներում իր մկրտությունն ստացած Ա. Քալանթարը «Մշակ»-ին գրած իր առաջին շրջանի հոդվածներում գերազանցապես շոշափում էր գյուղացիության սոցիալ-տնտեսական, հողային հարաբերության և այլ հարցեր։

Գյուղական հողային համայնքի վերաբերյալ նարոդնիկական հայացքներն իրենց զգացնել են տալիս Մոսկվայի գյուղատնտեսական ակադեմիայի հայ ուսանողական ընկերության անդամներից Հ. Տեր-Բարսեղյանի (Հրաչյա) «Գործ» ամսագրում տպագրված հոդվածում[24]։ «Այժմ գոյություն ունեցող հողատիրության ձևերից համայնքը (Община),— գրել է նա,— ամենից լավ է համապատասխանում հողի վրա ունեցած մարդկային իրավունքին»[25]։ Ավելի ուշ, 1886—1900 թվականներին, նարոդնիկների ազդեցությամբ, գյուղացիական ռեֆորմի և նրա հետևանքների մասին «Մշակ»-ում հանդես էր գալիս Ս. Ղորղանյանը։ «Նարոդնիկության հայ հետևորդները,— գրել է Վ. Ռշտունին,— «Մեղու Հայաստանի» թերթում և «Մշակ»-ում հանդես էին գալիս ոչ

---

21 «Մեղու Հայաստանի», № 21, 1881։

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 265։

23 Տե՛ս «Գործ», № 1, 1884։

24 Տե՛ս «Գործ» № 1, 1882, Հրաչյա, «Համայնքը և նրա նշանակությունը ժողովրդական կյանքում» հոդվածը։

25 Տե՛ս «Գործ» № 1, 1882։

միայն ցարական գյուղացիական ռեֆորմի ու դրա արդյունքների քննադատությամբ, ելակետ ունենալով գյուղացիական շահերը, ոչ միայն պաշտպան էին կանգնում գյուղական հողային համայնքին, որ պատվար պետք է լիներ կապիտալիստական հարաբերությունների զարգացման դեմ և հիմք դառնար սոցիալիզմի համար, այլև քննադատում էին կապիտալիզմի ողջ տնտեսական սիստեմը, դրան հակադրելով իրենց այսպես կոչված ժողովրդական արտադրության «ուտոպիական պլանը»[26]:

Կապիտալիզմի զարգացումն Անդրկովկասում հայ իրականության մեջ քննադատվել է ոչ միայն նարոդնիկական, այլև ֆրանսիական մանրբուրժուական սոցիալիզմի դիրքերից: Այն հատկապես տեղ է գտել «Մեղու Հայաստանի» թերթի 1882 թվականի համարներում «Տ. Ս.» ստորագրությամբ լույս տեսած Գալուստ Տեր-Մկրտչյանի Փարիզից ուղարկած հոդվածներում[27]: Եթե Ռու-

---

26 Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, էջ 456:

27 Գալուստ Տեր-Մկրտչյանը, ինչպես տեսանք, այդ ժամանակ հարել է նարոդնիկությանը: Փարիզից ուղարկած հոդվածների տակ նա ստորագրել է «Տ. Ս.»: Պրոֆ. Վ. Ռշտունին իր «Անդրկովկասի կապիտալիստական զարգացման սոցիալիստական քննադատը XIX դարի 80-ական թ. սկզբին» (տե՛ս Երևանի պետական համալսարանի Գիտական աշխատություններ, հատ. 13, 1946, էջ 123—181) և «Հայ հասարակական հոսանքների պատմությունից» (էջ 488—520) արժեքավոր ուսումնասիրությունների մեջ հանգամանորեն քննարկել է «Տ. Ս.»-ի հոդվածները: Ցավոք սրտի նա չի վերծանել «Տ. Ս.»-ի ով լինելը: «Շատ քիչ բան գիտենք այս ուշադրության արժանի հեղինակի («Տ. Ս.»-ի մասին, մեզ անհայտ է անգամ նրա անուն ազգանունը» (Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից», էջ 488): «Տ. Ս.»-ն Գալուստ Տեր-Մկրտչյանն է (Միաբան), որը ծնվել է 1860 թ. ապրիլի 9-ին Ախալցխայում: (Տե՛ս Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի Գ. Տեր-Մկրտչյանի ֆոնդի (ցուց. 35) և գրականության ու արվեստի թանգարանի արխիվի Գ. Տեր-Մկրտչյանի գործի նյութերը): Նա «С. Т» ստորագրությամբ բանավիճել է «Журнал Министерства юстиции»-ի 1890 թ. և «Кавказ» թերթի (№ 301, 1900 թ.) առանձին հոդվածների դեմ: (Տե՛ս Մատենադարանի Գ. Տեր Մկրտչյանի ֆոնդի ցուց. 35, թղթապ. 23, վավ. 63, թ. 7): Գ. Տեր-Մկրտչյանը 1874—1878 թթ. սովորել է Էջմիածնի հոգևոր ճեմարանում, այնուհետև մեկնել է Փարիզ, սովորել Սորբոնի համալսարանում: Հենց այդ ժամանակ էլ նա տարվել է մանրբուրժուական սոցիալիզմի գաղափարներով, որոնք իրենց կնիքն են դրել նրա այդ շրջանի՝ 1882 թ. հոդվածների վրա: Հետագայում նա դարձավ նշանավոր հայագետ և միաժամանակ խմբագրում էր «Արարատ»-ը՝ Էջմիածնի պաշտոնական օրգանը: Բացի «Տ. Ս.»-ից, «Մեղու Հայաստանի»-ում նա ստորագրել է նաև «Կիլնսե»: Հավանական է ֆրանսիական gnil nesait «արտահայտությունից, նշանակում է՝ որ ջիմանան:

սաստանում նրա հայացքների վրա իշխում էր նարոդնիկական գաղափարախոսությունը, ապա Ֆրանսիայում՝ հրապուրվեց նարոդնիկությանը ազգակից՝ ուտոպիական սոցիալիզմով, հատկապես Շ. Ֆուրիեի ուսմունքով: Քննադատելով կապիտալիզմի խոցերը, նա ձգտում էր կապիտալիզմի նվաճումները հարմարեցնել մանր արտադրողների շահերին, փրկել մանր արտադրությունը, այսինքն՝ անկարելին կարելի դարձնել:

Հայ իրականության մեջ նարոդնիկական հոսանքը, իր սխալներով, տատանումներով, էկլեկտիզմով հանդերձ, մասնակցեց արևելահայ լիբերալ բուրժուական, պահպանողական հոսանքների դեմ ծավալած գաղափարամարտին, իր էվոլյուցիայի ընթացքում դիմաշրջվեց դեպի Արևմտյան Հայաստանը, աջակցեց ազատագրական շարժումներին և դրանով իսկ ակոսեց հայ հասարակական-քաղաքական միտքը:

Խ. Աբովյանի և Մ. Նալբանդյանի գծած դեմոկրատական լուսավորականության ուղիով էր ընթանում հայ մեծանուն վիպասան Ռաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյանը): Լինելով ազգային դեմոկրատ, նա իր ստեղծագործություններով բորբոքում էր հայրենասիրական զգացմունքներ, խոր սեր պատվաստում դեպի հայ ժողովրդի մշակութային արժեքները, ազատագրական պայքարի կոչում ժողովուրդներին: Շուրջ երեք տասնամյակ Ռաֆֆին գաղափարական կյանքի կիզակետում էր, հակաֆեոդալական պայքարի առաջամարտիկների շարքերում: Նա պաշտպանում էր դյուղացիությանը, ձգտում ազգային ազատագրության, ջանում դեմոկրատական միտքը հասունացնել մինչև ազգային ազատագրության գաղափարի աստիճանին[28]: Ռաֆֆու երկերը հագեցված են համադեմոկրատական գաղափարներով: Ի նշան հարգանքի, իր երախայրիքը՝ «Սալբի» վեպը նվիրելով «պաշտելի տղամարդ» Մ. Նալբանդյանին, ընծայականում գրել է. «Քանի կա և կապրի հայոց լեզուն և գրականությունը, Մ. Նալբանդյանցի անմահ հիշատակը միշտ կունենա յուր զգալի համակրությունը ամեն մի հայի սրտում մինչև դարերի վերջը»[29]:

Ռաֆֆին ազատագրական պայքարի գաղափարախոսն էր:

---

28 Տե՛ս Ռաֆֆի, Երկեր, հատ. 1, էջ 37, Ս. Հարությունյանի «Ռաֆֆու ստեղծագործությունը» առաջարանը:

29 Ռաֆֆի, Երկեր, հատ. 1, էջ 52:

***

XIX դարի 70—80-ական թվականների արևելահայ հասարակական զարգացման աչքի ընկնող հոսանքներից էր Դր. Արծրունու գլխավորած լիբերալ-բուրժուական հոսանքը՝ «Մշակ» (հունվար, 1872—փետրվար, 1921), «Մուրճ» (1889—1907) և այլ պարբերականներով։

Արևելահայ լիբերալ բուրժուական հոսանքը պայքարել է, մի կողմից՝ հին, ֆեոդալական հասարակական հարաբերությունների և հասկացողությունների դեմ, իսկ, մյուս կողմից՝ կապիտալիզմի զարգացման հետևանքով և նրա ընդերքում հասունացող հակաբուրժուական հոսանքների և շարժումների դեմ, հանուն կապիտալիստական հարաբերությունների հաղթանակի, ընդդեմ հեղափոխության և սոցիալիզմի։

Հայ ականավոր հրապարակախոս, մանկական գիտությունների դոկտոր Դր. Արծրունու (1845—1892) Թիֆլիսում հիմնադրած ռուսահայ լիբերալ բուրժուազիայի օրգան «Մշակ»-ը 1892 թվականին անցնելով Ալ. Քալանթարի, իսկ 1913 թվականից Համբարձում Առաքելյանի ձեռքը, ընթանում է զիգզագներով, ստիպողաբար հեռանում իր վաղեմի առաջադիմական բուրժուական տրադիցիաներից և ի վերջո դառնում հայ կադետների գաղափարական դեղը[30]։ «Մշակ»-ը ապրել է երկու հիմնական փուլ։ Առաջին շրջանում նա պաշտպանում էր կապիտալիզմի զարգացումը, արևմտահայերի ազատագրական շարժումները, մտահոգված էր «Հայկական հարցի» լուծմամբ, ուներ ռուսական օրիենտացիա, քննադատում էր ֆեոդալիզմի մնացուկները, կղերապահպանողական հոսանքը։ Նա իր շուրջն էր համախմբել այն ժամանակվա ռադիկալ ուղղության հասարակական գործիչներին, հրապարակախոսներին, գրողներին, որի շնորհիվ էլ մեծ ազդե-

---

30 «Մշակ»-ի էվոլյուցիան սխալ է Դր. Արծրունու մահով բացատրելը։ Այն պայմանավորված է հայ բուրժուազիայի քաղաքական ուղեգծի փոփոխությամբ։ Երրեմնի նարոդնիկ Ա. Քալանթարը Դր. Արծրունու մահից հետո դառնալով «Մշակ»-ի խմբագիր, մտավ ռուսական բուրժուազիայի գլխավոր կուսակցության՝ կադետների շարքերը։ (Տե՛ս «Մշակ»-ի 1906 թվականի № 7-ի «Նոր տարվա խորհրդածություններ»)։ 1918—1921 թվականներին «Մշակը» խմբագրել են Լևոն Քալանթարը և Լևոն՝ Առաքել Բարախանյանը։ Շուրջ 50 տարվա ընթացքում լույս են տեսել «Մշակի» 9515 համար, որոնք հարուստ նյութ են պարունակում հայ ժողովրդի նոր շրջանի պատմության վերաբերյալ։

ցություն էր գործում հասարակական կյանքի վրա։ Գր. Արծրունու օրոք «Մշակը» «...զգայուն կերպով ունկնդրում էր հասարակական երևույթներին,— գրել է Բ. Կնունյանցը,— Հայկական կյանքին, արտահայտելով ազատության մի ամբողջ գրական ծրագիր, ընդդիմադարձված պահպանողականությանը և ռեակցիոնին»[31], «Մշակ»-ը հովանի էր մայրենի գրականությանը։ Հայ գրողներից և հրապարակախոսներից շատ շատերը (Բաֆֆի, Գ. Սունդուկյան, Ղ. Աղայան, Շիրվանզադե, Լևոն և ուրիշներ) աշխատակցել են «Մշակ»-ին, թեև ավելորդել Գրիգոր Արծրունու գաղափարներով։ «Մշակ»-ում,— ինչպես նկատել է Բաֆֆին,— «Պուբլիցիստական և բելլետրիստական ձեռ-ձեռքի տված էին ընթանում։ Վիպասանը նկարում էր պատկերներ ժողովրդի կյանքից, ցույց տալով նրա ոգեղ այլանդակությունները, տնտեսագետը հարվածում էր անխիղճ վաշխառուի և հարստահարիչ կապիտալիստի հարաբերությունները մշակ դասի հետ։ Մորալիստը խորտակում էր այն սև նախապաշարմունքները, որ ծանրացած էին ամբոխի ոգու վրա, և մատուցանում էր բարոյական նոր սնունդ։ Առողջ խոսքը բխում էր կենդանի աղբյուրից և տարածում էր ամեն կողմ նոր մտքեր։ Կրիտիկական ոգին գործում էր իր անխնա անդթությամբ։ Նա մտնում էր հեղինակի կաբինետը, վաճառականի խանութը, արհեստավորի գործարանը, ծառայողի տունը, գյուղացու խրճիթը, մեծատան սալոնը, վարժապետի դպրոցը, կղերի մենարանը,— մի խոսքով կյանքի բոլոր ծալքերում պտտվում էր նա և խավարի միջից դուրս էր քաշում, մերկացնում էր այն ամենը, ինչ որ ոգեղ էր, ինչ որ անարժան»[32]։

«Մշակ»-ը քննադատում էր դպրոցներում թագավորող սխոլաստիկան ու տիրացուականությունը, ցույց էր տալիս կնոջ ստրկական, չարքաշ վիճակը, ուղիներ որոնում վերջինիս տեղը հասարակական կյանքում որոշելու համար։ Մասնավորապես բնորոշ են Գր. Արծրունու հոդվածները։ Իր համակրանքն արտահայտելով կանանց, հայուհիների նկատմամբ, նա ընդգծում էր, թե հարկավոր է այնպես անել, որ հասարակության երկու տարրերը՝ տղամարդիկ և կանայք աշխատեն միասնաբար, քանի որ մի տարրի ակտիվության և մյուսի չմասնակցելու դեպքում հասարակական կյանքը միշտ մեռած ու անշարժ կմնա[33]։ «Մշակ»-ը պահանջում

---

31 См. Б. К., Несколько слов о «Мшаке», «Бакинские известия», № 44, 1903.

32 «Մշակ», № 205, 1879։

33 «Մշակ», № 124 և 125, 1888։

էր դպրոցն անջատել եկեղեցուց, որպեսզի ժողովրդական կրթության բախտը տնօրինի ժողովուրդը և ոչ թե վճռեն հոգևորականներն ու կալվածատերերը: «Մշակ»-ը քննադատում էր ցարական Ռուսաստանի պետական կառավարման բյուրոկրատական ձևերը: Սակայն իր մերկացումների մեջ «Մշակ»-ը հետևողական չէր:

Դրական դեր խաղալով հայ մշակույթի, հայ գրականության ու լեզվի, գիտության առանձին ճյուղերի ու քաղաքակրթության տարածման գործում, խոր ակոս գծելով հայ հասարակական մտքի վրա, «Մշակ»-ը միաժամանակ անբարյացակամ դիրք ուներ բանվորական շարժումների և սոցիալիստական առաջավոր գաղափարների նկատմամբ: Տակավին 1879 թվականին «Ո՞ւր ենք գնում» առաջնորդող հոդվածում, Գր. Արծրունին ասում էր՝ «Մեր բնավորության հակառակ է սոցիալիզմի որևէ գաղափարը, մեզ անհասկանալի են այդ երազական մտքերը:

Անդրկովկասը երբեք չի ներկայացնի մի հարմար հող սոցիալական որևէ պրոպագանդայի համար»[34]: Նա խորհուրդ է տալիս հեռու մնալ սոցիալ-դեմոկրատական գործիչների «կործանարար» գաղափարներից, «սոցիալական չարիք ու ախտեր» հանդիսացող հեղափոխական կազմակերպություններից[35]:

Գր. Արծրունին ջանում էր արդարացնել կապիտալիստական հասարակարգը, հավասարության նշան դնելով կապիտալիստի, բանվորի և ինտելիգենտի աշխատանքի միջև: «Ուսումնականները, արդյունագետները և արվեստավորները,— գրել է Գր. Արծրունին,— ամենքը մշակներ են,— հասարակության առաջադիմությունը... ծագում է այդ գործիչների փոխադարձ հարաբերության արդարությունից»[36]: Մի ուրիշ անգամ նա գրել է. «Աշխատելով հարուստն ու աղքատը հավասարվում են, հարուստի աշխատանքը աղքատի աշխատանքից առավել մեծ արժանավորություն չունի հասարակության համար, և ապիտությունից ազատվելու համար հարուստը միևնույն աշխատասիրությունը պիտի գործ դնի, ինչքան աղքատը»[37]: Գր. Արծրունին կրկնում է զեհիկ տնտեսագետների մտքերը: Զայնակցելով իր ուսուցչին, Համբարձում Առա-

---

34 Տե՛ս «Մշակ», № 48, 1879։

35 Այդ մասին տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դաշնակցության սոցիալական ծագումը, «Նորք», գիրք առաջին, 1927, էջ 172; Վ. Ռշտունի, «Հայ հասարակական հոսանքների պատմությունից», Երևան, 1956։

36 Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. 2, էջ 18։

37 Գր. Արծրունի, Աշխատություններ, հատ. 1, էջ 219։

քելյանը 1898 թվականին այն միտքն էր զարգացնում, որ օտարերկրյա կապիտալի ներխուժման դեմ պայքարի ժամանակ հայ բանվորի և կապիտալիստի շահերը իբր համընկնում են:

Դր. Արծրունու մահից հետո նրա հաջորդները նոր ժամանակներում «Մշակ»-ը դարձրին անդուն: «Նայեցեք վերջին տարիների համարները,— 1903 թվականին գրել է Բ. Կնունյանցը,— բովանդակության ինչպիսի՞ աղքատություն, ինչպիսի՞ մակերեսայնություն, ավելի ճիշտ՝ ինչպիսի՞ վախկոտություն այս կամ այն հարցի լուծման ժամանակ: Բացի տեղում անընդհատ դոփելը, ինտելիգենցիայի բարի զգացմունքներին կոչ անող արծրունիական սկզբունքների մշտական կրկնությունը, ի՞նչ նոր բան է մտցնում այդ «լիբերալ» թերթը մեր կյանքում: Վերջին տարիներում ի՞նչ հարց է նա առաջադրել հասարակական արենայում, երբ նա չի զնացել տեղական մյուս հրատարակությունների պոչից, կրկնելով և ձևափոխելով նրանց ասածները» [38]:

Իհարկե, խոսքն այն մասին չէ, որ նացիոնալիստական, պահպանողական պարբերականների համեմատությամբ, «Մշակ»-ը XX դարի առաջին քսանամյակում ևս որոշակի ծառայություններ մատուցեց հայ հրապարակախոսությանը: Այլ այն մասին, որ ամբողջությամբ վերցրած երկրորդ փուլում նա կորցրեց նախկին հմայքը, իր էջերը լայնորեն բացեց բուրժուական նացիոնալիստների, սուտ մարքսիստների և սոցիալիստական զաղափարախոսության մյուս թշնամիների առջև: Ստ. Շահումյանը հենց այդ է նկատի ունեցել, երբ 1914 թվականին գրել է, թե «Մշակ»-ի երգը, մեր կարծիքով, առհասարակ երգված է» [39]:

Լիբերալ բուրժուական օրգաններից էր «Մուրճ» ամսագիրը, որը 1889 թվականին Թիֆլիսում հիմնադրել է հայ առաջին ընտեսագետներից Ավետիք Արասխանյանը: 1876 թվականին ավարտելով Թիֆլիսի ռեալական դպրոցը, Ա. Արասխանյանը մեկնում է արտասահման՝ բարձրագույն կրթություն ստանալու: 1876—1878 թվականներին նա ունկնդրում է Լայպցիգի համալսարանի քաղաքատնտեսության ու իրավաբանության դասընթացները: 1878—79 թվականներին դասախոսություններ է լսում Փարիզի համալսարանում, իսկ 1879—1882 թվականներին Ստրասբուրգի համալսարանի դասընթացն ավարտելով, ստանում է տնտեսական գի-

---

38 См. «Бакинские известия», № 44, от 23 февраля (8 марта) 1903.

39 Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 2, էջ 376:*

տությունների դոկտորի գիտական աստիճան, նյութ ունենալով «Հայի առևտուրը Ֆրանսիայում XVIII դարում» թեման[40]:

Վերադառնալով հայրենիք, Ա. Արասխանյանը հիմք է դնում «Մուրճ» ամսագրին, որը նա խմբագրեց մինչև 1900 թվականը: «Մուրճ»-ը ժամանակի հայ առաջավոր պարբերականներից էր, բուրժուական մտավորականության ձախ թևի օրգանը, որն իր էջերում մեծ տեղ էր տալիս տնտեսագիտական ուսումնասիրություններին, հասարակական-քաղաքական հետազոտություններին, երկրամասի կյանքն արտացոլող նյութերին, հայ մշակույթի զարգացման հարցերին: «Մշակ»-ից հետո «Մուրճը» այդ ժամանակ առաջին հայ պարբերականն էր, որ այնքան համակողմանիորեն զբաղվում էր հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական, մշակութային խնդիրներով: Նրանում պատշաճ ձևով լուսաբանվել են Անդրկովկասի, այդ թվում՝ Հայաստանի էկոնոմիկայի, խոշոր արդյունաբերության զարգացման, բանվոր դասակարգի դրության հարցերը: Հաղթահարելով ցարական գրաքննության ստեղծած արգելքները, «Մուրճը» դրվատում էր ռուս առաջավոր գրողների գործերը[41]:

Ա. Արասխանյանի «Մուրճ»-ը հանդուրժողական վերաբերմունք ուներ մարքսիզմի նկատմամբ, երբեմն նրա էջերում քաղվածքներ էին բերվում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններից:

«Մուրճ»-ը ևս երկու էտապ ապրեց՝ Ա. Արասխանյանի օրոք, անշուշտ, այն ավելի առաջադիմական էր:

1901 թվականին սկսվում է «Մուրճի» նոր շրջանը: Խմբագիր-հրատարակչի իրավունքներն Ա.վ. Արասխանյանից անցնում են Ա. Կրասիլնիկյանին, իսկ մեկ տարի անց՝ Լևոն Սարգսյանի ձեռ-

---

40 Տե՛ս Ա. Արասխանյան, Ինքնակենսագրություն, Թիֆլիս, 1912; Հ. Պետրոսյան, «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ», Երևան, 1960, էջ 39: 1883 թվականին լույս տեսավ Ա. Արասխանյանի «Ազգարնակչությունը և ազգարնակչության շարժումները», իսկ 1884 թվականին՝ «Հողի արդյունաբերությունը և հասարակությունը», 1887 թվականին՝ «Անդրկովկասյան հայի առևտուրը...» (ռուսերեն) և այլ աշխատություններ: Ռուսական առաջին հեղափոխության տարիներին նա ձեռնարկել է Կ. Մարքսի «Կապիտալ»-ի թարգմանությունը, որը չի ավարտել: Ուշագրավ է այն փաստը, որ բացարձակ ռենտայի հարցում ճիշտ դիրքորոշում ուներ Արասխանյանը: Բայց Ռիկարդոյի, Մալթուսի և բուրժուական այլ գաղափարախոսների քննադատության ընթացքում նա հետևողական չէր:

41 «Մուրճ», № 10, 1897, տե՛ս Ա. Ա. (Ա. Արասխանյան), Գրախոսություն «Նոր փարձ» հանդեսի մասին, էջ 1421—1429:

քը, որը և շարունակվում է մինչև 1907 թվականը[42]: Այս էտապում «Մուրճը» ավելի քիչ տեղ է տալիս քաղաքական հարցերին, հատուկենտ հոդվածներ է տպագրում այդ մասին: Նա չի արձագանքում ռուսական առաջին հեղափոխության փոթորկահույզ իրադարձություններին: Միայն 1907 թվականի մարտին, նախավերջին և վերջին համարներում զետեղեց Գեդի և Լաֆարգի՝ «Ի՞նչ են ուզում սոցիալ-դեմոկրատները» հոդվածը:

«Մուրճ»-ի էջերում մեծ տեղ են գրավում արվեստի և գրականության հարցերը, հայ նշանավոր գրողների՝ Ավ. Իսահակյանի, Շիրվանզադեի, Ալ. Ծատուրյանի, Մուրացանի, Ա. Չոպանյանի և այլոց հայրենասիրական ստեղծագործությունները: Ամսագիրը թարգմանում և հայ ընթերցողին է հասցնում Շիլլերի, Բայրոնի, Հ. Սենկևիչի, Լ. Ն. Տոլստոյի, Նեկրասովի և այլ գրողների առանձին երկերը:

«Մուրճ»-ն իր գոյությամբ հարստացրեց հայ պարբերական մամուլի պատմությունը, նպաստեց հասարակական մտքի զարգացմանը:

Հայ հասարակական զարգացման ավյալ ժամանակաշրջանի լիբերալ-բուրժուական ուղղության մեջ որոշ տեղ են գրավում Մ. Բունիաթյանի, Վ. Տոտոմյանցի տնտեսագիտական հայացքները: Թեև նրանք հատուկ կերպով չեն զբաղվել Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրմամբ, բայց շփման մեջ են եղել հայ հասարակական կյանքի հետ, նրանց աշխատությունները այս կամ այն չափով տարածվել են հայ իրականության մեջ: Մ. Բունիաթյանն իր «Տնտեսական ճգնաժամերը»[43] գլխավոր աշխատության մեջ թեև երբեմն վկայակոչում է Կ. Մարքսին, բայց բուրժուական սահմանափակվածությունը կաշկանդում

---

[42] Լևոն Սարգսյանը լինելով դաշնակցության հիմնադիրներից մեկը, հետագայում հեռացավ նրանից և իր խմբագրած «Մուրճ» ամսագրի էջերից պայքարեց իր իսկ գործակցությամբ ստեղծված դաշնակցության դեմ: 1906 թվականին բանավիճելով դաշնակցական «Ալիք» թերթի գլխավորների հետ, իրեն «երբեմնի թունդ դաշնակցական» անվանելու համար, չի ժխտել, որ «...աշակերտական-պատանեկան տարիներին... ենթարկվել եմ ազգային ռոմանտիզմի ազդեցությանը.... սակայն շուտով հեռացել դաշնակցությունից, որից հետո էլ միշտ եղել եմ արմատական պրոգրեսիստ, սոցիալիստական գունավորմամբ» (տե՛ս «Մուրճ», № 8, 1906, էջ 87): Լ. Սարգսյանը արմատական պրոգրեսիստից դարձավ կադետ: Նա իրեն համարում էր «մերձբուրժուական»:

[43] См. М. А. Бунятян, Экономические кризисы, М., 1915. Առաջին անգամ գերմաներեն լույս է տեսել 1907 թ. Մյունխենում:

է նրան կապիտալիզմի արդյունք հանդիսացող ճգնաժամերի վերլուծությունը հասցնելու գիտական վախճանին: Վերոհիշյալ աշխատությունը, իր տեսական-գիտական բովանդակությամբ, մոտ է ռուս բուրժուական տնտեսագետ Տուգան-Բարանովսկու «Արդյունաբերական ճգնաժամերը...» աշխատությանը, միայն այն տարբերությամբ, որ վերջինիս մոտ կապիտալիզմի հակասություններն ավելի նրբորեն են սքողված:

Քաղաքատնտեսության արմատական հարցերում Մ. Բունիաթյանը կանգնած էր գաղափարական սուբյեկտիվիզմի դիրքերի վրա:

Բուրժուական լիբերալ տնտեսագիտության ներկայացուցիչ պրոֆ. Վ. Տոտոմյանցն իր աշխատություններում[44] արծարծում է կապիտալիզմի ժամանակ բանվորական և ագրարային շարժումների բնույթի ու ձևերի, աշխատավարձի, շահույթի, ժամանակի սոցիալ-տնտեսական բաղմապիսի հարցեր: Նրա ուսումնասիրությունները թեև պարունակում են տեսական և գործնական ուշագրավ փաստեր, եզրակացություններ, բայց ներծծված են բուրժուական ռեֆորմիստական գաղափարներով[45]: «Նա, մի կողմից, ժխտում է սոցիալական հեղափոխության անհրաժեշտությունը և ընդունում է հասարակական հարաբերությունների վերափոխման ռեֆորմների ուղին և, մյուս կողմից՝ կոոպերատիվ շարժման ուժեղացումը Եվրոպայում կապում է Առաջին Ինտերնացիոնալի գործունեության և Մարքսի հեղափոխական ուսմունքի հետ»[46]: Իր աշխատություններում Վ. Տոտոմյանցը հաճախ է քաղվածքներ բերել Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի, Կ. Լիբկնեխտի երկերից: «Ագրարային շարժման ձևերը» գրքում, հենվելով Վ. Ի. Լենինի աշխատությունների վրա, նա գրել է. «Հեղինակավոր ան-

---

44 В. Тотомянц, Формы рабочего движения, его же, Формы аграрного движения, его же, Иосиф Мацинни апостол долга и мирного прогресса (его жизнь и учение), второе издание, М., 1911, его же, Муниципализация промышленных предприятий, М., 1902, его же, Профессиональные союзы рабочих. С. Петербург, изд. Поповой, его же, Теория кооперации, Прага, 1921 и др.

45 *1908 թվականին Թիֆլիսի կովկասագիտական կուրսերում կարդացած դասախոսություններից մեկում նա ասել է. «...որչափ ավելի քիչ ի չարը գործ դրվեն հեղափոխություն և հեղափոխական խոսքերը, այնչափ ավելի շատ ազատություններ կմնան մեզ...» («Մշակ», № 58, 1908)։*

46 Ս. Գ. Գուլանյան, *Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ, Երևան, 1961, էջ 428—429։*

տեսաբանները, ինչպես, օրինակ, Վ. Ի. Լենինը, մինչև 1897 թվականի մարդահամարի արդյունքների հրապարակումը, Ռուսաստանի գյուղատնտեսական պրոլետարիատի թիվը հաշվել են 3,5 միլիոն մարդ և այլն[47]:

Բայց, ինչ խոսք, որ Վ. Տոտոմյանցը մարքսիստ չէր, այլ բուրժուական լիբերալ:

Ազգային պահպանողական հոսանքը և նրա օրգանները՝ «Նոր Դար», «Փորձ», «Արձագանք» և այլն, կառչում էին նահապետական մնացորդներից, իդեալականացնում հայ ժողովրդի հնադարյան անցյալը, մանր-սեփականատիրական հարաբերությունները և վերջինիս դիրքերից քննադատում կապիտալիզմի արատները: Հոսանքը միատարր չէր: Ազգային-պահպանողականների գլխավոր օրգաններից մեկը «Նոր Դար»-ն էր (1884—1908: Նկատենք, որ 1909—1916 թվականներին տարեկան լույս է տեսել «Նոր Դար»-ի մեկական համար), որը հիմնադրել է իրավաբանական գիտությունների դոկտոր Սպանդար Սպանդարյանը (1849—1922): Լինելով ժամանակի կրթված, զարգացած մարդկանցից և հայ ազգային պահպանողականների անդրանիկ օրգանի՝ «Մեղու Հայաստանի» (1863—1886) թերթի սյուներից մեկը, Ս. Սպանդարյանը 1884 թվականին թույլտվություն է ստանում «Նոր Դար» վերտառությամբ Թիֆլիսում թերթ հրատարակելու: 24 տարի շարունակ հայ հասարակական միտքը ակոսել է «Նոր Դար»-ը: Նա իր էջերում պայքարել է լիբերալ-բուրժուական հոսանքի՝ «մշակականության» դեմ, հանդես է բերել հակացարական տենդենցներ, միաժամանակ հավատարիմ մնալով պահպանողական ուղղությանը: «Ազգային եկեղեցին մեր ազգայնության ղինարանն է, որի մեջ պահպանվում են մեր ազգային գոյության ամենագլխավոր պայմանները»,— գրել է «Նոր Դար»-ը: Այնուհետև, «որովհետև, «Նոր Դար»-ը քաղաքական թերթ է, հենց դրա համար նրա սուրբ պարտավորությունն է պաշտպանել և բարձր պահել միշտ ազգային եկեղեցու դրոշակը: Ահա մեր բռնած դիրքի գաղտնիքը»[48]: Պատմականությունը, սակայն, պահանջում է շերտա-

---

47 В Ф. Тотомянц, Формы аграрного движения, էջ 9.

48 «Նոր Դար», № 159, 23 սեպտեմբերի, 1887, տե՛ս «Մի հին վեճի առթիվ» առաջնորդող հոդվածը: Նույնը՝ Վ. Ռշտունի, «Հայ հասարակական հոսանքների պատմությունից», Երևան, 1956, էջ 56: «Մշակ»-ի հրատարակման սկզբնաշրջանում Ս. Սպանդարյանը աշխատակցում էր այդ թերթին «Յունիուս» ծածկանվամբ:

վորված մոտեցում հանդես բերել պահպանողական հոսանքի, նրա տպագիր օրգանների գնահատման գործում: Ճիշտ չի լինի «Նոր Դար»-ը և պահպանողական հոսանքի՝ կղերական-տերտերական թևի օրգանները («Հովիտ», «Հովիվ» և այլն) դնել միևնույն դծի վրա: «Նոր Դար»-ական պահպանողականությունը եկեղեցու, կրոնի և առնչակից մյուս հարցերում համերաշխ լինելով կղերական հոսանքին, միաժամանակ հակադրվում էր նրան, ինչպես և բուրժուական լիբերալիզմին: Այդ պատճառով էլ ցարական իշխանությունը և նրա տեղական օրգանները ավելի էին հալածում «Նոր Դար»-ին և նրա խմբագիր-հրատարակիչ Սպ. Սպանդարյանին: «Ո՛չ իմ հայրս և ոչ է՛լ նրա ուղղությունը,— իր նամակներից մեկում գրել է ականավոր հեղափոխական Սուրեն Սպանդարյանը,— հատարակական-քաղաքական տեսակետից ոչ միայն չէին վայելում կառավարության աջակցությունը, այլ միշտ հալածվում էին ամենադաժան կերպով... Կառավարությունը հալածում էր «պահպանողականությունը» (կոնսերվատիզմը), և հովանավորում հայ «լիբերալիզմը», որովհետև այն ժամանակները իր տեսակետից նա տեսնում էր «թշնամուն» պահպանողականության և ոչ թե լիբերալիզմի մեջ: Լիբերալիզմը ժխտում էր հայկական կյանքի «հիմունքները», իսկ կոնսերվատիզմը պաշտպանում էր այն՝ կառավարության ճնշման և ռուսիֆիկացիայի դեմ: Բավական է միայն կարդալ «Նովոե վրեմյա»-ի հորս թերթի վրա արած հարձակումները, բավական է միայն քրքրել դրաքննչական կոմիտեի արխիվները, բավական է միայն հիշել, որ հայկական եկեղեցիների դույքերի գրավման ժամանակ ակտիվ կռիվ էր մղում իմ հայրս իր թերթով, իսկ լիբերալները համակրությամբ արտատպում էին «Կավկազ»-ից օֆիցիոզ հոդվածը իրենց թերթերում և այլն և այլն,— որպեսզի միանգամից հասկանալի դառնար հակառակ պնդումների ամբողջ ստությունը»[49]:

Պահպանողական հոսանքը և նրա տպագիր օրգանները երկվություն ունեին: «Նոր Դար»-ը պաշտպանում էր կրոնի և եկեղեցու նահապետական սովորությունները, վարք ու բարքը (որպես ազգային հատկանիշներ), դրանք իդեալականացնում կապիտալիզմի սպառնացող վտանգի հանդեպ, իսկ պահպանողական հոսանքի ծայրագույն աջ թևի օրգանները՝ հակառակը: Նրանք

---

49 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, Ս. Սպանդարյանի ֆոնդի նյութերը:

պաշտպանում էին միապետականության, վերջինիս շահերը հրամցնում որպես ժողովրդի շահեր, պաշտպանում կղերի և եկեղեցու իրավունքները, այն ամեն ինչից բարձր դասելով։ Նրանց համար չկար ազգ և հայրենիք, ճշմարիտ լուսավորություն։ Իբրև խավարամոլներ, նրանք արգելակում էին առաջադիմությանը, թշնամական վերաբերմունք ունեին հեղափոխական մեծ դեմոկրատ Մ. Նալբանդյանից մեկ հասնող դեմոկրատական, ազատագրական ավանդների նկատմամբ։ «Կղերա-ազգայական հոսանքի մարդիկ,— գրել է Աշ. Հովհաննիսյանը,— ոչ միայն համերաշխ էին տիրող սոցիալական հարաբերություններին, այլև սպասարկում էին իշխող քաղաքական ռեժիմին՝ ազգի ներսում եղած կամ լինելիք ամեն «խլրտում» խեղդելու համար։ Հանուն այդ կապի ամրացման նրանք պատրաստ էին անգամ խանձել ազգն ու հայրենիքը՝ Գեղեոնի հիշատակի պես դրանց միով երկինք բարձրացնելու համար»[50]։

Կղերա-ազգայական հոսանքի նոր ժամանակի առաջնորդները խորապես հակաժողովրդական էին, ծառայում էին շահագործող դասակարգերի շահերին, արգելակում հասարակական առաջընթացին։ Հոսանքի ներկայացուցիչները հավատարիմ կերպով ծառայում էին հայ եկեղեցուն, պայքարում այն ամենի դեմ, ինչ նոր է, առաջադիմական։ Նրանք փորձում էին հավատարիմ մնալ XIX դարի ռեակցիոն, կղերաֆեոդալական հայ պարբերականների՝ Մսեր Մսերյանի «Ճռաքաղ»-ի, Գ. Այվազովսկու «Մասյաց Աղավնու» և «Համբավաբեր Ռուսիո»-ի ուղեգծին։ Սակայն նոր ժամանակներում ռեակցիոն կղերա-պահպանողական հոսանքը անզոր էր հասարակական կյանքի վրա որոշիչ ներգործություն ունենալու[51]։

2

XIX դարի 70—90-ական թվականներին հայ ազգային-ազատագրական շարժումները թևակոխում են նոր, ակտիվ պայքարի

---

50 Աշոտ Հովհաննիսյան, *Միքայել Նալբանդյանը և նրա ժամանակը*, Երևան, 1956, հատ. 2, էջ 32։

51 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, Երևան, 1956, հատ. 2, էջ 31—58, նույնի՝ Գ. Ախվերդյանի և Գ. Շիրմազանյանի նամակափոխանակությունը Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1963, էջ 187—198։

էտապ։ Հասարակական-հեղափոխական միտքը, մինչև մարքսիստական խմբակների ձևավորումը, շարունակում էր իր դերը։ Իրարամերժ քաղաքական հոսանքների գաղափարամարտերում առաջանում են ազգային կազմակերպություններն ու կուսակցությունները, որոնք «Հայկական հարց»-ը լուծելու հավակնություն ունեին։

1885 թվականի օգոստոսի մեկին (հուլիսի 20-ին) Ֆրանսիայի Մարսել քաղաքում հայ քաղաքական մտքի սերմնացաններից մեկի՝ Մկրտիչ Փորթուգալյանի (1848—1921), խմբագրությամբ սկսեց լույս տեսնել «Արմենիա» առաջադիմական հայերեն թերթը, որը խնդիր ուներ՝ Եվրոպայում ստեղծած հասարակական կարծիքի միջոցով միջազգային դիվանագիտությանը հարկադրել սանձահարելու սուլթանական Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը [52]։ Մինչև «Արմենիա»-ի հիմնադրումը, Մ. Փորթուգալյանը Կ. Պոլսում, Վանում, Մուշում և այլուր քաղաքական գործունեություն էր ծավալել, մասնակցել «Ասիա», «Երկրագունդ» պարբերականների հրատարակությանը, կուլտուր-կրթական և հայրենասիրական ընկերությունների հիմնադրմանը։ Վանում Մ. Փորթուգալյանի կատարած աշխատանքի մասին Ա. Արփիարյանը գրել է. «Ազատության շունչ մը փչեց ամբողջ Վանի վրա։ Առանց երբեք հեղափոխություն բառը արտասանելու, ինչպես կհավատան իր աշակերտները, պատարաստեց հեղափոխական սերունդ մը, որուն ազդեցությունը հզոր եղավ Վասպուրականի մեջ» [53]։

---

52 Արմենականների մասին տե՛ս Քառասուն տարուան աշխատավորը։ Մկրտիչ Փորթուգալյան, Հարգանքի պտակ, Կ. Պոլիս, 1914, Ալ. Մարտունի, Կուսակցությունները դաշնակցության մեջ, Թիֆլիս, 1924, Լ. Ա. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964, Վեր, Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, նույնի, «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», հատ. Ա, Փարիզ, 1934; Դ. Անանուն, Թուրահայերի հասարակական զարգացումը (1870—1900), հատ. 2, Էջմիածին, 1922, Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերին (հուշեր, 1890-ական 1940), Փարիզ, 1947; Արմենակ Եկարյան, Հուշեր Արմենակ Եկարյանի, Կահիրե, 1947; Կարո Սարաֆյան, Ակնարկ մը արմենական կուսակցության պատմության վրա, Բեյրութ, 1960; Սարգիս Իգմիրյան, Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին — անձնական հուշերուս ընդմիջումին), Բեյրութ, 1962; Վեր. Արսեն Ա. Կեօրկեզյան, Վասպուրականի հերոսամարտը, 1915 ապրիլի 7, 1915, 7 մայիսի Հույս և Լույս։ Պեյրութ, 1965, տպարան Ատլաս և այլն։

53 «Նոր կյանք», № 18, 1 սեպտեմբերի 1899, էջ 275, Լոնդոն։

1885 թվականին Արևմտյան Հայաստանում արդեն երևացին առաջին զինավառ հայդուկները՝ ֆեդայիները...

1879 թվականի վերջերին Վանում ստեղծված «Սև խաչ», 1881 թվականին ձևավորված Կարինի «Պաշտպան հայրենյաց» և այլ կազմակերպությունները գաղափարապես հասունացրին նաև Մ. Փորթուգալյանին։ Ճիշտ է նկատել Ռ. Հովհաննիսյանը, որ «Պաշտպան հայրենյաց»-ով բացվում էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժման պատմության այն լուսավոր էջը, որի վրա խարսխված է. «Ձայնը հնչեց Էրզրումի հայոց լեռներեն»։ Իսկ այդ ձայնը պայքարի ու ազատության համընդհանուր մարտակոչն էր, սթափվող ժողովրդի արթնացումի և նրան հերոսացման մղող դարեր լռած ազդաշնիտրը»[54]։

Շատերի պես Մ. Փորթուգալյանին ևս զբաղեցնում էր ազգի ճակատագիրը։ «Արմենիա»-ի հրատարակությունը ապահովելու համար Մ. Փորթուգալյանը 1888 թվականի վերջերին ստեղծում է «Հայոց հայրենասերների միություն»-ը։ Թերթի շուրջը համախմբված մտավորականներն իրենց անվանում էին արմենականներ։ «Արմենիա»-ն, իհարկե, կուսակցություն չստեղծեց. նա նման առաջադիր խնդիր էլ չուներ։ «Արմենիա» անունով հեղափոխական կուսակցություն մ'ալ երբեք չենք կազմակերպած»,— 1906 թ. օգոստոսին՝ «Արմենիա»-ի 21-րդ տարեդարձին,— իրավամբ գրել է Մ. Փորթուգալյանը։ Արմենականությունը բուրժուական հոսանք էր, որն իր պրոպագանդայով, ազատագրական պայքարի կրակը բորբոքում էր հայերի սրտում, ձգտում «հայ ժողովրդի համար իրավունք ձեռք բերել, ինքզինք ազատորեն կառավարելու, որով միայն կարող լինի, իբրև մարդ ապրելու միջոցներ գտնել և զանոնք գործադրել ժամանակի պահանջմանց համեմատ»[55]։ Այդ ծրագրի իրականացման համար արմենականները, բացի թերթի էջերից արվող պրոպագանդայից (իսկ «Արմենիա»-ն, հրատարակ-

---

54 Ռ. Հովհաննիսյան. Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, էջ 333։

55 Տե՛ս Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 125—126։ Արմենականների ծրագրի «նպատակ» բաժինը։ Արմենականները տրոհվելով և առանձին քաղաքական խմբավորումների հետ միանալով գործում էին նոր անվան տակ, 1907 թվականին կոչվում էին «Գաղափարական միություն», 1908 թվականին՝ «Սահմանադրական ռամկավարներ», իսկ ավելի ուշ՝ ռամկավար ազատականներ։ Ռամկավարը «գաղութահայ բուրժուազիայի, ասել է թե տաճկահայ, ավելի ճիշտ արևմտարնակ հայ մեծատունի ներկայացուցիչն է» (Ալ. Մարտունի, Կուսակցությունները գաղութահայության մեջ, էջ 14—15)։

վելով արտասահմանում, ի տարբերություն մյուս հայ պարբերականների, ավելի բացահայտ և հանգամանորեն էր գրում Արևմտյան Հայաստանի, հայկական հուզումների մասին), աշխատում էին ժողովրդին արթնացնել, համախմբել հեղափոխական կազմակերպությունների մեջ, տարածել հայրենասիրական գրականություն: Ծնունդ առնելով արտասահմանում, արմենականությունը իր թևերը ձգեց Վասպուրականում՝ կենտրոնատեղի ունենալով Վանը: Այստեղ Մ. Ավետիսյանի (Մ. Թերլեմեզյան) ղեկավարությամբ արմենականները աշխատանք կատարեցին երիտասարդության շրջանում, կազմակերպեցին Վանի 1896 թվականի հուլիսյան ղինված ինքնապաշտպանությունը»[56]: «Հայոց հայրենասերների միությունը»՝ արմենականները հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին ունենալիք մասնակցությունը, ծրագրային դավանանքը հարց ու պատասխանի ձևով արտահայտել էին «Վարդապետարան Հայաստանի ազատության»[57] խորագրով գրքույկում: Ազատության հասնելու համար նրանք իրագործելի էին համարում բոլոր միջոցները՝ և՛ խաղաղ-դիվանագիտական, և՛ զինված ապստամբությունը: «Վարդապետարան»-ում ասված էր. «Հայաստանի ազատագրումը օտար լծից պետք է կատարի հայ ազգը, հայերի նշանաբանն է՝ ազատություն կամ մահ», «հաղթել նշանակում է թշնամու առաջ անվախ գնալ և մեռնելուց չսարսափել. հաղթվել նշանակում է պատերազմի դաշտում սրտի մեջ երկյուղ տածել: Անվախը (քաջը), վախկոտին միշտ կհաղթե...»[58]:

---

56 Որոշ նյութերի համաձայն արմենականները 1890 թվականին Վանում ունեցել են մինչև 100 անդամ և համակրող:

57 Վարդապետարան Հայաստանի ազատության, Մարսել, 1891, 1899 թթ.: Մարսելում հրատարակվել է նաև «Կանոնագրություն Հայոց հայրենասիրական միության» բրոշյուրը, 25 էջ. см. ЦГИАЛ. д. 1410, оп. 2, д. 225): «Վարդապետարան»-ը կազմել է Ռ. Պատկանյանը (1882): Ա. Գ. Հովհաննիսյանն իր «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրության մեջ գրել է. «Նշանակալի հանգամանք է, որ 1889 թ. Մ. Փորթուգալյանը, առանց հեղինակի անվան հիշատակումի, որոշ փոփոխություններով, առանձին տետրակով լույս ընծայեց Պատկանյանի այս «Վարդապետարան»-ը, նշմարելով դրա մեջ «Հայոց հայրենասիրական միություն» կոչված արմենական կազմակերպության կրեդոն» (տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, էջ 124):

58 Վարդապետարան Հայաստանի ազատության, Մարսել, 1891: Պրոֆ. Լևոն իր «Անցյալից», «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատություններում միակողմանի է լուսաբանել արմենականների գործունեությունը. ժխտելով նրանում եղած առաջադիմականը, անվերապահ հայտարարե-

Հետագայում արմենականները գաղափարական պայքարի մեջ էին ազգային կուսակցությունների՝ հնչակյանների ու դաշնակցականների հետ, քննադատում էին նրանց ծրագրերն ու գործողությունները։

Արմենականների գաղափարախոսությունը, որ իր արտահայտությունն էր գտել «Վարդապետարան»-ում Մ. Փորթուգալյանի և նրա համախոհների հոդվածներում, իր առաջադիմական տենդենցներով հանդերձ, բուրժուական էր և հետու հեղափոխական լինելուց։

«Հայկական հարցի» լուծման ուղիներ որոնելիս արմենականները միաբան չէին, ունեին տարաձայնություններ։ Նրանց մի մասն այն կարծիքին էր, թե թուրքական բռնապետությունից հայերի ազատագրումը հնարավոր է համաժողովրդական ապստամբության միջոցով, իսկ մյուս մասը՝ ելքը տեսնում էր միայն Եվրոպայի դիվանագիտական միջամտության մեջ։ Խորացող հակասությունները պատակաում են առաջացնում «Արմենիա»-ի խմբագրությունում։ Անջատվածների խումբը, որ հայ ժողովրդի ազատագրությունը կապում էր միջազգային դիվանագիտության հետ, ապավինում պաշտոնաթող Գլադստոնին, Կ. Հակոբյանի նախաձեռնությամբ, Լոնդոնում հիմնում է մի ընկերություն՝ Անգլո-հայկական կոմիտե, որը 1887 թվականի հոկտեմբերից հայերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակում է «Հայաստան» (L' Armenie) թերթը։ «Հայաստան»-ը հրատարակվում էր Ժան Բրուսալի, Միհրան Սվազլյանի և Ջեյմս Մալկոլմի խմբագրու-

---

լով նացիոնալիստական։ Նույն ձևով է մոտեցել Գ. Ղարաջյանը։ «Հնչակ»-ը ստեղծելու օրերին,— գրել է Գ. Ղարաջյանը,— գոյություն ուներ խղճուկ նացիոնալիստական «Արմենական» մի կուսակցություն, որի հիմնադիրն էր Մկրտիչ Փորթուգալյանը։ Դա բաղաքական հեղափոխական կուսակցություն չէր, այլ մարդկանց մի խայտարղետ խմբակցություն, որը տիրացուական «ազատասիրության» և բուրժուա-առևտրական ազգայնամոլության սահմաններից դուրս այլևս ոչինչ չէր ճանաչում» (Գ. Ղարաջյան, Հեղափոխականի հիշատակարանը. տե՛ս ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մարքսի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 51, գ. 90, թ. 37)։

Սուրյկիպիվ դիրքերից են գրված և արմենականների գործունեությունը դատապարտված նաև Արտակ Դարբինյանի «Հայ ազատագրական շարժման օրերին», Սարգիս Իզմիրյանի «Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին», Արմենակ Եկարյանի «Հուշեր Արմենակ Եկարյանի», Կարո Սարաֆյանի «Ակնարկ մը արմենական կուսակցության պատմության վրա» և ուիյուորում լույս տեսած մի քանի այլ գրքերն ու հոդվածները։

թյամբ[59]։ Նրանք աշխատանք ծավալեցին «Հայկական հարցի» պրոպագանդմամբ, առանձին պառլամենտների ուշադրությունը գրավելու և անգլիական «Կապույտ գրքի» նյութերը «Հայաստանի» միջոցով տարածելու ուղղությամբ։ Բայց միայն այդքանը։ Չէ՞ որ Հայաստանի ազատագրությունը խաղաղ դիվանագիտական ճանապարհով չէր լուծվի։ Արմենականների երկու թևերի («Արմենիա» և «Հայաստան») գաղափարական առանցքը, ըստ էության, մեկ էր՝ արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի կազմակերպումը, իսկ գործողության տակտիկան տարբեր։ Արմենականությունը, թեև կուսակցություն չդարձավ, բայց նրանցից անջատվածները, մասնավորապես Եվրոպայի քաղաքներում սովորող հայ երիտասարդների մի մասը, հետագայում նորաստեղծ ազգային կուսակցությունների մեջ մտան։

«Արմենիա»-ի էջերում գաղափարական մկրտություն ստացած Եվրոպայի հայ ուսանողների մի փոքրիկ խմբի կողմից, 1887 թվականի նոյեմբերին ժնևում լույս է ընծայվում «Հնչակ» թերթի առաջին համարը։ Այն տպագրության էին պատրաստել Ավետիս Նազարբեկյանը (Ավո), Մարո Վարդանյանը-Նազարբեկյանը (Մարո), Ռուբեն Խանզատյանը (Խան, Խան-Ազատ), Գաբրիել Կաֆյանը (Շմավոն), Գևորգ Ղարաջյանը (որը, «Հնչակ»-ի առաջին համարը լույս չտեսած, հեռանում է) և Քրիստափոր Օհանյանը։ Շուտով նրանց են միանում Սարգիս Աղամիրյանը (Սաքո) և Մկրտիչ Մանուչարյանը։ Թերթն իր անունն ընդօրինակել էր Ա. Գերցենի և Ն. Օգարևի «Колокол»-ից։ «Հնչակ»-ի շուրջը համախմբված մտավորականներն էլ հիմք դրեցին հնչակյան կուսակցությանը։ Հնչակյան կուսակցության հիմնադիրների մեծ մասը գտնվում էին նարոդնիկական գաղափարների ազդեցության տակ։ Այսպես, Ավետիս Նազարբեկյանը (Նազարբեկ), ոստիկանական հետապնդումներից խուսափելու համար նախքան արտասահման մեկնելը (1883), սովորում էր Պետերբուրգի համալսարանում և մոտիկից ծանոթ էր նարոդնիկությանը։ Արտասահմանում նա սերտ կապերի մեջ էր ռուս վտարանդիների՝ Պ. Լավրովի, Լ. Դեյչի, Պ. Ակսելրոդի և այլոց հետ։ Մարո Նազարբեկյանը Պետերբուրգի Բեստուժևյան կանանց բարձրագույն դասընթացներում նույնպես որդեգրվել էր նարոդնիկությանը, հրապուրվել

---

59 1889 թվականի նոյեմբերից Լոնդոնում ֆրանսերեն լեզվով սկսեց լույս տեսնել նաև Մինաս Չերազի «L' Arménie» թերթը։

Սոֆյա Պերովսկայայի սխրանքներով։ Գևորգ Ղարաջյանը, ինչպես տեսանք, Անդրկովկասի հայ անդրանիկ նարոդնիկական խմբակի կազմակերպիչներից էր։ Նարոդնիկական հովերով էին տարված «Հնչակ»-ի մյուս հիմնադիր անդամները։

Հնչակյան կուսակցությունը «Հայկական հարցի», հայկական հուզումների (և ոչ թե հեղափոխության), հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ծնունդն էր։ «Հնչակ»-ի առաջին համարի նյութերում, մասնավորապես «Հրատարակության մասին» խմբագրականում, ընդհանուր գծերով, պարզաբանված էր նորաստեղծ կուսակցության դավանանքը։ «Երբ, որ տեսնում ենք ծանրացած Թուրքի անարգ շղթաներով, աշխարհիս մեկ անկյունում՝ մենակ ու որբացած հայ ժողովրդին[60] մասսան, ընդհանրությունը դարերի ընթացքում ողբում, ճնշվում, հարստահարվում, հալածվում, մի բուռն ցանկություն, մեկ անկեղծ միտք ծագում է մեր մեջ այդ ժամանակ, առաջացնել հայ ժողովրդի փրկության խնդիրը, փաստաբանել ու պաշտպանել այդ խնդիրը և պատերազմել այդ խնդրի համար»[61]։

Այնուհետև, Թերթը մատնացույց է անում այն ձևերն ու միջոցները, որոնց օգնությամբ արևմտահայ զանգվածները կարող են ջախջախել իրենց կաշկանդող շղթաները և ձեռք բերել քաղաքական անկախություն։ «Քաղաքական անկախությունը,— ասված է խմբագրականում,— հայ ժողովրդի համար պետք է համարվի լոկ այն անհրաժեշտ պայմաններից մեկը, որի իրագործումից

---

60 Այստեղ և հետագայում պահպանված են Թերթի լեզվա-ոճական առանձնահատկությունները։ Նկատի ունենալով, որ «Հնչակ»-ի առաջին համարից հաղվագյուտ օրինակ է պահպանվել (տե՛ս Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 49/113, գ. 565) և նրա բովանդակությունը գիտական շրջանառության մեջ չի դրվել, բազմածները բերում ենք ծավալուն։ Լեոն իր «Թուրքահայ հեղափոխության պաղափարաբանությունը» գրքում գրել է «Մեզ, տարաբախտաբար, չհաջողվեց գտնել «Հնչակ»-ի առաջին թիվը» (հատ. Ա, էջ 149)։

«Հնչակ»-ի այդ համարի նյութերը տեղ չեն գտել նույնիսկ «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության» եռահատոր պատմության մեջ։

Խ. Գուլանյանն իր «Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ» նշել է. «1885 թվականին (ծնեում հայ ուսանողները հիմնադրում են հնչակյանների պարտիան... «Հնչակ» Թերթը 1888 թվականի (?) իր առաջին համարում գրում էր» (էջ 344—345) և այլն։ Դրանք փաստական անճշտություններ են, որոնցից, դժբախտաբար, զերծ չէ այդ մենագրությունը։

61 «Հնչակ», № 1, նոյեմբեր, 1887, ծնեւ։

հետո միայն բացվում է ասպարեզ հայ ժողովրդի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի մեջ մտցնելու համար մի երկայն շարք հիմնավոր արմատական վերանորոգումներ»: Քաղաքական անկախության իրագործումից հետո, Թերթի կարծիքով, հայ ժողովուրդը պետք է ստեղծի այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք հնարավորություն կտան «ամենքը և յուրաքանչյուրն ազատ լինի, ամենքն իրար հավասար ու եղբայր ճանաչեն, որոնց գոյությամբ ճշմարիտ ուղի բացվի և հաստատ հիմք լինի ընդհանրության մտավոր, բարոյական ու ֆիզիկական լիակողմանի զարգացման համար»[62]: «Հնչակ»-ը արևմտահայության ծանր վիճակը բարելավելու ելքը տեսնում էր Թուրքական կառավարության դեմ ուղղված մասսայական շարժման, ստիպողական միջոցների, ապստամբական, հեղափոխական սպառնալիքների մեջ, որի կրողը «գլխավորապես հայ կրթված ու հասկացող դասակարգն է»[63]:

Թերթը, յուրաքանչյուր մտածող, ազնիվ, ժողովրդին սիրող հայի նշանաբանն ու գործունեությունը համարում էր. «Ժողովրդի մեջ, ժողովրդի հետ և ժողովրդի համար»[64]: Այս գաղափարով ոգեշնչված այն ազդարարում էր. «Թո՛ղ «Հնչակ»-ն անդադար հնչե և կոչե՝ եղբայրը եղբորը ձեռք տա, և թո՛ղ նրա հնչյունը թշնամու ականջին հասնե և նրանց դողացնե, թո՛ղ նա հնչե բացարձակ ու խիստ կերպով օտար տեղերից, և թո՛ղ նա հնչե թեպետ գաղանաբար, բայց միշտ արդար բարբառով, նույնիսկ հայրենի երկրում, մինչև որ հայ ժողովրդի վրա տիրած խավարը վառ արշալույսի տեղի կտա»[65]: Նույնպիսի բովանդակությամբ էին հագեցված «Թուրքահայի ներկան և ի՞նչ է հարկավոր անել», «Հայոց կյանքը», «Քաղաքական ձերբակալություններ Թուրքահայաստանում» և այլ հոդվածները: Նկարագրելով արևմտահայ զանգվածների ծանր ու թշվառ վիճակը, «Հնչակ»-ը պարզաբանում էր. «Մենք պետք է բարձրացնենք Թուրքահայ մասսայի ընկճված ոգին, բացենք նրա աչքերը, ցույց տանք նրա ճամբան և լիննենք նրա ուղեկիցը հեղափոխական ապստամբական շարժումներում, հանուն ժողովրդի կյանքի ապագա ապահովության և

---

62 «Հնչակ», № 1, նոյեմբեր, 1887, ժնև:

63 Նույն տեղում:

64 Նույն տեղում:

65 Նույն տեղում:

ինքնուրույնության, առանց ինչի ներկայումս անհնարին ու ցնորական է մտածել ժողովրդի որևէ առաջադիմության վրա... Պատմական իրողություններն արդարացնում են այն խոսքը, թե՝ ո՞վ չի կարող պատերազմով ձեռք բերել ազատություն, նա անարժան է դրան...»[66]:

Մնունդ առնելով Ժնևում, «Հնչակ»-ը չնկատեց այնտեղ հընդամյա հասակ առած, ժամ առ ժամ առնականացող Գ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» հեղափոխական-մարքսիստական խմբի բեղմնավոր գործունեությունը, այլ ապավինեց նարոդնիկական, իդեալիստական զինանոցին: Այստեղից էլ սկիզբ առավ և խորացավ քաղաքական այն ուղեգիծը, որի ընթացքում հնչակյանները լասալական անարխիստական, նարոդնիկական գաղափարական խառնուրդը ներմուծելով մի ընդհանուր կաթսայում, փորձում էին աշխատավոր զանգվածներին՝ բանվորներին, գյուղացիներին մատուցել որպես մարքսիզմ:

Քանի որ հնչակի մոտավոր նպատակը Արևմտահայաստանի ազատագրումն էր («հայ ազգային անկախությունը»[67]), ուստի նա լիովին նվիրվեց դրան՝ այն համարելով ամբողջ հայ ժողովրդի առաջին և կենսական խնդիրը[68], միաժամանակ, իբրև մանրբուրժուական հոսանք, երիտասարդ ժամանակ ներարկվելով «սոցիալիստական գույնով»:

«Հնչակ»-ի հեղափոխական գործունեության ասպարեզն է Թուրքահայաստանը»[69],— ասված է ծրագրում: Հետևապես նա իր առաջին կազմակերպություններն ու կոմիտեները ստեղծեց Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում (Կ. Պոլիս, Վան, Էրզրում, Տրապիզոն, Մարաշ, Խարբերդ, Սեբաստիա և այլն), հայկական սիյուրքում և ապա Կովկասում ու Ռուսաստանի հայաշատ վայրերում: Սկզբնական շրջանում հիմնադիր խումբը բավարարվում էր «Հնչակ»-ը և նրա հրատարակությունները անվճար տարբեր հասցեներով ուղարկելով: Իսկ հետո՝ Ռ. Խան-Ազատը, Գ. Կաֆյանը և Մ. Մանուչարյանը Ժնևից մեկնեցին Արևմտյան Հայաստան, Խաչատուր Կերեքջյանի, Հակոբ Մեղավորյանի, Արփիար

---

66 «Հնչակ», № 1, նոյեմբեր, 1887, Ժնև, տե՛ս «Թուրքահայի ներկան և ի՞նչ է հարկավոր անել» հոդվածը:

67 Տե՛ս «Ծրագիր հնչակյան կուսակցության», 1897, Լոնդոն, էջ 9:

68 Տե՛ս «Հնչակ», № 5, 30 հուլիսի, 1900: «Հայությունն և հայկական խնդիր» հոդվածը:

69 Տե՛ս «Ծրագիր հնչակյան կուսակցության», էջ 9:

Արփիարյանի և այլոց հետ միասին հիմք դրեցին հնչակյան դաղտնի կոմիտեներին, ոգեշնչեցին առաջին հայդուկներին, կազմակերպեցին Էրզրումի 1890 թվականի հունիսյան և Կ. Պոլսի՝ Գում-Գափուի հուլիսյան ցույցերը[70]։

Արագորեն աճում էին հնչակյան կազմակերպությունները։ Հնչակյան դառնալու համար, խաչի և ավետարանի վրա երդվում էին հայ արհեստավորն ու քահանան, գյուղացին ու ծառայողը, առևտրականն ու ուսանողը, խանութպանն ու մարաբան, բոլոր նրանք, ովքեր առանց դասակարգային տարբերության պարտավորվում էին նվիրվել «Հայկական հարցի» լուծմանը, «Երկրի փրկությանը»[71]։ «Հնչակ», «Գաղափար» և այլ պարբերականներն ամենուրեք փողհարում էին հնչակյան ազգայնական, մանրբուրժուական գաղափարախոսությունը, որը ձևակերպված էր «Նոր հոսանք» (1889), «Ծրագիր հնչակյան կուսակցության» (1888—1897) և այլ գրքույկներում, Ա. Նաղարբեկյանի մենագրություններում։ Թոթովախոս հնչակը, դեգերելով իրենից շուրջ քսան տարի առաջ ռուս նարոդնիկների արտահայտած մտքերի բաղխվներում, մե՛րթ անդիտանում էր կապիտալիզմի զարգացումը, հայտարարելով. «Հայ գյուղական համայնքները ստանում են լայն, ընդարձակ ծավալ և դրանով նմանապես ավելի ընդարձակ կերպով տանում հայ ժողովրդի կարգերը սոցիալիզմի հանդեպ»[72], իսկ մերթ ղգալով, որ անզոր է դիմակայել կապիտալիզմի զարգացմանը, հայ ժողովրդին նախազգուշացնում էր հեռու մնալ կապիտալիզմի ախտերից, «...առաջն առնել Հայաստանում այդ ախտերի մուտք գործելուն, որ ստեղծելով երկրում հազարավոր, միլիոնավոր բանվոր-աղքատներ, պրոլետարիատ դասակարգ, կհանձնեն դրանց շնչին փոքրամասնություն կազմող առանձնաշնորհված, կապիտալիստ դասակարգի անզուսպ կամայականության, կդարձնեն նրան մահու ճիրանների զոհ, որի ոսկորներից կազմած ահագին արյունաթաթախ աշտարակի վրա կծածանվի կապիտալիզմի

---

70 Լեո, Թուրքահայ հեղափոխության դաղափարաբանությունը, հատ. Ա, էջ 152։

71 Կարճ ժամանակաշրջանում հնչակը հիմնեց ավելի քան 250 ֆիլիալ, այդ թվում Թուրքիայում՝ 114, ԱՄՆ-ում՝ 86, Կովկասում՝ 36, Պարսկաստանում՝ 15, Եվրոպայում՝ 4 և այլն (տե՛ս ՍՄԿԿ-ին կից Մ.Լ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 45, ղ. 13, թ. 18)։

72 «Նոր հոսանք», էջ 12, 1889։

անիծված դրոշակը»[73]։ Հնչակն ափսոսում էր նահապետական կարգի անկումը, ժխտում կապիտալիստական հարաբերությունների պրոգրեսիվ նշանակությունը, քարոզում սոցիալիզմ առանց պրոլետարիատի։ Դա նարոդնիկական վերապրուկ էր, որ տեղ էր գտել Հնչակի հայացքներում։ Հնչակյան ծրագիրը, տարբեր ժամանակներում որոշ փոփոխությունների ենթարկվելով, շարունակ պահպանում էր նարոդնիկական խանձարուրը և իբրև մինիմում նպատակ նախատեսում. «հավատարիմ մնալ հայ ժողովրդի պատմական ձգտումներին ու դատին», «...կռիվ մղել՝ միապետական կարգերը տապալելու համար և նրանց փոխարինելու հանրային սահմանադրական կարգերով»[74]։ Դրան հասնելու ելքը Հնչակյանները տեսնում էին տեռորիստական գործողությունների ծավալման, ապստամբությունների հրահրման մեջ։ «Տեռորիստական գործողությունները, իբրև պատժիչ թուրք բռնավորներին,— ասված է ծրագրում,— որպես և լրտեսներին, մատնիչներին, դավաճաններին։ Տեռորը պետք է լինի հեղափոխական կազմակերպության ինքնապաշտպանության միջոց և հասարակությանը բռնավորների ու վատերի գործերից պաշտպանելու համար մի զենք»[75] և այլն։

Հնչակյան կուսակցության ծրագիրը տնտեսական բնագավառում նախատեսում էր.

1. Հարկային ներկա սիստեմի վերացումն ու հաստատումը հարկային առաջադիմող սիստեմի՝ որոշ չափի կարողությունից վեր։

2. Անուղղակի հարկի իսպառ ոչնչացում։

3. Գյուղացուն ազատել ամեն տեսակ պարտքերից։

4. Համայնքի կամ կառավարության օժանդակությամբ ներմուծել հողի մշակության մեքենայական սիստեմ, ըստ որում՝ այդ մեքենաները դարձնել սեփականություն համայնքի։

5. Կազմություն համայնական հողագործական ընկերության, որի նպատակը պետք է լինի հողագործական արդյունքների վաճառահանելը և սերմ, հունդ, պարարտանյութ և այլն գնումն ու մատակարարումը։

---

73 Նույն տեղում, էջ 23։

74 «Ծրագիր հնչակյան կուսակցության», 3 հրատ. հանդերձ մեկնություններով, Լոնդոն, 1897, էջ 5։

75 Նույն տեղում, էջ 10։

6. Հաղորդակցության ամեն միջոցների հասանելիություն։

7. Աշխատանքը շահագործության դեմ հովանավորող օրենքները, կառավարական օժանդակություն և այլն»։

Դժվար չէ նկատել, որ սրանք այն հանրահայտ պահանջներն են, որ դրվում էին բուրժուա-դեմոկրատական և նույնիսկ բուրժուական հեղափոխությունների ժամանակ։

Եթե Հնչակի մինիմում ծրագիրը թաթախված էր մանրբուրժուական, նարոդնիկական, ազգասիրական և ուստ հայրենասիրական գաղափարներով, ապա մաքսիմում ծրագիրը ճամարտակում էր սոցիալիզմի անունից, համեմվում լասալի, մանրբուրժուական սոցիալիստների հնացած դատողություններով։ Հնչակի խայտաբղետ կազմը, տարընթացությունը, էկլեկտիկ քաղաքականությունը իր կնիքն էր դրել նրա գաղափարախոսության և ողջ գործունեության վրա։ Դեռևս 1896 թվականին Լոնդոնում գումարված առաջին համագումարում ներկուսակցական հակասություններն այն աստիճան խորացան, որ կազմակերպությունը կոտորակվեց, նրանից անջատվեց ազգայնականների մի մեծ խումբ, որն իրեն անվանում էր «վերակազմյալ Հնչակյան»։ Վերջիններս, ավելի ուշ, միանալով արմենականներին, ձևավորեցին սահմանադրական-ռամկավարական կուսակցությունը։ Թուրքիայի Հնչակյան ֆիլիալների պատգամավորությունը, որ առաջին համագումարում գրեթե մեծամասնություն էր կազմում, Մ. Տամադյանի, Ս. Արփիարյանի և այլոց ղեկավարությամբ, պահանջում էին ծրագրից հանել «սոցիալիզմ» արտահայտությունը, Հնչակը կոչել «Հայկական ազգայնական կուսակցություն», պատճառաբանելով, որ, նախ՝ եվրոպական կառավարությունները թշնամաբար են վերաբերվում սոցիալիստական կուսակցություններին և, երկրորդ՝ Հնչակն իր բախտը կապելով սոցիալիզմին և գործելով այդ ուղղությամբ, դրանով իսկ լիովին վերացնում է «Հայկական հարցը»։ Թեև սա նոր երանգ չէր Հնչակյանների կյանքում, այն դրսևորվել է նրա ծագման առաջին իսկ օրերից, բայց գնալով ավելի խորացավ։ Առաջին համագումարում Հնչակը բաժանվեց երկու թևերի՝ կովկասյան կազմակերպություններն առանձին, որոնք 1903 թվականից իրենց կոչեցին սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կազմակերպություն, իսկ Թուրքիայի և եվրոպական կազմակերպությունները՝ «վերակազմյալ Հնչակյան»։ Հետագայում պայքարն ավելի սրվեց։ Դժվար չէ նկատել նաև, որ հեռավոր հորիզոններում փայփայած Հնչակյան սոցիալիզմը ոչ միայն «Հայկական

հարցի» սպասարկուն էր, այլ մանրբուրժուական պատրանքների իրականացման հուսաբերը։ Իսկ պատմությունից հայտնի է, որ մանրբուրժուական սոցիալիզմը ձգտում է «կամ վերականգնել արտադրության ու փոխանակության հին միջոցները, իսկ դրանց հետ միասին նաև սեփականության հին հարաբերությունները ու հին հասարակությունը, կա՛մ ձգտում է արտադրության ու փոխանակության ժամանակակից միջոցները բռնությամբ դարձյալ խցկել սեփականատիրական հին հարաբերությունների շրջանակների մեջ, հարաբերություններ, որ նրանք արդեն պայթեցրել են և որոնք անհրաժեշտորեն պետք է պայթեցվեին։ Երկու դեպքում էլ նա միաժամանակ և՛ ռեակցիոն է, և՛ ուտոպիական»[76]։

Հնչակյան կուսակցությունը, որը սոցիալիզմի նկատմամբ իր հավատարմությունը հավաստում էր սոսկ հեղհեղուկ ֆրազներով, ընդհանուր ոչինչ չուներ գիտական սոցիալիզմի հետ։ Կուսակցության գաղափարախոսությունը որոշվում է ոչ թե նրա այս կամ այն ղեկավարի բարի ցանկությամբ, այլ նրա դասակարգային էությամբ, նրա ողջ գործունեությամբ։ Վ. Ի. Լենինը, դեռևս 1905 թվականին, իր «Նարոդնիկությունից դեպի մարքսիզմ» հոդվածում գրել է. «Սոցիալիստ լինելու բարի դիտավորությունները չեն բացառում կուսակցության բուրժուա-դեմոկրատական էությունը»[77]։

Հնչակյան գաղափարաբանության խառնաշփոթությունը՝ նացիոնալիզմը մարքսիզմի դրոշով քողարկելու արդյունք է։ Հնչակին երբեք չի հաջողվել թաքցնել իր իսկական դեմքը։ Նրա հիմնադիրներից Ավետիս Նազարբեկյանը, որն իրեն անվանում էր մարքսիստ, դեռևս 1895 թվականին «Նոյն ցայտ» թերթում հրապարակած «Հայկական հարցը և սոցիալիզմը» հոդվածում գրել է. «Հընչակը նացիոնալիստական կուսակցություն է», «ազգի քաղաքական և սոցիալական ձգտումների ներկայացուցիչը», որի խնդիրն, ամենից առաջ, Հայաստանի ազգային անկախության համար պայքարելն է[78]։ 1905 թվականի փետրվարին, բոլշևիկյան «Վպեր-

---

76 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, էջ 67։

77 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 89։

78 «Նոյն ցայտ» 1895—1896, հատ. 2, № 41, էջ 498—501։ Այդ օրերին «Նոյն ցայտ»-ում լույս տեսավ նաև «Կապիտալիզմը և հայկական հեղափոխությունը» առաջնորդողը, որի մեջ հեղինակը բանավիճում էր Ավ. Նազարբեկյանի արծարծած մտքերի հետ, նշում, որ նրա մի շարք դրույթները պարունակում են անճշտություններ և չափազանցություններ։ Բայց հայկական իրականության թյուր

յոդ» թերթում հրապարակած «Հնչակյանների նոր օրգանը» հոդվածում Ստ. Շահումյանը պարզաբանում էր, որ Հնչակը «չնայած իր հնուց սոցիալիստական «պիտակին», և իր գրական առաջնորդների բարի կամքին, եղել է և մնում է մինչև այժմ ընդհանուր առմամբ նացիոնալիստական կուսակցություն»[79]։ Իրեն սոցիալիստական համարող Հնչակը դեմ էր դուրս գալիս արևելահայության հեղափոխական-դասակարգային պայքարին, պատճառաբանելով, որ այն խանգարում է արևմտահայ ազատագրական գործին, տարածում այն սին պատրանքները, որ իբր թե դարասկզբին մարդկության մեջ գոյություն ունեին միմիայն ազգայնական կազմակերպություններ[80]։ Չըմբռնելով պատմության դիալեկտիկան, Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժումների առանձնահատկությունները, Հնչակը անօգուտ ջղաձգություններ էր անում կովկասահայերին համառուսական շարժումներից հեռու պահելու, դասակարգային պայքարը ազգային ընդվզումներով նենգափոխելու համար։ Քաղաքական կարճատեսությունը հասավ մինչև այն աստիճանի, որ 1902 թվականի հունիսին «Հնչակ»-ը գրեց. «...Ռուս սոցիալ-դեմոկրատիան մի վնասակար գործ է, որ կատարում է, հեռացնելով հայերին հանուն դասակարգային շահերի, այն միակ շարժումից, որին պետք է որ նվիրե իրեն հայը առանց դասակարգային կամ ուրիշ որևէ կարգի նկատմամբ...»[81]։ Ահա թե ինչպես էին դատում հնչակյան «մարքսիստները» ինքնակալության դեմ մղվող դասակարգային պայքարին հայ պրոլետարիատի և աշխատավոր զանգվածների ցուցաբերած մասնակցության մասին։

Հնչակյան կուսակցությունը 1903 թվականին վերանայեց իր քաղաքականությունը, որպեսզի Արևմտյան Հայաստանի հետ միասին «ձեռքից չգցի» նաև Արևելյան Հայաստանը։ Հենց այդ երերումները, սոցիալիզմի հնչակյան թոթովանքները, գաղափա-

---

ըմբռնման արդյունք էր նաև «Նոյն ցայտ»-ի եզրակացությունն այն մասին, որ իբրև թե «Հայաստանում սոցիալիստական գաղափարները տակավին անմատչելի են, պրոլետարիատը վտանգավոր հակառակորդ չէ հայկական բուրժուազիայի համար» և այլն։ (Տե՛ս «Նոյն ցայտ», № 42, 1895)։

79 Ստ. Շահումյան. Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 23։

80 Տե՛ս «Հնչակ», № 6, 5 նոյեմբերի, 1901, «Ժամանակն է» խմբագրականը։

81 Տե՛ս «Հնչակ», № 3, 1 հուլիսի, 1902, «Մայիսյան ցույցը Բաքվում» հոդվածը։

բական տարբերություններն էլ հիմք հանդիսացան հնչակյան կուսակցության շարքերի տրոհման համար։ Արդեն 1904 թվականին, Ստ. Շահումյանը «Երևանից (Հայ իրականությունից)» հոդվածում նշում էր, որ «Հնչակ»-ի մի քանի կազմակերպություններ համակրանք են տածում դեպի մեզ, սոցիալ-դեմոկրատներիս և տեղ-տեղ, ուր նրանք չեն վախենում բնակչության մեջ դրանով իրենց վարկը կորցնելուց, տարածում են մեր գրականությունը (մեր թերթերն ու բրոշյուրները)։ Հիրավի՞, այդ կուսակցության աջ ձեռքը չգիտե, թե ինչ է անում ձախ ձեռքը»[82]։

Բուլղարիայում հրատարակվող «Վերածնություն» թերթը, որին այն ժամանակ Բեռլինից աշխատակցում էր Ս. Կասյանը (Ս. Տեր-Գասպարյան), հնչակյաններին կոչ էր անում թողնել նացիոնալիստական տրադիցիաները և միանալ սոցիալ-դեմոկրատներին։ Իսկ 1905 թվականին «Վերածնությանը» հերթափոխի եկած «Ապագան», որը Ա. Նազարբեկյանի խմբագրությամբ հրատարակվում էր Փարիզում, ավելի խորացրեց այդ պահանջը, նպատակ ունենալով Կովկասի հայ բանվորության մեջ տարածել սոցիալ-դեմոկրատական պրոպագանդան։ «Ապագան» հավաստիացնում էր, որ «ինքն ամեն կերպ ձգտելու է հայկական սոցիալ-դեմոկրատական բոլոր ուժերը համախմբելու Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորների միասնական կուսակցության դրոշի ներքո»[83]։ «Ապագա»-ի երևան գալը Ստ. Շահումյանը համարում էր բանվորական շարժման մի նոր հաղթանակ և նոր նվաճում Կովկասում[84]։ Հենց այդ պրոպագանդայի և Կովկասում բոլշևիկյան կազմակերպությունների օրավուր բարձրացող հեղինակության շնորհիվ էր, որ Անդրկովկասում ռուսական առաջին հեղափոխության տարիներին հնչակյանների մի մասը մասնակցում էր բանվորական ցույցերին և ասիճանաբար ազատագրվելով նացիոնալիստական պատրանքներից, անցնում սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունների կողմը։

Հարազատ մնալով պատմականությանը, հարկավոր է նշել,

---

82 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 51։

83 «Ապագա», № 1, 1(14) հունվարի 1905։ Առաջին համարը լույս է տեսել Բուլղարիայի Ռուշչուկ քաղաքում, հետագա 6 համարները՝ Փարիզում։ «Ապագա»-ի մասին տե՛ս Ստ. Շահումյանի «Հնչակյանների նոր օրգանը» հոդվածը, որը լույս է տեսել բոլշևիկյան «Վպերյոդի» 1905 թվականի փետրվարի 21(8) համարում։ (Ստ. Շահումյան, Նամակներ, էջ 22—24)։

84 Տե՛ս Ստ. Շահումյան, Նամակներ, էջ 24։

որ ոչ մարքսիստական առանձին զրքույկների հայերեն թարգմանությունները, որոնց մասին խոսք կլինի իր տեղում, ո՛չ բանվորական մի քանի ցույցերին ունեցած մասնակցությունը, և ոչ է՛լ ռուսական առաջին հեղափոխության տարիներին կատարած որոշ էվոլյուցիան չփոխեցին հնչակյան կուսակցության սոցիալական բովանդակությունը, նրա տեսորիստական տակտիկան, և այն մընաց որպես մանրբուրժուական ազգայնական կազմակերպություն։ Այժմ տեսնենք ինչպես է առաջացել դաշնակցությունը։

Արևմտյան Հայաստանը թուրքական ծանր լծից ազատագրելու հարցը 1870—1880-ական թվականներին նոանդուն քննության է ենթարկվում հայ մտավորականության, մասնավորապես երիտասարդության կողմից։ Այդ ժամանակ նորից էր բարձրանում ազգային-ազատագրական շարժման ալիքը։ Կրկին ապստամբության դրոշ էին պարզել հերոս զեյթունցիները (1878—1879), որոնք զրեթե մեկ տարի խիզախաբար մարտնչում էին թուրք բռնադատիչների դեմ։ Զեյթունցիների օրինակով 1880-ական թվականներին ազատագրական պայքարի կրակը բորբոքվում է Սասունում, Վասպուրականում, Ալաշկերտում և Արևմտյան Հայաստանի այլ վայրերում։ Նրանց արձագանքում են կովկասահայ հասարակական-քաղաքական կազմակերպությունները, երիտասարդությունը։

Երկու տարի շարունակ (1889—1890) կովկասահայ քաղաքական տարբեր հոսանքների ու գաղտնի խմբակների ներկայացուցիչները, այդ թվում «Երիտասարդ Հայաստան» խմբակի[85] (Հ. Արզումյան, Մ. Շաթիրյան, Տ. Ստեփանյան, Ա. Թադևոսյան, Ա. Նազարեթյան), լիբերալ նարոդնիկության (Քր. Միքայելյան, Ս. Զավարյան, Ստ. Զորյան (Ռոստոմ), Աբ. Դաստակյան, հնչակյան

---

85 «Երիտասարդ Հայաստան»-ը կազմակերպվել է 1899 թվականին Թիֆլիսում։ Այն ձգտում էր բոլոր հեղափոխական կազմակերպությունները, անկախ նրանց գաղափարական տարաձայնություններից, միավորել՝ արևմտահայությանն ազատագրելու համար։ Թիֆլիսում այդ ժամանակ գործող այն ազգայնական նարոդնիկները և հեղափոխական գործիչները, որոնք հավաքվում էին «Յուժնին նոմերա» հյուրանոցի պանդոկը, իրենց հավաքների ընթացքում պարզաբանում հեղափոխական սկզբունքները, հյուրանոցի անունով կոչվեցին «հարավայիններ», իսկ «Սևերնին նոմերա» հյուրանոցի պանդոկում հավաքվողները, որ կանգնած էին նացիոնալիստական դիրքերի վրա, կոչվեցին, «հյուսիսայիններ»։ Դաշնակցության կազմավորմանը մասնակցեցին նաև այս խմբավորումները։ Տե՛ս Մ. Վարանդյան, Հ. Յ. դաշնակցության պատմություն, հատ. 1, 1932, էջ 59, Քր. Միքայելյան, Բնկորներ իմ հուշերից, «Հայրենիք», թիվ 10, 1924։

(Ռ. Խան-Ազատ, Հմ. Խուշպուլյան), մշակական (Ս. Մալումյան—Է. Ակնունի), ինչպես և բուրժուական այլ և այլ խմբավորումների գաղափարակիրները (Կ. Խատիսյան, Գ. Միրզոյան և այլք) Թիֆլիսում ժողովներ էին գումարում, ծրագրային հարցերի շուրջը բանավիճում, խնդիր ունենալով միավորվել՝ հանուն Արևմտահայաստանի ազատագրման՝ «Հայկական հարցի» լուծման: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հայ նարոդնիկությունը դիմաշրջվում է դեպի Արևմտյան Հայաստանը՝ գործունեության ասպարեզը դարձնելով Թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական վիլայեթները: Ի վերջո, դեյուրն միավորումը կայանում է: 1890 թվականի ամռանը Թիֆլիսում հրավիրված հիմնադիր ժողովում կազմակերպվում է «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը, որը առաջին համագումարի որոշմամբ (1892) վերանվանվում է «Հայ հեղափոխական դաշնակցություն» [86]:

---

86 Լեոն իր «Անցյալից» (Հուշեր, Դրվեր, դատումներ) աշխատության մեջ այդ առթիվ գրել է. «Այս երկու անուններն էլ «Դաշնակցություն», «Դրոշակ» թարգմանվում էին ժնևի հնչակյան մի ուսանողի առաջարկությամբ ռուսաց հեղափոխական իրականությունից: Ժնևում այդ ժամանակ կար «Союз русских революционеров» և այդ «союз»-ը թարգմանվում է «Դաշնակցություն»: Իսկ «Դրոշակ»-ը Ամերիկայում հրատարակվող ռուս հեղափոխական «Знамя» թերթի անունից էր վերցվում» (էջ 87):

Ժնևում այդ ժամանակ «Союз русских революционеров» չկար: Լեոն, հավանաբար, այն շփոթում է «Союз русских социал-демократов за границей»-ի հետ, որը 1894 թվականին Ժնևում հիմնվել է «Աշխատանքի ազատագրություն» խմբի կողմից: Այդ տարիներին ռուսերեն լեզվով «Знамя» պարբերական լույս չի տեսել: «Алфавитный служебный каталог русских дореволюционных газет (1703—1916)», Л., 1958. «Русская периодическая печать 1702—1894 гг.» (Москва, 1959, под редакцией А. Г. Дементова, А. В. Западова, М. С. Чернохова), «Русская периодическая печать 1703—1900 гг. (библиография и графическая таблицы)», составил и издал Н. М Лисовский (Петербург, 1915) և այլ գրքերում ոչ մի հիշատակություն չկա ռուսերեն «Знамя» որևէ պարբերականի այդ տարիների հրատարակության մասին: Ուստի «Դաշնակցություն» և «Դրոշակ» արտահայտությունների Լեոյի մեկնաբանությունները, մեր կարծիքով, համոզիչ չեն: Նշենք նաև, որ «союз»-ը հասարակական-քաղաքական կազմակերպությունների համար թարգմանվել է «Միություն» («Հարավային միություն» «Հյուսիսային միություն», «Բանվորների միջազգային միություն» և այլն), իսկ ռազմական պաշտպանական նշանակությամբ՝ «դաշն», «դաշինք», «դաշնակցություն», «զինակցություն»: «Հ. Յ. դաշնակցության... տեղական մարմինները որոշ անկախություն էին պահպանում,— գրել է Դ. Անանունը,— և դաշնակցում իրար հետ, որտեղից էլ ծագում էր դաշնակցական հորջորջումը» (Դ. Անանուն. Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870—1900), հատ. 2, Էջմիածին, 1922, էջ 223):

Հնչակի հիմնադիրներից Ռ. Խան-Ազատը և մյուս պատվիրակները թեև Թիֆլիսից մեկնեցին որպես դաշնակցականներ, Օդեսայում և այլուր աշխատանք ծավալեցին հանուն «Հայ հեղափոխականների դաշնակցության», բայց Հնչակի ծննդյան կենտրոնը մերժեց միավորման առաջարկը։ Հայ հեղափոխականների միավորումը փաստորեն տեղի չունեցավ, որի պատճառով էլ, շատ չանցած, 1892 թվականին, նորաստեղծ ազգային կուսակցությունը մկրտվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն» անունով։

1891 թվականի մայիսին դաշնակցությունը հիմք է դնում իր պաշտոնական տպագիր օրգանին՝ «Դրոշակ»-ին*, որի անունով էլ հաճախ այն կոչվում է «Դրոշակ»-ի կուսակցություն («դրոշակականներ»)։

Ստեղծվում է դաշնակցության առաջին ղեկավար կենտրոնը, որի կազմում էին Քր. Միքայելյանը, Ս. Զավարյանը, Աբ. Դաստակյանը, Հ. Լորիս-Մելիքյանը և Լ. Սարգսյանը։

Այնուհետև ձևավորվում են դաշնակցության եվրոպական, մերձավոր արևելյան և կովկասյան բյուրոները։

«Հայ հեղափոխականների դաշնակցությունը,— ասված է նրանց 1890 թվականի առաջին մանիֆեստում,—սրանով... դիմում է բոլոր հայերին և հրավիրում է կանգնել իր դրոշակի տակ... նպատակ դնելով Թուրքաց-Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատությունը, «Դաշնակցությունը» մտել է այն կռվի մեջ, որ սկսել է ինքը՝ ժողովուրդը տաճկաց կառավարության դեմ, ուխտելով մինչև արյան վերջին կաթիլը կռվել հայրենիքի ազատության համար...

— Ուրեմն, եղբայրնե՛ր, միանանք հանուն սուրբ գործի ընդհանուր թշնամու դեմ...

...Սպասելու ժամանակը չէ...

Համախմբվենք հայեր, և քաջությամբ առաջ տանենք հայրենիքի ազատության սուրբ գործը»[87]։

---

* Մինչև «Դրոշակ»-ի հրատարակությունը լույս են տեսել «Թռուցիկ թերթիկներից»։ «Դրոշակ»-ի առաջին համարում տպագրվել են «Մայիս, 1891 թ.» առաջնորդողը, «Ներսես պատրիարքի նախագիծը Տաճկա-Հայաստանի ազատագրության», «Արտաքին տեսություն», «Ներքին տեսություն», «Թղթակցություն Էրզրումից» նյութերը։

87 Քաղվածքը բերվում է ըստ Մ. Վարանդյանի «Հ. Յ. Դաշնակցության պատմություն» գրքի, հատ. 1, էջ 81։ Նույնը տե՛ս «Հայրենիք», № 2, դեկտեմբեր, 1934, էջ 88—89. «Հ. Յ. դաշնակցության մանիֆեստը»։

Պաթետիկ, նացիոնալիստական քարոզներով էր բացում իր գործունեությունը դաշնակցությունը։

Արևմտյան Հայաստանի ազատագրմամբ շահագրգռված էր ամբողջ հայ ժողովուրդը։ Իր գործունեության առաջին շրջանում դաշնակցությունը, ընդհարվելով արմենականների, հնչակյանների և հայ իրականության մեջ առաջացած բուրժուական ու մանրբուրժուական այլ հոսանքների հետ, ազգասիրական պրոպագանդայով, ապստամբական գործողություններով ջանում էր իր ձեռքը վերցնել ազատագրական շարժման ղեկավարությունը, հայ ժողովրդի ազատագրության հույսերը կապելով եվրոպական դիվանագիտության հետ։ «Ավետյաց հողերի» վրա «ազգային ազատություն» ձևոք բերելու, Թուրքիայի արևելյան վիլայեթներից ինքնավար հայկական բուրժուական պետություն ստեղծելու վերաբերյալ դաշնակցության ուղեգիծը նժարի ծայրը ժամանակավորապես թեքում է հօգուտ իրեն։

Հայ իրականության մեջ մինչև հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ծլարձակումը, դաշնակցությունն իր կնիքն է դնում քաղաքական կյանքի և հասարակական մտքի վրա։ Դաշնակցությունը, որ ձևավորվել էր նարոդնիկական և բուրժուական զանազան խմբակցություններից, իբրև խայտաբղետ մի կազմակերպություն, իր էվոլյուցիայի ընթացքում դարձավ հայ բուրժուազիայի հանձնակատարը և հրապուրվելով եվրոպական դիվանագիտության կեղծ խոստումներով, ազգային-ազատագրական շարժումը տարավ սխալ ճանապարհով։

Եթե դաշնակցության քաղաքական պահանջները հանգեցնում էին Անդրկովկասի համար բուրժուական ֆեդերացիայի, իսկ Արևմտյան Հայաստանի՝ ինքնավարության լոզունգի փայփայմանը, ապա տնտեսական մասում սոցիալիստական ֆրազեոլոգիայով պարուրված էր՝ հողերի և բնական հարստությունների համայնացման, գյուղական համայնքի պահման էսեռական պահանջները։

Դաշնակցությունը, առաջադիր խնդիր ունենալով սուլթանական լծից ազատագրել արևմտահայերին, քաղաքական պայքարը նույնացնում էր քաղաքական դավադրության հետ։ Որդեգրելով նարոդնիկների տեռորիստական տակտիկան և այն հարմարեցնելով Արևմտահայաստանի ազատագրության շահերին, դաշնակցությունը «Հայկական հարցի» լուծման ելքը որոնում էր դիվանագիտական ոլորտներում, արևմտյան իմպերիալիստական տերու-

թյունների աջակցությունը ստանալու համար դիմում վինված արկածախնդիր ելույթների։ Հենց դա էլ արևմտահայերի ձգտումը քաղաքական ազատագրություն ձեռք բերելու մասին ոչ միայն չիրականացրեց, այլ ի դերև արեց՝ արյունաքամ անելով հայ ժողովրդի ուժերը։

«Իհարկե, դաշնակցությունը մեղավոր չէ, որ հայ ժողովրդի պատմական վիճակը այդքան անադորուն է,— գրել է Ստ. Շահումյանը,— ոչ մի կուսակցություն չի կարող դժոխքը դրախտ դարձնել։ Բայց կուսակցությունները ստեղծվում են հենց նրա համար, որ ըստ կարելույն լավացնեն ժողովրդի դրությունը, որ խելացի կերպով առաջնորդեն մասսաներին և տանեն նրանց ազատության նանապարհով»[88]։

Արևելահայ բուրժուազիան, իր գործունեությունը ծավալելով՝ և փարթամորեն աճելով ցարական անդզի հովանու տակ, երախտապարտ էր ռուսական կառավարությանը, իսկ քաղաքականության ասպարեզում՝ լոյալ։ Բայց դա միայն այն ժամանակ էր, երբ օրավուր աճում էր նրա կապիտալը, հայ բանվորների և աշխատավոր զանգվածների ուշադրությունը դասակարգային պայքարից շեղված էր դեպի միայն «Հայկական հարցը», հայկական ինքնավար պետություն ստեղծելու պատրանքների իրականացումը։

Բայց դասակարգային պայքարի ամենափոքր խզումը, առաջին զողանջը բավական եղավ, որպեսզի հայ բուրժուազիան գրկախառնվի դաշնակցության հետ, իսկ դաշնակցությունը խլացնի բանվորների բողոքի ձայնը, բարձրացնի իր «հայրենասիրական» բղավոցը, թե՝ բոլոր հայերը եղբայրներ են, թե հայերի մեջ չպետք է լինի դասակարգային պայքար, որովհետև նրանք ունեն ընդհանուր ազգային թշնամիներ և ընդհանուր ազգային իդեալ, թե հայերի հայրենիքը Թուրքահայաստանն է, թե կռվել ռուսական կառավարության դեմ՝ նշանակում է դավաճանել ազգային գործին և այլն[89]։ Հայ պրոլետարիատի և աշխատավոր զանգվածների դասակարգային պայքարի թևակոխմամբ դաշնակցությունը անցնում է բուրժուազիայի դիրքերը, ազգային ներքին կյանքում, ինչպես ճիշտ կերպով նկատել է Աշոտ Հովհաննիսյանը, ընդհանուր ճակատ է կազմում խոշոր բուրժուազիայի հետ և

---

88 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 408։

89 Տե՛ս Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 283։

կատաղի պայքար մղում «ազգի» հասարակական-քաղաքական շերտավորման դեմ, ատելիանալով մանր բուրժուազիայի շահերը, թեև երկար ժամանակ կովկասահայ մանրբուրժուական դեմոկրատիան գերի է մնում քաղաքական հատակ գիտակցությունից զուրկ իր «կույր առաջնորդներին»[90]*: Իսկ մանր բուրժուազիան, որի անցյալը և նախապաշարմունքը (ըստ Կ. Մարքսի հայտնի արտահայտության) քաշում է դեպի բուրժուազիան, հավատարիմ իր բնույթին, չէր կարող չխաբվել, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, չէր կարող անտեսապես ինքնուրույն «գիծ» ունենալ, նրա կյանքի պայմաններն այնպես են, որ նա ակամա և անխուսափելիորեն հակվում էր մե՛րթ դեպի բուրժուազիան, մե՛րթ դեպի պրոլետարիատը: Առանձին հարցերում հայ խոշոր ու մանր բուրժուազիայի շահերի զուգադիպությունը և ժամանակավոր համերաշխությունը մերձեցնում էր նրանց, մոլորեցնում հայ աշխատավոր զանգվածներին, դժվարացնում պայքարը, որի պատճառով էլ հայ բանվորների ու գյուղացիների անգիտակից խավերի զգալի մասը մինչև 1917 թվականը ընթանում էր դաշնակցության հետևից, չէր կարողանում հաղթահարել մանրբուրժուական պատրանքները և կանգնել հեղափոխական մարքսիզմի դրոշի տակ*[91]*:*

---

90 *Տե՛ս* Աշոտ Հովհաննիսյան, *Դաշնակցության սոցիալական ծագումը, «Նորք», գիրք 1, 1927, էջ 165։ Դաշնակցության մասին տե՛ս նաև* А. Иоаннисян, О партии дашнакцутюн. Тезисы нашей тактики на борьбе против партии дашнакцутюн. См. Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 13, оп. 1, ч. II, д. 2323, лл. 1—31. А. Каринян, К характеристике армянских националистических течений. «Большевик Закавказья», № 2, *էջ* 45—60, № 7, 8, *էջ* 62—80, № 9—10, *էջ* 53—76, 1929.

91 *Դաշնակցության սոցիալական բնույթի գնահատման շուրջը մինչև այժմ էլ պատմագիտության մեջ շարունակվում է բանավեճը։ «Դաշնակցությունը բուրժուա-նացիոնալիստական կուսակցություն է» հանրաճանաչ բնութագրության կողքին առանձին հեղինակների կողմից պաշտպանվում է «դաշնակցությունը մանրբուրժուական կուսակցություն է» թեզը։*

Աշոտ Հովհաննիսյանն իր մի շարք աշխատություններում («Դաշնակցության սոցիալական ծագումը», «Դաշնակցության առիթով» և այլն) հենվելով Վ. Ի. Լենինի և նրա գինակիցների՝ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և այլոց աշխատությունների վրա, ուսումնասիրելով արևելահայերի հասարակական զարգացման պատմական պրոցեսը, ցույց է տվել, որ դաշնակցությունը ձևավորվել է որպես մանրբուրժուական կուսակցություն, որը հետագայում վերասերվել և դարձել է բուրժուական ռեակցիոն կուսակցություն։ «Партия дашнакцутюн,— 1927 г. писал А. Иоаннисян,— как партия мелкобуржуазная, завершила 35-летний диалектический путь своего развития. От позиций защиты мел-

Հայ հասարակական զարգացման հետագա ընթացքը վերջնականապես պսակազերծեց դաշնակցությանը, ցույց տվեց «Հայրենիքի փրկիչների» իսկական կերպարանքը, որի շնորհիվ էլ նրա

кой буржуазии против феодально-помещичьего самодержавия и промышленно-самодержавия, промышленной капиталистической буржуазии через противоречивый круг национально-революционного движения мелкой буржуазии в рамках буржуазно-националистической ограниченности, за осуществление идеалов национальной «свободы» и «независимости», она перешла на позицию защиты буржуазной собственности и буржуазно-национальной государственности против диктатуры пролетариата и против коммунистической партии, руководящей этой диктатурой» (А. Иоаннисян, О партии дашнакцутюн. См. Архив Грузинского филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 13, оп. 1, часть 1, д. 2323, л. 17—18).

«Դաշնակցությունը մանրբուրժուական նացիոնալիզմի տիպական հոսանքներից տիպականն է,— գրել է Ս. Խանոյանը,— անսկզբունք, անղեկ, ամեն անպետքության սուրոգատ, աղմկարար, պարծենկոտ (С. Ханоян, 25 лет борьбы за социализм, изд. под ред. М. Орахелашвили, М. Окуджава, С. Токаева, С. Касьяна и А. Эссена, Тифлис, 1923, стр. 235.

Գ. Հարությունյանը և Օ. Պոսելյանինան Ս. Աղայանի «Մեծ հոկտեմբերը և Հայաստանի աշխատավորության պայքարը Սովետական իշխանության հաղթանակի համար» գրքի առթիվ գրած գրախոսականում, բանավիճելով հեղինակի հետ գրել են. «В книге не совсем правильно определена социальная сущность партии «Дашнакцутюн», как буржуазно-помещичьего. На самом деле, это была мелкобуржуазная партия» (см. «Вопросы истории», № 9, 1963, стр. 106--108).

Ս. Պ. Աղայանի գրքի բովանդակությանը ծանոթ լինելու արդյունք է հավանաբար «История СССР» *հանդեսի 1964 թվականի № 6-ում տպագրված հետևյալ տողերը.* «Рассматривая социальную базу армянских дашнаков, Ц. П. Агаян характеризует их не как буржуазно-помещичью партию (так утверждали некоторые авторы раньше), а как мелкобуржуазную партию, с которой армянские большевики на отдельных этапах находили возможным вести переговоры. Автор показал и процесс эволюции дашнаков в сторону буржуазной контрреволюции и сотрудничества с западным империализмом (см. И. Н. Владимирцев, Обзор литературы по истории советского общества за 1962—1963 гг. см. История СССР, № 6, 1964,, стр. 134).

«ՍՍՀՄ պատմության» 2-րդ հատորում ասված է. «Происходит оформление армянских мелкобуржуазных националистических партий «Гичак» («Колокол») по имени его печатного органа и «Дашнакцутюн» («Союз»), см. «История СССР», том II, 1861—1917 гг. период капитализма, изд. 2, перераб. изданием «Мысль», М., 1965, стр. 255.

Դաշնակցությունը մանրբուրժուական կուսակցություն են որակել նաև Ա. Համբարյանը, Ռ. Հովհաննիսյանը, Լ. Խուրշուդյանը և ուրիշներ (տե՛ս Ա. Համբարյան, *Ազգրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965, էջ 267,* Ռ. Հովհաննիսյան, *Արևմտահայ ազգային ազատագրական շար-*

հետևից ժամանակավորապես ընթացող մոլորվածները երես դարձրին և հեռացան նրանից [92]։

Հայ իրականության «խավարի թագավորության» մեջ մարքսիզմի առաջին կայծերի թափանցմանը խթանեցին հեղափոխական տրամադրությամբ հագված ուսանողները։

Դեռևս անցյալ դարի 50-ական թվականներից սկսած Ռուսաստանի և արտասահմանյան երկրների բարձրագույն դպրոցներում սովորող հայ ուսանողներն ու ուսանողուհիները ակտիվ գործունեություն են ծավալում գրական, հայրենակցական և քաղաքական զանազան խմբակներում։ 60-ական թվականներին հայ ուսանողական կյանքի աշխույժը Դորպատից անցնում է Մոսկ-

---

ժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 9, Լ. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, դոկտորական դիսերտացիա, մեքենագիր, Երևան, 1966 և ուրիշներ)։

Ա. Վ. Պյասկովսկին իր «1905—1907 թթ. հեղափոխությունը Ռուսաստանում» աշխատության մեջ նույնպես դաշնակցությունը որակում է որպես մանրբուրժուական-նացիոնալիստական կուսակցություն, որը շատ մոտ էր էսեռներին. см. А. В. Пясковский, Революция 1905—1907 гг. в России, М., 1966, стр. 174—179.

Ա. Պյասկովսկին, դաշնակցությանը և հնչակին նվիրված բաժիններում, հավանարար խոր ծանոթ չլինելով հայկական իրականությանը, թույլ է տվել անճշտություններ և սխալներ։ Այսպես, նա գրել է. «Ее (խոսքը դաշնակցության մասին է — Խ. Բ.) основным программным требованием была борьба за объединение трех разорванных частей Армении (русской, турецкой и персидской), в одно независимое государство... Эта партия объединяла в своих рядах не только городскую мелкую буржуазию, широкие слои интеллигенции, крестьянства и рабочего класса, но и некоторую часть армянской буржуазии и даже люмпенпролетариате... Преимущественно из люмпен-пролетарских, босяцких, хулиганских элементов городская и деревенская буржуазия создавала дашнакские дружины «зинворов», которые занимались грабежом, защищали армянскую буржуазию во время армяно-мусульманской резни, а там, где чувствовали свое превосходство, и сами начали резню, срывали забастовки рабочих и батраков...» (стр. 178). Հենվելով դաշնակցության չափազանցրած տեղեկությունների վրա, հեղինակը անվերապահ ընդունում է, որ 1907 թվականին դաշնակցությունն ունեցել է 165 հազար անդամ, այդ թվում 23 հազար բանվոր (էջ 178)։ Մի բան, որ սխալ է։

Կոպիտ սխալներ կան հնչակի բնութագրմանը նվիրված էջերում։ Այսպես, նա գրում է. «В Закавказье он (гнчак) объявил себя социал-демократической партией и даже претендовал на роль единственного представителя армянского пролетариата» (стр. 181) и т. д.

[92] Դաշնակցության գործունեության և գաղափարախոսության քննադատությունը հանդամանորեն տրվելու է սույն մենագրության երկրորդ մասում։

վայի, Պետերբուրգի, Կազանի և Ռուսաստանի այլ քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատություններում գտնվող հայ երիտասարդության շրջանը։ Աստիճանաբար խամրում է ռուսահայ ուսանողության գաղափարական օրրանի՝ Դորպատի հայ երիտասարդության հմայքը։

1850—1860 թթ. ռուսահայ ուսանողության գաղափարական հանգրվանները գերազանցապես դառնում են Մոսկվայի և Պետերբուրգի բարձրագույն դպրոցները։ Հայ ուսանողական առաջին կազմակերպության ծնունդը կապված է Մոսկվայի համալսարանի և նրա սան Միքայել Նալբանդյանի անվան հետ։ 1858—1859 թվականներին ձևավորվում է Մոսկվայի հայ ուսանողների «Ժողովը», որը աստիճանաբար իր շրջանակները լայնացնում, դառնում է Ռուսաստանի բոլոր համալսարանական քաղաքների (Մոսկվա, Պետերբուրգ, Օդեսա, Կիև, Խարկով, Կազան, Դորպատ) հայ ուսանողների միությունը և գործեց շուրջ 50 տարի[93]։

Հայ ուսանողների «Ժողովը» կոչված էր սովորող երիտասարդության մեջ սեր առաջացնել դեպի հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, գրականությունը, օժանդակել չքավոր ուսանողներին, աջակցել արևմտահայերի ազատագրական պայքարին։ «Ժողով»-ի մասնակիցները համախոհ և միաբան չէին, գտնվում էին գաղափարական հակամարտությունների մեջ։

Պետերբուրգի հայ ուսանողների «Ժողով»-ի գործունեությունն աշխուժացավ 80—90-ական թվականներին։ Բացի գրական-գեղարվեստական, մշակութային և այլ աշխատանքից, «Ժողով»-ի անդամներն օգնում էին չքավոր ուսանողներին, խրախուսում Արևմտյան Հայաստանի ազգային-ազատագրական շարժումները, իրենց նյութական միջոցներից բաժին հանում արևմտահայ աշխատավոր զանգվածներին։ «Մշակ»-ի վկայությամբ, Պետերբուրգի բարձրագույն դպրոցներում միայն 1875 թվականին սովորում էր շուրջ 100 հայ, որոնք, բացի գրական-թատերական ելույթներից, հոդվածներ էին գրում հասարակական, գիտական-գրական թեմաներով[94]։

---

93 Տե՛ս Ստեսար (Ստեփան Սարգսյան), Պետերբուրգի հայ կազմակերպված մտավորականության հիսունամյակը, «Հորիզոն», № 280, 14 դեկտեմբերի, 1913։

94 Տե՛ս Նամակ Պետերբուրգից, 9 հունվարի (ստորագրությունը «Ն. Լ.»)։ «Մշակ», № 9, 25 հունվարի (6 փետրվարի) 1878 թ.։

Ռեֆերատներ էին կարդացվում պատմական, գեղարվեստական, մանկավարժական, բնագիտական, աշխարհագրական թեմաներով։ 80-ական թվականներին «Ժողով»-ի մասնակիցները հաջորդաբար հրատարակում են բուլղարական հեղափոխականների կյանքից առած թեմաներով պատմվածքներ։

Այն ժամանակ, երբ Գ. Արծրունին անհանգստացած քարոզում էր, թե Ռուսաստանում տարեցտարի «ավելի են սկսում տարածվել զանազան վնասակար և վտանգավոր երազական վարդապետություններ», «Կովկասի և Անդրկովկասի բնակիչների բնավորությանը նայելով մեզ բոլորովին խորթ են թվում ռուս սոցիալիստների և նիհիլիստների ցնորաբանությունները», որ «մեր երիտասարդությունն ընկնելով Մոսկվայի, Պետերբուրգի, Կիևի կամ Խարկովի ռուս շրջանները, շատ հեշտությամբ կարող են վարակվել սոցիալիստների անմիտ գաղափարներով»[95], այդ նույն ժամանակ առաջավոր մտավորականությունը հնչեցնում էր իր ձայնը, հավաստելով, թե ռուս ժողովրդի և նրա հեղափոխական գաղափարների հետ ունեցած կապերի, սոցիալիստական գաղափարախոսության մեջ է ժողովրդի ազատության գրավականը։ «Հայ ուսանողներն ունեն մոտիկ հարաբերություններ ընդհանուր ուսանողական շրջաններում,— բանավիճելով «Մշակ»-ի սխալ դիրքորոշման հետ, գրել է հայ ուսանողության կյանքին քաջատեղյակ «Մշակ»-ի թղթակիցը,— նրանք երբեք սահմանափակված չեն մի շրջանակով, նրանք ապրում են այն կյանքով, որը հատուկ է ուսանողության լավ մասին, նրանք ևս ոգևորվում են իդեական գաղափարներով, որոնք ռուս ուսանողության պարգևն են, այս ուսանողների մեջ է երևում ապագա կյանքի թարմ ուժերը, սրանց ազդեցության տակ համալսարանական ուսանողությունը քիչ-քիչ դուրս է գալիս իր նեղ սահմանափակ շրջանից, թեպետ նրանց վրա շատերը նայում են իբրև վտանգավոր մարդկանց վրա, չիմանալով, թե որպիսի մտավորական և բարոյական ուժ կա նրանց մեջ, չիմանալով, թե որքան խոր են հասկանում նրանք հասարակական պարտավորությունները ապագայում... Սրանով պետք է ուրախանա հայ հասարակությունը, այստեղից են դուրս գալու նրան նոր կյանքի հրավիրող ուժերը»[96]։ Ուսանողությունը բարձր

---

95 Գ. Ա., Համալսարանը հարկավոր է։ Տե՛ս «Մշակ», № 54, 18(30) ապրիլի, 1879 թ.։

96 Երկու խոսք հայ ուսանողության առթիվ։ Նամակ Մոսկվայից։ «Մշակ», № 8(20), դեկտեմբեր, 1879։

գաղափարների կրողն էր։ Այն կոչված էր «...զարգ, մարդ, ազնվացնող դեր կատարելու հասարակության մեջ»։ «Ուսանողությունը ժողովրդի հույսն է,—1894 թվականին գրել է «Մշակ»-ը,— ապագան, նրա պայծառ ու լուսատու ջահը»[97]։

Հայ ուսանողների «Ժողով»-ը, նարոդնիկական և հեղափոխական այլ դաղտնի խմբակներին հայ առաջավոր երիտասարդության ցուցաբերած մասնակցությունը լավագույն ձևով հերքում էր «ուսանողությունը» չծաղկած թառամել է» անհեթեթությունը, հավաստում, որ «հասարակական զարգացմանը թարմ հոսանք է հաղորդում ուսանողությունը»։

3

Առաջավոր գաղափարներով տարված հայ ուսանողների օգնությամբ է, որ Առաջին ինտերնացիոնալի և Փարիզի կոմունայի գործունեությունը ժամանակին արձագանք է գտել հայ պարբերական մամուլում։ Արևելահայ պարբերական մամուլում դեմոկրատական մտքի առանձին ներկայացուցիչներ գրական ձևով են արտահայտվել դեպի բանվորական միջազգային շարժումը՝ Առաջին ինտերնացիոնալը, պրոլետարիատի դիկտատուրայի անդրանիկ լուրջ փորձը՝ Փարիզի կոմունան։ Առաջին ինտերնացիոնալի մասին հոդվածներ են հրապարակվել «Մշակ» թերթում, իսկ Փարիզի կոմունայի մասին՝ «Մեղու Հայաստանի»-ում։ «Մշակ»-ի առաջին տարվա՝ 1872 թվականի մարտի 30-ի և ապրիլի 13-ի համարներում «Եվրոպայի աշխատողների ընկերությունը» խորագրով ծավալուն հոդվածաշարում հանգամանորեն խոսվում է Առաջին ինտերնացիոնալի հիմնադրման, նրա գործունեության, «Հիմնադիր Մանիֆեստի», կանոնադրության, Ինտերնացիոնալի առաջադիր խնդիրների մասին։ Թեև քննարկվող հոդվածը անստորագիր է, բայց նրա բովանդակությունը, քաղաքական նպատակասլացությունը, ինչպես իրավացի նկատել է Վ. Ոլշտունին, հիմք են տալիս եզրակացնելու, որ նրա հեղինակը, ամենայն հավանականությամբ, դեմոկրատական հոսանքի ներկայա-

---

97 Տե՛ս Ժամանակակից ուսանողությունը, առաջնորդող, «Մշակ», № 117, 11 հոկտեմբերի, 1894 թ.։

ցուցիչներից[98] է։ Հոդվածը սկսվում է արդյունաբերության զարգացման և այդ բազայի վրա էլ պրոլետարիատի առաջացման պատմությունից։ «Հիմնադիր Մանիֆեստի» ոգով շարադրված են երկու խոշոր դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի ներհակությունները, ընդգծված, որ սրանք «հասարակության երկու ծայրահեղ բևեռներն են, երկու դասեր, որոնց մեջ կան անդադար կռիվ գոյության համար»[99]։

Հոդվածում նկարագրվում են Առաջին ինտերնացիոնալի ստեղծման նախադրյալները և հիմնադրման պրոցեսը, խոսվում է բանվոր դասակարգի միասնության անհրաժեշտության մասին։ «Մշակ»-ի հոդվածագիրը, որը համակրանքով է լցված դեպի բանվորների արդարացի պայքարը. հայ ընթերցողների ուշադրությանն է ներկայացնում Ինտերնացիոնալի որոշումներից և նրա ժամանակավոր կանոնադրության ներածությունից հատվածներ, համերաշխում այդ ծրագրային փաստաթղթերի գլխավոր մտքին, այն է, թե ինտերնացիոնալի խնդիրն է՝ «Ազատել մշակներին դրամագլխի ճնշումից»։ Հոդվածում համակրանքով խոսվում է Ինտերնացիոնալի ազգային սեկցիաների, բանվորական շարժման ականավոր գործիչներ Ավգուստ Բեբելի, Վիլհելմ Լիբկնեխտի և այլոց մասին։ Հոդվածագիրը արդարացի կերպով նկատում է, որ Առաջին ինտերնացիոնալը բանվորական շարժման մեծ գործի փոքրիկ սերմն է, որը աճելով մեծ հունձ կտա։ «Ինչ որ Եվրոպայի մշակները արին Լոնդոնի համաշխարհային հանդեսից հետո (խոսքը Ինտերնացիոնալի առաջին կոնգրեսի մասին է—Ս. Բ.), ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի փոքրիկ սերմ այն ընկերության, որ այժմ այնպիսի անհանգստություն է պատճառում եվրոպական կառավարություններին և նյութական ապահովության տեր մարդկանց»[100]։

Բայց, ինչ խոսք, որ «Մշակ»-ի «Եվրոպայի աշխատողների ընկերությունը» հոդվածաշարը զերծ չէ պակասություններից, նրանում նկատվում է անհետևողականություն, հեղինակը շրջանցում և չի հիշատակում նույնիսկ Ինտերնացիոնալի մեծ հիմնադիրների՝ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի անունները և այլն։ Սակայն,

---

98 Տե՛ս Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, էջ 528—537։

99 «Մշակ», № 13, 30 մարտի, 1872։

100 «Մշակ», № 15, 13 ապրիլի, 1872 թ.։

ժամանակի առումով, այսուամենայնիվ, նման հոդվածի հրապարակումը հայ իրականության համար ուշագրավ երևույթ է։ Եվ, որ գլխավորն է, վերոհիշյալ հոդվածում արտահայտված մտքերը, պաշտպանված հայացքները չեն համընկնում հայ լիբերալների օրգան «Մշակ»-ի քարոզած տեսակետներին։

Ուշադրության արժանի է այն փաստը, որ հայ պահպանողականների բերան «Մեղու Հայաստանի» թերթը նույնպես, հակառակ իր ուղղությանը, տեղ է տվել այնպիսի հոդվածների, որոնցում համակրանք է արտահայտված Փարիզի կոմունայի նկատմամբ։ Այսպես, օրինակ, «Մեղու»-ի 1871 թվականի հունիսի 12-ի համարում զետեղված՝ «Թղթակցություն Փարիզից» հոդվածից երևում է, որ (կրկնում ենք, հակառակ թերթի հիմնական ուղղությանը) հոդվածագիրը ջերմորեն պաշտպանում է Կոմունան, ցասումով մերկացնում նրա դահիճներին։

Առաջին ինտերնացիոնալի և Փարիզի կոմունայի գործունեությանը, թեև թույլ չափով, անդրադարձել է նաև արևմտահայ պարբերական մամուլը։ Նշանավոր հրապարակախոս Մաթևոս Մամուրյանի խմբագրությամբ Զմյուռնիայում լույս տեսնող «Արևելյան մամուլ» հանդեսը իր առաջին իսկ համարներից «Քաղաքական տեսություն» խորագրի տակ նյութեր է հրապարակել Փարիզի կոմունայի գործունեությունից։ Այսպես, 1871 թվականի ապրիլին «Արևելյան մամուլը» ընթերցողներին ծանոթացրել է կոմունարների պայքարին [101], մայիսյան համարում պարզաբանել է «կոմունա» բառի իմաստը, նշել, որ «կոմունա» նշանակում է «հասարակություն» «գյուղ», «շեն», «հասարակարգ», «թաղապետական իշխանություն», «կոմունիզմ»։ «Բայց լավ կլինի,— ասում էր «Արևելյան մամուլը»,— Փարիզի վերաբերյալ պահպանել «կոմունա» բառը, քանի որ Փարիզի կոմունան տարբերվում է նախընթաց շրջանի կոմունաներից» [102]։

Հաջորդ համարներում «Արևելյան մամուլը» նյութեր է տպագրել կոմունարների հերոսության, կոմունայի անկման վերաբերյալ, մերկացրել կոմունայի դահիճ Թիերին։

«Պ-ն Թիերը Բարիզն առաւ այլ ինչպե՞ս, մեկ հոյակապ մասն ավերակ, մեկ մասը ճնշուած տանջության և տպագայ վրեժխնդրության կրքով լի, ուրիշ մեծագույն մաս մ՚ալ այն սկեպտիկա-

101 Տե՛ս «Արևելյան մամուլ», թիվ 4, էջ 171—174։

102 Նույն տեղում, թիվ 5, էջ 227—232։

կան անտարբերությամբ՝ որ ամեն բռնության գլուխ ծռելու կազմ ու պատրաստ կերևի»[103]։

«Ինդանոթը լռեց,— գրել է «Արևելյան մամուլը»,— իրաւ, ի Ֆրանսա, բայց կուսակցական կռիից որոտման հետ գրիչներու զուգար մը սկսաւ, որուն ելքն ավելի վտանգավոր կթվի հեղեղուկ ազգի համար»[104]։

«Արևելյան մամուլը», մի ուրիշ անգամ, խոսելով Առաջին Ինտերնացիոնալի 1872 թվականի Հաագայի կոնգրեսի մասին, Կ. Մարքսին համարում է Ինտերնացիոնալի «հիմնադիր և գլխավոր»[105]։ Իհարկե, «Արևելյան մամուլը», առանձին տեղեկություններ տալով Ինտերնացիոնալի, մասնավորապես Կոմունայի մասին, միշտ չէ, որ համակրանքով էր արտահայտվում դեպի կոմունան, գրվատում «երկինք գրոհող» (Կ. Մարքս) կոմունարների քաջագործությունները։ Ավելին, նա «Մշակ»-ի, «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականների պես այդ հարցերում ուներ սխալ դիրքորոշում։

Փարիզի կոմունայի մասին նյութեր է գետեղել «Մասիս»-ը։ Թերթի 1871 թվականի մայիսյան համարի «Քաղաքական» բաժնում հրատարակվել է Վիկտոր Հյուգոյի նույն թվականի մայիսի 26-ի նամակը կոմունարներին ապաստան տալու և այդ պատճառով նրան Բելգիայից արտաքսելու մասին։ Հյուգոն մեղադրում էր բելգիական կառավարությանը՝ կոմունարներին ապաստան չտալու համար, քննադատում կոմունայի դահիճներին, հայտարարելով՝ «ես անոնց (կոմունարներին—Խ. Բ.) հետ չէի։ Հասարակության (կօմին) սկզբունքը կընդունիմ, ...» թե՝ արտաքսելով ինձ Բելգիայից «Պելճիոյ կառավարությունն ինձ դեմ պիտի լինի, բայց բելճիացի ժողովուրդն ինձ հետ... ինչ որ ալ լինի, խղճմտանքս ազատ պիտի մնա»[106]։

Վերոհիշյալ փաստերը արձանագրում ենք սոսկ ցույց տալու համար, որ տակավին 1880-ական թվականներին բանվորների միջազգային առաջին ընկերության և նրա գործունեության պատկը կազմող Փարիզի կոմունայի մասին ժամանակի հայ պարբերական մամուլում հայ դեմոկրատական մտքի առանձին ներկայացուցիչների միջոցով, թեկուզ թույլ չափով, իրազեկ է պահվել հայ աշխատավոր զանգվածներին։

---

103 «Արևելյան մամուլ», թիվ 6, էջ 283։

104 Նույն տեղում, էջ 284։

105 Նույն տեղում, սեպտեմբեր, 1872, էջ 414։

106 Տե՛ս «Մասիս», թիվ 1093, 27 մայիսի, 1871։ Փարիզի կոմունայի մասին տե՛ս նաև «Մասիս», թիվ 1099, 10 հունիսի, թիվ 1111, 10 հուլիսի, 1871։

Մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական գրականության հայերեն հրատարակության առաջին փորձերը կատարեցին ռուսական կենտրոնական քաղաքներում և Եվրոպայում սովորող հայ ուսանողները։

1880-ական թվականներից սկսած արտասահմանում սովորող առանձին հայ ուսանողներ անձնական կապեր են հաստատում Գ. Պլեխանովի և նրա հիմնադրած «Աշխատանքի ազատագրություն» խմբի հետ։ Հայ առաջին սոցիալ-դեմոկրատներից մեկը՝ Գ. Ղարաջյանը (Ս. Տ. Արկումեդ) պատմում է, որ Գ. Պլեխանովի հետ առաջին անգամ ծանոթացել է 1886 թվականի վերջերին։ «Անցնում եմ մի օր ժնևի Rue de Corode փողոցով,— գրել է Գ. Ղարաջյանը,— պատահում եմ բժշկական ֆակուլտետի մեր երկրացի վրացի ծանոթ ուսանող Վանո Եմելյանովին, որը տաքտաք վիճում էր մի շատ համակրելի տեսքով անձնավորության հետ, որին ես անծանոթ էի։ Դա Գ. Վ. Պլեխանովն էր։

— Գեորգի Վալենտինովիչ,— խնդրում եմ ծանոթանալ իմ երկրացու հետ, սոցիոլոգիայի գծով ուսանող է։

— Ձեր ազգի՞ց է։

— Ո՛չ, հայ է։

— Ա՜, շատ լավ է, ես այնքան քիչ գիտեմ հայերին, որ ուրախ եմ հայ բարեկամ ունենալու համար»[107]։

Մինչև այդ, 1886 թվականի ամռանը, Գ. Ղարաջյանը Ֆրանսիայում ձեռք էր բերել Կ. Մարքսի «Կապիտալ»-ը ֆրանսերեն լեզվով, որի «ընթերցումն ամռանն ու աշնանը,— ասում է նա,— այն ազդեցությունն ունեցավ, ինչպիսի ազդեցություն կարող էր ունենալ կույրի վրա մի տեսակ հրաշքով նրա աչքերի բացումը։ Իսկ Լասսալի գրվածքների հետ իմ ծանոթությունը Կովկասում դեռևս դրանից մեկ տարի առաջ ինձ համար մի տեսակ քաղաքական զարգացման կամուրջ կարելի է համարել, որով ես անցա դեպի մարքսիզմը»[108]։

1886 թվականից մինչև 1889 թվականի աշունը Գ. Ղարաջ-

---

107 Գ. Ղարաջյան, Հեղափոխականի հիշատակարանը (ձեռագիր), մաս 2, էջ 42։ Տե՛ս Մշի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 51, ց. 1, գ. 81, թ. 25։

108 Գ. Ղարաջյան, Հեղափոխականի հիշատակարանը, մաս 2, էջ 41։

յանը հաճախ հանդիպումներ է ունենում Գ. Պլեխանովի, Վ. Զասուլիչի և մասամբ էլ Աքսելրոդի հետ։ «Աշխատանքի ազատագրություն» խումբը գաղափարական որոշակի ազդեցություն ունեցավ Գ. Ղարաջյանի վրա, նա թողեց հնչակյանների ուղեգիծը և վերադարձավ մարքսիզմին։ Նա պատմում է, որ երբ ինքը 1887 թվականին լսեց Կ. Մարքսի «Կապիտալ»-ի սկզբունքներով կազմված Գ. Պլեխանովի դասախոսությունները, որի ընթացքում շոշափվում էին բանվոր դասակարգի և սոցիալիզմի վերաբերյալ հարցերը, այն ժամանակ հաստատապես համոզվեց, որ հանձին Գ. Պլեխանովի ռուսական մարքսիզմն ուներ արդեն այն ժամանակ իր եզակի հանճարեղ մտածող սոցիալիստը[109]։ «Աշխատանքի ազատագրություն» խմբի ղեկավարների ելույթները տպավորիչ էին, հետաքրքիր։ Հատկապես Գ. Պլեխանովի մարքսիստական դասախոսություններն ու զրույցները։ Գ. Ղարաջյանը, նկարագրելով Պլեխանովի հմայիչ և ներգործուն ելույթների մասին, ասում է՝ հայ ուսանողներից Մաթևոս Շահազիզյանը մի երկու անգամ հաճախելով Գեորգի Վալենտինովիչի գումարած ժողովներին, լինելով մոլի հայրենասեր ու ազգասեր, «Հայկական հարցի» գաղափարով տարված, ժողովներից մեկում անսպասելի բացականչում է. «Այսօրվանից հետո չի կարող թշնամություն լինի հայերի, քրդերի և թուրքերի միջև, նրանք բոլորը պրոլետարներ են և պետք է միանան, թող կեցցե՛ «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացեք» լոզունգը»[110]։ Գ. Պլեխանովը իրեն հատուկ ժպիտով է ընդունում Շահազիզյանի հրճվալից բացականչությունը։ Գ. Ղարաջյանը հաճախում էր «Աշխատանքի ազատագրություն» խմբի դիսպուտներին, ծնկում գտնվող վտարանդիների հետ միասին ամեն տարի այցելում քաղաքից վեց կիլոմետր հեռավորությամբ Սալևի (Saleve) լեռան վրա գտնվող Ֆ. Լասսալի գերեզմանը, ծաղկեպսակ դնում և «Ինտերնացիոնալ» ու «Մարսելյոզ» երգում։

---

109 Տե՛ս Գ. Ղարաջյան, Հեղափոխականի հիշատակարանը, մաս 2, էջ 43։ Գ. Ղարաջյանն ասում է՝ Աքսելրոդին ծնկում 2—3 անգամ եմ հանդիպել, քանի որ նա Ցյուրիխից քիչ էր դուրս գալիս, Իգնատովին չեմ տեսել, որովհետև 1885 թվականին նա մեռել էր, իսկ Դեյչին 1884 թվականին Գերմանիայում ձերբակալել և ցարական կառավարությանն էին հանձնել։

110 Տե՛ս Գ. Ղարաջյան, Հեղափոխականի հիշատակարանը։ Նույնը С. Т. Аркомед. За рубежом, часть I, период студенчества, от 1886 до 1890. Тифлис, 1929, էջ 34. 1908 թվականին տարագրության մեջ Գ. Պլեխանովը կրկին հանդիպելով Գ. Ղարաջյանին, հիշեցրել է Շահազիզյանի մասին։

«Գ. Պլեխանովին և նրա ընկերներին մենք տեսնում էինք այն ժամանակ մարի և գործի հերոսական դերի մեջ,— պատմում է Գ. Ղարաջյանը,— նրանք հերոսներ էին և՛ բարոյական և՛ քաղաքական մարով»[111]: Հենց այդ ժամանակ էլ, Կ. Մարքսի մահից չորս տարի անց, Ֆ. Էնգելսի կենդանության օրոք, Գ. Ղարաջյանը և արտասահմանում սովորող ուրիշ հայ ուսանողներ քայլեր են անում մարքսիստական գրականության, մասնավորապես Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը թարգմանելու և հրատարակելու ուղղությամբ: 1887 թվականին Գ. Ղարաջյանը ֆրանսերենից՝ ռուսերենի (Գ. Պլեխանովի թարգմանությունը) հետ համեմատելով, հայերեն է թարգմանում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», իսկ ռուսերենից՝ Դիկշտեյնի «Ով ինչով է ապրում» գրքույկը: Քանի որ դրանք «Աշխատանքի ազատագրություն» խմբի հրատարակությամբ էին լույս տեսել, Ղարաջյանը դիմում է Պլեխանովին՝ հայերեն հրատարակության համար թույլտվություն ստանալու: Գեորգի Վալենտինովիչը պարզաբանում է, որ «Աշխատանքի ազատագրություն» խումբն ինքն է շահագրգռված նման հրատարակությունների ճակատագրով, ուստի նման քայլերը խրախուսելի են: Դիկշտեյնի «Ով ինչով է ապրում» գրքույկը հրատարակվում է ժնևում, իսկ «Մանիֆեստ»-ի թարգմանությունը Գ. Ղարաջյանը մի հոդվածի հետ միասին («Նուբար»* ստորագրությամբ) ուղարկում է Մարսել «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանին՝ թերթում հրատարակելու համար: Դա այն ժամանակ էր, երբ «Արմենիան» մրցանակաբաշխություն էր հայտարարել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների կապակցությամբ: «Հոդվածում ես մանրամասն քննության էի առնում,— ասում է Գ. Ղարաջյանը,— թե ինչ ուղղությամբ, միջոցներով և մեթոդներով պետք է քաղաքական-հեղափոխական գործունեություն կիրառել Տաճկաստանում տաճկահայ մասսաներում, որպեսզի նրանք կարողանան ինքնավարություն նվաճել սուլթանների բռնակալական պետության մեջ»[112]: Նյութի ընդարձակության պատճառով

---

111 Գ. Ղարաջյան, Հեղափոխականի հիշատակարանը, մաս 2, էջ 43։

* «Նուբար» — ծածկագիր՝ «բանուոր», քանի որ նրանում կան «բանուոր»-ի բոլոր տառերը։

112 Տե՛ս Թ. Ավդալբեգյան, «Կոմունիստական մանիֆեստի» հայերեն թարգմանությունները 1887-ից մինչև 1924 թթ., «Վերելք», №№ 4—5, 1924, նույնը՝ Գ. Ղարաջյան, Հեղափոխականի հիշատակարանը, մաս 2, ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 51, գ. 81 և 101։

«Արմենիա»-ն «Կոմունիստական մանիֆեստ»-ի Գ. Ղարաջյանի թարգմանությունը չի հրատարակել։ Այդ առթիվ թերթը իր 1888 թվականի 23-րդ համարում գրել է. «Պ-ն Նուբար (Դ. Ղարաջյանի ծածկանունն է—Խ. Բ.) համամարդկային տեսությամբ նկատի ունենալով Հայաստանի մասին մեր առաջարկած խնդրին, երկար բացատրությունների մտած է ցույց տալու համար, թե ինչ պետք է լինի Հայաստանի մեջ հեղափոխություններու վերջնական նպատակը և թե ինչպիսի մի ինքնավարություն պետք է հիմնել այնտեղ։ Այս գրվածը, որ ինչպես արդեն ըսինք, Հայաստանի արդի դրության և պահանջների վրա միայն չխոսեր, այլ ընդհանուր մարդկային ընկերական դրության վրա տեսություններով կբննե խնդիրը, «Արմենիա»-ի երեսուն և յոթ էջերը պետք են տեղավորելու համար, մինչդեռ, մենք թիվ 92 (1887) «Արմենիա»-ի առաջնորդողով խնդրած էինք, որ գրեթե յոթ էջերի մեջ տեղավորվի գրվածն, այնպես, որ այդ հոդվածը ավելի հարմար կլինի հրատարակելու իբրև տետր (Broschüre), քան թե լրագրի մեջ»[113]։

Չնայած «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի անդրանիկ թարգմանության հրատարակության հետ կապված պատմությունը կարոտ է լրացուցիչ հետազոտության, այնուամենայնիվ, ուշագրավ է այն փաստը, որ «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությանը Ֆ. Էնգելսն առաջին անգամ անդրադարձել է 1888 թվականի հունվարի 30-ին գրած առաջաբանում։ «Հայերեն թարգմանությունը,— գրել է Ֆ. Էնգելսը,— որ մի քանի ամիս առաջ պետք է տպագրվեր Կոստանդնուպոլսում, ինչպես ինձ հաղորդել են, լույս չտեսավ այն պատճառով միայն, որ հրատարակիչը վախեցել է գիրքը լույս ընծայել Մարքսի անունով, իսկ թարգմանիչը չի համաձայնվել «Մանիֆեստը» ներկայացնել որպես իր աշխատությունը»[114]։

«Մանիֆեստ»-ի գերմաներեն նոր հրատարակության առա-

---

113 «Արմենիա», № 23, 19 դեկտեմբերի, 1888։

Ֆ. Էնգելսի 1888 թ. հունվարի 30-ի հայկական հրատարակության առթիվ հայտնած միտքը, «Արմենիա»-ի խորհուրդը՝ «Մանիֆեստի» այդ թարգմանությունը առանձին բրոշյուրով հրատարակելու մասին և այլ հանգամանքները թելադրում են ենթադրել, որ Կոստանդնուպոլսի հրատարակչի ձեռքն է ընկել Գ. Ղարաջյանի թարգմանությունը։

114 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Երևան, 1960, էջ 18։

ջաբանում Ֆ. Էնգելսը նորից է հիշատակում նրա հայերեն առաջին հրատարակության մասին[115]։

Ինչ վերաբերում է հայրենասիրական մտածումների համար «Արմենիա»-ի հայտարարած մրցանակաբաշխության արդյունքներին, ապա պետք է ասել, որ առաջին մրցանակ շահած հոդվածի արևմտահայ հեղինակը[116] (ստորագրությունը «Ա»), ասում էր, թե Արևմտյան Հայաստանի ազատագրությունը միայն արյամբ է հնարավոր («...արյան պետք կա»)։ Իսկ երկրորդ մրցանակի արժանացած հոդվածի բուլղարահայ հեղինակը[117] (ստորագրությունը «Պանդուխտ») գտնում էր, որ հայոց մեջ հայրենասիրությունն ընդհանրացնելու համար հարկավոր է գործնական միջոցներով ստիպանաբար արթնացնել, այսինքն «...նախ պետք է ժողովուրդին ուշադրությունը առ հայրենասիրություն դարձնել, ապա զանազան հետաքրքրել և ապա համակրությունը շահել»։ Այդ նպատակով պահանջում է կամավորական ջոկատներ ստեղծել և գաղտնի մացնել Արևմտյան Հայաստան։ Երկու դեպքում էլ նրանք արձագանքում էին «Արմենիա»-ի ուղղությանը, հույսը կապում ապստամբական շարժումների և եվրոպական դիվանագիտության միջամտության հետ։

«Արմենիա»-ի 1889 թվականի փետրվարյան համարում «Ուսումնասիրության գործը» խորագրով հոդվածում Գ. Ղարաջյանը («Նուբար») պնդում էր, թե ժողովրդի քաղաքական ազատության համար հարկավոր է ուսումնասիրել թե ինչ հող կա դրա համար։ «Եթե ուզում եք հեղափոխություն,— ասում էր Գ. Ղարաջյանը,— այնպես ինչպես պետք է հասկանալ այդ, նա տեղի է ունենում այն ժամանակ, երբ ժողովրդի մեջ պահանջ է զգացվում հեղաշրջելու իր հասարակական հարաբերությունները, կարգերը, ահա մենք այդ միջոցների վրա ենք խոսում այստեղ, որոնք կդարգացնեն ժողովրդի մեջ այդ «պահանջը», պարզ ասելով մենք ուզում ենք նախ և առաջ կյանքի կերպարանափոխություն»[118]։ Նա գտնում էր, որ հարկավոր է արևմտահայերին գաղափարապես նախապատրաստել, քաղաքական դիտակցության բերել։

---

115 Նույն տեղում, էջ 25։

116 Տե՛ս «Արմենիա», թիվ 24, 22 դեկտեմբերի, 1888։

117 Նույն տեղում, թիվ 26, 29 դեկտեմբերի, 1888։

118 «Արմենիա», թիվ 37, 9 փետրվարի (28 հունվար), 1889։

Գ. Ղարաջյանը, հաղթահարելով իր վաղեմի նարոդնիկական հայացքները, «Աշխատանքի ազատագրություն» խմբի ազդեցությամբ, 1887 թվականին շրջադարձ է կատարում դեպի մարքսիզմը, դառնում հայ իրականության մեջ մարքսիզմի դաղափարների անդրանիկ սերմնացաններից մեկը: «Հնչակի» հիմնադրման կապակցությամբ, դեռևս 1908 թվականին բանավիճելով Խան-Ազատի հետ, Գ. Ղարաջյանը «Երկրի ձայն» թերթի փետրվարի 3-ի համարում գրել է. «Մինչև մյուսները (Հնչակի հիմնադիրները— Խ. Բ.) բոլորովին հեռու կղզիացած դիրք էին ստեղծել իրենց համար և թշնամանքով էին վերաբերվում դեպի Պլեխանովի սոցիալ-դեմոկրատական խումբը, ընդհակառակը իմ համակրությունը ավելի աճում էր դեպի այդ կողմը և ուղղությունը: Ուսումնասիրելով սոցիալական գիտությունները, սոցիալիստական գրականությունը, կարդալով Կ. Մարքսի «Կապիտալ»-ը և «Փիլիսոփայության աղքատությունը», «Մանիֆեստ»-ը, Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմը», «Դյուրինգի դեմ» (Անտի Դյուրինգ—Խ. Բ.) գրվածքը և այլն, 1887 թվականի վերջին արդեն հակել էի դեպի մարքսիզմը և սոցիալ-դեմոկրատիզմը...»[119]:

1887—1900 թվականներին «Մշակ», «Տարազ», «Մուրճ» և այլ պարբերականներում տպագրված հոդվածներում նկատելի է նրա էվոլյուցիան: Նա փորձում է մարքսիստական վերլուծության ենթարկել հայ ազգային-ազատագրական շարժման հետ կապված երևույթները, ընդդիմակայում է նարոդնիկության ժամանակավրեպ դավանանքին, նկատում Անդրկովկասում XIX դարի վերջին տեղի ունեցած սոցիալ-քաղաքական տեղաշարժերի իմաստը, երկրամասում կապիտալիզմի զարգացման, բանվոր դասակարգի ձևավորման, արևելահայերի հասարակական առաջընթացի տենդենցները: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հրապարակ էին իջնում հայ առաջին մարքսիստները, որոնք ազգային-ազատագրական շարժման հարցերը շաղկապում էին պրոլետարիատի և ամենից առաջ նրա գլխավորած համադեմոկրատական շարժման հետ:

Մանրամասնելով «Սոցիալ-դեմոկրատ»-ի առաջին համարի բովանդակությունը, Գ. Ղարաջյանը թեավորված նամակ է հղում Գ. Պլեխանովին, որն ավարտվում էր «Կեցցե՞ արևելյան սոցիալ-դեմոկրատիան» խոսքերով[120]: «Մշակ»-ի 1887 թվականի ապրիլի

---

119 «Երկրի ձայն», № 4, 3 փետրվարի, 1908:

120 Տե՛ս Ս. Տ. Աբկոմեղ, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, Երևան, 1922, էջ 18:

5-ի և մայիսի 20-ի համարներում զետեղված, ժամանակի դրաքննչական ծուղակներով անցած, ժնևից ուղարկած նամակ-թղթակցություններից պարզ երևում է Գ. Ղարաջյանի դաղափարական կյանքում տեղի ունեցած խմորումները։ Նա ոչ միայն դիտակցում էր բուրժուազիայի և պրոլետարիատի դասակարգային ներհակություններն ու պայքարը, այլև հասկանում զլխավորը, որ սոցիալական հարցը, ի վերջո, պետք է լուծվի պրոլետարիատի հաղթանակով»։ «Մշակ»-ի 1888 թվականի հուլիսյան և հետագա համարներում (№№ 17, 27, 85, 93, 103) տպագրված շվեյցարական նամականիում Գ. Ղարաջյանը շոշափում է հասարակական ֆորմացիաների, հատկապես կապիտալիզմի հետ կապված մի շարք խնդիրներ, ցույց է տալիս, որ պրոլետարիատը կապիտալիզմի զարգացման անխուսափելի հետևանք է[121]։

Ժողովուրդների բարեկամության քարոզով է ներծծված «Մշակ»-ի 1899 թվականի 101 և 120-րդ համարներում զետեղված նրա «Մեր դրացի ժողովուրդները» հոդվածը։ Նա կոչ էր անում եղբայրության ձևոք մեկնել երկրամասի բազմազգ աշխատավոր զանգվածներին հանուն ընդհանուր գործի[122]։

Գ. Արծրունու մահից հետո Գ. Ղարաջյանը դադարում է «Մշակ»-ին աշխատակցելուց և կապվում է «Մուրճ»-ի ու «Տարազ»-ի հետ։

1893—1898 թվականներին «Մուրճ»-ի մի քանի համարներում զետեղվում են Գ. Ղարաջյանի (Ս. Տ. Արկոմեդ) «Քաղաքակրթության աստիճանները», «Բանվորների ապահովագրման խնդիրները» (լույս է տեսել նաև առանձին բրոշյուրով) և այլ ուսումնասիրություններ, որոնց մեջ ավելի որոշակի են արտահայտված հեղինակի մարքսիստական տրամադրությունները[123]։ «Քաղաքակրթության աստիճանները» հոդվածի վրա զգացվում է Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գրքի ազդեցությունը։ Նրանում համառոտակի

---

121 «Մշակ», № 93, 1888 թ.։ Տե՛ս նաև Ս. Տ. Արկոմեդ, Հետադարձ հայացք, 1886—1900։ Պատմական հետազոտություն կոմենտարներով։ Մշի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 51, դ. 101։

122 «Մշակ», № 120, 1899։

123 Ս. Արկոմեդ, Քաղաքակրթության զարգացման ընթացքը։ Քաղաքակրթության աստիճանները։ Տե՛ս «Մուրճ», № 9, 1893, էջ 1349—1362, նույնի, Բանվորների ապահովագրման խնդիրը։ Տե՛ս «Մուրճ», № 1, 1894, էջ 101—110, № 2, 1894, էջ 243—255, № 3, էջ 388—403, № 4, էջ 560—575։

շարադրված էր մարդկային հասարակական զարգացման էտապները։

«Բանվորների ապահովագման խնդիրները» հոդվածաշարում ընդգծված է, թե ֆրանսիական 1848 թվականի հեղափոխությունից հետո բանվորը մուտք է գործել քաղաքական ասպարեզ, ճանաչվել որպես ինքնուրույն, հեղափոխական դասակարգ։ «Բանվորական խնդիր և բարեփոխության փորձեր», «Պարտադիր ապահովության օրենքի հաստատությունը Գերմանիայում», «Ապահովության օրենք հիվանդության դեմ (1883 թ. 15 հունիսի)», «Ապահովության օրենք դժբախտ դեպքերի դեմ (1884 թ. 6 հուլիսի)», «Նախընթաց երկու հաստատություններով յուրացրած դժբախտությունը և առարկությունները նրանց դեմ», «Ապահովության օրենքը ծերության անկարության դեմ (1889, մայիս)», «Բանվորների պետական ապահովագման խնդիրը Եվրոպական մյուս երկրներում»,— ահա այն հիմնական բաժինները, որոնց մեջ Գ. Ղարաջյանը հայ հրապարակախոսության մեջ Եվրոպայի կյանքից քաղած նյութերով առաջին անգամ ծավալուն կերպով լուսաբանում է բանվորներին հուզող հարցերը։ Այն պահին, երբ «Տարազ»-ի էջերից որոշ մարդիկ հարձակվում էին Գ. Ղարաջյանի վրա, ասելով. «Մեր կյանքը այդպիսի աշխատությունների համար առայժմ պահանջ չունի», նույն ժամանակ աշխատավորական ներկայացուցիչները «Մուրճ»-ին ուղարկած ուղերձում շնորհակալություն էին հայտնում հանձին այդ հոդվածի «Բանվորների և արհեստավորների խնդրին ցուցաբերած ուշադրության համար»։

Գնալով բյուրեղանում էր Գ. Ղարաջյանի հայացքները, նա ավելի հանդամանորեն էր ուսումնասիրում երկրամասում սոցիալ-տնտեսական և քաղաքական տեղաշարժերը։ Նա կապվում է տեղի սոցիալ-դեմոկրատների հետ, ղեկավար դեր խաղում ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեում։

«Տարազ»-ի 1898 թվականի դեկտեմբերյան համարներում լույս է տեսնում նրա «Ո՞ւր է գնում մեր երկիրը» հոդվածաշարը [124]։ Մարքսիստական հայ պատմագիտության մեջ Գ. Ղարաջյանն առաջինն է քննադատական կրակի տակ առել նարոդնիկության կոնցեպցիաները՝ երկրամասի տնտեսական զարգացման հեռանկարների գնահատման հարցում, նկատել և արձանագրել

---

124 Տե՛ս «Տարազ», № 46 և 47. դեկտեմբեր, 1898։ «Մուրճ»-ի հետ տարաձայնություններ ունենալու պատճառով սույն հոդվածաշարը նա հրապարակել է «Տարազ»-ում։

Անդրկովկասը կապիտալիստական զարգացման փուլը թևակոխելու պատմական փաստը։ «Կապիտալը դեռ նոր-նոր կազմակերպվում է քաղաքներում,— գրել է նա,— օտար գրամագլուխները մյուս կողմից սկսել են տեղալ մեր երկիրը։ Մենք պաշարված դրության մեջ ենք։ Կապիտալիզմը խրոխտ, ահռելի ուրվականի դեմքով դեմհանդիման կանգնած է մեր առաջ և հաղթանակով առաջ է ընթանում, նա արդեն պաշարել է մեր միտքն ու զգացմունքը... որ արդեն մենք մտել ենք կապիտալիստական շրջանը բնավ չենք տարակուսում և դրա ապացույցը մենք գտնում ենք կյանքի մեջ»[125]։

Թեև մինչ այդ, Գ. Արծրունին և այլ հրապարակախոսներ, նույնպես նկատել էին Անդրկովկասը կապիտալիզմի փուլը թևակոխելու փաստը, բայց նրանցից և ոչ մեկը Գ. Ղարաջյանի պես չէր տեսել այդ փուլի պատմական անցողիկ նշանակությունը, և որ գլխավորն է, պրոլետարիատի ազատագրական միսիան՝ կապիտալիզմը ոչնչացնելու և նոր, սոցիալիստական հասարակարգ ստեղծելու գործում։ Դեռևս 1888 թվականին Գ. Ղարաջյանը պաշտպանելով երկրամասը կապիտալիստական ֆորմացիան թևակոխելու թեզը, նշել է, թե մեր երկրի արդեն նավթի խոշոր արդյունաբերությունը և թե՛ մյուս բնական հարստությունների խոշոր արտադրությունը, նույնիսկ հողատիրության ձևը, մի՞թե երաշխիք չեն, որ մեզանում արդեն մուտք է գործել տնտեսական զարգացման այն բնական ֆազը, ինչ որ տեսնում ենք արդեն Արևմուտքի խոշոր արդյունագործական երկրներում։ Մեր երկրին նույնպես վիճակված է հանդիպել նույն տնտեսական և սոցիալական երևույթների զարգացմանը[126]։

Լինելով Թիֆլիսի հայ բանվորների մարքսիստական անդրանիկ խմբակի պրոպագանդիստ, 1898 թվականին «Ո՞ւր է գնում մեր երկիրը» հոդվածում, նա ավելի խորն է պարզաբանում իր հայացքները, ինչպես նշեցինք, հանգում ճիշտ եզրակացությունների։ Նա չի բացառում, որ բուրժուական քաղաքակրթության պատմության մեջ, իր նախորդ ֆորմացիաների նկատմամբ, առաջադիմական, «վերին աստիճանի հեղափոխական» («Կոմունիստական մանիֆեստ»-ի խոսքերն են—Խ. Բ.) դեր է խաղացել։ Բայց, ի տարբերություն «Հեղալ մարքսիստների» և հայ լիբերալ հրա-

---

125 «Տարազ», № 46, 29 նոյեմբերի, էջ 1039։

126 Տե՛ս «Մշակ», № 44, 25 ապրիլի, 1888 թ.։

պարակախոսների, Գ. Ղարաջյանը չէր հավերժացնում կապիտալիզմը, գունազարդում նրա խոցերը, այլ ընդգծում էր այն բոլոր չարիքները (աշխատավորության թշվառությունը, բանվորների հարստահարումը), որոնք կապիտալիզմի արդասիքն են: «Կապիտալիստ և աշխատավոր»,— գրել է նա,— ահա դասակարգային իշխող տիպերը հասարակության մեջ, որոնք հանդես են գալիս դեմ հանդիման իբրև կապիտալիզմի հարազատ ծնունդներ»[127]:

Նա իրավացիորեն հավատում էր, որ դեպի Երևանի նահանգը նոր անցկացվող երկաթուղային գծերը զարկ կտան կապիտալիզմի զարգացմանը նաև Հայաստանում: Խորապես յուրացնելով «Կոմունիստական մանիֆեստ»-ի և «Կապիտալ»-ի սկզբունքները, Գ. Ղարաջյանը բանվոր դասակարգին համարում էր «ամենառաջադեմ տարր (դասակարգը), «միակ մասշտաբը ազգերի քաղաքական և տնտեսական հասունության»: Նա այն կարծիքին էր, թե հասարակության շահերը պահանջում են, որ երկիրն անցնի կապիտալիստական ֆորմացիայի միջով, որքան էլ այդ շատերի անձնական տրամադրության և ցանկության հակառակ լինի: Դա անխուսափելի է, քանի որ երկիրն արդեն մտել է այդ շրջանի մեջ: Անդրկովկասում կապիտալիստական հարաբերությունների ուսումնասիրության համար Գ. Ղարաջյանն առաջարկում էր իր ծրագիրը. այն է.

1. Վիճակագրական ճիշտ, հաստատուն տեղեկություններ հավաքել կենտրոններում և լեռնահանքերում, կապիտալիստական ձեռնարկությունների, գործարանների, արհեստանոցների և նրանցում աշխատող բանվորների թվի մասին:

2. Ուշադրություն դարձնել նրանց տարեցտարի աճման հանգամանքի վրա:

3. Ուսումնասիրության առանձին առարկա դարձնել բանվոր դասակարգի դրությունը, նիստ ու կացը, աշխատանքը և նրա տևողությունը, վարձատրությունը, գործարանների և բնակարանների առողջապահական և այլ պայմանները, փոխադարձ հարաբերությունները կապիտալիստների հետ, բարեփոխությունների փորձերը և այլն, մի խոսքով այն բոլորը, որ վերաբերում է կապիտալի և աշխատանքի արտահայտություններին:

4. Հետազոտել գյուղական ազգաբնակչության տնտեսական դրությունը.

---

127 «Տարազ», № 46, 29 նոյեմբերի, 1898 թ., էջ 1040:

ա) հողային և ջրաբաշխական խնդիրները, բ) հողատիրության ձևերը, գ) վաշխառությունը, դ) գյուղական պրոլետարիատի զարգացումը, ե) կապիտալիստական շահագործման երևույթները կալվածատիրական և մուլքադարական հողերում, զ) կապիտալի աղդեցությունը և նրա արքունական-համայնական կոչված հասարակությունների մեջ. է) ներքին գաղթականական հոսանքը (Immigration) դեպի քաղաքները և արդյունաբերական կենտրոնները և այլն, և այլն [128]։

Վերը շարադրած փաստերը հիմք են տալիս եզրակացնելու, որ 1887 թվականից սկսած Գ. Ղարաջյանը շրջադարձ է կատարում դեպի մարքսիզմը [129]։ Հիշենք, որ Վ. Ի. Լենինը սովորեցրել է, թե «կապիտալիզմի ստեղծագործական պատմական աշխատանքի ճանաչումը, կապիտալիզմի, որը հանրայնացնում է աշխատանքը և ստեղծում հասարակությունը բարեփոխելու ընդունակ «սոցիալական ուժ», պրոլետարիատի ուժը,— այդպիսի ճանաչումը խզումն է նարոդնիկության հետ և անցում դեպի մարքսիզմը» [130]։

Գ. Ղարաջյանն արտասահմանից իր հետ բերել էր մարքսիստական հարուստ գրականություն, այդ թվում «Կապիտալ»-ի ֆրանսերեն առաջին հրատարակությունից, «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը, Գ. Պլեխանովի աշխատությունները, «Աշխատանքի աղատագրություն» խմբի հրատարակություններից [131]։

1898—1901 թվականներին «Տարազ» և այլ պարբերականներում լույս են տեսնում Արշակ Զուրաբյանի «Տնտեսական առաջադիմությունը XIX դարում», «Վ. Գ. Բելինսկու աշխարհայացողությունը», «Մեր երիտասարդությունը» և այլ հոդվածներ։

---

128 Տե՛ս «Տարազ», № 47, 6 դեկտեմբերի, 1898, էջ 1064։

129 Այդ մասին տե՛ս նաև Ա. Եղիազարյանի «Անդրկովկասի սոցիալ-տնտեսական զարգացումը և հայ նարոդնիկության էվոլյուցիան։ XIX դարի վերջի, XX դարի սկզբի հայ տնտեսագիտական մտքի պատմությունից» (թեկնածուական դիսերտացիան), Երևան, 1959։

130 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 89։

131 Հետագայում, 1910 թ., Գ. Պլեխանովը գրեց Գ. Ղարաջյանի «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գրքի առաջաբանը։ Բարձր գնահատելով այդ աշխատությունը, Գ. Պլեխանովը գրել է, թե այն «...ընթերցողի հիշողության մեջ վերականգնում է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ամենալավ տրադիցիաները...»։ Գ. Ղարաջյանի աշխատությունն արժանացել է Վ. Ի. Լենինի ուշադրությանը։ 1910 թ. ՌՍԴՐԿ Կենտկոմի կողմից Վ. Ի.

«Տնտեսական առաջադիմության» մեջ Զուրաբյանը քննարկում է արդյունագործական զարգացման աստիճանները, մասնավորապես ծանրանում է արդյունաբերական հեղաշրջման, բանվոր դասակարգի ձևավորման, կապիտալի և բանվոր դասակարգի միջև եղած դասակարգային պայքարի հարցերի վրա։ Նա ծավալուն քաղվածքներ է բերում Ֆ. Էնգելսից։ «Մեր երիտասարդությունը» հոդվածում կոչ է անում երկրամասի բազմազգ երիտասարդությանը համերաշխ, համագործակցված աշխատանք ծավալել, ծառայել ժողովրդին, վերջ տալ անհոգությանը։ Ա. Զուրաբյանի վերոհիշյալ հոդվածները նույնպես իրենց վրա որոշակիորեն կրում են մարքսիզմի կնիքը։

Ուշագրավ են նաև «Տարազի» 1898 թվականի հուլիս-նոյեմբեր ամիսների համարներում տպագրված «Տնտեսագիտական զրույցները», որոնց մեջ լուսաբանված են քաղաքատնտեսության մի քանի կարևոր հարցեր [132]։

Մարքսիստական աշխատությունների հայերեն առաջին թարգմանությունների ուղղությամբ նրախտիք ունի 80-ական թվականների հայ ազգային նարոդնիկական շարքերից ելած սոցիալիստ Հովսեփ Աթաբեկյանը [133]։ Երկու տարի Պետերբուրգի համալսա-

---

Լենինը նյութական օգնություն ցույց տվեց հեղինակին՝ տպարանից վերցնելու աշխատության 2000 օրինակը։ Բոլշևիկյան Սոցիալ-դեմոկրատ»-ը (№№ 15, 16, 1910), և գերմանական սոցիալ-դեմոկրատիայի օրգան «Neue Zeit» (տե՛ս № 1, 1910) բարձր են գնահատել այդ աշխատությունը։ Ս. Տ. Արկոմեդի վերոհիշյալ գրքի մասին ժամանակին հոդվածներ են հրապարակվել «Парижский листок»-ում (№ 29, 24 հոկտեմբերի, 1910), «Русская мысль»-ում (Ն. Ժորդանիայի գրախոսականը, հուլիս, 1911), «Դրոշակ»-ում (տե՛ս Մ. Վարանդյանի ընդարձակ քննադատական ծանոթագրությունը, № 7—9, 1910, էջ 67) և այլն։

132 Տե՛ս «Տարազ», № 42, 7 նոյեմբերի, 1899, էջ 968—969, № 43, 14 նոյեմբերի, էջ 984—989, № 45, 28 նոյեմբերի, էջ 1028—1032, № 19, 27 մայիսի, 1901, էջ 209—212 և այլն։

133 Տե՛ս Արտո Նղիազարյան, «Հովսեփ Աթաբեկյան», «Պատմաբանասիրական հանդես», № 2—3, 1959, 204—210։ Նույնի, Հովսեփ Աթաբեկյանի «Իտալական» հոդվածները», Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 11, 1960, էջ 61—69։

Հովսեփ Ներսեսի Աթաբեկյանց (1870—1916)—հայ առաջին սոցիալիստներից։ Ավարտել է Թիֆլիսի առաջին արական գիմնազիան, ապա սովորել Պետերբուրգում և արտասահմանում, 1894 թ. ուղևորություն է կատարել Իտալիա, «Neue Zeit»-ի 1895 թվականի 27, 28, 32 և 33 համարներում «At» ստորագրությամբ լույս են տեսել նրա հոդվածները, 1895 թ. վերադարձել է հայրենիք և զբաղվել գյուղատնտեսությամբ, 1900 թ. փոխադրվել է Բաքու, Բալախանի,

բանում ուսանելուց հետո, նա մեկնում է Գերմանիա, սովորում Հոհենհայմի Գյուղատնտեսական ակադեմիայում, իսկ այն ավարտելուց հետո գնում է Շտուտգարդ։ Այստեղ՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և մարքսիստական գաղափարախոսության օջախներից մեկում, երիտասարդ Ա.Թաբեկյանցը 90-ական թվականներին մոտիկից հաղորդակից է դառնում մարքսիզմին, հնարավորություն ստանում անձամբ ծանոթանալու Կ. Կաուցկու, Կ. Ցետկինի, Պարվուսի և այլ գործիչների հետ, լսելու Ա. Բեբելի, Վ. Լիբկնեխտի, Վ. Ադլերի և այլոց ելույթները։ Նա ուսումնասիրում է մարքսիզմը, տարվում գիտական սոցիալիզմի գաղափարներով։ Հ. Ա.Թաբեկյանցի մասնակցությամբ Կաուցկին և Պարվուսը Թուրքիայում կատարվող հայկական կոտորածների առթիվ թռուցիկներ են պատրաստում և հրատարակում գերմանական և ավստրիական մամուլում։ Հ. Ա.Թաբեկյանցը Իտալիայում առիթ է ունեցել ծանոթանալու Տուրատիի և 1894 թվականի Սիցիլիայի գյուղացիական շարժման ղեկավարների՝ Դեֆիլիչեի, Բարբատոյի և այլոց հետ։

1893—1894 թվականներին Շտուտգարդում գերմաններենից հայերեն են թարգմանվում «Կոմունիստական մանիֆեստ»-ը և Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմը» աշխատությունը։ «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության հրատարակության համար համառոտ առաջաբան ստանալու ակնկալությամբ 1894 թվականի նոյեմբերի 1-ին Հ. Ա.Թաբեկյանցը նամակով[134] դիմում է Ֆ. Էն-

---

1903 թ. նորից է վերադառնում հոր մոտ՝ Հայաստան, 1907 թ. ընտրվել է պետական դումայի պատգամավոր, 1914 թ. կրկին մեկնել է դիպլոմատական ծառայության, 1916 թ. հունվարի 15-ին Կարսում ինքնասպանություն է գործել։ (Տե՛ս М. М. Бонович, Члены Государственной думы. Второй созыв. М., 1907, стр. 459, № 14, 1916, «Հովսեփ Ա.Թաբեկյան», «Համբավարար», № 5, 1916, «Բանվորի ձայն», № 8, 1920, «Գյուղատնտես», № 2, 1916, «Тифлисский листок», № 16, 1916 և այլն)։

134 Հ. Ա.Թաբեկյանցի նամակը Ֆ. Էնգելսին առաջին անգամ հրապարակվել է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմա-բանասիրական «Հանդես»-ի 1959 թ. № 2—3-ում՝ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի մեկնաբանություններով։ Տե՛ս А. Иоаннисян, Письмо Иосифа Атабекяна Ф. Энгельсу по поводу перевода на армянский язык «Коммунистического манифеста». Հեղինակը այդ հարցին անդրադարձել է նաև Ֆ. Էնգելսի նամակը «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության նախաբանի փոխարեն (տե՛ս «Նորք», գիրք չորրորդ։ 1924, էջ 125—126, «Անցյալի ցավերից։ Էնգելսը Հայաստանի ազգային ազատագրման մասին» («Խորհրդային Հայաստան», № 82, 8 ապրիլի, 1926) հոդ-

գելսին։ Նամակի փաստն ինքնին ուշագրավ է։ Նկատի ունենալով, որ պատմական վավերագրի ուժ ստացած այդ նամակը ցարդ հայերեն չի հրատարակվել, ստորև բերում ենք նրա ամբողջական տեքստը։

«Շտուտգարդ, 1 նոյեմբերի 1894

Մեծարգո Ֆրիդրիխ Էնգելս.

Մտադիր լինելով հայերեն թարգմանությամբ հրատարակել «Կոմունիստական մանիֆեստը», դիմում ենք Ձեզ, որպես հեղինակի և գիտական սոցիալիզմի պատրիարքի, հույս ունենալով, որ Դուք կմաղթեք մեզ կատարելու այդ բարի գործը։ Ձեր «Գիտական սոցիալիզմը» (Die Entwicklung des Sozialismus von der Utopie zur Wissenschaft) տպագրելուց հետո մենք վճռեցինք ձեռնամուխ լինել «Կոմունիստական մանիֆեստի» այդ մեծ, թեպետ և ոչ ծավալուն աշխատության հրատարակությանը, որը շատ ժողովուրդների պատմության մեջ հանդիսացել է իբրև առաջին պրոպագանդիստական ստեղծագործություններից մեկը։ Հայերեն լեզվով «Կոմունիստական մանիֆեստի» հրատարակությունը, որի մասին Դուք խոսում եք իբրև տարօրինակ երևույթի «Մանիֆեստի» գերմաններեն հինգերորդ հրատարակության երրորդ նախաբանում, շատով պետք է լինի և կլինի կատարված փաստ։ Չնայած որոշ դժվարությունների, որ ներկայացնում է «Մանիֆեստի» հայերեն լեզվով թարգմանելը, բայց և այնպես դրանք հաղթահարված են, թարգմանության մեջ մենք աշխատել ենք թույլ չտալ և ոչ մի ազատություն, ամենուր խստորեն հետևելով գերմաններեն բնագրին։ «Մանիֆեստի» թարգմանությունը բոլոր երեք նախաբաններով հանդերձ, որոնց կկցվի նաև Ինտերնացիոնալի կանոնադրությունը՝ արդեն լիովին պատրաստ է տպագրության և սպասում է միայն Ձեր թույլտվությանը։ Եթե Դուք այնքան բարի կգտնվեք, որպեսզի «Մանիֆեստի» մեր հրատարակության առթիվ գեթ մի քանի ջերմ, սրտալիր խոսքեր գրեք, ապա մենք

վածներում և «Էնգելսը և հայկական հարցը» բրոշյուրում։ «Նորք»-ում հրապարակված մեկնաբանություններում Հովհաննիսյանը հիմնավորում է այն միտքը, թե Էնգելսի 1894 թ. նոյեմբերի նամակը ոչ թե ուղղված է Ավ. Նազարբեկին, ինչպես 1903 թվականին գրել է «Պրոլետարիատի կոիվը» (№ 2—3), այլ Հ. Աթաբեկյանցին։

Ձեզ շատ և շատ երախտապարտ կլինենք։ Մենք դիմում ենք Ձեզ այս խնդրով, գիտենալով, որ Ձեր խոսքերը անհրաժեշտ ընթացք կտան նոր գործին՝ սոցիալիստական գաղափարների պրոպագանդմանը հայ ժողովրդի, Փոքր Ասիայի թերևս ամենակուլտուրական ներկայացուցչի մեջ, որը արդեն տաս տարուց ավել է, որ ընդգրկվել է հեղափոխական շարժման ոլորտը։

Սակայն թույլ տվեք ինձ մի քանի, թեկուզ ամենահամառոտ, գծերով ծանոթացնել Ձեզ այդ ասիական ժողովրդի ներկա դրությունին։ Հայոց պատմությունը, ինչպես հայտնի է Ձեզ, կապված է ամենահին ժողովուրդների՝ ասորեստանցիների, բաբելացիների, պարսիկների, հույների, հռոմայեցիների և մյուսների պատմության հետ։ Քրիստոնեությունը, որ Հայաստան է թափանցել դրեթե Քրիստոսի կենդանության ժամանակ*, շատ ուժեղ ազդեցություն է թողել այդ ժողովրդի ինչպես գրականության, այնպես էլ պատմության վրա։ Հին Հայաստանի հինգերորդ կամ այսպես կոչված «Ոսկե դարը», որը մեզ թողել է պատմական, աստվածաբանական, փիլիսոփայական բովանդակությամբ հսկա գրականություն, դեղեցիկ չափանիշ է հանդիսանում նրա այն ժամանակվա բարձր մշակույթի համար։ Հին պատմության մեջ հայկական պետությունը երբեք էլ առանձին դեր չի խաղացել, հայկական նահանգների ներքին, գրեթե ֆեդերատիվ միությունը միշտ էլ խանգարել է հայկական պետության կենտրոնացմանը և ուժեղացմանը։ Անվերջ ներքին երկպառակություններ և պատերազմներ, որոնց քրիստոնեական պատմագրությունը հաղորդել է քրիստոնեական-կրոնական պատերազմների երանգ՝ ահա ամենը, որ քաղում ենք մենք մեր պատմական գրքերից։ Թաթար-մոնղոլական հրոսակների Հայաստան ներթափանցելուց հետո հին մշակույթի շատ բան ջարդուփշուր է լինում և աշնանում, իսկ հայ ժողովրդի հետագա զարգացումը կանգ է առնում հարյուրամյակներ շարունակ։

Մոտավորապես XIV դարում կորցնելով քաղաքական ինքնուրույնությունը, Հայաստանն ընկնում է պարսկական և ապա թուրքական լծի ներքո։ XIX հարյուրամյակի սկզբին մենք Հայաստանը գտնում ենք երեք տերությունների՝ Թուրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի ձեռքերում։ Հայաստանի գլխավոր մասը այժմ գտնվում է թուրքական և ռուսական միապետությունների

* Քրիստոնեությունը Հայաստան է թափանցել IV դարում—Խ.Ռ.։

ձեռքում, ուստի և մեր գլխավոր ուշադրությունը դարձած է, հիմնականում Ռուսաց և Թուրքաց Հայաստանի վրա։ Այն դեպքում, երբ Ռուսաց Հայաստանը, շնորհիվ ռուսական մշակույթի հետ ունեցած մերձավոր շփումների, Եվրոպայի և Ռուսաստանի հետ ունեցած առևտրական կապերի, հաղորդակցության ճանապարհների և արդյունաբերության զարգացման այսօր համեմատաբար կրում է կուլտուրականության կնիք, Թուրքաց Հայաստանը՝ զուրկ բոլոր այդ պայմաններից, դեռ մինչև հիմա էլ՝ շրջապատված զանազան խաշնարած վայրի ժողովուրդներով, շատ է ետ մնացել Ռուսաց Հայաստանից։

Բայց և այնպես, ինչպես ռուսահայերը, այնպես էլ Թուրքահայերը առանց չափազանցության կարող են կոչվել Փոքր Ասիայի ամենակուլտուրական ներկայացուցիչները։ Գյուղերում, որտեղ մինչև հիմա էլ պահպանվել է համայնական հողատիրությունը, հայերը լավ հողագործներ են, քաղաքներում՝ նախաձեռնող, ճարպիկ վաճառականներ, արհեստավորներ և մտավորականության ներկայացուցիչներ։ Ռուսաց Հայաստանի մասին այստեղ Ձեզ որևէ բան գրելու հարկ չկա, այն պետք է որ Ձեզ քաջ հայտնի լինի, որովհետև նրա պատմությունը նույնպես, ինչպես և ամեն մի հեղափոխական շարժում, ընթանում է Ռուսաստանի պատմությանը զուգահեռ։ Պայքար բացարձակ միապետության դեմ՝ ահա այն անկյունաքարը, որին բախվում են ռուսական կայսրության, համառուսական ռեակցիայի այդ հսկա պահեստաբանակի բոլոր ժողովուրդները։ Գործը մի փոքր այլ է Թուրքաց Հայաստանում, որտեղ հեղափոխական շարժումը ազգային-հայրենասիրական պայքարի, ազգային անկախության համար մղվող պայքարի բնույթ է կրում։

Թուրքերը, նվաճելով Հայաստանը, կարողացան հայկական հողագործ, մշակութապես բարձր կանգնած բնակչությանը դարձնել շահագործման օբյեկտ։ Նրանք արմատախիլ արին մեր նախկին ազնվական դասը և իրենք գրավեցին նրանց տեղը։ Նրանք ժողովրդի ձեռքից խլեցին սուրը, հրացանը և պաշտպանական ամեն մի միջոց, թողնելով նրանց միայն դութանը։ Նրանք մեզ զրկեցին զինվորական պարտականություններից, վախենալով մեր ձեռքը հրազեն տալ և փոխարինեցին այն հարկերի մի ամբողջ կույտով։ Եթե սկզբում զորակի դերում հանդես էր գալիս գրեթե ողջ Թուրք բնակչությունը, ապա ժամանակի ընթացքում այդ փոխվեց։ Թուրք բնակչությունը հարկադրված եղավ թողնել

թալանն ու ավազակությունը, դառնալ նստակյաց, ձեռք զարկել հողագործությանը և փոքր առ փոքր շահագործողից վերածվել շահագործվողի։ Այսօր Թուրք ժողովուրդն այնպես, ինչպես և հայ ժողովուրդը, թեև ոչ նույն աստիճանի, ճնշվում է Թուրք արիստոկրատիայի և բռնապետական կառավարության կողմից։

Թուրքահայերի վիճակը վերջին երկու տասնամյակների ընթացքում այն աստիճան է վատթարացել, որ ահիթ է հանդիսացել մեծ ու արյունահեղ ապստամբությունների։ Չնայած այն բանին, որ ռուս-Թուրքական պատերազմից (77—78) հետո Բեռլինի պայմանագրով հանձնարարվում է ռեֆորմներ անցկացնել Թուրքաց Հայաստանում (վարչական, ինքնավարության ռեֆորմներ և այլն), դրանք մինչև այսօր էլ չեն կենսագործվել։ Սակայն այդ ռեֆորմները ոչ միայն չեն կենսագործվել, այլ ընդհակառակը, հայկական բնակչության նկատմամբ ոտնձգությունները, ճնշումները և, ի վերջո, ուղղակի բարբարոսական հալածանքներն աճել են երկրաչափական համամասնությամբ։ Բեռլինի այդ շարաբաստիկ պայմանագիրը ստորագրած եվրոպական տերությունները միշտ էլ հանգիստ տարել են Թուրքական կառավարության այդ վայրագ ավերածությունները, միայն ժամանակ առ ժամանակ մեր հասցեին ուղարկելով ցավակցության մի քանի պլատոնական խոսքեր։ Ջանգվածային սպանությունները, կանանց բռնաբարումը, թալանը և ամեն տեսակի բարբարոսությունները, որոնք «բուլղարական սարսափներ» են հիշեցնում, ստիպեցին Թուրքահայերին զենքի դիմել և համընդհանուր ապստամբության ուղիով աշխատել թոթափել Թուրքական լուծը և բարելավել իրենց տնտեսական սոսկալի վիճակը։ Բայց և այնպես Թուրքական կառավարությունը ոչ միայն շարունակում է իր սկսած վայրագությունները, այլև դիմում է նոր բարբարոս քայլերի. քրդական ավազակ ցեղախմբերից (խաշնարածներից) նա անկանոն զնդեր է կազմում, իսկ Թուրք բնակչության մեջ բորբոքում է կրոնական մոլեռանդությունը և ինչպես առաջիններին, այնպես էլ երկրորդներին լարում է անպաշտպան հայ բնակչության դեմ։ Մինչև այժմ ապստամբելու, քաղաքական նոր ձևերի հասնելու փորձերը չեն հաջողվել։ Բայց և այնպես հեղափոխական շարժումը ավելի ու ավելի է աճում, լայն օժանդակություն գտնում ռուսահայերի կողմից, որոնք մինչև հիմա նյութական ու մարդկային մեծամեծ զոհեր են բերել։ Եվ հիմա, հենց այս պահին, մինչ գրում եմ Ձեզ այս տողերը, Փոքր Ասիայի կենտրոնում հայերը կռվում են Թուրքա-

կան զորքերի դեմ, հուսալով թոթափել իրենց վրայից թուրքական աբսոլյուտիզմը և բռնապետության ատելի լուծը։

Վերջապես, ևս երկու խոսք։ Բանվորական դասակարգը, որ մեզ մոտ դեռևս աննշան թիվ է կազմում, համալրվում է այն աղքատացած գյուղացիներից, որոնք, լքելով իրենց գյուղերը, երկար տարիներ անց են կացնում պանդխտության մեջ, մեծ քաղաքներում՝ արդյունաբերական և առևտրական կյանքի կենտրոններում։ Եթե նրանք կրկին վերադառնում են հայրենիք, ինչ որ մեծ մասամբ և կատարվում է, ապա սովորաբար նրանք դառնում են նոր գաղափարների լավագույն տարածողները։ Կապիտալիստական դասակարգի, տիրապետող և շահագործող դասակարգի ներկայացուցիչները հատկապես Թուրքիայում հանդիսանում են վաշխառուներն ու վաճառականները, որոնք ավագակային քրդական ցեղախմբերի և թուրք վաշխառուների հետ միասին թալանում են և քամում գյուղական բնակչությանը։ Ճիշտ է, մեզ մոտ, ինչպես Թուրքայ, այնպես էլ Ռուսաց Հայաստանում դասակարգային հակադրությունը չի հասցրել դեռևս զարգանալ, դեռևս չկան պրոլետարիատի և բուրժուազիայի խիստ կերպով պարագրծված զանգվածներ, բայց և այնպես միամտություն կլիներ ժխտել միմյանցից տարբերվող դասակարգային շահերի առկայությունը, տնտեսական հակասությունները կամ ընդհանրապես մոռացել հետաձգել ամեն մի սոցիալիստական պրոպագանդա այսօր, երբ տնտեսական ճնշման և արևելյան բռնապետության առաջ բերած հեղափոխական հեղեղը այնպես դյուրացնում է պրոպագանդայի և գյուղացիական զանգվածների կազմակերպման գործը։ Հիմա, երբ տնտեսապես սոսկալի ճնշված թուրքահայերը ներգրավվել են հեղափոխական շարժման մեջ, երբ բարբարոսական հալածանքների հետևանքով (որոնցից սարսում է թուրքական բռնապետական կառավարությունը) աճում է այդ շարժումը հայ ժողովրդական զանգվածների մեջ, սոցիալիստ-հեղափոխականների կողմից մեծ սխալ կլիներ մասնակցություն չունենալ նրանում և չօգտվել նրանից սոցիալիստական ուսմունքի պրոպագանդայի համար։ Մենք հետևում ենք «Կոմունիստական մանիֆեստի» խոսքերին, որոնք մեզ մեր դերի համար գլխավոր ծիրն են նշում՝ օժանդակել «ամեն մի հեղափոխական շարժման ընդդեմ գոյություն ունեցող հասարակական և քաղաքական հարաբերությունների», հասկանալի է, անտես չանելով հեղափոխական շարժման «ապագան»։

Պրոպագանդայի համար «Կոմունիստական մանիֆեստը» մենք համարում ենք լավագույն ստեղծագործություններից մեկը։ Տպագրելով այն, մենք, հասկանալի է, ի նկատի ունենք, բացի գյուղացիական բանվորական զանգվածներից, գլխավորապես և քաղաքային բնակչությանը՝ մեր վաճառականներին, մեր դեռևս զգայուն մտավորականությանը, ուսանող երիտասարդությանը և ուրիշների։

Ընդունեցեք հարգանքս հավատիքը՝ Հովսեփ Աբաբեկյանց
Adresse: Stuttgart, Rothebûle Str. 150, an Herrn Atabekianz
(Հավելում Կառլ Կաուցկու ձեռքով). Lieber General, Atabekianz ist mir als ernster und eifriger Genosse bekannt—das genügt wohl; sein Brief spricht jedenfalls für sich selbst, mit bestem Gruß, dein Karl.

Սիրելի գեներալ, Աբաբեկյանցը հայտնի է ինձ իբրև լուրջ և ջանասեր ընկեր. թերևս այդքանն էլ բավական է։ Նրա նամակը, համենայն դեպս, ինքն իսկ խոսում է իր մասին։

Լավագույն ողջույններով՝

քո Կառլ» [135]։

Հ. Աբաբեկյանցի նամակը, ինչ խոսք, պատիվ է բերում հեղինակին։ Բայց նրանում, ինչպես ճիշտ կերպով նկատել է Ա. Հովհաննիսյանը, Աբաբեկյանցը բացահայտվում է որպես մեկը 80-ական թվականների հայ ազգային նարոդնիկական շարքերից ելած հայ մտավորականության բացառիկ այն ներկայացուցիչներից, որոնք 90-ական թվականների կեսերին տարված էին այն մտքով, թե հայ ազգային-ազատագրական շարժումը պիտի օգտագործվի Ռուսաստանի և Թուրքիայի հայ գյուղական և քաղաքային մասսաների մեջ գիտական սոցիալիզմի գաղափարները պրոպագանդելու համար։ Այս մի ժամանակ էր, երբ նարոդնիկ-

135 Հ. Աբաբեկյանի նամակի ֆոտոպատճենը Ա. Հովհաննիսյանը հանձնել է Մշի Հայկական ֆիլիալի արխիվին և պահվում է հավաքածուների ֆոնդում։ Սույն տեքստի թարգմանությունը կատարված է Պատմաբանասիրական «Հանդես»-ի 1959 թվականի № 2—3-ում լույս տեսած ռուսերեն օրինակից։ Նամակի բնագիրը, հավանական է, պահվում է Ամստերդամում՝ Ֆ. Էնգելսի արխիվում, որը գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության կենտրոնական վարչության իրավասության տակ է։

ների քարոզած գյուղացիական սոցիալիզմը իր գաղափարական դիրքերը սկսում էր զիջել պրոլետարական սոցիալիզմին[136]։

Հ. Աթաբեկյանցը հետևողական մարքսիստ չէր[137]։ Հատկանշական է, որ տուրք վճարելով նարոդնիկներից եկող ավանդությանը, նա ինքն իրեն «սոցիալիստ հեղափոխական» էր անվանում։

Ֆ. Էնգելսը 1894 թվականի նոյեմբերի 23-ին Հ. Աթաբեկյանցին պատասխանում է նամակով, շնորհակալություն հայտնում «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության համար և նշում, որ չի կարող առաջաբան գրել, բայց, օգտվելով առիթից, արտահայտում է իր դրական վերաբերմունքը հայ ժողովրդի ազգային-քաղաքական ազատագրման գաղափարին, որը և դարասկզբին ուղենիշ դարձավ հայ հեղափոխական մարքսիստների սկզբունքային վարքագծի մշակման համար։

Ահա Ֆ. Էնգելսի պատասխանը Հ. Աթաբեկյանցին.

«Հոսեփ Աթաբեկյանցին—Շտուտգարդ

Լոնդոն, 1894 թ. նոյեմբերի 23,
41, Rogenes Park
Road. N. W.

Հարգելի ընկեր,

Շատ շնորհակալ եմ, որ Դուք թարգմանեցիք ձեր հարազատ հայերենով իմ «Սոցիալիզմի զարգացումը», իսկ վերջերս նաև «Կոմունիստական մանիֆեստը»։ Դժբախտաբար, ես ի վիճակի չեմ կատարել Ձեր խնդիրը և վերջինիս համար մի քանի տող ներածություն գրել։ Ինձ համար դժվար է գրել որևէ բան, որ նախատեսված է հրատարակել այն լեզվով, որ ես չեմ հասկանում։ Եթե այդ ես կատարեի Ձեր նկատմամբ տածած սիրալիրությունից ելնելով, ապա չէի կարող մերժել այդ բանում նաև ուրիշներին, իսկ այն ժամանակ կարող էր պատահել, որ իմ խոսքերը լույս

136 Տե՛ս «Հանդես», № 2—3, էջ 327։

137 Լ. Լևինը իր «Библиография библиографий произведений К. Маркса, Ф. Энгельса, В. И. Ленина» գրքում գրել է. «И. Атабекянц один из представителей армянских народников, переходивших на позиции марксизма»... (см. тэм же, էջ 66). Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի երկերի 39-րդ հատորի (2-րդ հրատ.) համապատասխան ծանոթագրության մեջ ասված է. «Атабекянц (Atabekjanz) Иосиф Нерсесович (1870—1916), армянский социал-демократ...» (էջ 510)։

կտեսնեին ոչ-դիտավորյալ կամ նույնիսկ դիտավորյալ կերպով աղավաղված ձևով, իսկ ես այդ մասին միայն շատ տարիներ անց կիմանայի, իսկ թերևս և բոլորովին չիմանայի։

Բացի դրանից, ինչքան էլ որ շնորհակալ եմ Հայաստանի դրության Ձեր հետաքրքիր պատկերացման համար, այնուամենայնիվ, չեմ կարող ճիշտ և արդարացի համարել դատողություններ արտահայտելու այն մասին, ինչ որ ես չեմ իմացել սեփական ներազդության հետևանքով։ Առավել ևս ավյալ դեպքում, երբ խոսքը ճնշված ժողովրդի մասին է, որը դժբախտություն ունի գտնվելու թուրքական դեսպոտիզմի Սցիլլայի և ռուսական դեսպոտիզմի Խարիբդայի միջև, ընդ որում ռուսական ցարիզմը շարաշահում է՝ հանդես գալով ազատարարի դերում, իսկ լակեյական ռուսական մամուլը, ելնելով ապրեսիվ ցարիզմի նպատակներից, բաց չի թողնում առիթը օգտագործելու հայերի ազատագրության վերաբերյալ արտահայտած յուրաքանչյուր խոսքը։

Բայց եթե անկեղծորեն ասենք, իմ անձնական կարծիքն է, որ Հայաստանի ազատագրումը թուրքերից, ինչպես նաև ռուսներից հնարավոր կլինի միայն այն օրը, երբ կատաղվի ռուսական ցարիզմը։

Լավագույն ցանկություններս Ձեր ժողովրդին

Ձեզ անձնվեր՝ Ֆ. Էնգելս»[138]։

Անցյալում այն միտքն է հայտնվել, թե Ֆ. Էնգելսը «Կռահելով, որ Աթաբեկյանցը հետագայում կադետ է դառնալու, դրա համար հրաժարվել է «Մանիֆեստ»-ի հայերեն հրատարակության համար առաջարան գրել»։ Դա, իհարկե, ճիշտ չէ։ Գիտական կոմունիզմի պատրիարքը անկեղծորեն նշել է. «Դժբախտաբար, ես ի վիճակի չեմ կատարել Ձեր խնդիրը և վերջինիս համար մի քանի տող նեռածություն գրել։ Ինձ համար դժվար է գրել որևէ բան, որ նախատեսված է հրատարակել այն լեզվով, որը ես չեմ հասկանում։ Եթե այդ ես կատարեի Ձեր նկատմամբ տածած սիրալիրությունից ելնելով, ապա չէի կարող մերժել այդ բանում նաև ուրիշներին, իսկ այն ժամանակ կարող էր պատահել, որ իմ խոս-

---

138 К. Маркс и Ф. Энгельс, Соч., II изд., том 39, էջ 270—271. Ֆ. Էնգելսի պատասխանը առաջին անգամ տպագրվել է Շտուտգարտում հրատարակվող «Dokumentus der Sozialusmus» («Սոցիալիզմի փաստաթղթեր») ժողովածուում։ Այնուհետև «Պրոլետարիատի կոիվը» թերթի 1903 թ. № 2—3-ում։

Ես լույս կտեսնեին ոչ դիտավորյալ, կամ նույնիսկ դիտավորյալ կերպով աղավաղված ձևով, իսկ ես այդ մասին միայն շատ տարիներ անց կիմանայի, իսկ թերևս և բոլորովին չիմանայի»[139]:

Այդ ժամանակ, գաղափարական իրարամերժ տեսությունների պայքարում, շատերն էին ջանում մարքսիզմը օգտագործել իրենց հակառակորդներին լռեցնելու համար: Այդպես էին վարվում նաև «լեգալ մարքսիստները» Ռուսաստանում: Հ. Սիթարեկյանցին գրած պատասխանից մեկ օր անց, 1894 թվականի նոյեմբերի 24-ին, Լոնդոնից Պետերբուրգ Ն. Դանիելսոնին ուղարկած նամակում Ֆ. Էնգելսը պարզաբանում է, որ իր ռուս բարեկամները ամեն օր, ամեն շաբաթ իրեն պաշարում են խնդրանքով՝ առարկություններով հանդես գալ ընդդեմ ռուսական այն ժուռնալների ու գրքերի, որոնց մեջ մեր հեղինակի (Կ. Մարքսի) խոսքերը ենթարկվում են ոչ միայն կեղծ մեկնաբանությունների, այլ նաև սխալ հաղորդման: «Ես միշտ և շարունակ մերժում եմ բոլոր այդպիսի առաջարկները,— գրել է Ֆ. Էնգելսը,— որովհետև չեմ կարող չհրաժարվելով իմ իսկական և լուրջ գործից, թույլ տալ, որ ինձ բանավեճի մեջ քաշեն հնարավոր մի երկրում, մի լեզվով, որով ես դեռևս չեմ կարողանում այնպես հեշտ ու ազատ կարդալ, ինչպես կկարդայի ինձ ավելի լավ ծանոթ արևմտյան լեզուներով, մի մամուլում, որից, լավագույն դեպքում, միայն առանձին հատվածներ են ձեռքս ընկնում...»[140]:

Ռուսաստանի ուսանողները, այդ թվում՝ հայերը, Կ. Մարքսին ու Ֆ. Էնգելսին խնդրում էին ռուսական երիտասարդությանը մասնակից անել հեղափոխական շարժումներին, խորհուրդներ, «ավելի ճիշտ հրամաններ, տալ, որպեսզի հետևելով մարքսիստների ծրագրին, իրենց բաժինը մտցնեն այն շենքի կառուցման մեջ, որ նրանք բարձրացնում են հին հասարակության փլատակների վրա»[141]:

1890-ական թվականներին արտասահմանում սովորող հայ ուսանողներից մի քանիսի աշխատությունների վրա զգացվում է

---

139 К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, II изд. том 39, стр. 270. *Ընդգծումը մերն է — Խ. Բ.:*

140 *Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, էջ 235:*

141 *Տե՛ս «Ս. Պետերբուրգի համալսարանի մի խումբ իրավաբան ուսանողները Մարքսին», «Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ», էջ 249—250:*

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքի ազդեցությունը։ Այսպես, 1894 թվականին Լոզանում ֆրանսերեն լեզվով լույս տեսավ Հակոբ Մեղավորյանի «Հայկական ընտանիքի և ամուսնության իրավաբանական ու ազգագրական ուսումնասիրություն» դոկտորական դիսերտացիան[142]։ Հ. Մեղավորյանը ազգագրագետ էր, մինչև Լոզան գնալը, 1890 թվականի հունվարին Ռ. Խան-Ազատի, Գ. Կաֆյանի հետ միասին Տրապիզոնում ստեղծել է տեղի հնչակյան կազմակերպությունը, նույն թվականի հուլիսի 15-ին ակտիվ մասնակցություն ունեցել Կ. Պոլսի նշանավոր ցույցին[143]։ Մեկնելով ծնև և ապա Լոզան, Հ. Մեղավորյանը խորապես ուսումնասիրում է ժամանակի սոցիալական ուսմունքները, իրեն հնչակյան ծանոթանում մարքսիզմին, յուրացնում Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» դասական աշխատության ուղենիշային դրույթները։

Նյութ ունենալով հարազատ ժողովրդի գոյավիճակից, հայկական ընտանիքի և ամուսնության պրակտիկայից, Հ. Մեղավորյանը պատվանդան դարձնելով Ֆ. Էնգելսի աշխատությունը, շարադրում է իր մենագրությունը։ Նրանում հեղինակը նպատակ է դրել հայոց նախնական ու այժմյան ընտանիքի և ամուսնական օրենքների ուսումնասիրությունը դնել գիտական հողի վրա։

Բուն նյութին անցնելուց առաջ, հեղինակը գրքի առաջաբանում խոսում է հայոց իրավաբանական մատենագրության մասին։ Ազգագրության բաժնում քննարկվում են ընտանիքի հարցերը, ապացուցվում, որ հայոց մեջ ևս գոյություն է ունեցել տոհմը (gens)՝ նկարագրվում է տոհմապետի (նահապետի) իրավունքներն ու նշանակությունը, տոհմի անդամների փոխադարձ հարաբերությունները։ Այնուհետև, նա մասնավորապես շեշտում է տան

---

142 Agop Megavorian, Famille et le mariage armeniens, Lausane, 1894. Հանրային գրադարանում այս գրքից պահվում է 3 օրինակ (Գր. Խալաթյանի, Հ. Մանանդյանի և Խաչանյանի ֆոնդերում)։

143 Տե՛ս Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870—1900), հատ. II, էջմիածին, 1922, էջ 207—208, Ռուբեն Խան-Ազատ, Հայ հեղափոխականի հուշերից, «Հայրենիք», № 11 (59), Ե տարի, 1927, էջ 133—138, Պատմություն Ս. Դ. հնչակյան կուսակցության, 1887—1962, Ա հատոր, Պեյրութ, էջ 42, 44, 48, 49, 200—202, «Մուրճ», № 12, դեկտեմբեր 1898, էջ 1799—1800, «Մշակ», № 10, 26 հունվարի, 1895, «Հայկական նոր մատենագրություն և հանրագիտարան հայ կյանքի», կազմեց Հ. Արսեն Ղազիկյան-Մխիթարյանց, երկրորդ պրակ, Վենետիկ, 1912, էջ 1947—1948, Ա. Աղոյան, Մարքսիզմի հայ առաջնեկներից մեկը, տե՛ս «Լենինյան ուղիով», № 8, 1965, էջ 105—108։

մեծի ու տանտիկնոջ փոխհարաբերությունները, նկարագրում նահապետական (Patriarcale) ընտանիքը հայոց մեջ, հոր, մոր և մյուս անդամների իրավունքները և տիրող կարգերը։ Առանձին հատվածի մեջ պատկերավոր նկարագրելով հայոց ամուսնական սովորություններն ու ծեսերը, ապացուցելով, որ հայերն էլ կին առևանգելու և գնելու սովորություն են ունեցել, ավարտում է ազգագրական մասը։ Հեղինակը ճիշտ կերպով եզրակացնում է, որ հայկական նահապետական ընտանիքի հասարակական ու բարոյական հիմքերը պետք է որոնել նրա նյութական և հասարակական դրության ամրության մեջ։ Իր մտքերը հիմնավորելու համար հեղինակն օգտվել է հայ հին և նորագույն մատենագիրներից, գլխավորապես Ե. Լալայանցի «Ջավախքի բուրմունք»-ից։

Ամուսնության գլուխը, որի համար հեղինակին իբրև աղբյուր են ծառայել գլխավորապես եկեղեցական կանոնները, Մխիթար Գոշի և Սմբատ սպարապետի մշակած օրենքները, քննում է հայոց եկեղեցում ընդունված ամուսնական նորմերը, այն պայմանները, որոնք պետք է նկատի առնվեն ամուսնության ժամանակ, ինչպես, օրինակ, ամուսնացողների տարիքը, փոխադարձ համաձայնությունը, ծնողների համաձայնությունը, արենակցությունը, խնամությունը, որդեգրությունը, կաթնեղբայրությունը, խորթությունը, կրոնների տարբերությունը, կուսակրոնությունը և այլն։ Նկարագրելով, թե ինչպես են կատարվում հայերի մեջ նշանադրությունն ու պսակի օրհնությունը, նա անցնում է ամուսնալուծության հարցին։ Հեղինակը հիմնավորում է, որ հայերի մեջ չի եղել բաժանումն (Séparation de corps), բայց ամուսնալուծությունը ընդունված է եղել, և մեջ է բերում դրա մի շարք պատճառներ,— պոռնկություն, գերեվարություն, երկար բացակայություն, դավադրություն ամուսնու կյանքի դեմ, դիվահարություն, վարակիչ հիվանդություն, ամուլություն, ամուսնական անկարողություն, կուսության խախտում, անտանելի ղղվանք, կրոնափոխություն, կախարդություն։ Հեղինակն այս ամենը նկարագրում էր մատերիալիստական դիրքերից, հիմք ունենալով սոցիալ-քաղաքական պայմանները։ Իր աշխատությունը նա ավարտում է՝ բացատրելով ամուսնալուծության հետևանքները։

«Ամուսնության և ընտանիքի պատմական էվոլյուցիայի բոլոր հիմնական հարցերում,— գրել է Ա. Ադոյանը,— հարելով Էնգելսին, Մեղավորյանը հանգամանորեն և խիստ ուշագրավ պատմական նյութերով (առնված հայ ընտանեկան կյանքի ոլորտից),

լուսաբանում է Էնգելսի շարադրած ընդհանուր սկզբունքները, ընդգծելով, որ հայ ժողովրդի ամուսնա-ընտանեկան պատմական էվոլյուցիան ընթացել է ճիշտ այն հիմնական ուղիներով, որոնց մասին հանգամանորեն գրել են Ֆ. Էնգելսը և Լ. Մորգանը»[144]։ Հ. Մեղավորյանի 126 էջից կազմված գրքում հայ ընտանիքի էվոլյուցիայի վերաբերյալ փաստական արժեքավոր նյութերի հետ միասին, գիտական ուշագրավ շատ եզրակացություններ կան, որոնք, ինչպես ասացինք, լույս են քաղում Ֆ. Էնգելսի հանճարից, աշխատությունը դարձնելով հայ հասարակական մտքի զարգացման ավյալ ժամանակաշրջանի մարքսիստական-մատերիալիստական մեկնաբանության հաջողված փորձերից մեկը։ Հ. Մեղավորյանի գիրքը նոր էր միայն լույս տեսել, երբ նրա մասին «Մշակ»-ում հրատարակվեց Ստ. Մալխասյանի («Ստ. Մ.» ստորագրությամբ) շահավետ գրախոսությունը։ Մեղավորյանի աշխատությունը, գրել է Մալխասյանը, «հիմնված է ճիշտ գիտական ոճի վրա և մի ամբողջական պատկեր է ներկայացնում հայոց ընտանիքի կազմակերպության և ամուսնական օրենքներին։ Այս գրվածքը մասնագետ ուսումնասիրողի ձեռքում կարևոր ուղեցույց կլինի՝ նորանոր հետազոտությունների ժամանակ, որոնք հարկավ շատ բան կլրացնեն այս գրքում և կփոփոխեն, բայց առանց այսպիսի գրքի, որ իր տեսակում առաջինն է մեր մեջ՝ ուսումնասիրողը հարյուրավոր երևույթների առաջ պետք է շվարած ու անօգնական մնար»[145]։

Հ. Մեղավորյանի մենագրության գլխավոր արժանիքը նրա մարքսիստական հագեցվածությունն է, Ֆ. Էնգելսի գաղափարների պրոպագանդան, հայ իրականության առանձին խճճված պրոբլեմների մարքսիստական մեկնաբանությունը։ Հետագայում, 1900 թվականին, աշխատելով Բաթումում Հ. Մեղավորյանը մի նոր ուսումնասիրություն պատրաստեց Փարիզի աղգագրական կոնգրեսի համար՝ նյութ ունենալով Կովկասի աղգագրության հարցերը և գրեց ռուսահայ ինտելիգենցիայի վերաբերյալ մի ուսումնասիրություն[146]։

1893—1895 թվականներին հայերեն լեզվով թարգմանվում և

---

144 Ա. Աղոյան, *Մարքսիզմի հայ առաջնեկներից մեկը*, «Լենինյան ուղիով», № 8, 1965, էջ 106։

145 Ստ. Մ., *Մատենագրություն*։ Տե՛ս «Մշակ», № 10, 26 հունվարի, 1895։

146 Տե՛ս «Մուրճ», № 12, դեկտեմբեր, 1898, էջ 1799—1800։

հրատարակվում են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի երկու գլուխները, Կ. Մարքսի «Ի՞նչ է աշխատանքի վարձը», Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմը», Ֆ. Լասալի «Սահմանադրության էությունը», Ս. Դիկշտեյնի «Ով ինչով է ապրում», Պ. Լաֆարգի «Իրավունք ծուլանալու» և ուրիշ այլ գրքեր:

«Կոմունիստական մանիֆեստ»-ի առաջին երկու գլուխները Մարո և Ավետիս Նազարբեկյանների թարգմանությամբ հրատարակվել են 1894 թվականին հնչակյան «Գաղափար» հանդեսի հունիս-սեպտեմբերյան համարներում [147]: Թեև «Գաղափար»-ի № 2-ի 184-րդ էջում ազդարարվում էր, թե «մամուլի տակ է առանձին գրքույկի ձևով «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի (կոմունիստական բառը նրանք թարգմանել են կոմունական—Խ. Բ.), բայց այն ոչ միայն առանձին բրոշյուրով չի հրատարակվել, այլ «Մանիֆեստ»-ի հաջորդ գլուխները լույս չեն տեսել «Գաղափար»-ում:

«Մանիֆեստի» թարգմանության առթիվ «Գաղափար»-ը ծանոթագրել էր. «Կոմունական (համայնական) կուսակցության մանիֆեստը (հայտարարությունը) Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի մյուս գրվածքների հետ միասին դեռ 1848 թ., որ հիմք դրեց գիտական սոցիալիզմին՝ տնտեսական ու սոցիալիստական գրականության ամենանշանավոր փաստերից մեկն է: Այդ «Մանիֆեստ»-ի հրատարակությամբ սկսվեց գիտության խորին քննադատությունը նախկին և ներկա տնտեսական-հասարակական կարգերի մասին» [148]:

«Գաղափար»-ը հրատարակել է նաև Պոլ Լաֆարգի «Կոմունիզմը և տնտեսական էվոլյուցիան» աշխատությունը, որը բանավիճային կարգով հեղինակը արտասանել է 1892 թվականին Փարիզի աշխարհագրական ընկերության սրահում, ինչպես նաև «Սոցիալիզմը Եվրոպայում (Սոցիալիզմը Իտալիայում)» և այլ հոդվածներ:

Սոցիալիստական գրականության հայերեն առաջին թարգմանությունները կատարել են սովորող երիտասարդները, այդ թվում՝

---

147 Տե՛ս «Գաղափար», № 1, 1894 թ. «Բուրժուա ու պրոլետարի» (էջ 15—32), № 2, «Պրոլետարներն ու կոմունիստները» (էջ 107—117): Չնայած թարգմանության տակ նշված է «Թարգ. Տ-ին Մ. [Տիկին Մարո]», բայց իրականում, ինչպես ասացինք, թարգմանել են Մարո և Ավետիս Նազարբեկյան ամուսինները:

148 «Գաղափար», № 1, 1894, էջ 15:

Գ. Ղարաջյանը, Հ. Աթաբեկյանցը, Մարո և Ավետիս Նազարբեկյանները և ուրիշներ։ Նրանք միաժամանակ, ինչպես տեսանք, անդրանիկ փորձերն են կատարել մարքսիստական ոգով ինքնուրույն աշխատություններ ստեղծելու ուղղությամբ։ Պատշաճը տալով նրանց, միաժամանակ արձանագրում ենք, որ այդ ամենը մարքսիստական գրականության հայերեն հրատարակությունների նախափորձերն էին։ Հ. Դանգրունու (Վանիկ) պնդումն այն մասին, որ ռուս սոցիալ-դեմոկրատիան յուրացրել է «իրենցմե առաջ, Պլեխանովեն առաջ, ստեղծված մարքսիզմը (այսինքն՝ հնչակյանների ստեղծածը—Խ. Բ.), և նույնիսկ նարոդնիկներու որոշ թեզերը» և «Հնչակյան կուսակցությանը... հաջորդած է հեռատեսին Շահումյանի կուսակցությունը»[149], ճիշտ չէ։

XIX դարի վերջին տասնամյակներում սոցիալիստական գաղափարները աստիճանաբար ծիլեր են արձակում հայ իրականության մեջ։ Հայ հասարակական առաջավոր մտքի վրա նկատվում է մարքսիստական առանձին դրույթների ազդեցությունը։ Եվրոպայում սովորող հայ ուսանողների ջանքերով թարգմանվում և հրատարակվում են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» (երկու գլուխ), Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ», Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմը», Ս. Դիկշտեյնի «Ով ինչով է ապրում», Պ. Լաֆարգի «Իրավունք ծուլանալու», Վ. Լիբկնեխտի «Սարդեր և ճանճեր», Ֆ. Լասալի «Սահմանադրության էությունը» և սոցիալիստական բովանդակության այլ գործեր։ Դրանց մեծ մասը կրում էր «Սոցիալիստական գրադարան» ընդհանուր խորագիրը։

Ավ. Նազարբեկյանի թարգմանությամբ հրատարակվեց Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատության մի գլուխը՝ այսպիսի ծանոթագրությամբ. «Սույն գրվածքը կազմում է մեկ ինքնուրույն գլուխը Կարլ Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» («Lohnarbeit und Kapital») վերնագրով գրության, որը շուտով լույս կընծայենք առանձին բրոշյուրով»[150]։ Նույն «Սոցիալիստական գրադարան» մատենաշարի գրքույկներից էր Պոլ Լաֆարգի «Իրավունք ծուլանալու»։ Հերքում 1848-ի «Աշխա-

---

149 Վանիկ, Գրքերու հետ, «Արարատ», № 7262(58), 19 հունվարի, № 7265, (16) 22 հունվարի, 1966, Գ. Հայկունու «Երթ մաքառման» գրքի գրախոսությունը։

150 Ակե-եանց, Հայերը Ամերիկայում և Ի՞նչ է աշխատանքի վարձ, Կարլ Մարքսից, Աթենք, Հայկական ազատ տպարան, 1893, էջ 26։

տելու օրենքին» երկը։ Այն բացվում էր Պ. Լաֆարգի նկարով։ Հայերեն հրատարակության առաջաբանում (էջ I—XV) համառոտակի շարադրված են Պ. Լաֆարգի ծառայությունները, կյանքի ու գործունեության նշաձողերը և ապա տեղեկություններ են տրված մարքսիզմի առաջացման ու տարածման մասին։

Մարքսիզմը, սոցիալիստական շարժումը, ասված է «Առաջաբան»-ում, բոլոր քաղաքակրթված երկրներում այլևս դարձել է այն կենտրոնակետը, որի վրա է պտտվում և չափվում հասարակական կյանքն ու տերությունների քաղաքականությունը»։

1894 թվականին Վիեննայում հայերեն լեզվով լույս է տեսնում Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմ» աշխատությունը։ Դա հեղինակի «Անտի-Դյուրինգ» երկի երրորդ՝ սոցիալիզմ բաժինն է, որոշ փոփոխությունների ենթարկած, որը, ըստ էության, «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» երկին նույնպես շատ մոտ է։ Հայտնի է, որ Ֆ. Էնգելսի «Անտի-Դյուրինգ»-ը (F. Engels. Herrn E. Dühring) 1877—1878 թվականներին հրատարակվել է «Vorwärts»-ի էջերում, իսկ 1878, 1885 և 1894 թվականներին ունեցել է երեք հրատարակություն։

Պոլ Լաֆարգը այդ հրատարակություններից ընտրելով երեք գլուխ, թարգմանաբար հրատարակել է Socalismus utopigue et Socialismus Seinbitigue խորագրով։ «Աշխատանքի ազատագրություն» խումբը Վ. Զասուլիչի թարգմանությամբ, ինչպես նշեցինք, հրատարակել է այդ երեք գլուխները առանձին գրքով «Ուտոպիական և գիտական սոցիալիզմ» խորագրով։ Հենց այդ տեքստն էլ թարգմանվել և 1894 թվականին «Գիտական սոցիալիզմ» խորագրով լույս է տեսել հայերեն (Գիտական սոցիալիզմ։ Թարգմանություն թիվ 4, Վիեննա, Հ. Հ. դաշնակցության ազատ տպարան, 1894, 78 էջ։ Նվեր հայ հեղափոխականներին)։ Նրանում Պ. Լաֆարգի և Վ. Զասուլիչի ծանոթագրությունները վերադրվել են Ֆ. Էնգելսին։ Ավելին, հայ թարգմանիչը իր հերթին, բացի «Երկու խոսք»-ից, ևս մի քանի տող է ավելացրել, առանց հիշատակելու, որ դրանք Ֆ. Էնգելսի խոսքերը չեն։ Այս և այլ կարգի պակասություններով հանդերձ Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմ» աշխատության հայերեն հրատարակությունը ուշագրավ երևույթ է։

«Երկու խոսք»-ում հայ թարգմանիչը (Ֆ. Էնգելսին Հովսեփ Աթաբեկյանցի գրած նամակում հիշատակված «Գիտական սոցիալիզմը» այս աշխատությունն է և ոչ թե «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտությունը», ինչպես մինչև այժմ նշշ-

վել է։ Վերջինս առաջին անգամ հայերեն լեզվով լույս է տեսել 1948 թվականին՝ Վ. Փոթեյանի թարգմանությամբ, իսկ «Անտի-Դյուրինգ»-ը ամբողջությամբ՝ 1932 թվականին՝ Գր. Ջաղեթյանի թարգմանությամբ)։ Ճիշտ կերպով նկատվել է, որ «Ֆ. Էնգելսի այս գրքույկը մի ամբողջացրած ծրագիր է գիտական սոցիալիզմն ուսումնասիրելու համար»։ Պարզաբանվում է, թե՝ աշխատությունը, որ գրված է «կարճ և սեղմ ձևով, իր մեջ ամփոփում է բոլոր փիլիսոփայական գաղափարներն ու պատմական շարժումները, որոնք հիմք և անմիջական ծնող դարձան նոր վարդապետության՝ մարքսիզմի։ «Թարգմանաբար հրատարակելով այս գրքույկը,— ասված է «Երկու խոսք»-ում,— մեր նպատակն է եղել մի կողմից՝ տարածել այդ «վարդապետությունը» մեր ինտելիգենցիայի մեջ և, մյուս կողմից՝ վերջ տալ այն խառն ու անհեթեթ հասկացողություններին, որ վերջին ժամանակներս տարածում են «գիտական սոցիալիզմ»-ի անվան տակ»։ Այնուհետև, խոսվում է այն մասին, որ հարկավոր է ժողովրդին բացատրել սոցիալիզմի էությունը, քանի որ մայրենի լեզվով հրատարակի վրա եղած գրականության մեջ դա պատշաճ ձևով չի տրված։ «Մեզ վրա ենք առնում սոցիալիզմի հետ ծանոթացնելը և նրա տարածելը, որքան մեր միջոցները կներեն», ասված է «Երկու խոսք»-ում։ Այդ նպատակով շեշտված է, հատկապես երիտասարդության, ինտելիգենցիայի դերը սոցիալիզմի գաղափարների տարածման, սոցիալիստական գրականության հրատարակության ասպարեզում։

«Հետաքրքրել այս հեղափոխության (պրոլետարական—Խ. Բ.) պատմական պայմաններն ու բնավորությունը և, այդպիսով, պարզել այդ գործի համար կոչված, այժմ ճնշված, տանջված դասակարգին իր սեփական գործի մեծ նշանակությունը,— ահա թե ինչումն է կայանում գիտական սոցիալիզմի խնդիրները, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ բանվորական շարժման տեսական (թեորիական) արտահայտությունը»,— այսպես է ավարտվում «Գիտական սոցիալիզմ» աշխատությունը։

5

Հայ հասարակական զարգացմանը, ինչպես նշեցինք, հայտնի չափով նպաստեցին Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողները։ Մոտիկից ականատես

լինելով Եվրոպայի բանվորական հեղափոխական շարժումներին, ծանոթանալով սոցիալիստական գաղափարախոսություններին, ուսանողները հրապուրվում էին դրանով, վերադառնալով հայրենիք իրենց հետ բերում առաջադիմության սերմերը։ Եթե 1870—90-ական թվականներին նրանք «լուսավորության նվիրակներն էին» մեծի մասամբ նարոդնիկական և ուտոպիական սոցիալիզմի, ազգայնական գաղափարների կրողները, ապա 90-ական թվականների վերջերից հաղթահարելով այդ, նրանք արահետներ էին որոնում մարքսիստական ուսմունքի մայրուղին դուրս գալու համար։ Եթե Ա. Նազարբեկի և նրա համախոհների էվոլյուցիան ընթացավ դեպի հնչակյանություն, Մ. Հովհաննիսյանինը (Վարանդյան)՝ դեպի դաշնակցություն, Հ. Աթաբեկյանցինը՝ լիբերալ նարոդնիկություն, ապա Գ. Ղարաջյանը, ազատագրվելով նարոդնիկական նախկին բեռից, դիմաշրջվեց դեպի մարքսիզմը։ Ինչ խոսք, բոլորը չէ, որ դա հասկացան։ Նրանց մի մասը, առաջվա պես, չընկալեց կյանքի նոր ժամանակների հրամայականը, մնաց ազգայնական հոսանքների գայթակղիչ լոզունգների կախարդական հրապուրանքների ազդեցության տակ։ Արտասահմանում սովորաբար հայ երիտասարդները, ինչպես ասացինք, հիմնում են հայրենասիրական, գրական-գեղարվեստական, նարոդնիկական, անարխիստական (անիշխանական), հեղափոխական և այլ կազմակերպություններ ու միություններ։ 90-ական թվականներին նրանց մի մասը հրապուրվում է սոցիալիստական գաղափարներով, հափշտակված ուսումնասիրում մարքսիզմը։

1885 թվականին ձևավորվում է «Լայպցիգի հայ ճեմարանական ընկերությունը» («Armenischer Akademischer Verein»), իսկ 1888 թվականին Փարիզի հայ ուսանողական միությունը[151]։ 1892

---

151 Տե՛ս Գ. Մելիք-Կարագոզյան, Գերմանիայի հայ ուսանողությունը, Թիֆլիս, 1901, «Մուրճ», № 10—11, 1898, էջ 1610—1612, № 1, հունվար, 1900, տե՛ս նաև «Մշակ», № 136, 26 նոյեմբերի, 1892 թ.։ Աշ. Աթանասյանը «Նամակ Շվեյցարիայից»-ում պատմում է, որ ճեմարանական ընկերությունը կապված էր Լայպցիգի համալսարանական ընկերության հետ, փոխադարձաբար դասախոսություններ էր կազմակերպվում հայկական և գերմանական մշակույթի մասին, որոնց մի մասը հրապարակվում էր հայերեն և գերմաներեն (տե՛ս «Մշակ», № 136, 26 նոյեմբերի, 1892)։ Ս. Շեյանը «Նամակ Շվեյցարիայից։ 1 (13) դեկտեմբերի, 1893 թ.»-ում նկարագրում է հայ ուսանողների տված մի երեկույթի մասին, որը բացվել է Մ. Նալբանդյանի «Մեր հայրենիք» քառաձայն երգով։ Թերթը այդ երեկույթի ասթիվ գրել է. «Մեր հայրենիքը» մի փառավոր շքեղ

թվականին Ժնևի հայ ուսանողության նարոդնիկական տրամադրություններ ունեցող թևը նախկին հնչակյան Ալեքսանդր Աթաբեկյանի[152] ղեկավարությամբ հիմք է դնում «Համայնք» թերթին, շուրջ երեք տարի առանձին գրքույկների և թերթիկների միջոցով քարոզում նարոդնիկական-անարխիստական գաղափարներ, սերմանում Հայաստանում ապստամբություններ առաջացնելու տրամադրություններ։ Ալ. Աթաբեկյանն իր փոքրաթիվ համախոհներով միջազգային անարխիզմի ղեկավարների (Պ. Կրոպոտկին, Վ. Չերքեզաշվիլի, Պ. Ստոյանով և այլք) հետ համագործակցած ձևավորել է անարխիստական հայ առաջին կազմակերպությունը։ Հայտնի է, որ անարխիզմի գաղափարական նախորդները եղել են անգլիացի Ուլյամ Գոդվինը և գերմանացի Մաքս Շտիրները։ Անարխիզմը, իբրև հասարակական-քաղաքական հոսանք, իր պատմությունն սկսում է XIX դարից (տերմինը պատկանում է Պ. Պրուդոնին), և արտահայտում է քաղաքի և գյուղի քայքայված մանր տնտեսատերերի, բանվոր դասակարգի հետամնաց խավերի և ապադասակարգայնացած տարրերի տրամադրությունները։ Անարխիզմի «նախահայր» Պ. Պրուդոնը իր մանրբուրժուական ուտոպիական տեսությունը հակադրում էր գիտական կոմունիզմին։ Անարխիստները՝ «անիշխանության» կողմնակիցները, անձի և նրա իրավունքների ազատության քողի տակ պնտությունը համարում էին հասարակական շարժի և սոցիալական անարդարության գլխավոր մեղավորը։ Անարխիզմի անկյունաքարն անհատն է։

երգ է, բայց քիչ տխուր, կրկնումներն ուժգին, final-ները շատ քաղցր էր։ «Բամբ որոտան»-ի «կրկնումները համարձակ են, անվնհեր և հստակ, բայց միշտ մի տխուր եղանակ, որ դուք տեսնում եք մի ժողովուրդ, որ չդիմանալով ցածր վիճակին, չլված ճիգ, ջանքեր է թափում՝ նորից արիություն, եռանդ ձեռք բերելու» (տե՛ս «Մշակ», № 22, 18 հունվարի, 1893 թ.)։

152 Ալեքսանդր Մովսեսի Աթաբեկյանը Հովսեփ Ներսեսի Աթաբեկյանցի հորեղբոր որդին է։ Ներսեսը իրավաբան էր, իսկ Մովսեսը՝ բժիշկ։ Ներսեսի որդիներից Հովսեփը՝ գյուղատնտես էր, Ասլանը՝ ինժեներ, Միքայելն ու Տիգրանը՝ իրավաբան, Դավիթը՝ բժիշկ։ Մովսեսի որդիներից Ալեքսանդրը և Աննան ավարտել են Ժնևի համալսարանի բժշկական ֆակուլտետը, Ալեքսանդր Աթաբեկյանի հորեղբոր որդին էր Լևոն Աթաբեկյանը, որը նույնպես բժշկական կրթություն է ստացել Ժնևում։ Այսպիսով, 1893—1894 թվականներին արտասահմանում էին սովորում Հովսեփ, Ալեքսանդր, Աննա, Լևոն Աթաբեկյանները, որոնք, հրապուրված ժամանակի քաղաքական գաղափարներով, ուսումնասիրում էին սոցիալիստական գրականությունը։ Ալեքսանդր Աթաբեկյանի որդին՝ Ասլանը պրոֆեսոր է և այժմ աշխատում է Մոսկվայի Բոտկինի հիվանդանոցում։

Նրանց լոզունգն է՝ «Ամեն ինչ անհատի համար»։ Իսկ մարքսիզմի անկյունաքարը՝ աշխատավորական կոլեկտիվը՝ մասսան, «Ամեն ինչ մասսայի համար»։ Ժխտելով ամեն մի պետական իշխանություն, անարխիստները ժխտում են նաև պրոլետարիատի դիկտատուրայի պետությունը։ Այս ոգով էր տոգորված նաև հայ անարխիստական առաջին կազմակերպության գործունեությունը, որը գերազանցապես սնունդ էր քաղում Պ. Կրոպոտկինի, էլ. Ռեկլյուրի և այլոց հակամարքսիստական բրոշյուրներից, թեավորում բուլգարական անարխիստների ճանաչված ղեկավար Պարաքև Ստոյանովից։ Ալ. Աթաբեկյանը, Գաբրիել Բահադրյանի հետ միասին ձեռք բերելով հայկական տառեր և տպագրական սարքավորում, ծնևում ստեղծում է մի փոքրիկ տպարան (կոնսպիրատիվ նկատառումներով հրատարակությունների վրա նշում էր «Փարիզ։ Միջազգային տպարան»), և ձեռնարկում մի շարք գրքույկների հրատարակությանը։ 1892 թվականին վիմագիր տեսակների ձևվով լույս է ընծայում Ս. Բարդինայի «Գատական ճառը», Պ. Կրոպոտկինի «Քաղաքական իրավունքներ»-ը և «Պետությունների քայքայումը»։ 1893 թվականին երևաց «Անիշխանական հրատարակություններ» մատենաշարը, որի առաջին գործը «Գյուղացիների մեջ» անարխիզմի սկզբունքները հարց ու պատասխանի ձևվով պարզունակ մեկնաբանող թարգմանական բրոշյուրն էր։ «Ազդ հրատարակիչների կողմից»-ում հայ հրատարակիչը պարզաբանում էր անարխիզմի նշանակությունը, ընդգծում, թե՝ «Ինքնավար համայնքն է քաղաքական կազմակերպության այն միակ ձևը, որ կարող է ապահովել աշխատողին իր աշխատանքի արդյունքը ամբողջապես վայելելու կարելիությունը»։ «Մեր բուն սկզբունքը կայանում է երկրի կառավարությունը ջնջելում։ Մեր հիմնական սկզբունքներն են,— ասված է «Ազդ...»-ի վերջում,—քաղաքական բացարձակ ինքնավարություն, տնտեսական հավասարություն և միջազգային համերաշխություն, և այս սկզբունքների մշակությունը պիտի լինի մեր հետագա հրատարակությունների նյութը։ «Ազդ»-ը հայ անարխիստների դավանանքի համառոտ շարադրանքն է։ Տպագրվեցին նաև Պ. Կրոպոտկինի «Անիշխանությունը», «Հեղափոխական փոքրամասնությունները», էլիզե Ռեկլյուրի «Իմ գյուղացի եղբայրը», Ժան Գրավի «Ինչո՞ւ ենք մենք հեղափոխական» և այլ գործերը։ Նրանք ծանոթ էին նաև Պ. Կրոպոտկինի մյուս՝ «Ժամանակակից գիտություն և անարխիզմ», «Անարխիան և նրա փիլիսոփայությունը» գործերին։

1894 թվականի հունվարին լույս տեսավ հայ անարխիստների տպագիր օրգանի՝ «Համայնք»-ի առաջին համարը: Այն կազմված էր 8 փոքրածավալ էջերից և բացվում էր «Հեղափոխական պրոպագանդը և հեղափոխությունը» առաջնորդողով: Նրանում համառոտակի տրվում էին հեղափոխական պրոպագանդայի խնդիրները ժողովրդի ապատամբական շարժումների կազմակերպման, մարդկանց գիտակցության ձևավորման, նրանց խիզախության կոփման գործում: Այնուհետև ցույց էր տրվում հայ ժողովրդի ծանր կացությունը, ընդգծվում, որ «Համայնք»-ի «միակ նպատակն հեղափոխական պրոպագանդային ծառայելն է:

Օ՜ն, առաջ.
Հանուն թշվառ մարդկության,
Հանուն հարստահարված մարդկության.
Հանուն անտեսական հեղափոխության:

Դրան հասնելու համար «Համայնք»-ը պահանջում էր ոչնչացնել պետությունը և կառավարությունները: Դա ավելի պարզ և բացահայտ էր ասված «Համայնքը» խորագրով խմբագրականում, որը բացվում էր «Ազատության վարժարանը Համայնքն է» բնաբանով: Թերթը հայ ժողովրդի՝ նրա արևելահայ և արևմտահայ հատվածների ազատագրությունը տեսնում էր ապատամբական շարժումների ճանապարհով համայնական սիստեմի ստեղծման մեջ, հասարակական միակ հաստատուն ձևը համարելով համայնքը: Անարխիստական այս պահանջը ավելի հետևողական է անցկացված «Կառավարության կոչումը», «Հայկական խնդիրը» (№ 2, մարտ, 1894), «Հայ հեղափոխական շարժման հիմքը հայ գյուղացին է», «Հեղափոխական կազմակերպություն», «Ի՞նչ է ազատությունը» (№ 3, մայիս, 1894), «Անիշխանական գաղափարը և նրա զարգացումը» (№ 4, սեպտեմբեր, 1894), «Հայ ժողովրդի համայնական հակումները» (№ 5, դեկտեմբեր, 1894) և այլ հոդվածներում: «Հայ ժողովրդի համայնական հակումները» անավարտ ծանոթագրության մեջ ասված է. «Մեր նպատակն է փաստերով ցույց տալ, որ համայնական անիշխանական գաղափարները բոլորովին օտարամուտ չեն հայերիս համար, որ նրանք կամավորապես փոխառնված չեն Եվրոպայից, այլ ունեն էական հիմք նույնիսկ հայկական կյանքի մեջ: Բավական չէ միայն ցանել գաղափարական սերմեր, ինչքան էլ այդ սերմերը լավ լինեն աճելու և պտղաբերելու համար պետք է որ նրանք նպատակավոր

հող գոնեն: Այդ հողը հայ անիշխանականների համար «հայ ժողովրդի համայնական հակումներն են»...»: Հեղինակը ջանում էր ցույց տալ, որ, հայերի մեջ անհիշելի ժամանակներից իշխել է համայնատիրությունը, և որ մարդուս ազատությունը գտնվում է միայն անիշխանական համայնքում: «Հողի համայնականացնելը միայն կարող է բավականություն տալ և ապահովացնել հեղափոխական կրակի մեջ ընկած թշվառ հայ գյուղացուն»,— ասված է «Հայ հեղափոխական շարժման հիմքը հայ գյուղացին է» հոդվածում:

«Համայնք»-ի ինքնուրույն նյութերի մեծ մասը, որ գրել է Ալ. Աթաբեկյանը, ներծծված է Պ. Կրոպոտկինի հակամարքսիստական գաղափարներով: Ալ. Աթաբեկյանը և նրա համախոհները բռնել էին անարխիզմի ուղին, իհարկե, պայքարի ասպարեզ մտնելով սոցիալիզմի դրոշակով, քանի որ անարխիզմը սոցիալիզմի գլխավոր հոսանքներից մեկն է: Հենց այդ է պատճառը, որ «Համայնք»-ի էջերում երբեմն խոսվում է սոցիալիզմի անունից, համերաշխվում ռուս նարոդնիկության գաղափարների հետ, քաղվածքաբար մասսայականացվում «Զորնի Պերեդել»-ի 1880 թվականի սեպտեմբերյան համարի հայտնի բանաձևումն այն մասին, թե՝ «Երբ սոցիալական հեղափոխության փոթորիկը տեղի ունենա նախքան նշանավոր փոփոխություններ առաջանալը հասարակական դրության մեջ, այդ հեղաշրջման գլխավոր առարկան պիտի լինի հողային խնդիրը: Բայց քանի մենք անում ենք մեր գործը, խոշոր արդյունաբերությունը անշարժ չի մնում...

Չպետք է անուշադիր թողնել այդ երևույթը: Հաստատվելով գործարաններում և գյուղում, մենք մի դիրք կբռնենք, որ համապատասխան կլինի ոչ միայն այսօրվա դրությանը, այլ տնտեսական զարգացման ամբողջ ընթացքին: Արձանագրելով մեր դրոշակի վրա իրև նշանաբան՝ «Բանվոր՝ վերցրու գործարանը, գյուղացի՝ տիրիր հողին»:

Բայց սոցիալիզմի և անարխիզմի միջև մի ամբողջ անդունդ է ընկած: Վ. Ի. Լենինի դիպուկ արտահայտությամբ, անարխիստների աշխարհայացքը թարսած բուրժուական աշխարհայացք է: Նրանց անհատապաշտական տեսություններն ու գաղափարները ուղղակի հակադիր են սոցիալիզմին: «Համայնք»-ի էջերում նյութեր են զետեղվել 1848 թվականի ֆրանսիական հեղափոխության, իտալական գյուղացիական ընդվզումների, Արևմտյան Հայաստանում ծավալված հայկական ազատագրական շարժումներին և այլ

հարցերին նվիրված։ Ապստամբությունը հեղափոխության անհրաժեշտ նախապայմանն է,— գրել է թերթը։ Արժեքավոր են սիցիլիական ապստամբությանը, Սասունի իրադարձություններին նվիրված նյութերը։ Խոսելով ցարական ինքնակալության տապալման մասին, «Համայնք»-ը նշել է, թե հայ և վրացի հեղափոխականները պետք է ուժ տան Ռուսաստանի ընդհանուր հեղափոխությանը, նրանք թե՛ գործով և թե՛ պրոպագանդայի միջոցով Կովկասում հեղափոխական ուժ պիտի պատրաստեն, բարեկամական ձեռք պիտի մեկնեն ռուս հեղափոխականին և նրա հետ միասին տապալեն անարդ կառավարության լուծը։ «Թո՛ղ չառարկեն, որ հայ հեղափոխականը զբաղված է Տաճկահայաստանի շարժումով և թե՛ ուժերը բաժանելով, Տաճկահայաստանի հեղափոխությունը կվնասվի։ Մենք բոլորովին հակառակ չենք ռուսահայ հեղափոխականին Տաճկահայաստանում գործելուն։ Ընդհակառակը, հեղափոխական գործը միշտ և ամեն տեղ սուրբ է... Ռուսաց միապետությունը պետք է տապալվի միմիայն իր հպատակ ազգերի համերաշխ հեղափոխությունից» («Համայնք», № 4, սեպտեմբերի, 1894, էջ 35)։

Ուշագրավ է այն փաստը, որ «Համայնք»-ը թերթին դիմելու համար ամեն անգամ 8-րդ էջում մատնանշվել է անգլիական գրող, ռուս վտարանդի Էթել Վոյնիչի Լոնդոնի հասցեն (W. Voynich (Hamajnk), 3, lübey Road, 3, Hammersmith, W. London). Էթել Վոյնիչը ամուսնացած լինելով լեհական հեղափոխականի հետ, ցարական աքսորից փախել էր Լոնդոն և կապեր հաստատել այնտեղ գտնվող ռուսական, իտալական և այլ երկրների հեղափոխական գործիչների հետ։ Նա եռանդուն աշխատանք է կատարել ռուս վտարանդիների հեղափոխական գրականությունը տարածելու, Ռուսաստան և այլ երկրներ գաղտնի ճանապարհով առաքելու համար։ Ալ. Աթաբեկյանի հրատարակած «Համայնք» թերթից և անարխիստական բրոշյուրներից ուղարկվել են Կովկաս, Արևմտյան Հայաստան, Պետերբուրգ, գերմանական և ամերիկյան քաղաքները, Լոնդոն և այլուր։ Աթաբեկյանը կապված էր Պետերբուրգի հայ ուսանողական «Ժողով»-ի հետ։ Նա իր պլանների մասին հաղորդում է ինչպես Ռուսաստանի իր համախոհներին, այնպես էլ արտասահմանում գործող նշանավոր անարխիստներին։ 1894 թվականի մայիսի 2-ին Պարաքև Ստոյանովին ուղարկած նամակում, որը բռնագրավվել է Ռումինիայի և Բուլղարիայի գաղտնի գործակալության կողմից, նա մանրամասն պատմում է

իր գործերի և պլանների մասին, հատկապես «Համայնք»-ի առաջին երկու համարների թողած տպավորության, երրորդ համարի բովանդակության, հրատարակության ընթացքի և այլ հարցերի մասին։ Ալ. Աթաբեկյանը հայտնում է, որ նամակներ է ստացել Ամերիկայից, Եգիպտոսից, Կոստանդնուպոլսից, Բուլղարիայից, Գերմանիայից, Լոնդոնից, Կովկասից, Պետերբուրգից, որ անարխիստական գաղափարների «պրոպագանդան հայերի մեջ դեռևս ոչ մի լուրջ արդյունք չի տվել»։ Խոսելով «Համայնք»-ի և նրա շուրջը համախմբվածների նկատմամբ եղած վերաբերմունքի մասին, Աթաբեկյանը գանգատվում է, թե «Վիբկնեխտի և Դեդի արժանի օրգանը իր հոդվածներից մեկում ջանացել է ապացուցել, որ նրանք ոչ մի ընդհանուր բան չունեն անարխիստների հետ, և նրանց բոլորին որակել է «խելագարներ», «հանցագործներ», «գաղտնի ոստիկանության գործակալներ» և այլն»։ Նամակից երևում է, որ «անարխիստների անդուդական» պարագլուխ Վ. Չերքեզովը (Չերբեզիշվիլին) նույնպես կապված էր հայ անարխիստների հետ և նույնիսկ «Ինտերնացիոնալը և նրա նախորդները» խորագրով հոդված է ուղարկել տպագրելու համար։ Ա. Աթաբեկյանը գժգոհում է հոդվածից, ասելով, թե այն գրված է անհետաքրքիր, ամենաշնչին ինքնուրույն մտքերից զուրկ, արհեստականորեն թափթփված և ոչ գրագետ։ «Եթե հարկ լիներ ինձ շարելու այդ աշխատանքը,— գրել է նա,— ես կհրաժարվեի։ Բայց մի նոր երիտասարդ ընկեր և Սասիլ Բայշևը ցանկանում են ինչ որ բան անել, շարել։ Ի՞նչ արած»։

Վերոհիշյալ նամակում Ա. Աթաբեկյանը Պ. Սասյանովին հարցնում է, թե նա կարդացե՞լ է «Ռուսսկոե բոգատսվո»-ի 1894 թվականի առաջին և երկրորդ համարներում զետեղված Միխայլովսկու հոդվածները մարքսիզմի մասին։ «Եթե ոչ,— ասում է նա,— անպատճառ կարդա, հարցը հրաշալի և հետաքրքիր է մշակված։ Մինչև այժմ ես չեմ հանդիպել դրանից լավ քննադատության։ Հարկավոր է ուրախանալ այդ հոդվածների հրատարակությամբ, դրանք, վերջապես, հարվածում են և ռուսական և բուլղարական սոցիալ-դեմոկրատներին, այդ կեղծ գիտական մեծությունններին, որոնք այնպես սպանում են մարդկանց մտքի ամեն տեսակի ինքնուրույնությունը և նրանցից պատրաստում ինչ որ թութակներ, որոնք հավերժ անքննադատաբար կրկնում են նույնը, ինչպես «Հանուն հորը»։

Ինչ խոսք, որ այս ամենը հեղինակը որդեգրել է իր ուսուց-

չից Պ. Կրոպոտկինից և, մեխանիկորեն սերտելով, կրկնում է, ինչպես «Հանուն հորը»... 1894 թվականի հունիսին բանադրավել է Ա. Աթաբեկյանի Լիոնից հունիսի 5-ին Պ. Ստոյանովին ուղարկած նամակը, որի մեջ պատմում է իր գործերի մասին, խնդրում «Համայնք»-ի հերթական համարին հոդված ուղարկել բուլղարական վերջին իրադարձությունների առթիվ[153]:

Անարխիստական հոսանքը հայ իրականության մեջ արմատներ չնետեց: Ժնևի հայ անարխիստական խումբը 1895 թվականին փաստորեն քայքայվում է: Ա. Աթաբեկյանը Ժնևի համալսարանն ավարտելուց հետո աշխատում է Բուլղարիայում և, ապա՝ Պարսկաստանում ու Հայաստանում:

1897 թվականին ձևավորվում է «Բեռլինի մատերիալիստական ընկերություն», 1898 թվականին՝ «Բեռլինի ընդհանուր հայ ուսանողական գրական միություն» և այլ խմբակներ: «Փարիզի հայ ուսանողական միությունը» խնդիր ուներ «մտավորական ու նյութական կապ մը հաստատել Պարիզու բոլոր հայ ուսանողաց մեջ, նպաստել ուսանողաց նյութապես ու բարոյապես»[154]: *Միությունը, որ ղեկավարում էր ժողովը, ուներ ընթերցարան-մատենադարան, որից օգտվում էին բոլոր հայ ուսանողները: Պարբերաբար կազմակերպվում էին երեկույթներ, թատերական ներկայացումներ, դիսպուտներ:*

Ուշագրավ են «Բեռլինի ընդհանուր հայ ուսանողական գրական միություն» և «Մատերիալիստական ընկերության» պարապմունքների թեմատիկան: Միայն 1898/99 ուսումնական տարում նրանցից առաջինը կազմակերպել է շուրջ քսան դասախոսություն, այդ թվում՝ «Երկու խոսք ժամանակակից հայրենասիրության մասին», «Հոգեպաշտություն և նորա մնացորդները մեղանում», «Այժմյան բնագիտական աշխարհայեցողությունը», «Կրոնի և գիտության հարաբերությունները կամ Անիմանալին (Das Unerka-

---

153 *Փաստերը բաղված են «Համայնք» թերթի լուսանկարչական պատճեններից, որը մեզ է տրամադրել ժուռնալիստ Միքայել Հակոբյանը, և* ЦГИАМ. ф. 102, ДП. 72-во, оп. 137, 1895, № 245, т. 1, лл. 240—244, *ինչպես նաև Հովսեփ Աթաբեկյանի դասեր՝ Ա. Աթաբեկյանի հին բոլշևիկ Արտաշես Եղիազարյանին ներկայացրած* «Краткие сведения о родословной Иосифа Атабекянца» *տեղեկանքից: Ա. Աթաբեկյանի և Պ. Ստոյանովի բարեկամությանն է նվիրված Մ. Հակոբյանի «Մի էջ հայ-բուլղարական մշակութային կապերից» հոդվածը (տե՛ս «Սովետական Հայաստան», № 197 (13851), 24 օգոստոսի, 1966):*

154 *«Մուրճ», № 1, 1898, էջ 1610:*

nutbar) *ըստ Սպենսերի», «Տնտեսական գործունեության զարգացումը միջին դարերում», «Ընտանիքի տնտեսական և սոցիալական նշանակությունը», «Տաճկահայ կինը», «Հայոց ներքին կյանքի շարժման մի քանի կողմերի մասին», «Կամքի էությունն և նորա խաբուսիկ ազատությունը» և այլն* [155]:

Ավելի հետաքրքիր ու բովանդակալից էին անցնում Բեռլինի ուսանողական «Մատերիալիստական ընկերության» պարապմունքները: Այդ ընկերությունը ստեղծվել է 1897 թվականի նոյեմբերի 20-ին՝ Հակոբ Հովհաննիսյանի և ապա Ս. Կասյանի ղեկավարությամբ: Նրա նպատակն էր «իմի գումարել մատերիալիստական աշխարհայեցողություն ունեցող ուսանողներին և մտքերի փոխադարձ շփումով պարզել այդ աշխարհայեցողության՝ վերաբերվող կետերը» [156]:

1897—98 թվականներին «Մատերիալիստական ընկերությունը» դասախոսություններ է կազմակերպել «Իդեալիստական և մատերիալիստական աշխարհայեցողության պատմության մասին», «Հասարակություն և ինտելիգենցիա», «Ընտանիքի էվոլյուցիա», «Վաշխառությունը Կովկասում», «Կովկասի տնտեսական զարգացման մասին», «Մարքս և Մարքսիզմ», «Գերմանական շկոլայի ազդեցությունը Կովկասի կյանքի վրա», «Աշխատանք և Ռիթմուս» (Rithmus), *«Բնագիտության և քաղաքատնտեսության կապը», «Վերագիր արժեք և նորա պատմական դերը», «Կապիտալիզմի լավ և վատ կողմերը», «Թիմիան առօրյա կյանքում», «Տնտեսական մատերիալիզմ», «Բնագիտությունն իբրև հիմք աշխարհայեցողության և գործնական կյանքի», «Հողի և մարմին», «Մատերիալիզմի հիմքերը», «Դարվինիզմ և սոցիալիզմ», «Մասնավոր սեփականության առաջացրած հետևանքները», «Մարդու ծագումը», «Բջիջը և նորա կյանքը» և այլն* [157]:

Դժվար չէ նկատել, որ «Մատերիալիստական ընկերության» կազմակերպած վերոհիշյալ դասախոսությունների գլխավոր բովանդակությունը մարքսիզմի ուսումնասիրությունն է, հետաքրքրությունը դեպի պրոլետարիատի աշխարհայացքի՝ Կ. Մարքսի և

---

155 *Տե՛ս «Տեղեկագիր» Եվրոպայի հայ ուսանողական միության: Վիեննա, 1899, Միխիթարյան տպարան:*

156 *Նույն տեղում: «Տեղեկագրի» մի օրինակը պահվում է գրականության և արվեստի թանգարանում, Ա. Զոպանյանի ֆոնդում:*

157 *Տե՛ս «Տեղեկագիր» Եվրոպայի հայ ուսանողական միության, Վիեննա, 1899:*

Ֆ. Էնգելսի ուսմունքի յուրացումը, Կովկասի պայմաններում այն իրականացնելը։ «Մարքս և մարքսիզմ», «Տնտեսական մատերիալիզմ», «Մատերիալիզմի հիմքերը», «Դարվինիզմ և սոցիալիզմ», «Մասնավոր սեփականության առաջացրած հետևանքները»,—ահա թե դարամուտին հասարակական ինչպիսի պրոբլեմներ էին մտահոգում հայ առաջավոր մտավորականությանը, ահա թե գիտելիքների ինչպիսի իմաստությամբ էին բեռնավորվում հայ ուսանողները, հայրենիք բերելու և մարքսիզմի սերմերը ցանելու համար։ «Բեռլինի մատերիալիստական ընկերության» աշխատանքներում վճռական դեր են խաղացել Ս. Կասյանը և Հակ. Հովհաննիսյանը։ «Բեռլինի մատերիալիստական ընկերության» անդամների և Եվրոպայում սովորող հեղափոխական հայ ուսանողների ջանքերով 1896—1897 թվականներին հայ հասարակական մտքի վրա նշմարվում է մարքսիզմի ազդեցությունը։ 1897—1899 թվականներին Գերմանիայի բարձրագույն դպրոցներում սովորում էին ավելի քան 100 հայ ուսանող, այդ թվում Բեռլինում՝ 26, Լայպցիգում՝ 12, Մյունխենում՝ 10, Դարմշտադտում՝ 12, Դրեզդենում՝ 2, Հալլեում՝ 3 և այլն[158]։ 1897—1898 ուսումնական տարում Բեռլինում են սովորել Հակոբ Հովհաննիսյանը, Մանուկ Աբեղյանը, Կոմիտասը, Անուշավան Քալանթարը, Սուրեն Ադամյանը, Ավետիս Ավետյանը, Քրիստափոր Սարգսյանը, Վարդան Ավագյանը, Վահան Տոտոմյանը, Ղևոնդ Մեժլումյանը և ուրիշներ[159]։ Նույն տարիներին Ֆրանսիայում սովորում էին մոտ 140, Շվեյցարիայում՝ 70 հայ ուսանող։ Ոչ լրիվ տվյալներով 1900 թվականին Եվրոպայի բարձրագույն դպրոցներում կար մոտ 300 հայ ուսանող, այդ թվում Գերմանիայում՝ 90, Ֆրանսիայում՝ 70, Շվեյցարիայում՝ 60, Իտալիայում՝ 25, Ավստրիայում՝ 26, Անգլիայում՝ 7, Բելգիայում՝ 6։ «Մուրճ»-ի տվյալներով Եվրոպայում սովորող 271 հայ ուսանողներից բնական գիտություններ էին ուսանում 136 (70)[160], տեխնիկական՝ 54 (28), փիլիսոփայություն՝ 54 (23), գեղարվեստ՝ 14(6), վաճառականական գիտություններ՝ 5(0), զանազան՝ 3(1)։

---

158 Տե՛ս «Տեղեկագիր» Եվրոպայի հայ ուսանողական միության, Վիեննա, 1899, «Մուրճ», № 4, 1898, էջ 533։ Տե՛ս նաև Գեորգ Մելիք-Կարազոյան, Գերմանիայի հայ ուսանողությունը, Թիֆլիս, 1901, էջ 37—38։

159 Տե՛ս «Մուրճ», № 5, 1897, էջ 737—738, № 4, էջ 533, № 6, էջ 907—908, 1898։

160 Փակագծերում դրված է ռուսահայ ուսանողների թիվը։

Նրանցից նախնական կրթություն են ստացել հայկական դպրոցներում 148-ը[161]։

Եվրոպայի քաղաքներում սովորող հայ ուսանողական միությունները ստիպանաբար ուժեղացնում են կապերը միմյանց հետ, կազմակերպում փոքրի փոխանակում։ Ի վերջո, «Լայպցիգի հայ ճեմարանական ընկերության» նախաձեռնությամբ, Հայդելբերգում 1897 թվականի ապրիլի 12-ից մինչև 15-ը գումարված Եվրոպայի հայ ուսանողության համագումարը որոշում է անջատանջատ ուսանողական կազմակերպությունների գործունեությունը բարելավելու, փոխադարձ կապերն էլ ավելի ամրապնդելու և ուսանողների մեջ ընդհանուր գաղափարներ զարթնեցնելու նպատակով ստեղծել հայ ուսանողական միություն, ընդհանուր միություն։ Հիմնադիր համագումարում լսվեցին «Ազգայնության մասին ընդհանրապես և ազգայնությունը մեր մեջ մասնավորապես», «Հայերենի նվագայնության ու կոկության մասին», «Գոյության կռիվը և բարոյականությունը» թեմաներով դասախոսություններ, քննարկվեցին և հաստատվեցին միության կանոնադրությունն ու ծրագիրը։ Երկար վիճաբանություններից հետո որոշվում է ընդունել Լայպցիգի նախագծում տրված անունը, միությունը կոչել «Եվրոպայի հայ ուսանողների միություն»։

Երկրորդ համագումարը տեղի ունեցավ 1899 թվականի մարտի 27—31-ը, որտեղ դասախոսություններ լսվեցին «Պատմությունն ու պատմական ուղղությունները նոր ժամանակներում», «Հայ համալսարանականի կոչման մասին», «Ռուսաստանի հայ երիտասարդության» մասին և այլ թեմաներով։

Երրորդ համագումարը տեղի ունեցավ 1902 թվականի մայիսին, Ժնևում։ Համագումարում սուր պայքար ծավալվեց դաշնակցության և նրա գաղափարախոսների դեմ։ Հատկապես աչքի էին ընկնում Արայում Տեր-Հարությունյանը (Ցյուրիխ), Հակոբ Հովհաննիսյանը (Հայդելբերգ), Անդրեաս Անդրեասյանը (Լոզան), հնչակ-

---

161 «Մուրճ», № 5, 1902։ Նիկողայոս Տեր-Հարությունյանը (Հարո) 1876 թվականին Փարիզից «Մշակ»-ին գրած նամակում նշել է, թե այժմ բուհերում սովորում են 364 հայ, այդ թվում Ռուսաստանում՝ 200, Ֆրանսիայում՝ 60, Գերմանիայում՝ 46, Ավստրիայում՝ 18, Անգլիայում՝ 17, Իտալիայում՝ 12, Շվեյցարիայում՝ 11։ Դրանց մեջ չեն մտնում միջնակարգ դպրոցներում, Մխիթարյանների մոտ և Կ. Պոլսում սովորողները։ Նա կոչ էր անում սովորողներին միանալ և միասնական սկզբունքներ մշակել։ Տե՛ս «Մշակ», № 8, 4 մարտի, 1876)։

յան Երվանդ Պալյանը[162] (Ժնև)։ Մի քանի այլ թեմաների հետ միասին համագումարում լսվեց նաև Ե. Պալյանի «Միքայել Նալբանդյանի տնտեսական թեորիան» դասախոսությունը։ Հեղինակը նյութի առանցքը դարձնելով Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը, շոշափում էր ժամանակի տնտեսական և սոցիալական հարցերը, դրվատում հեղափոխական դեմոկրատի երախտիքը։

«Եվրոպայի հայ ուսանողների միությունը», բացի տեսական զեկուցումներից, չքավոր ուսանողներին նյութական օգնություն ցույց տալուց, կազմակերպում էր գրքերի հրատարակություն՝ սոցիալ-քաղաքական, գիտական-մշակութային թեմաներով։ Միությունը հիմնել էր «Ազատ գրադարան» մատենաշարը, մեծ տպաքանակով հրատարակել է Տուրգենևի «Նախօրեին», Մ. Նալբանդյանի ազատաբաղձ բանաստեղծությունները, Սասունի, Իտալիայի, Բուլղարիայի և այլ վայրերի հայրենասերներին նվիրված մարտաշունչ գրքեր[163]։ Միությունն ուներ ավելի քան 250 անդամ։

---

162 Երվանդ Պալյան—ծնվել է 1896 թ., միջնակարգ կրթությունը ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, բարձրագույնը՝ Ժնևում։ 1887 թվականից մինչև 1900 թվականը եղել է հնչակյան, հետագայում ակտիվ մասնակցություն է ունեցել «սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» բանեղծման գործին, 1905 թվականից փաստորեն հեռացել է քաղաքական կյանքից, զբաղվել գրական-դասախոսական աշխատանքով։ 1904 թ. փետրվարի 23-ին Ժնևից Նշան Եկանյանին Ե. Պալյանը գրել է. «Հայանալով բեզ, խնդրում եմ հայտնել նաև Գ. Կուզիկյանին, որ այսօրվանից ես հրաժարվում եմ թե՛ իմ պաշտոնից, թե՛ անդամակցությունից և թե՛ որևէ մասնակցությունից (ոպեցիֆիզմին)» (տե՛ս Մշի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, ց. 1, գ. 11, թ. 44)։

Եվրոպայի հայ ուսանողության հեղափոխական գործունեության, ուսումնական-գրական վարանդիների, մասնավորապես Գ. Պլեխանովի հետ ունեցած կապերի մասին ուշագրավ նյութեր կան Ե. Պալյանի «Զարձանագրված էջեր մարքսիզմի և սոցիալ-դեմոկրատիայի պատմության» ձեռագիր հուշերում, որը գրել է 1923 թվականին, և փաստեր քաղելու նպատակով այն մեզ է տրամադրել Ա. Գ. Հովհաննիսյանը։

163 См. ЦГИАЛ, ф. 776. оп. 21, д. 9, 1903, лл. 66—67 об. «Ազատ գրադարան» մատենաշարով լույս են տեսել «Ազատության երգեր», «Ապստամբ Սասուն», «Հայրենասերների տաղերը», «Հայուհիներին», «Հերոսը», «Հայաստանի քարտեզը» և այլ գործեր։ Գրքերի վերջում նշվում էր. Adresse: Union des Etudiants Arméniensde Europe, rue de Lecole de chimie, 2, Cenève (suisse).

Ուշագրավ է «Ապստամբ Սասուն» (Նվեր հայ ժողովրդին, Եվրոպայի հայ ուսանողների միություն։ Ժնև, Նկարագրեց Գլակ Տարոնցի) բրոշյուրը, որը նվիրված է Սասունի դեպքերին, մասնավորապես 1894 թ. հուլիսի 15-ի Սասունի

ճիշտ չի լինի ասել, թե «Եվրոպայի հայ ուսանողների միությունը» ստեղծել է դաշնակցությունը, այն էլ 1902 թվականին[164]։ Ինչպես վերը տեսանք, Միությունը Եվրոպայի հայ բազմաթիվ ուսանողական խմբերի միավորման արգասիք է։ Ճշմարտությունն այն է, որ դաշնակցությունը քիչ ջանքեր չի թափել, որպեսզի իր ազդեցության տակ պահի միությունը։

6

XIX դարի 90-ական թվականներին «Մուրճ», «Տարազ», «Մշակ» և այլ պարբերականներում հոդվածներ են հրապարակվում «Լեղալ մարքսիզմի» դիրքերից, ծավալուն մեջբերումներ արվում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններից, քննարկվում Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման հետ առնչվող առանձին հարցեր։ 1893—1899 թվականներին «Մուրճ»-ի մի քանի համարներում բացի Գ. Ղարաջյանի «Քաղաքակրթության

Շենքը դյուզում հրավիրված ասունցիների ժողովին։ Ժողովականները միահամուռ որոշում են մինչև վերջ դիմադրել և կռվել իրենց վրա հարձակվող քրդական և թուրքական բանդաների դեմ։

Բրոշյուրում նկարագրված են Զայի կռիվները։ Ապստամբ ասունցիները մարտից առաջ միաբերան երգելով Մ. Նալբանդյանի «Մեր հայրենիքը», հերոսաբար մարտնչելով փայլուն հաղթանակ են տանում Զայի յոթժամյա կռիվներում,— դրել է հեղինակը,— հայերը 71 սպանված և 140 վիրավոր տվեցին, իսկ քրդերը՝ 2200 սպանված։ Արյունը հոսեց գետի նման,— ասում է նա,— դիակները թափվեցին կարկուտի պես։ Բայց Հայ-Ասունը մնաց միշտ արիությունը սրտում, կռվի տաղերը շրթունքներին։ Եվ կոտորածների սոսկալի պատմության մեջ, ամեն անգամ, երբ վիշտն ու հուսահատությունը տիրում են հային, Ասունը՝ Զեյթունի արժանավոր ընկերը, հանդես է գալիս իրեն նոր հույսերի ազդյուր, դրսևորում է հայի կորացած մեջքը, տալիս է մարած աչքերին՝ փայլ, դալուկ շրթունքներին՝ հպարտության ժպիտ («Ապստամբ Ասուն», Ժնև, 1903, էջ 24)։

[164] Տե՛ս Ե. Սահակյանի «Երիտասարդության շարժումները Անդրկովկասում 1900—1917 թթ.»։ Թեկնածուական դիսերտացիա, Երևանի պետական համալսարան, 1966։ Հավանական է Սահակյանին թյուրիմացության մեջ է դրել 1906 թ. ապրիլի 30-ին Ժնևից «Մշակ»-ին ուղարկված «Զեղոր ուսանող»-ի (Սուրեն Երզնկյան) «Տեղական ուսանողության կյանքից» նամակը, որը 1923 թ. առաջին անգամ լույս է տեսել «Նորք» հանդեսում և պարունակում է շատ անճշտություններ (տե՛ս «Նորք», դիրք 2, 1923)։

Երկրամասի ուսանողական շարժումներին են նվիրված Ե. Սահակյանի, Շ. Օհանջանյանի թեկնածուական դիսերտացիաները։

սարիճանները», «Բանվորների ապահովագրման խնդիրները» և այլ հոդվածներից, հրատարակվում են Հակոբ Հակոբյանի «Բանվորների հավաքական ապահովագրումը Ռուսաստանում դժբախտ դեպքերից հետո», Ա. Զուրաբյանի «Տնտեսական առաջադիմությունը XIX դարում», Գ. Վարդանյանի «Խոշոր ձեռնարկությունների բանվորությունը և բանվորները» և այլ հոդվածներ[165]*։ Գ. Վարդանյանը ճիշտ կերպով նկատում էր, որ գյուղացին ենթարկվում է «կապիտալիստական իշխանությունների հալածանքներին»՝ կապիտալի տիրապետությանը, որ կատարելագործված մեքենաները կապիտալի պայմաններում բանվորների մի մասին դուրս են մղում արտադրությունից, գործազրկության գիրկը նետում։ Սակայն հեղինակը չէր ընկալում բանվոր դասակարգի ազատագրական դերը, տարված էր «լեգալ մարքսիստների» գաղափարներով։*

Ուշագրավ է այն փաստը, որ Ֆ. Էնգելսի մահվան կապակցությամբ «Մուրճ»-ը 1895 թվականին հրատարակեց նրա համառոտ կենսագրությունը, որտեղ գրվատում էր Ֆ. Էնգելսի ծառայությունները, նշում նրա մտերմությունը Կ. Մարքսի հետ։ «Վախճանվեց Ֆ. Էնգելսը,— գրել է «Մուրճ»-ը,— հայտնի սոցիալիստը, որը կոմունիստների միության կենտրոնական հանձնաժողովի քարտուղարն էր, Կ. Մարքսի հետ միասին «Կոմունիստական մանիֆեստ»-ի ստեղծողը, Կ. Մարքսի նեցուկը բանվորական միջազգային կազմակերպության՝ Ինտերնացիոնալի հիմնադրման գործում»։ Թվարկելով Էնգելսի գլխավոր աշխատությունները, «Մուրճ»-ը գրել է. «Էնգելսը առհասարակ նկատված էր, որպես գլխավոր գործակից Կարլ Մարքսի, որի հետ նա կապված էր նաև ընկերական մտերմության կապերով։ Այդ պատճառով Մարքսը իր ձեռագիր աշխատությունները կտակել է Էնգելսին, որը նշանավոր տնտեսագետի մահից հետո, 1883 թվականին զբաղված էր նրա «Կապիտալ» խորագրով հայտնի հեղինակության լույս չտեսած մասերը հրատարակելու գործով, և հրատարակեց «Կապիտալ»-ի 2-րդ, 3-րդ մասերը, վերջինս՝ 1894 թվականին»[166]*։*

---

165 *Տե՛ս «Մուրճ», № 9, 1893, էջ 1349—1262, № 1, 1894, էջ 101—110, № 2, 1894, էջ 243—255, № 3, 1894, էջ 388—403, № 4, 1894, էջ 560—575, № 5, 1894, էջ 756—764, № 6, 1894, էջ 913—923, № 4, 1898, էջ 576—586 և այլն։*

166 *«Մուրճ», № 8, 1895, էջ 1481—1482։*

«Մուրճ»-ի խմբագիր Ա. Արասխանյանը, թեև չհասավ մարքսիզմին, բայց իր կյանքի վերջին շրջանում գիտակցում էր, որ «Մարքսիզմը օրեցօր աճում և ամրապնդում է», որ «Այժմս և սրանից հետո առանց Մարքսի անհնար է ոչ առաջացնել արմատական հեղափոխություն և ոչ էլ հասկանալ նրան»։ Ա. Արասխանյանը, բանավիճելով դաշնակցական «տեսաբանների» հետ, ասում էր. «Կարդացեք Մարքսին և ես հավատացած եմ, որ Դուք դրանով կկրճատեք ձեր հիմարությունները, որը դուք անում եք, կկրճատեք՝ ես ասում եմ, որովհետև Դուք ընդունակ չեք նրանցից ազատվելու» [167]։

Ա. Արասխանյանը շատ բանով հիշեցնում է ռուսական «լեգալ մարքսիստներին», մասնավորապես նրանց գաղափարախոս Պ. Ստրուվեին։

Իսկ «լեգալ մարքսիստները», ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, ձգտում էին խեղդել մարքսիզմը, գրկախառնությամբ, փափկությամբ։ «Ճանաչելով» մարքսիզմը, նրանք ձգտում էին խեղաթյուրել և աղճատել այն, մարքսիզմից դուրս նետել նրա գլխավոր բովանդակությունը՝ բանվոր դասակարգի պատմական դերի, պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերյալ ուսմունքը։

Հայ իրականության մեջ «լեգալ մարքսիզմը» դրսևորվում էր նացիոնալիզմի հետ շաղախված։ Միքայել Հովհաննիսյանը (Մ. Վարանդյան), Բախշի Իշխանյանը, Գ. Խաժակը (Գ. Զագալյան), Ռ. Խանազատը, Ե. Պալյանը և նրանց փոքրաթիվ համախոհները «Մշակ»-ի, «Տարազ»-ի, «Մուրճ»-ի և այլ պարբերականների

---

167 Տե՛ս Հայկական ՍՍՀ ԳԱ տնտեսագիտական ինստիտուտի ֆոնդ, 286, նույն տեղում պահվող Ա. Արասխանյանի արխիվային նյութերը. թ. 231։ Նույնը, Ս. Շ. Ջուլարյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, էջ 459։ Բնորոշ է այն փաստը, որ 1906 թվականին հայ պարբերական մամուլում, այդ թվում Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և Ս. Կասյանի խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակվող բոլշևիկյան «Նոր խոսք» թերթում հայտարարություն զետեղվեց Ա. Արասխանյանի թարգմանությամբ պատրաստվող Կարլ Մարքսի «Կապիտալ»-ի հայերեն հրատարակության բաժանորդագրություն անցկացնելու վերաբերյալ (տե՛ս «Նոր խոսք», № 12, 15 սեպտեմբերի, 1906)։ Ա. Արասխանյանին «Կապիտալ»-ի թարգմանման գործում օգնում էին Ստ. Շահումյանը, Ս. Կասյանը և բոլշևիկյան այլ գործիչներ։ Նա լիահույս էր նման աջակցության պայմաններում «Կապիտալ»-ի «հայերեն հրատարակությունը կունենա շատ դնողներ» (տե՛ս Ա. Արասխանյանի արխիվային նյութերը, թ. 231)։

էջերից որոճում էին ռուսական «լեգալ մարքսիստների» ասածները, դրանք պարուրելով նացիոնալիզմով։

Դա նկատվում է Գ. Խաժակի «Օրե՞նք, թե բացառություն», «Դիալեկտիկական մատերիալիզմ կամ պատմության մատերիալիստական հասկացողություն», Ե. Պալյանի «Մերկանտիլ բարոյականություն», Ե. Թոփչյանի «Գրական ղրույցներ», Ռ. Խանազատի «Իդեալի՞զմ, թե մատերիալիզմ», «Մամուլը և ինտելիգենցիան» ու այլ կոմպիլյատիվ հոդվածներում։ Այսպես, Գ. Խաժակը երկար ու բարակ խոսելով փիլիսոփայական տարբեր ուղղությունների մասին, դրեթե տարբերություն չի տեսնում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Միխայլովսկու ու նրա զաղափարակիցների միջև, թեև արդարությունը պահանջում է ասել, որ նա հաճախ է քաղվածքներ բերում մարքսիզմի հիմնադիրներից, դրականորեն արտահայտում նրանց մասին։ Ե. Թոփչյանը «Ընտանիք և սեփականություն» հոդվածում, որը լույս է տեսել «Տարազ»-ի 1898 թ. դեկտեմբերյան համարում, չնայած հիշատակում է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի անունները, բայց խորհուրդ է տալիս կարդալ «լեգալ մարքսիստների» գործերը [168]։

«Լեգալ մարքսիզմի» ազդեցությունը նկատվում է նաև «Դրոշակ»-ի, «Հնչակ»-ի և ազգայնական կուսակցությունների տպագիր այլ օրգանների առանձին հոդվածների վրա։ Հանդես գալով «մարքսիստական» ֆրազաբանությամբ, նրանց հեղինակները աղճատում և ամլացնում էին մարքսիզմը։ Մ. Հովհաննիսյանը (Վարանդյան) չհամերաշխելով մարքսիզմի տեսությանը դասակարգային պայքարի վերաբերյալ, բամբասում էր, թե մարքսիստներն օգտվում են գոյություն ունեցող դասակարգային պայքարից և «դարձնում են նրան վենք ու միջոց իրենց իդեալների իրականացման համար»։

«Լեգալ մարքսիզմի» դիրքերից է գրված Մ. Հովհաննիսյանի «Ֆրիդրիխ Էնգելս» հոդվածը, որը տպագրվել է «Մշակ»-ում։ Մի քանի անկապ տեղեկություններ հաղորդելով Ֆ. Էնգելսի գործունեությունից, աղավաղելով փաստերը, նա ասում էր. «Փարիզի կոմունայից հետո երկու հռչակավոր կոմունիստները (Կ. Մարքսը

---

168 Տե՛ս «Տարազ», № 27, 6 օգոստոսի, 1895, էջ 399—402, № 29, 13 օգոստոսի, էջ 410—414, № 31, 27 օգոստոսի, էջ 442—444, № 35, 24 նոյեմբերի, էջ 497, № 36, 1 նոյեմբերի, էջ 506—507, № 6, 14 փետրվարի, 1899, էջ 149—152, № 38, 10 նոյեմբերի, 1899, էջ 884, № 4, 6 փետրվարի, 1900, էջ 65—66 և այլն։

և Ֆ. Էնգելսը—խ.Բ.) գրեթե բոլորովին մաշվեցին գբոծնական ասպարեզից»[169]:

Մ. Վարանդյանը, անտեսելով փաստերը, ջանում էր «հակասություններ գտնել մարքսիզմի մեջ նրա զարգացման տարբեր շրջաններում, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հայացքներում, հայտարարելով՝ Ֆ. Էնգելսը «ավելի աջ էր» և ինչ-որ չափով ուղղել է Կ. Մարքսի սխալները»[170]: Տեսական լուրջ արատներ կան նրա «խոշոր ինդուստրիայի զարգացումը» հոդվածաշարում, որը տպագրվել է 1895 թվականին «Մուրճ»-ում[171]: Նկատենք, որ հրատարակելով այն, խմբագրությունը ծանոթագրության մեջ նշել է «Մուրճ»-ի «տեսակետները լիովին այն չէ, ինչ հոդվածի հեղինակինն է»[172]: Առհասարակ Մ. Վարանդյանը, Բ. Իշխանյանը և նրանց համախոհները, ամենից առաջ, պատերազմ էին հայտարարել տրամաբանությանը, թեև մոռացկոտությամբ երբեմն նրանք խոսում էին տրամաբանության անունից:

Դարամուտին, 1900 թվականին, ժնևում Ե. Պալյանի խմբագրությամբ հրատարակվում է «Հանդես» տեսական-քաղաքական, հասարակական-սոցիալիստական օրգանը: Լույս է տեսել հինգ համար, չորս գրքով, այդ թվում № 1-ը՝ օգոստոսին, № 2-ը՝ սեպտեմբերին, № 3-ը՝ հոկտեմբերին և № 4—5-ը՝ նոյեմբեր-դեկտեմբերին, ընդամենը 288 էջ: Գլխավոր հոդվածները գրել է Ե. Պալյանը: «Հանդես»-ին աշխատակցել են նաև Ե. Կրասիլնիկյանը (Ե. Պալյանի կինը), Ա. Տոնիկյանը: «Հանդես»-ն առաջադիր խնդիր ուներ. ստեղծել հայ սոցիալիստական կուսակցություն, տարածել գիտական սոցիալիզմի տեսությունը:

Հայ իրականության մեջ եղած հասարակական տարբեր հոսանքներն ու ազգայնական կուսակցությունները միավորելու,

---

169 Մ. Հովհաննիսյան, Ֆրիդրիխ Էնգելս, տե՛ս «Մշակ», № 92, 15 օգոստոսի, 1895, ընդգծումը մերն է—խ. Բ.:

170 Տե՛ս Միքայել Վարանդյան, «Հոսանքներ», 1910, էջ 15 և այլն: «Հոսանքների» քննադատությունը առաջին անգամ տվել է Ստ. Շահումյանը իր «Տիեզերական թութակը» հոդվածում (տե՛ս Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 156—164): Շահումյանի հոդվածի շարունակությունը լույս չի տեսել բոլշևիկյան «Նոր խոսք» հանդեսի հրատարակությունը ցարական գործակալների կողմից դադարեցնելու պատճառով:

Մ. Վարանդյանի «Հոսանքներ» և այլ աշխատությունների մասին խոսք կլինի սույն մենագրության երկրորդ մասում:

171 Տե՛ս «Մուրճ», №№ 1, 6 և 11, 1895:

172 Տե՛ս նույն տեղում, № 11, 1895, էջ 1451:

«բոլոր հավատացյալներին մի հարկի տակ ժողովելու» ճանապարհով «Հայ սոցիալիստ կուսակցություն» ստեղծելու ուղղությամբ «Հանդես»-ի ջանքերն ավարտվեցին երեք տարի անց «հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» «սպեցիֆիզմի» ձևավորմամբ։

«Հանդես»-ը ևս հայ իրականության մեջ «լեգալ մարքսիզմի» գաղափարական ազդեցության տակ գտնվող օրգաններից էր։ Նրանում թարգմանաբար հրատարակվել են Ժան Ժորեսի «Սոցիալիզմ և գյուղացիներ» (Ֆրանսիայի պառլամենտի 1897 թվականի հունիսի 19-ի և 26-ի, հուլիսի 3-ի նիստերում արտասանած ճառը) շահավետ ելույթը։ Մեծ տեղ էր տրված գիտական սոցիալիզմի տեսության պարզաբանմանը։ Ն. Պալյանն * իր «Սոցիալիզմ, թեորիա և տակտիկա» հոդվածաշարում (տե՛ս № 2, էջ 91—96, № 3, էջ 157—173, № 4—5, էջ 230—241) հենվելով Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և նրանց հետևորդների աշխատությունների վրա, կոմպիլյացիայի միջոցով ցույց էր տալիս մարքսիզմի ձևավորման պրոցեսը, շոշափում դիալեկտիկա, տնտեսական մոնիզմ, արժեքի թեորիա, հավելյալ արժեքի թեորիա, դրամագլխի կենտրոնացում, դասակարգային կռիվ, սոցիալիստական տակտիկա (պառլամենտիզմ և հեղափոխություն) հարցերը։ Նա ընդգծում էր, որ 40-ական թվականների վերջերին էր, որ երկու առաջնակարգ մտածողներ, Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը, սկսեցին ուսումնասիրել ներկա հասարակական կազմի էությունը, զարգացման ընթացքը, դասակարգային սոցիալ-քաղաքական հարաբերությունները, հիմք դրին և զարգացրին այն նոր գաղափարներին, հասկացողություններին, որոնք այսօր հայտնի են մարքսիզմ, գիտական սոցիալիզմ և սոցիալ-դեմոկրատիզմ անուններով։

Ուշագրավ է նաև «Վիլհելմ Լիբկնեխտ» հոդվածը [173]։

---

* Ն. Պալյանի հոդվածները լույս են տեսել «Վ. Վահունի», «Ե. Պ.», «Ա. Վանանդյան», «D.», «Լ. Արեգյան», «Վ. Վ.», «Ա. Երվանդյան» ծածկանուններով (տե՛ս Մի Հայկական ֆիլիալի դրադարանում պահվող «Հանդես»-ի համարներում հեղինակի կատարած նշումները։

173 Հոդվածից երևում է, որ Ն. Պալյանը մասնակցել է Վ. Լիբկնեխտի թաղմանը, որին, նրա վկայությամբ, մասնակցել է ավելի քան մեկ միլիոն բազմություն, թափորի երկարությունը 9 կիլոմետր էր, պատգամավորները կրում էին 3000 պսակ, 6 կառք նույնպես լցված էր օտար տեղերից ուղարկված պսակներով։ Նա հատկապես հիշատակում է Բեբելի և Զինդերի ճառերի մասին։ Տե՛ս «Հանդես», № 2, 1900։

«Հանդես»-ը ամեն կերպ աշխատում էր մարքսիզմը հարմարեցնել հայ իրականության և հատկապես Արևմտյան Հայաստանում բուրժուական իրավակարգ ստեղծելու նպատակին։ Ըստ էության վատ չէր լինի, եթե հնարավոր լիներ բանվոր դասակարգի ազատական ձգտումներին և դասակարգային պայքարի գաղափարի հետ շաղկապվեր արևմտահայ ժողովրդի ազատագրման գործը և ոչ թե մարքսիզմը դարձվեր դրոշ ազգային բուրժուազիայի իրավունքների պաշտպանության համար։ Ե. Պալյանը պահանջում էր հայերին ազատել Թուրքիայի տիրապետությունից. «ազատ մուտք տալ խոշոր ինդուստրիային և խոշոր երկրագործությանը, հաստատել կապիտալիզմը, որի մեջ միայն հայ բանվոր դասակարգը կարող է աճել և զարգանալ։ Մեզ համար բացարձակապես միևնույն է, թե ինչ կերպ ձևոք կբերվի մեզ անհրաժեշտ կապիտալիստական ռեժիմը՝ Հայաստանի անկախությամբ, Թուրքիայի սահմանադրությամբ թե եվրոպական տիրապետությամբ»[174]։

«Հայ սոցիալիստ կուսակցություն», «Հայկական հեղափոխության ծագումն ու պատճառները»[175], «Ամերիկայի հայ բանվորները»[176], «Երկաթուղիները տաճկական Հայաստանի մեջ»[177], «Սոցիալիստական կազմակերպություն»[178], «Հայկական իրականություն»[179], «Լեհացիք և մենք»[180], «Դրոշակ»-ը և երիտասարդ Թուրքերը»[181], «Եվրոպայի հայ ուսանողությունը»[182], «Երկրագործությունը հայ ժողովրդի մեջ»[183], «Թղթակցություններ»[184] և այլ նյութերում «Հանդես»-ը ազգայնական կուսակցությունների գաղափարական մակարդակից չի բարձրանում, չնայած գժգոհում էր նրանցից։ Ավելին, «Հանդես»-ը հնչակյան «սոցիալիստական թևի» բերանն էր, «լեգալ մարքսիզմի» գաղափարակիրը։ «Հանդես»-ը գաղափարապես ուղի հարթեց «սպեցիֆիզմի» համար՝ հորդորելով, թե հայ սոցիալիստները չպետք է ձուլվեն երկրի ընդհանուր

---

174 «Հանդես», № 3, 1900, էջ 130։
175 Նույն տեղում, № 1, էջ 4—46, 47—53, № 2, էջ 97—109։
176 Նույն տեղում, № 2, էջ 65—85։
177 Նույն տեղում, էջ 86—90։
178 Տե՛ս «Հանդես», № 3, էջ 129—139։
179 Նույն տեղում, էջ 140—156, 207—229։
180 Նույն տեղում, էջ 174—178։
181 Նույն տեղում, էջ 179—191։
182 Նույն տեղում, էջ 193—206։
183 Նույն տեղում, № 4—5, էջ 252—258։
184 Նույն տեղում, էջ 259—264։

կուսակցության մեջ, այլ պետք է գործեն առանձին, ինքնուրույն։ «Հանդես»-ը չուներ աշխարհագրական կոնկրետ միջավայր, իր գործունեության ասպարեզը համարում էր ամենուրեք, ուր կար հայ տարրը։

«Հանդես»-ի ուղղությունը արտահայտված էր նաև Ե. Պալյանի և Գ. Կուզիկյանի հրատարակած «Բանվոր» (1903) պարբերականի առաջին և միակ համարում։ Ե. Պալյանի այդ տարիներին փայփայած «սոցիալիզմն» ու «մարքսիզմը» ոչնչով չէին տարբերվում հնչակյանների և մանրբուրժուական մյուս կուսակցությունների դավանած «սոցիալիզմից» և «մարքսիզմից»։

Երկու դարաշրջանների սահմանագլխին, 1895 թվականի օգոստոսի 5-ին Լոնդոնում վախճանվեց Ֆ. Էնգելսը։ Մարքսիզմի անզուգական կորիֆեյի մահը ցնցեց միջազգային պրոլետարիատին, առաջավոր մարդկությանը։ Գիտական կոմունիզմի հանճարը կտակել էր, որ իր մարմինը դիակիզեն, իսկ փոշին հանձնեն ծովի ալիքներին։ Հասել էր այդ ծանր պահը։ Միջազգային բանվոր դասակարգի առաջատար գնդերի ներկայացուցիչները հավաքվել էին Լոնդոն։ Նրանք ծաղկեպսակներ դրեցին Ֆ. Էնգելսի աճյունին։ Գերմանիայի, Ավստրիայի, Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և այլ երկրների պրոլետարիատի անունից դրված ծաղկեպսակների հետ միասին, Ավետիս և Մարո Նազարբեկյանները ծաղկեպսակ դրեցին Ֆ. Էնգելսի աճյունին՝ «Հայաստանից» մակագրությամբ, դրանով իսկ արտահայտելով հայ ժողովրդի երախտագիտությունը կոմունիզմի մեծ մարգարեի նկատմամբ։ «Հնչակ» թերթը Ֆ. Էնգելսի հիշատակին նվիրված հոդվածում, գրվատելով նրա ծառայությունները, հենվելով «Թայմս»-ի վրա, գրել է. «Սոցիալիստ առաջնորդի և գրողի հուղարկավորությունը տեղի ունեցավ շաբաթ օրը (օգոստոս 10) Սըրիի Վոկինգում։ Այդ գեպքը նշանավոր է իր միջազգային բնավորությամբ... Էնգելսի սոցիալիստ բարեկամներն ու ընկերները ժողովված էին այդ օրը նրա դագաղի շուրջը Լոնդոն Նեկրոպոլիս Ընկերության կայանում, ուր պետք է կատարվեր դիակիզությունը։ Որևէ կրոնական կամ ուրիշ արարողություն տեղի չունեցավ։ Դագաղի շուրջը պերճախոս ներբողներ արտասանվեցան Էնգելսի բնավորության ու գործերի մասին. խոսեցին Մըստըր Ջստիս Մուր, Կ. Մարքսի «Կապիտալ»-ի անգլերեն թարգմանիչը, հանգուցյալի քեռորդի Հենրիխ Էնգելս, Վիլհելմ Լիբկնեխտ՝ գերմանական Ռեյխստագի անդամ, որ ներկայացնում էր Ռեյխստագի՝ սոցիալիստական խումբը. Պոլ Լա-

ֆարգ, Կ. Մարքսի փեսա, որ ներկայացնում էր ֆրանսիական սոցիալիստական Parti Ouvriel, սա չափազանց զգացված լինելով խոսած ժամանակ ընկճվեցավ, Ավգուստ Բեբել, գերմանական Ռեյխստագի անդամ, որը ներկայացնում էր ավստրիական սոցիալիստական կուսակցությունը, Ժան Անսելմ՝ բելգ. պառլամենտի անդամ, Վանդեր Գոչ, ներկայացուցիչ հոլանդական սոցիալիստների, Շըլեգտենդ և վերջապես Էդուարդ Էվելինդ, Մարքսի երկրորդ փեսան։ Ճառախոսություններից վերջ կարդացվեցան զանազան կողմերից ստացված հեռագրեր։ Ճառախոսությունների անգլերեն ու ֆրանսերեն լեզուներով արտասանվելը ցույց է տալիս, թե՛ Էնգելսի գործերի և թե՛ այդ ժողովի աշխարհաքաղաքացիական բնավորությունն ու կերպարանքը»։

«Բացի այդ վերոհիշյալ անձերից, նեկա էին նաև Կարլ Կաուցկի՝ խմբագիր Շտուտգարդում հրատարակվող «Neue Zeit»-ի, Ստեպնիակ, Վոլխովսկի և Վերա Զասուլիչ՝ ռուսներ, Պ. Զինդեր՝ անդամ գերմանական Ռեյխստագի, Նազարբեկ՝ հայ, Ստ. Մենդելսոն և Մարի Մենդելսոն՝ լեհացի, Դր. Կարպելս՝ Վիեննայից, Դր. Օսվալդ, Դր. Բոնաո, Դր. Լ. Ֆրեյբերգ՝ Էնգելսին խնամող բժիշկը, Հենրի Քելշ՝ անգլիական «Vustion»-ի խմբագիրը, գերմանացի Ֆրիդր. Լեսներ՝ հին «International»-ի անդամներից մեկը, որոնցից այժմ շատ քչերն են կենդանի։ Ուլիամ Բորն, Ուերրի Անդերսոն և Ժ. Դ. Նեվիլ՝ անգլիացի, Պաոլո Վալերա՝ իտալացի, Կարլ Մարքսի թոռը և շատ ուրիշներ։ Բազմաթիվ պատգամներ կային, որոնց ժապավենները լայն ու կարմիր էին՝ ոսկե նշանաբաններով դրոշմված։ Այդ պատգամներն ուղարկողներն էին գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, Ավստրիայի պրոլետարիան, պրուսական, ավստրիական և ռուսական լեհերը, Լայպցիգի կուսակցությունը, Կարլ Մարքսի զավակները և ֆրանսիական, իտալական, բելգիական, հոլանդական, ավստրիական, ռուսական, հայկական (Հնչակյան), բուլղարական, ռումինական և ուրիշ ազգերի Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները»[185]։

Ֆ. Էնգելսի մահից մեկ շաբաթ անց, 1895 թվականի օգոստոսի 13-ին, հայերեն լույս է տեսել «Ֆրիդրիխ Էնգելս» բրոշյուրը[186], որտեղ տրված էր Կ. Մարքսի մերձավոր զինակցի հեղա-

---

185 «Հնչակ», № 12—13, օգոստոս, 1895։

186 «Ֆրիդրիխ Էնգելս», 13 օգոստոսի, 1895, Լոնդոն, Ռ. Ոսկանյանց։

փոխական գործունեության նկարագրությունը։ Չնայած վերոհիշյալ գրքույկը մեր ձեռքը չի ընկել, բայց «Հայ բանվոր հեղափոխական ասոցիացիայի» գործունեության հայտնաբերման կապակցությամբ ոստիկանության կազմած արձանագրությունից[187] երևում է, որ Ա. Խումարյանի մոտ հայտնաբերված գրականության մեջ եղել է նաև այն, ինչպես և հայերեն քաղվածքներ Ֆ. Էնգելսի աշխատություններից։

Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ «Ֆրիդրիխ Էնգելս» բրոշյուրի հեղինակ (գուցե և թարգմանիչ) Ռ. Ոսկանյանցը աշխատակցել է «Հայ բանվոր հեղափոխական ասոցիացիայի» տպագիր օրգաններին։ Այսպես, «Նամակ Երզրումից» (իրականում Փարիզից) հոդվածում նա գրել է. «Հայ բանվոր եղբայրնե՛ր, սոցիալիզմի գործում տնտեսական հարցերից անբաժանելի են քաղաքական հարցերը։ Համոզված սոցիալիստը պետք է լինի նաև քաղաքական գործիչ և հասարակության մեջ գործի բոլոր միջոցներով»[188]։

***

XIX դարի երկրորդ կեսին առաջացած «Հայկական հարցը», որը ըստ էության, միջազգային քաղաքականության ոլորտը փոխադրված Արևմտյան Հայաստանի նահանգների հայ բնակչության ապահովության, այդ նահանգներում բարեփոխություններ կատարելու և մեծ տերությունների հսկողությունը սահմանելու հարցն էր, ձևակերպված Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ, իսկ այնուհետև Բեռլինի վեհաժողովի ընդունած 61-րդ հոդվածներով, հուզում էր ոչ միայն հայ ժողովրդին, այլև ռուս և համաշխարհային առաջադեմ մտածողներին[189], Եվրոպայի և Ռուսաստանի մարքսիստներին։ Հայաստանի և հայ ժողովրդի դրության մասին գիտեին Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը։ Կ. Մարքսը քննադատելով «մահմեդական ֆանատիզմը» ցույց է տվել, թե Թուրքիան, որ ապ-

---

187 См. ЦГАОР СССР, ф. ДП—5, 1897, д. 367, часть I, л. 52—63.

188 Там же.

189 *Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին, Ժնև, 1907։* Ա. Ն. Մնացականյան, *Հայ ժողովրդի ազատագրությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965։* «Геноцид армян в Османской империи», Сборник документов и материалов, под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.

բում էր ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճանը, արգելակում է Հայաստանի առաջադիմությունը։ Դեռևս 1850-ական թվականներին Ֆ. Էնգելսը առաջադրել է Թուրքիայում սուլթանական ռեժիմի տապալման և «քրիստոնեական ազատ, անկախ պետությունների» ստեղծման հարցը, իսկ 1894 թվականին, ինչպես տեսանք, Հ. Աթաբեկյանցին գրած նամակում ասում էր, որ հայ ժողովրդի ազատագրությունը ցարիզմի և սուլթանի լծից հնարավոր կդառնա ինքնակալության տապալման պայմաններում։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին դեռևս 80-ական թվականներին արտահայտվել են Ավգուստ Բեբելը, Պոլ Լաֆարգը, Ժան Ժորեսը, Վիլհելմ Լիբկնեխտը, Ֆրանց Մերինգը, Կարլ Կաուցկին (այն ժամանակ երբ դեռ նա մարքսիստ էր), Կլարա Ցետկինը, Գեորգի Պլեխանովը և ուրիշներ։

Գ. Ղարաջյանը իր «Արտասահմանում» գրքում գրել է, թե ուսանողական տարիներին շփվելով «Աշխատանքի ազատագրություն» խմբին, առիթ է ունեցել Գ. Պլեխանովին պատմելու Կովկասի քաղաքական կյանքի, մասնավորապես «Հայկական հարց»-ի մասին։ Գ. Պլեխանովը կենդանի հետաքրքրություն էր ցուցաբերում դեպի այդ ամենը, հայտնում իր կարծիքը։ Նա այն համոզմանն էր, վկայում է Գ. Ղարաջյանը, որ ասիական Թուրքիայում հայերի մղած պարտիզանական կռիվները հազիվ թե որևէ արդյունքի հասցնեն։ Ապարդյուն են նաև դիվանագիտության հետ կապված հույսերը։ Ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ մյուս բոլոր հարստահարված ժողովուրդների ամենադաժան թշնամին, ասում էր Պլեխանովը, հանդիսանում է ցարական ինքնակալությունը։ Արևելահայերը պետք է իրենց ուշադրությունը կենտրոնացնեն Ռուսաստանի քաղաքական ազատագրական պայքարի վրա, որի հաղթանակը, անշուշտ, կթեթևացնի Թուրքիայի աշխատավոր ժողովուրդների, այդ թվում և հայերի դրությունը։ Ինչ խոսք, Թուրքիայում ևս հայ ժողովուրդը պետք է ծավալի հեղափոխական շարժումները սերտորեն համագործակցելով մյուս ժողովուրդների աշխատավոր զանգվածների ազատագրական պայքարին[190]։

Աշոտ Աթանասյանը 1907 թվականին վերհիշելով Ա. Բեբելի

---

190 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 51, գ 81, թ. 70։

և Վ. Լիբկնեխտի հետ 1893 թվականին Գերմանիայում ունեցած հանդիպման մասին, «Բեբելը և Թուրքահայ հարցը» հուշագրության մեջ ասել է. այդ ժամանակ Թուրքահայաստանից գալիս էին ծանր, սրտաճմլիկ տեղեկություններ: Սովը, հիվանդությունները մի կողմից, քուրդ և Թուրք հրոսակախմբերի արած ավերումներն ու թալանները մյուս կողմից՝ Թուրքահայաստանը դարձրել էին նահատակության մի արյունալից բեմ: Ամենից ավելի և ամենից շատ տանջվում էին հայերը: Այդ մասին էին վկայում նաև ժամանակի թերթերը, հատկապես «Frankfurter Zeitung»-ը: Գերմանիայի հայ ուսանողական միությունները զեկուցումներ էին կազմակերպում արևմտահայության ծանր կացության հարցերին նվիրված: «Լսում էինք «դժոխքի» նկարագրությունը,— գրել է Աշ. Աթանասյանը,— զոհերի ցանկն ու պատմությունը, վրդովվում, նույնիսկ արտասվում էինք, բայց օգնել մեր տանջվող եղբայրներին՝ ոչ մի բանով չէինք կարող: Հետևաբար, լսելով երկու մեծ և նշանավոր սոցիալիստների՝ Բեբելի և Լիբկնեխտի գալուստը (Լայպցիգ—Խ.Բ.), որոշեցինք գնալ նրանց մոտ, պատմել իրական դրության մասին և խնդրել, որ նրանք նոր գումարվելիք Ռայխստագում հարցապնդում անեն իրենց կառավարությանը՝ Թուրքահայ սարսափների առիթով» [191]:

Ա. Աթանասյանը, ինչպես ինքն է վկայում, երկու այլ ընկերների հետ միասին գնում են Հյուրանոց և հանդիպում Ա. Բեբելին ու Վ. Լիբկնեխտին, հանդամանորեն պատմում այն ամենը, ինչ գիտեին Արևմտահայաստանի ողբերգական դրության վերաբերյալ:

— Մենք եկել ենք խնդրելու Ձեր միջամտությունը՝ թեթևացնելու հայ ժողովրդի զարհուրելի պայմանները,— դիմելով Բեբելին ասում են հայ ուսանողների պատվիրակները:

— Ես հասկանում եմ Ձեզ,— ասում է Ա. Բեբելը,— նույնանման դիմում մենք ստացանք մի ամիս առաջ նաև Բեռլինի հայ ուսանողությունից: Ձեզ ասելու եմ այն՝ ինչ նրանց. հայ ժողովրդի բախտը անբաժանելիորեն կապված է համայն Թուրքիայի ժողովուրդների բախտի հետ: Միապետական ռեժիմի պայմանները միանման սոսկալի են ողջ Թուրքիայի համար, ուստի և հայերի դրությունը կբարելավվի այն ժամանակ, երբ կբարելավվի ամբողջ Թուրքիայի ժողովուրդների բախտը: Իսկ բոլորիդ հարցը կլուծվի, երբ կտապալվի սուլթանական ռեժիմը:

---

191 «Երկրի ձայն», № 25, 18 նոյեմբերի, 1907 թ., էջ 6:

— Իսկ ե՞րբ կտապալվի սուլթանական ռեժիմը,— հարցնում է Ա. Աթանասյանը։

— Երբ որ Թուրքիայում նույնանման պայմանների տակ ապրող ազգությունները և մանավանդ նրանց ամենից շատ տանջված տարրերը կմիանան, փշրելու գոյություն ունեցող կարգերը,— ասում է Ա. Բեբելը։

— Բայց չէ՞ որ թուրքերը մահմեդական են և երբեք քրիստոնյաների հետ չեն միանա,— նկատում է պատվիրակներից մեկը։

— Հալածվածներն ու ճնշվածները կրոն ու ազգություն չեն ճանաչում,— ասում է Ա. Բեբելը,— փորձեցեք Դուք հայերդ այդ ուղղությամբ գործել թուրք ժողովրդի հետ և երբեք հայկական առանձին հարց չբարձրացնեք։ Հակառակ դեպքում Դուք միայն հեռացնում եք ձեզանից բողոքող մուսուլման տարրին և հարստահարվածների դատը՝ դարձնում ազգային հայկական դատ, մի բան, որ բնականաբար գրգռում է մուսուլման ժողովրդին [192]։

1893 թվականին Պոլ Լաֆարգը ընդունելով այն ժամանակ հնչակյան Ռուբեն Բերբերյանին պարզաբանում է, որ բանը թուրքական սուլթանին տեռորի ենթարկելու մեջ չէ, որ Դուք ուզում եք, դա, իհարկե, նույնիսկ հնարավոր է, այլ նրանում, որ Թուրքիային պաշտպանում են կապիտալիստական երկրները, այդ թվում՝ Գերմանիան, Ավստրիան, Իտալիան։ Նրանք պարտավորվել են պահպանել Թուրքիայի in status guo-ն։

«Թուրքիան միշտ եղած է և պիտի լինի կավածաղիկ,— Ռ. Բերբերյանի վկայությամբ ասել է Պ. Լաֆարգը,— եվրոպական կապիտալիստ պետությունների համար։ Ինչ որ էլ անեք, մի մոռանաք մի բան, որ մեծ պետությունները գործ ունեն վայրի խոզի հետ (Թուրքիայի հետ)։ Նրանք գիտեն, որ պետք է սպանել այդ կատաղած վայրի խոզը, բայց քանի որ չեն գտնում համաձայնություն՝ թե խոզի որ մասը ում է տրվելու, ուստի նրանք ազատ են թողնում այդ որսը, թեկուզ վայրի խոզը ահագին չարչարանքներ պատճառե իր շուրջը գտնված բանջարանոցում» [193]։

Ա. Նազարբեկը ծանոթ լինելով Ժ. Ժորեսի, Շ. Լոնգեի և այլոց հետ, նրանց պատմում էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի և հայկական հարցի մասին, հոդվածներ գրում եվրո-

---

192 «Երկրի ձայն», № 25, 18 նոյեմբերի, 1907, էջ 7։

193 «Հայրենիք», թիվ 4, նոյեմբեր, 1939, էջ 69։

պական սոցիալիստական թերթերին։ Նա այդ ոգով մի ծավալուն հոդված է գրել «La Petite Republigue» ֆրանսերեն թերթին, «Frappera la pourse» («Զարկ գրպանին») խորագրով, որը հրապարակվել է նրա ստորագրությամբ, իբրև առաջնորդող։ Նրանում հեղինակը մերկացրել է Թուրքիայի և եվրոպական կապիտալիստական կառավարությունների հայկական հարցում բռնած վնասակար քաղաքականությունը։ Շ. Լոնգեն հավանելով այդ հոդվածը, Ռ. Բերբերյանին ասել է. «Հայտնեցեք Ձեր ընկերոջը, որ շաբաթը մի անգամ թերթում նրան սպասվում է առաջին սյունակները։ Մենք քիչ ենք կարդացել նման մտքեր, որոնք այսպիսի ուժեղ արամաբանությամբ պարզաբանում են ընթերցողին, թե որտեղ են թաքնված հայկական ողբերգության բուն պատճառները» [194]։

Հայ ժողովրդի ազատագրության մասին ջերմ համակրանքով են արտահայտվել Ժան Ժորեսը, Կլարա Յետկինը, Կարլ Լիբկնեխտը և ուրիշներ։ Ժ. Ժորեսը նշավակելով Թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականությունը կոչ է արել, թե չպետք է թույլ տալ ժողովրդի մի մասի բնաջնջմամբ լուծվեն հարցերը [195]։ Իսկ Անատոլ Ֆրանսը, որ 1890-ական թվականներից իր ձայնը բարձրացրել էր ի պաշտպանություն հայ ժողովրդի, ասում էր. «Մենք պետք է խոստովանենք, որ հայ ժողովուրդը խելոք և քաջարի ժողովուրդ է, որը ձգտում է յուրացնել քաղաքակրթության բարձր դաղափարները, նա իր հանճարով և անօրինակ դժբախտություններով համակրանքի է արժանացել այն ժողովուրդների մոտ, որոնք արդարության և ազատության դաղափարների սկիզբն են առաջադրել» [196]։

Մարքսիստները պարզաբանում էին, որ Ռուսաստանում պրոլետարիատի դասակարգային պայքարը կհասցնի ինքնակալության տապալմանը, իսկ Թուրքիայում ժողովրդական հեղափոխությունը կոչնչացնի սուլթանական անարդ լուծը՝ ազատություն տալով ճնշված և հարստահարված աշխատավոր դանգվածներին, այդ թվում հայերին։ Սակայն, մարքսիստների այս հստակ դիրքորոշումը ճիշտ չընկալեցին հայ ազգային կուսակցություններն ու նրանց

---

194 «Հայրենիք», թիվ 10, օգոստոս, 1939, էջ 129—130։

195 «Геноцид армян в Османской империи», էջ 146—147, 151—152. Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 175—177։

196 «Братская помощь», էջ 474.

գաղափարախոսները։ Առաջվա նման շարունակեցին իրենց անհնատես քաղաքականությունը, որը նորանոր աղետներ բերեց արևմտահայությանը։

1895 թվականով փակվում է հայ հասարակական-քաղաքական մտքի որոնումների էջը։ Բացվում է համաուսական պրոլետարիատի հետ համագործակցած բանվորական և ազգային շարժումների, հեղափոխական, գիտական մարքսիզմի լայն տարածման, սոցիալիզմը բանվորական շարժմանը միաձուլելու շրջանը։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը տատասկոտ կեռմաններից հանելու, համաուսական պրոլետարիատի պայքարին լծորդելու համար հարկավոր էր ոչ թե մաշված, այլ նոր, հատու զենք։ Դա մարքսիզմն էր, որն արդեն թևակոխել էր իր զարգացման լենինյան էտապը։

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԷՏԱՊԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԴԵՆՆԵՂԻՍԸ

1. Ռուսաստանը լենինիզմի հայրենիքն է, հեղափոխական մարքսիզմի կենտրոնը: 2. Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» հայ անդամները: 3. Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան: 4. Ռուս մարքսիստները Կովկասում: 5. Ջալալօղլու Ստ. Շահումյանի մարքսիստական խմբակը: 6. Լենինյան իսկրայական առաջին կազմակերպությունները Երկրամասում: 7. Լենինյան «Իսկրա»-ի առաքումը Հայաստան: 8. Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը: 9. Հեղափոխական մարքսիզմի հայերեն անդրանիկ տպագիր օրգանը: 10. Վ. Ի. Լենինը «Պրոլետարիատ»-ի մասին: 11. «Պրոլետարիատ»-ը և նրա ընթացքները:

1

Մարդկային միտքը բյուր տառապանքներ և տանջանքներ է կրել մինչև դիտական սոցիալիզմի գաղափարներին հասնելը: 451 տարի առաջ, 1516 թվականին, անգլիացի Թոմաս Մորը իր «Ուտոպիա» գրքում երազում էր անգոր «Ուտոպիա» կղզու կոմունիստական հասարակության մասին: Նրանից հարյուր տարի անց հրապարակ իջավ ուտոպիական կոմունիզմի մի ուրիշ երևելի աշխատություն՝ «Արևի երկիրը», որը բանտում գրել էր իտալական ժողովրդի խիզախ զավակ Կամպանելլան:

Ռուս հեղափոխական-դեմոկրատ, ուտոպիստ-սոցիալիստ Նիկոլայ Չերնիշևսկին ապագա հասարակարգի մասին իր երազանքներն արտահայտել է «Ի՞նչ անել» վեպում, որը շարադրել է Պետրոպավլովյան ամրոցի տանջարաններում: Բայց ո՛չ Մորը, ո՛չ Կամպանելլան, ո՛չ Չերնիշևսկին և ոչ է՛լ Ռոբերտ Օուենը, Սեն-Սիմոնը, Լուի Բլանը, Շարլ Ֆուրիեն և շատ ու շատ ուրիշներ չկարողացան գծել դեպի ամենաարդարացի հասարակարգը տանող

ճշմարիտ ուղին։ Նրանք վարդագույն երազանքներից այն կողմ չանցան, քանի որ իրենց տեսությունները չէին ամրապնդում հասարակական զարգացման օրենքներով, ժողովրդական զանգվածների կողմը չէին տեսնում ոչ մի պատմական ինքնագործունեություն, սավառնում էին իրականությունից դուրս։ Այնինչ, հարկավոր էր ամուր կապ կյանքի հետ։ Ուտոպիական սոցիալիզմի ու կոմունիզմի ջատագովները ժխտում էին աշխատավոր զանգվածների ամեն մի հեղափոխական գործողություն, ցանկանում իրենց նպատակին հասնել խաղաղ ճանապարհով և ճգնում էին «մանր և, իհարկե, անհաջող փորձերով, օրինակի ուժով ուզի հարթել նոր հասարակական ավետարանի համար»[1]։

Շատ փոթորիկներ անցան Արևմտյան Եվրոպայի գլխով, մինչև որ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը կոմունիզմը ուտոպիայից վերածեցին գիտության, այն նպատակամղեցին դեպի բանվորական շարժումը։ «Սոցիալիզմի ուղղումը դեպի միաձուլում բանվորական շարժման հետ,— գրել է Վ. Ի. Լենինը,— Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մատուցած գլխավոր ծառայությունն է։ Նրանք ստեղծեցին այնպիսի հեղափոխական թեորիա, որը բացատրեց այն միաձուլման անհրաժեշտությունը և որպես սոցիալիստների խնդիր՝ դրեց պրոլետարիատի դասակարգային պայքարի կազմակերպումը»[2]։

Սոցիալիզմի զարգացումը Ռուսաստանում, այդ թվում՝ Անդրկովկասում, գրեթե նույն ճանապարհով է ընթացել, ինչպես Եվրոպայում։ Սոցիալիստները և բանվորական շարժումը սկզբում գործում էին իրարից անկախ։ Ռուսաստանի սոցիալիստները,— ինչպես 1899 թվականին գրել է Վ. Ի. Լենինը,— մի կողմից չէին հասկանում Մարքսի թեորիան, այն անիրագործելի էին համարում Ռուսաստանի նկատմամբ, մյուս կողմից՝ ռուսական բանվորական շարժումը մնում էր գեղեցիկ կատարելապես սաղմնային ձևի մեջ[3]։ Ռուս բանվորների «Հարավային միությունը» (1875) և «Հյուսիսային միությունը» (1878), ռուս սոցիալիստների ուղղություններից հեռու էին, թեև 1878 թվականին ցարական դատարանում թնդացին Մոսկվայի ջուլհակ Պյոտր Ալեքսեևի մարդարեական խոսքերը Ռուսաստանի բանվոր դասակարգի պատմական դերի մասին։ 1870—1880-ական թվականներին Ռուսաստանի սոցիա-

---

1 Տե՛ս Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, էջ 74։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 323—324։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 324։

լիստները և բանվորական ընդվզումները գործելով իրարից անջատ, սոցիալիզմի համար մարտնչողների առասպելական խիզախությունները զարնվելով ցարիզմի պատնեշներին ջախջախվում էին։ Տնտեսական պայքարի դրոշը պարզած բանվորները հալածվում, բանտ էին նետվում, աքսորվում և կախաղանների վրա ճոճվում։ 1890-ական թվականների սկզբներին ռուսական սոցիալիստների բանվորական մասսաների հետ մերձեցմամբ, Գ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» խմբի գործունեությամբ, ինչպես նշեցինք, մարքսիզմը դարձավ ռուսական հասարակական և հեղափոխական մտքի ուղղություն։

Ռուսական առաջին մարքսիստներից է ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ՈՒԼՅԱՆՈՎ-ԼԵՆԻՆԸ, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի վսեմ գործի մեծ շարունակողը։ Նա քաղաքական պայքարի ասպարեզ մտավ XIX դարի վերջին, XX դարի սկզբին, երբ համաշխարհային բանվորական ազատագրական շարժման կենտրոնը Արևմտյան Եվրոպայից սկսել էր տեղափոխվել Ռուսաստան։ Վ. Ի. Լենինը դեռևս 16 տարեկան էր, երբ նրան վիճակվեց ծանր փորձություններ ապրել։ 1886 թվականի հունվարին 54 տարեկան հասակում հանկարծամահ եղավ նրա հայրը՝ Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարար գործիչ Ի. Ն. Ուլյանովը։ Դրանից շատ չանցած, 1887 թվականի մարտի 1-ին ցար Ալեքսանդր III-ի դեմ մահափորձի նախապատրաստմանը մասնակցելու համար Պետերբուրգում ձերբակալվեց նրա եղբայրը՝ Ալեքսանդր Ուլյանովը։ Նրանից անմիջապես հետո ձերբակալվեց նաև քույրը՝ Աննա Ուլյանովան։ Մայիսի 8-ին Ալեքսանդր Ուլյանովը, 21 տարեկան հասակում, մահապատժի ենթարկվեց։ Ուլյանովների ողջ ընտանիքը հեղափոխականներ էին։ Բացի վաղաժամ մեռած Օլգայից, բոլոր երեխաները դարձան հեղափոխականներ։ Դրանում անուրանալի երախտիք ուներ նրանց մայրը՝ Մարիա Ալեքսանդրովնան։ Վլադիմիր Ուլյանովը, խոնարհվելով իր եղբոր լուսապայծառ հիշատակի ու խիզախության առջև, մերժեց նրա որդեգրած նարոդնիկական տեռորիստական պայքարի ուղին։ «Ո՛չ, մենք այդ ճանապարհով չենք գնա,— որոշեց նա,— այդպիսի ճանապարհով չէ, որ պետք է գնալ»։ Նա գնաց այլ ուղիով։ Կազանի ուսանողների հեղափոխական ելույթներին մասնակցելու համար 17-ամյա Վ. Ի. Լենինը ևս ձերբակալվեց ու աքսորվեց։ Մոտ մեկ տարի աքսորում մնալուց հետո Վ. Ի. Լենինը վերադառնում է Կազան, մտնում Ն. Ֆեդոսեևի կազմակերպած մարքսիստական խմբակը։ Ցարիզմի,

ամեն տեսակ ճնշման, կամայականության, հալածանքների նրկատմամբ ունեցած անհուն ատելությունը, աշխատավոր մարդու ազատագրման ջերմ սերը, մարքսիզմի հզոր ու լուսատու գաղափարները Վ. Ի. Լենինին դարձրին պրոֆեսիոնալ հեղափոխական։ Կ. Մարքսի մահից հետո պրոլետարական ազատագրական մեծ շարժման պատմությանը հայտնի չէ այնպիսի վիթխարի մի դեմք, ինչպիսին Վ. Ի. Լենինն էր։ «Անվեհեր միտքը, երկաթե, աննկուն, համառ, ամեն ինչ հաղթահարող կամքը, սրբազան ատելությունը, մահու չափ ատելությունը դեպի ստրկությունն ու ճնշումը, լեռներ շարժող հեղափոխական կիրքը, անսահման հավատը մասսաների ստեղծագործական ուժերի նկատմամբ, հսկայական կազմակերպական հանճարը,— այս բոլորը իր հոյակապ մարմնացումը գտավ Լենինի մեջ, որի անունը դարձել է նոր աշխարհի սիմվոլը՝ Արևմուտքից մինչև Արևելք, Հարավից մինչև Հյուսիս»[4],— այսպես է տալիս Վ. Ի. Լենինի մահվան առթիվ Ռկ(բ)կ Կենտկոմի «Պարտիային, բոլոր աշխատավորներին» ուղղված դիմումի մեջ։

Խորապես ուսումնասիրելով մարքսիզմը, Վ. Ի. Լենինը 1892 թվականին կազմակերպում է Սամարայի մարքսիստական առաջին խմբակը, որի մեջ մտնում էին Ա. Սկլյարենկոն, Ի. Լալայանցը և ուրիշներ։ 1893 թվականին նրանք կազմեցին Սամարայի «Եռյակը»։ Արդեն այդ տարիներին Վ. Ի. Լենինը խոշոր դեր է խաղում Ռուսաստանում մարքսիզմի տարածման և արմատավորման գործում։ «Այդ 23-ամյա մարդու մեջ,— հետագայում վերհիշում էր Ի. Լալայանցը,— ամենազարմանալի կերպով զուգակցվում էին, մի կողմից, պարզությունը, նրբազգացությունը, կենսուրախությունն ու կրքոտությունը և մյուս կողմից՝ մեծալրջությունը, դիտելիքների խորությունը, դատողության և սահմանումների պարզորոշությունն ու հստակությունը»[5]։

1893 թվականի աշնանից Վ. Ի. Լենինը փոխադրվում է Պետերբուրգ։ Այստեղ, պրոլետարական կենտրոնում, Իլյիչի գլխավորությամբ բեղմնավոր գործունեություն են ծավալում մարքսիս-

---

4 Տե՛ս «Պրավդա» և «Իզվեստիա» թերթերի 1924 թ. հունվարի 23-ի արտակարգ համարները։

5 Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, մաս I, էջ 135։

տական խմբակները, որոնք միավորվեցին մեկ միասնական սոցիալ-դեմոկրատական անկեղծ կազմակերպության մեջ և 1895 թվականի վերջին ստացան «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություն» անունը: Ռուսական սոցիալ-դեմոկրատիան հենց այդ ժամանակվանից էլ թևակոխում է իր պատմության նոր փուլը, իսկ Ռուսաստանի XIX դարի հեղափոխական շարժման մեջ սկսում է նրա պրոլետարական ժամանակաշրջանը: Վ. Ի. Լենինի բնութագրությամբ «Պայքարի միությունը» բանվորական շարժման վրա հենվող և պրոլետարիատի դասակարգային պայքարը ղեկավարող հեղափոխական կուսակցության առաջին լուրջ սաղմն էր, «Ռուսաստանում այն առաջինը սկսեց իրականացնել գիտական սոցիալիզմի գաղափարների միացումը բանվորական շարժման հետ» [6]:

1895 թվականին 25-ամյա Վ. Ի. Լենինն առաջին անգամ մեկնեց արտասահման՝ Շվեյցարիա, Բեռլին, Փարիզ, կապ հաստատեց «Աշխատանքի ազատագրություն» խմբի հետ, ուշադիր ուսումնասիրեց Արևմտյան Եվրոպայի բանվոր դասակարգի կյանքն ու պայքարը: Այդ ուղևորության ժամանակ Իլյիչը խմացավ Ֆ. Էնգելսի մահվան մասին, գրեց հատուկ հոդված, նվիրված գիտական կոմունիզմի մեծ առաջնորդին, նրանում ցուցաբերելով մարքսիստական իր խոր գիտելիքները և անսահման հավատարմությունը բանվոր դասակարգի հանճարեղ ուսուցչի նկատմամբ:

Սեռոզ բանվորական շարժումը առաջադրում էր նոր գրականության, մասսայական հեղափոխական թերթիկների, թռուցիկների, պրոկլամացիաների, կոչերի պահանջ: Նմանօրինակ գրականության հիմքը դրեցին Վ. Ի. Լենինը և նրա գլխավորած «Պայքարի միությունը»: Պետերբուրգի «Պայքարի միությունը» կապեր ուներ Ռուսաստանի քաղաքների, այդ թվում՝ Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ, օգնում էր նրանց բանվորական շարժումները գլխավորելու, ցիր ու ցան խմբակները միավորելու գործում: 1898 թվականին մի քանի «պայքարի միություններ» միավորման առաջին փորձն արին: Այդ նպատակով նրանց ներկայացուցիչները նույն թվականի մարտին Մինսկում հավաքվեցին ՌՍԴԲԿ I համագումարին, որը ազդարարեց Ռուսաստանում մարքսիստական կուսակցության ստեղծումը:

Վ. Ի. Լենինը տեսական և գործնական խոշոր աշխատանք է

---

6 Տե՛ս Վլադիմիր Իլյիչ Լենին, Կենսագրություն, Երևան, 1961, էջ 56:

ծավալում: Մեկը մյուսի նեղից լույս են տեսնում նրա «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատիայի դեմ», «Նարոդնիկության տնտեսական բովանդակությունը», «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները», «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» և այլ նշանավոր աշխատությունները: Նրանցում մարքսիստական բարձրակետից քննադատվում էին նարոդնիկները, էկոնոմիստները, «լեգալ մարքսիստները», բուրժուական ամեն երանգի գաղափարական հոսանքները: Մարքսիզմի զարգացման լենինյան փուլի արշալույսին, Ռուսաստանի բանվոր դասակարգի քաղաքական պայքարի համփին լուսատու փարոսներ էին Վ. Ի. Լենինի աշխատությունները, «Իսկրա»-ում հրապարակված նրա հոդվածները:

Վ. Ի. Լենինը գաբասկզբին (1902) հանրագումարի բերելով ռուսական սոցիալ-դեմոկրատիայի անցած տարիների փորձը, ցույց տվեց, որ առաջին շրջանում՝ 1884—1894 թվականներին սոցիալ-դեմոկրատիան գոյություն ուներ առանց բանվորական շարժման, որպես քաղաքական կուսակցություն ապրում էր սաղմնային վիճակում, երկրորդ փուլում՝ 1894—1898 թվականներին «համաճարակի արագությամբ տարածվում է ինտելիգենցիայի ընդհանուր հրապուրումը նարոդնիկության դեմ մղվող պայքարով և բանվորների մոտ գնալով, բանվորների հրապուրումը գործադուլներով»[7], սոցիալ-դեմոկրատիան դառնում է հասարակական շարժում: Երրորդ շրջանը, որ սկսում է 1898 թվականից, հարկավոր է լիկվիդացնել և ընթանալ դեպի չորրորդ շրջանը: «Մենք հաստատապես հավատում ենք,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ չորրորդ շրջանը կտանի դեպի մարտնչող մարքսիզմի ամրացումը, որ ռուսական սոցիալ-դեմոկրատիան ճգնաժամից դուրս կգա ամրապնդված և առնացած, որ օպորտունիստների արիեգարդին «հերթափոխի» կգա ամենահեղափոխական դասակարգի իրոք առաջավոր ջոկատը»[8]:

«Հերթափոխի» եկողը բոլշևիզմն էր, որը, որպես քաղաքական մտքի հոսանք և քաղաքական կուսակցություն, գոյություն ունի 1903 թվականից:

Վ. Ի. Լենինի և նրա զինակիցների տիտանական աշխատանքի շնորհիվ Ռուսաստանը դարձավ լենինիզմի հայրենիքը, հեղա-

---

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 5, էջ 697:

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 5, էջ 694—695:

փոխական մարքսիզմի կենտրոնը։ Միջազգային կոմունիստական շարժումը թևակոխեց մարքսիզմի զարգացման նոր, լենինյան փուլը։

2

Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը» ուներ ինտերնացիոնալ կազմ։ Նրա ղեկավար կորիզում էին Վ. Ի. Լենինը, Գ. Կրժիժանովսկին, Վ. Ստարկովը, Յու. Մարտովը, Ա. Մալչենկոն, Պ. Զապորոժեցը, Ա. Վանեևը։ Բանվոր անդամներից էին Ի. Բաբուշկինը, Պ. Գրիբակինը, Բ. Զինովևը, Մ. Կալինինը, Վ. Կնյազևը, Ն. Պոլետաևը, Վ. Շելգունովը, Ի. Յակովլևը և ուրիշներ։

Պետերբուրգի «Պայքարի միության» կազմում հայերից գործել են Բ. Կնունյանցը, Ա. Զուրաբյանը, Ս. Ավետիսյանցը, Հ. Մելիք-Հովսեփյանը։

Բ. Կնունյանցը (Ռադին, Ռուբեն, Կավկազեց, 1878—1911), Ռուսաստանի առաջին կրթված մարքսիստներից էր։ Ծնվել է Շուշվա գավառի Ջամյաթ գյուղում։ Ավարտել է Շուշու ռեալական ուսումնարանը։ 1896 թվականին ընդունվել է Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը։ Հեղափոխական գործունեությունը սկսել է «Պայքարի միության» շարքերում՝ պրոպագանդիստական աշխատանք ծավալել բանվորների շրջանում, օգնել միության հրատարակություններին ու տարածմանը։

1899 թվականին իր հեղափոխական հայացքների համար Բ. Կնունյանցը վտարվում է ինստիտուտից և վարչական կարգով արտաքսվում Կովկաս։ Դալով այստեղ, ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի ստեղծման, աշակերտական մարքսիստական խմբակների ձևավորման, ՌՍԴԲԿ Կովկասյան միության հիմնադրման գործին։ Մեծ է Բ. Կնունյանցի դերը ՌՍԴԲԿ II համագումարի նախապատրաստման և անցկացման, համագումարում Վ. Ի. Լենինի գիրքերի պաշտպանության, հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման ասպարեզում։ «Նա դեռ 20 տարեկան էլ չկար, երբ հարեց մեր կուսակցությանը,— գրել է Ստ. Շահումյանը,— և այդ ժամանակվանից էլ նա ամենահավատարիմ ու ամենաազնիվ անդամներից մեկն էր։ Նա չէր ապրում, այլ վառվում էր իր գեղեցիկ կյանքի այդ տասը տարիների ընթացքում, որը նա ամբողջությամբ, առանց մնացորդի,

նվիրեց սոցիալիզմի ու դեմոկրատիայի համար մղվող պայքարին»[9]: Բ. Կնունյանցի հետ միասին Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում էր սովորում Մ. Ակիզբեկովը: Կոփվելով հեղափոխական շարժումների հնոցում, նա 1898 թ. մտնում է ՌՍԴԲԿ շարքերը, ընդմիշտ զինվորագրվում լենինիզմին:

Ա. Գ. Զուրաբյանը (Ռաշիդ Բեկ, 1873—1920) քաղաքական կյանքի ասպարեզ մտավ շատ վաղ, անցյալ դարի 90-ական թվականների արշալույսին: Նա իր հեղափոխական առաջին մկրտությունը ստացել է Խարկովի ուսանողական մարքսիստական խմբակներում, իսկ հետո, 1896 թվականին փոխադրվելով Պետերբուրգ, սերտ շփման մեջ է մտել «Պայքարի միության» անդամների հետ, կատարել Միության բազմաթիվ հանձնարարություններ: Զուրաբյանը մայրաքաղաքում բանվորների համար քաղաքական հարցերի շուրջը զեկուցումներ է կարդում, օգնում «Պայքարի միության» հրատարակչական գործին: 1899 թվականին նա իր հեղափոխական գործունեության համար արտաքսվում է Կովկաս: Թիֆլիսում կապ է հաստատում հեղափոխական մարքսիստների հետ, մտնում ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի մեջ, որն ուներ լենինյան-իսկրայական ուղղություն: Ա. Զուրաբյանը Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի և այլոց հետ միասին մասնակցել է «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» հիմնադրմանը, Կովկասի հեղափոխական շարժումներին: ՌՍԴԲԿ II համագումարում Ա. Զուրաբյանը բարձր է պահել լենինյանի կոչումը[10]:

---

9 Ստ. Շահումյան. Երկեր, հատ. 2, էջ 153։

10 ՌՍԴԲԿ II համագումարից հետո Ա. Զուրաբյանը, որպես բոլշևիկ, Բ. Կնունյանցի հետ միասին մեծ աշխատանք է կատարել լենինյան դպրոցների հաղթանակն Կովկասում ապահովելու համար։ 1904 թվականին նա ձերբակալվում է, ենթարկվում դաժան հալածանքների, 1906 թվականին հեռանում է հեղափոխական մարքսիզմից և հարում մենշևիզմին։ 1907 թվականին II պետական դումայի արձակումից հետո Ա. Զուրաբյանը, որպես դումայի Ս.-Դ. պատգամավոր, նորից է ձերբակալվում և արտաքսվում Սիբիր։ Փախչելով աքսորից, նա դաղտնի մեկնում է արտասահման։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ա. Զուրաբյանը մենշևիկ ինտերնացիոնալիստ էր, 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո վերադարձելով Ռուսաստան, նետվում է հեղափոխական հորձանուտը, մերկացնում բոլշևիկների հասցեին կատարվող մանր բուրժուական հարձակումները։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Կովկասում Ա. Զուրաբյանը հետևողական պայքար է մղում դաշնակների ու մենշևիկների դեմ։ 1920 թ. հունվարի 3-ին Ա. Զուրաբյանը վախճանվում է Երևանում, թաղվում Թիֆլիսում։ Նրա

Բաբիսակ Լազարեանց

Բոգդան Կնունյանց

Արշակ Զուրաբյան

Սոֆիան Շահումյան

Լարո Սեցիանիի

Սուրեն Սպանդարյան

Ալեքսանդր Ծուրուլիձե

Մեջեդի Ալիպչելով

«Պայքարի միության» անդամների պայծառ համատեղության մեջ էր Սիմոն Հարությունի Ավետիսյանցը, որը ծնվել է 1870 թվականին Շուշիում: Ավարտել է տեղի ռեալական ուսումնարանը և ընդունվել Պետերբուրգի անտառային ինստիտուտը: Այստեղ, պրոլետարական միջավայրում, Ս. Ավետիսյանցը Ա. Զուրաբյանի հետ միասին մտնում է ուսանողական մարքսիստական խմբակի մեջ, տարածում հեղափոխական գրականություն, թռուցիկներ և կոչեր, կատարում կոնսպիրատիվ հանձնարարություններ[11]: 1896 թվականի ամռանը Ս. Ավետիսյանցը մասնակցություն է ունեցել Պետերբուրգի տեքստիլագործների ընդհանուր ցույցի առթիվ բանվորներին ուղղված կոչի հրատարակությանը, գործադուլային ֆոնդի ստեղծմանը: Նույն թվականի աշնանը նա, իբրև Պետերբուրգի ուսանողության ներկայացուցիչ, մեկնել է Մոսկվա, այնտեղի հեղափոխական ուսանողության կազմակերպությունների ղեկավարների հետ բանակցելու, ուսանողական ուժերը միավորելու համար: 1897 թվականի փետրվարին Ս. Ավետիսյանցը «Պետերբուրգի բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» գործով ձերբակալվում է: Ժանդարմական փաստաթղթերից մեկում այդ առթիվ ասված է, թե հարցաքննության միջոցով հաստատվել է, որ Ս. Ավետիսյանցը պատկանում է վտանգավոր մի խմբակցության, որը նպատակ ունի ընդարձակել ֆաբրիկա-գործարանային բանվորների ցույցը, գրամական գոհաբերություն կատարելու և ֆոնդ ստեղծելու միջոցով օգնել գործադուլավորներին, անտառային ինստիտուտի ուսանողների շրջանում անլեգալ գրականություն, հեղափոխական կոչեր և թռուցիկներ տարածել[12]: 1897 թվականին Ս. Ավետիսյանցը արտաբսվում է Կովկաս: Սկզբում նա գալիս է Շուշի և ապա մեկնում Բաքու, աշխատում Մանթաշովի նավթահանքերում: Ս. Ավետիսյանցին տրված մեղադրանքներում նշված է, որ նա եղել է «Պետերբուրգի բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» անդամ, 1897

Բաղումը վերածվեց բազաբական ցույցի, Բաղմանը գամբանականներ արտասանեցին Ա. Մռավյանը, Ս. Ալավերդյանը (տե՛ս Գ. Ղարիբջանյան, Արշակ Զուրաբյան, «Սովետական Հայաստան», № 2 (13347), 5 հունվարի, 1965 թ.):

[11] См. ЦГИАМ, ф. ДП, III дел-во, 1896 д. 1351, лл. 1—4. «Деятели революционного движения в России. Био-биографический словарь», том V, вып. I, էջ 15, В. Ю. Самедов, Распространение марксизма-ленинизма в Азербайджане, Баку, 1962, էջ 333—334.

[12] См. ЦГИАМ, ф. ДП, III дел-во, 1896, д. 1351, л. 4.

թվականին Պետերբուրգում տարածել է սոցիալ-դեմոկրատական գրականություն, այդ թվում՝ Ս. Դիկշտեյնի «Ո՞վ ինչով է ապրում», «Բանվորական հեղափոխություն» և այլն[13]: Չնայած ժանդարմերիան հավատի ապացույցներ չուներ նրան մեղադրելու համար, քանի որ Ավետիսյանցը լավ կոնսպիրատոր էր, այնուամենայնիվ նրա գործի վրա մակագրվել է. «Ավետիսյանցը լուրջ անձ է, և նրա գործը զգաստությամբ հանցանշան չլինելու պատճառով»[14]:

Ցարական գործակալները Ս. Ավետիսյանցի նկատմամբ հսկողությունը չէին թուլացնում, բայց և այնպես նա շարունակեց «Պայքարի միության» հեղափոխական ավանդում ստացած մկրտությունը շմոռանալ, Կովկասում մասնակցություն ունենալ բանվորական շարժումներին, մարքսիզմի գաղափարների պրոպագանդմանը:

Շուշին հայ անձնվեր հեղափոխական գործիչների օրրան էր: Քանի՞-քանի հեղափոխական քաջարի մարտիկներ է տվել գավառական այդ փոքրիկ, բայց հրաշալի քաղաքը: Շուշու գավակներից էր «Պայքարի միության» մյուս հայ անդամը՝ Հովհաննես Մելիք-Հովսեփյանը (1882—1943): Շուշու ռեալական ուսումնարանն ավարտելուց հետո նա մտնում է Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի մեխանիկայի բաժինը, սովորելու հետ միասին հարում հեղափոխական շարժումներին: 1901 թվականին նա ձերբակալվում է «Պայքարի միության» հետ ունեցած կապերի համար: Արխիվային նյութերը պատմում են, որ Հ. Մելիք-Հովսեփյանը մեղադրվել է «Պայքարի միության» աշխատանքներին մասնակցելու, բանվորական մարքսիստական խմբակներում ելույթներ ունենալու, հեղափոխական թռուցիկներ և կոչեր հրատարակելու և տարածելու, քաղաքական ցույցերին դուրս գալու համար[15]: 1901 թվականին նա հեռացվում է ինստիտուտից և արտաքսվում Կովկաս: 1902 թվականին նա ընդունվում է ՌՍԴԲԿ շարքերը: 1904 թվականին Մելիք-Հովսեփյանը նորից է մեկնում Պետերբուրգ և ընդունվում պոլիտեխնիկական ինստիտուտի տնտեսագիտական

---

13 См. ЦГИАМ, ф. ДП, III дел-во, 1896, д. 1351, л. 4. об., 19

14 См. ЦГИАМ, ф. ДП, III дел-во, 1896, д. 1351, л. 4 об.

15 См. ЦГИАМ, ф. МОО, 380. 190., 00, 54, л. II, т. 3, 1898, ДП, 719, 1904, Государственный исторический архив в Ленинградской области, ф. 492, оп. 1, св. 326, д. 6287, ф 478, оп. 3, св. 287, д. 2658, ф. 49, оп. 1, д. 146, лл. 84—85, д. 164, л. 451, д. 194, л. 294, д. 302, л. 72.

բաժինը։ Բայց 1905 թվականին նորից է ձևավորվում, որպես բոլշևիկ հեղափոխական շարժումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար[16]։

«Պայքարի միության» հայ անդամները շատ բան արեցին երկրամասում մարքսիստական գաղափարները պրոպագանդելու, տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մարտունակությունը բարձրացնելու ուղղությամբ։

3

Հայ իրականության մեջ ուժեղանում են քաղաքական խմորումները, ծավալվում ազգային-ազատագրական շարժումները։ Ստեղծվում են հեղափոխական տարբեր կազմակերպություններ, բանվորական, արհեստավորական և աշակերտական խմբակներ, կանանց միություններ։

1891 թվականին Թիֆլիսում գործող հայ աշակերտական խմբակներից մեկի շուրջը համախմբվում են առանձին բանվորներ, արհեստավորներ, մտավորականներ, որոնք մեկ տարի անց, 1892 թվականի վերջերին, հիմք են դնում «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիա»-ին, որը և գործեց մինչև 1895 թվականը[17]։

---

16 Հ. Մելիք-Հովսեփյանը մեկնում է արտասահման և սովորում Փարիզի բարձրագույն դպրոցներից մեկում և Սորբոնի համալսարանում, որն ավարտում է 1911 թվականին։ Արտասահմանում նա ծանոթանում է Վ. Ի. Լենինի հետ, մասնակցում վարանդիության մեջ գտնվող Փարիզի բոլշևիկյան խմբի գործունեությանը, լսում Իլյիչի դասախոսությունները։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Մելիք Հովսեփյանը աշխատել է սովետական ֆինանսական օրգաններում, Բաքվում։ Վախճանվել է 1941 թվականին։

17 «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիա»-ի մասին տե՛ս Ա. Խումարյան, Հայ բանվոր հեղափոխական ասոցիացիան։ Նյութեր մեր հեղափոխական պատմության համար, «Մարտակոչ», №№ 8, 10, 13, 15 և 16, հունվար, 1924, Թիֆլիս, В. Невский, Очерки по истории Коммунистической партии, т. I. изд. II, Л., 1925, էջ 496—500։ Արտյում, Գրախոսության փոխարեն, «Խորհրդային Հայաստան», № 153, 4 հուլիսի, 1924, Երևան, Նույնի, Пролетарская революция, № 11 (34), 1924, Երիտասարդ բոլշևիկ, Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի տեղը հայ բանվորական շարժման պատմության մեջ, «Նորք», գիրք 4, 1924, Երևան, էջ 362—374, Ս. Տ. Արկոմեդ, Ընկ. Վ. Նեսկու գիրքը, Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան և Մեսամեղասիտները, «Նորք», գիրք հինգերորդ և վեցերորդ, 1925, Երևան, էջ 453—468, Ա. Մնացականյան, Առաջին հայ բանվորական ռևոլյուցիոն կազմակերպությունը, «Պարտիական

Նորաստեղծ «Ասոցիացիա»-ի՝ Միության շարքերը մտան Ա. Խումարյանը, Ս. Խանդյանը, Ս. Տեր-Ստեփանյանը, Ա. Խաժակյանը, Պ. Մնացականյանը (Պիեր), Հ. Միրզոյանը, Ս. Մարտիկյանը, Գ. Սադաթյանը, Տ. Պարոնիկյանը, Ա. Մեհրաբյանը, Հ. Մուրադյանը, Հ. Այվազյանը և ուրիշներ։ Նրանց մեծ մասը 16—20 տարեկան խանդավառ երիտասարդներ էին, զուրկ հեղափոխական պայքարի փորձից ու կոփվածքից։ Նրանցից մեկն՝ Պետերբուրգի ուսուցչական սեմինարիան ավարտած ուսուցիչ Ստեփան Տեր-Ստեփանյանն էր, որ ծանոթ էր Թուլուզանի բանվորական առաջին կազմակերպություններին, «Նարոդնայա վոլյա»-ի գործունեությանը, գիտեր նրանց դրականությունն ու ծրագիրը։ 1892 թվականին Թավրիզից գալով Թիֆլիս, նա իր հետ բերել էր նարոդնիկական և «Աշխատանքի ազատագրություն» խմբի հրատարակություններից՝ ռուս նշանավոր բանվոր-հեղափոխական Պյոտր Ալեքսեևի բոցաշունչ ճառերը, Ստեփան Խալտուրինի, Սոֆիա Պերովսկայայի և ուրիշ գործիչների մասին հանրամատչելի բրոշյուրներ, «Նարոդնայա վոլյա»-ի համարները[18]։ «Ասոցիացիայ»-ի անդամների վրա ուժեղ տպավորություն էին գործել Պյոտր Ալեքսեևի Պետերբուրգում՝ ցարական դատարանում արտասանած ճառի խոսքերը՝ «...կբարձրանա միլիոնավոր բանվոր ժողովրդի մկանուտ ձեռքերը և հօդս կցնդի գինվորների սվիններով շրջապատված ինքնակալական լուծը»[19]։

«Ասոցիացիա»-ի գեկավարները (Ա. Խումարյան, Ս. Մար-

կյանը», № 10, 1956, Երևան, էջ 38—51, Վ. Ավետիսյան. «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիա»-ի մասին, «Լենինյան ուղիով», № 4, 1957, Երևան, էջ 71—86, և այլն։ Այդ մասին տե՛ս նաև Խ. Բարսեղյան. Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը, Երևան, 1965, էջ 35—43։

«Ասոցիացիա»-ի վերաբերյալ արխիվային նյութերը պահպանվում են ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի կենտրոնական արխիվում (տե՛ս ֆ. 64, ց. 1, պահ. միավոր 169, ֆ. 124, ց. 1, գ. 2041, գ. 2056), Վրաց. ՍՍՀ ՊԿՊ արխիվում (տե՛ս ֆ. 7, գ. 83, ֆ. 39, գ. 434, ֆ. 7, գ. 23, գ. 137, գ. 147), Մոսկվայի կենտրոնական պատմական արխիվում (տե՛ս ֆ. 102, դպ. ցուց. 137, 1895, գ. 245, մ. 1, թթ. 182—290) և այլուր։ Արխիվային որոշ նյութերում «Ասոցիացիան» կոչվում է «Հայ սոցիալիստների ասոցիացիա»։

18 Տե՛ս Ա. Խումարյանի «Հայ բանվոր հեղափոխական ասոցիացիան» հոդվածը, «Մարտակոչ», № 8 (264), 10 հունվարի, 1924, Թիֆլիս, և Ա. Մնացականյանի «Առաջին հայ բանվորական սեղյուցիոն կազմակերպությունը» հոդվածը, «Պարտիական կյանը», № 10, 1956։

19 Տե՛ս «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», 1902—1921, Երևան, 1960, էջ 59։ См. ЦГИАМ, ф. ДП. 3 д-во 1896, № 22 лит. А, д. 25, лл. 1—2.

տիկյան, Ա. Խաժակյան, Հ. Այվազյան, Կ. Խումբիկյան (Ասորի, Կարապետ ծածկանուններով) իրենց գործունեության ընթացքում ծանոթացան մարքսիստական առանձին երկերի, մասնավորապես Գ. Պլեխանովի «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը», «Մեր տարաձայնությունները», «Նամակներ Ռուսաստանի սովի մասին» աշխատություններին: Նրանք իրենց տպագիր օրգանում քաղվածքներ բերելով «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը» գրքից, հեղինակին՝ Գ. Պլեխանովին անվանում էին Կ. Մարքսի աշակերտը[20]: Լինելով Անդրկովկասի բանվորական առաջին կազմակերպություններից մեկը «Ասոցիացիա»-ն իր օրգաններում նյութեր է զետեղել մարքսիզմի վերաբերյալ: Պատմելով Մարքսի անտեսական ուսմունքի մասին, «Ասոցիացիա»-ի ղեկավարները պարզաբանում էին, որ Մարքսը պայքարում էր ընդդեմ Պրուդոնի, որը չի ընդունում քաղաքական հեղափոխություն»[21]: Իսկ «ոչ մի քաղաքական հեղափոխություն չի եղել,— ասում էին նրանք,— որը միևնույն ժամանակ չլիներ և սոցիալական»[22]:

Իր գաղափարական ազդեցությունը տարածելու նպատակով «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» ստեղծել էր ընդհատակյա տպարան, հիմնել «Ազատ Հայաստան» թերթը, որի առաջին համարը լույս տեսավ 1893 թվականի հունիսի 23-ին[23]: Թերթն իր ձակատին կրում էր «Օրգան Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիա»-ի տողերը: Առաջին իսկ համարում տպագրված էր Հայ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի կենսագրությունը: Դա ինքնին ուշագրավ երևույթ էր:

Ա. Խումարյանի վկայությամբ, հրատարակվել է «Ազատ Հայաստանի» 9-ը, «Կռվի» 2 համար (որոշ աղբյուրներով՝ երեք): Նրանցում զետեղված հոդվածները «Հայաստանի ներկա դրությունը և հայ բանվորները» (№ 1, հեղինակն է Ա. Խաժակյանը), «Մի պատասխան» (№ 2, հեղինակներ Ա. Խումարյան, Ա. Խաժակյան) «Ինչ բան է բանվորը (№ 2), «Աբդուլ Համիդ 2-րդ» (№ 3, հեղի-

---

20 Տե՛ս «Ազատ Հայաստան», № 2, 1893:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում:

23 Արխիվային որոշ նյութերի համաձայն լույս է տեսել հուլիսի 1-ին: Սկզբում Ս. Մարտիկյանը և իր փոքրաթիվ ընկերները որոշել էին հրատարակել «Ձայն» թերթը, հետո այդ անվան փոխարեն լույս ընծայեցին «Ազատ Հայաստան» վերտառությամբ: (См. ЦГИАМ, ф. 102, ДП VII д-во, оп. 137, 1895. д. 245, т. I, лл. 182—209 об. ф. ДП VII д-во, оп. 1897, д. 367, ч. I.

նակներ Ա. Խաժակյան, Ս. Խումարյան), «Նամակ Կովկասից», «Բանվորական մարշ», «Մեր համոզմունքը» (№ 5), «Մեր համոզմունքը և ծրագիրը» (№ 6—7 (8), «Հեղափոխական պատվիրան» (№ 9), և այլն շոշափում էին աշխատավորներին հուզող հարցերը: Ա. Խաժակյանը գրում էր «Գ. Բելյանց» ծածկանվամբ, իսկ Ա. Խումարյանը՝ «Մանդունի», «Ազատյան», «Նապոլեոն», «Լուսինյան», «Սերգո» և այլ մականուններով[24]: Թերթի առաքմանն օգնել են Տ. Պարունակյանցը (Ալեքսանդրապոլ), Մկրտիչ Գլուշյանը (Ազրստաֆա), Ավետիս Ստեփանյանը (Ժնև), Կարապետ Սարգսյանը (Պարսկաստան) և ուրիշներ: «Ասոցիացիա»-ի տպագիր օրգանը լույս էր տեսնում 200—300, առանձին համարներ մինչև 1000 օրինակ տպաքանակով[25]:

1894 թվականին «Ասոցիացիան» երևույթով նշեց միջազգային պրոլետարիատի ուժերի մարտական ստուգատեսի օրը՝ Մայիսի մեկը: «Ազատ Հայաստան»-ը հատուկ համար նվիրեց մայիսմեկյան տոնին: Թերթի հետագա համարներում լույս տեսան «Կարլ Մարքսի թեորիաներից մեկը» թարգմանական հոդվածը, «Հրավեր Հ. Բ. Հ. Ասոցիացիա»-ի[26], «Հ. Բ. Հ. Ասոցիացիա»-ի մարշը»[27], «Մեր համոզմունքը և ծրագիրը»[28] և այլ նյութեր: Բայց ինչպես այդ, այնպես էլ մյուս ինքնուրույն հոդվածներում և մասնավորապես «Ասոցիացիա»-ի ծրագրում, որը առանձին գրքույկով հրատարակվեց 1893 թվականի հոկտեմբերին, զգացվում էր «Նարոդնայա վոլյա»-ի և «Հնչակյան» կուսակցության գաղափարական-քաղաքական ազդեցությունը: Թարգմանաբար առանձին հատվածներ և նույնիսկ գլուխներ քաղելով «Նարոդնայա վոլյա»-ի ծրագրից և սնվելով հնչակյան «սոցիալիզմով, «Ասոցիացիա»-ի ծրագիրը հեռու էր հեղեղական մարքսիզմից: Նրա գլխավոր բովանդակությունը ոչ թե դասակարգային պայքարի պահանջն էր, այլ «Հայկական հեղափոխության միջոցով» Հայրենիքի ազատագրման ձգտումը և դրա իրագործման համար ազգայնական կուսակցությունների քարոզած հայացքների դրոշմն էր դրում իր վրա: «...մեր ծրագիրը մշակելիս,— գրել է Աշ. Խումարյանը,— մենք մեր ձեռքի

---

24 См. ЦГИАМ ф. 102, ДП, 7—д-во, оп. 137, 1895, д. 245, т. I.
25 См. там же.
26 Տե՛ս «Ազատ Հայաստան», № 3։
27 Նույն տեղում, № 4։
28 Նույն տեղում, №№ 5, 6, 7։

տակ ունենալ ենք միմիայն «Նարոդնայա վոլյա»-ի բանվորական խմբի ծրագիրը, որտեղից և թարգմանաբար վերցրել ենք մի քանի կտորներ և նույնիսկ գլուխներ հարմարեցնելով մեր իրականությանը և հասկացողությանը»[29]:

Ծրագրի նախագծի առաջին «Մեր պահանջները» բաժնում ասված է. «1. Բոլոր հասարակական գործերում համաժողովրդական քվեարկություն: 2. Բոլոր գործարանները հանձնել բանվորներին: 3. Հողը դարձնել հանրային սեփականություն: 4. Որ չլինի օրենք ազգային խարականության մասին: 5. Խոսքի, մամուլի, խղճի, ասոցիացիաների, ագիտացիայի և այլնի լիակատար ազատություն: 6. Բոլոր միջոցները ձեռք առնել ժողովրդի քաղաքակրթության համար և պարտադիր դարձնել բոլոր երեխաների տարրական կրթությունը: 7. Մարզերի լայն անկախություն, որն ապահովի ընդհանուր ձայնատվությամբ ընտրված կառավարչությամբ և նրա դաշնակցային կապերով ուրիշ մարզերի հետ: 8. Ընդմիշտ ոչնչացնել պարտադիր զինվորական ծառայությունը, նրա փոխարեն ունենալ ազգային միլիցիա տվյալ վայրի պահանջներին համապատասխան»[30]: Այնուհետև, դրանց հաջորդում են ինքնուրույն, Հայաստանին նվիրված պահանջները, այն է՝ ապագա ազատ Հայաստանում ստեղծել դեմոկրատական հանրապետություն, օրենսդիր (Ազգային) ժողով, բոլոր գործարանները հանձնել բանվորներին, հողը դարձնել հանրային սեփականություն, հասնել քաղաքական ազատությունների ապահովման:

Դեմոկրատական և սոցիալական այս պահանջները հայ իրականության մեջ ժամանակին, հիրավի՞, որոշակի հետաքրքրություն էին ներկայացնում: Բայց դժվար չէ նկատել, որ նրանցում ի մի էին խառնված բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական միջոցառումները, անտեսված գյուղացիական պայքարը, պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճման վերաբերյալ մարքսիստական հայեցակետը:

«Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիա»-ի «հասկացած սոցիալիզմը,— ինչպես ճիշտ կերպով գրել է Ա. Խումարյա-

---

29 «Մարտակոչ», № 13, 1924։ Ա. Խումարյանը մի ուրիշ անգամ, իր ինքնակենսագրության մեջ, անդրադառնալով այդ հարցին, գրել է. «Ասոցիացիա»-ի ծրագիրը «հարազատ էր «Նարոդնայա վոլյա»-ի բանվորական խմբի ծրագրին, ազգային երանգով» (տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 124, оп. I, д. 2056)։

30 Տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 3.

նը,— հեռու էր Մարքսի գիտական սոցիալիզմից, իհարկե «ՀԲԱ»-ի քարոզած «ազատ» Հայաստանը նման չէր մեր ներկա ազատ Հայաստանին, իհարկե, այդ Ասոցիացիայի հասկացած բանվորությունը, բանվորական դասը շատ հեռու էր իր այժմյան հասկացողությունից...»[31]: «Սոցիալիզմը «Ասոցիացիա»-ի համար «թեթև երանգ էր»»[32],— գրել է նրա ղեկավար գործիչներից մեկ ուրիշը՝ Ս. Խանոյանը:

«Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիա»-ն լինելով դեմոկրատական, ազգային-ազատագրական պայքարի ոգով տոգորված պրոգրեսիվ կազմակերպություն, ինչպես նշեցինք, բնավ զերծ չէր հնչակյանների ազդեցությունից: Ճիշտ է, ի տարբերություն հնչակյանների, «Ասոցիացիա»-ն ավելի որոշակիորեն էր շոշափում բանվորների սոցիալական ազատագրության հարցերը, նշում կապիտալիզմի խոցերը, պրոպագանդա մղում հոգուտ սոցիալիզմի, բայց նրան ևս հատուկ էին մանրբուրժուական սահմանափակումներն ու խոտորումները, հայ ազգային շարժման և նրա նպատակադրումների մեկնաբանումը: «Ասոցիացիա»-ի վրա «Նարոդնայա վոլյա»-ի ծրագրի ընդգծված ազդեցությունը կարող է անսպասելի թվալ, եթե աչքի առաջ ունենանք, որ այդ ժամանակ հնչակյանների ձախ թևի գաղափարաբանության վրա Եվրոպայում զարգացող բանվորական շարժման ներգործության շնորհիվ հակում էր նկատվում ենթարկվելու մարքսիզմի ազդեցությանը: Նշված հակասությունն, ըստ երևույթին, արդյունք էր այն բանի, որ «Ասոցիացիա»-ի հայացքները ձևավորվում էին մի ժամանակ, երբ բանվորական շարժման ազդեցությունը և մարքսիզմը տակավին նոր էին թափանցում Անդրկովկաս և խորապես չէին ընկալվել «Ասոցիացիա»-ի անդամների կողմից:

«Հնչակյան» կուսակցության օրինակով «Ասոցիացիան» իր մոտակա խնդիրն էր համարում «...ազատել հայ ժողովրդին ապստամբության միջոցով սուլթանական անարդ բռնակալ լծից, կատարել քաղաքական հեղափոխություն և անպայման իշխանությունը հանձնել ժողովրդին»[33]:

«Ասոցիացիան» մեծարում էր հնչակյան գործիչներին, ոգևորում նրանց հայդուկային գործողություններով, ապստամբու-

---

31 «Մարտակոչ», № 8, 1924։

32 См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 124, оп. 1, д. 2041.

33 «Ազատ Հայաստան», № 6—7, 1894։

թյուններով ու ցույցերով։ «Ազատ Հայաստան»-ի էջերում Աշ. Խումարյանը, գովաբանելով Պոլսում կազմակերպած Գում-Գափուի ցույցը, այն որակում էր որպես «Հայկական ոսկեդարի սկիզբը»։

«Ազատ Հայաստան»-ը հաճախ էր «Հնչակ»-ից նյութեր արտատպում և տարածում։ «Հնչակն» էլ իր հերթին էր աջակցում «Ասոցիացիա»-ին, նրա օրգանին։ 1893 թվականի նոյեմբերին «Հնչակ»-ը ողջունելով «Ազատ Հայաստան»-ին, այն դիտում էր որպես իր ձայնակիցը, իր կրտսեր եղբայրը, «... չենք կարող ծածկել մեր ուրախությունը, որ «Հնչակ»-ը մինչև հիմա առաջին ու միակը լինելով հայերիս մեջ իբրև սոցիալիստական-հեղափոխական թերթը,— գրել է «Հնչակ»-ը,— այսօր «Ազատ Հայաստան»-ի երևան գալով՝ կունենա իր կրտսեր եղբայրը, որ նույնանման ուղղության թելադրությամբ՝ կձայնակցի նրան...

Ամենայն հաջողություն ենք մաղթում մեր եղբայրակիցներին»[34]։

Իր գաղափարական սնունդն առնելով նարոդովոլցիներից և հնչակյաններից, «Ասոցիացիան» հայ բանվորներին կոչ էր անում համախմբվել իր դրոշի տակ. «...թե՛ այժմ և թե՛ ընդհանուր հեղափոխության ժամանակ, գործել միասին հանուն իրենց շահի, հանուն հացի խնդրի, հանուն հայ ժողովրդի երջանկության...»։ «Աշխատավոր եղբայրներ, մոտենում է օրը, ժամը սոսկալի,— գրել են նրանք,— եղեք արի և գիտցեք ձեր սուրբ դատը պաշտպանել... Հավաքվեցե՛ք ի մի և կազմեցե՛ք մի մարմին, մի ամբողջություն... դեն ձգեք սուլթանի կաշկանդող լուծը և նիզակարգերը»[35]։ Նույն ոգով են տոգորված «Ասոցիացիա»-ի օրգաններում տպագրված շատ հոդվածներ, որոնք վերջանում են «Կեցցե՛

---

34 Տե՛ս Ակն-եանց (Ավ. Նազարբեկ) «Ազատ Հայաստան», օրգան «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի (ընկերության)», «Հնչակ», № 11 և 12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1893, էջ 96։ Հարկավոր է նկատել, որ սկզբից ևեթ «Ասոցիացիա»-ի հետ կապ է պահպանել Հնչակյան կուսակցության հիմնադիրներից Ռ. Խան-Ազատը (Նշան Կարապետյան ծածկանվամբ)։ «Դա պատասխան նամակն է Ն. Կարապետյանի, այսինքն՝ Խանզադյանի,— 1895 թվականի նոյեմբերի 7-ին իր զեկուցման մեջ ասել է Ա. Խումարյանը,— որին խնդրել էի հասցեներ ուղարկի «Ազատ Հայաստան» թերթն ուղարկելու համար։ Այդ հասցեները հանձնել եմ Ս. Մարտիկյանին և մյուս ընկերներին» (սմ. ЦГИАМ նշված ֆոնդի նյութերը)։

35 Տե՛ս «Ազատ Հայաստան», № 3, 1893, «Հրավեր ՀԲՀ Ասոցիացիայի»։

Հայաստանը։ Կեցցե՞ հայկական հեղափոխությունը» լոզունգներով[36], ինչպես և ասոցիացիայի քայլերը[37]։

«Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» պայքարում էր «Դաշնակցության» դեմ, մերկացնում եվրոպական դիվանագետների խարդախությունները «Հայկական հարցում», դրանով իսկ պատկաղերծ անում «Դաշնակցության» փայփայած ծրագրերի ռեակցիոն էությունը։ «Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերը, «հայերի անթիվ աղերսագրերը և խնդիրները,— գրել է «Ազատ Հայաստան»-ը,— առ սուտ մարդասերներին ուղղված, ոչինչ չեն տվել հայերին»։ «Ազատ Հայաստան»-ը «Դաշնակցության» գործիչներին անվանում էր «հոգով ազգատներ», որոնք կուրորեն ընթանում են դեպի եվրոպական դիվանագետները. «Դնացեք, մաշեցեք օտարների շեմքերը, որոնք ձեզ միայն ծաղրում են»[38],— գրել է «Ազատ Հայաստանը»։

«Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» նոր ուղիներ էր որոնում։ Նա ծրագրել էր կազմակերպել դասախոսություններ, միտինգներ, տարածել հեղափոխական գրականություն, գյուղերն ու քաղաքներն ուղարկել իր պրոպագանդիստներին, տեղերում ստեղծել խմբակներ։ Դեկերումների ժամանակ «Ասոցիացիա»-ի շարքերում 1894 թվականի կեսերից բացահայտ էին դառնում ներքին պառակտումները։ Ազգայնական երկու կուսակցություններից յուրաքանչյուրն աշխատում էր «Ասոցիացիա»-ն իր ազդեցության ոլորտի մեջ առնել։ «1894 թվականի գարնանը... Սիսակը (Տեր-Սիմոնյանը—Ա. Բ.) և Խանոյանը, որ այդ ժամանակ Թիֆլիսումն էին,— գրել է Աշ. Խումարյանը,— ընկնում են Փափազյանի ազդեցության տակ ու վճռում «Ազատ Հայաստան»-ը դուս ազգային թերթ դարձնել և որպեսզի կարողանան իրականացնեն այդ գիտումը, վճռում են ինձ լիկվիդացիա անել խմբից, լավ գիտենալով, որ ես այդ բանին համաձայն չեմ լինի»[39]։ Դաշնակցության ազդեցության տակ ընկած «Ասոցիացիա»-ի անդամները զավթում են միության տպարանը և «Ազատ Հայաստան» թերթը, իսկ մյուս մասը Ա. Խումարյանի ղեկավարությամբ ջանում

---

36 Տե՛ս «Ազատ Հայաստան», № 7, «Ողջո՞ւն քեզ, ով սուլթան» հոդվածը և «Կովի» № 1-ը։

37 Քայլերը՝ «Բանվորական մարշը», տե՛ս «Ազատ Հայաստան», № 4, 1893։ Մարշի տակ ստորագրված է «Բանվոր»։

38 Տե՛ս «Ազատ Հայաստան», № 2, 1893։

39 «Մարտակոչ, № 15, 1924։

էր «Ասոցիացիա»-ի գործունեության բանվորական ուղղությունը պահպանել ազգային գործունեության հետ զուգահեռ։ Ա. Խումարյանի ղեկավարած թևի վրա մեծ ազդեցություն ունեին հնչակյանները[40]։ «Ասոցիացիա»-ից Ա. Խումարյանի ղեկավարությամբ պառակտված թևը 1894 թվականի դեկտեմբերի 1-ին հրատարակում է միության նոր օրգանը՝ «Կռիվ» թերթը[41], որի երկրորդ համարը մեծ ընդմիջումից հետո լույս տեսավ 1895 թվականի աշնանը։

«Կռվի» առաջին համարի նյութերը նվիրված են 1894 թվականի Սասունի ապստամբությանը։ Առաջնորդող հոդվածը, որ խորագրված է «Ազատության արշալույս», վերջանում է «Կեցցե՞ հայկական հեղափոխությունը... Կեցցե՞ Սասուն» բնորոշ կոչերով։ «Մեր թշնամին՝ դա հին աշխարհն է,— գրել է «Կռիվը»,— իր հասարակական կարգերով... Մեր եղբայրները բոլոր երկրների բանվորներն ու ժողովուրդներն են, որոնք շահագործվում են այդ կարգերում»[42]։ «Կռվի» 2-րդ համարում տպագրվել են «Կախաղանի տակ հեղափոխական պատգամ», «Կոչ Պետերբուրգավլովյան բերդից» ուշագրավ նյութերը։ Վերջինս ուղղված էր Ռուսաստանի միապետական կարգերի դեմ և պահանջում էր ոչնչացնել դրանք։

Չնայած այս կարգի կոչերին «Ասոցիացիայ»-ի անդամները գործում էին Ռուսաստանի մյուս ազգերի բանվորներից, մասնավանդ ռուս պրոլետարիատից, սոցիալ-դեմոկրատական մարքսիստական խմբակներից մեկուսացած։ Նրանք շարունակում էին մնալ «Հայկական հեղափոխության» հեռանկարի տիրական հմայքի տակ։

1894—1895 թվականներին «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» աշխատանք կատարեց իր խմբակներն ստեղծելու հայկական գավառներում և հայաշատ վայրերում, մասնավորապես Ալեքսանդրապոլում, Կարսում, Բաքվում, Գանձակում։ 1895 թվականին Սիսակ Տեր-Սիմոնյանը, Սերգո Մարտիկյանը և ուրիշներ մեկնեցին Թուրքիա՝ այնտեղ «Ասոցիացիա»-ի խմբեր

---

40 Տե՛ս «Նորք», չորրորդ գիրք, 1924, էջ 364 և Հ. Միրզոյանի ինքնակենսագրությունը, որը պահվում է ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվում։

41 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 64, оп. 1, д. 169.

42 ЦГИА Груз. ССР, ф. 7, д. 23, лл. 107—108, ЦГИА Груз. ССР, ф. 39, д. 434, лл. 259—260, Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 12, оп. 13, д. 734, лл. 259—260.

հիմնելու առաջարկությամբ։ Բայց այդ չհաջողվեց։ «Ասոցիացիա»-ի գործունեությունը չվրիպեց ցարական ոստիկանության տեսադաշտից։ 1895 թվականի կեսից Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտի կարգադրությամբ Կովկասում ավելի է ուժեղացվում հսկողությունը «Ասոցիացիա»-ի գործունեության նկատմամբ և կատարվում են նրա անդամների ձերբակալություններ։ Մեկը մյուսի հետևից ձերբակալվում և բանտ են նետվում «Ասոցիացիա»-ի անդամները՝ Ա. Խումարյանը, Ս. Տեր-Սիմոնյանը, Ս. Մարտիկյանը, Կ. Սեպելյանը, Հ. Միրզոյանը և ուրիշներ։ 1898—1900 թվականներին Ա. Խումարյանը Վյատկայի նահանգում անցկացրած բաղարական աքսորում մոտիկից շփվելով աքսորում գտնվող Ն. Բաումանի, Ֆ. Զերժինսկու, Պ. Ստուչկայի (Լատվիայի Կոմպարտիայի հիմնադիրներից), լատիշ գրող Յան Ռայնիսի, «Պայքարի միություն» առանձին անդամների հետ, հեղափոխական մկրտություն ստացավ, 1898 թվականին մտավ ՌՍԴԲԿ-ի շարքերը։ «Վյատկայի նահանգի Սլոբոդսկի աքսորում ես մկրտվեցի մարքսիստական ավազանում»,— հետագայում գրել է Ա. Խումարյանը[43]։

Աքսորում նա Յան Ռայնիսին խանդավառությամբ պատմում է հայ ժողովրդի պատմության, մասնավորապես մշակույթի և գրականության մասին, որն այնպես է ոգեշնչում նրան, որ 1900 թվականին Ռայնիսը գրում է իր «Աշխարհի ամենաժրաջան երկիրը և ամենաժրաջան ժողովուրդը» հայերին նվիրված հոդվածը։

1901 թվականին վերադառնալով աքսորից, Ա. Խումարյանն անմիջապես կապ է ստեղծում ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հետ։ Իսկ Ս. Մարտիկյանը հետագայում փոխադրվելով Բաքու կոփվեց բաղմաազգ պրոլետարիատի ընտանիքում և դարձավ անձնվեր բանվոր-հեղափոխական, բյուրեղյա բոլշևիկ։

Պետրոս Մնացականյանին և Արշալույս Խաժակյանին, որոնք կարողացել էին խույս տալ ձերբակալությունից, չի հաջողվում վերսկսել «Ասոցիացիա»-ի ընդհատված գործունեությունը, Ա. Խաժակյանը, մեկնելով Պարսկաստան, մեծ դժվարությամբ հրատարակում է «Կռվի» մեկ համար, սակայն 1898 թվականին նա զոհվում է դաշնակ տեռորիստների գնդակից։

Ա. Խումարյանի 1895 թվականի ցուցումներից երևում է, որ «Ասոցիացիան» սիստեմատիկ նիստեր է դումարել, նյութական մի-

---

43 См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 64, оп. I, д. 16а, лл. 113—117.

ջոցներ է հայթայթել Սասունի կոտորածներից անօթևան մնացած հայերին օգնելու համար։ Բացի այդ, այն կապեր էր ստեղծել դանդաղ վայրերի հետ։ Խումարյանի մոտ, բացի հեղափոխական գրականությունից, ոստիկանությունը հայտնաբերել էր շատ նամակներ, ձեռագիր հոդվածներ, թարգմանություններ, որոնք խոսում են նրանց կապերի, մասնավորապես Բաքվի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Սարիղամիշի հետ ունեցած նամակագրության մասին։

Ցարիզմը ջախջախում է «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան»—Կովկասի բանվորական առաջին կազմակերպություններից մեկը։ «Ասոցիացիա»-ի գործունեությունը ընդհատվելուց հետո նրա ղեկավար անդամների մեծ մասը՝ Պ. Մնացականյան, Գ. Սաղաթյան, Ա. Խաժակյան, Ս. Տեր-Սիմոնյան և ուրիշներ երկար ժամանակ աշխատում էին «Հնչակյան» կուսակցության շարքերում։ Հետագայում, ռուսական առաջին հեղափոխության տարիներին նրանց մի մասը վերջնականապես խզեց կապերը հնչակյաններից և մտավ ՌՍԴԲԿ շարքերը։ «Հայ բանվոր-հեղափոխականների ասոցիացիան» թեև հայ իրականության մեջ 1890-ական թվականների վերջերից իր ծիլերն արձակող հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններից չէր, բայց և այնպես իր գործունեությամբ որոշ հող պատրաստեց սոցիալ-դեմոկրատական խմբակների առաջացման համար։ Այն լծակ հանդիսացավ բանվորական-դեմոկրատական և մարքսիստական հոսանքների միջև, ակոս ձգեց հայ ժողովրդի ազատագրական շարժումների տարեգրության մեջ։ «Ասոցիացիայի» անդամներից շատերը մտան սոցիալ-դեմոկրատական բանվորական անդրանիկ կազմակերպությունների մեջ։

4

XIX դարի վերջին, XX դարի սկզբին հայ հասարակական-քաղաքական կյանքում առաջացած տեղաշարժերը՝ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, բանվորական շարժման առաջացումը, ռուս առաջավոր պրոլետարիատի հեղափոխական ելույթները նպաստավոր պայմաններ են ստեղծում հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման և բանվորական մարքսիստական առաջին խմբակների գաղափարական դաստիարակու-

թյան համար։ Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածմամբ հայ հասարակական մտքի զարգացումը թևակոխում է նոր փուլը, որը, ինչպես տեսանք, իր ակունքներում ուներ հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանի և նրա արժանավոր հետևորդների ազատագրական պայքարի ավանդները և առաջավոր գաղափարները։

Անցյալ դարի 90-ական թվականներից Անդրկովկասում, ռուս մարքսիստների օգնությամբ, երևան են գալիս մարքսիստական առաջին խմբերն ու խմբակները, որոնք ունեին ինտերնացիոնալ կազմ։ 1887 թվականին Դոնի Ռոստովից Պ. Շաֆրանի հետ միասին Թիֆլիս է գալիս առաջավոր բանվոր Ֆ. Ա. Դուլենկոն, որը դրանից երեք տարի առաջ ընդգրկվել էր բանվորական ինքնակրթության խմբակներում։ Աշխատանքի անցնելով Անդրկովկասյան երկաթուղու գլխավոր արհեստանոցներում, նա սոցիալիստական պրոպագանդա է մղում բանվորների շրջանում, տարածում անլեգալ գրականություն։ Ֆ. Դուլենկոն 1887 թվականին կազմակերպում է բանվորների ինքնակրթության անլեգալ խմբակ, որի մեջ էին Վ. Գերասիմովը, Վ. Ջաբաշվիլին, Ֆ. Աֆանասևը, Ա. Նովակը, Վ. Լենեցկին, Ի. Մարգունը, Ե. Ջերենկովը և տասնյակ զանազան պրոֆեսիայի առաջավոր բանվորներ։ Բացի նարոդնիկական գրականությունից Ֆ. Դուլենկոյի խմբակի անդամները ուսումնասիրում էին Կ. Մարքսի, Ֆ. Լասալի, Ն. Չերնիշևսկու և այլոց աշխատությունները, այդ թվում՝ Կ. Մարքսի գրած «Բանվորների միջազգային ընկերության ժամանակավոր կանոնադրություն»։ Դա, ըստ էության, երկրամասի բանվորական անդրանիկ կազմակերպությունն էր, որը կոչվում էր «Բանվորական միություն» («Рабочий союз») [44]։

---

[44] См. «Деятели революционного движения в России». Био-биографический словарь, том III, вып. II, էջ 1012—1359; Архивное управление МВД Грузинской ССР. «Исторический вестник», № 9, 1956, էջ 106—120. Б. Пирадов, У истоков творчества Максима Горького (1891—1892). Тифлис, 1957. էջ 44—47, 58. «Очерки истории Коммунистической партии Грузии». часть I (1883—1921), Тбилиси, 1957, էջ 33—34, «Статьи о Горьком», М., 1957, էջ 36—38, 50, В. Ю. Самедов, Распространение марксизма-ленинизма в Азербайджане, Баку, 1962, էջ 304—311, «Общественное движение в пореформенной России», Сборник статей, М., изд-во «Наука», 1965, էջ 382 (статья В. П. Крикунова «Рабочий союз» в Тифлисе (1887—1888), Ш. Чивадзе, И. Мерцхулава, Невнимательность или пренебрежение? (см. журнал «Вопросы истории КПСС», № 4, 1966, էջ 129—130). Շ. Ջիվանն և Ի. Մերց-

«Բանվորական միությունը» 1888 թվականին սահմանափակ ծավալում է իր կապերը երկրամասի արդյունաբերական կենտրոնների՝ Բաքվի, Բաթումի, Փոթիի և այլ վայրերի, ինչպես նաև Դոնի-Ռոստովի հետ[45]:

Վրաստանում բանվորական առաջին խմբակներից մեկի գործունեությունը կապված է բանվոր մեխանիկ Ֆ. Աֆանասևի ղեկավարությամբ 1891 թվականին գործող բանվորական խմբակի՝ «Կրասնոգորսկի կոմունա»-յի հետ[46]: Ֆ. Աֆանասևի խմբակի աշխատանքներին մասնակցում էին Վ. Ռախլինը, Մաքսիմ Գորկին, Բերվին-Ֆլերովսկին («Բանվոր դասակարգի դրությունը Ռուսաստանում» գրքի հեղինակը), Շ. Ջիտաձեն, Ն. Խուդադովը, Է. Նինոշվիլին, Մ. Ցխակայան, Ֆ. Մախարաձեն, Ի. Ջաբադարին, Մ. և Ի. Թոիձենները, Ս. Ալիլուևը, Վ. Կեցխովելին, Ա. Լեժավան, Վասիլ Վարդանյանը, որը Մոսկվայից Կովկաս էր արտաքսվել Մ. Բրուսնևի մարքսիստական խմբակին մասնակցելու համար: Վ. Վարդանյանը (1868—1944) տակավին XIX դարի 80-ական թվականներին Թիֆլիսի Ռեալական ուսումնարանում սովորելու ժամանակ մասնակցում է աշակերտական ընդհատակյա խմբակների աշխա-

---

խուլական ճիշտ են նկատել Պ. Կրիկունովի Թիֆլիսի «Բանվորական միության» մասին գրած հոդվածի սխալները: Վերջինս, անտեսելով պատմագիտության մեջ այդ առթիվ եղած նյութերը, փորձել է «Բանվորական միության» հայտնաբերման դափնին նվաճել: Նա գրել է. «Наши поиски привели к обнаружению рабочего кружка в Тифлисе, именовавшего себя «Рабочим союзом»... (См. «Общественное движение в пореформенной России», Сборник статей, էջ 300).

[45] Բաքվի հետ ունեցած կապերի մասին տե՛ս В. Ю. Самедов, Распространение марксизма-ленинизма в Азербайджане, Баку, 1962, էջ 309—310.

[46] Ֆ. Աֆանասևի, Վ. Ռախլինի և նրանց միացած երիտասարդ Ա. Մ. Պեշկովի (Մաքսիմ Գորկու) բանվորական ինքնակրթության խմբակը նիստեր էր ունենում Թիֆլիսի Կրասնոգորսկի փողոցի տներից մեկում, դրա համար էլ այն կոչվում է «Կրասնոգորսկի կոմունա»: Ֆ. Ե. Աֆանասևը ծնվել է Թիֆլիսում, զինվորի ընտանիքում, աշխատել է Յարալովի գործարանում և երկաթուղային արհեստանոցներում: 1887 թվականին ակտիվ մասնակցություն է ունեցել երկաթուղու զինվոր արհեստանոցների բանվորների գործադուլին: Քաղաքական անդրանիկ մկրտությունը ստացել է Ֆ. Դուլենկոյի «Բանվորական միության» շարքերում: (См. Архив Грузинского филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 8, оп. 2, д. 1434, л. 1, ЦГА Груз. ССР, ф. 31, д. 166, лл. 18—19, «Дело о М. Горьком», Материалы Тифлисского губернского жандармского управления, Тифлис, 1928, էջ 13 и др.) см. В. Р. Манлов, Деятельность одного из первыхв Закавказье марксистского рабочего кружка Ф Е. Афанасьева (1893—1897 гг.). Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3, 1966, էջ 159—167.

տանքին, խորապես կրելով Ֆ. Լասսալի գաղափարական ազդեցությունը։ 1888 թվականին ընդունվելով Մոսկվայի Պետրովսկի-Ռազումովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիան, ուսումնական ծանոթանում է մարքսիզմի ուսմունքին, մասնակցում ուսանողական հեղափոխական ելույթներին, հակացարական ցույցերին։ Հենց այդ ժամանակ էլ (1891—1892) նա և իր գլխավորած «Կովկասյան խմբակ»-ի անդամները համագործակցում են Մ. Բրուսնևի հետ։

Ցարական գործակալները հայտնաբերելով և ջախջախելով Բրուսնևյան խմբակը, բանտարկում են նաև Վ. Վարդանյանին, որը շատ չանցած ազատվում է «անհրաժեշտ հանցանշաններ չլինելու պատճառով»։ Ակադեմիան ավարտելուց հետո նա ուսումը շարունակում է Մոսկվայի Յուրևյան ինստիտուտում, շինարարությունը ուսումնասիրում սոցիալիստական գրականությունը։ Շարունակելով կապը Կովկասի հեղափոխական գործիչների հետ, իսկ 1896 թվականին ավարտելով ինստիտուտը և աշխատանքի նշանակվելով Թիֆլիսում, նա իր հետ բերում է հեղափոխական փորձ, մարքսիստական գիտելիքներ *։

«Կրասնագորսկի կոմունան», որ գործեց մինչև 1892 թվականը, շոշափելի հետք թողեց երկրամասի բանվորական շարժման պատմության վրա [47]։

---

* Հետագայում Վ. Վարդանյանը սերտ շփման մեջ է մտնում Ս. Շահումյանի հետ, նրա ղեկավարությամբ հեղափոխական աշխատանք կատարում Բաքվում, Թիֆլիսում և այլուր։ Նրա գրչին են պատկանում մի շարք արժեքավոր հոդվածներ, որոնք նվիրված են գրականության և հասարակական զարգացման հարցերին։ Երկրամասում սովետական կարգերի հաստատումից հետո աշխատել է գյուղատնտեսական հիմնարկություններում։ Վախճանվել է 1944 թվականին Թիֆլիսում։

47 Անցյալում այն սխալ միտքն է հայտնվել, որ իբր թե «Կրասնոգորսկի կոմունա»-ի կազմում միայն մեկ բանվոր է եղել, Ֆ. Աֆանասեր (Дело о М. Горьком, Тифлис, 1928, էջ V, «Вместо предисловия» (автор Ф. Махарадзе)։ Դա ճիշտ չէ. բացի մտավորականներից, ուսանողներից, խմբակի հետ կապված էին բազմաթիվ բանվորներ (см. Э. Клезн, Горький в Тифлисе, 1923, էջ 24. «Революционный путь Горького». «По материалам Департамента полиции», М.—Л., 1933, էջ 26. Б Пирадов, У истоков творчества Максима Горького (1891—1892), Тбилиси, 1957, էջ 51—55. «Литературис Матине», кн. 1—2, Тбилиси, 1940, էջ 506, на груз. яз.; И. Бродов, Максим Горький — рабочий тифлисских железнодорожных мастерских, газета «Заря Востока» от 20 июня 1936; Г. Гулбани, Русские социал-демократы в Грузии (1890—1904), Тбилиси, 1951, էջ 18 (на груз. языке) и др.

1892 թվականին Ֆ. Մայորովը երկաթուղու գլխավոր արհեստանոցների բանվորների համար կազմակերպում է ինքնակրթության խմբակ, որին մասնակցում էր նաև Ֆ. Աֆանասևը[48]:

1892 թվականի վերջերին մարքսիստական առաջավոր տրամադրություններով համակված մտավորականությունը Թիֆլիսում հիմք է դնում գրական-քաղաքական խմբի ձևավորմանը, որը հետագայում կոչվեց «Մեսամե դասի» (երրորդ խումբ)[49]: Նախաձեռնողը վրացական առաջադիմական վաղամեռիկ գրող է. Նինոշվիլին էր: Խմբի անդամները ծանոթացել են Կ. Մարքսի «Կապիտալ»-ին, Գ. Պլեխանովի «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը», «Մեր տարաձայնությունները» աշխատություններին, պրոպագանդիստական աշխատանքներ կատարել երիտասարդության մեջ, հանդես եկել «Կվալի» և «Մոամբե» հանդեսների էջերում[50]:

«Մեսամե դասի» ղեկավար կազմում բացի վրացիներից կային նաև ռուսներ և հայեր, այդ թվում Ֆ. Աֆանասևը, Ֆ. Մայորովը, Ի. Լուպինը, Ստ. Դանդուրովը (Դանդուրյան), Ն. Ֆլերովը[51]: «Մեսամե դասին» համախոհ մարքսիստների միասնական կազմակերպություն չէր: Նրա մեծամասնությունը լեգալ մարքսիստ-նացիոնալիստներ էին՝ Ն. Ժորդանիայի ղեկավարությամբ, իսկ փոք-

---

[48] См. ЦГИАМ, ДП. 3-д. 60, 1900, д. 1332, т. I, л. 34, д 1332: т. II, л. 6. С. Аллилуев, Пройденный путь, М., 1946, էջ 35—36. «Революционное матиние» (на груз. языке), № 2, 1925, էջ 91. Ֆ. Աֆանասևի այդ շրջանի հեղափոխական կյանքը լավ է լուսաբանված Մ. Մայիլովի «Ֆ. Ե. Աֆանասևի՝ Անդրկովկասում մարքսիստական-բանվորական առաջին խմբակներից մեկի գործունեությունը» հոդվածում, Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3, 1966, էջ 159—168:

[49] Անցյալում, մինչև ՍՄԿԿ XX համագումարը, պատմական գրականության մեջ գերագնահատվել են «Մեսամե դասի»-ի ծառայությունները: Միայն այդ տեսակետից բացառություն են կազմում Ս. Տ. Արկոմեդի ուսումնասիրությունները, մասնավորապես նրա «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գիրքը:

[50] См. История Коммунистической партии Советского Союза, том первый, 1965, էջ 164—165.

[51] Այդ մասին տե՛ս Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 8, оп. 2, д. 617, Очерки истории Коммунистической партии Грузии, часть I, Тбилиси, 1957, История Коммунистической партии Азербайджана, часть I, Баку, 1958. Н. А. Чахвашвили, Рабочее движение в Грузии (1870—1903), Тбилиси, 1958, էջ 116, Л. Е. Горчлидзе, К истории марксизма в Грузии, Тбилиси, 1956, էջ 124 (на груз. языке). Ս. Տ. Արկոմեդ, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, մաս I, Պետհրատ, 1929:

բամասնությունը՝ հեղափոխական մարքսիստները, Լ. Կեցխովելու, Ս. Ծուլուկիձեի, Միխա Յեսակայայի, Ֆիլիպ Մախարաձեի, Ա. Ջափարիձեի ղեկավարությամբ (հետագայում նրանց միացավ Ի. Ջուղաշվիլին՝ Ստալինը), որոնք 1898 թվականին հիմք դրեցին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեին:

1894 թվականի նոյեմբերին սոցիալ-դեմոկրատական խմբակների ակտիվ անդամներից Ֆ. Աֆանասևը, Ֆ. Մայորովը, Ս. Ալիլուևը, առաջավոր բանվորներ Զ. Ջոզրիշվիլու, Մ. Բաշորիձեի, Վ. Սաուրուայի և այլոց հետ երկաթուղու գլխավոր արհեստանոցներում հիմք են դնում մարքսիստական մի քանի խմբակների[52]: Երկաթուղայինների մեջ մարքսիստական գինվածությամբ հայտնի էր Իոսիֆ Կոգանը, որը ծնվել է 1866 թվականին Բեսարաբիայի նահանգում: Օդեսայի և Նովորոսիյսկի գպրոցներում սովորելու հետ միասին նա հարում է հեղափոխական շարժումներին, 1891 թվականին մեկնում է Յուրիխ և սովորում պոլիտեխնիկական ինստիտուտում: 1895 թվականին վերադառնում է Ռուսաստան՝ աշխատանքի նշանակվում Թիֆլիսում: Այստեղ նա գործն մասնակցություն է ունենում երկրամասում մարքսիստական գաղափարների տարածմանը[53]: Այդ ժամանակ Բաթումում ձևավորված մարքսիստական առաջին խմբակների գործունեությանը մասնակցում է Գ. Ֆրանչեսկին:

1896 թվականին Թիֆլիսում կար մոտ 20 մարքսիստական խումբ: Անդրկովկասում մարքսիստական խմբակների կազմակերպման գործում ակտիվ դեր են խաղացել «Պայքարի միություն» և մարքսիստական այլ կազմակերպություններին պատկանելու համար Ռուսաստանից երկրամաս աքսորված սոցիալ-դեմոկրատները, ռուս մարքսիստները, Վ. Կուրնատովսկին, Լ. Կրասինը, Մ. Կալինինը, Վ. Շելգունովը, Ի. Լուգինը, Գ. Ֆրանչեսկին, Ս. Ալիլուևը, Ի. Կոգանը, Ի. Վացեկը, Ի. Ֆիոլետովը, Մ. Մոնտինը, Ն. Կոզերենկոն, Ֆ. Աֆանասևը և ուրիշներ, ինչպես և վրաց բանվորներ Զ. Ջոզրիշվիլին, Մ. Բաշորիձեն, Վ. Յարաձեն և ուրիշներ:

1897 թվականին Ֆ. Աֆանասևի, Ս. Ծնուկիձեի և ուրիշների կողմից Բաքվում սկզբնավորվում են բանվորական առաջին մարք-

---

52 См. «Революционное прошлое Тбилиси», Институт истории АН Груз. ССР. Тбилиси, 1964, էջ 13.

53 См. ЦГАОР СССР, ф. ДП, 3 д-во, д. 281, 1894, л. 54—56 об., д. 844, ч I, 1893, л. 36, ф. МОО, 1902, д. 1437, лл. 92, 93 об., Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 8, оп. 2, д. 617, л. 10, д. 917, л. 2.

ախտական խմբակները, որոնցից մեկը փականագործ Ի. Վացեկի և խառատ Պոպովի ղեկավարությամբ՝ Սև քաղաքում, իսկ մյուսը՝ առաջավոր բանվոր Հ. Զարգարյանի (Զարգարով) Բալախանիում։

Անդրկովկասում բանվորական շարժումն աճում էր ամենից առաջ այնտեղ, ուր բանվորների կոմպակտ մասսա կար։ Այն բնավ կապված չէր պատմականորեն կազմակերպվող տերիտորիաների հետ, այլ արդյունաբերական օջախների հետ։

Դարասկզբին հայ բանվորների զգալի մասը գտնվում էր ազգային կուսակցությունների և հոսանքների գաղափարական ազդեցության տակ։ Դրան նպաստում էր հիմնականում այն հանգամանքը, որ թուրքահայ ժողովրդին քաղաքական ստրկությունից ազատելու համար մղված պայքարում, ինչպես 1903 թվականին նկատել է Բ. Կնունյանցը, համակրանք էին շահել ազգայնական, «Դաշնակցություն» և «Հնչակյան» կուսակցությունները. «Կովկասն այն գլխավոր թատերաբեմն է,— գրել է Բ. Կնունյանցը ՌՍԴԲԿ II համագումարին ներկայացրած Բաքվի կոմիտեի զեկուցման մեջ,— որտեղ այդ կազմակերպությունները քաշում են իրենց մասավորական մարտական ուժերը, հավաքագրում են բանվոր և գյուղացի երիտասարդությանը, հեղափոխական խմբեր (հայդուկներ) կազմակերպելու համար։ Հենց այստեղ էլ հայթայթում էին գլխավոր միջոցներ, բանվորների, ինտելիգենցիայի և սովորողների շրջանում, նրանք ունեին խմբակներ, կազմակերպված կերպով մղվում էր պրոպագանդա։ Հայ լավագույն ամբողջ լեգալ գրականությունը գոլերգում էր թուրքահայերի քաղաքական ազատագրական գաղափարը։ Ռուսաստանի սահմաններում պայքարի գաղափարը ջանասիրությամբ լսության էր տրվում, քանի որ վախենում էին դրանով ուժերը շեղել գլխավոր պայքարից» [54]։

Կային և այնպիսի հայ բանվորներ, որոնք կամաց-կամաց սկսում էին գիտակցել իրենց դասակարգային շահերը, բայց հայերեն մարքսիստական գրականություն չլինելու և ռուսերենին ու այլ լեզուներին վատ տիրապետելու պատճառով, երբեմն մեկուսացած էին մնում բանվորական ընդհանուր շարժումներից։

Բանվորական առաջին ցույցերն ու ելույթները սթափեցրին ու ակտիվացրին նրանց։

1898 թվականին Թիֆլիսում կազմակերպվում է հայ բանվորների առաջին սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական խումբը,

---

54 *Տե՛ս* Второй съезд РСДРП. Протоколы. М., 1959, էջ 523.

(«Բանվորական միություն»), որի ստեղծման գործում խաղար-դեր խաղացին բանվորական ինտերնացիոնալ ընտանիքում իրենց առաջին մկրտությունն ստացած առաջավոր բանվորներ Մելիք Մելիքյանը (Դեղուշկա), Աստուր Կախոյանը (բանվոր խնչո), բանվոր Հայկ Փիլոսյանը[55] և ուրիշներ։ Խմբի կազմում էին նաև Թիֆլիսի երկաթուղային դեպոյի բանվորներ Խ. Քեշիշյանը, Գ. Մկրտումյանը, Արտեմ Տեր-Հարությունյանը, Բողարջյանցի ծխախոտի ֆաբրիկայի բանվորներ Ալեքսանդր Վարդանյանը, Պետրոս Թավլիշյանը, Թիֆլիսի հայ բարեգործական ընկերության գրադարան-ընթերցարանի աշխատող Գարեգին Կուզիկյանը (Նապլեմ)[56] և ուրիշներ[57]։ Խումբը որոշակի ծրագրով պարապմունքներ էր ունենում, որը ղեկավարում էին Մ. Մելիքյանը և Գ. Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեդ)։ Այն ստեղծում է բանվորական դրամարկղ[58], հիմք է դնում ձեռագիր «Բանվոր» թերթին, որը բաղ-

---

55 Հայկ Փիլոսյանը հայտնի է նաև Հայկ Ադամյան, Պողոս Փիլոսյան, Հայկ Պողոսյան ծածկանուններով։

56 Գ. Կուզիկյանը հետագայում դարձավ հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության անդամ, «սպեցիֆիկ»։

57 Տե՛ս «Նոր աշխարհ», № 1, 1922, էջ 153։ Խ. Բարսեղյան, Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն, Երևան, 1956, էջ 51—59, Վ. Ավետիսյան, Հայ բանվորների առաջին մարքսիստական խմբի պատմությունից, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 5, 1956, էջ 3—18, Ն. Խալեյան. Նոր նյութեր հայ բանվորների ընդհատակյա խմբի մասին, 1898—1901 թթ. Հայկական ՍՍՀ «Տեղեկագիր», № 6, 1956, էջ 17—27։

58 Արխիվային մի փաստաթղթից երևում է, որ Էնֆիաջյանցի ֆաբրիկայի բանվորական դրամարկղի 1901 թվականի ամեն շաբաթյա մտից և ելից մատյանում նշվել է «մուտք 125 ռ. 86 կոպ., ելք՝ 20 ռ. 50 կոպ., այդ թվում՝ օգնություն քաղաքական բանտարկյալներին և գործադուլավորներին։ Փետրվարին դանձվել է 125 ռ. 86 կոպ. անդամավճար, որից 70 ռուբլի տրվել է գործադուլավորներին իբրև օգնություն։ (См. Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 31, д. 170, л. 96). Պ. Փիլոսյանը 1901 թվականի մարտին Մետեխի բանտից Գ. Կուզիկյանին նամակով նախազգուշացրել է. բանվորներին հայտնիր, որ հարցաքննության ընթացքում նրանք վկայեն, որ քաղաքական բանտարկյալներին դրամական օգնություն չի ցույց տվել (նույն տեղում, թ. 56)։ Ահա Թիֆլիսի Մուշտակի միության և դրամարկղի կանոնագրությունը. «Устав Союза Тифлисских мундштучников. Цель кассы и союза. 1. Касса служит Союзу рабочих в борьбе рабочих против эксплоатации их хозяевами и капиталистами. 2. Кассу надо хранить в секрете от других. 3. Взнос в кассу должен производиться рабочими по 20 копек в неделю. 4. Взнос не производят больные и не имеющие работы члены. 5. Все члены участники союза должны являться на собрания для обсуждения своих интересов. Собрания по условию рабочих различаются и бывают экстренными

մայվում էր 60—100 օրինակով, մասնակցում Թիֆլիսի բանվորների բազարական ելույթներին: Նրանք ձեռք էին բերել հեկտոգրաֆ, հայերեն և ռուսերեն տառեր: Հայ բանվորների առաջին մարքսիստական խումբը, որ գործեց մինչև 1901 թվականի գարունը «Թիֆլիսի բանվորների միությունն» անունով, իր լայն ճյուղերը տարածեց ոչ միայն Թիֆլիսի, այլև Բաքվի, Բաթումի և այլ

и обыкновенными. 6. На этих собраниях выбираются представители по сбору денег, как например кассир контроль и библиотекарь. 7. Все эти лица утверждаются большинством голосов на три месяца, но возможно сменить их раньше, если они не выполняют своих обязанностей. 8. Каждое общество выбирает своего представителя, который обязан заявить собранию представителей о требованиях и нуждах своего общества, как равно и сообщать своему обществу все решения и распоряжения представителей собрания, этот представитель равно обязывается раздавать членам своего общества разрешенные и не разрешенные книги. 9. Число представителей должно соответствовать числу обществ. 10. Общее собрание должно быть в 3 месяца раз, а собрание представителей должно быть каждую неделю. 11. На общем собрании обсуждаются вопросы этого союза, как-то счета касс, счета библиотеки, а равно число членов союза. 12. Общее собрание также обсуждает вопрос о присоединении к другим фабрикам. 13. Деньги из кассы могут быть расходуемы на дело рабочих и других мастерских и фабрик. 14. Оказывать помощь больным сообразно семейного положения. 15. На расходы по похоронам отпускать по 10 рублей. 16. Кассир может иметь при себе известную сумму денег для экстроординарных расходов, как например на экстренное дело, для пропагандистов и членов. 17. Деньги должны браться из кассы до начала какого-либо дела. 18. Кассир должен действовать с согласия представителей общества. 19. В союзе могут принимать участие все те, не различая веры и национальности, которые сочувствуют уставу союза. 20. Взнос не возвращается обратно ни в коем случае. 21. Не нужно позволять, чтобы хозяева увольняли кого либо из членов союза, путем выражения неудовольствия и стачкой. 22. Представители союза должны стремиться к тому, чтобы поддержать [. . .] рыя отношения с своими коллегами других фабрик и стараться соединиться с ними устройством общего союза этого ремесла рабочих нанросников, образовав таким образом комитет табачных фабрик. 23. Все неудовольствия между членами союза разбираются собранием представителей. 24. Каждый член имеет право узнать через своего представителя о судьбе денег в кассе. 25. С ведома представителей общества из кассы должны отпускаться деньги для приобретения брошюр или отпечатывания их. 26. Союз имеет право изменить пункты устава большинством голосов.27. Собранные деньги должны храниться в сберегательной кассе на имя двух лиц, которые должны избираться также большинством голосов» (архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф., 31, д. 170, л. 97).

քաղաքների բանվորների մեջ։ Խմբի ղեկավարները հայերեն թարգմանեցին և ձեռագիր ու խմորատիպ բրոշյուրներով բազմացրին «Ո՞վ ինչով է ապրում», «Մայիսի մեկը», «Բանվորական միություններ» գրքույկները, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը» և այլ աշխատություններ։ Այդ խմբում մեծ դեր էին խաղում Մելիք Մելիքյանը և Հայկ Փիլոսյանը։ Հիասթափվելով հնչակյան սոցիալիզմից, Մ. Մելիքյանը հարում է սոցիալ-դեմոկրատիային, հեղափոխական մարքսիզմին, դառնում հայ իրականության լավագույն բանվոր մարտիկներից մեկը, կրակոտ ու սրամիտ ագիտատոր ու պրոպագանդիստ։ Շատ ու շատ բանվորներ, աշխատավոր գյուղացիներ իրենց քաղաքական դաստիարակության համար երախտագետ են Մելիքյանին՝ Դեղուշկային։ Հայկ Փիլոսյանը նույնպես լինելով կրթված բանվոր՝ պրոպագանդիստական աշխատանք էր կատարում Ադելխանովի կաշեգործարանում և այլ ձեռնարկություններում։ Նրա և Մ. Մելիքյանի օգնությամբ շատերն ազատվեցին հնչակյան պատրանքներից և անցան սոցիալ-դեմոկրատիայի կողմը։ «Թիֆլիսի բանվորների միության» նախագծում, որը կազմել էր Հ. Փիլոսյանը, ասված էր. «1. Թիֆլիսի բանվորների միության նպատակն է օգնել բանվորներին իր առկա դումարներից՝ հիվանդության, դժբախտ դեպքերի, ծերության, աշխատանքի անընդունակության ժամանակ, 2. Նյութապես օժանդակել բանվորներին գործադուլների, աշխատանքի և կապիտալի ընդհարումների, տարաձայնությունների ժամանակ, որոնք անխուսափելիորեն տեղի են ունենում արդյունաբերական աշխարհում։ Այդ նպատակով միությունը հիմնում է ընդհանուր կենտրոնական դրամարկղ բոլոր անդամների դրամական մասնակցությամբ, ինչպես նաև տեղական դրամարկղներ՝ զանազան բանվորական խմբակներում։

Կենտրոնական դրամարկղը բավարարում է ընդհանուր կարիքները, իսկ տեղական դրամարկղները՝ իրենց խմբակների մասնավոր պահանջմունքները»։ Բանվորական դրամարկղներում կար մեծ քանակությամբ գումար։ Էնֆիաջյանի, Բուղարջյանցի, Սաֆարյանի ծխախոտի ֆաբրիկաներում, Ադելխանովի և Փարսադանյանի կաշվի գործարանների բանվորները, քաղաքի մանր արհեստանոցների աշխատողները սերտորեն կապված էին Մ. Մելիքյանի և մյուսների կազմակերպած խմբի հետ և նրանցից ստանում էին քաղաքական ղեկավարություն։ Խմբի անդամները զաղտնի հավաքույթներ և ժողովներ էին անցկացնում, որոնց մասնակ-

ցում էին նաև վրացի բանվորները, այդ թվում՝ Սանդրո Բաջիաշվիլին, Ի. Մանջավիձեն, ռուս հեղափոխական Ի. Սուլխանովը և ուրիշներ։ Հավաքույթները մեծ մասամբ գումարվում էին Թիֆլիսի խոջիվանքի հայկական գերեզմանատանը, երբեմն էլ Արծրունու քարվանսարայում, Տեր-Հարությունյանի կոշկակարանոցում, Դանիելովի թեյարանում և այլ վայրերում։ «Տեր-Հարությունյանի կոշկակարանոցում ամեն օր գալիս են հայ բանվորներ,— ասված է ժանդարմական մի զեկուցագրում,— կարդում են այնտեղ ինչ-որ թերթեր ու նամակներ, նմանապես «Բանվոր դասակարգ» թեյարանում ամեն օր հավաքվում են գրույցի համար բանվորները... Իսկ փետրվարի 3-ին (1901 թ.— Խ. Բ.), երեկոյան ժամը 8-ին Դանիելովի թեյարանում նկատվեց Բոզարջյանցի ծխախոտի ֆաբրիկայի բանվորների հավաք։ Այդ հավաքին ներկա էին Բաջիևը (Բաջիաշվիլին), Մանջավիձեն, Փիլոսյանը և Կուզիկյանը»[59]։

1900 թվականին Մ. Մելիքյանը, Պ. Փիլոսյանը և մի քանի այլ հեղափոխական բանվորներ Թիֆլիսում անվիգալ կերպով հիմնում են «Բանվոր» թերթը, որն ուներ ժուռնալի ֆորմատ և իր ճակատին կրում էր «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մարքսիստական կոչը, իսկ վերնագրի տակ գրված էր «Հայկական սոցիալիստական բանվորական օրգան»։ Սա առաջին բանվորական հայերեն թերթն էր, որի շուրջը հիմնականում համախմբված էին բանվորները։ Նրանք իրենց գործունեությունը հատկապես սկսեցին ծավալել Կովկասում տեղի ունեցող գործադուլների, քաղաքական ցույցերի ազդեցության տակ։ «Բանվոր»-ը, «...որը հիմնադրվեց 1900 թվականի ամռանը, սկզբում հրատարակվում էր մի քանի բանվորների ձեռքով, հետո միացան բանվորներից բացի ուրիշ աշխատավորներ, որոնք միացած առաջ էին տանում այդ թերթի աշխատանքը և կարողացան մի տարվա ընթացքում 22 համար հրատարակել»[60]։ 1900 թվականին հրատարակվում են 22, իսկ 1901 թվականի հունվարին՝ մեկ համար։ Սկզբնական շրջանում «Բանվոր»-ը հրատարակվում էր մեկ-երկու թերթից, հետագայում այն դարձավ ավելի ծավալուն։ Բանվորները ոչ միայն նյութեր էին գրում թերթին, այլև գիշերներն արտագրում էին այն,

---

59 Архив Грузинского филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 31, д. 170, л. 9.

60 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, գ. 12, թթ. 13—21։

հաջորդ օրը ձեռքից-ձեռք փոխանցում «...մի խումբ կարդում էր և հանձնում մյուս խմբին, այնպես, որ շատերը կարող էին կարդալ և ծանոթանալ մտքերի հետ»[61]: «Բանվոր»-ը իր առաջ խնդիր էր դրել օգնել հայ բանվորներին սոցիալիստական գիտակցության գալու գործում, իրազեկ պահել Ռուսաստանի և Անդրկովկասի պրոլետարիատի հեղափոխական շարժումներին, մատչելի ձևով շարադրել Եվրոպայի հեղափոխական պրոլետարիատի գործողությունները: Բացի այդ, թերթը զետեղում էր բանվորների կյանքը պատկերող բանաստեղծություններ, «Դուբինուշկան», «Մարսելյոզը» և այլն: 1900 թվականի նոյեմբերի 12-ին լույս է տեսնում «Բանվորի» 20-րդ համարը:

Հանդամանորեն վերլուծելով Կովկասի պրոլետարիատի քաղաքական խնդիրները, «Բանվոր» թերթը պարզաբանում էր, որ սերտորեն եղբայրացած ու համագործակցած ռուս պրոլետարիատին՝ իբրև մերձավորագույն նպատակ պետք է գրոհել և տապալել միապետությունը և ձեռք բերել մամուլի, ժողովների, ընտրելու և ընտրվելու ազատություն: «Նամակ հայ բանվորներին», «Խորհուրդներ» և այլ հոդվածներում խոսվում էր Անդրկովկասի բազմազգ բանվորների ինտերնացիոնալ համերաշխության, հեղափոխության մեջ բանվոր դասակարգի դերի, նրա պայքարի եղանակների, հատկապես զինված ապստամբության կազմակերպման մասին: «Առաջ ցարն ու բուրժուան ամեն ինչ էին,— գրել է «Բանվոր»-ը,—իսկ բանվորը՝ ոչինչ, այժմ բանվորն ամեն ինչ է, ցարն ու բուրժուան՝ ոչինչ,—ահա կյանքը»: «1900 թվականը մեղանում» խորագրով հոդվածում «Բանվոր»-ը մանրամասն քննարկել է հեղափոխական շարժումների պատմությունը Կովկասում, խոսում է 1900 թվականի Թիֆլիսի մայիսմեկյան ցույցի, երկաթուղայինների օգոստոսյան գործադուլի և քաղաքական այլ խոշոր իրադարձությունների մասին: Թերթը անդրադարձել է բանվորական շարժումը սոցիալիզմի դաղափարներին միացնելու հարցին, նշել, որ «հարկավոր է ջանալ, որ ինտելիգենտներն (սոցիալ-դեմոկրատները) ու բանվորները տարբեր աչքով չնայեն միմյանց վրա, այլ իրենց մեջ ստեղծեն այնպիսի հնարավորություններ, որ նրանք սխալ հասկացողություն չկազմեն միմյանց մասին...

Կովկասը պետք է ավելի մոտիկ հարաբերություններ ունենա Ռուսաստանի հետ և որպես ամբողջ Ռուսաստանի մի մասը,

---

61 Նույն տեղում:

կազմի նրա ամբողջ բանվոր դասի (դասակարգի) մի մասը, որպեսզի Ռուսաստանում չլինի ոչ մի բանվորական շարժում՝ բանվորների ու կարգերի վերաբերյալ օրենքների փոփոխման մասին, որ նույնը չկրկնվեր նաև այստեղ: Վերջապես, որ Կովկասը լիներ Ռուսաստանի մարմնի մի անդամը, որ կարողանար ժամանակին զգալ ու շարժվել:

Ինչպես տեսնում ենք, հիշյալը շատ կարևոր է և մեծ աշխատանք ու ժամանակ է պահանջում, որպեսզի իրականանա: Մենք չենք կարող այնքան լավատես լինել, որ ասենք, թե առաջիկա 1901 թվականին կարող ենք իրագործել բոլոր ցանկությունները: Բայց այնուամենայնիվ մենք պետք է լարենք մեր բոլոր ուժերը, որպեսզի իրականացնենք եթե ոչ ամբողջը, ապա գոնե մի մասը: Վերջապես, 1901 թվականին, որ միաժամանակ XX դարի սկիզբն է, այսինքն՝ հույսերի և իդեալների իրագործման սկիզբը, մենք պետք է նոր ուժով և ինքնագիտակցությամբ դիմենք գեպի ապագան»[62]: «Բանվոր»-ը 1901 թվականի հունվարի 17-ի առաջնորդողում, որը վերնագրված է «XX դարը», լավատեսությամբ լցված կանխատեսում էր, որ «Բանվոր ժողովուրդը, հավատացած է, որ այդ դարում պետք է կատարվի իր սրտի անկեղծ ցանկությունը, իր փրկությունն ու ազատությունը, մի խոսքով իր իդեալները»[63]: Թերթը Կովկասի պրոլետարիատի մերձավորագույն խնդիրն էր համարում «տապալել միապետությունը և ձեռք բերել 1. մամուլի ազատություն, 2 ժողովների ազատություն, 3. ընտրելու ազատություն»[64]: «Մենք հավատացած ենք,— ասում էր «Բանվոր»-ը,— որ XX դարում վերջապես կիրագործվեն աշխատավորների ցանկությունները ու ձգտումները, և վերջնականապես կհաստատվի մեր բաղձալի և երազած աշխարհը, այն ժամանակ ոչ ոք վարձու ստրուկ չի լինի, այլ կլինի ազատ մարդ, ազատ քաղաքացի, իր ազատ աշխատանքով: Թերթը ողջունում էր XX դարը, բոլոր մարանչող հեղափոխականներին, որոնք պայքարում են հաստատել բաղձալի, ազատ ապագա:

1901 թվականի փետրվարի 18-ին Ասատուր Կախոյանը Բաքվից Պ. Փիլոսյանին էր ուղարկել մի հոդված «Բանվոր»-ում հրապարակելու համար: Նրանում ասված էր, որ ամենուրեք ջերմ արձագանք են գտել Թիֆլիսում 1900 թվականին տեղի ունեցած

---

62 Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 31, д. 170, лл 170—178.

63 Там же.

64 Там же.

բանվորական կլուբները։ Հեղինակը, նկարագրելով Բաքվի բանվորների ծանր վիճակը, խորհուրդ էր տալիս ամրապնդել բանվորների փոխադարձ կապն ու համերաշխությունը և շերեալ դարձարանատերերի դեմ մղվող դասակարգային պայքարում։ Հայ բանվոր սոցիալ-դեմոկրատների անդրանիկ խումբը և նրա օրգան «Բանվոր»-ը ճիշտ էին հասկացել իրենց խնդիրը։ Անժխտելի են «Բանվորի» ծառայությունները հայ աշխատավորների հեղափոխական դարթոնքի ազդանշման, սոցիալիզմի գաղափարների տարածման գործում։

Ռուս և եղբայրական այլ ազգերի սոցիալ-դեմոկրատների օգնությամբ ստեղծելով իրենց մարքսիստական խումբը, հայ բանվորները տարերային տնտեսական ընդվզումներից անցան հեղափոխական, գիտակցական պայքարի։ Հայ բանվորները, Ռուսաստանի պրոլետարիատի օրինակով, դասակարգային պայքարի բովում համոզվեցին, որ բանվորների երջանկությունն իրենց ձեռքումն է, ուժը՝ միությունն։

5

Մարքսիզմի զարգացման լենինյան էտապի սկզբնաշրջանում հայ հասարակական-քաղաքական մտքի հորիզոնում փայլատակում է Ստ. Շահումյանը (1878—1918)։ Աշակերտական տարիներին նա հրապուրվում է դեմոկրատական գաղափարներով, որոշ ժամանակ անցկացնում աշակերտական «Միածան» գաղտնի կազմակերպության շարքերում։ «Միածան»-ն իր շարքերն էր ընդունում Թիֆլիսի բոլոր միջնակարգ դպրոցների այն հայ աշակերտներին, որոնք ցանկություն ունեին և կատարում էին կազմակերպության պահանջները։ Պարապմունքները տարվում էին հայերեն[65]։ Կարճ ժամանակաշրջանում «Միածան»-ը շուրջ տասը ֆիլիալ ըս-

---

65 «Միածան»-ի անդամներից Գ. Ա. Երիցյանը պատմում է, որ հիմնադիր նիստի արձանագրության տակ առաջին անդամ Ստեփանը ստորագրեց Շահումյան։ Մինչև այդ նա գրում էր Շահումով։ Տե՛ս Գ. Երիցյան, Հուշեր Ստեփան Շահումյանի կյանքից (ձեռագիր)։ Երիցյանի հուշերը օգտագործել է նաև Ի. Դուբինսկի-Մուխաձեն, см. И. Дубинский-Мухадзе, Шаумян. изд. Молодая гвардия, М., 1965. Հրապարակախոսական, կիսագեղարվեստական ոճով շարադրված այս գիրքը, իր գրական կողմերով հանդերձ, ունի պակասություններ։ Կան փաստական անճշտություններ, պատշաճ ձևով չի լուսաբանված Շահումյանի տեսական, գրական ժառանգությունը։

տեղծեց քաղաքի դպրոցներում։ Բացի Շահումյանից, որը առաջին նախագահն էր, մայր խմբի ղեկավարության կազմում ընտրվեցին Դանուշ Շահվերդյանը (2-րդ գիմնազիայից), Արամ Տեր-Գրիգորյանը (բանաստեղծ Վահան Տերյանի եղբայրը, 3-րդ գիմնազիայից), Ռուբեն Տեր-Ղևոնդյանը (նույն՝ 3-րդ գիմնազիայից), թերթի հրատարակման գործնական աշխատանքը դրված էր Վանո Հարությունյանի և Գարեգին Երիցյանի վրա[66]։

«Միածան»-ի ակտիվ անդամներից էր Մովսես Հարությունյանը (Արազին), որն այն ժամանակ Շահումյանի հետ միասին սովորում էր ռեալական դպրոցում։ «Միածան»-ի անդամներն իրենց նիստերում ռեֆերատներ էին կարդում հայ ժողովրդի պատմության և գրականության, ռուս 60-ականների, մասնավորապես Չերնիշևսկու, Բելինսկու, Դոբրոլյուբովի երկերի, Արևմտյան Հայաստանի ազգային-ազատագրական շարժումների, երկրամասի ժողովուրդների բարեկամության ու համագործակցության և այլ հարցերի շուրջը։ Նույնպիսի տրամադրությամբ էին տոգորված «Միածան» թերթի համարները, որոնք բազմացվում և տարածվում էին հայ աշակերտների և մտավորականների շրջանում[67]։

Ինչ խոսք, որ «Միածան»-ը մարքսիստական հստակ ուղղություն չուներ։ Ասենք նաև հաղորդակից լինելով Կովկաս արտաքսված ռուս մարքսիստների և երկրամասի առաջին հեղափոխական գործիչների, հատկապես Լ. Կեցխովելու, Վ. Կուռնատովսկու և այլոց հետ, Ս. Շահումյանը 1898 թվականին մտնում է ՌՍԴԲԿ շարքերը։

Նախահեղափոխական Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների մեջ արժանի տեղ ունի Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտը, որը բացվել է 1862 թվականին։

---

66 Տե՛ս Գ. Երիցյանի հիշատակված հուշերը, բացի այդ օգտագործել ենք նաև Վանո Հարությունյանի, Ռուբեն Տեր-Ղևոնդյանի, Արտյոմ Հարությունյանի (Արտյոմ Գիո) և այլոց հուշերն ու վկայությունները։ (Տե՛ս Արտյոմ Գիո, Հեղափոխականի կյանքը, Երևան, 1926, նույնի Թիֆլիսի բանվորական շարժման մասին, 1901—1902, ժնև։ Տե՛ս Г. Н. Гевондян, К вопросу о влиянии Степана Шаумяна на подпольную армянскую ученическую организацию «Радуга» (Цнацан) в гор. Тифлисе См. Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 12798, д. 201, лл. 1—23. Վանո Սերգեյի Հարությունյանի վկայությունները մեզ է տրամադրել Լ. Ս. Շահումյանը։

67 Մենք ծանոթ ենք «Միածան»-ի միայն 1894 թ. դեկտեմբերյան համարին, որը պահվում է ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալում (ֆ. 7, գ. 2)։

Միայն առաջին հիսուն տարում այնտեղ սովորել են 9278 հոգի, այդ թվում մինչև 1895 թվականը՝ 4010, իսկ 1895—1912 թվականներին՝ 5268։ Դարավերջին ուսանողության աճը պայմանավորված է Ռուսաստանում արդյունաբերության զարգացմամբ։

Անդրկովկասում կապիտալիզմի թափափոխման, լեռնա-հանքային արդյունաբերության և նավթի հանույթի աճի շահերն առաջ քաշեցին սեփական տեխնիկական կադրերի պատրաստման անհրաժեշտությունը։ Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում սովորելու են մտնում մեծ թվով կովկասցիներ, մասնավորապես XIX դարի վերջին տասնամյակում։ ԵԹԿ 1880—1890 թվականներին այնտեղ սովորում էր 9 հայ, ապա 1890—1900 թվականներին կար 41, իսկ 1900—1912 թվականներին՝ 31։ Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի հայ ուսանողները 1892 թվականին հիմնում են «Սևան» հայրենակցական միությունը, որի կազմում էին Վաչյանը (նախագահ), Զաբյանը (փոխ-նախագահ), Մեժլումյանը (քարտուղար), Կիսայանը (գանձապահ), Ս. Ոսկանյանը, Ա. Ներսիսյանը, Վ. Արությանը, Ս. Բաշինջաղյանը, Մարգարյանը, Տեր-Հովհաննիսյանը, Ա. Քուշբելյանը և Կ. Մարգսյանը[68]։ 1896 թվականին «Սևանը» համալրվում է նոր ուսանողներով, որոնց թիվը հասնում է 23-ի։ 1898 թվականին, Պետերբուրգում մի կարճ ժամանակ անցկացնելուց հետո, Ս. Շահումյանը մեկնում է Ռիգա և ընդունվում պոլիտեխնիկական ինստիտուտը, ուր Ա. Աղելյանի (Դանիելյանի), Ն. Փիրումյանի և այլոց հետ մի քանի «Սևան» միության ներսում հիմք է դնում «Թեորետիկ» մարքսիստական խմբակին։ «Թեորետիկ»-ը հայ ուսանողների մարքսիստական անդրանիկ խմբակներից է, լենինյան իսկրայական ուղղություն կրողը։ Նրա անդամները ծանոթացան հեղափոխական մարքսիզմի, գիտական սոցիալիզմի սկզբունքներին, առաջնորդվեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով։ Նրանում կատարած արդյունավետ աշխատանքը նկատի ունենալով, Ստ. Շահումյանը 1900 թվականի օգոստոսի 2-ին Ռիգայից իր հարազատներին գրել է. «Ես, բացի պոլիտեխնիկումի համար պատրաստվելուց, պարապում եմ ուրիշ առարկաներով։ Հիմնավոր կերպով ծանոթացա բանվորական շարժման հետ, այն հասարակական շարժման հետ, որը կրում է սոցիալիզմ անունը»[69]։

---

68 Տե՛ս Ս. Դանիելյան, Ադարիա Աղելյան, Երևան, 1964, էջ 23։

69 Ստ. Շահումյան, Նամակներ, Երևան, 1959, էջ 250։

Սովորելու հետ միասին, նեսավելով հեղափոխական պայքարի հորձանուտը, Ստ. Շահումյանը 1900 թվականին դառնում է Ռիգայի իսկրայական կազմակերպության ակտիվ աշխատող[70]: «Ոչ միայն հայ, այլև մյուս ազգություններին պատկանող ուսանողների շրջանում տարվող մարքսիստական աշխատանքի հոգին Ստ. Շահումյանն էր»[71],— այսպես է գրել իր հուշերում Ն. Փիրումյանը: Ռուսական հեղափոխական միջավայրը վերջնականապես որոշում է Շահումյանի կյանքի ուղին: Նա, զինված մարքսիստական աշխարհայացքով, քաղաքական մկրտություն է ստանում, իր իսկ խոստովանությամբ «...ռուսաց նորագույն հեղափոխական ավազանում»: «Թեորետիկը» բացի համառուսական հեղափոխական կյանքի հարցերից, զբաղվում էր նաև հայ ժողովրդի ազատագրական պայքարի խնդիրներով: «Հավաքելով խմբակի անդամներին,— գրել է Լ. Ֆլաունը,— Շահումյանն առաջարկում է կոչ հրատարակել՝ ուղղված հայ ժողովրդին, շարադրելով իրենց հայացքները հեղափոխական շարժման նկատմամբ, կոչելով ժողովրդին մասնակցել այդ շարժմանը: Այդ կոչը տպագրվեց հեկտոգրաֆի վրա և խմբակի անդամների միջոցով տարածվեց հայրենիքում»[72]:

1901—1902 թվականներին Ստ. Շահումյանը մասնակցում է Ռուսաստանի հեղափոխական ուսանողների շարժումներին ու համագումարներին: 1902 թվականի փետրվարին նա, որպես Ռիգայի ուսանողության պատգամավոր, մասնակցելով Պետերբուրգում գումարված ուսանողության համառուսական առաջին համագումարին, հանդես է գալիս փայլուն ճառով, ուր հայտարարում է, թե՝ անիրագործելի են բոլոր տեսակի վառ ձգտումները, համալսարանական ապատությունները «...մինչև որ չիսրատակվի քաղաքական գլխավոր խոչընդոտը, այն է՝ ցարիզմը»[73]: Վերադառնալով համագումարից, Ստ. Շահումյանը փետրվարի 11-ին մի քանի այլ ուսանողների հետ միասին գլխավորում է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում բռնկված ուսանողական խոշոր գործադուլը, որի պատճառով էլ նրան հեռացնում են ինստիտուտից և վար-

---

70 См. История Латвийской ССР, том II, Рига, 1964, էջ 265:

71 Տե՛ս ՍՄԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7:

72 Լ. Ֆլաուն, Ստեփան Շահումյանի Ռիգայի շրջանի կյանքի մասին:

73 Տե՛ս Ա.ր. Մե-ն [Արշավիր Մելիքյան], Հիշողություններ Ստ. Շահումյանի մասին, «Նոր աշխարհ», № 2, սեպտեմբեր, 1922, Թիֆլիս, էջ 155:

չական կարգով արտաքսում Թիֆլիս[74]: Այնտեղ նա ներգրավվում է լենինյան խակրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության մեջ, դառնում նրա ճանաչված գործավարներից մեկը:

Մարքսիզմի զարգացման լենինյան էտապի սկզբնաշրջանում հայ իրականության մեջ սոցիալիստական գաղափարների տարածման ու պրոպագանդման գործում աչքի ընկնող դեր է խաղացել Սուրեն Սպանդարյանը (1882—1916): 1894 թվականին նա ընդունվում է Թիֆլիսի երրորդ արական գիմնազիան, որտեղ սովորում է մինչև 1902 թվականը: Ինչպես գրրոցում, այնպես էլ պարապմունքներից դուրս Ս. Սպանդարյանը եռանդուն կերպով զբաղվում է ընթերցանությամբ, մեծ հետաքրքրություն հանդես բերում դեպի հասարակագիտական առարկաները, ջանասիրությամբ ուսումնասիրում բանվորական հեղափոխական շարժումների պատմությունը: Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորական հեղափոխական շարժումների և մարքսիստական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ազդեցության տակ ձևավորվում է Ս. Սպանդարյանի մարքսիստական աշխարհայացքը: Գիմնազիայի բարձր դասարաններում սովորելու տարիներին նա կապվում է երկրամասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ, կարդում մարքսիստական գրականություն, լենինյան «Իսկրա»-ն: 1901 թվականին Ս. Սպանդարյանը մտնում է ՌՍԴԲԿ շարքերը, դառնում Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ակտիվ անդամներից մեկը: Ավարտելով գիմնազիան, 1902 թվականին նա մեկնում է Մոսկվա՝ ուսումը շարունակելու: Նա ընդունվում է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը: Համալսարանում նյութական ծանր պայմանների մեջ էր գտնվում Սուրեն Սպանդարյանը: Նրա դրությունը էլ ավելի ծանրացավ, երբ 1904 թվականին ցարական գործակալները ձերբակալեցին հորը՝ Սպանդար Սպանդարյանին, փակելով նրա խմբագրությամբ հրատարակվող «Նոր-Դար» թերթը: Թեև հայր ու որդի գաղափարական հարցերում ունեին խոր տարաձայնություններ և կանգնած էին երկու հակառակ բևեռներում, բայց իբրև հա-

---

[74] Փաստերը քաղված են Я. Клявин, С. Г. Шаумян в Риге (см. Архив Армянского филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 7, д. 259; Сур. Шаумян, Степан Шаумян, Биографический очерк, Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, дело С. Г. Шаумяна; История Латвийской ССР, том 2, Рига, 1954 и др.

բաղատներ փոխադարձաբար սիրում և հարգում էին իրար[75]։ Հայրը հպարտանում էր որդու հաջողություններով, իսկ վերջինս ամեն կերպ օգնում էր պահպանողական հորը, որպեսզի ճիշտ կողմնորոշվի։ Մոսկվայում Ս. Սպանդարյանին օգնում էին համալսարանական ռուս ընկերները։ «Շատ շնորհակալություն ռուս հասարակայնությանը և ռուս մասավորականությանը, որոնք ինձ օգնեցին և ինձ պաշտպանեցին»[76],— 1904 թ. նոյեմբերին Սուրենը գրել է իր հորը։ Մի այլ նամակում նա գրել է. «Ապրում եմ... ռուս ընկերների օգնությամբ»։ Մոսկվայում Ս. Սպանդարյանը շատ շուտ կապեր հաստատեց սոցիալ-դեմոկրատական գաղտնի խմբակների հետ, ջանասիրությամբ ուսումնասիրեց Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունները։ Մոսկվայում անցկացրած տարիները բախտորոշ նշանակություն ունեցան Ս. Սպանդարյանի կյանքում նրա գաղափարական կոփվածքի համար։ Լենինի հեղափոխական հանճարը Ս. Սպանդարյանի համար դարձավ ուղեցույց աստղ։ ՌՍԴԲԿ II համագումարից հետո նա անվերապահ կերպով հարեց բոլշևիզմին։

Դարասկզբին մարքսիստական խմբակներ են ստեղծվում նաև Ռուսաստանի և Եվրոպայի քաղաքների բարձրագույն դպրոցներում սովորող հայ ուսանողության մեջ։ Հատկապես ուժեղ էին Մոսկվայի, Պետերբուրգի, Կիևի, Խարկովի, Ռիգայի, Տոմսկի, Ժնևի, Բեռլինի և այլ քաղաքների հայ ուսանողության խմբակները։ Մարքսիստական այդ խմբակները, մեծ մասամբ ստեղծվելով հայրենակցական միությունների շրջանակներում, ձգտում էին երիտասարդությանն ազատել ազգայնական կուսակցությունների ազդեցությունից, նրանց ջանքերը նպատակամղել ինտերնացիոնալիզմի գաղափարների պրոպագանդմանը, պրոլետարիատի ազատագրական պայքարի կազմակերպմանը։ Կիևում կազմակերպված

---

75 Այդ են վկայում նրանց նամակները, նյութերը։ Դրա մասին իրազեկ էր նաև Վ. Ի. Լենինը։ Արտասահմանում Սուրենի խնդրանքով Իլյիչը նյութական և բարոյական օգնություն է ցույց տվել Սպանդար Սպանդարյանին։ 1921 թ. Վ. Ի. Լենինը Փարիզից ստանալով վերջինիս նամակը նոր աջակցություն ստանալու մասին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությանը գրել է, որ «Ես և կուսակցության կենտրոնի բոլոր աշխատողները 1908—1909 թվականներին լավ դիտեինք Սուրեն Սպանդարյանին։ Շատ արժեքավոր և նշանավոր աշխատող էր...»։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ 200 ռուբլի (ոսկով) փող է ուղարկվում Փարիզ, Սպ. Սպանդարյանին։ (См. В. И. Ленин, Полное собрание сочинений, 5 издание, том 52, էջ 271—272)։

76 ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մ.Լ.Ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 6, դ. 23։

հայ ուսանողների մարքսիստական խմբակը, որի կազմում էին Լյուդվիգ Կնունյանցը, Ալեքսանդր Բեկզադյանը և Լևոն Ավետիսյանը, 1901—1902 թվականներին կապված էր ոչ միայն Ուկրաինայի, այլև Անդրկովկասի բանվորական շարժումների հետ: Ալ. Բեկզադյանը ղեկավար դեր է կատարել Կիևի, ինչպես և Անդրկովկասի աշակերտական հեղափոխական խմբակների կազմակերպման և ղեկավարման գործում:

Կիևի հայ սոցիալ-դեմոկրատ ուսանողների խմբակի անդամների մի մասը հեղափոխական գործունեության համար արտաքսվելով Կովկաս, շարունակում է աշխատանքը բանվորների մեջ: 1902 թվականի հոկտեմբերի 25-ին նրանք հրատարակեցին ծրագրային մի փաստաթուղթ, դեկլարացիա, որի մեջ ցույց էին տրված Կովկասի սոցիալիստական շարժման առաջին հաջողությունները և ընդգծված էր պրոլետարիատի առաջատար դերը հեղափոխության մեջ: Խոսելով հայ պրոլետարիատի գործունեության մասին, դեկլարացիայում ասվում է, թե նա ևս դարս է եկել հեղափոխական կռվի փշոտ ճանապարհը և հանդես է գալիս «դրոշակակրի դերում՝ ձեռք-ձեռքի տված ռուս, վրացի և հրեա պրոլետարիատի հետ»: Դեկլարացիան, որն իր վրա մեծապես կրում էր Լենինյան «Իսկրա»-ի գաղափարական ազդեցությունը, ընդգծում էր, թե սոցիալ-դեմոկրատիան իր համարձակ գործողություններով ժողովրդական մասսաների մեջ ցանում է սոցիալիզմի և բազմաբնական ազատության սերմերը «և չկա այն ուժը, որը կարողանար կանգնեցնել այդ կենտրոն ժողովրդական շարժման ընթացքը»:

Խարկովում 1899—1900 թվականներին իրենց հեղափոխական գործունեությամբ աչքի էին ընկնում Արշավիր Մելիքյանը և Հակոբ Զարգարյանը: 1899 թ. Խարկովի ուսանողական ցույցերին ակտիվորեն մասնակցելու համար Հակոբ Զարգարյանը հեռացվում է տեխնոլոգիական ինստիտուտի 5-րդ կուրսից, ձերբակալվում և ուղարկվում Մեռելի բանտը[77]: Իսկ 1901 թվականից ՌՍԴԲԿ անդամ Արշավիր Մելիքյանը 1902 թվականին մասնակցում է առաջավոր ուսանողների համառուսաստանյան համագումարին, ինչպես նաև Խարկովի ուսանողական ցույցերին, որի հա-

---

[77] См. Архив Грузинского филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 31, д. 23, л. 82, ЦГИА Украин. ССР (г. Киев). ф. 385, оп. 1, д. 454, ф. 275, оп. 1, ед. хр. 26, ф. 313, оп. 2, д. 340, ф 317, оп. 1, д. 3519, ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 124, оп 2, д. 153, ф. 72, оп. 3, д.. 850.

Ռիզայի Սա. Շահումյանի դարբնիստական «Թեոբեսիկ» խմբակի անդամները:

Սիմոն Տեր-Պետրոսյան (Կամո)

Բանվոր հեղափոխականներ.— Մելիք Մելիքյանց (Դեղուշկա), Աստուր Կալֆայան (Բանվոր խեչո), Պողոս Փիլոյան (Հայկ Արամյան):

Ջալալօղլու Ստ. Շահուհյանի մարքսիստական խմբակի անդամները:



«Հայ սոցիալ-դեմոկրատների միության» անդամները:

Манифест союза армян-соціаль-демократов.

Предпринимая изданіе настоящаго соц.-демок. органа, считаем необходимым выяснить нашим читателям тѣ тезисы, которые будут служить основаніем нашей программы. Наш союз входит в состав Р. С.-Д. Р. П., которая раскинула свои сѣти вовсѣ отдаленнѣйшіе уголки Р. Имперіи, вполнѣ солидарен с нею и с нею только будет бороться во имя интересов россійскаго пролетаріата вообще и армянскаго в частности. Основные принципы нашей программы слѣдующіе:

Вслѣд за Россіей и Кавказ вступает на путь развитія капитализма; здѣсь, как и везде, магическая сила капитала проявляется въ характерных для нея формах. Капитал золотими потоками стекаетъ къ производству, наводняетъ города, гонитъ изъ деревень крестьянъ и собирает ихъ въ промышленных центрахъ. Низверглет доселѣ существующія мелкія производства, на ихъ развалинахъ воздвигает крупныя предпріятія и, таким образом, укрѣпляет основы своего будущаго развитія. Постепенно выдвигаются такіе крупные промышленные центры, как Баку, Батум и Тифлис. Город ~~превращается~~ отдѣляется отъ деревни. Город превращается исключи-

«Հայ սոցիալ-դեմոկրատների միության Մանիֆեստ»-ի առաջին էջը:

Գեորգի Սոկոլովսկի

Իվան Լիուպին



Մի էջ Կ. Մարքսի «Կապիտալ»-ի Ստ. Շահումյանի ուսումնասիրությունից:

մար նրան հեռացնում են ինստիտուտից։ Կովկաս վերադառնալով, նա 1903 թվականին մեկնում է Շվեյցարիա և շարունակում ուսումը։ Այստեղ նա հանդիպումներ է ունենում Վ. Ի. Լենինի հետ և մեծապես ազդեցություն կրում նրանից։

1902 թվականին «Կիևի հայ ուսանող սոցիալ-դեմոկրատները» միավորվում են լենինյան «Իսկրա»-ի դիրքերում կանգնած հայ ուսանողական մի այլ կազմակերպության՝ «Պրոլետարիատ»-ի հետ։ «Պրոլետարիատը» իր առջև խնդիր էր դրել հայ իրականության մեջ տարածել մարքսիզմի գաղափարները, Կովկասի հայ պրոլետարիատին մյուս ազգերի պրոլետարների հետ ձեռք-ձեռքի տված առաջնորդել դեպի քաղաքական պայքարի, այնպես անել, որպեսզի «Մեր ժողովուրդն էլ պատրաստ լինի մեծ հեղափոխության»։ «Պրոլետարիատը» ինտերնացիոնալիզմի ջատագովն էր[78]։ Ա. Բեկզադյանը, Ա. Մելիքյանը և նրանց մյուս համախոհները Կիևից, Խարկովից գալով Կովկաս օգնում էին տեղի սովորող երիտասարդությանը, տպագրում և տարածում խմբագրական թերթիկներ։

1901—1902 թվականներին սոցիալ-դեմոկրատական խմբակներ են ստեղծվում Բաքվի, Թիֆլիսի և Կովկասի այլ քաղաքների սովորող երիտասարդների շրջանում։ Բաքվի աշակերտական հեղափոխական խմբակներում աչքի էին ընկնում Փոռս Կնունյանցը, Եղոր Մամուլովը, Թևան Գրիգորյանը, Դավիթ Եղիազարյանը և ուրիշներ։ Նրանց մեծ օգնություն էին ցույց տալիս Պետերբուրգից արտաքսված Բոդգան, Լյուդվիգ, Տիգրան Կնունյանցները, Ելիզավետա Գոլիկովան (Բ. Կնունյանցի կինը)։ Բաքվի աշակերտական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գլխավոր մարմինը կապ էր հաստատել ոչ միայն քաղաքի, այլև նրանից դուրս երիտասարդական-մարքսիստական խմբակների հետ, հրատարակում էր հեղափոխական թռուցիկներ և կոչեր։ 1902 թվականի սկզբին Փ. Կնունյանցը գործուղվում է Թիֆլիս և Ա. Զուրաբյանի ու Ն. Աղաջանյանի (Ալաջալովա) օգնությամբ աշխատանք է կատարում երկրամասի հեղափոխական հայ ուսանող երիտասարդության միասնական կենտրոն ստեղծելու ուղղությամբ[79]։ «1902 թվականի գատկի արձակուրդների ժամանակ ինձ

---

[78] См. В. Аветисян, Об армяно-украинских связях... Сб. «Исторические связи и дружба...», Ер., 1961.

[79] См. Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 93, оп. 2, д. 760.

հանձնարարված էր ընկեր Յուրիի (Ալ. Բեկզադյանի) հետ միասին գրականություն տեղափոխելու համար մեկնել Թիֆլիս,— գրել է Փ. Կնունյանցը։—Հանապարհին ընկեր Յուրին ինձ պատմեց Կիևում ստեղծված հարավի աշակերտական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միության մասին, և մենք խոսեցինք այն մասին, թե չստեղծե՞նք արդյոք նույնպիսի մի միություն Անդրկովկասում։ Թիֆլիսում մենք գիշերեցինք Արշակ Զուրաբովի մոտ։ Այդ բնակարանում էր ապրում և Նինա Ալաջալովան։ Խոսելով Անդրկովկասում երիտասարդության մեջ ծավալված սոցիալ-դեմոկրատական շարժման մասին, մենք կանգ առանք Անդրկովկասի երիտասարդությանը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական աշակերտների մյուս միավորումների նման մի միության մեջ ձուլելու պլանի վրա։ Մեր առաջարկը հավանության արժանացավ։ Մյուս օրը ընկեր Զուրաբովի մոտ հրավիրվեց տեղի սոցիալ-դեմոկրատական խմբակներից գիմնազիստների մի խումբը։ Մեզնից բացի ներկա էր նաև Աշոտ Խումարյանը։ Որոշվեց, որ Թիֆլիսի գիմնազիստները միավորվեն Բաքվի կազմակերպության օրինակով և իրենց ներկայացուցիչն ուղարկեն Բաքու՝ մոտիկ ժամանակներս միությունը ձևավորելու համար։ Ընկ. Զուրաբովը խոստացավ ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հաշվին օգնել Թիֆլիսի պատգամավորներին՝ մեկնելու Բաքու։ Որոշվեց այդ մասին գրել Բաթումի ընկերներին»[80]։

1899 թվականի ամռանը Ստ. Շահումյանի ղեկավարությամբ Հայաստանի տերիտորիայում առաջին անգամ Ջալալօղլում կազմակերպվում է մարքսիստական խմբակ[81], որի կազմի մեջ մրտ-

---

80 Տե՛ս Մ. Ս. Բեկզադյան, Краткие сведения о тов. Бекзадяне Александре Артемовиче—«Юрий». անտիպ հուշերը, որը պահվում է ՍՄԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալում։ Քաղվածքն օգտագործված է Հ. Կարապետյանի «Դեպքեր և փաստեր Ալեքսանդր Բեկզադյանի կյանքից» հոդվածից։ Տե՛ս «Բաներեր Հայաստանի արխիվների», № 3, 1966, էջ 146։ Մի այլ փաստաթղթում Փ. Կնունյանցը այդ առթիվ գրել է. «1902 թվականի մարտին ես պատգամավոր էի ուղարկված Անդրկովկասի կենտրոնը՝ Թիֆլիսի աշակերտական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ բանակցելու՝ անդրկովկասյան աշակերտական սոցիալ-դեմոկրատական միացյալ կոմիտե ստեղծելու։ Մեր բանակցություններն այն ժամանակ ղեկավարել է Արշակ Զուրաբովը, մեզ ակտիվ օգնություն է ցույց տվել նաև այն ժամանակ տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ակտիվ աշխատող Նինա Ալաջալովան (см. Архив Груз. филиала ИМЛ, ф. 95, оп. 2, д. 760, л. 1—10).

81 См. «История Коммунистической партии Советского Союза», том первый, 1883—1903, М., 1965, էջ 564.

նում էին Աշոտ և Անուշավան Թումանյանները, Սերգո Իսրայելյանը, Միշա Անանյանը, Գերասիմ Մելիք-Գրիգորյանը, Արտուշ Հարությունյանը, Սեդրակ Հարությունյանը և ուրիշներ։ Բայի տեղի ընկերներից, Ջալալօղլու մարքսիստական խմբակի աշխատանքներին մասնակցում էին նաև Թիֆլիսում սովորող ջալալօղլցիներ Վասիլ Սիմոնյանը, Հակոբ Թադևոսյանը, Կարո Իսրայելյանը, Ռ. Դաշտոյանը և ուրիշներ։ Նկարագրելով խմբակի ձևավորման պատմությունը, Ա. Թումանյանը գրել է. «Հիշում եմ մեր առաջին պարապմունքը... Ստեփանն առաջինը խախտեց լռությունը։ Մենք այսօր հավաքվել ենք, ասաց նա, մեր պարապմունքի համար, որի մասին ես ձեզ խոստացել եմ դեռ անցյալ տարի։ Բայց սկսելուց առաջ եկեք որոշենք, թե ով ենք մենք և հատկապես ինչ ենք ուզում սովորել։ Ես կարծում եմ, որ լավ կլիներ, եթե առայժմ մենք հիմնենք ձեզանից կազմված մի խմբակ, որին և տանք «մարքսիստական խմբակ» անունը, ունենանք սիստեմատիկ պարապմունքներ, որպեսզի կարողանանք պարզ գաղափար կազմել Մարքսի ուսմունքի մասին»[82]։ Բոլորը միահամուռ հավանություն են տալիս Շահումյանի առաջարկությանը... Ջալալօղլու Շահումյանի մարքսիստական խմբակը կազմված էր։ Շահումյանը պարապմունքներից մեկում խոսում է ուտոպիական սոցիալիզմի մասին, մասնավորապես Շ. Ֆուրիեի և ապա տալիս գիտական սոցիալիզմի համառոտ պատմությունը։ Այդ ամռանը Շահումյանը գիտական սոցիալիզմի մասին խմբակում կարդում է մի շարք ծրագրային դասախոսություններ։ Խմբակի պարապմունքները շարունակվում են նաև 1900 թվականին։ Շահումյանը խմբակի անդամներին ծանոթացնում էր Կ. Մարքսի «Կապիտալ»-ին, պարզաբանում մարքսիզմի էությունը։ Խմբակը ձեռք էր բերել հեկտոգրաֆ և բազմացնում էր հեղափոխական թռուցիկներ, կոչեր, պրոպագանդիստական աշխատանք էր կատարում Լոռու աշխատավորության մեջ։ «Ստեփանը,— գրել է Անուշավան Թումանյանը,— կարողանում էր գունեղ դարձնել իր պատմածը։ Նա, դեռևս բոլորովին երիտասարդ, շատ շնորհալի հռետոր էր և չափազանց հուզիչ խոսք ուներ»[83]։ Ջալալօղլու մարքսիստական խմբակը, Ա. Միկոյանի բնութագրությամբ, կարևոր էտապ հանդի-

---

82 Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք Ա, էջ 39։

83 Տե՛ս նույն տեղում, էջ 39։

սացավ Հայաստանում մարքսիզմի տարածման գործում»[84]։ 1902 թվականին Ս. Շահումյանը, մեկնելով արտասահման և սովորելով Բեռլինի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետում, շարունակում է հեղափոխական գործունեությունը։ Նա ղեկավարում էր Բեռլինի և Լայպցիգի լենինյան-իսկրայական ուսանողների մարքսիստական խմբակները, գլխավորում «Եվրոպայի հայ ուսանողների միության» ազգայնական տարրերի դեմ մղվող պայքարը։ Նրա եռանդուն ջանքերով «Եվրոպայի հայ ուսանողների միության» մեջ ստիպողաբար ուժեղանում է լենինյանների ազդեցությունը, արհվում է միությունը և նրա անդամների մի մասը անցնում է սոցիալ-դեմոկրատիայի կողմը։ «Կովկասի սոցիալ-դեմոկրատների փոքրաթիվ խումբը,— գրել է Ս. Շահումյանի այդ տարիների դասընկերներից Մ. Մանուչարյանը,— ի դեմ Ստեփանի, ճանաչեց իր առաջնորդին և լիդերին, ճանաչեց անձայն և անդարձ կերպով»[85]։

6

ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի և այլ կոմիտեների ջանքերով Հայաստանում լենինյան գաղափարների տարածումը նկատելի թափ ստացավ։ Նրանց օգնությամբ 1901—1903 թվականներին մարքսիստական խմբակներ, լենինյան-իսկրայական կազմակերպություններ են ստեղծվում Ալավերդում, Հաղպատում, Երևանում, Սանահին, Ուլուխանլու կայարաններում, Ալեքսանդրապոլի կայազորում և Հայաստանում գտնվող այլ զորամասերում։

Հայաստանում լենինյան-իսկրայական առաջին կազմակերպություններից մեկը 1901 թվականին հիմնադրվեց Ուլուխանլու—Երևան տեղամասում։ Նրա անդամները հիմնականում երկաթուղայիններ էին՝ դծայիններ, սլաքավարներ, շոգեքարշայիններ, որոնք կապված էին Անդրկովկասի գլխավոր երկաթուղու արհեստանոցների և Թիֆլիսի դեպոյի առաջավոր բանվորների, ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հետ։ 1901 թվականի վերջերին սոցիալ-դեմոկրատական, լենինյան-իսկրայական խմբակ է ստեղծվում Երևա-

---

84 Տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, Ջալալօղլու մարքսիստական խմբակի 65-ամյակի առթիվ, Ա. Միկոյանի 1965 թվականի հունվարի հեռագիրը ՀԿԿ Ստեփանավանի շրջկոմին։

85 Чар [М. Манучарян] Степан за границе. «Бакинский рабочий», № 211 (643), 20 сентября 1922 г.

նում: Հետագայում սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ ստեղծվեցին քաղաքային արական գիմնազիայի և թեմական դպրոցների սովորողների մեջ, իգական գիմնազիայի ուսուցիչների շրջանում, փոստա-հեռագրական գրասենյակում:

Ալեքսանդրապոլում 1901—1902 թվականներին կազմակերպված խմբակներում մեծ մասամբ երկաթուղայիններ էին ընդգրկված: Մի կողմից՝ քաղաքի պրոլետարական կորիզը, մյուս կողմից՝ այստեղ տարաբաշխված հեղափոխականները, որոնք գտնվում էին մեծ մասամբ կայազորում, ծավալում են մարքսիզմի գաղափարների տարածումը, միավորվում սոցիալ-դեմոկրատական խմբակներում: Բացի քաղաքում ստեղծված խմբակից, կար նաև երկաթուղայինների խմբակ, 1902 թվականին կազմակերպվում է կայազորի սոցիալ-դեմոկրատական խմբակը, որն իրեն անվանում էր «Սոցիալ-դեմոկրատական խմբի Ալեքսանդրապոլի բաժանմունք»: Վերջինս ուներ գաղտնի գրադարան, որը գրքեր էր ստանում ՌՍԴԲԿ Թիֆլիսի և այլ կոմիտեներից: Խմբակի անդամները հեղափոխական և քաղաքական ագիտացիա էին մղում զինվորների և կրասեր հրամանատարների մեջ [86]:

7

Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները կապված էին Բաքվի և Թիֆլիսի իսկրայական կոմիտեների հետ: Նրանք լենինյան «Իսկրա»-ն և նրա հրատարակությունները ստանում էին ոչ միայն Ռուսաստանի քաղաքներից, Բաքվի «Նինա» տպարանից, այլև անմիջականորեն արտասահմանից, հատկապես Ավստրիայի սոցիալ-դեմոկրատական գրականության առարման կետից:

«Իսկրա»-ն Ռուսաստան էր բերվում կոնսպիրատիվ միջոցներով՝ Ռումինիայի, Պարսկաստանի, Ալեքսանդրիայի, Արխանգելսկի, Ֆինլանդիայի վրայով: Պարսկաստանի վրայով «Իսկրա»-ի առաքումը Բաքվի իսկրայականները կազմակերպել էին դեռևս 1901 թվականից սկսած: Այդ թվականներին նրանք ստացան կուսակցական գրականության չորս կապոց, այդ թվում՝ «Իսկրա» թերթը, «Ջարյա» ժուռնալը, Ն. Կ. Կրուպսկայայի «Աշխատավորուհի կին», «Մայիսյան օրերը Խարկովում» բրոշյուրը՝ Վ. Ի.

86 См. ЦГИА Груз. ССР, ф. 23, д. 19, лл. 12—13.

Լենինի առաջաբանով[87] և այլ աշխատություններ[88]։ 1901 թվականի հունիսին Վ. Ի. Լենինը Մյունխենից Բաքու ուղարկած կիսածածկագիր նամակներից մեկում գրել է. «Իսկրան» Կովկասում տպագրելու վերաբերյալ մենք արդեն մանրամասն հարցում ենք ուղարկել X (խոսքը Լ. Մ. Կնիպովիչին ուղարկած հարցման մասին է — Խ. Բ.) և դեռ պատասխան չունենք... Սև ծովի արևելյան ափի վերաբերյալ անպայման ուղիներ որոնեցեք։ Հատկապես ուշադրություն ուղղեցեք ֆրանսիական շոգենավերի վրա — մենք հույս ունենք գեպի նրանք մուտք գտնել այստեղից»[89]։ Մինչև 1902 թվականի հունվարը Բաքվի «Նինա» տպարանում Վ. Ի. Լենինի ցուցումներով Լ. Կեցխովելու ղեկավարությամբ կազմակերպվում է «Իսկրա»-ի և նրա հրատարակությամբ լույս տեսած մի շարք կոչերի ու բրոշյուրների արտատպումը։ «Նինա» ընդհատակյա տպարանում տպագրվել են Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել», «Գյուղական չքավորությանը», «Հեղափոխական երիտասարդության խնդիրները», Ս. Դիկշտեյնի «Ո՞վ ինչով է ապրում» (այս բրոշյուրը թարգմանվել և տպագրվել էր նաև վրացերեն, հայերեն), Վ. Լիբկնեխտի «Սարդերը և ճանճերը», ինչպես նաև «Մարդասիրության գործադուլի տասնամյակը», «Պյոտր Ալեքսեևի ճառը» և այլ աշխատություններ։

«Իսկրա»-ն և նրա հրատարակությունները Անդրկովկաս են տարվել նաև Ամստերդամի վրայով։

1902 թվականի օգոստոսին Ելենովկայի փոստ-հեռագրատան բաժանմունքում բռնվել է Նոր Բայազետի գավառի Ելենովկա գյուղի բնակիչ Տիմոֆեյ Աֆոնինի անունով արտասահմանից ուղարկված ծրարը, որի մեջ էր լենինյան «Իսկրա»-ի հրատարակությամբ լույս տեսած «Զինվորի հուշագիրը» խորագրով բրոշյուրը։ Նույն թվականի սեպտեմբերի 29-ին Ելենովկայում բռնագրավվում է արտասահմանից Ելենովկա գյուղի բնակիչ Իվան Նեխորոշոյի հասցեով ուղարկված հեղափոխական գրականությունը, որի մեջ էին «Ռուս ջուլհակ Պյոտր Ալեքսեևիչ Ալեքսեև» և «Թե ինչպես տերտերները ժողովրդին սարկացրին Քրիստոսի ուսմունքով» բրոշյուրները[90]։

---

87 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 458—469։

88 См. Ленинский сборник, том VIII, М., էջ 145.

89 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 68—69։

90 ЦГИА Груз. ССР, ф. 39, д. 556, л. 1.

1901—1903 թվականներին լենինյան «Իսկրա»-ն և նրա հրատարակությունները ստացվել և տարածվել են Երևանում, Ալեքսանդրապոլում (Լենինական), Ջալալօղլում (Ստեփանավան), Կարսում և այլ վայրերում: Դրանում մեծ դեր են խաղացել ինչպես տեղական, այնպես էլ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները: Ջալալօղլում «Իսկրա»-ն, իսկ հետագայում «Վպերյոդ», «Պրոլետարի» թերթերն ու հեղափոխական գրականությունը ստացվել է Արոն Իսահակյանի (Իսակով) հաստեղով:

Միայն 1903 թվականի փետրվար-մայիս ամիսներին Երևան քաղաքի բնակիչ Նատալյա Ֆեոդորովնա Պետրովայի (հավանաբար Երևանի ռուսական գիմնազիայի ուսուցչուհի) հաստեղով Ավստրիայից ստացվել են «Իսկրա»-ի 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37 համարներից մի շարք օրինակներ:

1903 թվականի փետրվարի 11-ին Ն. Պետրովայի հաստեղով Ավստրիայից ստացված ծրարի մեջ եղել է «Իսկրա»-ի 32, մարտի 2-ին՝ 33, իսկ մայիսի 27-ին՝ 35, 36 և 37 համարներից մի քանի օրինակ[91]:

Իհարկե այս տեղեկությունները վերաբերում են Հայաստան առաքված «Իսկրա»-ի այն համարներին, որոնք հայտնաբերվել են փոստ-հեռագրատանը: Թերթի բոլոր համարները չէ, որ հայտաբերվել են ցարական գործակալների կողմից, ուստի և հասել են սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին:

ՌՍԴԲԿ Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Բորչալուի և Հայաստանի գինվորական մասերի բոլշևիկյան կազմակերպությունների անլեգալ գրադարաններում պահվող մարքսիստական գրականության մեջ եղել է նաև «Իսկրա»-ն: 1905 թվականի ապրիլին ցարական ոստիկանության կողմից հայտաբերված ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի գինվորական կազմակերպության անլեգալ գրադարանում, բացի «Իսկրա»-ից կային նրա հրատարակությունները՝ «Զինվորի հուշագիրը», «Գոլդբլատի ճառը», «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը», «Ով պետք է հաղթի» և այլ գործեր[92]: 1906 թվականի գարնանը Մ. Միրաքյանը ՌՍԴԲԿ Հայաստանի կազմակերպությունների համար փոխադրում է 62 օրինակ բոլ-

---

91 См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 25, оп. 20, д. 34403. Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 122, գ. 3, թթ. 53, 59, 62, 69, 71։

92 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 169։

շևիկյան ու այլ թերթեր և մի քանի հազար օրինակ հեղափոխական բրոշյուրներ, այդ թվում՝ Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխությունում», Ֆ. Էնգելսի «Գյուղացիական հարցը Ֆրանսիայում և Գերմանիայում», Ի. Վ. Ստալինի «Երկու գոտեմարտը», ՌՍԴԲԿ ծրագիրը և ՌՍԴԲԿ III համագումարի ծանուցումը [93]։

Լենինյան «Իսկրա»-ն լայնորեն լուսաբանել է Անդրկովկասի հեղափոխական իրադարձությունները, մեծ տեղ ավել բանվորական հեղափոխական շարժումներին։ Հայաստան տարված «Իսկրա»-ի համարներում հարուստ նյութեր կային ոչ միայն Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի պրոլետարիատի գործողությունների մասին, այլև ցարիզմի դեմ Հայաստանի աշխատավորության մղած պայքարի, ՌՍԴԲԿ տեղական կազմակերպությունների աշխատանքի վերաբերյալ։ «Իսկրա»-ի մոտ 34 համարներում ավելի քան 70 հոդված, թղթակցություն, նամակ, ինֆորմացիա կա Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությանը և հեղափոխական շարժումներին նվիրված։ Թերթի առանձին համարներում (№№ 37 և 40) Կովկասից տպագրված է 5—6 թղթակցություն։ Թիֆլիսի բանվորների 1901 թվականի մայիսմեկյան ցույցը «Իսկրա»-ն դնահատել է որպես պատմական նշանակություն ունեցող իրադարձություն Կովկասի համար։ 1902 թվականին Բաքվի բանվորները «Իսկրա»-ի 22-րդ համարում գրել են. «Մենք՝ Բաքվի բանվորներս, մյուս քաղաքների բանվորներից ետ չմնալու համար, միասին որոշեցինք առաջին քայլը կատարել սուրբ գործի համար... Մենք հիշում ենք գեկաբրիստների պատասխանը Պուշկինին՝ «Կայծից բոց կբռնկի...», սակայն ուժեղ բոց բորբոքելու համար պետք է կայծերը տարածել ամբողջ քաղաքով մեկ, որպեսզի մեծ հրդեհ առաջանա։ «Իսկրա»-ի 1903 թվականի օգոստոսի 1-ի համարում «Հայ բանվոր» ստորագրությամբ լույս է տեսել Արտյոմ Տեր-Հարությունյանի Թիֆլիսից ուղարկած նամակ-թղթակցությունը։ Նրանում հեղինակը պատմում է Երկրամասի հեղափոխական շարժումների, ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի գործունեությանն ակտիվ մասնակցություն ունենալու համար ցարական գործակալների կողմից ձերբակալված Գևորգ Ղարաջյանին և Գևորգ Վարդոյանին Արևելյան Սիբիր արտաքսելու կապակցությամբ

---

93 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 18, գ. 2։

կազմակերպված աշխատավորական ցույցի մասին: Գ. Ղարաջյանը, լինելով Թիֆլիսի կոմիտեի պրոպագանդիստներից, քաղաքական-մասսայական աշխատանք էր կատարում բանվորների շրջանում: Սերտ շփման մեջ գտնվելով ինչպես ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի անդամների, այնպես էլ Կովկաս արտաքսված ռուս մարքսիստների (Վ. Կուռնատովսկի, Գ. Ֆրանչեսկի, Ս. Ալիլուև և ուրիշներ) հետ, նա, միաժամանակ, օգնել է սոցիալիստական գրականության թարգմանության ու հրատարակության գործին: Գ. Ղարաջյանը, հեղափոխական աշխատանքի ներգրավելով ուսուցչական ինստիտուտի ուսանող քսաներեքամյա Գեորգ Վարդոյանին *, նրա մոտ պահվում էին մարքսիստական արգելված գրքեր, թերթեր, ընդհատակյա հրատարակության պատրաստվող թռուցիկներ, բրոշյուրների տեքստեր և այլ նյութեր: Այսպես, օրինակ, 1902 թվականի փետրվարի 4-ին ոստիկանությունը Գ. Վարդոյանի մոտ հայտնաբերել է «Իսկրա» և «Բրձոլա» թերթերի մի քանի համարներ, հեղափոխական գրականություն, հայերեն ձեռագիր կոչերի և հոդվածների տեքստեր: Արժեքավոր է «Սոցիալիստական ուսմունքը» ծավալուն նյութը, որը տոգորված է «Կապիտալ»-ի և «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի ոգով և հարց ու պատասխանի ձևով պարզաբանում էր գիտական սոցիալիզմի սկզբունքները: «Ի՞նչ բան է սոցիալիստական հասարակարգը», «Ո՞րն է սոցիալիստական հասարակարգի նպատակը», «Ի՞նչ է կապիտալը», «Ինչո՞ւ հողը պետք է պատկանի հասարակությանը», «Ի՞նչ է ցանկանում հեղափոխական սոցիալիզմը», «Ինչո՞ւ ընդերքը պետք է պատկանի հասարակությանը», «Աշխատանքի արտադրողականության համար ի՞նչ է հարկավոր»,— ահա այս և նման շուրջ 41 հարցեր էր առաջադրվում և մարքսիստական լուծում տրվում այդ հոդվածում: Հայտնաբերված նյութերի մեջ էր «Ալեքսանովի բանվորների պահանջները», «Մայիսի մեկը» թռուցիկները և այլն [101]:

«Իսկրա»-ն և նրա հրատարակությունները, որ ժամանակին առաքվել են Հայաստան, անգնահատելի դեր են խաղացել հայ

---

* Գ. Վարդոյանին գիտեր նաև Վ. Կուռնատովսկին։ 1911 թ. ապրիլի 4-ին Գ. Ղարաջյանին գրած նամակում նա խնդրել է բարևել Գ. Վարդոյանին։ Տե՛ս Մի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 51, գ. 16, թ. 2։

[101] ЦГИАМ ф. ДП-7, 1901, д. 625, л. 6—8. ЦГИАМ ф. ДП-7, 190?, д. 175, лл. 63—72. Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 31, д. 23, л. 40—52, д. 30, л. 98—108.

աշխատավորության մեջ մարքս-լենինյան գաղափարների տարածման, լենինյան-իսկրայական ուղղության սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ձևավորման գործում։

Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետը այդ ժամանակ հաճախ էր անհանգստացած հաղորդում Թիֆլիս՝ իր շեֆերին, թե Երևանի նահանգի և Կարսի բնակչության մեջ «...հաճախակի են երևան գալիս սոցիալ-դեմոկրատական հեղափոխական գաղափարներ պարունակող թերթեր, բրոշյուրներ»[102]։

8

Հայաստանում հեղափոխական մարքսիզմի գաղափարների լայն տարածումն իսկական առումով իրականացվել է մարքսիզմի զարգացման լենինյան էտապում։ Հայ հասարակական կյանքի ու մտքի զարգացման մեջ նշանավորված այդ շրջադարձային պահին պատմության հորիզոնում երևացին Իսահակ Լալայանցը, Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը և ուրիշ հայ մարքսիստներ, որոնք հաստատուն կերպով կանգնեցին համառուսական պրոլետարիատի հեղափոխական-ինտերնացիոնալիստական պայքարի ուղու վրա, իրենց կյանքը սերտորեն կապեցին բանվոր դասակարգի ազատագրման մեծ գործին*։

1902 թվականի ամռանը Թիֆլիսում Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի և Ա. Զուրաբյանի նախաձեռնությամբ ձևավորվում է լենինյան-իսկրայական ուղղության՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը»։ Միության ղեկավարության մեջ, բացի նրա նախաձեռնողներից, մտնում էին նաև Մելիք Մելիքյանը, Աշոտ Խումարյանը, Սերգո Խանոյանը, Ռուբեն Դաշտոյանը, Դանուշ Շահվերդյանը, Արամայիս Երզնկյանը։ Լինելով ՌՍԴԲԿ անդամներ, նրանք պատմական այդ ժամանակաշրջանում միանգամայն ճիշտ ըմբռնելով իրենց առաջադիր խնդիրը, հայ պրոլետարիատի շարքերում մայրենի լեզվով տարածում էին մարքսիստական-լենինյան գաղափարները։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» գործում էր ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հետ սերտորեն

---

102 См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 25, оп. 20, д. 34403.

* Նկատի ունենալով, որ վերոհիշյալ ականավոր մարքսիստների կյանքը և հեղափոխական գործունեությունը լուսաբանված է սովետական պատմագիտության կողմից, ինչպես նաև մեր աշխատություններում, ուստի սույն մենագրության մեջ նրանց կենսագրությունների վրա չենք ծանրանում։

համագործակցած։ Միությունն իր կազմակերպական սկզբունքներով և գործունեությամբ հենվում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա, պրոպագանդում Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատի գաղափարական, քաղաքական և կազմակերպական միասնության անհրաժեշտությունը[103]։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» Թիֆլիսի կոմիտեի հետ միասին 1902 թվականի երկրորդ կեսին հաջողությամբ գլխավորեց Թիֆլիսի բանվորների քաղաքական ելույթները, հատկապես քաղաքի հինգ գլխավոր արհեստանոցներում զբաղված մոտ 130 հայ և վրացի բանվորների սեպտեմբերյան գործադուլը։ Բանվորները գործարանատերերին առաջադրեցին տնտեսական մի շարք պահանջներ։ 20 օր շարունակվող գործադուլի ընթացքում հայ, վրացի և այլազգի բանվորները ցուցաբերեցին մեծ միասնություն և համերաշխություն։ Ի վերջո տերերը զիջեցին և գործադուլավորների առջև տեղի տվեցին։ «Դերձակների գործադուլը ղեկավարում էին կուսակ-

---

103 Նույն ժամանակաշրջանում ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեին կից ձևավորվում է նաև «Վրաց սոցիալ-դեմոկրատների միությունը»։ «Բրձոլա» թերթի N 4-ում նշված է, որ թերթի հրատարակիչը «Վրաց սոցիալ-դեմոկրատների միությունն» է։ (Այդ մասին տես նաև Մվի Կենտրոնական կուսակցական արխիվ, ֆ. 64, ցուց. 1, գ. 169, թ. 177)։ Այդ նշանակում է, մինչև ՌՍԴԲԿ Կովկասյան միության հիմնադրումը (մարտ, 1903 թ.) ՌՍԴԲԿ Թիֆլիսի կազմակերպությունը բաղկացած էր հայ և վրաց սոցիալ-դեմոկրատների միություններից։ Չի բացառված, որ Թիֆլիսի այդ միությունները, որ շատ բանով հիշեցնում են ռուս բանվորների Հարավային և Հյուսիսային միություններին, դիտվել են որպես նախադրյալ Կովկասյան միության ստեղծման համար։ Բացի այդ, սկզբնական շրջանում ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն հանդիսացել է ոչ միայն Թիֆլիսի, այլև Անդրկովկասի երկաթուղային և արդյունաբերական այլ կենտրոնների սոցիալ-քաղաքական կյանքի կազմակերպող օրգան, քանի որ բացի Բաքվից և Բաթումից մյուս տեղերում տակավին չէին ձևավորվել տեղական կոմիտեները։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» վերաբերյալ սխալ մտքեր կան Ն. Ստուրուայի «Из истории борьбы за создание и упрочение большевистских организаций Закавказья (1883—1904)», (Тбилиси, 1956) աշխատության մեջ։ Նրանում հեղինակը գրել է, որ իբր թե Միության մեջ մտել են հայ նացիոնալիստական «Դաշնակցություն» և «Հնչակ» կուսակցություններից, որոնք կազմակերպությունը քաշել են դեպի բունդի դիրքերը (էջ 83)։

ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի և «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» սերտ կապերի վերաբերյալ արժեքավոր նյութեր կան Մվի Կենտրոնական կուսակցական արխիվում, ֆ. 24, ց. 1, գ. 57, 514, 903, 984 և այլն։ Արխիվային այդ նյութերից երևում է, որ Միությունը Թիֆլիսի և Բաթումի կոմիտեների միջոցով կապ է հաստատել Լենինյան «Իսկրա»-ի հետ և ստացել նրա հրատարակությունները։

ցության կոմիտեն (խոսքը ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի մասին է— Խ. Բ.) և կոմիտեի մեջ ավելի ուշ մտած հայկական սոցիալ-դեմոկրատների խումբը»,— 1903 թվականի հունվարին գրել է «Իսկրա»-ն[104]:

«Հայ սոցիալ-դեմոկրատների միության» գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում ընդհատակյա կուսակցական տպարանի ստեղծումը, հեղափոխական կոչերի, թռուցիկների տարածումը, Լենինյան իսկրայական ուղղության առաջին հայերեն թերթի հիմնադրումը:

9

Լենինյան «Իսկրա»-ի բեղմնավոր գործունեությամբ է պայմանավորված մարքսիստական հայ պարբերական մամուլի ծնունդը: 1902 թվականին Ստ. Շահումյանը, Ռիգայից գալով Թիֆլիս, տեղի մարքսիստների հետ միասին ձեռնարկում է հայերեն իսկրայական ուղղության թերթի հրատարակմանը: «Պետերբուրգի հայ ուսանողության մեջ,— գրել է Ա. Զուրաբյանը,— գոյություն ունեին միմիայն երկու մարքսիստ՝ հանգուցյալ Բոգդան Կնունյանց և ձեր խոնարհ ծառան: Ռիգայի ուսանողության մեջ կար մի մարքսիստ ևս, դա Ստեփան Շահումյանն էր: Ահա և բոլորը: Բոգդանը և ես աշխատում էինք Պետերբուրգի ս.-դ.-ական մանուկ կազմակերպության մեջ...

Մենք ճանապարհվեցինք Կովկաս լի հույսերով, որ կսկսենք աշխատել տեղային բանվորության շարքերում... Սակայն մեզ անհրաժեշտ էր ունենալ մի որևէ տպագրական օրգան, որպեսզի կարողանանք համախմբել հայ ինտելիգենտ ուժերը մարքսիզմի գաղափարները տարածելու... Մենք մեր բոլոր ուժերը թափեցինք անլեգալ մի օրգան ստեղծելու համար և ահա 1902 թ. աշնանը, մեծագույն դժվարություններ հաղթելով մենք լույս ընծայեցինք «Պրոլետարիատ»-ի առաջին համարը»[105]:

1902 թվականի ապրիլին Շահումյանը Ա. Խումարյանին ուղարկում է Բաքու, այնտեղ ընդհատակում աշխատող պրոֆեսիոնալ հեղափոխական Բ. Կնունյանցի մոտ՝ տպագրական սար-

---

104 *Տե՛ս* «Искра», № 32, от 15 января 1903.

105 Ա. Զուրաբյան, *Քաղցր հիշողություններ, տե՛ս «Տարազ» № 6, 1919, էջ 42:*

քավորում ձեռք բերելու։ «Ես ունեի իմ ձեռքին Շահումյանի՝ Բ. Կնունյանցին հասցեագրված նամակը։ Բաքվում Կնունյանցը լիովին հավանություն ավեց մեր միջոցառումները և օգնեց տպագրական պարագաներ գտնելու»։ Մի ուրիշ անգամ Խումարյանը գրել է, թե Ալեքսանդր Բեկզադյանի տանը հանդիպելով Բ. Կնունյանցին՝ նա շատ ուրախացավ, որ իմացավ հայ սոցիալ-դեմոկրատների միությունն է կազմակերպված և առաջարկեց թերթը կոչել «Պրոլետարիատ»[106]։

Շահումյանի գլխավորությամբ ամսանը կազմվում է խմբագրական մարմին, կատարվում է աշխատանքի բաժանում։ Շահումյանը և Զուրաբյանը պետք է խմբագրեին թերթը, իսկ Ա. Խումարյանը, Ա. Երզնկյանը և Ռ. Դաշտոյանը հոգային տպագրական գործը։ «Պրոլետարիատ» թերթն ստեղծելու գաղափարը ավել էր Շահումյանը,— պատմում է Ա. Խումարյանը,— այդ նպատակով ես իսկույն մատ Հովհաննես Մարտիրոսյանի տպարանը, իբր գրաշար, ու շատ չանցած ձեռք բերեցի անհրաժեշտ քանակությամբ տպագրական տառեր ու պարագաներ[107]։

1902 թվականի մայիսի 19-ին Թիֆլիսում նշվեց հայ ականավոր գրող Ղազարոս Աղայանի գրական-հասարակական և մանկավարժական գործունեության 40-ամյակը։ Հոբելյարի մեծարմանը, որը կազմակերպել էր հայ մտավորականությունը, առանց հրավիրելու ներկա էր նաև Ս. Շահումյանը։ Նա ևս ցանկություն է հայտնում հեղափոխական ուսանողության անունից ճառ ասել։ Սակայն նրան հնարավորություն չի տրվում մինչև վերջ ավարտել խոսքը՝ նրա քաղաքական բնույթի պատճառով։ Ս. Շահումյանի «Հոբելյանական ճառը», հունիսին խմբագրատիպով 100 օրինակ տպագրվում է Ջալալօղլում և տարածվում Կովկասում։ Ս. Շահումյանի «Հոբելյանական ճառը» ոչ միայն հեղինակի վաղ շրջանի հրապարակախոսության նշանավոր գործերից է, այլ «Ռուսաստանի զանազան քաղաքներում ցրված, բայց միևնույն հայացքներով ու նպատակներով միացած» հեղափոխական, «մարքսիստական ավազանում մկրտված» հայ երիտասարդության հրապարակային առաջին ելույթը։ Նրանում լուրջ փորձ է տրվում

---

106 Տե՛ս «Մարտակոչ», 4 հունվարի, 1924 թ. Архив Азерб. филиала ИМЛ, ф. 276, оп. 2, д. 77, л. 17, а также Сборник «Двадцать пять лет бакинской организации большевиков», изд. Бак. раб., 1929, էջ 144.

107 «Պրոլետարիատ»-ի մասին հանգամանորեն տե՛ս մեր «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն»-ը, Երևան, 1956, էջ 79—93։

մարքսիզմի տեսանկյունով լուսաբանելու հայ հասարակական մտքի զարգացման հարցերը, դրվատվում է ռուս սոցիալ-դեմոկրատների նախորդների՝ հեղափոխական դեմոկրատների՝ Գերցենի, Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի ծառայությունները, ցույց է տրվում ռուս առաջավոր հրապարակախոսության նշանակությունը, քննադատական կրակի տակ առնվում բուրժուական գաղափարախոսությունը: Ս. Շահումյանը ջերմորեն արտահայտվելով ռուս հեղափոխական դեմոկրատների նկատմամբ, ոգևորվելով նրանց խիզախություններով, մատնանշում է, որ հայ պարբերական մամուլում դատարկություն է տիրում: Ս. Շահումյանը իր և ընկերների անունից խորհուրդ է տալիս՝ ով ուզում է, որ «հայ ժողովուրդը գրականություն ունենա՝ նա պետք է ամենից առաջ կռիվ հայտարարի այն պայմանների, քաղաքական այն կարգերի դեմ, որոնք արգելում են ժողովրդի, այդ հասարակական օրգանիզմի ազատ, բնական զարգացումը, նա պիտի աշխատի այնպիսի պայմաններ ստեղծել, որ ժողովրդի միջից դուրս եկող մարդիկ—բոֆիններն ու շիրվանզադեները անհատներ չլինեն, այլ խմբեր, մասսաներ»[108]: Շահումյանը հավատում է, թե մի երկրում, որտեղ չկա քաղաքական ազատություն, չկա ազատ խոսք, մամուլ, որտեղ օրենքի տեղ բռնություն ու կամայականություն է տիրում,— այնտեղ կուլտուրական գործունեությունը այն շինությունն է, որ կառուցվում է ավազի վրա: Մեծարելով Ղ. Աղայանին, իբրև տաղանդավոր գրողի, բացառիկ ընդունակությունների ու բարեմասնությունների տեր մարդու, Շահումյանը միաժամանակ նշում է, որ իր և հոբելյարի ճանապարհները բոլորովին տարբեր են: Աղգային կուլտուրական գործունեության փոխարեն, որին իր ամբողջ ուժերը առավելապես նվիրել էր Ղ. Աղայանը, Շահումյանը քաղաքական-հեղափոխական կռիվ է քարոզում. «բուրժուական «ազգասիրության» ու «ազատամտության» փլատակների վրա մենք կարմիր, պրոլետարական դրոշակ ենք պարզում, որի վրա գրում ենք առայժմ.

— Կռիվ բռնակալության դեմ,

կեցցե՞ քաղաքական ազատությունը[109]»:

Ս. Շահումյանի «Հոբելյանական ճառը», չնայած իր վրա կրում էր ժամանակի կնիքը (նրանում հեղափոխական դեմոկրատ-

---

108 Ս. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 36:

109 Ս. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 39:

ներին ազատամիտներ էր անվանում, Մ. Նալբանդյանին և Գ. Արծրունուն մի գծի վրա դրված և այլն)*, բայց, կրկնում ենք, հայ իրականության մեջ առաջին փայլուն փորձն էր մարքսիզմի դիրքերից հրապարակորեն քննադատական կրակն ուղղելու բուրժուական գաղափարախոսության դեմ, բացահայտելու հայ հասարակական-քաղաքական կյանքի խոցերը, ծածանելու պրոլետարական դրոշը, երիտասարդությանը մղելու դեպի պրոլետարական հեղափոխության ուղիները:

Ս. Շահումյանի «Հորելյանական ճառի» դրույթները արտահայտված են նաև հայ մարքսիստների անդրանիկ օրգանի՝ «Պրոլետարիատ»-ի էջերում:

1902 թվականի հոկտեմբերին լույս տեսավ «Պրոլետարիատ»-ի առաջին և միակ համարը: «Պրոլետարիատ»-ի հրատարակությանը օգնել է նաև Նինա Ալաջալովան (Աղաջանյան): Այդ առթիվ Ա. Զուրաբյանի կնոջ հետ միասին հետագայում նա գրել է. «Առաջին անգամ Թիֆլիս եմ եկել 1902 թվականի սեպտեմբերին և տեղավորվել Արշակ Զուրաբյանի բնակարանում, որին և պարտական եմ Պետերբուրգի ուսումնատուության տարիներիս Մարքսի ուսմունքի հետ ունեցած իմ առաջին ծանոթության համար: Հիշում եմ «Պրոլետարիատ»-ի տպագրությամբ զբաղվում էր Ա. Խումարյանը: Ա. Զուրաբյանի կնոջ հետ միասին առիթ եմ ունեցել նույնիսկ ծալելու թերթի տպագրված էջերը: Մեր բնակարանը հաճախ էին այցելում Ռուբեն Դաշտոյանը և Դանուշ Շահվերդյանը: Երկու անգամ Բաքվից Փառտ Ռիզելի (Բոգդան Կնունյանցի քրոջ) հետ միասին եկել է Սաշա (Ալեքսանդր) Բեկզադյանը»[110]:

«Պրոլետարիատ»-ը պատմական ասպարեզ իջավ դարասկզբին, լենինյան «Իսկրա»-ի գործունեության ժամանակաշրջանում և դարձավ նրա գինակիցներից ու գաղափարների ակտիվ տարածողներից մեկը: «Պրոլետարիատ»-ն իր ճակատին կրում էր «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մարտական կոչը և «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն» խոսքերը: «Իսկրա»-ի օրինակով «Պրոլետարիատ»-ը պայքարում

---

* Հարկավոր է նկատի ունենալ, որ այդ ժամանակ Մ. Նալբանդյանի հեղափոխական գործունեությունը լիովին բացահայտված չէր:

110 Архив Грузинского филиала ИМЛ при ЦК КПСС. ф. 12798, оп. 2, д. 28, л. 1.

էր «էկոնոմիստների», օպորտունիստների, բուրժուական նացիոնալիստների դեմ, պաշտպանում էր կուսակցության կազմակերպական լենինյան սկզբունքները, բացառիկ մեծ նշանակություն էր տալիս մարքսիստական տեսության հարցերին: Նա պայքարում էր դաշնակցության դեմ:

«Պրոլետարիատ»-ի առաջին համարում տպագրված «Մանիֆեստ հայ սոցիալ-դեմոկրատների միության», «Սոցիալ-դեմոկրատիա և իրականություն», «Դեպի մարտ», «Թղթակցություններ», «Նամակ Թիֆլիսից», «Նամակ Բաքվից», «Նամակ Գուրիայից», «Ներքին տեսություն» և «Շարժումից» հոդվածներում պարզաբանվում էին... Հայ սոցիալ-դեմոկրատների միության հասարակական-քաղաքական գործունեության պայմանները և ընդհանուր գծերով նշվում նրա աշխատանքի ծրագիրը:

Միության և նրա տպագիր օրգան «Պրոլետարիատ»-ի կրեդոն (հավատո-հանդանակը) «Մանիֆեստն» է, որը գրել է Ստ. Շահումյանը Բ. Կնունյանցի, Ա. Զուրարյանի ակտիվ մասնակցությամբ: Մանիֆեստում պարզաբանված էին այն գլխավոր թեզերը, որոնք հանդիսանում են հայ իսկրայականների ծրագրի հիմքերը: «Մեր «Միությունը»,— ասված է «Մանիֆեստ»-ում,— Ռուսիայի ամեն ծայրերում յուր ցանցերը լայն տարածող, Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ճյուղերից մեկը լինելով, միանգամայն համերաշխ է նրա հետ և նրա հետ միասին կովելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես և հայկականի— մասնավորապես»[111]:

Այնուհետև «Պրոլետարիատ»-ը շարադրում է Հայ սոցիալ-դեմոկրատների միության ծրագրի հիմնական սկզբունքներն ու խնդիրները, պարզաբանում, որ բանվոր դասակարգը սոցիալիստական գիտակցության է գալիս, «սոցիալիզմը ներկայացնում է բանվոր դասակարգի իդեալների մարմնացումը»[112], որ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան կոչված է գլխավորելու բանվորական շարժումները, որոնք ուղղված են ցարիզմի դեմ: Հակառակ բունդականների, որոնք դեմ էին մարքսիստական կուսակցության դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքներին, պահանջում էին բանվորներին կազմակերպել ըստ ազգությունների և կուսակցու-

---

111 Տե՛ս «Պրոլետարիատ», № 1, 1902, հոկտեմբեր, Թիֆլիս: Նույնը, Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 41—47:

112 Տե՛ս «Պրոլետարիատ», № 1, 1902, հոկտեմբեր:

թյուն ստեղծել ֆեդերատիվ ձևով, «Մանիֆեստ»-ը հետևողականորեն պաշտպանում էր կուսակցության լենինյան, ինտերնացիոնալիստական սկզբունքները, դնում էր բոլոր բանվորներին, անկախ նրանց ազգային պատկանելության, մեկ միասնական համառուսաստանյան մարքսիստական կուսակցության մեջ միավորելու պահանջը։ «Սոցիալ-դեմոկրատիան,— ասված է «Մանիֆեստ»-ում,— միացնում է բոլոր բանվորներին առանց ազգերի խտրության մի ընդհանուր դրոշի տակ, որի վրա գրված է. «Պրոլետարներ ամբողջ աշխարհի, միացե՛ք»... Մենք պիտի ձգտենք բոլոր սոցիալիստական տարրերը և զանազան ազգությանց պատկանող բանվորներին ի մի ժողովել մեկ ընդհանուր սոցիալ-դեմոկրատական մարմին կազմակերպելու, միապետության դեմ ավելի հաջող մարտելու համար»[113]։

Մարքսիստական դիրքերից մեկնաբանելով Կովկասի հասարակական-քաղաքական զարգացումը, բանվորական շարժումների դերը և սոցիալիստական գաղափարների հեղափոխական նշանակությունը, «Պրոլետարիատ»-ը լիահույս էր, որ իր գաղափարներին «արձագանք են տալու Կովկասի հեռավոր լեռներն ու հովիտները, որովհետև նրանք, որոնք անգազար միջոցներ են որոնում ներկա հասարակական բազմաթիվ չարիքների ու հակասությունների դեմ, չեն կարող օրինապես չզբաղվել այն գիտական ուսմունքով, որը պնդում է, թե միմիայն ժամանակակից բանվոր դասակարգն է մեզ փրկելու այն բոլոր սխալներից ու տանելու դեպի համամարդկային փայլուն ու վսեմ իդեալը»[114]։

Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը, որն ավարտվում է՝ «Պրոլետարնե՛ր ամբողջ աշխարհի, միացե՛ք» միջազգային պրոլետարիատի նշանաբանով, պարզաբանում է իր դիրքը միջազգային և մասնավորապես ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ եղած ժամանակակից հոսանքների հանդեպ։ Սոցիալիստական «գաղափարի իրականացմանը,— ասված է «Մանիֆեստի» մեջ,— չի կարելի հասնել, մեր կարծիքով, ո՛չ բանվորական դասակարգի տնտեսական ինքնագործունեությամբ, ոչ է՛լ մասնակի սոցիալական ու քաղաքական ռեֆորմների միջոցով, այլ լոկ արմատական հեղաշրջման—սոցիալական հեղափոխության միջոցով, որի անհրաժեշտ նախաբանը պետք է լինի պրո-

113 Նույն տեղում։

114 «Պրոլետարիատ», № 1, 1902, էջ 11։

լետարիատի քաղաքական իշխանություն ձեռք բերելը»[115]։ Սա մարքսիզմի հիմնական բովանդակության՝ պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի պաշտպանությունն է, որն այնքան հաջող կերպով «Մանիֆեստ»-ում անց էին կացրել առաջին հայ լենինյանները։ Այնուհետև, նշավակելով Ռուսաստանում գոյություն ունեցող քաղաքական կարգը, որ թշնամի է ամեն մի հասարակական և մանավանդ բանվորական շարժման, Միությունը հայտարարում էր, որ իր մերձավորագույն խնդիրն է՝ հայ պրոլետարիատի քաղաքական գաստիարակությունը և նրան ամբողջ ռուսաստանյան պրոլետարիատի պայքարին մասնակից դարձնելը՝ ցարական ինքնակալությունը տապալելու համար։

«Սոցիալ-դեմոկրատիա և իրականություն» ծավալուն հոդվածում, որը ամենայն հավանականությամբ գրել է Ա. Ջուրաբյանը[116], ցույց է տրված Ռուսաստանի և Կովկասի հասարակական զարգացման պատկերը, հեղափոխական պրոլետարիատի ձևավորումը և սոցիալ-դեմոկրատիայի դերը։ Տալով Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատիայի առաջացման նկարագիրը, հեղինակը նշել է, որ այն իր արմատները խորը ամրացրել է ռուսական իրականության մեջ և արդեն սկսել է իր քաղաքական կռիվը[117]։ Հեղինակը Ռուսաստանի օրինակով ցույց էր տալիս սոցիալիզմը բանվորական շարժմանը միացնելու, սոցիալիստական գաղափարների տարածման վճռական նշանակությունը։ Ուշադրավ են 50—60-ական թվականների հայ հրապարակախոսության վերաբերյալ արտահայտած մտքերը, թեև Խ. Աբովյանին և Գ. Արծրունուն սխալ կերպով դրված է մի դծի վրա և որակված «բուրժուական ազատամտական շարժման գլխավոր առաջնորդները»։ Հոդվածում մեծ տեղ է տրված 70-ական թվականների հայ գաղափարախոսությանը, «հայկական շարժման» դրդապատճառների պարզաբանմանը։ «Գաղափարները սլանում, արագ ընթացք էին ստանում և փոփոխվում էին»,— եզրակացնում է «Պրոլետարիատ»-ը։

Քննադատելով դաշնակցության ծրագիրը, թերթը ցույց էր տալիս, որ նրա մեջ «բուրժուական մտքերի ու պահանջների հետ

---

115 Տե՛ս նույն տեղում։ «Մանիֆեստ»-ի հեղինակները «իշխանություն» բառի տակ հասկանում էին «դիկտատուրա»։ Վ. Ի. Լենինը «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստի մասին» գրած հոդվածում հենց այդպես էլ վարվել է՝ «իշխանություն» բառը թարգմանել է «դիկտատուրա»։

116 Տե՛ս «Պրոլետարիատ», № 1, 1902։

117 Տե՛ս «Պրոլետարիատ», № 1, 1902։

միասին կան նույնիսկ քաղվածքներ Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստ»-ից, Ֆ. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը utopիայից դեպի գիտություն» աշխատությունից, բայց դաշնակցության ծրագրի բովանդակությունը բուրժուական պահանջներն ու գաղափարախոսությունն է, նրա մեջ սոցիալիզմը մտնելով դռնից, վանդվեց պատուհանից»[118]: «Սոցիալ-դեմոկրատիա և իրականություն» հոդվածը մի շարք հարցերում լրացնում և մեկնաբանում էր «Մանիֆեստ»-ը, ծանրության կենտրոնը դարձնելով հայ հասարակական զարգացման հարցերը:

Տալով Կովկասում կապիտալիզմի զարգացման շնորհիվ առաջացած փոփոխությունների սոցիալ-դասակարգային տեղաշարժերի նկարագիրը, «Պրոլետարիատ»-ը ընդգծում է, թե՝ «...Կովկասյան սոցիալ-դեմոկրատիայի դերն ավելի ևս ծանրանում է, որովհետև մենք գործ պիտի ունենանք չկազմակերպված, դեռ ինքնաճանաչության զարգացման աստիճանին չհասած մասսաների հետ»: «Պրոլետարիատ»-ը արտահայտելով հայ սոցիալ-դեմոկրատների, լենինյան-իսկրայականների նպատակները, նշում էր, որ անտեսական կռվին նրանք միացնելու են նաև քաղաքական կռիվը, որ նրանց դրոշակի վրա արձանագրված կլինեն այն բոլոր քաղաքական-սոցիալական պահանջները, որ ներկայացնում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան: Այդ պահանջներին կավելացվեն նաև այն բոլորը, ինչ որ հատուկ է բացառապես Կովկասին...»[119]:

«Ներքին տեսություն» բաժնում ցույց էր տրված, որ Կովկասում դեռ նոր է սկսվում բանվորական շարժումը, բայց կապիտալիզմի արագ զարգացման շնորհիվ այն հեղափոխական կերպարանք կստանա և կովկասյան իշխանությունների դժոխային ծրագրերը անզոր են խանգարել ծավալվող հեղափոխական շարժումները: Թերթը բազմաթիվ ուշագրավ տեղեկություններ հաղորդելով Ռուսաստանի և Կովկասի բանվորական շարժումների մասին, ցույց էր տալիս պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի նշանակությունը, պրոլետարիատի հեգեմոն դերը հեղափոխության ընթացքում:

«Շարժումից» բաժնում թերթը «Իսկրա»-ի 23-րդ համարից

---

118 Ռուբեն Ղևոնդյանը իր հուշերում նույնպես նշել է. «Սոցիալ-դեմոկրատիա և իրականություն» հոդվածը գրել է Արշակ Զուրաբյանը (см. Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 12798, оп. 2, д. 211, л.л. 1—23.

119 «Պրոլետարիատ», № 1, 1902:

Բարգմանել և արտատպել էր Բաթումի բանվորների գիմումը ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեին՝ քաղաքական ցույցերին ինտելիգենցիայի մասնակցության վերաբերյալ, և Պետերբուրգի կոմիտեի պատասխանը վերոհիշյալ գիմումի առթիվ։ ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեն պարզաբանում է, որ գործադուլներին պետք է մասնակցեն և՛ բանվորները, և՛ ինտելիգենցիան։ Նրանց չի կարելի իրարից բաժանել, որովհետև սոցիալ-դեմոկրատիան, իբրև քաղաքական կուսակցություն, ի մի է համախմբում հանուն բանվոր դասակարգի գաղափարների հաղթանակի բոլոր կողմերին՝ առանց նրանց դասակարգային ծագումի[120]։

«Մեր ուսուցիչներ և մեր «շարժման» հիմնադիրները ինտելիգենտներ Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը, իհարկե,— պարզաբանել է ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեն,— բանվորներ Ավգուստ Բեբելից ու Իգնատի Աուերից պակաս սոցիալ-դեմոկրատներ ու բանվորների առաջնորդներ չէին, իսկ մեր Ստեփան Խալտուրինը կամ Պյոտր Ալեքսեևը՝ պակաս ինտելիգենտներ բառիս լայն իմաստով»[121]։ Այնուհետև պարզաբանվում էր, որ ցույցերի ժամանակ ստրիկոնության հարձակումները ոչ միայն կարելի է կանխել, այլև վերացնել ոչ միայն ցուցարարների զինվածությամբ, այլ կազմակերպվածությամբ, հմուտ տակտիկայով։ Բաթումի կոմիտեն ցանկություն էր հայտնել բանվորական շարժումը նպատակասլաց դարձնելու համար ստեղծել համառուսական մեկ միասնական կենտրոն։ Մայրաքաղաքի կուսակցական կոմիտեն հավանություն էր տալիս այդ առաջարկությանը՝ հույս հայտնելով, որ առաջիկա կուսակցական համագումարը լուծում կտա «այդ կենսական և անհետաձգելի գործին»։

«Պրոլետարիատ»-ը լենինյան «Իսկրա»-ի օրինակով նամակներ էր վերցնել Բաքվից, Թիֆլիսից, Դուբրայից։ Թիֆլիսից ստացված նամակում (Թիֆլիս, 1902, սեպտեմբերի 25) ողջունում են «Պրոլետարիատ»-ին և նրան հաջողություններ մաղթում ցարիզմի դեմ մղվող պայքարում։

Բաքվից ստացված նամակում (նամակ առաջին, սեպտեմբերի 2) սոցիալիստական ողջույն և շնորհավորանքներ են ուղղ-

---

120 Տե՛ս «Պրոլետարիատ», № 1, 1902։ Պետերբուրգի կոմիտեի Բաթումի բանվորների հարցումի պատասխանի լրիվ տեքստը տե՛ս «Իսկրա», № 23, 1 օգոստոսի, 1902։

121 См. «Искра», № 23. 1 августа 1902 г.

ված «Պրոլետարիատ» թերթին և, թե՝ «...այժմ մենք էլ՝ հայ սոցիալ-դեմոկրատներս, կարող ենք հուսալ, որ մեր ընթերցող հասարակությունը հնարավորություն կունենա ծանոթանալու մեր ծրագրի հետ, թե՛ մեր հեռավոր ու վերջնական և թե՛ մոտակա անմիջական նպատակների հետ»[122]:

«Բրձոլա» թերթը իր № 4-ում ազդարարեց, որ հայերեն լեզվով լույս է տեսել սոցիալ-դեմոկրատական «Պրոլետարիատ» թերթը և ողջունեց նրա երևան գալը: «Ողջույն ձեզ, ընկերներ,— գրել է «Բրձոլա»-ն,— եղբայրական ողջույն: Շնորհավորում ենք ձեզ նոր օրգանի համար, որը պետք է մեծ ծառայություն մատուցի մեզ ազատագրական շարժումներում»[123]:

Բանվորական շարժման լուսաբանման գործում զգալի դեր խաղացին «Պրոլետարիատ»-ի թերթիկները, որոնք պատմում էին երկրամասի հեղափոխական շարժումների և գործադուլների մասին:

19

Վ. Ի. Լենինը, որ նախապես իրազեկ էր հայ սոցիալ-դեմոկրատների միության գործունեությանը[124], արտասահմանում ըստանալով «Պրոլետարիատ»-ը և նրա մասին ռուսերեն գրած տեսությունը, որոշեց ունենալ թերթի հիմնական նյութերի լրիվ թարգմանությունը: Նա 1903 թվականի հունվարի 23-ին Լոնդոնից Գ. Պլեխանովին գրել է. «Արդեն մի քանի օր է, որ ես այստեղ ստացա հայկական «Պրոլետարիատ»-ը (վրան գրված է Ռուս(ասատանի) Ս(ոցիալ) Դ(եմոկրատական) Բ(անվորական) պ(արտիա) և մի ձեռագիր (հոդված նրա մասին): (Դա արդեն հավանորեն

---

122 Տե՛ս «Պրոլետարիատ», № 1, 1902, հոկտեմբեր: Հոդվածն անստորագիր է, այն գրել է Բ. Կնունյանցը:

123 «Բրձոլա», № 4, 1902:

124 «Պրոլետարիատ»-ը կոնսպիրատիվ նպատակներով իր հասցեն ցույց էր տալիս ժնև: Հայտարարության մեջ ասված էր. «Թղթակցություններ, հոդվածներ, նամակներ Ռուսիայից խնդրում ենք ուղարկել արտասահմանի մեր ծանոթներին, որպեսզի նոքա էլ կրկնակի ծրարով ուղարկեն հետևյալ հասցեով՝ S. F. M. diter Wacht (C. m. d. H.) in Stuttgart, իսկ միջին ծրարի վրա գրել միայն «Իսկրա»-ին «Պրոլետարիատ»-ի համար: «Բրձոլա»-ն նույնպես այս հասցեն էր տալիս: Դա Վ. Ի. Լենինի հասցեն էր: «Ի՞նչ անել» աշխատության առաջին հրատարակության վրա (մարտ, 1902), նշված է այդ հասցեն (Stuttgart Verlag J N. m. diter Wacht (C. m. d. H.)».

33-ի համար է, իսկ ես դեռ չեմ ծանոթացել։ Համենայն դեպս չի խանգարի հետաքրքրական բան բերել այնտեղից։ Ես ձեզ դեռ կգրեմ այդ մասին) կաշխատեմ գնահատել 33-ում։

Ուղարկում եմ Ձեզ նաև «Պրոլետարիատ»-ը։ Բարի եղեք խնդրեցեք Լալայանցին կամ ուրիշ որևէ մեկին այդտեղից ամբողջապես թարգմանել ամեն ինչ նացիոնալիզմի ու ֆեդերալիզմի մասին և որքան կարելի է շուտափույթ ուղարկել ինձ։ Հարկավոր է դրանց մասին անպայման հոդված գնահատել (ուղարկված հոդվածը ուղղման կարիք է զգում), իսկ դրա համար հարկավոր է տեքստ»[125]։ Փետրվարի սկզբին Գ. Պլեխանովը Վ. Ի. Լենինին հայտնում է, որ հայկական «Պրոլետարիատ» թերթի մասին եղած ուրվագիծը իրոք անհաջող է, նրա հեղինակը վստահություն չի ներշնչում և «Տուշինոյի թռիչքն է», որ ինքը կգտնի որևէ մեկին, որը Վ. Ի. Լենինի համար ուրվագիծ կգրի «Պրոլետարիատ»-ի մասին[126]։

Վ. Ի. Լենինը հատուկ հոդված է գրում «Պրոլետարիատ»-ի մասին, որը տպագրվում է «Իսկրա»-ի 1903 թվականի փետրվարի 1-ի № 33-ում։ Վ. Ի. Լենինը նրանում նշում է, որ «Կովկասում երևան է եկել մի նոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը»։ Այդ միությունը, ինչպես մեզ հայտնի է, ավելի քան կես տարի է, ինչ սկսել է իր պրակտիկ գործունեությունը և արդեն ունի իր օրգանը հայերեն լեզվով»[127]։

Վ. Ի. Լենինը, քննարկելով «Պրոլետարիատ»-ի առաջին համարի նյութերը և Միությունի «Մանիֆեստը», ընդգծել է, որ առանձնապես հետաքրքրական է Միությունի վերաբերմունքը ազգային հարցի նկատմամբ։ Մանիֆեստի հեղինակները, հենվելով պատմական փաստերի վրա, անհրաժեշտ էին համարում ֆեդերատիվ հանրապետության հիմնումը ապագա Ռուսաստանում, ընդունում էին բոլոր ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը։ «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը,— գրել է Վ. Ի. Լենինը,— և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը։ Խիստ ցանկալի կլիներ, որ այդ փորձը հասցվեր մինչև վերջը։ Երկու

---

123 Տե՛ս IV Ленинский Сборник, էջ 207—207.

126 Նույն տեղում, էջ 211—212։

127 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 408։

հիմնական սկզբունքը, որոնցով պետք է զեկավարվեն Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատներն ազգային հարցում, Միությունը միանգամայն ճիշտ է նշել»[128]:

Վ. Ի. Լենինը միաժամանակ բարեկամական դիտողություններ է անում, նշում, որ վերոհիշյալ երկու սկզբունքը դեռևս ոչ լրիվ հետևողականորեն է անցկացված «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» կողմից:

«Ապագա Ռուսիայում ֆեդերատիվ հասարակապետության» (հանրապետության) պահանջը, ձևակերպվել է բունդի 4-րդ համագումարի ազգային հարցի մասին ընդունած բանաձևում (ապրիլ, 1901 թ.): Նրանում ասված էր. թե՝ սոցիալ-դեմոկրատական ծրագրի առումով անթույլատրելի է որևէ շահագործում ոչ միայն մի դասակարգի կողմից մյուսի, պետության կողմից քաղաքացիների նկատմամբ, այլև մի ազգության կողմից ուրիշ ազգության, տիրապետող լեզվի կողմից մի ուրիշ լեզվի նկատմամբ: «Համագումարը ընդունում է,— ասված էր բանաձևում,— որ Ռուսաստանի նման պետությունում, որը կազմված է բազմաթիվ տարբեր ազգություններից, հարկավոր է ապագայում վերակազմավորել իբրև ազգությունների ֆեդերացիա, նրանցից յուրաքանչյուրին տալով ազգային ավտոնոմիայի իրավունք, այսինքն՝ լեզվի, կուլտուրայի հարցերում, անկախ նրանց բնակեցված տերիտորիայից»[129]: Բացի այդ, բունդի 4-րդ համագումարը գտնում էր, որ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բոլոր կազմակերպությունները պետք է միավորվեն ֆեդերատիվ սկզբունքներով[130]:

---

128 Վ. Ի. Լենին. Երկեր, հատոր 6, էջ 411: Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության («սոցեցիֆիկների») պարագլուխները «Вестник Бунда» (см. № 3, июнь 1904. № 5. ноябрь 1904 и др.) թերթի և իրենց օրգանների էջերից այդ տարիներին ազգուկ բարձրացրին «ֆեդերատիվ հանրապետության» պահանջի առթիվ, հայտարարելով, որ իբրև թե՝ դա հայ սոցիալ-դեմոկրատների միության և Կովկասյան միության ծրագրերի անկյունաքարն էր։ Կառչելով «Մանիֆեստ»-ում և Կովկասյան միության ծրագրի նախագծում տեղ գտած վերոհիշյալ արտահայտության խմբագրման փաստից, «սոցեցիֆիկները» պախարակում էին ազգերի ինքնորոշման գաղափարը, դեմոկրատական ցենտրալիզմը, դրանով իսկ ջանում արդարացնել իրենց նացիոնալիզմը և Բունդին հնազանդ հետևելու ուղեգիծը։

129 «Жизнь», № 2, 1902, май, էջ 112.

130 См. [Коссовский В.] К вопросу о национальной автономии и преобразований Российской соц. демокр. рабочей партии на федеративных началах. Изд. Всеобщего еврейского рабочего союза в Литве, Польше и России. Лондон, февраль 1902, «Жизнь», № 2, 1902, май էջ 114 и др.

Վերոհիշյալ դրույթները պաշտպանություն էին դանում նաև «Լեգալ մարքսիստների» և նրանց օրգանի՝ «Ժիզն» ամսագրի կողմից։ «Ժիզն»-ը, որ հրատարակվում էր 1897—1901 թվականներին Պետերբուրգում, իսկ 1902 թվականին Լոնդոնում, ձայնակցելով բունդականներին, լայնորեն պրոպագանդում էր ֆեդերալիզմի պահանջը։ Լենինյան «Իսկրա»-ն, բանավիճելով նման հարցադրման հեղինակների հետ, առաջ էր քաշում ազգերի ինքնորոշման լոզունգը, կուսակցության կառուցման դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը, որը ճանաչում գտավ ՌՍԴԲԿ II համագումարում հաստատված կուսակցության առաջին ծրագրում։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստ»-ում և ՌՍԴԲԿ կովկասյան միության ծրագրի նախագծում արտահայտած ֆեդերալիզմի գաղափարը, հավանաբար, բաղված է «Ժիզն»-ի էջերից։ «Մանիֆեստ»-ի և «Ծրագրի նախագծի» հեղինակները ծանոթ էին «Ժիզն»-ի նյութերին, իսկ Բ. Կնունյանցը նույնիսկ աշխատակցել է նրան[131]։ Այսպես, «Ժիզն»-ի 1902 թվականի հուլիսյան համարում «—Яниць» ծածկանվամբ, լույս է տեսել Բ. Կնունյանցի «Հայկական հարցի շուրջը» ծավալուն հոդվածը[132]։ Նրանում հեղինակը քննարկում է կովկասյան իրականության հարցերը, հայ հասարակական զարգացման առանձին երևույթները, «Պրոլետարիատ»-ի նյութերի ոգով ուսումնասիրողին պատմում կայսրության ծայրամասերում ցարիզմի վարած գաղութային դաժան քաղաքականության մասին։ Նա ջերմորեն է խոսում խաչատուր Աբովյանի և նրա հայրենասիրական «Վերք Հայաստանի» վեպի, 60-ական թվականների հայ հրապարակախոսության, հայ առա-

---

131 «Ժիզն»-ը 1899 թվականին դադարում է «Լեգալ մարքսիստների» օրգանը։ Վ. Ի. Լենինը նրանում հրատարակել է «Պատասխան պ-ն Պ. Նեժդանովին» (№ 12, դեկտեմբեր, 1899 թ.), «Կապիտալիզմը գյուղատնտեսության մեջ։ Կ. Կաուցկու գրքի և Բուլգակովի հոդվածի մասին» (№ 1 և № 2, հունվար-փետրվար, 1900 թ.) հոդվածները, որոնք ուղղված էին «Լեգալ մարքսիզմի» դեմ։

132 Ս. Դ. Հովհաննիսյանը այն կարծիքին է, որ «—Яниць»-ը Բ. Կնունյանցն է։

«Հայկական հարցի շուրջը» և նրանից մի քանի ամիս անց «Бакинский известия»-ում (№ 44, 23 февраля (8 марта) 1903) հրատարակած «Մի քանի խոսք «Մշակ»-ի մասին» հոդվածների շարադրանքը ևս հավաստում են, որ «Ժիզն»-ի «—Яниць»-ը Բ. Կնունյանցն է։ «Նաշ պուտ» թերթի 1911 թվականի № 18-ում զետեղված «Բոգդան Կնունյանցի (Պետրով, Բաղին) հիշատակին» հոդվածը և արխիվային մի փաստաթուղթ նույնպես (ЦГИАЛ, ф. 776, оп. 9, ед. хр. 2092, л. 37) վկայում են, որ Բ. Կնունյանցն աշխատակցել է «Ժիզն»-ին։

ջին սոցիալիստներից Միքայել Նալբանդյանի, 70-ական թվականների տարաստիճան ինտելիգենցիայի, Գ. Արծրունու, Բաֆֆու և այլոց մասին: Հեղինակը սրտի ցավով է նկարագրում հայ ժողովրդի տառապանքները, արևմտահայերի թշվառ ու ծանր գոյավիճակը: Թևավորված հայ ազատագրական շարժումներով, երկրամասում արագորեն ձևավորվող պրոլետարիատի և նրա առաջին ղեկավարների քաղաքական ելույթներով, Բ. Կնունյանցը հայ ժողովրդի ազատագրությունը ճիշտ կերպով կապում է բանվորական հեղափոխական շարժումների, սոցիալիստական գաղափարների հաղթանակի հետ: Այս ամենի հետ միասին, արձագանքելով «Ժիզն»-ին, նա նշում է, թե Կովկասում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը իր ծրագրում մտցնում է հետևյալ սկզբունքները. 1. Անդրկովկասը պետք է ներքին գործերում ստանա լիակատար ավտոնոմիա, մտնելով Ռուսաստանի կազմում, իբրև ֆեդերատիվ միավորում, արտաքին քաղաքականության, պաշտպանության, մաքսային և այլ հարցերը զեկավարելու համար:

2. Կովկասի ազգությունները կազմում են առանձին ավտոնոմ միավորումներ զուտ ազգային (դպրոց և նման բաներ) հարցերը լուծելու համար»[133]: Որոշ խմբագրությամբ այս պահանջները, ինչպես նշեցինք, «Ժիզն»-ի աղբյուրությամբ, տեղ էին գտել «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստ»-ում և ՌՍԴԲԿ Կովկասյան միության ծրագրի նախագծում: Վ. Ի. Լենինը իր նշանավոր հոդվածում, հայ իսկրայականներին լիովին հետևողական լինելու համար, խորհուրդ էր տալիս իրենց ծրագրից հանել ֆեդերատիվ հանրապետության պահանջը և պայքարել դեմոկրատական հանրապետության և սոցիալիզմի համար: Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, որ պրոլետարիատի գործն է ավելի սերտորեն համախմբել բոլոր և ամեն տեսակ ազգությունների բանվորական լայն զանգվածներին, քանի որ յուրաքանչյուր ազգության ինքնորոշման իրավունքի ճանաչման պահանջը ինքնին նշանակում է հենց այն, որ պրոլետարիատի կուսակցությունը միշտ և անպայման պետք է դեմ լինի ժողովրդի ինքնորոշման վրա դրսից բռնությամբ կամ անարդարությամբ ազդելու ամեն մի փորձի: Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի ծրագրային խնդիրն է,— ասում

---

133 См. Янць, К армянскому вопросу. См. «Жизнь», № 4, 1902, Лондон, էջ 29

էր Վ. Ի. Լենինը,— միայն քաղաքացիների (անկախ սեռից, լեզվից, կրոնից, ռասայից, ազգից և այլն) լիակատար իրավահավասարության և ազատ դեմոկրատական ինքնորոշման իրավունքի նվաճում: Ինչ վերաբերում է ազգային ավտոնոմիայի պահանջի պաշտպանությանը, ապա պրոլետարիատը դա կարող է կատարել առանձին բացառիկ դեպքերում:

«Իսկրա»-ի այն համարը, որտեղ զետեղվել էր Վ. Ի. Լենինի «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին» հոդվածը, 1903 թվականի մարտ ամսին ստացվում է Երևանում[134]: Այդ հոդվածը և ընդհանրապես հայ սոցիալ-դեմոկրատների միությունը և նրա «Մանիֆեստ»-ի լենինյան գնահատականը մեծ դեր խաղացին Անդրկովկասի հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ամրապնդման, երկրամասի աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության գործում: Միևնույն ժամանակ դա ակնառու կերպով ցույց է տալիս, որ Վ. Ի. Լենինը անխոնջ հոգատարությամբ հետևում էր Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, օգնում շտկելու առանձին հարցերում թույլ տրված վրիպումները:

11

«Պրոլետարիատ»-ը անհանգստություն առաջացրեց ազգայնական հովերով տարվածների, սեպարատիստների մեջ: Վ. Ի. Լենինի և Գ. Պլեխանովի նամակագրությունից երևում է, որ «Պրոլետարիատ»-ի մասին «Իսկրա»-ին հասցեագրված տեսության տեքստը ոչ միայն «ուղղման կարիք էր զգում», այլև «նրա հեղինակը վստահություն չի ներշնչում» և «Տուշինոյի թռիչքն է»:

Արդ, հետաքրքիր է, թե ով էր այդ հեղինակը: Արխիվային նյութերը տակավին լռում են և չեն օգնում ստատիչ պատասխան տալու մեզ զբաղեցնող հարցին: Բայց, մենք ենթադրում ենք, այն գրել է Երվանդ Պալյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Ժնևում: Նման եզրակացության համար, ամենից առաջ, առիթ է տալիս 1903 թվականին Ռուշչուկում նրա հրատարակած «Սոցիալ-դեմո-

134 Տե՛ս Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 122, դ. 3, թ. 69։

կրատ միությունը» և իր «Պրոլետարիատ» օրգանը» բրոշյուրը[135], նրանում Ե. Պալյանը գանգատվում է «Պրոլետարիատ»-ի ուղեգծից։ Օգտագործելով մինչ այդ իր խմբագրությամբ լույս տեսած «Հանգես»-ի նյութերը, նա որոշ դատողություններ է անում սոցիալիզմի, սոցիալիստական գրականության, կապիտալիզմի զարգացման, Կովկասը կապիտալիստական ուղու վրա փոխադրվելու և այլ հարցերի մասին։ Բայց նրա գլխավոր հոգսը դա չէ, այլ «Պրոլետարիատ»-ի և նրա շուրջը համախմբված հայ իսկրայականների անհարկի քննադատությունը։ Ե. Պալյանի բրոշյուրը ներծծված է այն ժամանակ սաղմնավորվող սոցիալ-դեմոկրատական հայ բանվորական կազմակերպության («սպեցիֆիկների») գաղափարներով։ Խորապես չընդունելով (կամ անգիտանալով) Հայ սոցիալ-դեմոկրատների միության Մանիֆեստի գլխավոր բովանդակությունը, մասնավորապես նրա ինտերնացիոնալիստական, լենինյան-իսկրայական սկզբունքները, հեղինակը մերժում է այն։ Քննադատելով «Մանիֆեստ»-ի ստաղծը կազմող բանաձևումը, թե սոցիալիստական գաղափարների իրականացումը հնարավոր է միայն տիրող հասարակարգի «արմատական հեղաշրջման՝ սոցիալական հեղափոխության միջոցով, որի անհրաժեշտ նախաբանը պետք է լինի պրոլետարիատի քաղաքական իշխանության ձեռք բերելը», Ե. Պալյանը գտնում է, որ սոցիալ-դեմոկրատիան պետք է պայքարի ռեֆորմների միջոցով տնտեսական դիրքումներ կորզելու համար։ Դատակարգային պայքարին նա հակադրում է տեսության պահանջը, հայտարարելով, թե՝ «Մանիֆեստ»-ում ինչո՞ւ «ոչ մի խոսք չկա տեսության մասին», ինչո՞ւ է անտեսված «հայկական հարցը» և վերջապես, հայ սոցիալ-դեմոկրատների միությունը ինչո՞ւ է իրեն կոչել «ՌՍԴԲԿ-ի ճյուղ», դրանով իսկ իրեն ձգել

---

135 Տե՛ս Ե. Պալյան, Սոցիալ-դեմոկրատ միությունը և իր «Պրոլետարիատ» օրգանը։ Հրատարակիչ Գառնիկ Գ. Մազմանյան։ 1903, Ռուշչուկ։ Տպագրիչ Գառնիկ Գ. Մազմանյան։ Հրատարակչություն «Հայ սոցիալ-դեմոկրատ կուսակցության»։ Հավանական է Ե. Պալյանին օգնել է այն ժամանակ Ժնևում գտնվող Գարեգին Կուզիկյանը։ Բրոշյուրի մեկ օրինակը գտնվում է Գրականության և արվեստի թանգարանում, մի ուրիշ օրինակը՝ Ե. Պալյանի հարազատների մոտ։

Պրոլետարիատի մասին Վ. Ի. Լենինի հիշատակած հոդվածը, գուցե և գրել է Արտյոմ Տեր-Հարությունյանը՝ Ժնևում 1901 թ. հրատարակված «Из Тифлисского рабочего движения» բրոշյուրի հեղինակը։ (См. журнал «Пролетарская революция», 11, 1924, стр. 270—272, Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 93, оп. 2, д. 25, лл. 33—49).

միանգամայն դժվարին և սարսափելի կացության[136] մեջ և այն։ Նա դեմ է արտահայտվում Կովկասի բազմազգ պրոլետարիատի միասնական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ինտերնացիոնալ բնույթին, առաջարկում է յուրաքանչյուր ազգի բանվորներին համախմբել առանձին, ազգային հատկանիշներով բաժանված սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ։ «Մեր կարծիքով Կովկասի յուրաքանչյուր ազգության բանվոր դասակարգ,— գրել է Ե. Պալյանը,— պիտի ունենա առանձին կազմակերպություն», հակառակ դեպքում «հայ պրոլետարիատը մյուս ազգերի պրոլետարների հետ մեկ կազմակերպության մեջ մտնելով «կարող է խեղաթյուրվել և ոչնչանալ», «կդառնա ցիրուցան, այլասերված և կիսահամր հավելումն այլալեզու կազմակերպությունների մեջ...»։

Ուրիշ բազմաթիվ սխալ և շփոթ մտքեր էլ կան Ե. Պալյանի բրոշյուրում։ Հենց սրանք էլ առիթ են տալիս եզրակացնելու, որ «Իսկրա»-ին գրած անհաջող հոդվածի «վատահություն չներշնչող» հեղինակը հավանաբար Ե. Պալյանն է։ Նման բրոշյուրով հանդես եկողը հավիվ թե անտարբեր մնար և չփորձեր օգտագործել համառուսական օրգանը։ Ավելացնենք։ Գ. Կուզիկյանը, որ այդ ժամանակ գտնվում էր Ժնևում և աշխատում էր «Իսկրա»-ի տպարանում, լիովին համերաշխ էր Պալյանի հետ։ Գուցե նա ևս նպաստել է նման բովանդակությամբ «Իսկրա»-ին հոդված գրելու։ Գ. Կուզիկյանը (Եսալեմ) «Թող փակտերը խոսեն» իր գրքույկում բանավիճելով հնչակյանների հետ, հարևանցիորեն անդրադարձել է Հայ սոցիալ-դեմոկրատների միությանը և նրա օրգան «Պրոլետարիատ»-ին. «Հայ բանվորներին գրավելու համար «Պրոլետարիատ»-ը հրատարակել են մի գոյություն չունեցող «Հայ սոցիալ-դեմ. միության» անունով»[137]։

Սպեցիֆիկները «Վեստնիկ բունդա» պարբերականի էջերից հարձակումներ կատարելով կովկասյան մարքսիստների, մասնավորապես հայ կայուն լենինյան իսկրայականների վրա, ջանում էին հիմնավորել, թե «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ

---

136 Տե՛ս Ե. Պալյան, Սոցիալ-դեմոկրատ միությունը և իր «Պրոլետարիատ» օրգանը, 1903, էջ 12։

137 Եսալեմ, Թող փակտերը խոսեն (հնչակյան կուսակցության մասին), Ժնև, 1904, էջ 38։

կազմակերպության... առաջացումը տակավին նշված էր «Պրոլետարիատ»-ի առաջին համարում»[138]։

«Իսկրա»-ի էջերում (թեև այդ ժամանակ այն անցել էր մենշևիկների ձեռքը), կովկասյան կայուն իսկրայականները ցույց են տվել նման պնդման սնանկությունը։ «Բունդի նոր դաշնակիցը» հոդվածում կովկասյան կյանքին քաջատեղյակ հեղինակը (տարբերվում է «Ն», հավանական է Բ. Կնունյանցն է) փաստերով գինված ապացուցել է, որ ոչ մի հիմք չկա նման եզրակացությունների համար։ Իր միտքը ապացուցելու նպատակով նա ցիտում է Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստի համապատասխան տողերը, որտեղ ասված է. «Իսկ ինչ վերաբերում է Կովկասին, ուշադրության առնելով նրա ազգաբնակչության բազմազանությունը, մենք պիտի ձգտենք բոլոր սոցիալիստական տարրերը և զանազան ազգության պատկանող բանվորներին ի մի ժողովել մեկ ընդհանուր սոցիալ-դեմոկրատական մարմին կազմակերպելու միապետության դեմ ավելի հաջող մարտնելու համար»[139]։ Եվ ապա, ճիշտ կերպով եզրակացնում, որ այսքանից հետո ասել, որ «Պրոլետարիատ»-ը «նշել էր» հայկական սեպարատիստական կազմակերպության առաջացումը, նշանակում է գիտակցաբար ճշմարտությունը շաղել։

Վերոհիշյալ և այլ կարգի նյութերի ուշադիր ուսումնասիրությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ «Պրոլետարիատ»-ի առաջին քննադատները եղել են սպեցիֆիկները։ Նրանց օրինակով «Պրոլետարիատ»-ի պատմական միսիայի նկատմամբ թերահավատություն են դրսևորել հնչակյանները։ «Վերածնություն» թերթը իր 1903 թվականի № 16-ում անդրադառնալով «Պրոլետարիատ»-ին, քննադատում է, նսեմացնելով նրա ծառայությունները[140]։

«Պրոլետարիատ»-ը իր մարքսիստական ուղղության համար քննադատվել է նաև հայ մենշևիկների և ազգային կուսակցությունների կողմից։ Ս. Տ. Արկոմեդը իր «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան» ու այլ աշխատություններում այն սխալ միտքն է զարգացնում, որ իբր թե «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» այս չափազանց փոքրաթիվ խմբակը անջատվել է

---

138 См. «Вестник Бунда», № 3, 1904.

139 Տե՛ս «Պրոլետարիատ», № 1, 1902, հոկտեմբեր։

140 Տե՛ս «Վերածնություն», № 16, 30 (13) հոկտեմբերի, 1903 թ.։

դաշնակցությունից և հնչակյան ազգայնական կուսակցություններից, որ միության հիմնադիրներից Սարգիս Խանոյանը, Աշոտ Խումարյանը և ուրիշներ հնչակյաններ են եղել», որ «Պրոլետարիատ»-ը Միությունը չի հրատարակել, այլ ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն և այլն [141]: Գ. Ղարաջյանը սխալվում է նաև այն ժամանակ, երբ «Մանիֆեստ»-ի ազգային հարցի վերաբերյալ անորոշ ձևակերպումը (ֆեդերատիվ հանրապետության պահանջը) անվերապահ կապում է Հայ սոցիալ-դեմոկրատների միության վրա դաշնակցության և ազգայնական մյուս կուսակցությունների թողած ազդեցության հետ: «Միության վրա անպայման երևում է հայ հեղափոխական (իմա՝ ազգայնական) կուսակցությունների ազդեցությունը»,— գրել է Գ. Ղարաջյանը [142]:

Այդ բոլորը, անշուշտ, հեռու են պատմական ճշմարտությունից:

Մենշևիկյան «Իսկրա»-ն նույնպես ժխտել է Հայ սոցիալ-դեմոկրատների միության գոյությունը: «Հայ ընկերները,— գրել է «Իսկրա»-ն,— որոշ ագիտացիոն նկատառումներով,— գերադասեցին լույս ընծայել Հայ սոցիալ-դեմոկրատական թերթի առաջին համարը «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» անունից, թեպետ և նման միություն էլ գոյություն չի ունեցել» [143]:

«Պրոլետարիատ»-ի հրատարակությամբ նշանավորվեց մարքսիստական բոլշևիկյան հայ պարբերական մամուլի ծնունդը: Հայաստանի կոմկուսակցության Կենտկոմը 1927 թվականի մայիսի 13-ին գրել է. «1902 թվականին հրատարակված «Պրոլետարիատ» ժուռնալը հաշվել հեղափոխական մարքսիզմի առաջին հայերեն օրգանը» [144]:

XX դարի սկզբին Հայ սոցիալ-դեմոկրատների միության և նրա ապագիր օրգանի՝ «Պրոլետարիատ»-ի ստեղծումով նշանավորվեց հայ ժողովրդի պատմության նոր էտապի սկիզբը, հասարակական, քաղաքական կյանքի ու մտքի զարգացման մեծ շրջադարձը: Միության և «Պրոլետարիատ»-ի շուրջը համախմբված հայ մարքսիստները, լենինյան կայուն իսկրայականները, բարձր

---

141 Տե՛ս Ս. Տ. Ասկոմեդ, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, էջ 88:

142 Նույն տեղում, էջ 89:

143 См. «Искра», № 72, 1904.

144 Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 13, оп. 1, м. II, д. 2188, л. 61.

պահելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը, աշխատավոր զանգվածներին առաջնորդում էին դեպի ռուսական հեղափոխության ուղիները։ Հետագա իրադարձությունները հաստատեցին, թե որքան ճիշտ էր հայ իսկրայականների որդեգրած քաղաքական ուղեգիծը։

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը՝ լենինյան իսկրայականները պայքար ծավալեցին հայ իրականության մեջ գիտական սոցիալիզմի գաղափարները բանվորական շարժմանը միաձուլելու համար։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

1. Բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորումը: 2. Կովկասյան պատգամավորները ՌՍԴԲԿ II համագումարում: 3. Ժնևյան մարքսիստական հայերեն հրատարակությունները: 4. Վ. Ի. Լենինի աշխատությունները հայերեն: 5. Կուսակցության ընդհատակյա տպարանները:

I

Ռուսաստանում մարքսիստական կուսակցության ձևավորման պրոցեսը տևեց շուրջ երկու տասնամյակ՝ 1883 թվականից մինչև 1903 թվականը: Մինչև 1903 թվականը Ռուսաստանի պրոլետարական կուսակցությունը կազմված էր իրար հետ չկապված տեղական սոցիալ-դեմոկրատական անջատ-անջատ կազմակերպություններից, որոնք կոչվում էին կոմիտեներ: Երեք տարվա ընթացքում, 1901—1903 թվականներին, լենինյան «Իսկրա»-ն («Կայծ») խոշոր ազդեցության ձեռք բերեց ՌՍԴԲԿ տեղական կոմիտեների վրա: Բոլոր կոմիտեները, բացի Վորոնեժի կոմիտեից, որը գտնվում էր «էկոնոմիստների» ազդեցության տակ, միացան «Իսկրա»-ին: Վ. Ի. Լենինի արտահայտությամբ այդ ժամանակ բոլշևիզմը վարում էր «Իսկրա»-ն: Վ. Ի. Լենինի վառած «Կայծ»-ից բռնկել էր բոցը: Հարկավոր էր «Իսկրա»-ի հաղթանակն ամրապնդել առաջիկա համագումարում, ստեղծել Ռուսաստանի բանվոր դասակարգի մարտական հեղափոխական մարքսիստական կուսակցություն՝ միասնական կանոնադրությամբ ու ծրագրով, միասնական ղեկավար կենտրոնով: Տեղերում ծավալվեց երկարատև, բեղմնավոր աշխատանք, որին ուժ և ուղղություն էր տալիս Վ. Ի. Լենինը: ՌՍԴԲԿ II համագումարի նախապատրաստման և անց-

կացման շրջանում բեղմնավոր աշխատանք ծավալեցին բոլշևիկյան կուսակցության հնագույն ջոկատներից մեկի՝ Կովկասի լենինյան իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները։ Համագումարի նախօրյակին Անդրկովկասի հեղափոխական ուժերի, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների համախմբման և Ռուսաստանում մարքսիստական միասնական կուսակցության ստեղծման լենինյան պլանի իրականացման համար մղված պայքարում աչքի ընկնող դեր խաղաց ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն՝ Կովկասի լենինյանների շտաբը։ ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաթումի, Բաքվի կոմիտեների նախաձեռնությամբ 1902 թ. վերջերից բեղմնավոր աշխատանք ծավալվեց Կովկասի լենինյան-իսկրայականների համագումար նախապատրաստելու ուղղությամբ։ 1903 թվականի հունվարին Բաքվի և Թիֆլիսի կոմիտեների ներկայացուցիչները «Բրձոլա»-ին և «Պրոլետարիատ»-ին առընթեր հիմնում են կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների ներկայացուցիչների I համագումարի հրավիրման բյուրո[1]։ 1903 թվականի մարտի կեսերին Թիֆլիսում տեղի ունեցավ Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարը։ Համագումարին մասնակցում էին 15 պատգամավոր՝ ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի կոմիտեներից, Քութաիսի, Գուրիայի, Ճիաթուրիի, Գորիի և Միխայլովսկի (Խաշուրի) լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական խմբերից։ Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը մասնակցում էր Թիֆլիսի կոմիտեի և «Պրոլետարիատ»-ի միջոցով։ Համագումարը հավանություն տվեց «Իսկրա»-ի հրատարակած ՌՍԴԲԿ ծրագրի նախագծին, հիմք դրեց կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միասնական դեկավար օրգանին, ՌՍԴԲԿ Կովկասյան միությանը, ջախջախիչ հարվածներ հասցրեց վրաց սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստական թևի պարագլուխ Ն. Ժորդանիային ու նրա կողմնակիցներին, և դրանով իսկ ապահովեց մարքսիստական միասնական կուսակցության ստեղծման լենինյան սկզբունքների հաղթանակը Կովկասում։ Ն. Ժորդանիան և նրա համախոհները հատկապես աղմուկ բարձրացրին Կովկասյան միության ստեղծման

---

[1] См. Третий съезд РСДРП. Протоколы. М., 1959, էջ 600—610. ՌՍԴԲԿ III համագումարին Մ. Ցխակայայի ներկայացրած զեկուցումը՝ Կովկասյան միության 1903—1905 թթ. գործունեության մասին։

հարցում։ Նրանք գտնում էին, որ տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները պետք է աշխատեն մեկը մյուսից անկախ։

Համագումարը գլխավոր հարցը լուծեց լենինյաբար, մերժեց օպորտունիստների պահանջը և ձայների բացարձակ մեծամասնությամբ (14 թեր և մեկ դեմ) որոշեց ստեղծել ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտե։ Կովկասյան լենինյան-իսկրայականների առաջին համագումարը որոշեց վրացական «Բրձոլա» և հայկական «Պրոլետարիատ» թերթերը միավորել և հրատարակել որպես ՌՍԴԲԿ Կովկասյան միության օրգան՝ «Պրոլետարիատի կռիվը» խորագրով։ Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միության նախագիծ-ծրագրում Կովկասյան միություն և թերթ ստեղծելու մասին ասված է. «...Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, նաև «Պրոլետարիատ»-ի և «Բրձոլա»-ի խմբագրությունները հարկ համարեցին միանալ և մի ընդհանուր միություն կազմել։ Վերոհիշյալ կազմակերպությունների ներկայացուցիչները, ընդհանուր ժողով գումարելով, վճռեցին կազմել Կովկասյան միություն, որը ներկայանալու է իբրև Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մի ճյուղը... Միությունը կունենա իր օրգանը հայերեն և վրացերեն՝ «Պրոլետարիատի կռիվը», որոնք Միության այլ հրատարակությունների հետ կաշխատեն լուսաբանել և տարածել մեր ծրագիրը և կռիվը»[2]։

Համագումարը հավանություն տվեց Կովկասից ՌՍԴԲԿ II համագումարի պատգամավորներ ուղարկելուն։ Բաքվի կոմիտեից ընտրվել էր Բ. Կնունյանցը, Բաթումիի կոմիտեից՝ Ա. Զուրաբյանը, իսկ Թիֆլիսի կոմիտեից՝ Դ. Թոփուրիձեն, որոնք ունեին երկուական վճռական ձայն[3]։ Պատգամավորների արտասահման մեկնե-

---

2 Տե՛ս Նախագիծ-ծրագրի Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միության, ժնև (իրականում Թիֆլիսի տպարան), ՌՍԴԲԿ Միություն, 1903, էջ 6 և 14։

3 Ճիշտ չեն այն հեղինակները, որոնք կարծում են, թե նրանց Կովկասյան միությունն է II համագումարի պատգամավոր ընտրել։

1903 թ. հունիսի 15-ին կազմակերպական հանձնաժողովը Բաքվի կոմիտեին գրել է. «Организационный Комитет принимает во внимание 1) что представителю О. К. было устно заявлено членами Бакинского и Тифлисского Ком., что Кавказский Союз не уполномочен комитетами, входящими в его состав представительствовать на съезде (по общему правилу) в ко-

լու գործի կազմակերպմանը միութենական կոմիտեի ցուցումներով օգնեց Սիմոն Տեր-Պետրոսյանը (Կամոն)։

Պատգամավորներին նակազ տրվեց ՌՍԴԲԿ II համագումարում ամուր կերպով աջակցել և օգնել Վ. Ի. Լենինին, հետևողականորեն պաշտպանել մարքսիստական կուսակցության ստեղծման լենինյան պլանը, «Իսկրա»-ի ծրագրային, տակտիկական և կազմակերպական սկզբունքները։

Կովկասի լենինյան-իսկրայականների հիմնադիր համագումարը ընտրեց 9 մարդուց բաղկացած ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտե, վճռեց ծավալել կուսակցական-հրատարակչական գործը, լայնորեն նախապատրաստվել 1903 թվականի մայիսմեկ-

---

личестве 2-х голосов, согласно Устава, 2) что Комитеты по их заявлению решили посылать отдельно каждый своих делегатов — постановил: в виду того, что Орг. Ком. было прислано формальное заявление о возникновении Кавказского союза, в который входят Бак., Батумск. и Тифлисский Комитеты и не прислано Устава Союза, из которого было бы ясно, что по договору между Комитетами Кавказский Союз не является официальным представительным учреждением — ставил необходимым условием признания действительности выборов по Комитетам — письменное заявление всех трех комитетов, удостоверяющее факт ограничения функции Кавказского Союза. Это значит, что заявление должно констатировать, что Кавказский Союз по Уставу не является уполномоченным лицом по общепартийным делам, или если это не так, т. е. Устав не оговаривает этого, то выборы по Комитетам будут признаны действительными только в том случае, когда Орг. Комитету будет прислано официальное заявление всех 3-х Комитетов (Бак., Бат. и Тифл.), что Кавказский Союз находится еще только в процессе формирования, т. е еще не существует. Заявление должно быть прислано по оставленному Вам адресу, а копия заявления передана для хранения». (Архив Арм. филиала ИМЛ, ф. 4033, оп. 5, д. 44, л. 1). *Նույն՝ 1903 թվականի հուլիսի 9-ին կազմակերպական հանձնաժողովին պատասխանել են.* «Тифлисский Комитет заявляет сам Организационному Комитету, что т. к. «Союз Кавказских Соц. дем. рабочих организаций» организовался только недавно, не имеет еще выработанного устава, находится в фазе формировки, и не уполномочен на съезд представлять кавказского движение, он, согласно полученному постановлению О. К. оставляет за собой право представительства на очередном съезде партии». «Союзный Комитет» пока организовывает техническую работу, т. е. как официальный представитель по партийным делам не существует. Кавказский Социал-демократич. рабочий союз Тифлисский Комитет РСДРП». (Архив Арм. филиала ИМЛ, ф. 4033, оп. 5, д. 44, л. 2: *Վերոհիշյալ երկու նյութերը քաղված են Մվի կենտրոնական կուսակցական արխիվից* (см. ЦПА ИМЛ при ЦК КПСС, д. 58512, л. 92, д. 58510, л. 94).

յան տոնակատարությանը, ուժեղացնել քաղաքական-մասսայական աշխատանքը։ Համագումարի և ապա Կովկասյան միության ամբողջ աշխատանքն ընթանում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի նշանաբանով։ «Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան ինչպես այժմ, այնպես էլ առաջ, մինչև Միության հիմնումը,— ասված է 1903 թվականի հոկտեմբերին «Իսկրա»-ում Կովկասից հրապարակված մի հոդվածում,— կազմակերպական հարցերում կանգնած է Ռուսաստանի ողջ պրոլետարիատի շահերը պաշտպանող ու ներկայացնող միասնական կուսակցության կողմը։ Կազմակերպական այն պլանը, որը անց է կացված մեզ մոտ, ոչնչով չի տարբերվում այն պլանից, որի պաշտպանը մեր գրականության մեջ հանդիսանում է «Իսկրա»-ն»[4]։

ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների I համագումարը շրջադարձային կետ հանդիսացավ երկրամասի բանվորների, նրա ավանդարդի՝ սոցիալ-դեմոկրատիայի կյանքում, նպաստեց անջատ-անջատ կոմիտեների ու խմբակների միավորմանն ու համախմբմանը լենինյան գիծը պաշտպանող Անդրկովկասի ղեկավար կենտրոնի՝ Կովկասյան միության շուրջը[5]։ *Կովկասյան միության հիմնադրմամբ երկրամասի աշխատավոր մասսաների, այդ թվում՝ հայ պրոլետարիատի հասարակական-քաղաքական միտքը թևակոխեց բոլշևիկյան փուլը։*

Հենվելով Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի աշխատությունների վրա, Կովկասի կայուն իսկրայականները ծրագրի տե-

---

[4] «Искра», № 50, 15 октября 1903.

[5] *Տե՛ս Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1964, էջ 42—43։*

1903 թվականի մարտի 22-ին Թիֆլիսից ժնև ուղարկած մի նամակում ասված է. «Объединение Комитетов в Тифлисе Батумского и Бакинского в один Союзный Комитет состоялось на днях. Союзный Комитет принял огромным большинством программу Искры и Зари. Установлена тесная связь между Союзным Комитетом и Российской рабочей партией. Проект Организационного Комитета принят. На счет громогласных заявлений некоторых лиц, что де нам не поставить пролетариат Кавказа на ноги, пока Российская социал-демократическая партия не обещает Кавказу автономию, или что-то в этом роде. Нужно сказать, что эти господа ничего общего с здешними организациями не имеют и Союзный Комитет не только не согласен с ними, даже их не знает. Следовательно, они говорили так громко лично от себя. О происшедших недавно демонстрациях в Тифлисе, Баку и Батуме будет особая корреспонденция». (Партархив Арм. филиала ИМЛ, ф. 4033, оп. 5, д. 42, л. 1).

սական բաժնում տալիս էին տվյալ ժամանակաշրջանի բնութագիրը, ընդգծում, թե բանվորական շարժումը խոր արմատներ է ձգել Ռուսաստանի բոլոր ծայրերում, այդ թվում՝ Կովկասում։

Ժամանակակից պրոլետարիատը շատ լավ է գիտակցում այն պարզ ճշմարտությունը, որ ներկայումս տիրող ստրկության և մարդը մարդու ձեռքով շահագործվելու հիմնական պատճառը մասնավոր սեփականությունն է, այդ պատճառով նա իր առջև նպատակ է դրել ոչնչացնել մասնավոր սեփականությունը։ Սակայն այդ իդեալի իրականացմանն արդելք է հանդիսանում ժամանակակից պետական կազմը, որը ներկայացնում է բացառապես տիրող դասակարգերի շահերը, նա մի կողմից՝ պաշտպան է հանդիսանում մասնավոր սեփականության, իսկ մյուս կողմից՝ իր ամբողջ ծանրությամբ ճնշում է աշխատավոր դասակարգին։ Տիրող դասակարգը հասարակական կյանքը ուղղում է իր շահերին համեմատ, նրա ձեռքն է կենտրոնացած հարստությունը, ուժը և իրավունքը, նրան են հպատակվում զորքը և ձրիակեր չինովնիկների ահագին լեգեոնը։ Այդ ճանապարհով հարուստ դասակարգը ծծում է աշխատավոր ժողովրդի վերջին հյութերը։ Սրանով է բացատրվում այն արմատական անտագոնիզմը, որ գոյություն ունի այդ երկու միմյանց թշնամի դասակարգերի՝ ունևորների և չունևորների մեջ[6]։

Ծրագրի նախագծում ցույց է տրված, որ դասակարգային կռիվը կարմիր թելի պես անցնում է մարդկային ամբողջ պատմության միջով։ Այն ավելի սուր և միևնույն ժամանակ գիտակցական բնույթ է ստացել XIX դարում, երբ գոյություն ունեցող կազմին պատերազմ հայտարարեցին բոլոր երկրների պրոլետարները։

«Ապագա սոցիալիստական հեղափոխությունը հենց նրանով է տարբերվում անցյալ հեղափոխություններից,— ասված է ծրագրի նախագծում,— որ նա ոչնչացնելու է այն պայմանները, որոնց հետևանքն է հասարակության դասակարգերի բաժանումը և դասակարգային կռիվը։ Սոցիալական հեղափոխությունը «կոչընչացնի մարդու շահագործումը մարդու ձեռքով և դրանով իսկ վերջ կտրվի մի ազգի շահագործմանը մյուսի կողմից։ Ժողովրդի մեջ եղած անտագոնիզմի ոչնչացումով կվերջանա և ազգությունը-

---

6 Տե՛ս Նախագիծ ծրագրի Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միության, 1903, էջ 2։

ների մեջ եղած անտագոնիզմը». (Մարքս)։ Այդ պատճառով անհրաժեշտ է ոչնչացնել մասնավոր սեփականությունը և հանրայնացնել արդյունագործության բոլոր միջոցները, ինչպես, օրինակ, հողը, գործարանները, երկաթուղիները և այլն, և այլն — այսինքն՝ սոցիալիզմի իրականացումը։ Սակայն այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որ պրոլետարիատը իր ձեռքը ձգի քաղաքական իշխանությունը»[7]։

Կովկասի լենինյանները հաստատ համոզված էին, որ հեռու չէ այն օրը, երբ կապիտալիզմի ստեղծած հեղափոխական ուժը կոչնչացնի արդյունագործական միջոցների մասնավոր սեփականությունը, որով և կոչնչանա հասարակության դասակարգերի բաժանումը և վերջ կդրվի ամեն տեսակ շահագործման։

Այդ իսկ պատճառով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մերձավոր նպատակը ցարիզմի տապալումն է։ Դրան հասնելով պրոլետարիատը հնարավորություն կստանա իր գլխավոր նպատակին՝ սոցիալիզմի իրականացմանը հասնել։

Ղեկավարվելով «Իսկրա»-ի և «Զարյա»-ի սկզբունքներով, նրանք պահանջում էին՝ ընտրական իրավունքի հավասարություն, անձի և բնակարանի, մասնավոր գրագրության դաղտնապահության անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, մամուլի, ժողովների, գործադուլների և միությունների ազատություն, տեղափոխության և արհեստների ազատություն և անցագրերի վերացում, հավասար իրավունքներ բոլոր քաղաքացիների համար անկախ նրանց ցեղից, սեռից, կրոնից, ծագումից, բոլոր լեզուների հավասարություն, մշտական զորքի վերացում, եկեղեցին անջատել պետությունից և դպրոցները՝ եկեղեցուց, ձրի և պարտադիր կրթություն ինչպես ընդհանուր, նույնպես և պրոֆեսիոնալ երկու սեռի բոլոր երեխաների համար մինչև 16 տարեկան հասակը, բոլոր երեխաների հագուստը, սնունդը և դասական պիտույքները հոգում է կառավարությունը, դրամական օգնություն այն չքավոր ծնողներին, որոնք տնտեսական պատճառներից դժվարանում են իրենց երեխաներին դպրոց ուղարկել, ձրի միջնակարգ և բարձրագույն կրթություն, բոլոր կողմնակի հարկերը վերացվում են և հաստատվում է հարկերի պրոգրեսիվ սիստեմ եկամուտների և ժա-

---

7 Նախագիծ ծրագրի Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միության, 1903, էջ 2—3։

ությունների վրա։ Բանվոր դասակարգը ֆիզիկական և բարոյական այլասերումից ազատ պահելու և միևնույն ժամանակ նրա ազատարար կռիվը շարունակելու և ընդունակությունները զարգացնելու համար Կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միությունը պահանջում է 8-ժամյա բանվորական օր բոլոր կատեգորիաների բանվորների համար, գիշերային աշխատանքի վերացում, արգելել անչափահաս երեխաների աշխատանքը, 6-ժամյա աշխատանք 16—18 տարեկան հասակի անձանց համար։

Աշխատանքի այն ճյուղերում, որոնք վնասակար ազդեցություն ունեն կանանց օրգանիզմի վրա, արգելվում է կնոջ աշխատանքը, հղի կանայք ազատվում են աշխատանքից, բայց պահպանվում է նրանց աշխատավարձը առնվազն մինչև 6 շաբաթ ծննդից առաջ և հետո, օրենքով քաղաքացիական պատասխանատվության են ենթարկվում այն ձեռնարկատերերը, որոնց բանվորները արդյունագործության վնասակար պայմանների և կամ որևէ դժբախտ դեպքի պատճառով լիովին կամ մասամբ կորցրել են աշխատանքային ընդունակությունը, արգելվում է աշխատավարձը վճարել ապրանքով, բանվորները յուրաքանչյուր շաբաթ ստանում են իրենց աշխատավարձը, պետական թոշակ նշանակել ծերացած բանվորներին, ավելացնել գործարանային տեսուչների թիվը, նշանակել տեսչուհիներ աշխատանքի այն բաժանմունքներում, որտեղ գերակշռում է կանացի աշխատանքը, գործարանային օրենքների կիրառմանը հսկելու նպատակով բանվորները ընտրում են ներկայացուցիչներ, որոնց ռոճիկը տրվում է պետական գանձարանից, տեղական ինքնավարության օրգանները բանվորներից ընտրված անձանց հետ հսկում են ձեռնարկատերերի՝ բանվորներին հատկացրած բնակարանների ինչպես առողջապահական պայմանների, նույնպես և ներքին կարգ ու կանոնի վրա, ձրի բժշկական օգնություն բոլոր բանվորներին և այլն։

Քաղաքացիների իրավունքները անխախտ պահելու նպատակով Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միությունը պահանջում է.

Դատավորները ընտրել ժողովրդից, վերացնել բոլոր մյուս գոյություն ունեցող հատուկ դատարանները, ինչպես, օրինակ, զինվորական, հոգևոր և վարչական, դատավարությունը կատարել ձրի և տեղական մայրենի լեզվով. վերացնել մահվան պատիժը, հավիտենական բանտարկությունը, ֆիզիկական և առհասարակ

մարդկային արժանավորությունները գցող պատիժները, տաժանակիր աշխատանքը, լիակատար ներումն շնորհել բոլոր քաղաքական հանցավորներին։ Գյուղացիներին ճնշող հորատային դրության մնացորդները ոչնչացնելու և գյուղում դասակարգային պայքարի ծավալման համար Կովկասյան միությունը առաջարկում է. վերացնել գյուղացիության ուսերին ծանրացած հարկերը, այն օրենքները, որոնք արգելում են գյուղացուն իր հողերը կարգադրելու իր ցանկության համեմատ, հաստատել կոմիտեներ հողային հարաբերությունների վերաբերմամբ հորատային դրության մնացորդները վերջնականապես ոչնչացնելու համար և այլն։

Ի նկատի ունենալով այն առանձնահատկությունները, որոնցով Կովկասը տարբերվում է Ռուսաստանի մյուս մասերից՝ Կովկասյան միությունը անհրաժեշտ է համարում իր ծրագրի մեջ մտցնել հետևյալ կետերը.

1. Կովկասի դպրոցներում դասավանդությունը կատարվում է տեղական լեզուներով։

2. Անմիջապես ոչնչացնել գյուղացիների ժամանակավոր պարտավորությունները (времен. обязан.)։ (Քութաիսի և Թիֆլիսի նահանգներում մինչև այժմ պահպանվում են գյուղացիների ժամանակավոր պարտականությունները, որոնք համարյա թե չեն զանազանվում հորատային դրությունից և շատ հաճախ ավելի ծանրը են, քան հորատային դրությունը)։ (Թիֆլիսի և Քութաիսի նահանգներում գոյություն ունի գյուղացիների մի դաս, որոնք հնավանդ սովորությունների համեմատ անորոշ ժամանակով օգտվում են կալվածատերերի հողերից իրը կապալառուներ, սակայն վերջին ժամանակներս կառավարությունը ազնվականների առաջարկության համեմատ փոխեց նրանց վերաբերյալ օրենսդրությունը, այնպես որ, այժմ նրա կալվածատերը ցանկանա՝ կարող է արտաքսել խիզանին իր հողից, չնայած որ նա ամբողջ ժամանակ իր քրտինքով է հերկել այդ հողը)։

3. Խիզաններին հատկացնել այն հողերը, որոնցից այժմ նրանք օգտվում են։

4. Սեփականատերերը դարձնել Բաքվի, Երևանի, Ելիզավետպոլի և մասամբ Թիֆլիսի նահանգներում ապրող գյուղացիների այն ստվար թիվը, որոնց դրությունը որոշված է 1870 թ. կանոնադրությամբ («Поселянское положение, 1870 г.»).

5. Արքունական ազատ հողերը տրվում են բոլորին միանման պայմաններով՝ առանց կրոնի և ազգության խտրության, ղեկա-

վարվելով այն սկզբունքով, թե ամեն մի բնակիչ ինչպես կհարմարվի տեղի բնությանը և կլիմային[8]։

ՌՍԴԲԿ Կովկասյան միության ծրագրի նախագծում թեև ընկած էին «Իսկրա»-ի և «Ձարյա»-ի մշակած կուսակցության ծրագրի սկզբունքները, բայց նրանում, ըստ էության, ոչ մի խոսք չկար քաղաքական իշխանությունը նվաճելու՝ պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման մասին՝ մի բան, որ հստակ ձևակերպված էր «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստ»-ում։ Բացի այդ, Կովկասյան միության ծրագրի նախագծում, ինչպես տեսանք, ազգերի ինքնորոշման փոխարեն «լեգալ մարքսիստների» օրգան «Ժիզն» հանդեսի մշակած ծրագրից որդեգրել էր ֆեդերալիզմի սկզբունքները, դեմոկրատական հանրապետության պահանջը, մի բան, որ ՌՍԴԲԿ II համագումարից հետո ուղղվեց։

Կովկասյան միության II համագումարում ընդունված կանոնադրության մեջ նշված էր, թե միությունը լիովին ընդունում է ՌՍԴԲԿ ծրագիրն ու կանոնադրությունը, որը մշակվել է II համագումարում, որպես ՌՍԴԲԿ անբաժանելի մասը՝ օգտվում է շրջանային կազմակերպության իրավունքով։ Միության իրավասությունը տարածվում է Անդրկովկասի շրջանակներում։ Այնուհետև հաջորդում են դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքներով շարադրված 27 կետերը, որոնք համընթաց են ՌՍԴԲԿ կանոնադրության սկզբունքներին[9]։

ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը հրատարակչական-պրոպագանդիստական լայն գործունեություն ծավալեց։ 1903 թվականի մայիսին անցկացրեց ՌՍԴԲԿ Քութաիսի կազմակերպության կոնֆերանս, որն ընտրեց Քութաիսի կոմիտե, ստեղծեց պրոպագանդիստական կադրեր, որոնք քաղաքական-կուսակցական աշխատանք էին կատարում երկրամասի բանվորական կենտրոններում, ղեկավարության ոլորտի մեջ առավ Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, հեղափոխական շարժումների քաղաքական ղեկավարությունը։ 1903 թվականի ապրիլին ՌՍԴԲԿ Կովկասյան միության Թիֆլիսի կոմիտեն հայերեն մեծ տիրաժով հրատարակեց «Մայիսի մեկը» խորագրով թռուցիկը, որը լուսաբանում էր մայիսմեկյան տոնի նշանակությունը։ Նրա-

---

8 Տե՛ս Նախագիծ ծրագրի Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միության, 1903, ժնև, էջ 5—14։

9 Տե՛ս ՍՄԿԿ-ին կից Մեծ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33։ Քաղվածքների ֆոնդ։ См. также Архив Института Ленина, инв. № 880; Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 31, д. 141, л. 384.

նում ասված էր, թե իրենց առջև կանգնած է մի բարձր պատնեշ, մի սառը օձ, դա ռուս բռնապետությունն է, որը ոչ միայն ճգնում է անջատել մեզ մեր համաշխարհային ընկերներից, այլև աշխատում է խեղդել նրա նվիրական իդեաներն ու ձգտումները։ Բայց մեծ են պրոլետարիատի ազատագրական ոգին ու սերը, նրա ուժերը, որոնք կարող են լեռներ շարժել։ Միութենական կոմիտեն և Թիֆլիսի կոմիտեն մայիսմեկյան մանիֆեստացիայի էին կոչ անում հայ պրոլետարիատին՝ եղբայրաբար ձեռք-ձեռքի տված մյուս ազգերի պրոլետարների հետ, հանուն ինքնակալության կործանման և սոցիալիզմի հաղթանակի [10]։

1903 թվականի վերջերին Կովկասյան միությունը կազմակերպեց Հավլաբարի ընդհատակյա տպարանը, որը գործեց մինչև 1906 թվականի ապրիլի 15-ը։

ՌՍԴԲՊ Կովկասյան միութենական կոմիտեում տարբեր ժամանակ ընտրվել են Ն. Ալաջալովան (Աղաջանյան), Վ. Բորբովսկին, Մ. Բոչորիձեն, Մ. Դավիթաշվիլին, Պ. Ջափարիձեն, Բ. Կնունյանցը, Ֆ. Մախարաձեն, Դ. Պոստոլավսկին, Ի. Ստալինը, Ա. Ծուլուկիձեն, Մ. Ցիսակյան, Ստ. Շահումյանը և ուրիշներ։

Հայերից տարբեր ժամանակ ընտրվել են Բ. Կնունյանցը, Ստ. Շահումյանը, Ա. Զուրաբյանը, Ն. Աղաջանյանը (Ալաջալովա), Ա. Խումարյանը, Ս. Խանոյանը։ Նրանց ջանքերով լայն թափ հաղորդվեց հայերեն մարքսիստական գրականության հրատարակությանը։ Միայն 1903 թվականի նոյեմբերից մինչև 1904 թվականի մայիսը միութենական կոմիտեն հրատարակել է «Պրոլետարիատի կռվի» թերթիկ»-ի 3, 4, 5, 6, 7 և 8 համարները ռուսերեն, հայերեն և վրացերեն։ Այդ նույն ժամանակ լույս են տեսել 6000 օրինակ բրոշյուր և 149 հազար օրինակ թռուցիկ, որոնց մեծ մասը տպագրվել է Հավլաբարի ընդհատակյա տպարանում [11]։

1903 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Բաքվի «Նինա» տպարանում լույս տեսավ Կովկասյան միության գլխավոր օրգանի՝ «Պրոլետարիատի կռիվը» թերթի 2—3 միացյալ համարը (վրացերեն «Պրոլետարիատիս Բրձոլա»-ի 5—6 համարը)։

«Պրոլետարիատի կռիվը» թերթի երևան գալը մեծ իրադար-

---

10. Տե՛ս Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ, ժողովածու, էջ 22—24։

11 См. Второй съезд РСДРП. Сб. документов и материалов. М., 1955: Авлабарская нелегальная типография. Сб. материалов и документов, Тбилиси, 1955.

ձությունն էր Անդրկովկասի հեղափոխական շարժումների և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կյանքում, երկրամասի աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության և համախմբվածության համար մղված պայքարի պատմության մեջ։

«Պրոլետարիատի կռիվը» թերթի առաջին համարում զետեղված մի շարք հոդվածներում, հատկապես «Մեր պատասխանը» հոդվածում, որ գրված էր «Պրոլետարիատ»-ի խմբագրությանը հասցեագրված մի նամակի առիթով*, «Պրոլետարիատի կռիվը» մերկացնում էր ազգային կուսակցություններին, առանձնապես դաշնակցությանը։

Իր «Նամակում» արծարծելով Արևմտահայաստանում ազգային կուսակցությունների կողմից ծավալված շարժումները, հեղինակը նկատում էր, որ «ոչ մի մարդասեր, ոչ մի իսկական սոցիալիստ երբեք չի կարող անտարբերությամբ տանել այն բոլոր գազանությունները, որոնք սոսկալի թափով տեղի են ունենում այն երկրում, որը Թուրքաց Հայաստան է կոչվում»։ Նա գտնում էր, որ ոչ մի տեղ գոյություն չունի կռիվ սոցիալիզմի ներկայացուցիչների ու որևէ նահատակ ազգի, դեպի ազատության հրավիրող ուժերի միջև, որ «չի կարող սոցիալիզմը գոյություն ունենալ այն երկրում, ուր մարդը հեծում է քաղաքական աննորմալ կարգերի տակ, ուր գոյություն չունի ո՛չ կայքի, ո՛չ գույքի, ո՛չ անհատականության քիչ թե շատ ապահովություն ու ազատություն»։

Թերթը հրապարակելով այդ «Նամակը», «Մեր պատասխանը» հոդվածում բաժանում է վերոհիշյալ մտքերը և միաժամանակ ընդգծում, որ չի կարելի անդիտանալ արևմտահայերի ազատագրման գործում հայ բոլշևիկների բռնած ճիշտ դիրքը։ «Պրոլետարիատի կռիվը», արտահայտելով Կովկասի բոլշևիկների տեսակետը, «Մեր պատասխանը» հոդվածում[12] ցույց էր տալիս, որ շինծու է այն միտքը, որ իբրև թե մարքսիստները կռիվ են հայտարարում «բազմաչարչար տաճկահայ ժողովրդի ազատության համար մղվող կռվին»։ Հայ մարքսիստները սկզբից ևեթ մտահոգ-

---

* Նամակի տակ ստորագրված է «Al», հավանական է Ալ. Ռուբենու ծածկանունն է։

12 «Մեր պատասխանը» հոդվածի հեղինակը հավանական է Բ. Կնունյանցն է։ Այս միտքը մեզանից անկախ արտահայտել են Ա. Գ. Հովհաննիսյանը և Ե. Նալբանդյանը (Բաքու)։

վել են արևմտահայերի բախտով, բայց, պարզ է ոչ ազգային կուսակցությունների և հոսանքների մեթոդով։ «Ուղարկելով Տաճկաստանում կռվող եղբայրներին մեր սոցիալիստական ողջույնը,— գրում էր բոլշևիկյան հայերեն առաջին թերթը,— մենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաչարչար տանկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անշեղ ցանկությունն է, որ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ...» [13]։

1903 թվականի ապրիլ-մայիս ամիսներին «Պրոլետարիատի կռիվը» թերթի № 2—3-ի հետ միասին զուգահեռաբար լույս տեսավ «Պրոլետարիատի կռվի» թերթիկ»-ի № 1—2-ը։ Նրանում զետեղված հոդվածները նվիրված էին Բաքվի մայիսմեկյան բաղաքական ցույցին, Թիֆլիսի և Բաթումի բանվորների գործադուլներին, որոնց վրա իր ազդեցությունն էր թողել Ռոստովի բանվորների 1902 թվականի քաղաքական գործադուլը։ Ռոստովի անցքերի վերաբերյալ «Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին» ուղղված կոչը Կովկասյան միութենական կոմիտեն արտատպել է հայերեն, վրացերեն ու ռուսերեն և տարածել Կովկասում։ ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի կոմիտեների, Կովկասյան միության, տեղական լենինյան-իսկրայական կազմակերպությունների և խմբերի ղեկավար կազմում գործում էին տարբեր ազգերի բանվորական շարժման ակտիվ գործիչներ, որոնց հայացքներն ու գործունեությունը խարսխված էին մարքսիզմ-լենինիզմի հզոր տեսության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա։ Նրանք իրենց ինտերնացիոնալ պրոպագանդայով և ագիտացիայով հաղթահարում էին ազգային մեկուսացման և օտարացման արգելքները, ոչնչացնում ազգային հակամարտությունները, նպաստում դարեր ի վեր կողք-կողքի ապրող ժողովուրդների մերձեցմանը, դասակարգային ինքնագիտակցության հասունացմանը։ Բոլոր հուզող հարցերի մասին թռուցիկներն ու կոչերը հրատարակվում էին ռուսերեն, հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով։ «Ռուսը տարածում և փակցնում էր հայկական և վրացական պրոկլամացիաներ,— գրել է լենինյան «Իսկրա»-ն,— հայ բանվորն ագիտացիա էր մղում թաթարների մեջ, վրացի գրաշարը տպագրում էր ռուսերեն թռուցիկներ, և նրանք բոլորը միասին, համատեղ, մշակում էին ցույցերի, գործադուլների, կազմակերպական

---

13 «Պրոլետարիատի կռիվը», № 2—3, 1903։

ժողովների գործողությունների պլանը»[14]։ Այս բոլորի շնորհիվ կուտակվում էր Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը, երկրամասի պրոլետարիատը հանդես էր գալիս որպես մի միասնական ուժ։ Դա միակ ճիշտ տակտիկան էր, որ վարում էին երկրամասի լենինյանները, բազմազգ ժողովուրդների և ցեղերի միջև։ «Միայն կազմակերպվելով որպես միասնական, լրիվ ինքնուրույն կուսակցություն, առանց ազգությունների խորության,— 1903 թ. գրել է Բ. Կնունյանցը,— Ռուսաստանի պրոլետարիատը կարող է դառնալ այն հզոր քաղաքական ուժը, որն ընդունակ կլինի դառնալու երկրի բոլոր հեղափոխական ուժերի իսկական ավանգարդը և վերջնականապես ջախջախելու ինքնակալությունը»[15]։

2

ՌՍԴԲԿ II համագումարը, որ տեղի ունեցավ 1903 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին, սկզբում Բրյուսելում և ապա Լոնդոնում, կարևորագույն ուղենիշ հանդիսացավ Ռուսաստանի բանվոր դասակարգի պայքարի պատմության մեջ, շրջադարձային կետ համաշխարհային ամբողջ հեղափոխական շարժման մեջ։ Համագումարի հիմնական արդյունքը Ռուսաստանի մարքսիստական-լենինյան կուսակցության ստեղծումն էր։ Համագումարում քննարկված բոլոր 20 հարցերն էլ կարևոր էին, բայց ամենից ղեկավորը և սկզբունքայինը կուսակցության ծրագիրը, կուսակցության կազմակերպումը (ՌՍԴԲԿ կանոնադրության հաստատումը), Կենտրոնական կոմիտեի և կենտրոնական օրգանի՝ խմբագրության հաստատումն էր։ Համագումարի ոգին Վ. Ի. Լենինն էր։ Նա էր բոլոր հարցերում մարքսիստական ճշմարտության լույսով լուսավորում պատգամավորներին, վճռականորեն ջախջախում բոլոր տեսակի և գույնի օպորտունիստներին, տատանվողներին, կաղմալուծիչներին։ Միջազգային բանվորական շարժման բեկման պահին, Ռուսաստանում հասունացող մեծագույն ժողովրդական հեղափոխության նախօրյակին տեղի ունեցած համագումարում Վ. Ի. Լենինը ամբողջ ուժով պաշտպանեց մարքսիզմը։ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մահից հետո միջազգային բանվորական շարժման

---

14 «Искра», № 51, 22 октября 1903.

15 «Искра», № 51, 22 октября 1903.

պատմության մեջ առաջին անգամ Վ. Ի. Լենինի ջանքերով կոմունիստները II համագումարում ընդունեցին հեղափոխական ծրագիր, որի մեջ որպես հիմնական խնդիր առաջ էր քաշվում պայքարը պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման համար։ ՌՍԴԲԿ ծրագիրը նախապատրաստելու և ընդունելու ժամանակ պայքար էր մղվում ծրագրային հիմնական հարցերի շուրջը՝ կապիտալիզմի ընդհանուր տենդենցի գնահատման, սոցիալիստական հեղափոխության, բանվորների և գյուղացիների դաշինքի, ազգերի ինքնորոշման իրավունքի, տարերայնության ու գիտակցականության, բանվորական շարժման մեջ կուսակցության ղեկավար դերի, նրա նպատակների ու խնդիրների շուրջը։ Այս բոլոր հարցերում հաղթանակեցին Վ. Ի. Լենինը և նրա կայուն համախոհները։

Համագումարում Վ. Ի. Լենինը և լենինյանները սկզբունքային պայքար ծավալեցին միասնական, երկաթյա կարգապահությամբ ղեկավարվող կուսակցության ստեղծման համար, առաջադիր խնդիր ունենալով պահպանել կուսակցության կայունությունը և մաքրությունը։ «Մենք պետք է աշխատենք,— ասում էր Վ. Ի. Լենինը,— կուսակցության անդամի կոչումն ու նշանակությունն ավելի, ավելի ու ավելի բարձրացնել...» [16]։

Հայտնի է, որ համագումարում Կենտկոմի և կենտրոնական խմբագրության ընտրությունների քվեարկության ընթացքում հաղթանակեցին Վ. Ի. Լենինն ու նրա կայուն կողմնակիցները։

Հենց այդ պահից էլ Վ. Ի. Լենինի կողմնակիցներին, որոնք կուսակցության ղեկավար օրգանների ընտրությունների ժամանակ ձայների մեծամասնություն ստացան, սկսեցին անվանել բոլշևիկներ, իսկ Վ. Ի. Լենինի հակառակորդներին՝ մենշևիկներ։

Բոլշևիզմի առաջացման ակունքների մոտ, 1903 թվականի ամռանը, ձևավորվում է Հաղպատի լենինյան իսկրայական բոլշևիկյան բջիջը՝ Հայաստանի բոլշևիկյան անդրանիկ կազմակերպություններից մեկը։ Հաղպատի բոլշևիկյան կազմակերպությունը ծնունդ առնելով դարասկզբին, ընթացավ լենինյան ուղիով, խոշոր դեր կատարեց աշխատավոր գյուղացիության պայքարը կազմակերպելու գործում։ Հաղպատի բոլշևիկյան կազմակերպությունը, որ իր շարքերում ուներ Հաղպատ կայարանի և գյուղի, Սանահինի և այլ վայրերի սոցիալ-դեմոկրատներին, հիմնվել է Կովկասյան միության ներկայացուցիչ Մելիք Մելիքյանի, պրոպագան-

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 642։

դիստ կազմակերպիչ Ասատուր Կախոյանի (բանվոր Խեչո) ակտիվ մասնակցությամբ։ Հաղպատի կազմակերպության հիմնադիր կազմում էին Սիմ. Իսրայելյանը, Ս. Շամբարյանը, Մ. Թանդիլյանը, Ա. Սոխիկյանը, Ե. Մաթևոսյանը և ուրիշներ[17]։ Կազմակերպության աշխատանքներին գործուն մասնակցություն են ցույց տվել Ալավերդու և երկաթուղու հետ սերտորեն կապված առաջավոր բանվորներ Ս. Փիրուզյանը, Ս. Էվոյանը, Օ. Մարուքյանը, Պ. Թանդիլյանը, Շ. Բեժանյանը, Մ. Կալեկչյանը, Մ. Ալիխանյանը, Ա. Հ. և Մ. Շամբարյանները, Ա. և Շ. Պարոնյանները և ուրիշներ[18]։

Սերտ շփման մեջ լինելով Ալավերդու և Թիֆլիսի, հատկապես երկաթուղու գլխավոր արհեստանոցների բանվորական մասսաների հետ, հաղպատցիները իրենց վրա կրում էին հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը։ Դրանում մեծ չափով դրական դեր էին խաղում արդյունաբերության մեջ աշխատող տեղացի բանվորները և ՌՍԴԲԿ Կովկասյան միության ներկայացուցիչները։

Հաղպատի բոլշևիկյան կազմակերպությունը հեղափոխական տրամադրություններ էր սերմանում աշխատավորների մեջ, տարածում սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական գրականություն։ Նա առանձնապես մեծ աշխատանք ծավալեց ՌՍԴԲԿ II համագումարի որոշումների ոգով, գլխավորեց գյուղի աշխատավորության դասակարգային պայքարը[19]։

---

17 Տե՛ս Սիմ. Էվոյան, Լոռու ռևոլյուցիոն անցյալից։ Հին բոլշևիկների հիշողություններ, գիրք առաջին, Երևան, 1958, էջ 471։

18 Տե՛ս Ա. Կախոյան, Հոդվածներ և հուշեր, էջ 61։ Նույնը, Հ. Մելիքյան, Հաղպատի լենինյան իսկրայական բոլշևիկյան կազմակերպության հիմնադրման և ամրապնդման պատմությունից։ Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 7, 1963, էջ 15—34։

19 1923 թվականի հունիսի 10-ին հանդիսավոր պայմաններում տոնվեց Հաղպատի բոլշևիկյան կազմակերպության 20-ամյակը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի հանձնարարությամբ Ասք. Մռավյանը հաղպատցիներին հանձնեց Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտկոմի կարմիր դրոշը։ (Տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 123, 1923)։

Հաղպատի բոլշևիկյան կազմակերպության 60-ամյակը մեծ հանդիսավորությամբ նշվեց 1963 թվականի հուլիսին։ Տե՛ս Շ. Բեժանյան, Կայծից հրդեհ... «Սովետական Հայաստան», № 174, 25 հուլիսի, 1963, Հ. Սիմոնյան, Հիմնաքարը, «Ավանգարդ», 25 հուլիսի, 1963 թ., Հ. Մելիքյան, Լենինյան-իսկրայական մարտական կազմակերպությունը, «Սովետական Հայաստան», № 174, 25 հուլիսի, 1963 թ., նույնի, Հաղպատի լենինյան-իսկրայական, բոլշևիկյան կազմա-

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին Երևանի, Ալեքսանդրապոլի, Լոռու, Կարսի, Սարիղամիշի, Ղափանի և Հայաստանի այլ վայրերի ու զորամասերի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, Միութենական կոմիտեի օգնությամբ ձևավորվում՝ բոլշևիկյան ուղղության էին հետևում: Դրանք Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների հիմնաքարերն էին: Իր ձևավորման առաջին իսկ օրերից ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունը (որի մեջ մտնում էին Ալավերդու, Սանահինի, Ախթալայի, Քոլագերանի և այլ երկաթուղային կայարանների, Ալավերդու և Շամլուղի պղնձահանքերի ու գործարանների, սղոցարանի և այլ ձեռնարկությունների կազմակերպությունները) սերտ կապերի մեջ մտավ ՌՍԴԲԿ Թիֆլիսի և Կովկասյան միության հետ: Կազմակերպության աշխատանքներին ղեկավար մասնակցություն էին ցույց տալիս Ս. Շահումյանը, Մ. Ցխակայան, Ս. Սպանդարյանը, Մ. Մելիքյանը, Ա. Կախոյանը և ուրիշներ: Ալեքսանդրապոլում ակտիվ աշխատանք էր կատարում Պավել Նեստորի Արեշիձեն[20]: Նա հեղափոխական գրականություն, պրոկլամացիաներ ու թռուցիկներ էր տարածում քաղաքի երկաթուղայիններ և զինվորների մեջ, սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին հաղորդում Կովկասյան միության որոշումներն ու ցուցումները: 1902 թվականից երկաթուղու Ուլուխանլու (Մասիս)—Երևան տեղամասում, Երևանի Սարաջևի կոնյակի գործարանում, արական և իգական գիմնազիաներում (աշակերտական և առանձին ուսուցչական), փոստ-հեռագրական գրասենյակում և այլ ձեռնարկություններում ստեղծած սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ավելի են աշխուժացնում իրենց աշխա-

---

կերպության հիմնադրման և ամրապնդման պատմությունից. Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ), № 7, 1963, էջ 15—34։ Խ. Բարսեղյան, *Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների առաջնեկը, «Հայաստանի գյուղատնտեսություն», № 8, 1963, էջ 24—25.* Նույնի, *Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը, Երևան, 1965։* В. Неркарарян, Ахпатская большевистская организеция, «Коммунист», № 174, 25 июля 1963 г. Նույնի, *Մարտերի բովով, «Լենինյան ուղիով», № 8, 1963, էջ 82—89։ Հաղպատի լենինյան-իսկրայական կազմակերպությունը ոչ թե միակ անդրանիկ բոլշևիկյան բջիջն է, ինչպես գրվել է մինչև այժմ, այլ Հայաստանի առաջին բոլշևիկյան կազմակերպություններից մեկը, որը ձևավորվել է ՌՍԴԲԿ II համագումարից անմիջապես հետո։*

20 *Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33։*

տանքները, վերակառուցվում ՌՍԴԲԿ II համագումարի բոլշևիկյան որոշումների ոգով։ Երևանում կուսակցական քաղաքական գործունեություն էին ծավալել Ա. Մալխասյանը, Գ. Սոկոլովսկին, Վորոբյով ամուսինները և ուրիշներ[21]։

Բաքվի բոլշևիկյան կոմիտեի օգնությամբ հեղափոխական պայքարի մեջ են ներգրավվում Ղափանի պղնձարդյունաբերության մեջ աշխատող բանվորները, ագրարային ընդվզումների են դիմում Գորիսի աշխատավոր գյուղացիները։

ՌՍԴԲԿ II համագումարում հաղթանակեցին կուսակցության կառուցման լենինյան սկզբունքները։ Համագումարում կովկասյան պատգամավորներից Բ. Կնունյանցը (նրա ծածկանունն էր Բակինեց, Ռուբեն, ըստ արձանագրությունների՝ Ռուսով) և Ա. Զուրաբյանը (Ռաշիդ-բեկ) կանգնած էին լենինյան դիրքերի վրա, պաշտպանում էին Իլյիչի առաջարկությունները ընդդեմ մենշևիկների, պայքարում Մարտովի, Ակիմովիչից մինչև Տրոցկին միավորված օպորտունիստների և բունդական նացիոնալիստների դեմ։ Իր քաղաքական ակտիվությամբ և հետևողականությամբ համագումարում աչքի ընկավ անվեհեր հեղափոխական Բ. Կնունյանցը։ Նա բոլանդակալից ճառ արտասանեց ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության անունից, մի շարք կրակոտ ելույթներ ունեցավ և պաշտպանեց լենինյան գիծը։ Հուլիսի 19-ին (օգոստոսի 1) համագումարի 5-րդ նիստում հանդես գալով Բ. Կնունյանցը, դատապարտեց օպորտունիզմը կազմակերպական հարցերում։ Նա գտնում էր, որ հարկավոր է պրոլետարական կազմակերպությունները ստեղծել ոչ թե ըստ ազգային հատկանիշի, այլ տերիտորիալ սկզբունքի, քանի որ բոլոր ազգերի և ժողովուրդների պրոլետարիատի դասակարգային շահերը միասնական են և այդ շահերը պետք է պաշտպանի կենտրոնացված կուսակցական կազմակերպությունը։ Բ. Կնունյանցը փաստական հարուստ նյութերի միջոցով ցույց էր տալիս Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ինտերնացիոնալ բնույթը և նրանց բեղմնավոր գործունեությունը, պաշտպանում միասնական կուսակցության լենինյան սկզբունքները։ «Ես գտնում եմ,— ասում էր Բ. Կնունյանցը,— որ կուսակցության յուրաքանչյուր անդամ հանդիսանում է ամբողջ Ռուսաստանի, ամբողջ պրոլետարիատի ներկայացուցիչը։ Իսկ եթե մենք մեր յուրաքանչյուր պատգամավորին ընդունենք որպես պրոլետարիատի ազգային խմբերի ներկայացուցիչ, ապա

21 Հանգամանորեն տե՛ս Հին բոլշևիկների հիշողությունները, գիրք առաջին։

ես ստիպված կլինեմ ինձ համարել Անդրկովկասում ապրող ռուս, վրացի, հայ, թաթար և հրեա պրոլետարիատի ներկայացուցիչ, բայց այդպիսի երկար տիտղոսից ես սիրով հրաժարվում եմ, որպեսզի ինձ վրա վերցնեմ Ռուսաստանի պրոլետարիատի ներկայացուցչի հաճելի անունը»[22]:

Բ. Կնունյանցը Ռուսաստանում մարքսիստական միասնական կուսակցության ստեղծման համար մղվող պայքարի թեժ պահին սիրով էր խոսում Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ինտերնացիոնալ բնույթի մասին, քննադատում բունդի կազմակերպական սեպարատիզմը և մերժում այն[23]:

Կովկասի, հատկապես Բաքվի լենինյան-իսկրայական կազմակերպությունների 1901—1903 թթ. գործունեությունը, «Իսկրա»-ի Բաքվի ընդհատակյա «Նինա» տպարանի, երկրամասում մարքսիզմի տարածման և հեղափոխական շարժումների այն ժամանակվա պատմությունը հանգամանորեն շարադրված է Բ. Կնունյանցի կազմած «Բաքվի կոմիտեի զեկուցումը» փաստաթղթում, որը ներկայացվել է ՌՍԴԲԿ II համագումարին և առաջին անգամ հրապարակվել է 1959 թվականին՝ «ՌՍԴԲԿ II համագումարը, Արձանագրություններ» ժողովածուում[24]: Հանդիսանալով Կովկասի լենինյան-իսկրայական կազմակերպությունների, Բաքվի կոմիտեի առաջին ստեղծողներից մեկը, Բ. Կնունյանցը նրանում պատմում է այն արդյունավետ աշխատանքի մասին, որ կատարել էր Բաքվի կոմիտեն: Դա, ըստ էության, II համագումարի նախապատրաստման շրջանում Կովկասի լենինյանների ծավալած պայքարն արտացոլող մի վավերագիր է: Նրանում տրված էր ս.-դ. կազմակերպությունների ձևավորումն ու նրանց վիճակը, քաղաքական ագիտացիայի, պրոպագանդայի, հրատարակչության, կազմակերպական պայքարի, քաղաքական դեմոնստրացիաների և գործադուլների ընթացքը:

ՌՍԴԲԿ II համագումարում Բ. Կնունյանցը սպանիչ հարվածներ հասցրեց Բունդին և նրա պարագլուխներին: Նա մասնակցել է գրեթե բոլոր հիմնական հարցերի շուրջը ծավալված բանավեճերին և լենինյան դիրքերից արտահայտել իր տեսակետները: Հա-

---

22 Второй съезд РСДРП, июль-август, 1903, Протоколы, М., 1932, էջ 58—59.

23 См. там же.

24 Второй съезд РСДРП. Протоколы М., 1959, էջ 514—532.

մագումարի սղագրության մեջ 80 անգամ հիշատակվում է նրա անունը: Բ. Կնունյանցը Գ. Պլեխանովի և այլոց հետ միասին ընտրվել է Լեհաստանի և Լիտվայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության հետ պայմանագրի նախագծի քննարկման հանձնաժողովի կազմում, քարտուղարել է համագումարի առանձին նիստեր, հատկապես օդոստոսի 5(18)-ի 28-րդ նիստը: II համագումարում Բ. Կնունյանցի մատուցած խոշոր ծառայություններից է ղեկավար օրգանների՝ Կենտկոմի և կենտրոնական օրգանի ընտրությունների ընթացքում ցուցաբերած ակտիվությունը, լենինյան սկզբունքայնությունը և հետևողականությունը: Դատապարտելով Մարտովի և նրա կողմնակիցների անարխիզմը, Բ. Կնունյանցը լավագույն միջոցը համարում էր երկու եռյակների ընտրությունը՝ ինչպես Կենտկոմում, այնպես էլ կենտրոնական օրգանում[25]: Համագումարում հենց այդպես էլ «Կենտրոնական հիմնարկների ընտրությունների մասին» բանաձևի նախագծով հանդես է եկել նա, որը և ընդունվել է: Բացի քարտուղարական գրառումներից, համագումարի արձանագրությունների հանձնաժողովի արխիվում պահպանվել է Բ. Կնունյանցի ձեռագրով գրած հետևյալ բանաձևը, որտեղ ասված է. «Համագումարը որոշում է տոմսակների գաղտնի հանձնումով ընտրել Կենտկոմի երեք անդամ: Քվեարկությունը որոշում է բյուրոյի նախագահը և համագումարին հայտարարում է Կենտկոմի մեկ անդամին: Ռուբեն»[26]: Այդ բանաձևը, որ արժանացավ Վ. Ի. Լենինի հավանությանը, համագումարը ընդունեց:

Կուսակցության կյանքի այդ բախտորոշ ժամանակաշրջանում նման առաջարկությամբ հանդես գալն ու մինչև վերջ պաշտպանելը լավագույն վկայություն է այն բանի, որ Բ. Կնունյանցը քաղաքականապես հասունացած, կայուն իսկրայական, լենինյան էր:

Վ. Ի. Լենինը իր «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ» գրքում անդրադառնալով Բ. Կնունյանցի-Ռուսովի ճառին, նշել է, որ նա ամենից առաջ ճիշտ կերպով առաջարկել է ղեկավար օրգաններում ընտրել երկու եռյակ: Վերլուծելով համագումարում կազմակերպական հարցերում առաջացած տարաձայնությունները, Իլյիչը գրել է. «Մենք խորհուրդ կտայինք բոլորին, ովքեր ուզում են ինքնուրույնորեն վերլուծել կուսակցական պառակտման պատճառները և գտնել նրա արմատները համագումարում, կարդալ և վերստին կար-

---

25 См. там же.

26 Второй съезд РСДРП. Протоколы. М., 1959.

դալ ընկ. Ռուսովի ճառը, որի փաստարկումները փոքրամասնությունը ո՛չ միայն չհերքեց, այլև նույնիսկ չվիճարկեց։ Ասենք՝ չի էլ կարելի վիճարկել այնպիսի տարրական, այբբենական ճշմարտություններ, որոնց մոռացումն արդեն ընկ. Ռուսովը արդարացի կերպով բացատրում էր միայն ներվային զրգիռով»[27]։

Այսպես իրեն դրսևորեց համագումարում Բաքվի լենինյանների ներկայացուցիչ Բ. Կնունյանցը։

Համագումարից հետո Վ. Ի. Լենինի գլխավորությամբ նա պայքարում է մենշևիկ կազմալուծիչների դեմ, հանուն երիտասարդ կուսակցության շարքերի ամրապնդման, ակտիվ աշխատանք է կատարում «Իսկրա»-ում։ Իբրև կենտրոնական օրգանի աշխատակից, նա մասնակցում է թերթի 46—51 համարների հրատարակմանը։

Վ. Ի. Լենինը «Իսկրա»-ի խմբագրությունից հեռանալուց հետո, 1903 թվականի նոյեմբերի 6-ին Գ. Պլեխանովին ուղարկած նամակում գրել է. «...Ես հարկադրված եմ ձեզ հանձնել ԿՕ (Կենտրոնական օրգանի—Խ. Բ.) խմբագրության բոլոր պաշտոնական գրությունները և բոլոր նյութերը, որպիսիք և ուղարկում եմ ձեզ առանձին կապոցով։ Եթե նյութերի վերաբերյալ կպահանջվի որևէ պարզաբանում, ապա ես, իհարկե, հաճույքով կտամ այդպիսին։ Որոշ նյութեր տրված են աշխատակիցներին (Լեբեդևին, Շվարցին, Ռուբենին (Բ. Կնունյանցին—Խ. Բ.), որոնց հարկավոր է ասել՝ բոլորը ձեզ հանձնելու մասին»[28]։

Կուսակցության II համագումարից հետո էր, որ Բ. Կնունյանցը «Իսկրա»-ում հանդես եկավ մի շարք արժեքավոր հոդվածներով («Կավկազեց» ստորագրությամբ), Բաքվի քաղաքական գործադուլների, ցարի 1903 թ. հունիսի 12-ի՝ հայկական եկեղեցական գույքի զրավման մասին հակաժողովրդական օրենքի ու Կովկասում այդ առթիվ ծավալված հեղափոխական շարժումների և այլ հարցերի վերաբերյալ։

1903 թվականի վերջերին Բ. Կնունյանցը, որպես ՌՍԴԲԿ Կենտկոմի գործակալ (Վ. Ի. Լենինի «Իսկրա»-ի խմբագրությունից դուրս գալուց հետո, մոտավորապես նոյեմբերի 20-ին, Բ. Կնունյանցը կոոպտացիայի էր ենթարկվել Կենտկոմի կազմում), վերադառնում է Ռուսաստան, II համագումարի որոշում-

---

27 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 399—400։

28 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 209։

ների մասին զեկուցումներով հանդես է գալիս Ռուսաստանի հարավում, Կովկասում։ Մինչև Բաքու գալը, ծնևից 1903 թվականի վերջին, ՌՍԴԲԿ II համագումարի արդյունքների մասին նա ծավալուն նամակ է ուղարկում կուսակցության Բաքվի կոմիտեին, հանդամանորեն պատմելով համագումարի ողջ ընթացքը, բաքվեցիներին ճիշտ կողմնորոշելով ստեղծված իրադրության մեջ։

Երկու ամիս Կովկասում եռանդուն աշխատանք կատարելուց և լենինյան քաղաքական գիծը պարզաբանելուց հետո, Բ. Կնունյանցը մեկնում է Մոսկվա, ուր կոոպտացիայի է ենթարկվում ՌՍԴԲԿ Մոսկվայի կոմիտեում, որը ղեկավարում էր հավատարիմ լենինյան Ն. Է. Բաումանը։

ՌՍԴԲԿ II համագումարում լենինյան սկզբունքների պաշտպանությամբ հանդես էր գալիս ՌՍԴԲԿ Բաթումի պատգամավոր Ա. Զուրաբյանը։ Հուլիսի 20-ին (օգոստոսի 2) 6-րդ նիստում նա լուրջ փաստարկումներով ելույթ ունեցավ և պաշտպանեց կուսակցության ծրագրի լենինյան դրույթները, հատկապես ազգային հարցին և ազգային հարաբերություններին նվիրված բաժինը։

Մի քանի անգամ նա սուր բախումներ ունեցավ Տրոցկու հետ, մերկացնելով նրա օպորտունիստական հայացքներն ու գործելակերպը։ Համագումարի 13-րդ նիստում, 6(19) օգոստոսի, երբ Տրոցկին փորձեց առարկել Բ. Կնունյանցին (Ռուսովին), նրան անվանելով «երիտասարդ հեղափոխական», Ա. Զուրաբյանը վրդովված տեղից բացականչեց. «Դա դեռ հարց է, թե ով է ավելի երիտասարդ, նա՞, թե՞ դուք»։ Գ. Պլեխանովը հավանություն տվեց և միացավ Ա. Զուրաբյանի հայտարարությանը։

Արժեքավոր է համագումարին Ա. Զուրաբյանի ներկայացրած «Բաթումի կոմիտեի զեկուցումը»։

Համագումարից վերադառնալուց հետո Ա. Զուրաբյանը մենշևիկ կազմալուծիչների դեմ պայքարողների մեջ էր։

ՌՍԴԲԿ II համագումարի բոլոր պատգամավորները չէին, որ հետևողական մարքսիստական գիծ էին վարում։ Յուրաքանչյուր որոշում ծնվում էր թեժ պայքարի միջոցով։ Համագումարում մենշևիկյան ճահիճը գլխավորեցին Ն. Ժորդանիան, որը մասնակցում էր խորհրդակցական ձայնով և Դ. Թոփուրիձեն («Իսարի», ըստ արձանագրությունների՝ «Կարսկի»)։ Սերտորեն համագործակցելով Տրոցկու, Մարտովի, Աքսելրոդի և նրանց կամակատարների հետ, նրանք խախտեցին Կովկասի սոցիալ-դեմոկրատների տված նակազը, օպորտունիստական, մենշևիկյան գիծ վարեցին համագումարում։

ՌՍԴԲԿ II համագումարից հետո կուսակցության ներսում պայքարն ավելի սրվեց և բորբոքվեց նոր ուժով։ Մենշևիկները, խայտառակ պարտություն կրելով համագումարում, այնուհետև գաղար չունեին, նրանք դիմում էին պայքարի ստոր ձևերի, ձգտում էին վրեժ լուծել լենինյաններից, կազմալուծել կուսակցության գործունեությունը, օպորտունիստական վարակը տարածել նրանց շարքերում։ Վ. Ի. Լենինը և կայուն լենինյանները ցույց էին տալիս, որ ՌՍԴԲԿ շարքերում բոլշևիկների և մենշևիկների առաջացումը անխուսափելի շարունակությունն է սոցիալ-դեմոկրատիայի՝ հեղափոխական և օպորտունիստական բաժանման, որ մենշևիկները մարքսիզմի ուրացողներն են։ Մերկացնելով մենշևիկների օպորտունիզմը, Վ. Ի. Լենինն ասում էր. «Հո չի՞ կարելի, իսկապես, կուսակցությունը, որպես բանվոր դասակարգի առաջավոր ջոկատ՝ շփոթել ամբողջ դասակարգի հետ»[29]։

Բանվոր դասակարգի լավագույն մարտիկները համախմբվում էին Վ. Ի. Լենինի շուրջը։

1903 թվականի աշնանը ՌՍԴԲԿ Կենտկոմը հաստատեց Կովկասյան միութենական կոմիտեի կանոնադրությունը և միութենական կոմիտեն ճանաչեց որպես կուսակցության շրջանային կազմակերպություն։ Վ. Ի. Լենինի առաջարկությամբ «Պրոլետարիատի կռիվը» հաստատվեց իբրև միութենական կոմիտեի պաշտոնական օրգան։ ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը, Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի, Ալեքսանդրապոլի, Քութաիսի, Երևանի և այլ կազմակերպությունները, ամուր կանգնելով բոլշևիկյան դիրքերում, պայքարում էին մենշևիկների դեմ, հանուն լենինյան գծի հաղթանակի։ Վ. Ի. Լենինի օգնությամբ ձևավորվում են երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները, ամրապնդվում են նրանց կոմիտեները։ Դա, իհարկե, հարթ պրոցես չէր։ Այն ընթանում էր ներկուսակցական սուր պայքարի պայմաններում։ ՌՍԴԲԿ II համագումարից վերադառնալով, Ն. Ժորդանիան և Դ. Թոփուրիձեն իրենց համախոհների հետ միասին ֆրակցիոն և պառակտիչ գործունեություն ծավալեցին Կովկասում, հատկապես Կովկասյան միության կազմում։

Մինչև 1903 թ. օգոստոսը Գ. Պլեխանովը ընթանում էր Վ. Ի. Լենինի, բոլշևիկների հետ միասին։ Համագումարից հետո, հավանական է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, Գ. Պլեխանո-

---

29 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 325։

վը Վ. Ի. Լենինին գրել է. «Ես այս գիշեր շատ մտածեցի Կովկասի գործերի մասին և որոշեցի, որ հարկավոր է այստեղից ուղարկել մի մարդ, որը և ներկայացներ Կենտկոմը... Ես վախենում եմ, որ Կովկասը մեր ձեռքից գնա»[30]։

Վ. Ի. Լենինը և Գ. Պլեխանովը ծնևից 1903 թվականի հոկտեմբերի 20-ին Կովկասյան միութենական կոմիտեին ուղարկած նամակում գրել են. «Մենք կարող ենք միայն ողջունել ձեր որոշումը Իսարիին ժամանակավորապես հեռացնելու մասին մինչև գործի քննությունը Կենտրոնական կոմիտեի կողմից։ Համագումարում նրա վարքագծի մասին եղած տվյալների ամբողջ գումարը անպայման նրա դեմ է խոսում։ Համագումարը ցույց տվեց նրա լիակատար անկայունությունը... Այդպիսի գործիչը արժանի չէ քաղաքական վստահության։ Համենայն դեպս, հարկավոր է նրան վերաբերվել առնվազն զգուշությամբ, չտալով պատասխանատու պոստեր, դա է մեր խոր համոզումը՝ և՛ իմ (Լենինի), և՛ Պլեխանովի»[31]։

Վ. Ի. Լենինը և Գ. Պլեխանովը իրենց նամակում լիովին հավանություն տալով Կովկասի բոլշևիկների վարած հեղափոխական գծին, ջերմորեն ողջունելով և հաջողություններ ցանկանալով նրանց, այնուհետև գրել են. «Թո՛ղ Կովկասի ընկերները հաստատորեն ընթանան այն ուղիով, որի վրա նրանք կանգնել են, թո՛ղ նրանք չլսեն բամբասանքները մեծամասնության դեմ... թո՛ղ նրանք շարունակեն համերաշխ աշխատանքը ընկերական վստահությամբ դեպի Կենտկոմը, և մենք համոզված ենք, որ այժմ կուսակցական «խառնակությունը» արագորեն կվերանա[32]։

Կովկասում բոլշևիզմի գիրքերի ամրապնդման գործում կարևոր դեր խաղաց 1903 թվականի հոկտեմբերի երկրորդ կեսին Թիֆլիսում գումարված ՌՍԴԲԿ Կովկասյան միության II համագումարը, որին մասնակցում էին միութենական կոմիտեի, Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի, Իմերեթ-Մինգրելական կոմիտեների և «Պրոլետարիատի կռիվը» թերթի ներկայացուցիչները։ Վ. Ի. Լենինը վաղօրոք հավանություն էր տվել Միութենական կոմիտեի պահանջին՝ ՌՍԴԲԿ Կենտկոմի ներկայացուցչին կովկասյան համագումար ուղարկելու վերաբերյալ։ Իլյիչի հանձնարարությամբ

---

30 См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ед. хр. 39.

31 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 198։

32 Նույն տեղում, էջ 198—199։

Ն. Կրուպսկայան Կիևում գտնվող Կենտկոմի բյուրոյին առաջարկել էր որևէ մեկին ուղարկել Թիֆլիս: Սակայն համագումարի սկսելուն կարճ ժամանակ մնալու պատճառով հնարավոր չեղավ Կենտկոմի ներկայացուցչի ապահովումը: Կովկասյան բոլշևիկների II համագումարի քննարկած գլխավոր հարցը ՌՍԴԲԿ II համագումարի արդյունքները և Միության հետագա գործունեության ծրագիրն էր: Համագումարում ելույթ ունեցան ՌՍԴԲԿ II համագումարի պատգամավորները: Դ. Թոփուրիձեն իրեն պահեց անպատշաճ ձևով, զրպարտիչ հայտարարություններ արեց բոլշևիկների հասցեին, պահանջեց բոյկոտել ՌՍԴԲԿ Կենտկոմին, չկատարել նրա որոշումները: Աղավաղելով ՌՍԴԲԿ II համագումարի որոշումները, Դ. Թոփուրիձեն հայտարարեց, թե համագումարը իբրև որոշել է՝ վերացնել Կովկասյան միության օրգան «Պրոլետարիատի կոիվը», դադարեցնել ազգային լեզուներով ագիտացիոն գրականության հրատարակությունը: Քաղաքական շիկացած մթնոլորտում էին անցնում նիստերը: Հակառակ մենշևիկների շղաձգություններին ու դիմադրությանը, Կովկասյան միության համագումարը ձայների լիակատար մեծամասնությամբ հավանություն տվեց ՌՍԴԲԿ II համագումարում Վ. Ի. Լենինի և նրա կողմնակիցների մարքսիստական դիրքին, ընդունեց բոլշևիկյան բանաձևվեր, դատապարտեց մենշևիկների քայքայիչ գործունեությունը, կոչ արեց երկրամասի բոլոր կուսակցականներին պաշտպանել միասնական կուսակցության ստեղծման համար Կենտկոմի ձեռնարկումները, համախմբվել՝ արդեն ձևավորված կուսակցության կենտրոնական ղեկավար օրգանների գլխավորությամբ ամենուրեք և համերաշխ պայքար մղելու համար, որպեսզի միավորված պրոլետարիատի ահեղ ուժը ավելի շուտ կարողանա կատարել իր մերձավոր պատմական միսիան՝ տապալել ցարական դեսպոտիզմի գարշելի լուծը[33]:

ՌՍԴԲԿ Կովկասյան միության II համագումարը քննության առավ և մենշևիկների դեմ մղած սուր պայքարի պայմաններում հաստատեց միութենական կոմիտեի կանոնադրության նախագիծը: Դա բոլշևիկյան կարևորագույն փաստաթուղթ էր, որն ամբող-

---

33 См. Второй съезд РСДРП. Сб. документов и материалов, М., 1955, стр. 155. См. так же, ЦА ИМЕЛ при ЦК КПСС, док. 41651, лл. 11—12; Архив Армянского филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 33, оп. 5, д. 56, св. 2, л. 1. Դ. Թոփուրիձեի հայտարարությունը տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 34, оп. 1, ед. хр. 652.

ջովին տոգորված էր կուսակցության լենինյան կազմակերպական սկզբունքներով[34]։

Կովկասյան միության II համագումարը որոշեց ծավալել գրական-հրատարակչական աշխատանքները, ընտրեց միությունական կոմիտեի նոր կազմ, որի մեծ մասը կայուն լենինյաններ էին։ Այդ հանգամանքը երկրամասի կուսակցական կազմակերպություններում է՛լ ավելի ամրապնդեց բոլշևիկների դիրքերը։ Համագումարից հետո միությունական կոմիտեի ղեկավարները, Մ. Ցիտակայան, Ա. Մուլուկիձեն, Ա. Զուրաբյանը[35], Դ. Պոստալովսկին և ուրիշներ մեկնեցին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քա-

---

[34] Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 31, д. 141, л. 384.

[35] Ա. Զուրաբյանը միությունական կոմիտեի կազմում կոոպտացիայի ենթարկվեց համագումարից հետո։ Կուսակցության խորհրդի նախագահ Գ. Պլեխանովին 1903 թ. (հոկտեմբերի 20-ից ոչ ուշ) գրած նամակում Ա. Զուրաբյանը նկարագրելով ՌՍԴԲԿ Կովկասյան միության II համագումարի, հատկապես Թոփուրիձեի բռնած դիրքի մասին, ցավով նշել է, թե բունդիզմը Կովկասում սկսում է խոր արմատներ գցել։ Զուրաբյանը Թոփուրիձեի արարքը բնութագրելով ավանտյուրիստական, անհանգստություն է հայտնում միությունական կոմիտեի հետագա գործունեության առթիվ։ Ահա Ա. Զուրաբյանի նամակի լրիվ տեքստը.

«Глубокоуважаемый Георгий Валентинович!

Получили Вашу телеграмму, хотя настоящего сообщения еще не имеем. Ваше письмо, как нельзя во время прибудет. С[ъезд] уже состоялся, и многое произошло там, о чем я Вам писал. Но все это превзошло все мои ожидания. Подробности Вам передаст наш товарищ — податель сего письма, которому можете вполне довериться. Скажу только, что с[ъезд] проявил в достаточной степени кавказский бундизм и оказалось, что он пустил глубокие корни и в будущем придется весьма много возиться с ним, если, в особенности, принять во внимание, что район деятельности здесь очень велик и этот бундизм будет более болезненным явлением, чем настоящий бундизм. Исари (Топуридзе), как истый авантюрист, воспользовался таким настроением и все время старался углубить и расширить это настроение. Этим и объясняется скоропалительность с[ъезда]. С этой целью ему, разумеется, необходимо было итти против централизма, и вот он, пользуясь безсознательностью большинства, бил себя в грудь кулаками и распинался за централизм и ортодоксию, а на деле все его предложения сводились к тому, чтобы подкопаться под централизм. Для большего развития «шовинизма» в товарищах, он даже не посовестился оклеветать, сказав, что будто бы было решено там, изъять агитационную литературу на местных языках, для чего и орган «Борьба пролетариата» был будто бы «упразднен» (его подлинное слово). Это было уже верх нахальства и цинизма и я принужден был протестовать, назвав его «клеветником» и человеком, у которого «слиняла со-

ղաքներն ու արդյունաբերական վայրերը, զինվորական կայազորները՝ զեկուցումներ տալու, տեղական կուսակցական կազմակերպությունները Վ. Ի. Լենինի շուրջը համախմբելու համար։ Միութենական կոմիտեի օգնությամբ երկրամասում, այդ թվում՝ Հայաստանում վերջ է տրվում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների անջատվածությանը ու դաղափարական տարընթացությանը։ Դրանում խոշոր դեր խաղաց Կովկասյան Միությունը, որի կանոնադրությամբ սահմանված էր՝ միավորել և նպաստակամղել տեղական կոմիտեների գործունեությունը, հոգ տանել աղդային լեզուներով մարքսիստական դրականության ստեղծման, համակովկասյան թռուցիկների, պրոկլամացիաների, կոչերի հրատարակման ու տարածման մասին։

1904 թվականի ամռանը միութենական կոմիտեի անդամ Ստ. Շահումյանը եղավ Հայաստանի դավառներում, Լոռիում, Երևանում. ուսումնասիրեց սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների վիճակը, օգնեց նրանց։ Երևանում մոտիկից ծանոթա-

---

весть». Моя цель была вызвать его на товарищеский суд, но, к сожалению, он не подался на эту удочку.

Многое Вы усмотрите из протоколов, хотя и неполных, но всю картину лучше Вам нарисует товарищ.

Результаты: с[ъезд] реабилитировал Исари и при двукратных выборах избрал его в С[оюзный] К[омитет], но за отказом товарищей с ним работать сам «великодушно» отказался, что еще больше подняло его в глазах его приверженцев. Ваш покорный слуга не выбрался, а при кооптации отказался, заявив, что для дела считает более целесообразным быть назначенным от Ц. К. В числе выбранных из «наших», в полном смысле слова, здесь нет, есть двое, но они живут в различных городах и, следовательно, не могут играть решающей роли в делах С[оюзного] К[омитета], а один, оставшийся здесь, хотя и не подается компании Исари, но представляет опасность с другой стороны, а именно: склоняется к с.-р. (он из бывш[его] «Уральского Союза»), признает террор, ужасно сентиментален, упрям, в нужных случаях он готов жертвовать политической комбинацией, переходя на этическую почву, ради каких-то принципов абстрактной справедливости и «душевной чистоты». Им можно пользоваться, но отдавать ему в руки бразды я лично считаю совершенно невозможным и безусловно вредным для дела. А сейчас он один, и бразды отчасти фактически, но вполне юридически находятся в его руках. Вот каково положение дел. По моему оно сквернейшее из всех скверных положений. Предоставляю все это на усмотрение Ваше и наших общих товарищей. За сим жму горячо и крепко Вашу руку». (Ленинский сборник VII, էջ 117, 118).

նալով քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությանը, նա Երևանի բոլշևիկների առջև խնդիր դրեց՝ վճռականորեն պայքարել ինքնակալության և բուրժուազիայի դեմ։ Նա անձամբ հետաքրքրվեց Երևանի ռուսական գիմնազիայի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության աշխատանքներով, որը Երևանի այն ժամանակվա ուժեղ կազմակերպություններից մեկն էր։ Այդ կազմակերպության կազմում բացի մարքսիստ Ալեքսանդր Մալխասյանից, մտնում էին Մոսկվայի համալսարանից արտաքսված Գ. Սոկոլովսկին, ժողովրդական ուսումնարանի դիրեկտորի կին Զելինաձեն, Լաբինսկին, Սալինչը, կանանց գիմնազիայի մաթեմատիկայի դասատու Վախմինան, Վորոբյովներ ամուսինները և ուրիշներ։

Հայաստանի քաղաքներում և գյուղերում Ստ. Շահումյանի կատարած շրջագայությունն ունեցավ այն խոշոր նշանակությունը, որ տեղական բոլշևիկյան կազմակերպություններն ու խմբերն անմիջական կապ հաստատեցին (նրանք ովքեր չունեին) ՌՍԴԲԿ Թիֆլիսի և Կովկասյան միութենական կոմիտեի հետ, սկսեցին ստանալ նրանց գրականությունը և թռուցիկները, ավելի ակտիվորեն ներգրավվեցին համառուսական քաղաքական կյանքի մեջ։

1904 թվականին արդյունավետ աշխատանք կատարեցին Ալեքսանդրապոլ և Սանահին կայարանների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, Ալեքսանդրապոլի կայազորի սոցիալ-դեմոկրատական խմբակը։ ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական խմբակը, որ հիմնադրվել է 1902 թվականին, հետզհետե իր շարքերը համալրեց տարբեր զորամասերի զինվորներից, ստեղծեց ընդհատակյա գրադարան և տպարան, կապ ստեղծեց ՌՍԴԲԿ Կովկասյան միության և, ապա՝ Կենտկոմի հետ։

1904 թվականին Ալեքսանդրապոլի բոլշևիկները մայիսմեկյան տոնակատարությանը տվին քաղաքական ցույցի բնույթ։ Դեռ ապրիլին քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ գործադուլ արեցին Ջիթողցյանի գործարանի և մի քանի այլ ձեռնարկությունների բանվորներ։ Նրանք ընտրեցին գործարանային կոմիտե, որը և մշակեց գործադուլավորների տնտեսական պահանջները և ներկայացրեց Ջիթողցյանին։ Երբ գործադուլավորների պահանջները մերժվեցին, բոլշևիկները ապրիլի 30-ին գործարանի մոտ կազմակերպեցին մեծ միտինգ, որին մասնակցում էին քաղաքի շատ բանվորներ։ Միայն ոստիկանու-

թյան միջամտությունից հետո հաջողվեց ցրել միտինգի մասնակիցներին։

ՌՍԴԲԿ II համագումարից հետո Կովկասյան միությունն ուժեղ թափ է հաղորդում հեղափոխական գրականության, կոչերի, պրոկլամացիաների, թերթերի հրատարակությանը, հմտորեն օգտագործելով լեգալ և անլեգալ հնարավորությունները։

Արժեքավոր է «Պրոլետարիատի կռվի» թերթիկ»-ի 1904 թվականի հոկտեմբերի 1(14)-ի համարում հրապարակված Ստ. Շահումյանի՝ «Երևանից։ Հայ իրականությունից» հոդվածը։ Նրանում տրված է հայ իրականության այն ժամանակվա պատկերը, մերկացված են բուրժուական նացիոնալիստները, հատկապես դաշնակցականները։ Շահումյանը ցույց է տալիս, որ չի կարելի ռուսական ցարիզմը նույնացնել ռուս ժողովրդի հետ, որ դաշնակցությունն ամենից ավելի անսկզբունք և ռեակցիոն կուսակցությունն է, որը շովինիստական թույնով է վարակում հայ իրականությանը, ուստի անհրաժեշտ է անողոք կերպով մերկացնել դաշնակներին, նրանց կամակատարներին, ամբողջ ճշմարտությունն ասել աշխատավորներին ու նրանց՝ մյուս ազգերի պրոլետարիատի հետ միասին առաջնորդել հաղթական պայքարի[36]։ «Հայ իրականությունից» հոդվածում Շահումյանը ջերմորեն էր խոսում հայկական գյուղում տեղի ունեցող սոցիալական և քաղաքական տեղաշարժերի մասին։ «Հայկական շատ գյուղերում,— գրել է Շահումյանը,— արդեն կան գյուղական երիտասարդության կազմակերպություններ, որոնք կապված են մեր կոմիտեների հետ, ստանում են մեր շրջանությունը և լարված ուշադրությամբ հետևում են հայ և այլազգի բանվորների հերոսական պայքարին։ Այս պայքարը... արդեն բազմաթիվ փայլուն հաղթանակներ է տարել. նա հաղթանակ կըտանի նաև այժմ, մոլեգնող, սիրտ կտրատող հայկական ռեակցիայի դեմ։ Սոցիալ-դեմոկրատիան, իր համարձակ պրոպագանդայով, պայծառ ճառագայթի նման կթափանցի հայկական պրովինցիայի այդ «մթին թագավորությունը», բնակչությանը կստիպի մտածել քաղաքականորեն, իր դրոշի տակ կկազմակերպի նրա պրոլետարական և կիսապրոլետարական մասսաներին և վրճռական բոպեին նրանց կտանի գրոհելու ինքնակալությանը, եղբայրորեն միացած... ռուս ժողովրդի հետ»[37]։

---

36 Ստ. Շահումյան, *Երկեր*, հատ. 1, էջ 52։

37 «Листок борьбы пролетариата», № 12—13, 1904.

Կովկասյան միությունն տպագիր օրգանները հրճվանք էին պատճառում Վ. Ի. Լենինին։ Իլյիչը գոհ էր «Պրոլետարիատի կռիվը» թերթի սկզբունքային գծից, նրա մարքսիստական ուղղությունից, մենշևիկների դեմ նրա մղած հետևողական պայքարից։ 1904 թվականի դեկտեմբերի 20-ին, Վ. Ի. Լենինը Կովկասյան միութենական կոմիտեի հրավերին՝ «Պրոլետարիատի կռվին» աշխատակցելու վերաբերյալ գրել է. «Թանկագին ընկերներ։ Ստացա «Պրոլետարիատի կռվի» վերաբերյալ Ձեր նամակը։ Աշխատում եմ գրել և կհաղորդեմ խմբագրության իմ ընկերներին»[38]։

Կովկասում բոլշևիզմի գիրքերն ամրապնդելու, լենինյանների հաղթանակն ապահովելու և մենշևիկներին մերկացնելու գործում կարևոր դեր խաղացին միութենական կոմիտեի III համագումարը (1904 թվականի մայիս) և կովկասյան բոլշևիկների առաջին կոնֆերանսը (1904 թ. նոյեմբեր)։ Համագումարում Կովկասյան միության և նրա տեղական կոմիտեների զեկուցումները ցույց տվեցին, որ բոլշևիկների ազդեցությունն ուժեղանում է մասսաների վրա։

Միութենական կոմիտեի զեկուցման մեջ հանրագումարի էին բերվում մենշևիկների դեմ մղած պայքարի արդյունքները, ՌՍԴԲԿ III համագումարի նախապատրաստման ուղղությամբ կատարված աշխատանքը։ Քննարկված 12 հարցերից կարևոր էին ապագա ցույցերի բնույթի, բանվորների, գյուղացիների, զորքի և սովորողների շրջանում կատարվող ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի և քաղաքական դրականության մասին զեկուցումները։ Պրոպագանդայի և ագիտացիայի ծավալման մասին ծրագրային ելույթ ունեցավ Ստ. Շահումյանը, որ Գերմանիայից վերադառնալուց հետո մոտիկից ուսումնասիրել էր Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը։ Կովկասի բոլշևիկների համագումարը, վերլուծելով Հայաստանում տիրող քաղաքական դրությունը, ընդգծեց, որ հայ աշխատավորների մեջ իրենց գործունեությունը ակտիվացրել են դաշնակցականները։ Խնդիր դրվեց հայկական գյուղում ուժեղացնել բոլշևիկյան ագիտացիան, մասսաներին ստիպողաբար ազատել նացիոնալիստների ազդեցությունից, բանվորներին և աշխատավոր գյուղացիներին ներդրավել բոլշևիկյան կուսակցության կողմը։ Համագումարում սուր պայքար առաջացրեց կուսակցական դրականության, հատկապես «Պրոլետարիատի կռիվը» թերթի հրատարակությունն

38 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 315։

արտասահման փոխադրելու հարցը։ Մենշևիկները պատրվակ դարձնելով, թե «Պրոլետարիատի կռվի» հրատարակությունը արտասահմանում երաշխավորված կլինի ձախողումներից, նպատակ ունեին զավթել միության օրգանը, այն վարել մենշևիկյան «Իսկրա»-ի ոգով։ Բայց մերժվեց նրանց այդ առաջարկը, որոշվեց, որ «ձևականորեն ճիշտ չէ, ըստ էության անցանկալի, թերթի հրատարակությունը արտասահման տեղափոխելը»։ Դրանում ևս հաղթեցին բոլշևիկները, իրենց ձեռքում պահելով «Պրոլետարիատի կռիվը», գաղափարական այդ ուժեղ զենքը։

Կովկասի բոլշևիկների գործունեության համար ծրագրային նշանակություն ունեցան 1904 թվականի օգոստոսին Վ. Ի. Լենինի գլխավորությամբ Շվեյցարիայում տեղի ունեցած 22 բոլշևիկների խորհրդակցության «Կուսակցությանը» ուղղված դիմումը, Վ. Ի. Լենինի 1904 թվականի նոյեմբերի 10-ի նամակը Բաքվի կուսակցական կազմակերպության ակտիվ գործիչներից Ս. Ստեպանիին։

3

Երկար ու համառ պայքարից հետո մարքսիզմը դառնում է հայ հասարակական-քաղաքական մտքի հոսանք, դուրս է գալիս լայն ճանապարհ, պաղավորվում և ծփանք է տալիս։ Բոլշևիկյան կազմակերպությունները, զինված մարքս-լենինյան տեսությամբ, աշխատավոր զանգվածներին առաջնորդում են քաղաքական նոր դոտեմարտերի։

Հայ իրականության մեջ մարքս-լենինյան գաղափարների տարածման գործում որոշակի նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ ՌՍԴԲԿ II համագումարից հետո ժնևում, 1904 թվականի փետրվարին, ՌՍԴԲԿ Կենտկոմի հրատարակչության կից ստեղծված վրացերեն և հայերեն սոցիալ-դեմոկրատական գրականության հանձնաժողովի գործունեությունը։ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ Ս. Շահումյանը եռանդուն աշխատանք է ծավալում։ Անդրկովկասում այդ ժամանակ մարքսիստական գրականության, հանրամատչելի ագիտացիոն բրոշյուրների պահանջը չափազանց մեծ էր։ Բաքվի և Թիֆլիսի ընդհատակյա տպարանները հիմնականում զբաղված էին թերթերի, պրոկլամացիաների և թռուցիկների հրատարակմամբ։ Մասնավոր տպարանատերերը հրաժարվում էին հեղափոխական գրականություն

հրատարակել։ Եվ ահա հենց այդ պայմաններում էր, որ Կովկասի բոլշևիկները Վ. Ի. Լենինին գրած նամակներում թախանձագին խնդրում էին՝ որքան կարելի է արտասահմանից ավելի շատ հայերեն և վրացերեն գրականություն ուղարկել Կովկաս։ Միութենական կոմիտեին 1903 թվականի հոկտեմբերի 20-ին ուղարկած նամակում Վ. Ի. Լենինը և Գ. Պլեխանովը գրել են. «Մենք այժմ եռանդուն մտածում ենք այստեղ վրացական և հայկական գրականության հրատարակության կազմակերպման մասին։ Այդ գործին ձեռնամուխ են եղել ձեռնհաս ընկերներ, փող՝ հույս ունենք ճարել։ Հարկավոր է օգնություն և՛ գրականությամբ, և՛ միջոցներով»[39]։

1904 թվականի փետրվարի 22-ին ՌՍԴԲԿ Կենտկոմը հաստատում է վրացերեն և հայերեն սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակման հանձնաժողովի կազմը, իսկ 24-ից Կենտկոմի հաստատված կանոնադրության համաձայն[40], ձևնա-

---

39 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 199։

40 Ահա հանձնաժողովի կանոնադրության վրացական խմբի տեքստը։ «Устав Женевской группы. содействия при Комиссии по изданию партийной с.-д. литературы на грузинском языке.

1. Деятельность группы заключается в содействии Комиссии в издании партийной с[оциал]-демократической литературы на грузинском языке.

2. С этой целью группа организует денежные сборы во всех подходящих формах: устанавливает членский взнос, распространяет партийную литературу, устраивает вечера, собирает пожертвования по подписным листам и пр[очее], а также, по возможности, оказывает литературную помощь (переводы, компеляции и пр.).

3. Членами группы могут быть лица, живущие более или менее постоянно в Женеве и согласные исполнять все обязанности, налагаемые на членов группы уставом ее.

4. 5. Из своей среды группа избирает кассира и секретаря.

5. 6. Свои сношения группа ведет с Комиссией через своего секретаря.

6. 7. Собрания группы созывает секретарь или — по желанию комиссии, или по собственной инициативе, секретаря или же по желанию не менее трех членов группы.

7. 8. Секретарь и кассир ежемесячно представляют отчет группе; отчеты, по утверждению группой, вместе с деньгами, передаются в комиссию.

9. Конфликты внутри групп и между группами разрешаются комиссией.

8. 4. Члены группы принимаются и исключаются лица по большин-

մուխ են լինում հրատարակչական աշխատանքներին։ Հանձնաժողովի աշխատանքը Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ ղեկավարում էր Ստ. Շահումյանը։ Ժնևյան հայկական հրատարակչությունում բացի Ս. Շահումյանից (Ս. Սեմյոնով), մտնում էին Ա. Երզընկյանը (Դուգարիան), Մ. Մանուչարյանը (Կարյան)։ Նյութական և բարոյական օգնություն ստանալու նպատակով հանձնաժողովը ժնևում և Բեռլինում ստեղծում է առանձին խմբեր, իր շուրջն է համախմբում Եվրոպայի հայ ուսանողների միության որոշ անդամների։ Հանձնաժողովի կանոնադրության մեջ ասված էր, թե սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակման նպատակով խմբերը կազմակերպում են գրամամիջոցների հավաքում՝ բոլոր հնարավոր ձևերով—անդամավճարների, հանգանակության, գրական երեկույթների, գրականության տարածման, ինչպես և ցույց են տալիս գրական օգնություն, կատարում են թարգմանություն և այլ գործեր։

Կարճ ժամանակամիջոցում ժնևում կուսակցական տպարանը ձեռք է բերում հայկական տառեր և ձեռնամուխ լինում մարքսիստական թռուցիկների, կոչերի, բրոշյուրների և գրքերի հրատարակությանը։ Միայն 1904 թվականի մարտին ժնևի կուսակցական տպարանում լույս են տեսել ՌՍԴԲԿ կանոնադրությունը՝ 700 օրինակ, պատերազմի առթիվ Կենտկոմի՝ «Ռուս պրոլետարիատին» պրոկլամացիան՝ 7000 օրինակ, «Ծրագիր ռուս. սոց. դեմ. բան. կուսակցության (ընդունված երկրորդ հերթական համագումարում»)՝ 7000 օրինակ, «Ծանուցում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության երկրորդ հերթական համագումարի մասին»՝ 2300 օրինակ, ՌՍԴԲԿ II համագումարի բանաձևերը՝ 2300 օրինակ։ Հրատարակվեցին Վ. Ի. Լենինի գրած՝ ՌՍԴԲԿ Կենտկոմի մի քանի թռուցիկներ, այդ թվում՝ «Մայիսի

ству ом голосов, при отсутствии мотивированного протеста. В случае же мотивированного протеста вопрос решается комиссией.

Михаелидис
Семенов
Жирули
Ефремидзе
Габиани
Гугарян

(См. ЦПА ИМЛ при ЦК КПСС ф. 18, оп. 34, ед. хр. 35420: Նույն ձևով էլ կազմված էր հայկական հանձնաժողովի կանոնադրությունը)։

մեկը», տպագրության պատրաստվեց Վ. Ի. Լենինի «Գյուղական չքավորությանը» բրոշյուրը:

Բոդդան Կնունյանցը, որ այդ ժամանակ վերադարձել էր ՌՍԴԲԿ II համագումարից, Ժնևյան հանձնաժողովից անընդհատ մարքսիստական գրականություն էր պահանջում: Ս. Շահումյանը ձեռնարկում է մարքսիստական մի շարք նշանավոր երկերի, այդ թվում Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ», Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և այլ գործերի թարգմանությունն ու հրատարակությունը: Ժնևյան կուսակցական հայկական հրատարակչական գործին օգնելու նպատակով Ս. Շահումյանը Բեռլինից Ժնև է հրավիրում իր դասընկերներից Մ. Մանուչարյանին (Զար): Նա ձեռնարկում է բոլոր միջոցները «Մանիֆեստ»-ի հրատարակությունն արագացնելու համար: «1903 թվականի ամառային արձակուրդներից հետո Կովկասից Բեռլին վերադառնալով,— պատմում է Մ. Մանուչարյանը,— ես այլևս Շահումյանին չտեսա Բեռլինում: «Դրա փոխարեն ընկերները ինձ հանձնեցին նրա մի նամակը, որտեղ նա պնդում էր, որ անհրաժեշտ է իմ տեղափոխվելը Շվեյցարիա: Նա գրում էր, որ ամռանը ապրելով Կովկասում, նա եկավ այն համոզման, որ Անդրկովկասի բանվորական մասսաների մեջ տարվող աշխատանքի արգելակը հայերեն և վրացերեն սոցիալ-դեմոկրատական գրականության բացակայությունն էր, որ հարկավոր են ինչպես հանրամատչելի գրքույկներ բանվորների համար, այնպես էլ թեորիական բովանդակությամբ հագեցված աշխատություններ տեղական ինտելիգենցիայի այն խավերի համար, որոնք բավականաչափ չգիտեն ռուսաց լեզուն: Այնուհետև, նա գրում էր, որ այդ ուղղությամբ Ժնևում արդեն որոշ քայլեր են ձեռնարկված և որ ես ինձ հետ բերեմ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստ»-ի այն թարգմանության սկիզբը, որ ես սկսել էի 1902 թվականին և որը մնացել էր անավարտ...

Ես միայն գարնանը գնացի Ժնև և տեսա Ստեփանին կուսակցական ամենաեռուն աշխատանք կատարելիս... Ամառվա վերջերին մենք միասին ավարտեցինք «Կոմունիստական մանիֆեստ»-ի թարգմանությունը...»[41]:

Իր ձեռքի տակ ունենալով «Մանիֆեստ»-ի մինչև այդ կա-

---

[41] См. «Бакинский рабочий», № 211 (634), 20 сентября 1922.

տարված ևս երկու ձեռագիր թարգմանություններ, Մ. Մանուչարյանի օգնությամբ, Շահումյանը կարճ ժամանակամիջոցում ավարտում է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունը և հանձնում տպագրության։

«Հրատարակության տալով «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունը,— գրել են թարգմանիչները,— մենք պարտք ենք համարում հայտնել հետևյալը.

Այս հրատարակության համար մենք ունեցել ենք ձեռքի տակ երեք տարբեր թարգմանություններ։ Առաջինը արված է գերմաներեն վեցերորդ տպագրությունից, Շտուտգարտ (Գերմանիա), 1894 թ., երկրորդը—Գ. Պլեխանովի ռուսերեն թարգմանությունից, Կովկաս, 1901 թ. և երրորդը (տաճկա-հայկական բարբառով)— Պ. Լաֆարգի ֆրանսերեն թարգմանությունից, Ժնև, հավանորեն 1902—1903 թվականին։

Ներկա հրատարակությունը ներկայացնում է գլխավորապես առաջին և երկրորդ թարգմանությունների միացումը՝ ուղղված և խմբագրված համաձայն վերջին գերմանական հրատարակության։

Ժնև, 25 օգոստոս, 1904»[42]։

Չնայած առողջական ծանր վիճակին, Ս. Շահումյանը օր ու գիշեր աշխատում էր, թարգմանության տեքստը նորից ու նորից համեմատում գերմաներեն և այլ լեզուներով հրատարակի վրա եղած հրատարակությունների հետ։ Նա հետևում էր «Մանիֆեստ»-ի տպագրությանը, խմբագրում և սրբագրում շարվածքը։ «Հենց այժմ իմ աչքի առաջ, ինչպես կենդանի,— գրել է Մ. Մանուչարյանը,— տեսնում եմ գրաշարների կողքին, տառարկղների վրա գլուխը կախած Սանփանին, մի փոքրիկ տպարանում, որտեղ տպագրվում էին «Իսկրա»-ն և մեր գրքույկները»[43]։

Վ. Ի. Լենինը օգնում էր «Մանիֆեստ»-ի հայերեն հրատարա-

---

42 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Մանիֆեստ կոմունիստական կուսակցության, թարգմանություն գերմաներենից, Ժնև, 1904։*

43 «Бакинский рабочий», № 211 (634), 20 сентября 1922. *Հարկավոր է նկատել, որ ՌՍԴԲԿ Կովկասյան միության օրգանի՝ «Պրոլետարիատի կոչը» թերթի հրատարակությունը արտասահման փոխադրելու կապակցությամբ, միությունական կոմիտեն ՌՍԴԲԿ Կենտկոմին գրած նամակում հայտնել է, թե խմբագրական աշխատանքը ղեկավարելու համար հարկավոր է Կենտկոմից նշանակել մեկին, ըստ որում՝ «թախանձագին խնդրում են, որ այդ անձնավորությունը, թեկուզ առաջին շրջանում, լինի ընկեր Լենինը» (տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, քաղվածքների ֆոնդ։ Բնագիրը գտնվում է ՄԼԻ-ի կուսակցական արխիվում, փաստաթուղթ № 34420)։*

կությանը: Թարգմանությունը փաստորեն իրականացվել է նրա ղեկավարությամբ: Թե որքան ուշադիր և հոգատար էր Իլյիչը ժնևյան հրատարակչական հանձնաժողովի նկատմամբ, ցույց է տալիս նաև այն փաստը, որ հայերեն ու վրացերեն լույս տեսած գրքերի վերջին էջերում ամեն անգամ տրվում էր հետևյալ հասցեն. Y. Oulianov 3 die la Coline Pres Paut Neut, Ceneve Suisse для Комиссии: Դա Վ. Ի. Լենինի ժնևյան հասցեն էր:

Այսպիսով, հայ իրականության մեջ 1904 թվականի ամռանը (հուլիս-օգոստոս), Վ. Ի. Լենինի օգնությամբ, Ս. Շահումյանի թարգմանությամբ և խմբագրությամբ, ՌՍԴԲԿ Կենտկոմի ժնևի տպարանում առաջին անգամ լույս է տեսնում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի լրիվ թարգմանությունը Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի երեք առաջաբաններով (1872, 1883 և 1890 թվականների գերմանական հրատարակությունների):

Ի տարբերություն «Մանիֆեստ»-ը թարգմանելու և հրատարակելու բոլոր նախորդ փորձերին, առաջին անգամ, շնորհիվ ժնևի բոլշևիկյան հրատարակության, գիտական կոմունիզմի ծրագրային այդ մեծ փաստաթուղթը մատչելի է դառնում հայ պրոլետարիատին և աշխատավորական լայն զանգվածներին, տարածվում նրանց շրջաններում: «Մանիֆեստ»-ի ժնևյան հրատարակությունը, իր քաղաքական նշանակությունից բացի, կարևոր դեր խաղաց մարքսիստական գրականության հետագա թարգմանությունների գործում, խոր ակոս գծեց հայ հասարակական-քաղաքական մտքի վրա: Ս. Շահումյանը ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով «Մանիֆեստ»-ի թարգմանությանը, հարազատ է մնացել տեքստի բովանդակությանը, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ստեղծել և հայոց լեզվի ու գիտական շրջանառության մեջ է մտցրել մի շարք տերմիններ, որոնք մեծապես օգնեցին մայրենի լեզվի մարքսիստական, հասարակական-քաղաքական տերմինոլոգիայի մշակմանը՝ հեղափոխական գրականության հայերեն թարգմանությունների և ինքնուրույն գործերի շարադրման ժամանակ: «Մանիֆեստ»-ի ժնևյան հրատարակությունում լավ են պահպանված բնագրի ուժն ու ոճը:

Հետագայում, Սովետական իշխանության տարիներին, ձեռնարկելով «Մանիֆեստ»-ի նոր թարգմանությանը, Ս. Կասյանը ճիշտ է նկատել, թե «Մանիֆեստը» «...կլասիկ ստեղծագործություն է, թարգմանությունն էլ պետք է կարելվույն չափ նմանեցնել դրան: Պետք է այն ոչ թե բառացի թարգմանել առանց ըմ-

բռնելու, առանց խորապես պատկերացնելու այդ անմահ գործի հանճարեղ մարքերի հակիրճ ձևակերպումները, միաժամանակ ոտնակոխ անելով թարգմանության լեզվի հատկությունները, այլ տալ անսխալ կերպով այդ ձևակերպումները, պահել այդ աշխատության շեշտի ու տոնի հսկայական ուժը, ոճի ուրույնությունը, ընթերցման սահունությունը, բոլոր դեպքերում էլ պահպանելով դյուրըմբռնելիությունն ու հայոց լեզվի օրենքները»[44]։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի հայերեն առաջին հրատարակությունը նշանավոր իրադարձություն էր հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման, Հայաստանում մարքսիզմի տարածման և բոլշևիկյան կազմակերպությունների պատմության մեջ[45]։

---

44 Տե՛ս Ս. Կասյան, «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունների առթիվ։ «Կոմունիստական մանիֆեստ», գերմաներենից թարգմանեց Ս. Կասյան, Երևան, 1927, էջ IV։ Դժբախտաբար Ս. Կասյանը, ինչպես երևում է «Մանիֆեստ»-ի հայերեն հրատարակությունների առթիվ նրա գրած համառոտ առաջաբանից, ծանոթ չի եղել Ս. Շահումյանի 1904 թվականի թարգմանությանը։

45 Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» նախահեղափոխական շրջանում հայերեն վերահրատարակվել է 1906 թվականին՝ Բաքվում։ «Մանիֆեստ»-ը հայերեն հրատարակվել և տարածվել է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո։ 1918 թվականին Մոսկվայում Պ. Մակինցյանի թարգմանությամբ լույս է տեսել «Մանիֆեստ»-ի նոր հրատարակությունը։ Մինչև 1966 թվականը «Մանիֆեստը» հայերեն լեզվով հրատարակվել է 27 անգամ, ավելի քան 160 հազար օրինակ տիրաժով։ Այն հայերեն հրատարակվել է նաև արտասահմանում՝ Ամերիկայում, Բուլղարիայում, Հունաստանում և այլուր։ 1933 թվականին Ֆրանսիայի կոմկուսակցության հայկական սեկցիան Արիներում Ժակ Դյուկլոյի առաջաբանով, Կ. Մարքսի մահվան 50-ամյակի առթիվ հրատարակել է «Մանիֆեստը» (տե՛ս «Մանիֆեստ կոմունիստ. կուսակցության», հրատ. ֆրանս. կոմկուսի, Արիներ, տպարան «Սեան», 1933)։

Անհրաժեշտ է նշել, որ մարքսիզմի կլասիկների երկերի թարգմանության գործին մեծ չափով օգնել են երկրամաս աքսորված ռուս մարքսիստները։ Այսպես, օրինակ, Վ. Կուռնատովսկին և Գ. Ֆրանչեսկին 1901 թվականին ռուսերեն թարգմանել են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», իսկ 1902 թվականին՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը»։ (См. «Коммунист», № 87, 12 апреля, 1953, Ереван). Այդ թարգմանությունը բազմացվել է ձեռագիր ձևով և տարածվել մարքսիստական խմբակներում։ Դրանցից մեկ օրինակ, հեղափոխական «Բանվորական մարսելյոզ», «Դեկաբրիստների պատասխանը Պուշկինին», «Քայլերգ», «Դուրինուշկա», «Օրորոցային» և այլ երգերի հետ միասին պահվել է Մեսխի բանտի քաղաքական դանտարկյալների անլեգալ գրադարանում։ Ինչպես պատմում է հին բոլշևիկ Ա. Կա-

Ժնևյան հրատարակչական հանձնաժողովին նյութական և բարոյական աջակցություն էին ցույց տալիս արտասահմանում գտնվող կովկասցիները, սոցիալ-դեմոկրատական խմբերը։ Այդ մասին են վկայում ստորև հրապարակվող նյութերը։

Վրացերեն և հայերեն սոցիալ-դեմոկրատական կուսակցական գրականության հրատարակության հանձնաժողովի գրամարկղի 1904 թ. փետրվարի 23-ից մինչև մայիսի 13-ի հաշվետվությունը.

Մուտք

1. Լայպցիգից վրացական տպարանին		29 ֆր(անկ)
2. Երևկոններից		
Ժնևից		
Մյունխենից		130 ֆր.
Փարիզից		10 ֆր.
x-ից նվիրատվություն		20 ֆր.
y-ից »		150 ֆր.
Կենտկոմից (պարտք)		170 ֆր.
Ժնևի աջակցող խմբից		9 ֆր.
	Ընդամենը՝	538 ֆր.

Ծախսեր

1. Տառերի համար	490 ֆր.	
2. Փոխադրման, պահպանման, տառերի տեղափոխման	5 ֆր.	85 սանտիմ
3. Գրաշարներին	10 ֆր.	
4. Կլիշե գլխագրի համար	5 ֆր.	
5. Փոստային ծախսեր	9 ֆր.	75 սան.
Ընդամենը՝	520 ֆր.	60 սան.
Ընդհանուր գրամարկղին՝	3 ֆր.	80 սան.
Ընդամենը՝	524 ֆր.	40 սան.

Խոյանը իր հիշողություններում, 1902 թվականին Մետեխի բանտում կար ավելի քան 80 քաղաքական բանտարկյալ, նրանք իրենց անլեգալ գրադարանը պահում էին 31-րդ խուցի հատակի տակ, թիթեղյա մի արկղի մեջ։ Սովետական կարգերի հաստատումից հետո հայտնաբերվել են այդ անլեգալ գրադարանի նյութերը, որի մի մասը պահվում է ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքս-Էնգելսի-Լենինի Հայկական ֆիլիալի արխիվում (ֆ. 33, դ. 181ա)։

«Մանիֆեստ»-ի այդ թարգմանությունը ինքնուրույն է։

Հայկական դրամարկղ

Մուտք

1. Հանձնաժողովին աջակցող ժնևան խմբից		220 ֆր.
2. Արամայիսից [Երզնկյան]		20 ֆր.
3. Բեռլինից Սեմյոնովի [Շահումյանի] միջոցով		56 ֆր.
	Ընդամենը՝	296 ֆր.

Ծախսեր

1. Գրաշարին	83 ֆր.	
2. Տառերի տեղափոխության	1 ֆր.	
3. Գրաշարին ավանս	46 ֆր.	
4. Հայկական տառերի համար	150 ֆր.	20 սան.
5. Փոստային ծախսեր		56 սան.
Ընդամենը՝	280 ֆր.	76 սան.
Ընդհանուր դրամարկղին՝	3 ֆր.	80 սան.
Ընդամենը՝	284 ֆր.	56 սան.

Ընդհանուր դրամարկղին

Մուտք

Վրացական և հայկական դրամարկղից ստացվել է	7 ֆր.	60 սան.

Ծախսեր

1. Հանձնաժողովի կանոնադրության հրատարակության համար	2 ֆր.	50 սան.
2. Փոստային ծախսեր	2 ֆր.	40 սան.
3. Մանր ծախսեր	2 ֆր.	70 սան.
Ընդամենը՝	7 ֆր.	60 սան. [46]

Ժնևյան հրատարակությունները տպագրվում էին հաղարավոր օրինակներով և գաղտնի ճանապարհներով ուղարկվում Կովկաս՝ տարածվում հայ աշխատավորների շրջանում։

1903 թվականի վերջերին Ժնևում հիմնվում է այսպես կոչված «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպու-

[46] См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 18, оп. 34, ед. хр. 35420.

թյունը», որն իր գործունեությունը տեղափոխում է Կովկաս՝ Բաքու։ Թեև «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» հիմնադիրներն ու գաղափարախոսները (Բ. Իշխանյան, Ղազար և Նարիման Տեր-Ղազարյաններ, Տ. Խաչատրյան, Երվանդ Պալյան, Ալեքսանդր Ռուբենի (Մատուրյան), Գ. Պիճիկյան, Գարեգին Կուզիկյան (Սալեմ), Դավիթ Անանուն և ուրիշներ) կազմակերպությունը կնքել էին բանվորական անունով, բայց իրականում նա շատ հեռու էր այդպիսին լինելուց։ «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը» խորթ էր պրոլետարական ինտերնացիոնալիզմը։ Դա սոցիալ-նացիոնալիստների կազմակերպություն էր, մինչև այդ դաշնակցություն և հնչակյան կուսակցություններին պատկանող դրականագետ ինտելիգենտների խմբակցություն[47]։

«Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» առաջին և հիմնական սկզբունքը բանվորներին ըստ ազգությունների բաժանումն էր, պրոլետարիատի հեղափոխական ուժերի ջլատումը։ Ամեն մի ազգություն ներկայացնում է յուրահատուկ «սպեցիֆիկ» միջավայր,— ասում էին նրանք,— տարբեր դասակարգային շերտավորումով։ Այդ պատճառով էլ հարկավոր է, որ ամեն մի ազգի մեջ գործի ազատ և ավտոնոմ կերպով այդ ազգի բանվորական կազմակերպությունը... Բունդի օրգան «Վնասնիկ բունդա» թերթն շտապեց աշխարհին ծանուցել, թե ինքը դաշնակից ունի Կովկասում, հանձին «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության»[48]։

«Սպեցիֆիկները» սկզբից ևեթ հակադրվեցին ՌՍԴԲԿ-ին, բոլոր միջոցներով աշխատում էին կազմալուծել բանվորական շար-

---

47 Սպեցիֆիզմի առաջացման մասին տե՛ս «Վեմ» ամսագիր, 1933, հատ. Ա., Փարիզ, էջ 103—104։

48 Տե՛ս «Վեստնիկ բունդա», № 1—2, 1904, № 3, հունիս 1904, նոյեմբեր 1904 թ. և այլն։ «Վ. Բ.»-ի «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպություն», «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության արտասահմանյան կոմիտեի դիմումը» և այլ նյութերի դեմ հոդվածներ տպագրվեցին «Իսկրա»-ում, «Իսկրա»-ի 1904 թվականի ապրիլի 1-ի № 63-ի հավելվածում լույս տեսավ ՌՍԴԲԿ Կենտկոմին կից հայերեն և վրացերեն սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակության հանձնաժողովի դիմումը։ Նրանում ասված էր, թե՝ «Վեստնիկ բունդա»-ն իր № 1—2-ում հաղորդում է հետևյալը. «Կովկասյան միության շարքերից դուրս են եկել անդամների մի մասը և հիմնել նոր կազմակերպություն «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպություն» անունով։ Այդ հաղորդումը զուրկ է ամեն տեսակի հիմքից, ոչ ոք դուրս չի եկել Կովկասյան միությունից և առան-

ժումները, հայ բանվորներին մեկուսացնել ռուս, վրացի, ադրբեջանցի և այլ ազգի բանվորներից, աշխատավորների շարքերում նացիոնալիզմ սերմանել։ «Սպեցիֆիկները», վրացական ֆեդերալիստների, հրեական բունդի օրինակով, հետևելով ավստրիական ուսուցիչներին, իրենց համարում էին ինքնավար, «իբրև միակ ներկայացուցիչը հայ պրոլետարիատի»։ Նրանք նույնիսկ հանդգնեցին ասելու, թե ովքեր կողմնակից են ՌՍԴԲԿ-ի «...կազմակերպական սիստեմին, քիչ արգելք չեն հանդիսանում, խանգարելով մեզ»[49]։

1905 թվականի հոկտեմբերին գումարված իր համագումարում սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը հարձակումներ կատարելով ՌՍԴԲԿ-ի, հատկապես բոլշևիկների վրա, արձանագրում է, որ «Նա մինչև այսօր չի կարողացել կանոնավոր դաստիարակել և կազմակերպել հայ պրոլետարիատը... որ նա անկարող է եղել հասկանալ զանազան ազգությունների բանվորների ներքին առանձնահատուկ քաղաքական-հասարակական պայմանները, մասնավորապես հայ պրոլետարիատի.— սոց. դեմ. բան. հայ կազմակերպության խորհրդաժողովն հայտարարում է, որ այդ կուսակցությունը անընդունակ է հանդիսանալու հայ պրոլետարիատի ներկայացուցիչը»[50]։

ձին կազմակերպություն չի ստեղծել։ Այստեղ հիշատակված Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը հիմնվել է ոչ թե Կովկասյան միության կամ էլ կուսակցության տեղական կոմիտեների անդամներից, այլ մի զույգ ինտելիգենտներից, ընդհանուր ոչինչ չունեցող ո՛չ Կովկասյան միության, ո՛չ էլ կոմիտեների հետ»։

Սա առաջին լուրջ հարվածն էր, որ մենշևիկ հրատարակչական հանձնաժողովը Ստ. Շահումյանի գլխավորությամբ հասցրեց «սպեցիֆիկներին»։

49 Տե՛ս «Կյանք», № 14, 1906, էջ 215, № 16, էջ 248։

50 Սոց.-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծրագրի նախագիծը, կազմակերպական հիմունքը և կանոնադրությունը։ 1905, էջ 1, 26, 27 և այլն։ Նկատենք, որ նրանք մինչև այդ իրենց կոչում էին «Հայ (հայկական) սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպություն», հետագայում՝ «Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն»։ Նման բառախաղից բունդի դաշնակցի էությունը չէր փոխվում։

«Սոցիալ-դեմոկրատական հայ կազմակերպությունը» իր «Մանիֆեստ»-ում պնդում էր, որ «Պրոլետարիատին (հայ) չի կարելի անջատել (հայ) հասարակությունից, միավորված (հայ) պրոլետարիատը պետք է լինի հայ ժողովրդի ամենախնելացի և ուժեղ օրգանը», որ «հայ պրոլետարիատը, միավորված սոցիալիստական կուսակցության մեջ, պետք է ձգտի որոշելու հայ հասարակական միտքը», որ «հայ պրոլետարիատը իր ցեղի հարազատ որդին է լինելու» և այլն (տե՛ս «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» մանիֆեստի 3-րդ հոդվածը)։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ «Անջատ բանվորները ոչինչ են։ Միավորված բանվորները՝ ամեն ինչ»[51], յուրաքանչյուր գիտակից բանվոր իրեն պետք է համարի մարքսիստների միջազգային ընտանիքի անդամ և չկտրվի բանվորների միջազգային կազմակերպությունից, որ կյանքում հարկավոր է կիրառել ս.-դ. բանվորների ինտերնացիոնալ միասնության սկզբունքը, «...մի սկզբունք, որ այնքան փայլուն կերպով ստուգված է Կովկասում՝ 1898 թվականից»[52]։ Միասնությունը բանվոր դասակարգի հաղթանակի գրավականն է։ Այն անսահման թանկ, անսահման կարևոր է բանվորների համար։ Մինչդեռ, «սպեցիֆիկները» պահանջում էին բանվորներին ըստ ազգությունների բաժանող և նրբին նացիոնալիզմ քարոզող «կուլտուր-ազգային ավտոնոմիա», հայ բանվորներին կոչ էին անում պարփակվել ազգային կեղևի մեջ, մնալ «ազգային բնակարաններում»։ Այդ է պատճառը, որ երբ 1904 թվականին ազգային սոցիալ-դեմոկրատների միավորման հարցը քննարկվեց կուսակցության խորհրդում և որոշվեց միջկուսակցական կոնֆերանս հրավիրել, Վ. Ի. Լենինը «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» ներկայացուցիչների մասնակցության դեմ արտահայտվեց։ «Այդ մասին խոսք էլ չի կարող լինել»[53],— ասել է Վ. Ի. Լենինը։ Վ. Ի. Լենինը 1905 թվականի սեպտեմբերի 5-ին, ՌՍԴԲԿ Կենտկոմին գրած նամակում նշել էր «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» սերտ կապը բունդի հետ[54]։ Իսկ «Պրոլետարի» թերթին ուղարկած «Այսպես կոչված Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության մասին» (1905 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր) դիրեկտիվում գրել էր. «Կենտրոնական կոմիտեից մենք ստացել ենք նամակ, որ հայտնում է, թե «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը» ցանկություն է հայտնել ստորագրելու այն բանաձևի տակ, որն ընդունված է բոլոր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների կոնֆերանսում (խոսքը Ռիգայում սեպտեմբերի 7 (20—22)-ին տեղի ունեցած սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կոնֆերանսի մասին է—Խ. Բ.)։ Բայց Կենտկոմը չի համաձայնվում այդ ստորագրությունը ընդունելու, որովհետև նա դեմ էր, որ

---

51 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 649։

52 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 655։

53 XV Ленинский сборник, էջ 511.

54 V Ленинский сборник, էջ 493.

Ռուսաստանի հետ լուրջ կապեր չունեցող զուտ արտասահմանյան այդ կազմակերպությունը մասնակցի կոնֆերենցիային: Մենք հույս ունենք «Пролетарий»-ում շուտով տեղավորել ավելի մանրամասն տեղեկություններ այդ կազմակերպության իսկական բնույթի վերաբերյալ: Առայժմ նկատենք, որ բոլոր նրանք, ովքեր ցանկանում են իրոք օգնել Կովկասում հայկական բանվորների մեջ սոցիալ-դեմոկրատական շարժմանը, պետք է գործ ունենան միայն ՌՍԴԲԿ Կովկասյան կազմակերպությունների հետ, որոնք հայկական գրականություն հրատարակում են Կովկասում և ոչ թե ժնևում»[55]:

Երկու օր անց, 1905 թվականի սեպտեմբերի 7-ին, Վ. Ի. Լենինը, ՌՍԴԲԿ Կենտկոմի անդամներին ուղարկած ծրագրային նամակում գրել է. «Խիստ նախազգուշացնում եմ «Հայկական ս.-դ. ֆեդերացիայի» վերաբերյալ: Եթե դուք համաձայնել եք, որ նա մասնակցի կոնֆերենցիային, ապա ճակատագրական սխալ եք կատարել, որպիսին հարկավոր է ուղղել ինչ էլ որ լինի: Դրանք — մի զույգ ժնևյան կազմալուծիչներ են, որոնք այստեղ հրատարակում են ամենագաղտարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ: Դա բունդական կրեատուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը սնելու համար: Եթե դուք թույլ տաք այդ մարդկանց ռուսական կոնֆերենցիա, այսինքն՝ Ռուսաստանում աշխատող կազմակերպությունների կոնֆերենցիա գալու, դուք սարսափելի կիսայտառակվեք: Կովկասի ընկերները բոլորն էլ դեմ են գրականագետ-կազմալուծիչների այդ շայկային (այդ բանը ես գիտեմ շատերից), և մենք շուտով կշրջապատենք նրանց «Пролетарий»-ում: Դուք կառաջացնեք միայն Կովկասի բոլորները և «հաշտության» ու «միավորման» փոխարեն՝ նոր գզվրտոց: Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս կարելի է անտեսել Կովկասյան միությունը, Ռուսաստանում բազմաթի՛վ աշխատողներին և մտերմանալ ժնևյան ճահճի տականքների հետ: Աղերսում եմ, մի արեք այդ բանը»[56]:

Վ. Ի. Լենինը և նրա մերձավոր զինակիցներ՝ Ս. Շահումյանը,

---

55 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 380: Այդ ժամանակ ՌՍԴԲԿ ժնևյան հրատարակչական հանձնաժողովը իր աշխատանքը դադարեցրել էր, նրա սկսած շահավետ գործը կատարվում էր Կովկասում, Կովկասյան միութենական կոմիտեի կողմից, մասնավորապես Հավլաբարի տպարանում:

56 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 383—384:

Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը և ուրիշներ, մինչև վերջ մերկացրին «սպեցիֆիկներին», ցույց տալով նրանց վնասակար, քայքայիչ գործունեությունը:

4

Հայաստանում մարքսիզմի տարածման գործում անգնահատելի դեր են խաղացել Վ. Ի. Լենինի աշխատությունները: Իլյիչի երկերը, նրա գրական ողջ ժառանգությունը հզոր զենք են հանդիսանում պրոլետարիատի ազատագրական պայքարում: Լենինյան ամեն մի աշխատության հրատարակությունը նշանակալի իրադարձություն է:

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների երկերի հայերեն առաջին թարգմանությունները, հրատարակությունն ու տարածումը ունեն իրենց ուշագրավ պատմությունը, որ սերտորեն առնչվում են Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հետ: Այդ գործերը հրատարակվում և տարածվում էին ընդհատակում, բուրժուական սեւեական ապարատի, ոստիկանության, գրաքննության հալածանքների դաժան ու դժվարին պայմաններում: Երկրամասի բոլշևիկները կարողանում էին հմտորեն օգտագործել ամեն մի առիթ ու հնարավորություն, որպեսզի հրատարակեն ու հայ աշխատավորության մեջ տարածեն Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի աշխատությունները: Հայ ժողովուրդը մեծ երախտագիտությամբ է հիշում առաջին հայ մարքսիստներին, որոնք հաղթահարելով ամեն տեսակ դժվարություններ ու արգելքներ, մարքսիզմի հեղափոխական գաղափարները տարածում էին աշխատավոր զանգվածների մեջ, նրանց պայքարի հանելով իրենց ստրկացնողների ու շահագործողների դեմ:

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների հայերեն անդրանիկ հրատարակությունները և նրանց տարածումը անմիջականորեն կազմում են առաջին հայ մարքսիստների հեղափոխական գործունեության անբաժան մասը: Դրանում մեծ երախտիք ունեն ականավոր մարքսիստներ Բ. Կնունյանցը, Ս. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ս. Կասյանը և ուրիշներ: Հենց նրանք էին, որ ձեռնամուխ եղան մարքսիստական գրականության հայերեն թարգմանություններին, սկիզբ դրեցին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների հայերեն գիտական հրա-

տարակություններին։ Վ. Ի. Լենինի աշխատությունները առաջին անգամ Հայաստանի աշխատավորությանն են հասել անցյալ դարի 90-ական թվականներին։ Դրանք Իլյիչի մինչ այդ գրած գրքերն ու բրոշյուրներն էին, կուսակցական մամուլում, մասնավորապես «Իսկրա»-ում տպագրված հոդվածները։ Լենինյան վաղ շրջանի աշխատություններից մեկի՝ Ս. Պետերբուրգում Ս. Լեյֆերտի տպավիմագրատանը 1899 թվականին տպագրված «Տնտեսագիտական էսյուդներ ու հոդվածներ» գրքի մի օրինակը դեռ այն տարիներին հասել էր Հայաստանի հեռավոր Ալավերդու լեռնային շրջանը։ Գրքի այդ օրինակը Ալավերդու հանքագործներին էր հանձնել Ս. Շահումյանը, որը Հայաստանի հեղափոխական շարժման հենց սկզբնական շրջանից էլ սերտորեն կապված էր Ալավերդու հանքագործների հետ։ Բանվորները հետաքրքրությամբ կարդում էին այդ գիրքը[57]։

Առաջին անգամ հայերեն թարգմանությամբ լույս տեսած մեզ հայտնի լենինյան գործերից են «Միապետությունը տատանվում է...»[58], «Ծանուցում «կազմակերպիչ կոմիտեի» կազմելու առթիվ» հոդվածները, որոնք զետեղվել են ՌՍԴԲԿ Կովկասյան միության օրգան «Պրոլետարիատի կռիվ» թերթի 1903 թվականի № 2—3-ում

---

57 1955 թվականի հոկտեմբերին Վ. Ի. Լենինի աշխատության այդ ունիկալ օրինակը պրոֆ. Գ. Հովնանը մշտական պահպանության է հանձնել Մշի Հայկական ֆիլիալի գրադարանին։

Վ. Ի. Լենինի կուսակցական մամուլում հրապարակված հոդվածները հետաքրքրությամբ էին կարդում նաև սիյուսրահայերը։ 1903 թվականի հունիսի 22-ին Փարիզից ժնև, Գ. Կուզիկյանին ուղարկած նամակում բանվոր Ստեփան Պողոսյանը հայտնում է, որ ժամանակին ստացել է «Իսկրա»-ն, խնդրում է, որ ուղարկեն նաև «Զարյա»-ն և ՌՍԴԲԿ ծրագրի նախագիծը։ Ընթերցելով լենինյան «Իսկրա»-ն, նա համակրանքով է խոսում նրա ուղղության մասին, իր հակակրանքն է արտահայտում «Բունդ»-ի նկատմամբ։ Դրանից մի քիչ ուշ, 1905 թվականի հունիսին ժնև ուղարկած մի նամակում բուլղարական ս.-դ. կուսակցության անդամ Գառնիկ Թուֆունջյանը պատմում է, որ ստացվել է «Պրոլետարի»-ի 3-րդ և 4-րդ համարները, խնդրում է 2-րդ համարը ևս ուղարկել, որովհետև պետք է կարդա Վ. Ի. Լենինի «Ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին» հոդվածի սկիզբը։ Իսկ Ստեփան Շահբազը նրա նամակի վերջում ավելացրել է. «Ձեր Գառնիկին ղրկած ռուսերեն լրագրերը կարդում եմ ես ալ, որի համար շնորհակալություն հայտնում եմ» (տե՛ս Մշի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 41, նույնը Վ. Ավետիսյանի «Լենինյան հմայքը» հոդվածում՝ «Սովետական Հայաստան», № 94 (3439), 22 ապրիլի 1965 թ.)։

58 Այստեղ և հաջորդ էջերում՝ Վ. Ի. Լենինի աշխատությունների վերնագրերը տրվում են այն ժամանակվա թարգմանությամբ։

(ապրիլ-մայիս)[59]։ Ահա այսպես են հայ մարքսիստները հիմք դնում Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանության շնորհակալ գործին։

Մերկացնելով ցարական ինքնակալությանը և նրա 1903 թվականի փետրվարի 26-ի մանիֆեստը, Վ. Ի. Լենինը իր «Միապետությունը տատանվում է...» հոդվածում նշում էր, որ ցարն արդեն զգում է, «որ անդարձ անցնում են այն ժամանակները, երբ Ռուսիայում կարող էր պահվել ասածո ողորմածությամբ կառավարությունը, որ Ռուսաստանում միակ հաստատուն կառավարությունը այսուհետև կարող է լինել ժողովրդի կամքով կառավարությունը»[60]։ «Պրոլետարիատի կռիվը» թերթի այդ նույն համարում տպագրվել էր նաև Գ. Վ. Պլեխանովի «Կարլ Մարքս» հոդվածը, նվիրված գիտական կոմունիզմի մեծ հիմնադրի մահվան 20-ամյակին։ Այդ հոդվածում Գ. Պլեխանովը նշում էր, որ մարքսիզմը դարձել է բանվոր դասակարգի հեղափոխական աշխարհայացքը։ «Եթե սոցիալիզմը այժմ գիտությունների շարքն է անցել, դրանով մենք Մարքսին ենք պարտական։ Եվ եթե գիտակցող պրոլետարները այժմ լավ հասկանում են, որ բանվոր դասակարգի վերջնական ազատության համար անհրաժեշտ է սոցիալական հեղափոխություն և որ այդ հեղափոխությունը հենց իրեն՝ բանվոր դասակարգի գործը պետք է լինի, եթե նրանք այժմ բուրժուական կարգերի անհրաժեշտ ու անխոնջ թշնամիներն են՝ դրա մեջ երևում է գիտական սոցիալիզմի ազդեցությունը»[61]։

1892—1895 թվականներին հայերեն լույս տեսավ Գ. Պլեխանովի «Մայիսի մեկը աշխարհի բանվորների ամենամյա տոնն է»[62] աշխատությունը, պարբերական մամուլում տպագրվեցին նրա «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը», «Մեր տարաձայնությունները», «Նամակներ Ռուսաստանի սովի մասին» աշխատություններից ծավալուն հատվածներ։ «Ազատ Հայաստան» թերթը, քաղվածքներ բերելով Գ. Պլեխանովի «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը» աշխատությունից, հեղինակին անվանում էր Կ. Մարքսի աշակերտը[63]։

1903 թվականին Ժնևում առանձին բրոշյուրով լույս տեսավ

---

59 Տե՛ս «Պրոլետարիատի կռիվը», № 2—3, 1903, էջ 12—14, 15—16։

60 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 435։

61 «Պրոլետարիատի կռիվը», № 2—3, 1903, էջ 4։

62 См. ЦГИАЛ, ф. 776, оп. 2, д. 9, лл. 79. 79 об.

63 Տե՛ս «Ազատ Հայաստան», № 2, 1893։

Վ. Ի. Լենինի «Գյուղական չքավորությանը» աշխատությունը։ Իր այդ գրքում Վ. Ի. Լենինը, ինչպես հայտնի է, նպատակ էր դրել գյուղացիներին հանրամատչելի ձևով բացատրել ՌՍԴԲԿ ագրարային ծրագիրը։ Նա պատրաստել էր այդ բրոշյուրի պլանի մի քանի վարիանտներ, առաջին վարիանտի մի քանի գիտողություններ, ինչպես նաև բրոշյուրի առանձին գլուխների պլաններ[64]։ Բրոշյուրի հավելվածում տրված էր ՌՍԴԲԿ ծրագրի նախագծի տեքստը, որի համար ներածություն էր գրել Վ. Ի. Լենինը։ Այդ աշխատությունն անլեգալ փոխադրվել էր Ռուսաստան ու տարածվել երկրի շատ վայրերում։ Բրոշյուրն ուսումնասիրվում էր ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում, բանվորական խմբակներում, հասցվել էր գյուղերը, թափանցել էր բանակ ու նավատորմ և այլն։ Ոչ լրիվ տվյալներով, միայն 1903 թվականի մայիսից մինչև 1905 թվականի դեկտեմբերը բրոշյուրը ստացվել էր Ռուսաստանի 39 քաղաքներում և 15 նահանգներում[65]։

1904 թվականի սկզբին Ս. Շահումյանը Վ. Ի. Լենինի «Գյուղական չքավորությանը» բրոշյուրը թարգմանեց հայերեն և հրատարակեց ժնևյան հրատարակչական հանձնաժողովի կողմից։ Վ. Ի. Լենինի այդ բրոշյուրը, մարքսիստական այլ գրականության հետ մեկտեղ, փոխադրվեց Կովկաս։

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին ոչ միայն կազմակերպված էին Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի երկերի, ինչպես նաև մարքսիստական այլ գրականության հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը, այլ փորձեր էին արվում Վ. Ի. Լենինին անմիջականորեն մասնակից դարձնել հայերեն մարքսիստական հրատարակություններին։ Այսպես, օրինակ, 1904 թվականին մի խումբ հայ հեղափոխական երիտասարդներ, իմանալով, որ Ս. Շահումյանը ծանոթ է Վ. Ի. Լենինի հետ, գիմում են արտասահմանում գտնվող Շահումյանին՝ խնդրելով Վ. Ի. Լենինին հրավիրել մասնակցելու հայերեն առաջին անգամ հրատարակվող մարքսիստական ժողովածուին։ Ս. Շահումյանը 1904 թվականի նոյեմբերի 28-ին Բեռլինից Վ. Ի. Լենինին ուղարկած նամակում այդ կապակցությամբ գրել է.

---

64 XIX Ленинский сборник, стр. 339—356.

65 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, ծանոթագրություն 86։

«Մեծարգո Վլադիմիր Իլյիչ!

Շտապում եմ կատարել մի հանձնարարություն, որ մի խումբ հայ ուսանողներ ուղարկել են ինձ Պետերբուրգից մի ընկերոջ միջոցով: Այդ խումբը որոշել է հրատարակել հայերեն մի լեգալ մարքսիստական ժողովածու: Հայ մարքսիստներ չունենալու պատճառով այդ խումբը դիմում է ռուս ընկերներին և խնդրում հոդվածներ տալ.

Բոգդանովին — «Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը» թեմայով, Լունաչարսկուն — ազգային հարցի մասին՝ դիալեկտիկ[ական] մատերիալիզմի տեսակետից, Ֆինին՝ արդյունաբերական ճգնաժամը Կովկասում՝ կապիտալիզմի զարգացման առնչությամբ:— խումբը հանձնարարում է ինձ խնդրել նաև Ձեզ և Պլեխանովին մասնակցելու ժողովածուին, եթե Դուք ժամանակ կլինեք: Ձևնարկության գլուխ կանգնած է անձնապես ինձ լավ ծանոթ մի ընկեր, որ անցյալ տարի աշխատել է Թիֆ[լիսի] կոմ[իտեում] («ժայռականներից է»):

Խնդրում եմ Ձեզ, եթե ժամանակներդ կների կամ եթե որևէ պատրաստ բան ունեք, չմերժել: Այդ հրատարակությունից գանձված միջոցները անտարակույս կգնան կուսակցության օգտին և, որ ամենագլխավորն է, այն դեպքում, եթե հրատարակությունն իրականացվի այն ձևով, ինչպես մտադրված է, հսկայական նշանակություն կունենա հայ ընթերցողների համար, մանավանդ մեր միջին ինտելիգենցիայի մի բավական բազմամարդ խավի համար, ինտելիգենցիա, որից հավաքագրվում են այժմ մեր պրոպագանդիստները: Դրանք միջնակարգ հոգևոր ուսումն[ական] հաստատությունների դասընթաց ավարտածներն են, որոնք ռուսերեն չգիտեն:

Բարի եղեք, այս խնդրանքը հաղորդեցեք նմանապես ընկ. ընկ. Բոգդանովին ու Լունաչարսկուն: Ես անմիջականորեն նրանց խնդրելու հնարավորություն չունեմ: Պլեխանովին կգրեմ ինքս:

Պատասխանի սպասելով, բարևներով ու լավագույն մաղթություններով՝ Ձեզ նվիրված

Ս. Շահումյան» [66]:

Ցնայած տակավին հայտնի չեն մարքսիստական լեգալ այդ ժողովածուի հրատարակության հետ կապված մանրամասնությունները, մենք չգիտենք նման ժողովածու լո՞ւյս է տեսել, թե՞

---

66 Ս. Շահումյան, Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 19—20:

ոչ, Իլյիչը և ռուս մյուս մարքսիստները ինչպե՞ս են արձագանքել Շահումյանին, բայց նամակը որոշակի գաղափար է տալիս ժողովածուի գլխավոր ուղղության մասին։

Հայ իրականության մեջ դարասկզբին բոլշևիկյան ուղղությունը ծիլեր արձակելով, ասելիքանաբար նորանոր համակիրներ էր նվաճում։

Նախասովետական շրջանում Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը ընդարձակվեց ռուսական առաջին հեղափոխության տարիներին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման և իրագործման ժամանակաշրջանում։ Ոչ լրիվ տվյալներով, 1903 թվականից մինչև 1920 թվականը բրոշյուրների, առանձին գրքերի, ինչպես նաև բոլշևիկյան մամուլի էջերում լույս են տեսել Վ. Ի. Լենինի 61 աշխատություն[67]։ Հենց միայն ռուսական առաջին հեղափոխության տարիներին ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի, կուսակցության Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի, Ալեքսանդրապոլի և այլ կոմիտեների գաղտնի տպարաններում հայերեն լույս են տեսել Վ. Ի. Լենինի շուրջ 10 աշխատություն, այդ թվում՝ «Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական խնդիրները»[68], «Ծանուցումն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության երրորդ համագումարի մասին»[69], «Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դեմոկրատական դիկտատուրայի մասին»[70], «Երրորդ համագումարի որոշումը Կովկասում պատահած անցքերի մասին»[71], «Երրորդ համագումարը»[72], «Պետական կազմի երեք սահմանադրություն կամ

---

67 Վ. Ի. Լենինի աշխատությունների նախասովետական շրջանի հայերեն հրատարակությունների բիբլիոգրաֆիական ցանկը (1903—1920). տե՛ս Խ. Հ. Բարսեղյան, Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, Երևան, 1959, էջ 271—274։

68 «Պրոլետարիատի կռիվը», № 7, 15 (28) հուլիսի, թարգմանված է «Պրոլետարի»-ի 1905 թ. հունիսի 17 (30)-ի № 4-ից։

69 Հրատարակություն Կենտրոնական կոմիտեի. տպարան Միութենական կոմիտեի, 1905։

70 Թարգմանված է «Վպերյոդ»-ի 1905 թ. № 14-ից։ Հրատարակվել է ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի կողմից։ Հավլաբարի տպարան։

71 «Պրոլետարիատի կռիվը», № 6, 1 (14) հունիս, գրված է 1905 թ. ապրիլի 26-ին (մայիսի 9-ին)։

72 «Պրոլետարիատի կռիվը», № 6, 1 (14) հունիս։

ներք կարգ»[73], *«ՌՍԴԲԿ կուսակցության երկու տակտիկան Պետական դումայի վերաբերյալ»*[74] *և այլն։*

Այդ տարիներին Վ. Ի. Լենինի գործերի հայերեն թարգմանության և հրատարակման ասպարեզում առանձնապես մեծ ծառայություն մատուցեցին բոլշևիկյան «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» թերթերը։ «Նոր խոսք» թերթը 1906 թվականի օգոստոսի 31-ի համարում լենինյան «Պրոլետարի» թերթի № 1-ից թարգմանաբար արտատպել է Վ. Ի. Լենինի «Փոթորկից առաջ» խորագրով հոդվածը։ Այն ավարտվում է Մ. Գորկու «Մրրկահավի երգը» ստեղծագործությունից քաղված «Թո՛ղ թնդա փոթորիկը» խոսքերով։ «Նոր խոսք»-ը այդ տողերից հետո ավելացրել է. «Ամբողջ սրտով միանում ենք «Պրոլետարի»-ի այս խոսքերին, միաժամանակ նրա հետ գոչելով.

Թո՛ղ թնդա փոթորիկը»։

5

Անդրկովկասում, մինչև կուսակցական ընդհատակյա տպարանների ստեղծումը, լենինյան-իսկրայականները իրենց թռուցիկներն ու կոչերը տպագրում էին մասնավոր տպարաններում՝ հեղափոխական դրաշարների օգնությամբ, կամ էլ դրանք բազմացնում էին ձեռագիր, հեկտոգրաֆի միջոցով։ Դա, իհարկե, ծանր էր և դժվար։

Հեղափոխական կոչերի ու թռուցիկների, այդ անցնողուր մամուլի, սկիզբը դրեց Վ. Ի. Լենինի հիմնադրած Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը»։ Վ. Ի. Լենինը, անդրադառնալով ռուսական առաջին հեղափոխության նախորդող տարիների կուսակցական աշխատանքի բնութագրմանը, գրել է. «Մի քանի հարյուր հեղափոխական կազմակերպիչներ, տեղական կազմակերպությունների մի քանի հազար անդամներ, ամիսը մեկ անգամից ոչ հաճախ լույս տեսնող կես դյուժին հեղափոխական թերթիկներ, որոնք հրատարակվում էին գլխավորա-

---

73 *ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի Թիֆլիսի կոմիտե, 1905 թ. հունիսի 22-ին։*

74 *«Բանվորի ձայնը», № 1, 18 մարտի, 1906 թ.։ Արտատպված է ՌՍԴԲԿ միացյալ ԿԿ-ի թռուցիկներից, տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 111—115։ Բոյկոտե՞լ արդյոք Պետական դուման։*

պես արտասահմանում ու մաքսանենգ ճանապարհով, աննկարագրելի դժվարություններով, մեծամեծ զոհերի գնով ուղարկվում էին Ռուսաստան,— այսպիսիք էին հեղափոխական կուսակցությունները Ռուսաստանում և առաջին հերթին հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան մինչև 1905 թվականի հունվարի 22-ը»[75]:

1905 թվականի հոկտեմբերին Մ. Մ. Էսենին գրած նամակում Վ. Ի. Լենինը նշել է, որ Կենտկոմը, տակտիկական առումով, միանգամայն ճիշտ է վարվում, որ ծանրության կենտրոնը փոխադրում է զրական ղեկավարության վրա: «Ղեկավարել կուսակցությունը շարժման այժմյան վիթխարի, չտեսնված աճման պայմաններում,— գրել է Վ. Ի. Լենինը,— կարելի է միմիայն մամուլի միջոցով»[76]:

Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատները, լենինյան իսկրայականները կազմակերպում են հեղափոխական թռուցիկների, կոչերի, պրոկլամացիաների հրատարակությունը, լենինյան «Իսկրա»-ի արտահայտությամբ, հեղեղում Կովկասի բոլոր քաղաքներն ու գյուղերը: Դրանք գրել են Լ. Կեցխովելին, Ս. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ա. Մուլուկիձեն, Ի. Ստալինը, Պ. Ջափարիձեն, Ս. Սպանդարյանը, Մ. Ալիլուևկովը և ուրիշներ: Դա այն ժամանակ էր, երբ Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, տեղական սոցիալ-դեմոկրատական աշխատանքը մեզանում արդեն բավական բարձր զարգացման էր հասել: Սոցիալ-դեմոկրատական իդեաների սերմերը Ռուսաստանում արդեն նետված էին ամենուրեք, բանվորական թերթիկները, սոցիալ-դեմոկրատական գրականության այդ առաջին ձևին արդեն ծանոթ էին բոլոր ռուս բանվորները՝ սկսած Պետերբուրգից մինչև Կրասնոյարսկ և Կովկասից մինչև Ուրալ[77]:

1898—1901 թվականներին հայերեն լույս են տեսել մի շարք հեղափոխական կոչեր և թռուցիկներ, որոնք հրատարակել են հատկապես ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի կոմիտեները, Ջալալօղլու Շահումյանի մարքսիստական խմբակը, Թիֆլիսի հայ բանվորների խումբը, բայց դրանց մեծ մասը, դժբախտաբար, մեզ չի հասել: 1899 թվականին Շահումյանի ղեկավարությամբ Ջալալօղլիում հեկտոգրաֆով հայերեն բազմացվում են մի քանի թռուցիկներ:

---

75 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 314։
76 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 414։
77 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 268։

1901 թվականին հայերեն հրատարակվել են Թիֆլիսի մայիսմեկյան ցույցին, Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցների բանվորների օգոստոսյան գործադուլին նվիրված թռուցիկներ։ Լենինյան «Իսկրա»-ն 1901 թվականի նոյեմբերի 20-ին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի մասին գրել է, որ նա ստիպված է ագիտացիայի դժվարին գործը կատարել բազմազգ բանվոր բնակչության մեջ, որ այդ կոմիտեն «հունվարից մինչև հոկտեմբերը հրատարակել է 16 պրոկլամացիա 19 800 օրինակով, որոնցից 7-ը՝ ռուսերեն, 8-ը՝ վրացերեն և մեկը՝ հայերեն։ Կոմիտեի վերջին պրոկլամացիաներից մեկը ուղղված է գինվորներին և հրատարակված է մանավրների առթիվ։ Բոլոր հրատարակությունները տպագիր են»[78]։ 1901 թվականի դեկտեմբերի 6-ին № 12-ում հրատարակված մի այլ ինֆորմացիայում «Իսկրա»-ն, անդրադառնալով Անդրկովկասի բանվորական հեղափոխական շարժումներին, գրել է. «1901 թվականի սկզբներին ռուս. սոց.-դեմ. բանվորական կուսակցության Թիֆլիսի կոմիտեն լույս ընծայեց պրոկլամացիա ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով, կոչ անելով բանվորներին՝ վերսկսել ժամանակավորապես ընդհատված պարապմունքները և շարունակել համառ պայքարը աշխատավոր մասսաներին ճնշողների՝ կապիտալիստների և ցարական կառավարության դեմ»։

1900 թվականին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն հիմք է դնում ընդհատակյա փոքրիկ, թույլ կահավորված տպարանի։ Տպագրական տեխնիկան սովորելու նպատակով Լ. Կեցխովելին, Ս. Տեր-Պետրոսյանը (Կամո), Ա. Խումարյանը և ուրիշներ աշխատանքի են անցնում մասնավոր տպարանատերերի մոտ։ Նրանք դրաշարների ու տպագրիչների շրջանում քաղաքական աշխատանք են կատարում, նրանցից կադրեր հավաքագրում։ Այս ամենի շնորհիվ հնարավոր է դառնում երկրամասում ստեղծել առաջին ընդհատակյա կուսակցական տպարանները։ Սկզբում նրանք շարվածքը գաղտնի փոխադրում էին տուն և գիշերները հատուկ մամլակի միջոցով կազմակերպում տպագրությունը։ Թիֆլիսի կոմիտեի ընդհատակյա առաջին տպարաններից մեկը Լոտինսկայա փողոցի վրա 1900 թվականին առաջավոր բանվորներ Գ. Լելիաշվիլու և Մ. Բոճորիձեի հիմնած տպարանն է։ «Դա մի նեղ նկուղ էր,— ինչպես հետագայում վերհիշել է Գ. Լելիաշվիլին,— ամբողջ

78 «Искра», № 11, 20 ноября 1901 г.

տարածությունը երեք արշին էր բաղմապատկած չորսով, որտեղ դրված էր տպագրական մեքենան։ Լույսը վերևից ընկնում էր ցանցապատ պատուհաններից, գրաշարները աշխատում էին լամպի լույսի տակ։ Ընդհատակյա կուսակցական այդ փոքրիկ տպարանի տառատեսակներն ու պաշարը աղքատ էին։ Տպագրական դաղդահը մի քառակուսի տախտակ էր, որի վրա բանվորները փռում էին մի Թրջված թուղթ և խողանակով ծեծում, մինչև կպչեր տառերին։ Այսպես էին ստացվում օտտիսկները։ Օր ու գիշերվա ընթացքում հաջողվում էր տպագրել 600—700 օրինակ թռուցիկ»։ Թռուցիկների սրբագրությունը կատարում էր Ալեքսանդր Ծուլուկիձեն (1876—1905)։ Կուսակցական ընդհատակյա այդ տպարանում ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն 1901 թվականին, տասը ամսվա ընթացքում (հունվարից մինչև հոկտեմբեր), ինչպես նշեցինք, հրատարակել է 16 թռուցիկ 19 800 օրինակ տպաքանակով։

1900 թվականին Թիֆլիսի հայ բանվորների մարքսիստական խումբը՝ Պ. Փիլոսյանի, Գ. Մկրտումյանի՝ Գ. Կուդիկյանի, Ա. Վարդանյանի և այլոց ջանքերով ստեղծում է ևս մի փոքրիկ տպարան՝ ռուսերեն և հայերեն տառատպաշարներով։ Նրանք աշխատանք էին կատարում Ս. Դիկշտեյնի «Ո՞վ ինչով է ապրում» գրքույկը վերահրատարակելու, տպագրության էին պատրաստել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և այլ աշխատություններ[79]։

Լ. Կեցխովելին 1900 թվականի սկզբներին կուսակցական անլեգալ աշխատանքի է փոխադրվում Բաքու։ Լ. Կնիպովիչի միջոցով, որն այդ ժամանակ գտնվում էր Աստրախանի աքսորավայրում, կապ է հաստատում Վ. Ի. Լենինի հետ և նրա ցուցումներով Բ. Կնունյանցի, Մելիք Մելիքյանի և ուրիշների հետ միասին հիմք դնում ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեին, կազմակերպում անլեգալ կուսակցական տպարան, որը հայտնի է «Նինա» անունով։ Թիֆլիսից Բաքու մեկնելուց առաջ Լ. Կեցխովելին, որ իր քաղաքական մկրտությունը ստացել էր Կիևի ուսանողական շրջանում, իր հարազատ եղբոր և հեղափոխական գործիչների օգնությամբ փող և տպագրական տառեր ձեռք բերել, Բաքվի նահանգապետ Սվիչինի ստորագրությամբ փաստաթղթեր պատրաստել (Դավիթ Իոսիֆովիչ Դեմետրաշվիլի ծածկանվան տակ), Կովկասում սեփական տպա-

---

79 Архив Грузинского филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 31, д. 170; ЦГИА Груз. ССР, ф. 33 с., д. 413 и др.

բան ունենալու մասին։ Բաքվում տպարանի համար Լ. Կեցխովելին Վորոնցովսկի (այժմ Ազիզբեկովի) և Բալախանսկի (այժմ Բասինի) փողոցների անկյունում Ալի-Բաբի շենքում երեք սենյակից միհարկանի տուն է վարձում։ Շատ չանցած, Լ. Կեցխովելին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի անունից Բաքվի կուսակցական տպարանում հրատարակում է մի քանի թռուցիկներ և կոչեր։ ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի անդամները ոգևորված առաջին հաջողություններից, ուժեղացնում են օգնությունը Լ. Կեցխովելուն, նրան տրամադրելով փորձված գրաշարներ, տպագրիչներ, փող՝ տառեր, տպագրական ներկ և այլ նյութեր գնելու համար։ Սկզբում որպես գրաշար աշխատում էր Վ. Ցուլաձեն։ Այնուհետև Բաքվի ընդհատակյա տպարանը փոխադրվեցին աշխատելու Ս. Թոդրիան, Վանո Ստուրուան, Գեորգի Լելիաշվիլին։ Վ. Ցուլաձեն իր հուշերում պատմում է. «Մոտավորապես 1901 թվականի հունիսին էր, Բաքվից վերադարձել էր Լ. Կեցխովելին, որի հետ ես ծանոթ էի մինչև այդ, երբ նա աշխատում էր էկ. Խելաձեի տպարանում։ Լ. Կեցխովելին խնդրեց ինձ՝ Բաքու գնալ աշխատելու անլեգալ տպարանում, ու ես համաձայնեցի։ Այդ ժամանակ «Վրացական հրատարակչական ընկերության» տպարանում Լ. Կեցխովելին ուսումնասիրել էր ստերեոտիպ մեքենայի աշխատանքը... Ձեռք բերինք այդ մեքենան, որը մենք տարանք Բաքու»[80]*։ Բաքվի կուսակցական ընդհատակյա տպարանի ստեղծմանը ակտիվ մասնակցություն է ունեցել Լ. Բ. Կրասինը (1870—1926)։ Վ. Ի. Լենինը սիստեմատիկ նամակագրություն ուներ Բաքվի իսկրայականների՝ Լ. Կրասինի, Լ. Գալպերինի, Լ. Կեցխովելու, ինչպես և Աստրախանում գտնվող «Իսկրա»-ի գործակալ՝ Լ. Կնիպովիչի, Սամարայում՝ Գ. Կրժիժանովսկու և այլոց հետ*[81]*։*

---

[80] См. Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС.

[81] См. История Коммунистической партии Азербайджана, ч. I, Баку, 1958, էջ 41; журнал «Пролетарская революция» № 2 (14), 1923; Л. Б. Красин, Большевистская партийная техника. Л. Б. Красин («Никитич»). Годы подполья. Сборник воспоминаний, статей и документов, ГИЗ, М.—Л., 1928, **А. Енукидзе**, История организации и работы нелегальных типографий РСДРП на Кавказе за время от 1900 по 1906 г. ЦГИА Груз. ССР, ф. 4, д. 37; **Н. Я. Максев**, Бакинская подпольная типография «Нина» (1901—1905 гг). Труды Азерб. филиала ИМЭЛ при ЦК ВКП(б), том XVII, Баку, 1952, էջ 90—111; **А. Н Гулиев**, Мужественный борец за коммунизм Ладо Кецховели, АзГИЗ, Баку, 1953.

Վ. Ի. Լենինը, սրտանց ողջունելով Բաքվի կուսակցական խոշոր տպարանի կազմակերպումը, ուշի-ուշով հետևում էր, օգնում նրանց, մատնանշում, թե անհրաժեշտ է բացի ինքնուրույն գործերից, «Նինա» տպարանում բազմացնել իսկրայական հրատարակությունները: Բաքվի իսկրայականների հետ սերտ կապ պահպանելու նպատակով Վ. Ի. Լենինը օգտագործում էր բոլոր միջոցները, այդ թվում՝ «Իսկրա»-ի «Փոստարկղը»: «Իսկրա»-ի 1902 թվականի մարտյան համարներից մեկում տպագրված մի ինֆորմացիայում ասված է. «Նինայի հորը [«Նինայի հայրը Կնցխովելին է]: Նամակը ստացված է: Տվեք հասցեն նամակի համար, հինը պիտանի չէ» [82]:

Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան, որն այդ ժամանակ «Իսկրա»-ի քարտուղարն էր, 1901 թվականի սկզբին Լ. Կնցխովելուն գրել են. «Ձեզ մոտ կա՞ փորձված տպագրիչ: Եթե այո, ապա կարելի՞ է օգտվել մատրիցաներից, որոնք հնչտ է ուղարկել... Հաղորդեցեք, ի՞նչ ֆորմատի է Ձեր մեքենան: Կարելի՞ է արդյոք տպել մեր «Իսկրա»-ի ֆորմատով: Առհասարակ որքան կարելի է շուտ ուղարկեցեք ձեր աշխատանքի գնի որևէ մեկ նմուշ: Եթե ձեզ մոտ տեխնիկան կարգավորված է, աշխատեցեք որքան կարելի է շուտ, ամբողջովին հրատարակել «Իսկրա»-ի գնի մեկ համար» [83]:

1901 թվականի մայիսի 28-ին Մյունխենից Աստրախան Լ. Կնիպովիչին ուղարկած նամակում Վ. Ի. Լենինը հետաքրքրվում էր. «Ի՞նչ ձևով ենք Դուք մտադիր կազմակերպելու «Իսկրա»-ի տպագրությունը Ռուսաստանում: Գաղտնի՞, թե՞ լեգալ տպարանում: Եթե վերջինն է, ապա անհապաղ գրեցեք, թե արդյոք ունե՞ք որոշակի հեռանկարներ, մենք պատրաստ ենք երկու ձևերով կառչելու այդ պլանին (որը, ինչպես մեզ հավատացնում էին, հնարավոր է Կովկասում), և նա շատ միջոցներ չի պահանջի: Եթե առաջինն է, ապա նկատի առեք այն, որ մեր թերթում (4 էջ) կա շուրջ 100 հազար տառ [և դա մեկ ամսում]. արդյոք կկարողանա՞ կարգավորել այդ հարցը գաղտնի տպարանը: Ցավազանց մեծ ռիսկի հետ միասին նա արդյոք չի՞ ոչնչացնի մեծ քանակությամբ փող և մարդիկ: Ավելի լավ չի՞ լինի այդ փողն ու ուժերը հատ-

---

82 «Искра», № 18, 10 марта 1902.

83 VIII Ленинский сборник, էջ 188—189.

կացնել տրանսպորտին, առանց որի Ռուսաստանը, միևնույն է, չի կարող գործ տեսնել»[84]:

Անդրկովկասի իսկրայականներն իրականացնում են լենինյան պլանը: Լ. Կեցխովելին «Իսկրա»-ն և իսկրայական հրատարակությունները գերազանցապես ստանում էին ծովային ճանապարհով՝ օգտագործելով Մարսել—Բաթում գիծը, որի մասին դեռևս 1901 թվականին խորհուրդ էր տվել Իլյիչը: Նույն թվականի հուլիսի 18-ին Վ. Ի. Լենինը Մյունխենից Բաքու՝ Լ. Գալպերինին ուղարկած նամակում գրել է. «Իսկրա»-ն Կովկասում տպագրելու վերաբերյալ մենք արդեն մանրամասը հարցում ենք ուղարկել Հ. [Լ. Կնիպովիչին—Ս. Բ.] և դեռ պատասխան չունենք...:» և որ հարկավոր է ուշադրություն դարձնել ֆրանսիական շոգենավերի վրա, քանի որ հույս ունենք դեպի նրանք մուտք գտնել այստեղից[85]:

Բաքվի «Նինա» տպարանը հաջողությամբ է կատարում իր դերը: Այնտեղ բաղմացվում են լենինյան «Իսկրա»-ի № 9, 10, 11-ը, Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել»-ը (10 հազար օրինակ տպաքանակով), «Գյուղական չքավորությանը», «Հեղափոխական երիտասարդության խնդիրները», ինչպես և Ս. Դիկշտեյնի «Ո՞վ ինչով է ապրում» գրքույկը, «Մորոզովյան գործադուլի տասնամյակը», «Պյոտր Ալեքսեևի ճառը», Վ. Լիբկնեխտի «Սարգեր և ճանճեր» ու այլ գործեր: 1904 թվականին «Նինա» տպարանում հրատարակվել է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» 10 հազար օրինակ տպաքանակով:

ՌՍԴԲԿ II համագումարին «Իսկրա»-ի կազմակերպման մասին Ն. Կրուպսկայայի ներկայացրած զեկուցման մեջ ասված է, թե ի՞նչ-ի՞նչ ճանապարհներ չեն փորձվել «Իսկրա»-ն Ռուսաստան առաքելու համար՝ Ռումինիա, Պարսկաստան, Ալեքսանդրիա, Արխանգելսկ, Ֆինլանդիա, ծովային ճանապարհները[86]: Պարսկաստանի վրայով «Իսկրա»-ի առաքումը կազմակերպվել է 1901 թվականին Բաքվի իսկրայականների գլխավորությամբ: Վիեննայի

---

84 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 66:

85 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 68—69:

86 См. II съезд РСДРП. Протоколы. М., 1959, էջ 568. См. также, Доклады социал-демократических комитетов II съезду РСДРП, ГИЗ, М.—Л., 1930; ЦПА ИМЛ, ф. 24, оп. 4 н., д. 1696; Н. Казаренко, Три встречи; М. Куцин, Ленинско-искровские организации Закавказья (до созыва II съезда РСДРП), диссертация. Մ. Կուցինն առանց փաստագրելու նշել է, թե «Նինա» տպարանում բաղմացվել է «Իսկրա»-ի № 5, 7 և 8-ը ևս:

վրայով «Իսկրա»-ն և իսկրայական հրատարակությունները գաղտնի ուղարկվում էր Թավրիզ, իսկ Թավրիզից էլ ձիերով փոխադրվում էր Բաքու: Հենց այդ են նկատի ունեցել, որ հետագայում կուսակցական կոնսպիրատիվ գրականության մեջ Բաքվի իսկրայական կազմակերպությունը կոչել են «Զիներ»: 1901 թվականի մայիսին Պարսկաստան էր ուղարկված կուսակցական գրականության չորս կապոց. «Իսկրա»՝ 3, «Զարյա»՝ 1, Ն. Կրուպսկայայի «Աշխատավորուհի կին», «Մայիսյան օրերը խարկովում» Վ. Ի. Լենինի առաջաբանով և այլ աշխատություններ[87]:

Հին բոլշևիկ Սրապոն Աղամալյանը, որը երկու անգամ «Իսկրա»-ի մատրիցաները Պարսկաստանից գաղտնի փոխադրել է Բաքու, իր հուշերում պատմում է. «Մի անգամ հանդիպեցի Աշոտ Խումարյանին, նա ասաց՝ մարդ չենք ճարում, որ «Իսկրա»-ն Իրանից փոխադրենք: Ես առանց տատանվելու առաջարկեցի իմ ծառայությունը և ադրբեջանական մի ընկերոջ՝ Ասադուլայի (իրանցի, 1917 թ. մտավ բոլշևիկյան կուսակցության շարքերը, 1918 թ. մուսավաթիստները նրան կախեցին) ուղեկցությամբ մեկնեցի Արդեբիլ քաղաքը, որի բնակիչների մեծ մասը ադրբեջանցիներ էին: Այնտեղ էլ բնակվում էին և մեծ թվով հայեր...

Պարսկական Աստարայում հանդստանալուց հետո ուղտերի քարավանով գնացինք Արդեբիլ, որտեղից ճամպրուկով «Իսկրա»-ն նույն ճանապարհով, նույն միջոցներով փոխադրեցինք մեր սահմանը և հասցրինք Բաքու:

Երկրորդ անգամ լրագրի փոխադրումը կատարեցի ռուսական Աստարայից»[88]:

«Նինա» ընդհատակյա տպարանի ստեղծումով հնարավոր դարձավ Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատիայի անլեգալ օրգանի՝ «Բրձոլա»-ի հրատարակությունը: 15 ամսվա ընթացքում, 1901 թվականի սեպտեմբերից մինչև 1902 թվականի դեկտեմբերը, լույս է տեսել «Բրձոլա»-ի չորս համար, այդ թվում՝ 1901 թվականի սեպտեմբերին՝ № 1-ը, 1901 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին՝ 2—3-ը և 1902 թվականի դեկտեմբերին՝ № 4-ը: «Բրձոլա»-ն հիմնվել

---

87 VIII Ленинский сборник, էջ 145.

88 Ա. Աղամալյան, *Ինչպե՞ս ինձ հաջողվեց Իրանից լենինյան «Իսկրա»-ն փոխադրել Բաքու: Տե՛ս ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մարքս-Էնգելս-Լենին ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33: Նույնը տե՛ս Հին բոլշևիկների հիշողություններ, Գիրք առաջին, էջ 69—79:*

է իսկրայականների կողմից՝ Լ. Կեցխովելու գլխավորությամբ[89]։ «Նինա»-ն խոշոր դեր է խաղացել ՌՍԴԲԿ II համագումարի նախապատրաստման և իրագործման շրջանում։ Միայն 1902 թվականի դեկտեմբերից մինչև 1903 թ. կեսը, II համագումարի սկիզբը, Բաքվի կոմիտեն հրատարակել է հեղափոխական կոչեր և թռուցիկներ ռուսերեն՝ 26 020 օրինակ. հայերեն՝ 6800, ադրբեջաներեն՝ 250 օրինակ[90]։ Համագումարից հետո այն, փաստորեն, բոլշևիկյան կուսակցության կենտրոնական տպարանն էր։ Իր գոյության ընթացքում «Նինա»-ն հրատարակել է ավելի քան մեկ և կես միլիոն օրինակ մարքսիստական գրականություն[91]։ Ցարական գործակալները կրնկակոխ որոնում էին Բաքվի «Նինա» տպարանը։ 1902 թվականին ուժեղացվում է ժանդարմական հսկողությունը սոցիալ-դեմոկրատների նկատմամբ։ Վտանգն ուժեղանում է։ Ապրիլին Լ. Կեցխովելին թողնում է Բաքուն՝ ընդհատակյա տպարանը Ռուսաստան տեղափոխելու մտադրությամբ։ Բայց նրան չի հաջողվում։ 1902 թ. ապրիլին Բաքվի իսկրայականներից մեկը «Իսկրա»-ի խմբագրությանը գրել է. «Նինան ապրիլի 1-ից դադարեցրել է աշխատանքը, բայց բոլորը գտնվում է անվտանգ։ Անհրաժեշտ էր, որ նա աշխատանքը դադարեցնի։ Նինայի հայրը գնացել է Ռուսաստան բանակցությունների համար։ Նա Ձեզ հետ կկապվի ուղղակի կամ մեր միջոցով»[92]։ Լ. Կեցխո-

---

89 Անհատի պաշտամունքի շրջանում հրատարակված պատմա-կուսակցական գրականության մեջ թերագնահատվել է Լ. Կեցխովելու դերը Անդրկովկասում առաջին մարքսիստական թերթի՝ «Բրձոլա»-ի ստեղծման գործում։ «Բրձոլա»-ի հիմնադրման պատիվն ամրողջովին վերագրվել է Ի. Ստալինին, թեև մինչև 1904 թվականը նա չի եղել Բաքվում։ ՌՍԴԲԿ Բաքվի, Թիֆլիսի կոմիտեները ցարական գործակալների կողմից Լ. Կեցխովելու չարաբաստ սպանության առթիվ 1903 թ. հրատարակած թռուցիկներում, իսկ Կովկասյան միութենական կոմիտեն «Լ. Կեցխովելու կյանքն ու հեղափոխական գործունեությունը» բրոշյուրում նշել են, որ Լադոն առաջինն է ստեղծել վրացական հեղափոխական տպարանը, վրացական սոցիալ-դեմոկրատական թերթը, Բաքվի բանվորների մեջ տարածել հեղափոխության սերմերը։ 1917 թ. ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն հրատարակելով «Բրձոլա» թերթի առաջին համարը, առաջին էջում զետեղել է Լ. Կեցխովելու նկարը, Մ. Ցխակայայի հոդվածը՝ ««Բրձոլա»-ի առաջին հիմնադիր Լադո Կեցխովելին» խորագրով։

90 См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 34, оп. 1, ед. хр. 123.

91 Տե՛ս Բաքվի ընդհատակյա «Նինա» տպարան-թանգարանի նյութերը։ См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф 34, оп. 1, ед. хр. 123; II съезд РСДРП. Протоколы, М., 1959, стр. 523; История Коммунистической партии Азербайджана, ч. I, Баку, 1958, էջ 66.

92 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 2, оп. 1, д. 815, л. 7.

վելին ապրիլի 25-ին «Իսկրա»-ի խմբագրությանը ուղարկած նամակում խորհուրդներ է հարցնում գործելու համար[93]։ Ն. Կրուպսկայան Սամարայի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը 1902 թվականի մայիսի 6-ին հաղորդել է. «Ձիերը (Բաքվի իսկրայական ս.-դ. կազմակերպության կոնսպիրատիվ անունը) արձագանքեցին։ Տպարանը... անվնաս է, բայց այժմ չի աշխատում։ Նրա հայրը (Լ. Կեցխովելին) գնացել է Ռուսաստան բանակցությունների... Ձեր հասցեն ես տվի ձիերին... նրանց խնդրեցի շուտով Ձեզ հաղորդել հասցեն՝ ներկայացնելու ու Բաթումի հետ կապ պահպանելու։ Աշխատեցեք տեսնվել և պայմանավորվել Նինայի հետ»[94]։

Վերադառնալով Բաքու, Լ. Կեցխովելին, հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, «Նինա» տպարանը փոխադրում է ավելի անվտանգ տեղ։ «Նինա»-ն համարյա լավ է զգում,—1902 թ. սեպտեմբերի 1-ին Լ. Կեցխովելին գրել է «Իսկրա»-ի խմբագրությանը,— և թվում է, շատ շուտով կձեռնարկենք աշխատանքի»[95]։

Վ. Ի. Լենինի ցուցումներով Բաքվի լենինյան իսկրայականները՝ Վ. Ստուրուա, Ա. Ենուկիձե («Սեմյոն»), Վ. Շելդունով, Ս. Թոդրիա, Ու. Ջաշի, Ա. Խումարյան, Մ. Մելիքյան և ուրիշներ վերականգնում են տպարանը։ ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն Ա. Ենուկիձեի, Վ. Ստուրուայի և այլոց ջանքերով Բ. Կնունյանցի բնակարանում՝ Արմյանսկայա (այժմ՝ Գորկու) փողոցի № 55 տանը տեղադրում է տպագրական մամլակ, որի միջոցով հաջողվում է հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակել «Բանվոր ընկերներ» խորագրով պրոկլամացիան։ 1902 թվականի դեկտեմբերի լույս 23-ի գիշերը ոստիկանությունը Բ. Կնունյանցի բնակարանում խուզարկություն է կատարում, որի պատճառով էլ այդ փոքրիկ տպարանը դադարեցնում է իր գործունեությունը[96]։ «Նինա»-ն կրկին գործում է։ Ավելի ուժգին։ «Նինա»-ն,— գրել է Ն. Կրուպսկայան,— աշխատում է ամբողջ թափով...»[97]։ ՌՍԴԲԿ Բաքվի կո-

---

93 См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 2, оп. 1, д. 815, лл. 8—9.

94 VIII Ленинский сборник, էջ 233.

95 См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 2, оп. 1, ед. хр. 815, л. 14; см. З. Гегешидзе, Ладо Кецховели, М., 1959; ее же Нелегальные типографии большевистских организаций Грузии (1900—1920 гг.), Тбилиси, 1965 (на груз. языке).

96 См. Фонд музея истории большевистской организации Азербайджана, документ № 15632 (ныне филиал Музея Ленина).

97 VIII Ленинский сборник, էջ 345.

միտեն այդ օրերին «Իսկրա»-ի խմբագրությանը գրած նամակներում հայտնում էր, թե անհապաղ սպասում ենք պատվերների... «Նինա»-ն ողջ է և առողջ, հարկավոր է ցուցումներ[98]... «Իսկրա»-ի օգնությամբ «Նինա»-ն կահավորվում է, փոխադրվում հարմարավետ շենք: Նոր տեղում տպարանն իր աշխատանքը սկսեց 1903 թվականի նոյեմբերի 1-ից, որը կոչվում էր նախկին անունով՝ «Նինա», իսկ հին տպարանը նույնպես աշխատում է և կոչվում էր «Նադյա»[99]:

1901—1904 թվականներին Անդրկովկասի լենինյան իսկրայականները ընդհատակյա կուսակցական տպարաններ են ստեղծում Բաթումում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում և այլ վայրերում: ՌՍԴԲԿ Թիֆլիսի կազմակերպությունը տակավին 1901 թվականին միջոցառումներ է ձեռնարկել ընդհատակյա տպարան ստեղծելու և հայերեն անլեգալ թերթ հրատարակելու մասին:

1902 թվականի հունվարին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն որոշել է հայերեն սոցիալ-դեմոկրատական թերթ հրատարակել[100]: Կամոյի եռանդուն ջանքերով 1902 թվականին գաղտնի տպարաններ են հիմնվում Բաթումում և Թիֆլիսում: Ա. Խումարյանը, Ռ. Դաշտոնյանը, Դ. Շահվերդյանը ստեղծում են Հայ սոցիալ-դեմոկրատների միության՝ «Պրոլետարիատ»-ի տպարանը (1902): «Պրոլետարիատ»-ի տպարանում բացի հայ մարքսիստական անդրանիկ օրգանից, հրատարակվել են «Պրոլետարիատ»-ի թերթիկները, հեղափոխական կոչեր, «Բանվոր» բանաստեղծությունը, «Մարսելյո-

---

98 См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 24, оп. 3, ед. хр. 28263, лл. 5—5 об. документ 1344, журн. «Красный архив», № 6 (103), 1940, էջ 16.

99 Վերականգնումից հետո «Նինա» տպարանը գործել է 1903—1905 թթ.: «Նինա»-ի մասին տե՛ս Ա. Ենուկիձե. Մեր գաղտնի տպարանները Կովկասում, Երևան, 1927; Е. А. Налбандян, Ленинская «Искра» и типография «Нина» в Баку. Труды Азерб. филиала ИМЛ при ЦК КПСС, том XXIV, Баку, 1960; Вано Стуруа, Воспоминания старого подпольщика. «Двадцать пять лет бакинской организации большевиков», Сборник статей и воспоминания; С. Аллилуев, Пройденный путь; «Ладо Кецховели». Сборник материалов и документов. А. Р. Гукасян, Бакинский комитет РСДРП во главе революционных выступлений бакинского пролетариата (1901—1904). Труды Института истории АН Азерб. ССР, том II, Баку, 1957; А. Саркисов, Бакинская типография ленинской «Искры», АзГИЗ, Баку, 1961, его же, Ленинская «Искра» и большевистская печать Закавказья, Ереван, 1961, К. Мамиконян, В. И. Ленин и большевистские организации Закавказья (1893—1907), АрмГИЗ, 1961 и др.

100 См. ЦГА Груз. ССР, ф. 31, д. 30, том 1, л. 79 об.

ղը»։ Դրանցից է Թիֆլիսի կոմիտեի 1903 թվականի «Մայիսի մեկը» թռուցիկը, որն ավարտվում է «Կորչի՛ միապետությունը։ Կեցցե՛ սոցիալիզմը» կոչերով։ «Մարսելյոզ»-ը (ֆրանսիական հեղափոխության հիմնը), անցյալ դարի 80—90-ական թվականներին մուտք գործելով Ռուսաստան, ստեղծագործական վերամշակման է ենթարկվում կոչվելով «Բանվորական մարսելյոզ» (տեքստի հեղինակն է Պ. Լավրովը)։ Այդ տեքստն էլ որոշ փոփոխությունների ենթարկելով հայերեն հրատարակվել է «Պրոլետարիատ»-ի տպարանում։ 1902 թվականի աշնանը Թիֆլիսում կազմակերպվում է ընդհատակյա փոքրիկ տպարան,— պատմում է Տիգրան Վախտանգովը,— որտեղ տպագրվում են հեղափոխական կոչեր։ «...Կամոն հայերեն ձեռագիր կոչերը, որոնք գրվում էին կուսակցական ղեկավար ընկերների կողմից,— ասում է Վախտանգովը,— բերում էր տպարան, իսկ ես անվերջ շարում և տպագրում էի»։

1902 թվականին Թիֆլիսում ձեռք է բերվում երեք փութ հայերեն և ռուսերեն տառեր ու փոխադրվում Բաթում։ Բաթումի ընդհատակյա տպարանի ստեղծմանն օգնում էին Կամոն և Գեորգի Թելիան (1880—1907), որը 1903 թվականին Թիֆլիսի կոմիտեի հանձնարարությամբ մեկնել էր Բաթում այն կահավորելու։

ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն 1903 թվականի վերջին կազմակերպում է Հավլաբարի ընդհատակյա տպարանը, ինչպես վերը նշել ենք, որը գործեց մինչև 1906 թվականի ապրիլի 15-ը։ ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն տպարանի ստեղծումը հանձնարարել էր առաջավոր բանվոր Միխա Բոճորիձեին (1873—1912)։ Քաղաքի ծայրամասում՝ Հավլաբարում, մի խուլ տեղում պետք է կազմակերպվեր անլեգալ տպարան։ Նախատեսված էր կառուցել բնակելի տուն և նկուղում, գետնի տակ, պատրաստել տպարանի գաղտնի շենք։

1903 թվականի սեպտեմբերին Թիֆլիսի քաղաքային վարչությունից թույլտվություն են ստանում Կասպից փողոցի վրա՝ № 4, Դավիթ Ռոստոմաշվիլու վարձակալած հողամասում կառուցել մի բնակելի տուն։ Տարեվերջին Մ. Բոճորիձեն առաջավոր բանվորների, Թիֆլիսի մարքսիստական լենինյան իսկրայական կազմակերպությունների օգնությամբ կառուցում է երկու սենյակից մի սովորական բնակելի տուն, սովորական նկուղով։ Ընդհատակյա տպարանը պատրաստում էին հեղափոխական բանվորներ՝ հյուսն եղբայրներ Սանդրո, Վանո, Նիկո Զոդրիշվիլիները, որմնադիր եղ-

քայլներ Միրիման և Թեոդոր Մազրաձենները։ Նորակառույց նման տակ, ինը-տասը արշին խորությամբ, պատրաստվում է անլեգալ տպարանի գաղտնի շենքը։ Ստորին նկուղն ուներ մոտ 5 արշին բարձրություն, 12 արշին երկարություն և 6 արշին լայնություն։ Բակում, տնից բավականին հեռու, փորվում է 21 արշին խորությամբ մի հոր։ Ջրի մակերեսից 2 մետր բարձրության վրա, այդ հորի մեջ փորվում է մի նեղ անցք, որը տանում է դեպի գաղտնի նկուղը՝ ապագա տպարանի շենքը։

ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի օգնությամբ ստացվում է «Սուգբուրդ» մարկայի տպագրական մեքենա և տեղադրվում է Հավլաբարի ընդհատակյա տպարանում։ Ձեռք են բերվում ավելի քան 80 փութ ռուսական, վրացական և հայկական տառեր։ Տարբեր ժամանակներում Հավլաբարի տպարանում աշխատել են առաջավոր բանվորներ Չիչիկո Քալանթաձեն, Գիգո Լելիաշվիլին, Տիգրան Վախտանգովը, Մակար Գոգուաձեն և ուրիշներ։ Հավլաբարի տպարանում են հրատարակվել «Պրոլետարիատի կռիվը», «Պրոլետարիատի կռվի» թերթիկը, հարյուրավոր կոչեր, թռուցիկներ, բրոշյուրներ։ Բացի Ա. Ծուլուկիձեից, Ս. Շահումյանից, Ի. Ստալինից, խմբագրական աշխատանքներին ակտիվորեն մասնակցել են Բ. Կնունյանցը, Մ. Ցխակայան, Գ. Ղարաջյանը, Վ. Բոբրովսկին, Ֆ. Մախարաձեն, Ա. Խումարյանը և ուրիշներ։ Հավլաբարի տպարանի հրատարակությունները տարածել են Կամոն, Գ. Լելիաշվիլին, Մ. Միրաքյանը, Մ. Կվարացխելիան և ուրիշներ։ Մեծ քանակությամբ տպագրվել են հայերեն կոչեր, թռուցիկներ, բրոշյուրներ։ Պ. Փիլոսյանը 1903 թվականի հոկտեմբերի 14-ին Շվեյցարիա ուղարկած նամակում գրել է, որ Հավլաբարի տպարանում բացի «Պրոլետարիատ», «Պրոլետարիատի կռիվը» թերթերից, հայերեն լույս են տեսել մեծ քանակությամբ հեղափոխական բրոշյուրներ, մասնավորապես «Նախագիծ ծրագրի ՌՍԴԲԿ Կովկասյան միության», «Սոցիալիզմի էությունը», «Սարդեր և ճանճեր», «Ի՞նչ պետք է իմանա և հիշի յուրաքանչյուր բանվոր» և այլն։ Այդ նամակում նա միաժամանակ նշել է, թե Կովկասյան միությունը պատրաստել է հրատարակել նաև բրոշյուրներ և թռուցիկներ թաթարական (ադրբեջանական) լեզվով[101]... Մի այլ նամակում Պ. Փիլոսյանը գրել է. «Բաթումը մինչ բանվորական շարժումն

---

101 ՍՄԿԿ-ին կից Մարքսի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 41, գ. 7, թթ. 4—17։

լայն ծավալ ստանալը, ուներ իր դաղտնի տպարանը, որտեղ տպվել են առօրյա հարցերի վերաբերյալ թռուցիկներ: Թեև Բաթումում կար մի մեքենա, սակայն դա շատ անհարմարություններ ուներ տեխնիկական կողմից: Այդ իսկ պատճառով վաճառվել էր և գնվել Թիֆլիսից մի նոր և հարմար մեքենա, երեք փութ հայերեն և ռուսերեն տառերով, վրացերեն տառեր արդեն կար: Սակայն մեքենան տառերի հետ, երբ արդեն Բաթումի կայարանից հանում են ու դնում կառքի վրա, ժանդարմներից մեկը մոտենալով կառքին սկսում է տնտղել արկղը և իսկույն ձերբակալում է բերող երեք անձնավորություններին, ու նրանցից մեկը Թիֆլիսում, Մեռելի բանտում անցյալ 1902 թ. նստավ 8-ը երկար ամիսներ և այժմ ավելի ևս կծանրանա նրա վիճակը: Նրա անունն է Գեորգի Թելիա: Քննություն է վարում ժանդարմական «ուպրավլենիան»: Թե ինչ վախճան կունենա դժվար չէ դուշակել... Թելիան բոլոր գործի ծանրությունն իր վրա է վերցրել և երկու մյուս ընկերներին անմասն է գտնում այդ գործի մեջ: Նա իրան շատ լավ է պահում հարցաքննության ժամանակ, որ պատիվ է բերում ամեն մի սոցիալիստի: Սակայն մոտ ժամանակներս սաստիկ իրարանցում և ցույց տեղի ունեցավ Բաթումի բանտում: Ցույցին մասնակցում են բոլոր բանտարկյալներն անխտիր: Եղելությունն հետևյալն էր.— Գեորգի Թելիային դնում են «կարցեր» ղնդան, ուր նրան սկսում են ծեծի ենթարկել, որպեսզի նա հայտնե իր ընկերներին և Բաթումի կոմիտեի անդամներին, սակայն նա շատ քաջ դիմադրություն է ցույց տալիս, իսկ այդ միջոցին բանտարկյալները իմանալով, ջարդում են լուսամուտները, դռները և սկսում են գոռալ, որպեսզի Թելիային իսկույն հանեն «կարցերից»:

Ավելի ցավալի և սրտաճմլիկ դեպք պատահեց Թիֆլիսի բանտում: Այստեղ մոտ մի տարի է, ինչ սպասում էր իր դատավճռին Կեցխովելին, սակայն դեռ չէր վճռել ներքին գործերի մինիստրն ու ստորագրել պատիկ Նիկոլան: Ահա այդ դրությամբ սպասում էր Կեցխովելին:

Երբ որ մի օր երեկոյան զլուխը դուրս է հանում իր պատուհանի երկաթե ցանցից, որպեսզի իր մոտի հարևանի հետ խոսի, այդ միջոցին պահապան զինվորը հրացանը բաց է անում և Կեցխովելուն՝ զլուխը հենց երկաթե ցանցից դուրս հանած դրությամբ՝ սպանում է... Մեռավ Կեցխովելին, մեռավ սոցիալիստական դաղափարի ցանողներից մեկը: Հանգիստ ոսկորներին, քաջ զինվոր: Նա մեկն էր վրաց սոցիալիստների մեջ, որ սկիզբ դրավ այդ դա-

ղափարին, մեկն էր այն զինվորներից, որ անվախ ու համարձակ դուրս եկավ բռնության դեմ պաշտպանելու աշխատավոր իրավազուրկ ու շահագործված ժողովրդին։ Այսպես, մենք պետք է վրեժը լուծենք մեր ընկերների անմեղ արյան համար։ Այդ էր սպասում Կեցխովելին, երբ վճիռը գալու վրա էր։ Ցավալի՜ վճիռ, խավա՜ր վճիռ... Մեր բոլորիս սրտերը այսօր վշտացած է քո մահով, Թանկագին Կեցխովելի։ Կեցխովելին այլևս չկա... Թո՛ղ նրա արյունը դեպի վրեժ, դեպի կռիվ կանչի ամենքին, թող բորբոքվի մեր գործելու կայծը ընդդեմ բռնակալության»[102]։

Հավլաբարի ընդհատակյա տպարանը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պոլիգրաֆիական հզոր բազան էր։ Այն հրատարակել է տասնյակ հազարավոր օրինակ տպագրանակով գրականություն, այդ թվում՝ 1903 թվականի նոյեմբերից մինչև 1904 թվականի մայիսը՝ 6000 օրինակ բրոշյուր, 149 հազար թռուցիկ, իսկ 1905 թվականի հունվարից մինչև նոյեմբերի 20-ը՝ 275 215 օրինակ գրականություն, իսկ 1906 թվականի փետրվարին՝ 65 200 օրինակ գրականություն[103]։ Ցարական ժանդարմերիան երկար ժամանակ կատաղի չարությամբ լցված փնտրում էր այն տպարանը, որը քաղաքներն ու գյուղերը հեղեղում էր հեղափոխական, մարքսիստական գրականությամբ։ Երկար որոնումներից հետո ոստիկանությանը հաջողվեց գտնել տպարանը։ 1906 թվականի ապրիլի 16-ին Թիֆլիսի պահնորդական բաժնի պետը, լրտեսների օգնությամբ, ժանդարմների ու զինվորների ջոկատով, հարձակվեց տպարանի շենքի վրա, որտեղ կատարեց մանրամասն խուզարկություն։ Այդ առթիվ Կովկասի ոստիկանության վարչության պետը նույն թվականի ապրիլի 15-ին ներքին գործերի մինիստր Ստոլիպինին հեռագրով հաղորդել է. «Ի լրացումն № 2682 հեռագրի, ընդհատակյա տպարանը հայտնաբերելիս գտանք մոտ 80 փութ տառ, 20 փութ թուղթ, մոտ 50 փութ պրոկլամացիա՝

---

102 ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մարքսի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 41, գ. 7, թ. 15—16։

103 См. Авлабарская нелегальная типография. Сборник материалов и документов, Тбилиси, 1954; Авлабарская нелегальная типография Кавказского союзного комитета РСДРП. 1903—1906. Тбилиси, 1965; Техника большевистского подполья, Сборник статей и всопоминаний, вып. 1, М.—Л., стр. 11; «Пролетарская революция» № 6, 1928; Г Жвания, Большевистская печать Закавказья накануне и в период второй русской революции, Тбилиси, 1958.

երեք լեզվով, մոտ 30 փութ բրոշյուր, անձնագրային բյուրո, մի շարք կնիքներ, տպագրական 18 տառարկղ, տպագրական շարվածքներ, պայթուցիկ նյութերի լաբորատորիա, լցված 3 ռումբ, ագուցց, հեղուկ, ռումբերի դինամիտ, պայթեցնելու համար պատրաստված մի մեծ արկղ Բիկֆորդյան թելով հանգերձ... գտնված են հետաքննության համար միանգամայն արժեքավոր նյութեր»[104]:

Ցարական ժանդարմերիան ամբողջապես այրեց Հավլաբարի տպարանի շենքը և պայթեցրեց այն նկուղը, որտեղ տեղադրված էին տպագրական մեքենաները:

Հավլաբարի ընդհատակյա տպարանը, լինելով Կովկասյան միության տպագրական գլխավոր բազան, հավասարապես սպասարկում էր Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի կուսակցական կազմակերպություններին:

***

1900—1904 թվականները քաղաքական իրադարձություններով հարուստ, շրջադարձային և բախտորոշ ժամանակաշրջան էր Հայաստանի սոցիալ-դեմոկրատիայի կյանքում: Ծավալվում են բանվորական հեղափոխական և ազգային-ազատագրական ելույթների ոգին դառնում է դասակարգային պայքարը, ձևավորվում են լենինյան-իսկրայական, բոլշևիկյան կազմակերպությունները, որոնք ամուր կերպով կանգնելով մարքսիզմի դրոշի տակ, հաջողությամբ գլխավորում են բանվորների և աշխատավոր զանգվածների մարտերը, նրանց նախապատրաստելով նոր դրոհի՝ ռուսական առաջին հեղափոխությանը:

---

104 Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 31, д. 106.

Ալեքսանդր Բեկկայան (Յուրի)

Արշավիր Մելիքյան

Սարգիս Կասյան (Ս. Տեր-Կասյարդյանց)



Մարտիրոս Միրաքյան (Բանվոր Շանթ)

Մարքսիստական թերթեր, որոնք հրատարակվել են Կովկասում մինչև ռուսական առաջին հեղափոխությունը:

Manifest der Kommunistischen Partei
von K. Marx und F. Engels.

Ռուսաստանի Սոց.-Դեմ. Բանվորական Կուսակցությունն

Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ

ՄԱՆԻՖԷՍՏ
ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ցանկալած

Կ. Կաուցկի—Ո՞րքան է հնացել Կոմ. Մանիֆէստը

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՑ

ՓԸՍԻ
Կուսակց. Տպարան. Rue de la Coulouvrenière, 27.
1904

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի 1904 թ. Ստ. Շահումյանի թարգմանության անվանաթերթը:

ՄԻԱՊԵՏՈՒԹԻՆԸ ՏԱՏԱՆՎՈՒՄ Է...

(Այս յոդվածը թարգմանված է «Искра»-ի N-ից)

Միապետությունը տատանվում է: Ինքը միապետը հրապարակով խոստովանում է այդ ժողովրդի առաջ: Այդպես է ցարի փետրվարի 26-ի հրատարակած մանիֆեստի անհագին նշանակությունը և այդ մանիֆեստը լցնող ոչ մի պարմանական փբրազա, ոչ մի երկդիմի խոսք չեն կարող փոխել ցարի արած այդ քայլի նշանակությունը:

Ցարը ասում է ըստ ամենայնի դեռ նոր տին "ազնվությամբ Աստծուց", և կիսակիզծաստ կերպով օգնություն կանչելով հատարակության վստահությունը վայելել անձանց: Ցարը շատ լաւ գիտե է, որ անպատնաչի կերպով անցան են այն ժամանակները, երբ Ռուսաստանում կառավարությունը կարող էր պահպանել „ազնվությամբ Աստծուց", նա պարզ գիտակցում է, որ միակ հատատուն կառավարությունը Ռուսաստանում կարող է լինել միայն ժողովրդի կամքով ընտրված կառավարությունը:

Ցարը կրկնում է իր սրբազան ուխտը — անխոնջ պահել ռուսական պետության գաղաւոր սիւները, որ եթե արբոյական լեգից վերածենք սոցիալական կնշանակի ինքնակալության պահպանելը: Երբեմն Ալեքսանդր III-ը յայտարարում էր այդ առաջ քաշելու, ուղղակի կերպով (1881 թվի ապրիլի 29-ի մանիֆեստի մեջ) այն ժամանակ, երբ ընդհանրական շարժումը Ռուսաստանում լիստոպիմում և սասիճանաբար բնկնում էր: Իսկ երբ «կնոջի միապետությունը» կոչ հնչում է աւելի հզոր և աւելի ազատ, Նիկոլայ II-ը դեռ ազատաւում է քաղաքկել իր յայտարարությունները երկդիմի խոսքերի ետկ և աւելի ամուր մատնացույց անել իր անմատաց ծնողի վրայ: Անմիտ և դժբախտ միջոց!

Վ. Ի. Լենինի «Միապետությունը տատանվում է...» հոդվածը, որը 1903 թվականին «Իսկրա»-ից թարգմանվել և հրատարակվել է «Պրոլետարիատի կռիվը» թերթում:

ՌՍԴԲԿ Կենտկոմին կից Ժենյան հրատարակչական հանձնաժողովի հայերեն հրատարակությունների անվանաթերթերը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՓՈԹՈՐԿԻ ՆԱԽՕՐԵՆԻ

1. Նախապուշակը: 2. Բանվորական շարժման վերելքը: 3. Հայկական գյուղի զարթոնքը: 4. Հաղպատի գյուղացիների 1903 թվականի հեղափոխական ելույթները: 5. Ժողովրդական, հակացարական շարժումները:

1

1900—1903 թվականներին բռնկված համաշխարհային ընդհանրական ճգնաժամն էլ ավելի սրեց հակասությունները և շիկացրեց մթնոլորտը երկրում: Կապիտալիզմը, որ Ռուսաստանում հասել էր իր բարձր աստիճանին՝ իմպերիալիզմին, դառնում էր ավելի զիշատիչ: Աճում էին մոնոպոլիստական միավորումները: Իրար հետևից անհետանում էին մանր ու միջին ձեռնարկությունները: Փակվում էին հազարավոր ֆաբրիկաներ ու գործարաններ: Փողոց էին նետվում տասնյակ հազարավոր բանվորներ: Ստեղծված նոր իրադրության պայմաններում բանվորները, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գլխավորությամբ, տնտեսական գործադուլներից անցնում են քաղաքական ցույցերի: Սկսում է բարձրանալ բանվորական շարժման վերելքը: 1901 թվականի գարնանը ՌՍԴԲԿ Պետերբուրգի, Մոսկվայի, Խարկովի, Կիևի, Թիֆլիսի, Բաքվի, Կազանի, Սարատովի, Եկատերինոսլավի և այլ քաղաքների լենինյան-իսկրայական կոմիտեների կոչով քաղաքական ցույցերի են ելնում հազարավոր բանվորներ՝ «Կորչի՛ ինքնակալությունը» լոզունգով:

Տնտեսական և քաղաքական գործադուլները զուգակցվում և լրացնում են միմյանց, որը և հարստացնում է հեղափոխական պայքարը: Հանդես է գալիս բանվորական պայքարի նոր ձևը՝ ցույցերը:

Դարասկզբի գործադուլային շարժման պատկերը տոկոսներով հետևյալն էր.

	1901 թ.	1902 թ.	1903 թ.
Քաղաքական գործադուլներ . .	21,1	20,4	55,2
Տնտեսական գործադուլներ . . .	78,9	79,6	44,8 [1]

Սատիճանաբար բարձրանում է քաղաքական գործադուլների ալիքը։

Անդրկովկասի բանվորական շարժումների փառահեղ էջերից է 1900 թվականի օգոստոսյան քաղաքական հուժկու գործադուլը, որին մասնակցում էին հարյուրավոր հայ բանվորներ։ Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցների 4000 բանվորներ օգոստոսի 14-ին աշխատանքը դադարեցնելով, պահանջեցին կառավարությունից բանվորական օրը կրճատել՝ հասցնելով մինչև 8 ժամի, ավելացնել աշխատավարձը, բարելավել իրենց տնտեսական պայմանները։ Գործադուլը տևեց 15 օր[2]։ Այդ օրերին Թիֆլիսում այն սատիճան շիկացած էր մթնոլորտը, որ սպասվում էր հայտարարվեց։ Գնալով ավելի ու ավելի էին խտանում գործադուլավորների շարքերը։ Յարական գործակալները սարսափելի դաժան էին տենչում գործադուլավորների հետ։ Ձերբակալված բանվորների կանայք ցույց կազմակերպեցին։ Դա Անդրկովկասում կանանց առաջին քաղաքական ելույթն էր, որն է՛լ ավելի ոգևորեց գործադուլավորներին։ Գործադուլային կոմիտեն օգոստոսի 9-ին բանվորներին դիմեց հատուկ կոչով, որը հարգավոր օրինակներով տարածվեց Թիֆլիսի աշխատավորների մեջ։ Կառավարությունը շարունակեց բռնությունները։ Ձերբակալվեց 884 մարդ։ Գործադուլն ընդլայնեց և խորացրեց դասակարգային պայքարը և երկրամասի բանվորներին անմիջականորեն ներգրավեց Ռուսաստանի հեղափոխական շարժման մեջ։ Դա բանվորական շարժումների հետագա վերելքի նախադուշակն էր։

2

1901 թվականը երկրամասում նշանավորվեց մի շարք գործադուլներով։ Քաղաքական պայքարի էին դուրս գալիս ոչ միայն

---

[1] См. «История Коммунистической партии Советского Союза», том первый. Создание большевистской партии. 1883—1903. М., 1965, էջ 356.

[2] См. ЦГИА Груз. ССР, ф. 34 с., д. 1016, л. 196, д. 492, л. 9, 1900; ЦГИАМ, ДП, VII дело-во, том первый, л. 456, 457, 1900; Н. А. Чахвашвили, Рабочее движение в Грузии (1870—1904 гг.), էջ 151—152.

խոշոր ձեռնարկությունների, այլ նաև մանր ու միջին ֆաբրիկաների ու գործարանների բանվորները։ Միայն հունվար ու փետրվար ամիսներին, լենինյան «Իսկրա»-ի ազդակներով, Թիֆլիսում տեղի է ունեցել 15 գործադուլ։ Էնֆիաջյանցի ծխախոտի ֆաբրիկայում մասնակցեցին 600 բանվոր, «Միր»-ում՝ 700, Սամարովի ֆաբրիկայում՝ 200, Բուտուլովի մոտ՝ 100, Լեբերմանի տպարանում՝ 140, Կոզովկու տպարանում՝ 40, Վրացական հրատարակչական ընկերությունում՝ 150 մարդ և այլն[3]։ Մարտին ձերբակալվեցին Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մի շարք ղեկավար աշխատողներ, այդ թվում՝ Վ. Կուռնատովսկին, Գ. Ֆրանչեսկին, Ֆ. Մախարաձեն, Հ. Զարգարյանը և այլ գործիչներ[4]։ Սակայն ո՛չ ձերբակալությունները, և ո՛չ էլ հալածանքները չէին լսկեցնում բանվորների հեղափոխական կամքը։ Գնալով աճում էր գործադուլային ալիքը, որը երկաթուղայինների 1900 թվականի օգոստոսյան գործադուլի հետ միասին պայմաններ ստեղծեց 1901 թվականի մայիսմեկյան ցույցերի համար։ Մինչև մայիսմեկյան տոնի օրը, ցարական կառավարությունը և Կովկասի կառավարչապետը Թիֆլիսը լցրին զորքերով, նպատակ ունենալով արյան մեջ խեղդել ցույցարարներին։ ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն, ելնելով ստեղծված իրադրությունից, նախօրոք որոշեց ցույցի օրը ապրիլի 18-ից փոխադրել ապրիլի 22-ը՝ կիրակի օրը։ Մայիսի 5-ին Թիֆլիսի բանվորները քաղաքի տարբեր մասերից փոքրիկ խմբերով հավաքվում էին քաղաքի կենտրոնում՝ Սալդատսկի բազարի, նախկին Ալեքսանդրովյան այգու շրջանում (այժմ 26 կոմիսարների անվան այգի)։ Նրանք բոլորն անհամբեր սպասում էին ցույցն սկսելու ազդանշանին։ Թիֆլիսի առաջավոր բանվոր Գ. Թելիան ծածանում է կարմիր դրոշը։ Մոտ 3000 ցուցարարներ հավաքվում են «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» նշանաբանի մակագրությամբ և Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Լիբկնեխտի նկարնե-

---

[3] См. «Искра», № 12, 6 декабря 1901 г., *նույնը «Լենինյան «Իսկրա»-ն Անդրկովկասի մասին», ժողովածու, էջ 26։*

[4] *Տե՛ս* ЦГИА Груз. ССР, ф. 7 с., д. 326, лл. 137—152, д. 336, л. 13, д. 585, л. 291, 1901.

1901 թ. մարտի 22-ին Հակոբ Զարգարյանի մոտ հայտնաբերվել է 109 նամակ, 100 հեռագիր, 191 էջ զանազան գրություններ, 117 պատճենահան թուղթ, տպագրական սարքավորում, հեղափոխական գրականություն և այլն։ См. Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 31, д. 33, лл. 48—48 об.

ով զարդարված կարմիր դրոշի շուրջը[5]: *Կարմիր դրոշը վեր բարձրացնելու և օդում ծածանվելու հետ միասին բազմապիսի լեզուներով՝ ռուսերեն, հայերեն, վրացերեն, լսվում են բացականչություններ՝ «Կեցցե՛ բազաբական ազատությունը», «Կեցցե՛ հանրապետությունը», «Կորչի՛ բռնությունը», «Կեցցե՛ մայիսի մեկը», «Կեցցե՛ 8-ժամյա բանվորական օրը»: Ցույցարարները դեռ նոր էին սկսել շարժվել հավաքատեղերից, երբ նրանց վրա գրոհում են ոստիկաններն ու կազակները: Կատաղի կռիվ է սկսվում... ոստիկաններն ու զինվորները, գազանություններով հայտնի ժանդարմական կապիտան Լավրովի գլխավորությամբ, ցույցարարներին ծեծում էին մտրակներով ու մերկացրած սրերով: Բանվորները, որ գրեթե ոչինչ չունեին ինքնապաշտպանության համար, բացի իրենց մկանուտ բազուկներից, հերոսաբար մարտնչում էին կարմիր դրոշի տակ, հանուն իրենց ազատության: «Ահա ընկնում է վիրավոր բանվորը,— այդ օրերին գրել է «Իսկրա»-ն,— նա ամբողջովին արյան մեջ է, ոստիկանները սկսում են ոտքերով տրորել նրան, իսկ նա անդադար շարունակում է գոչել. «Կեցցե՛ սոցիալիզմը, կեցցե՛ ութժամյա աշխատանքը»... «Հաղթամարտին դրոշակակիր Առաքելը (հայ) մի ձեռքով բռնում է իր գլխին բարձրացրած սուրը, ջարդում, երկու մասի բաժանում»*[6]: *Ցարական ոստիկանները, կազակներն ու զորքերը վիրավորեցին 14 բանվորի և ձերբակալեցին ավելի քան 50 մարդ:*

Թիֆլիսի բանվորների 1901 թվականի մայիսմեկյան ցույցը ցարիզմի դեմ երկրամասի աշխատավորների մղած դասակարգային պայքարի նոր, ավելի բարձր ձևի առաջին պայթյունն էր:

---

5 См. «Искра» № 5, июнь, 1901.

6 *Տե՛ս* «Искра», № 6, июль, 1901. *1901 թ. մայիսմեկյան ցույցին բացի Մ. Մելիքյանից, հայերից աչքի են ընկել նաև Արմենակ Նալչաջյանը, Անուշավան Վարդանյանը, Արտյոմ Տեր-Հարությունյանը (Արտյոմ Գիո) և ուրիշներ: «Իսկրա»-ում հրապարակված «Մայիսի մեկը Թիֆլիսում» խորագրով անանուն հոդվածը որոշ հեղինակներ վերագրում են Մելիք Մելիքյանին: Ս. Տ. Արկոմեղը իր «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գրքում գրել է. «Իսկրա»-ի № 6-ում զետեղված «Մայիսի մեկը Թիֆլիսում» թղթակցությունը հայերեն լեզվով շատ կերպով գրել է ներկա աշխատության հեղինակը (Գ. Ղարաջյան—Խ. Բ.), «նուրբ» ստորագրությամբ, և որովհետև ընկերներից շատերը այդ ժամանակ ձերբակալված էին և մեկ էլ այն պատճառով, որ «Իսկրա»-ի արտասահմանյան հասցեն հեղինակի ձեռքի տակ չուներ, հոդվածն ուղարկում է Ժնևի հայ ուսանողներին և հատուկ նամակով խնդրում, որ թարգմանեն այն թե՛ ռուսերեն «Իսկրա»-ում հրատարակելու համար և թե՛ ֆրանսերեն՝ սոցիալիստական թերթերի համար: Բայց ի զարմանս մեզ, հոդվա-*

«Կիրակի, ապրիլի 22-ին (հին տոմարով) Թիֆլիսում տեղի ունեցած իրադարձությունը,— գրել է «Իսկրա»-ն,— նշանակալի է ամբողջ Կովկասի համար։ Այդ օրվանից սկսվում է բացահայտ հեղափոխական շարժումը»[7]։

Մեծ է Թիֆլիսի բանվորների 1901 թվականի մայիսմեկյան ցույցի պատմական նշանակությունը։ Այն քաղաքականապես կոփեց Անդրկովկասի պրոլետարիատին և համախմբեց հեղափոխական ուժերին, Կովկասում բացահայտ հեղափոխական շարժման սկիզբը դրեց և մարտական դպրոց հանդիսացավ բանվորների և աշխատավոր մասսաների դասակարգային շահերի գիտակցման համար։ Թիֆլիսի բանվորների մայիսմեկյան ցույցը և հերոսական «Օբուխովյան պաշտպանությունը» լայն արձագանք գտան և բարձրացրին պրոլետարիատի մարտական ոգին։

Դարասկզբին հեղափոխական պայքարի փառավոր էջեր գրեցին Բաքվի, Բաթումի բանվորները։ Բաքվում առաջին անգամ բանվորները 1901 թվականին դուրս եկան մայիսմեկյան ցույցի։ Նույն թվականին գործադուլներ արեցին քաղաքի Խատիսովի մեխանիկական գործարանի, ծխախոտի ֆաբրիկայի, Սաբունչիի մեխանիկական գործարանի բանվորները, նավթագործները, Բուզ երկաթուղային կայարանի աշխատողները։ 1901 թվականի մայիսին «Իսկրա»-ն հաղորդել է, որ գործադուլը համակել է Բաքվի նավթահանքերը և Բաքվի նահանգապետը Ասարխանի նահանգապետին հեռագրել է, թե՝ «Անհրաժեշտ է կասեցնել գործադուրկների երթը դեպի Բաքու»։

Թիֆլիսի բանվորների 1901 թվականի մայիսմեկյան ցույցից հետո հեղափոխական տրամադրությունը գնալով ավելի է ուժեղանում։ Շարժումը երկրամասում զարգանում է խորությամբ և լայնությամբ։ «Ֆաբրիկաները, գործարանները, տպարանները և շատ քիչ թվով խոշոր արհեստանոցները ընդգրկվում են տեղական սոցիալ-դեմոկրատական կոմիտեի կողմից»[8],— գրել է «Իսկրա»-ն։

ծը կրճատ ձևով լույս է տեսնում հայ ազգայնական բուրժուական կուսակցության, դաշնակցության օրգան «Դրոշակ»-ի մեջ, իսկ այնուհետև արդեն, ըստ երևույթին, արտատպվել է «Իսկրա»-ի մեջ» (տե՛ս Ս. Տ. Աբկոմեդ, «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում», էջ 74)։ Գ. Ղարաջյանը նույն միտքը պնդել է նաև մի քանի այլ գործերում և «Հիշատակարան»-ում։ «Իսկրա»-ի ֆոնդում հոդվածի բնագիրը չի պահպանված։

Չի բացառված, որ այն գրած լինի նաև Մելիք Մելիքյանը։

7 См. «Искра» № 6, июль, 1901.

8 См. «Искра» № 19, 1 апреля 1902.

Գործադուլային ալիքը ծավալվում է Բաթումի ձեռնարկություններում՝ առանձնապես Սաֆարովի ծխախոտի ֆաբրիկայում։

1900—1903 թվականները հագեցված էին բազմաթիվ գործադուլներով։ Դրանք, հիրավի, բանվորական շարժման հետագա վերելքի տարիներ էին։

1902 թվականին Դոնի Ռոստովում տեղի ունեցած խոշոր գործադուլ-ցույցը խոր ազդեցություն թողեց բանվորական շարժումների վրա։ 1902 թվականի հունվար-փետրվար ամիսներին գործադուլներ եղան Բաթումի ձեռնարկություններում։ Հունվարի 31-ից մինչև փետրվարի 18-ը Մանթաշովի գործարաններում գործադուլավորները համառում էին իրենց պայքարում։ Կարճատև դադարից հետո, փետրվարի 28-ին, ավելի քան 1500 բանվորներ նորից գործադուլ հայտարարեցին։ Դադարեցվեց նավթի լցումը նավթամբարներից նավթատարները։ Իշխանությունները զենքի ուժով ճնշեցին գործադուլը, տասնյակ բանվորներ բանտ նետվեցին։ Այդ ժամանակ ամենից նշանավոր Բաթումի բանվորների մարտի 9-ի բազմաթիվ ցույցն էր, որին մասնակցում էին Ռոստշիլդի և Մանթաշովի գործարանների, նավահանգստի, երկաթուղու և այլ ձեռնարկությունների 6000 աշխատող։ Այն ընթանում էր ՌՍԴԲԿ Բաթումի կոմիտեի ղեկավարությամբ։ Գազազած ցարական զորքերն ու ոստիկանները արյունոտ դատապարտեցին առաջին անգամ բացահայտորեն դիմված զոհեմարտի եկած բանվորների հետ։ Բաթումի պրոլետարիատը ծանր կորուստ տվեց։ Միայն այդ ցույցի ընթացքում սպանվեցին 15, վիրավորվեցին 54 և ձերբակալվեցին 500 մարդ, որոնցից 21 հոգի դատի տրվեցին, իսկ մնացածներին արտաքսեցին քաղաքից։ Նրանց մեծ մասը վերադարձավ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գյուղերը՝ իրենց հետ տանելով հեղափոխական տրամադրություններ։

1902 թվականին մայիսմեկյան վիթխարի ցույց կազմակերպեցին Բաքվի բանվորները։ Նոանդուն նախապատրաստությունից հետո Բաքվի պրոլետարիատը այդ օրը դուրս եկավ իր ուժերի ստուգատեսին։ Մայիսմեկյան ցույցի ժամանակ, որին մասնակցում էր շուրջ 5000 մարդ, առաջավոր բանվորները հրաբորբ ճառեր արտասանեցին։ Շարքերի գլխավերևից տարվում էր կարմիր դրոշակ, տարածվում էին թռուցիկներ՝ հեղափոխական պահանջներով, ցուցարարները բացականչում էին. «Կորչի՛ ինքնակալությունը», «Կեցցե՛ ազատությունը»։

Լենինյան «Իսկրա»-ն բարձր է գնահատել Բաքվի պրոլետարիատի 1902 թվականի մայիսմեկյան ելույթը, բանվորների համերաշխությունը։ Բանվորներից մեկը «Իսկրա»-ում նկարագրելով ցույցը, նշել է. «Շատերն անհամբեր սպասում են նոր ցույցի, և մեր մեծ ուսուցիչ Մարքսի «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» բառերը տպավորվել են բոլոր բանվորների սրտերում այնպես, որ այժմ յուրաքանչյուրն ասում է, որ դժվար էր միայն «առաջին քայլը», իսկ հիմա կբայլենք ուղիղ, անվախ և ամենուրեք, որտեղ մենք կլինենք, կգցենք առաջին կայծը, իսկ կայծից բոց կբռնկի»[9]։ Այնուհետև, հեղինակը պատկերավոր կերպով ցույց է տալիս, որ ոչ այնքան վաղուց նետված հեղափոխական սերմը աճել և խոշոր ծառ է դարձել, և նույնիսկ ոմանք օգտվում են նրա պտուղներից՝ գործադուլներից։

Մայիսմեկյան տոնակատարության դասակարգային բնույթը և դրա հետ մեկտեղ նրա համընդհանրությունը՝ իբրև միջազգային պրոլետարիատի ուժերի սատուցանման օրվա, այդ տոնը դարձրին հիանալի զենք՝ ընդհանուր շարժում առաջացնելու, բանվորական լայն մասսաներին քաղաքական պայքարի մեջ ներգրավելու համար։

Մայիսմեկյան տոնների ագիտացիայի հեղափոխական նշանակությունը, անշուշտ, մեծ էր։ Այն հնարավորություն էր տալիս մայիսմեկյան պրոլետարական այդ ակտի մեջ միապես արտահայտել շարժման և՛ սոցիալական, և՛ քաղաքական նպատակը, նրա հակացարական բնույթը և նրա կապը բանվոր դասակարգի առանձին խմբերի պրոֆեսիոնալ կարիքների հետ։ Բայց սոցիալ-դեմոկրատիան, հաշվի առնելով այն փաստը, որ մայիսյան տոներին իշխանությունները մոբիլիզացիոն վիճակում են, նախօրոք գիտե, թե որ օրն է ցույց լինելու, և թշնամու զումարտակների խաչաձև կրակը խանգարում է շարժմանը, ինքնակալության դեմ մղվող պայքարի տակտիկան միայն մայիսյան ցույցերի հետ չէր կապում[10]։ Նա պրոլետարիատի հեղափոխական հույսերն իրականացնելու նպատակով, քաղաքական պայքարի էր առաջնորդում, ելնելով ստեղծված իրադրությունից, հմտորեն օգտագործելով ամեն մի բարենպաստ պայման։

---

9 См. «Искра» № 22, июль, 1902.

10 Կառավարության ծառաներն այդ ժամանակ սիրում էին կրկնել «բունտ է լինելու մայիսի մեկին, բունտ»։

1902 թվականի Բաքվի մայիսյան ցույցերից հետո քաղաքում ոստիկանական հալածանքներն ուժեղացան, ձերբակալվեցին ցույցերի ակտիվ կազմակերպիչներից 31 տղամարդ և 3 կին, այդ թվում՝ Բոգդան, Լյուդվիգ, Տիգրան Կնունյանցները, նրանց քույրը՝ Փառանձեմ Կնունյանցը — Ռիզել, Բ. Կնունյանցի կինը՝ Ելիզավետա Գոլիկովան, Լ. Կնունյանցի կինը՝ Ռոզա Բաբիկովան, Ալեքսանդր Բեկզադյանը, Հ. Մելիք-Հովսեփյանցը, Ն. Կազարենկոն, գիմնազիստներ Նազարյանցը, Ճգնավորյանցը և ուրիշներ [11]:

Բաքվի հեղափոխական սոցիալ-դեմոկրատները չթուլացող թափով շարունակում են պայքարը: ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն 1902 թվականի վերջերին հայերեն լեզվով հրատարակած մի թռուցիկում ողջունելով բանվորների և պրոլետարական մյուս խավերի նոր տարին, հույս է հայտնում, որ 1903 թվականը սոցիալիստական շարժմանը կբերի նոր հաղթանակներ: Իսկ դրա համար հարկավոր է «կազմակերպվել, կազմակերպվել և նորից կազմակերպվել,— ահա ինչը պետք է լինի մեր նպատակը» [12]: Մերկացնելով ցարական ինքնակալության և կալվածատերերին, Բաքվի կոմիտեն բոլոր ազգերի բանվորներին կոչ էր անում գործել միասնաբար, համերաշխ, պատրաստվել նոր, վճռական մարտերի: Արտահայտելով Բաքվի բազմազգ պրոլետարիատի կամքը, թռուցիկում համակրանք էր արտահայտվում Արևմտահայաստանում մղվող ազատագրական պայքարին: «Ձեզ ենք դիմում դաշնակցական և հնչակյան կուսակցության պատկանող ընկեր բանվորներ,— ասված էր թռուցիկում,— ցանկանում ենք ձեզ ևս հասնել ուխտած նպատակին, կարմիր գազանի ճանկերից ազատել ճնշված հայրենակիցներին: Մենք հույս ունենք, որ մինչև գործնական կերպով չեք մասնակցում ձեր ընտրած կռվում, դուք կմիանաք մեզ հետ և համերաշխության ձեռք մեկնելով մեզ կաջակցեք ընդհանուր թշնամու — սպիտակ գազանի (ցարի) տիրապետության վերջ տալուն» [13]:

Բաքվի պրոլետարիատի բորբոքած «մեծ հրդեհը» բռնկվեց 1903 թվականի հուլիսի 2-ին: Ավելի քան 50 հազար նավթագործ բանվորներ, մեխանիկական արհեստանոցների աշխատողներ, տպագրիչներ, նավաստիներ, կուսակցության Բաքվի լենինյան-

---

11 Տե՛ս «Искра» № 21, 1 июля 1902; см Архив Гру. филиала ИМЛ, ф. 93, оп. 2, д. 760, лл. 1—10.

12 См. ЦГАОР СССР, ф. 1741, листовки, д. 256—271.

13 См. ЦГАОР СССР, ф. 1741, листовки, д. 256—271.

իսկրայական կոմիտեի ղեկավարությամբ քաղաքական հուժկու գործադուլ արեցին։ Գործադուլավորների առաջին շարքերում էին Բիբի-Հեյբաթի և Սև քաղաքի նավթարդյունաբերական ձեռնարկությունների բանվորները, քաղաքի երկաթուղային դեպոյի աշխատողները, տպագրիչները։ Գործադուլը տարածվելով դարձավ ընդհանուր և երկարատև։ Բոլոր նավթահանքերում աշխատանքը դադարեցվեց։ Բերքերը լույս չէին տեսնում, ձիաքարշը կանգ էր առել։ Ամենուրեք տեղի էին ունենում բանվորական բազմամարդ ժողովներ։ Գործադուլավորների տրամադրությունը բարձր էր։ Նրանք պահանջում էին քաղաքական ազատություն, ութժամյա բանվորական օր, դպրոցներ, ժողովրդական թատրոններ, հիվանդանոցներ, աշխատավարձի 20 տոկոս բարձրացում։ Գործադուլային կոմիտեն այդ օրերին հաղարավոր օրինակով բաց էր թողնում բանվորների պահանջները պարունակող թռուցիկներ, կազմակերպում ժողովներ։ «Իր չափով և ընդհանրությամբ գործադուլը չտեսնված է»[14],— այդ օրերին գրել է «Իսկրա»-ն։ Բաքվից ստացված թղթակցության մեջ, որը զետեղված է «Իսկրա»-ի ապրիլյան համարում, խոսվում է բանվորների քաղաքական ինքնագիտակցության աճման մասին, ցույց էր տրվում, թե ինչպես տեղական բանվորական շարժումը, չնայած իր երիտասարդությանը (գոյություն ունի միայն երկու տարի) ծավալվում էր, և բանվորները քաղաքականապես այնպես էին հասունացել, որ պատրաստ էին ամեն րոպե կոմիտեի կոչով փողոց դուրս գալ և սոցիալիզմի հեղափոխական կարմիր դրոշով բացահայտ մարտահրավեր նետել ինքնակալությանը։ Բաքվի պրոլետարիատի վիթխարի գործադուլին, որը տևեց գրեթե 20 օր, արձագանքեցին Թիֆլիսի, Կիևի, Օդեսայի, Բաթումի, Քութաիսի, Ելիզավետպոլի, Ալավերդու և այլ վայրերի բանվորները։

ՌՍԴԲԿ Կովկասյան միության կոչով, ի նշան Բաքվի պրոլետարիատի պայքարի համերաշխության, հուլիսի 14-ին գործադուլ հայտարարեցին Թիֆլիսի բանվորները։ Երկրամասում մինչ այդ նմանօրինակ զիտակցական և համերաշխ պրոլետարական պայքար չէր եղել։ Այդ օրը նշանավոր է նրանով, որ «...Թիֆլիսի բանվորները գործադուլ հայտարարեցին ղեկավարապես յուրյանց և Բաքվի ընկերներին պահպանելու, թիկունք տալու համար,— ասված է ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի 1903 թվականի հուլիսի 15-ի

---

14 См. «Искра» № 45, 1 августа 1903 г.

կոչում,— միացած ուժերով զրոհ տալու ընդհանուր թշնամու վրա...»[15]:

Պատմության մեջ առաջին անգամ Կովկասի երկու խոշոր քաղաքների բանվորները ինքնակալության դեմ ուղղված իրենց պայքարը միավորեցին, հանդես եկան միասնաբար:

Բաքվեցիները, լսելով Թիֆլիսի պրոլետարիատի համերաշխ գործողությունների մասին, ոգևորված շարունակում էին հերոսական կռիվը:

Անդրկովկասում հուլիսյան գործադուլներին մասնակցեցին ավելի քան 100 հազար մարդ, այդ թվում՝ Բաքվում մոտ 50 հազար, Թիֆլիսում՝ 15 հազար, Բաթումում և Փոթիում՝ 10 հազար, Անդրկովկասյան երկաթուղագործում՝ 5 հազար (Միխայլովկա, Սամարեզի և շրջակայքը), Չիաթուրիի լեռնային շրջանում՝ մոտ 20 հազար և այլն[16]:

Հարավի բանվորների քաղաքական ցույցերն ու գործադուլները հսկայական նշանակություն ունեցան Ռուսաստանի ազատագրական ամբողջ շարժման համար: Վ. Ի. Լենինի բնութագրությամբ, Ռուսաստանի հարավում տասնյակ հազարավոր բանվորներ ստրի երան պայքարելու հանուն լավագույն կյանքի, հանուն ստրկանական ճնշումից ազատագրվելու[17]:

Լենինյան «Իսկրա»-ն լայնորեն լուսաբանում էր Անդրկովկասի բանվորների քաղաքական ցույցերի և գործադուլների ընթացքը: Տասնյակ հոդվածներ, թղթակցություններ ու ինֆորմացիաներ են զետեղվել «Իսկրա»-ում Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հեղափոխական շարժումներին նվիրված: Հատկապես արժեքավոր են Բ. Կնունյանցի հոդվածները՝ «Բաքվի բանվորների անընդհատ գործադուլների պատճառները» (1 սեպտեմբերի, 1903 թ.), «Նոր կողոպուտ» (1 հոկտեմբերի, 1903 թ.), «Մեր տակտիկայի և կազմակերպության որոշ հարցերը» (22 հոկտեմբերի, 1903 թ.) և այլն: Վ. Ի. Լենինը, որ շարունակ կապված էր Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հետ և ուղղություն էր տալիս երկրամասի բանվորների, աշխատավոր գյուղացիների քաղաքական պայքարին, «Իսկրա»-ում սիրով էր տեղ տալիս

---

15 Ռեալյուցիոն կոչեր և թռուցիկներ, ժողովածու, էջ 27—28:

16 Տե՛ս «Искра», № 47, Ս. Տ. Ասկոլդով, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, մաս 1, Երևան, 1929, էջ 103, նույնի՝ ուսերեն հրատարակությունը, ժնև, 1910, Գ. Պլեխանովի առաջաբանով:

17 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 214:

նրանց պայքարն արտացոլող ամեն մի հաղորդման։ «Իլյիչը հեռու երկրներից լսեց Բաքվի պրոլետարիատի սրտի բարախյունը, այն պրոլետարիատի, որն այդ ժամանակ ազատագրում էր վերին ասիական ժողովրդական մեր «Իսկրա» թերթը»[18],— ասել է Ս. Մ. Կիրովը։

Ինքնակալության դեմ մղվող պայքարում երկրամասի բազմազգ պրոլետարիատի շարքերում աչքի ընկնող տեղ են գրավում հայ բանվորները։ Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածմամբ հայ հասարակական-քաղաքական միտքը թևակոխում է զարգացման նոր փուլ։ Բոլշևիկյան կազմակերպությունների օգնությամբ հայ բանվորներն ու աշխատավոր զանգվածները ասիական ազատագրվում են նացիոնալիստական կուսակցությունների ու հոսանքների գաղափարական ազդեցությունից, հաղթահարելով «հայկական հեղափոխության» շրջանակները, թևակոխում պրոլետարական հեղափոխության ուղիները։ Դաշնակցության «հայրենասիրական» ազաղակները, թե՝ բոլոր հայերը եղբայրներ են, թե՝ հայերի մեջ չպետք է դասակարգային պայքար մղվի, որովհետև նրանք ունեն ընդհանուր ազգային թշնամիներ և ընդհանուր ազգային իդեալ, գիտակից պրոլետարիատի շնորհիվ խլանում էր, հայ աշխատավորության պայքարի գլխավոր բովանդակությունը դառնում էր դասակարգային պայքարը՝ ցարիզմի և բուրժուազիայի կործանումը։ «Դաշնակցական» հիպնոզն անցավ գրել է Ստ. Շահումյանը,— հայ բանվորները ներգրավվեցին հեղափոխական պայքարի մեջ, չնայած «դաշնակցականների» ամբողջ հակագործունեությանը, հայերի մեջ ծնունդ առան առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակները, որոնք հայ բանվորներին մի ընդհանուր բանակի մեջ կապեցին վրացի, ռուս և այլ բանվորների հետ և նրանց առաջ դրեցին լայն հեղափոխական խնդիրներ»[19]։

1903 թվականը շրջադարձային կետ հանդիսացավ կովկասահայերի կյանքում։ Քաղաքական ցույցերն ու գործադուլները արդյունաբերական կենտրոններից թափանցում են հեռավոր վայրերը։ Քաղաքական պայքարի են դուրս գալիս Հայաստանի լեռնագործները, երկաթուղայինները և արդյունաբերական այլ ճեռնար-

---

[18] См. С. Киров, Доклад о двадцатипятилетии бакинской организации большевиков. Стенографический отчет XIII Общебакинской конференции АКП, էջ 103.

[19] Ս. Շահումյան, *Երկեր, հատ. 1, էջ 284։*

կությունների բանվորները։ 1903 թվականի ապրիլի կեսերին Շամլուղի պղնձահանքերի բանվորները գործադուլ են անում՝ առաջադրելով մի շարք պահանջներ, այդ թվում՝ բարձրացնել իրենց աշխատավարձը, ստեղծել տանելի պայմաններ, վերջ տալ կապալառուների կամայականություններին, հեռացնել իր խարդախություններով հայտնի կապալառու Արաս Մահմատ օղլուն[20]։

Ջրանցքական ընկերության գործակալները և տեղական կապալառուները, որ դժոխային պայմաններում էին պահում բանվորներին, ճնշեցին հանքագործների գործադուլը։ Առաջավոր բանվորներից մի քանիսին, իբրև «անբարեհույների» և «բունտարարների», հեռացրին աշխատանքից[21]։

Ալավերդու հանքագործների քաղաքական հաջորդ ելույթը տեղի ունեցավ 1904 թվականի գարնանը։ Այն նույնպես ճնշվեց իշխանությունների ձեռքով։ Նրանք օգտագործում էին բանվորների անկազմակերպվածությունը, երկպառակություններ առաջացրին նրանց մեջ։ Այնուամենայնիվ, հանքագործների այդ անդրանիկ գործադուլները զգալի նշանակություն ունեցան բանվորների համախմբման, քաղաքական գիտակցության բարձրացման, դասակարգային ինքնագիտակցության ձևավորման տեսակետից։

1902—1903 թվականներին տնտեսական հողի վրա գործադուլներ արեցին Ալեքսանդրապոլ—Ղարաբիլիսա կայարանների երկաթուղայինները։

1904 թվականին բռնկվեցին նոր գործադուլներ, որոնցից նշանավոր էին Ալեքսանդրապոլի բանվորների, հասարակական վայրերի աշխատողների և տնային ծառայողների, Ուլուխանլու—Ջուլֆա երկաթուղու բանվորների գործադուլները։ Ապրիլի 29-ին Ալեքսանդրապոլի արդյունաբերական ձեռնարկությունների և փուռերի աշխատողները գործադուլ արեցին։ Նրանք պահանջում էին՝ ավելացնել աշխատավարձը, կրճատել բանվորական օրը, բանվորներին տալ բժշկական ձրի օգնություն, հանրակացարան, արձակուրդի ժամանակ պահպանել աշխատավարձը, հատատել գիշերային հերթապահություն և այլն։ Ապրիլի 30-ին գործադուլը դաշնակցականների ակտիվ միջամտությամբ ճնշվում է, իսկ առավել աչքի ընկնող գործավարները ենթարկվում են հալածանք-

---

20 Տե՛ս ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մ.Ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 40, գ. 3, թ. 6։

21 Նույն տեղում։

ների և բանտարկվում։ Ճիշտ է, Հայաստանում 1902—1904 թվականներին տեղի ունեցած գործադուլները հիմնականում տնտեսական բնույթ ունեին և իրենց վրա կրում էին անկազմակերպվածության կնիքը, բայց դրանք քաղաքական կարևոր նշանակություն ունեցան։ Հայաստանի պրոլետարիատի առաջամարտիկները դարձակդրին պարզելով գործադուլային դրոշը, ստիպեցնելով ցարական պայքարի ուղին։

3

Քաղաքներին հետևեց գյուղը։ Բանվորական հեղափոխական շարժման հարաճուն վերելքը Անդրկովկասում հարձանք տալով ռաբի է հանում ցարիզմի, կալվածատերերի և բեկերի ծանր լծի տակ հեծող ու հարստահարվող աշխատավոր գյուղացիությանը։ Երկրամասում ագրարային շարժումներ են բռնկվում, որոնք իրենց դրոշի տակ համախմբում են հողազուրկ և սակավահող գյուղացիներին, կալվածատերերից կախման մեջ գտնվող ընտանիքներին։ 1902—1903 թվականներին Վրաստանի մի շարք գյուղերում պրոլետարական շարժումների անմիջական ազդեցությամբ գյուղացիները հարձակվում են կալվածատերերի վրա։ Առաջին գյուղացիական ընդվզումը տեղի ունեցավ 1902 թվականի գարնանը, Քութաիսի նահանգի Օզուրգեթի գավառում։ Նույն թվականի մայիսին մասսայական գյուղացիական շարժումները ընդգրկեցին Գուրիան, Թիֆլիսի նահանգի Գորիի գավառի գյուղերը։ Ապստամբ գյուղացիները հրաժարվում էին կատարել կալվածատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունները, նախկինում սահմանված չափից պակաս էին վճարում կամ էլ չէին վճարում վաշխառուական տոկոսները, ձգձգում էին հարկերի մարումը։ Նրանք հարձակվում էին ամարաթների վրա, հրդեհում կալվածատերերի խոտի և հացահատիկի ամբարները ու դեղերը, ագարակները։ Ռուսաստանում ագրարային պայքարի ելած գյուղացիների օրինակով գյուղացիները համոզվում էին, որ «...ոչ ոք մուժիկներին չի ազատի ստիպեցնավոր ազրուկներից, եթե մուժիկներն իրենք իրենց շաղատեն, եթե նրանք չմիավորվեն իրենց բախտը իրենց սեփական ձեռքը վերցնելու համար»[22]։

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 521։

Գյուղացիական ելույթներ եղան նաև Զուգդիդիի, Ախալքալաքի և այլ գավառներում (1903), որոնց վրա մեծ չափով ազդեցություն էին գործում 1903 թվականի մարտի 9-ի Բաթումի քաղաքական ցույցի պատճառով գյուղերն արտաբսված հեղափոխական բանվորները։

Բաքվի պրոլետարիատի 1903 թվականի ամառային քաղաքական ցույցերի ազդեցությամբ Բաքվի, Գյանջայի, Շամախու, Նախիջևանի, Լենքորանի գավառներում, Զարեթալայի օկրուգում և այլ վայրերում նույնպես ազգարարային ելույթներ ծավալվեցին։

Նվազ ծանր չէր նաև Հայաստանի գյուղացիության վիճակը։ Ցարական պետության կամ արտոնյալ դասին էր պատկանում ամբողջ հողի 72,9 տոկոսը, իսկ գյուղական հասարակությանը՝ 27,1 տոկոսը։ Գյուղական բնակչության 54 տոկոսը տիրում էր միայն հողի 20 տոկոսին, իսկ մնացածը պատկանում էր պետական գյուղացիներին և գյուղացի սեփականատերերին։ Հողային այս ազազակող անհավասարությունները առանձին գավառներում ավելի վատ էին։ Գյուղացուն կողոպտում էին բոլորը։

Հայկական գյուղը ևս սկսում էր արթնանալ գարավոր լեթարգիական քնից։ Երևանի, Սարդարաբադի, Էջմիածնի, Լոռու, Նոր Բայազետի, Զանգեզուրի, Դարալագյազի և այլ վայրերի գյուղացիները, որ հողի, ջրի, արոտավայրերի համար մշտական դժգոհության մեջ էին ցարական կառավարության մուլքադարների և մյուս հողատերերի հետ, ելնում էին պայքարի։

1901 թվականի փետրվարին Երևանի նահանգի Էջմիածնի գավառի Փոքր Շահրիար, Մարգարա, Արզնի, Ելդոման և Ներքին Ղուլլասար[23] գյուղերում ապրող 30 վերաբնակյալ ընտանիքներ, որ եկել էին Արևմտահայաստանից, դիմում են նահանգի պետական գույքի կառավարչին՝ պատմում իրենց հողազրկության, ընտանեական ծանր վիճակի մասին և հորդորում Չիբուխլու պետական կալվածքներից իրենց հող տրամադրել[24]։ Նույն թվականի օգոստոսին Բուհամլուի (Երևանի նահանգ) գյուղացիները բողոքում են կալվածատեր Մահմեդ Աղա Սուլթանովի դեմ, որն ապօրինաբար «մուլք» էր հավաքում նաև այն հողերի համար, որոնք իրենը չէին։ «Մեր գյուղի տեր Մահմեդ Աղա Սուլթանովը կամա-

---

23 Բերված են այն ժամանակվա վարչական-տերիտորիալ բաժանմամբ։

24 См. «Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX в.», Ереван, 1951, էջ 177—178.

յական և անօրեն կերպով համայնքից վերցնում է մուլք,— ասում էին նրանք,— մինչդեռ մենք չունենք այնքան հող, որքան պահանջում է մուլքի տերը»[25]: Գյուղացիները պահանջում էին վճռական միջոցների դիմել, պաշտպանել իրենց իրավունքները: 1902 թվականի հուլիսին ներքին Ղուլլասարի գյուղացիները դիմում են Երևանի նահանգապետին և պահանջում կատարել իրենց գյուղի պետական-մուլքատիրական հողի նոր վերաբաժանում, պատճառաբանելով, թե գյուղի կուլակներն ու արտոնյալ դասերը անցյալ տարիների ընթացքում բռնազրավելով գյուղի հողերը, ծանր աղքատություն են հասցրել մեծ մասին:

1902—1903 թվականներին Էջմիածնի գավառի Սարդարաբադ գյուղի գյուղացիները պայքարի մեջ էին և անընդմեջ բողոքում էին Երևանի նահանգապետին կալվածատեր Եղիազարովի ապօրինի արարքների դեմ: Նա զավթել էր գյուղացիներին պատկանող հողն ու ջուրը[26]: Բեգերի և կուլակների դեմ ուղղված գյուղացիական լուրջ հուզումներ եղան Զանգեզուրում, որոնց վրա բարերար ազդեցություն էր գործել Բաքվի պրոլետարիատի անմիջական պայքարը: Շինուհայր (Շնհեր), Խնձորեսկ և այլ գյուղերի բնակիչները հաճախ հրաժարվում էին պետական ու կալվածատիրական հարկերը վճարելուց: Շինուհայր գյուղի բնակիչների ելույթներից մեկը ճնշելու համար Երևանի նահանգապետի կարգադրությամբ այնտեղ է մեկնում Զանգեզուրի գավառապետ Կարանը: Գյուղացիները դիմադրում են և թույլ չեն տալիս, որ նա գյուղ մտնի. «...գյուղ տանող ճանապարհին մոտիկ ժայռերի վրա գտնվում էին կանանց և երեխաների մի ամբոխ: Կարանը ենթադրելով, որ այդ ամբոխը խանգարելու է իր հետագա ուղևորությունը, հրամայում է ձիավորներից մեկին կրակել, հույս ունենալով այդ միջոցով վախեցնել կանանց և ցրել ամբոխը: Բայց կրակոցից հետո ժայռից ամբոխը սկսում է քարեր նետել և գավառապետը հարկադրված է լինում նահանջել»[27]: Գավառապետը ճանապարհվում է դեպի Տաթև: Այստեղ ևս նա արժանանում է նույն վերաբերմունքին: Ոգևորված շինուհայրցիների օրինակով, Տաթևի գյուղացիներն ավելի ուժեղ դիմադրություն են ցույց տալիս, հարձակ-

---

25 Նույն տեղում, էջ 177—178:

26 Տե՛ս «Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX в.», Ереван, 1951, էջ 177—178.

27 Տե՛ս Ա. Մարուխյան, Հայաստանի գյուղացիների պայքարը հողի համար (1905—1907), Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 5, 1955, էջ 6։

վում կազակների, ձիավորների վրա, դուրս քշում գյուղից և հետապնդում մինչև վանքը։ Խիզախ լեռնցիների գրոհներից սարսափած գավառապետը մշտական զորք է խնդրում. «Շնհերցիների օրինակին կարող է հետևել ամբողջ բնակչությունը,— գրել է գավառապետ Կարաևը Երևանի նահանգապետին,— եթե գավառում չլինի զինվորական ուժ։ Այդ իսկ պատճառով խոնարհաբար խնդրում եմ ուղարկել կազակների երկու հարյուրյակ և բաժանելով՝ նրանցից մեկը տեղավորել Շինուհայրում, իսկ մյուսը պատահական անհրաժեշտության համար պահել Գորիսում»[28]։

4

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին Հայաստանում բռնկված ագրարային շարժումների մեջ նշանավորը Լոռու շրջանի Հաղպատ գյուղի գյուղացիների 1903 թվականի ելույթն է։ Հաղպատի գյուղացիության առաջին ելույթը, որ ուղղված էր կալվածատեր Բարաթովի և նրա ստրաժնիկների դեմ, տեղի ունեցավ 1903 թվականի մայիսին, իսկ երկրորդը նույն թվականի նոյեմբերին։ Լինելով Ալավերդու և Թիֆլիսի բանվորական կենտրոնների մոտ և ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի ազդեցության տակ, Հաղպատի գյուղացիներն իրենց վրա կրում էին սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը։

Հաղպատում տիրակալում էր իշխան Բարաթովը (Զարիկո Բարաթաշվիլի), որն ուներ հազարավոր դեսյատին հող, մինչդեռ, գյուղացիները հողազուրկ էին[29]։ Կալվածատերն անգութ կերպով կեղեքում էր գյուղացիներին, ստիպում նրանց բարձր գներով վարձակալել հողը, գյուղացիները զրեթե զրկված լինելով հողից, իրենց անտանելի գությունը վարելու համար կապալով վերցնում էին Բարաթովի կալվածքները։ Նրանք, իբրև ժամանակավոր-պարտավորյալներ, կալվածատիրոջը տարեկան վճարում էին բերքի 1/4-ը, կամ 1400 փութ ցորեն՝ բահրա 100 սայլ, որը հավասար է 400

---

28 Նույն տեղում։

29 «Կավկազսկի կալենդարդ»-ի 1907 թվականի տվյալներով Հաղպատ գյուղն ուներ 9681 դեսյատին հողային տարածություն, որից 8500 դեսյատինը պատկանում էր իշխան Բարաթովին, 500 դեսյատինը՝ սուրբ Նշանի վանքին, 150 դեսյատինը՝ կալվածատերեր Երզնկյաններին և միայն 500 դեսյատինն էր գտնվում ավելի քան 200 գյուղացիական տնտեսությունների ձեռքում։

ռուբլու, խոտի բահրա, արոտավայրերի դիմաց 1300 ռուբլի (օգտաբաշի), 8 փութ յուղ, 20 փութ պանիր (կովաթեղ), Դեբեդում որսվող ձկան կեսը (տարեկան մոտ 50 փութ ձուկ՝ օշինի հարկ), այգիների բերքի 1/4-ը (կուլուխ), 2 ռ. 50 կոպեկից մինչև 5 ռուբլի (նայած տնտեսությունը, միջինը կազմում է 4 ռուբլի) — ծխի հարկ, տարեկան 20 փութ ընկույզ։ Բացի այս բոլորից, Բարաթովը հաղպատցիներից տարեկան լրացուցիչ գանձում էր նաև 1500 ռուբլի այլ հարկեր[30]։ Բարաթովի կալվածքները, որ փռվում, տարածվում էին Հաղպատի շրջակայքում, առանձին տեղերում ճեղքում, անցնում էին գյուղացիներին պատկանող հողաբաժինները։ Կալվածքների նման կտրատված վիճակը կալվածատիրոջը հաճելի չէր, քանի որ դրանից մասամբ շահում էին «հանդուգն» գյուղացիները, Բարաթովի կամքին հակառակ, երբեմն օգտագործում նրա առանձին հողակտորներ, առաջին հերթին «խաչի դուռ» արոտավայրը։ Բացի այդ, գյուղացիներին ընկճելու և կախման մեջ պահելու, իր կալվածքները հարևան գյուղերի կուլակներին կամ էլ կալվածատերերին կապալով տալու համար, հարկավոր էր ամրողջական մասսիվներ։ Այդ նպատակով, 1903 թվականի գարնանը, Բարաթովն առաջարկում է գյուղացիներին՝ զիջել նրան իրենց հողերը և փոխել նույն քանակությամբ ուրիշ հողերի հետ»[31]։ Գյուղացիները լավ հասկանալով, որ ուժը և ապատասպան օրենքը հովան են Բարաթովին, բայց և այնպես վճռեցին մերժել նրա առաջարկությունը։ Դրանից հետո կալվածատերը որոշեց «...ինչ էլ որ լինի, նույնիսկ ուժով գյուղացիներին իր կողմը գրավի և իր մտադրությունն ի կատար ածի։ Այս նպատակով սկսեց զանազան որոգայթներ լարել և ճնշել գյուղացիներին։ Այսպես, օրինակ, նա բոլորովին արգելեց գյուղացիներին անցնել

---

30 Ներ. Մելիք-Յոլչյան, Չորս տարի Հայաստանի բանվորական շարժման պատմությունից, 1903—1907, Երևան, 1924, Հ. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռում, Երևան, 1957։ Ռ. Մովսիսյան, Ագրարային շարժումները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, տե՛ս «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907», հոդվածների ժողովածու, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1955, էջ 219։

31 Տե՛ս «Պրոլետարիատի կռվի թերթիկ», № 5—6, 15 (28) հունվարի 1904, «Նամակ Հաղպատից»։ Դեպքերի թարմ տպավորության տակ գրած այս նամակը (հոդվածը) արժեքավոր նյութեր է պարունակում Հաղպատի գյուղացիների 1903 թվականի ելույթների մասին։

հենց իրենց՝ գյուղացիների ձեռքով շինած կամրջով...»[32]: Իսկ երբ տեղեկացան, որ դա անհնարին է, որոշեց կամուրջից անցնելու համար ամեն շնչից և անասունից գանձել 40-ական կոպեկ հարկ: Նրա այդ կամքը ևս չկատարվեց:

Ագահ կալվածատերը տարեցտարի բարձրացնում էր կապալավարձը: 1902 թվականին, երբ նա փորձեց այն նորից բարձրացնել, գյուղացիները խոսքերը մեկ արած հրաժարվեցին նրա կալվածքներից բարձրացված գներով հող վարձակալել և սկսեցին մշակել իրենց այն հողակտորները, որոնք սեպտեմբի ժամանակ տրվել էին կալվածատիրոջը: Զայրանալով գյուղացիների այս վերաբերմունքից, Բարաթովը պահանջում էր՝ անմշակ հողերի համար տուրք վճարել, այն էլ կրկնակի չափով, արոտավայրերից չօգտվել:

Գյուղացիների համբերության բաժակը լցվել էր: Նրանք հրաժարվեցին կատարել կալվածատիրոջ նաև այս պահանջը: Ստեղծվեց լարված դրություն: «...Վերջերս իշխան Բարաթովի... և գյուղացիների միջև հարաբերություններն այնքան սրվել էին,— 1903 թ. նոյեմբերի 11-ին Թիֆլիսի նահանգապետին գրել է Բորչալուի գավառապետ Շանշիևը,— որ նկատվում էին բրեական բնույթի դեպքեր, ըստ որում, ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս հաղպատցիները, իսկ պասսիվ դեր էր խաղում սեփականատերը, որի փաստական իրավունքները կամաց-կամաց խախտվում էին հաղպատցիների կողմից»[33]: Բարաթովը դիմում է իշխանության օգնությանը, մայիսին նրա պահանջով Հաղպատ են մեկնում սարաժնիկներն ու անասապահները՝ 1902 թ. «պարտքի» և 1903 թ. կապալավարձի դիմաց գյուղացիների անասուններն ու դույքը բռնագրավելու համար: Մերժելով նրանց, գյուղացիները, նույնիսկ կանայք և երեխաները, զինվելով բարերով, գդալներով, ինչով հնարավոր էր, գյուղից դուրս էին քշում սարաժնիկներին: «Կատավարությունը գլուխը կորցրել էր: Մինչև այն ժամանակ, խաղաղ շինականները, որոնք համբերությամբ տանում էին ցարի լուծը և կալվածատիրոջ արյունահեղությունները, կատաղել էին»[34]:

---

32 Տե՛ս «Պրոլետարիատի կռվի թերթիկ», № 5—6, 15 (28) հունվարի, 1904:

33 ЦГИА Груз. ССР, ф. 34 с., д. 431, л. 13.

34 Տե՛ս «Պրոլետարիատի կռվի թերթիկ», № 5—6, 15 (28) հունվարի, 1904:

Կալվածատեր Բարաթովը անհանգստանալով հաղպատցիների արարքից, դիմեց ցարական դատարանին։ Թիֆլիսի օկրուգային դատարանը նրա համար ցանկալի որոշում ընդունեց։ Բոբչալուի գավառի ոստիկանական պրիստավ իշխ. Ավալովը ստանալով վճիռը, Բարաթովի կալվածքի կառավարիչ Աբդուշելիշվիլու, Ալավերդու համայնքի ավագ Պետուկա Խարիտովի հետ միասին տասնյակ սարաժնիկների ուղեկցությամբ, 1903 թվականի նոյեմբերի 8-ին մեկնում են Հաղպատ։ Օրը թեև պարզ էր, բայց նրանք սև ամպի նման մատն դյուզ։ Ագեռալի լուրը գուժում էր ամեն կողմ։ Հանդից, ձորից տուն են շտապում գյուղացիները։ Ավալովը գործի է դնում իր խորամանկ ու ճարպիկ հնարանքները՝ գյուղացիներից խաղաղությամբ գանձելու «կառավարական թերթիկով» կալվածատիրոջը «հասնող» վարձակալական գումարներն ու պարարքը։ Ավալովը որոշեց. «...գործել իրեն նպատակ դնելով, մի կողմից հաստատել բազմակողմանի խաղաղասիրական համաձայնություն կողմերի միջև, իսկ մյուս կողմից՝ վերը նշված պատճառները (գյուղացիների գրգռված վիճակը—Խ. Բ.) նկատի ունենալով, հաղպատցիների հնարավոր դիմադրությունից դատական պրիստավին, որպես նորին արքայական մեծության օրենքի կատարողի և սեփականատեր իշխ. Բարաթովի իրավունքների ներկայացուցիչ պ. Աբդուշելիշվիլու, պաշտպանել տհաճ հետևանքներից...»[35]։ Ավալովը գյուղացիներին հավաքում է Հաղպատի վանքի բակը, ուրախ դեմք ցույց տալով վատ խաղի ժամանակ, պահանջում՝ թե հարկավոր է հլու հնազանդ, «սահմանված կարգով», կատարել դատարանի որոշումը, կամավոր կերպով ազատել արոտավայրերը, վերդրման ներկայացնել անասունները։ Ժողովուրդն ազազակում է։ Ագիտատորների օգնությամբ գյուղացիները մինչև այդ պարզել էին իրենց անելիքը։ Նոյեմբերի 5-ին ընդհանուր ժողով էին գումարել և որոշել դիմադրել, ոչ մի հարկ չվճարել, բռնագրավել Բարաթովի հողերից և բաժանել գյուղացիներին։ Ավալովին գյուղացիները պատասխանեցին «վճռական մերժումով»։ Հանդիպելով նման դիմադրության, պրիստավը գործի է դնում ոստիկանական ուժը։ Ավելի քան 60 սարաժնիկներ հավաքում են գյուղի և ձմեռանոցի անասունները և ցուցակագրում՝ Բարաթովի պահանջած 5000 ռուբլի պարտքերը և նրան հասցված «վնասը» հատուցելու համար։ Ահարկու տեսարան էր բացվել։ Իշխան Ավալովը հրամայում է բոլոր անասունները քշել դեպի Հաղ-

---

35 ЦГИА Груз. ССР, ф. 34 с., д. 431, л. 14.

պատից երեք վերստ հեռավորության վրա գտնվող կալվածատեր Բարաթովի դրասենյակը, իսկ ինքը գատական պրիստավ Նասիդովի և կալվածքների կառավարիչ Աբդուշելիշվիլու ուղեկցությամբ շարժվում է իշխան Բարաթովի դաստակերտը: Դեռ չէին հասցրել տեղից շարժվել, երբ ամբողջ գյուղը մեկ մարդու պես, զինված դաղտնակներով, մահակներով, իսկ կանայք՝ բարերով, հարձակվում են նրանց վրա: Կանայք և երեխաներն առաջինը փակեցին ճանապարհը և անասունների եղջյուրներից կախված ազազակում էին՝ «Օգնեցեք, մեզ կողոպտում են»: Այն ժամանակ պրիստավը հրամայեց ժողովրդին ծեծել նագայկաներով: Այդ էլ չօգնեց: «Հենց այդ մոմենտին գյուղից միանգամից բացվեց հրացանային կրակ: Իսկ անասունները, որոնք մնացել էին բախտի քմահաճույքին, իսկույն բշվեցին հովիվների կողմից»[36]: Օգնության հասած ստրաժնիկները Ավալովի պահանջով հրացանային կրակ են բաց անում գյուղացիների վրա: Դրությունը գնալով ծանրանում է: Երկու կողմերից հրացանաձգությունն ու քարկոծությունը շարունակվում է: Ցարի ծառաները, չդիմանալով պայքարի եկած գյուղացիների գրոհներին, կռվով նահանջում են դեպի Ախթալա: Ապստամբները հետապնդում են նրանց և փորձում են երկրորդ անգամ շրջապատման մեջ գցել: Բայց վերջիններիս հաջողվում է թեժ հրացանաձգությամբ ետ մղել ապստամբ գյուղացիների գրոհները և ապահովել հետապնդումներից: Նոյեմբերի 8-ի զինված այդ ելույթի ժամանակ սպանվում է 8 մարդ, այդ թվում՝ 4 կին (նրանցից մեկը հղի էր, որը ամեն կողմից ծակծկված էր գնդակներով), շատերը մարմնական ծանր վերքեր են ստանում: Ապըստամբ գյուղացիների դիմադրությունը ճնշելու համար Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ 75 հոգուց բաղկացած կազակային մի ջոկատ ուղարկվեց Հաղպատ: Նոյեմբերի 10-ին նահանգապետ Սվեչին ստանալով Շանշիևի հեռագիրը, թե՝ «այժմ ընթանալի հետ միասին մեկնում եմ Հաղպատ, դիշերն ուղարկված են 70 կազակներ», անասնական սառնասրտությամբ հեռագրի տեքստի վրա մակագրեց. «Գերազանց: Կցել գործին. Սվեչին. 10/XI—1903 թ.»: Նա չմոռացավ Հաղպատի իրադարձությունների մասին տեղյակ պահել նաև Կովկասի կառավարչապետ Գոլիցինին: Նոյեմբերի 10-ին Հաղպատ լցվեցին մոտ 150 զինված կազակներ և ստրաժնիկներ, բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ

---

36 ЦГИА Груз. ССР, ф. 34 с., д. 431, л 14.

թվում՝ զավառապետը։ Գյուղի վրա էկզեկուցիա դրվեց։ Իշխ. Բարաթովի բաղդը հյուրասիրությանն արժանանալուց հետո, կազակները սկսեցին իրենց գործը տեսնել։ Բաժանվելով 8 խմբերի, գյուղի զանազան կողմերից հարձակվեցին տների վրա, գյուղացիների վրա։ Մասսայական ձերբակալություններ էին կատարում, ծեծում և տանջամահ անում գյուղացիներին, կողոպտում և թալանում նրանց։ «Չի կարելի նկարագրել այն գազանությունները, որոնք տեղի ունեցան այնտեղ։ Կազակները թափվելով տները, կողոպտում էին այն բոլորը, ինչ որ ձեռքի տակ էր ընկնում. ծեծում էին տղամարդկանց ու երեխաներին, իսկ կանանց ու աղջիկներանց՝ բռնաբարում։ Կանանց գլխի զարդերը և գյուղացիների հավաքած մի քանի կոպեկները բոլորովին անհետացան։ Ամբողջ գյուղը կողոպտելուց հետո արդեն սկսեց տեղի ունենալ սարսափելի էկզեկուցիան։ Կազակները հերթով միմյանց էին հանձնում գյուղացիներին և լավ ծեծում։ Խեղճ գյուղացին աղաչում էր այն ժամանակ, երբ վերջանում էր դահիճների շրջանը, այսինքն, երբ բոլորն անխնա կերպով ծեծում էին։ Գյուղացիները աղաչում էին հարեան գյուղերը փախչելով, ցարի զազանացած ծառաներից՝ զբաղերից... զավառական պրիստավը այս գազանությունների վերջում ման էր գալիս ասելով. «Հաղպատը մենք հավատարեցրինք հողի հետ, այնտեղ այլևս խոտ չի բուսնի»[37]։ Ավելի քան 10 օր ոստիկաններն ու կազակները Հաղպատում գաժան հաշվեհարդար էին տեսնում իրենց իրավունքները պաշտպանելու փորձ կատարած գյուղացիների հետ։ Թալանում էին գյուղացու մինչև վերջին պատառ հացը։ Նրանք գյուղացիներին զրկեցին ոչ միայն անասուններից, այլև արոտավայրերից, բանադրավված միջոցներից 5000 ռուբլի տվեցին իշխան Բարաթովին... Ձերբակալեցին 200 «անբարեհույս» գյուղացի, բանտարկեցին 60 մարդ, այդ թվում՝ 18 հոգի նետվեցին Թիֆլիսի Մետեխի բանտը։ Հաղպատի նոյեմբերների 8-ի գյուղացիական ելույթի կազմակերպիչներն էին գյուղացիներ Արզուման Սոխիկյանը, Սարգիս Աթանեսյանը (Այնալով), Կամսար Մելքումյանը, Գրիգոր Երզնկյանը, Շաքար Երզնկյանը և ուրիշներ։

Ջնայած համառ դիմադրությանը, Հաղպատի գյուղացիների 1903 թվականի նոյեմբերյան հեղափոխական ելույթը ճնշվեց։

Վ. Ի. Լենինն իր «Գյուղական չքավորությանը» (1903) աշ-

---

37 Տե՛ս «Պրոլետարիատի կռվի թերթիկ», № 5—6, 1904։

խատուβյունում խոսելով գյուղացիական 1902—1903 թթ. ապրստամբությունների մասին, նշել է, որ «գյուղացիները ջարդվեցին, բայց նրանք նորից ու նորից ոտքի կելնեն, նրանք հոգեպես չեն ընկճվի առաջին պարտությունից»[38]:

Հաղպատցիները, որ կռվում էին արդար գործի համար, չընկճվեցին: Գնալով լեռնացավ նրանց կամքը: Ապստամբների կարմիր արյունով ներկվեց Հաղպատը և դարձավ Կարմիր Հաղպատ, պայծառ էջ գրելով հայ ժողովրդի պատմության մեջ: Հաղպատի գյուղացիական ելույթները արձագանք գտան Հայաստանի և Անդրկովկասի գյուղերում, ավաններում: Միանգամայն պարզ դարձավ, որ ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությունը, գյուղում արմատավորված շահագործումը, գյուղացիության հողազրկության ու շերտավորման աճումը ավելի են սրում դասակարգային հակասությունները հայկական գյուղում: Ինքնակալության և ազգային հարստահարիչների դեմ պայքարողների շարքերն են անցնում նաև անսահման ճնշումներից հոգնած գյուղացիները: «Գյուղացիները վճռեցին,—վճռեցին միանգամայն ճիշտ,— որ ավելի լավ է մեռնել ճնշողների դեմ կռվելով, քան սովամահ լինել, առանց կռվի»[39]:

5

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո, 1836 թվականի մարտի 11-ին «Պոլոժենիա»-ով, ոուսաց կառավարությունը ճանաչեց հայ-լուսավորչական եկեղեցու անփոփոխության իրավունքը և նրա վարչական իրավասությունը: Հայ եկեղեցին, չնայած օտարերկրյա զավթիչների անթիվ հարձակումներին ու թալանին, դարերի ընթացքում կուտակել էր նյութական մեծ միջոցներ: Նա ուներ զգալի հողատարածություններ: 1902 թվականին հայոց եկեղեցական հողատարածությունները կազմում էին 175 հազար դեսյատին, այդ թվում՝ Էջմիածնի վանքն ուներ 45 հազար, Ղարաբաղի թեմի եկեղեցիները՝ 58698, Երևանի թեմինը՝ 32440, Վրաստանինը՝ 12250, Բեսարաբիայինը՝ 4418 դեսյատին[40]: Իր բնույթով հայ եկեղեցական հողատիրությունը միջ-

---

38 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 540:

39 Նույն տեղում, էջ 539:

40 Տե՛ս Մխիթար Վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906, էջ 1—21, 39—40, նույնը ЦГИАЛ, ф. 1276, оп. 19, л. 2.

նաղարյան կալվածատիրության մնացուկ էր և կաշկանդում էր արտադրողական ուժերի և նոր՝ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը: Հայ եկեղեցու ընդհանուր ունեցվածքը կազմում էր ավելի քան 100 միլիոն ռուբլի, որից տարեկան ստացվում էր մոտ 300 հազար ռուբլի եկամուտ: Դա ստացվում էր հայ աշխատավորների քրտնաջան վաստակով: Եկամուտների մի մասը հատկացվում էր ծխական, եկեղեցական և թեմական դպրոցների պահպանմանը:

Դարասկզբին ցարիզմը հալածական արշավանք է սկսում Անդրկովկասի աշխատավորների, առանձնապես հայ ժողովրդի դեմ: Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինը, հավատարիմ տխրահռչակ ռուսականացման քաղաքականությանը, փակում է 300-ից ավելի հայկական դպրոցներ, սահմանափակում Կովկասի հայոց բարեգործական և հրատարակչական ընկերությունների գործունեությունը, խստացնում պարբերականների դրությունը: Ցարիզմը ջանում էր ոչնչացնել հայ եկեղեցու ինքնավարությունը, վերջ տալ հայկական կուլտուրական ու կրթական հիմնարկներին: 1903 թվականի հունիսի 12-ին Նիկոլայ 2-րդը հաստատում է հայ եկեղեցապատկան հողերը և գույքը բռնագրավելու օրենքը[41]: Մոտ 6 տարի, 1898 թվականից, կառավարությունը մտադրում էր այդ օրենքը: Բայց նախազգուշանալով Կովկասում ժողովրդական, հակացարական ելույթներից, նա հետաձգում էր դրա հրատարակումը: Մինչև հունիսի 12-ի օրենքը՝ եկեղեցական ունեցվածքի մի մասը, այսինքն՝ դպրոցների և կուլտուրական մյուս հաստատությունների պահպանության նպատակով հատկացված գումարները Կովկասում տնօրինում էին եկեղեցական համայնքները իրենց ընտրյալների՝ հոգաբարձուների միջոցով:

Ցարի՝ 1903 թվականի հունիսի 12-ի օրենքի համաձայն, հայլուսավորչական եկեղեցու կալվածքներն ու եկամտաբեր գույքը

---

41 Հունիսի 12-ի օրենքի և նրա արձագանքների մասին տե՛ս Կավկազեց (Բ. Կնունյանց) «Նոր կողոպուտ», «Իսկրա», № 49, 1 հոկտեմբերի, 1903 թ., նույնը Ե. Կնունյանց. Избранные произведения. Ереван, 1958, էջ 40—51, «Լենինյան «Իսկրա»-ն Անդրկովկասի մասին», նյութերի ժողովածու, Երևան, 1955, էջ 48—52, 280—294, Ա. Ա. Համբարյան, Հայոց եկեղեցական բռնագրավված գույքի օգտագործումը ցարիզմի կողմից 1903—1905 թթ., Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, № 10, 1961, «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ (1902—1921)», ժողովածու, Երևան, 1960: Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 101, ց. 1, գ. 50, թ. 1—345: Մշի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, ցուց. 5, գ. 58, թթ. 1—37, գ. 59, թ. 74:

հանձնվում էին Ռուսաստանի կառավարության համապատասխան մինիստրությունների անօրինությանը: Խուզվում էին հայ եկեղեցու սեփականատիրական իրավունքները: Օրենքով բռնագրավվում էին այգիները, վարելահողը, մարգագետինները, արոտավայրերը, անտառները, առևտրական կրպակները, ջրաղացները, ձկնորսական կետերը, բաղնիքները, գրամական ունեցվածքը: Բռնագրավման ենթակա չէին միայն անասուններն ու գյուղատնտեսական գործիքները, ինչպես նաև Պետերբուրգի և Մոսկվայի հայ եկեղեցիների գույքը, հայ հոգևորականներին, հոգևոր-կրթական հաստատություններին պատկանող հողատարածությունները (բայց ոչ երբեք դեսյատինից ավելի): Եկեղեցական գույքի ընդունումը հանձնարարվում էր հողագործության ու պետական ունեցվածքի մինիստրությանը, Կովկասի գլխավոր կառավարչապետին և համապատասխան նահանգապետներին ու քաղաքագլուխներին [42]:

Հունիսի 12-ի օրենքով ցարական ոստիկանական-բյուրոկրատական կառավարությունը պատերազմ հայտարարեց հայ եկեղեցուն: Սակայն օրենքի դեմ լեռնացավ ոչ այնքան հայ եկեղեցու, որքան հայ ժողովրդի ցասումը: Ցարիզմի բիրտ ընթացքը վրդովեց Արևելյան և Արևմտյան Հայաստանի ամբողջ հայ բնակչությանը, քանի որ այն, ըստ էության, ուղղված էր հայ ժողովրդի ազգային-մշակութային ինքնուրույնության դեմ, որշափ հայ եկեղեցու գույքով էր ապահովվում հայ դպրոցական ցանցի պահպանությունը:

Հունիսի 12-ի օրենքը առերես պարուրված էր կեղծ, խնամակալական քողով, միանգամայն թալանչիական բնույթ ուներ: Այն ոտնահարում էր ոչ միայն հայերի կրոնական զգացումները, այլև հայ ժողովրդի քաղաքական շահերը: Ժողովուրդը տեսնում էր պատիժը, բայց չէր տեսնում հանցագործությունը: Նա լավ գիտեր, որ դաժանությունը բնորոշ է երկչոտությամբ թելադրված օրենքներին, որովհետև երկչոտությունը եռանդուն կարող է լինել միայն դաժան լինելով: Օրինական սանկցիա տալով կողոպուտին, ցարիզմը ճանապարհ էր հարթում անարգել կերպով իրականացնելու հայերի ռուսականացմանը, արմատախիլ անելով ազգային ինքնորոշման, ազգային-կուլտուրական ինքնուրույնության համար մղվող պայքարի ամեն մի ձգտում: Ցարիզմը փորձում էր կապ

---

[42] Տե՛ս ЦГИАЛ, ф. 1276, оп. 19, д. 2; ЦГИА Груз. ССР, ф. 7, д. 320 а., ф. 34 с., д. 432; ЦГИАМ, ДП, III, дело-ов, 1903, д. 1, и т. д.

գանել հայ եկեղեցու և հայ ազգային շարժումը ղեկավարող կազմակերպությունների մեջ։ Դա անհիմն մեղադրանք էր, որ նպատակ ուներ հիմնավորել և արդարացնել ձեռնարկվող կողոպուտը։

Երբ կառավարությունը և նրա տեղական օրգանները սահմանադրական Գոլիցինի գլխավորությամբ փորձեցին կիրառել այդ դիշատիչ օրենքը, հայ ժողովուրդը ստիպված եղավ հակահարված տալու շափն անցկացրած ինքնակալությանը։

Ժողովրդի համբերության բաժակը լցվել էր։ Բոցկլատաց համազգային պայքարի կրակը։ Անդրկովկասի բոլոր հայաբնակ կենտրոններում գումարվում էին բազմամարդ միտինգներ, որտեղ համարյա միևնույն ոգով դիմումներ էին ուղարկվում կաթողիկոսին, պահանջելով՝ ո՛չ մի դիջում չանել։ «Ավելի շուտ կմեռնենք, քան թույլ կտանք մեր իրավունքների ոտնահարումը»։ Այս նշանաբանով բանաձևեր էին ընդունվում միտինգներում ու ժողովներում, որոնք սովորական երևույթ էին դարձել այդ օրերին։

Շարժման ընթացքում որոշակիորեն պարզ դարձավ տարբեր դասակարգերի ու քաղաքական կուսակցությունների վերաբերմունքը Հունիսի 12-ի օրենքի նկատմամբ։

Հոգևորականությունը, ազգայնական կուսակցություններն ու հոսանքները և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան՝ աշխատավոր մասսաների հետ միասին, տարբեր ձևերով հասկացան և տարբեր մեթոդներով ու ուժով պայքարեցին օրենքի իրականացման դեմ։

Հոգևորականությունն օրենքն ամենից առաջ ընկալեց որպես կառավարության ցանկություն՝ վերացնելու ինքնավար հայկական եկեղեցին, նրա ավտոնոմիան և այն ենթարկելու ուղղափառության ազդեցությանը։

Հայ եկեղեցական դասը, որը Ռուսաստանի սահմաններում 1900 թ. ուներ 7 եպիսկոպոս, 34 վարդապետ, 1547 քահանա և 360 եկեղեցական սպասավոր[43], տագնապալի վիճակ տպրեց։

Հունիսի 12-ի օրենքն անհանգստություն էր պատճառել նաև արևմտահայությանը։ Կ. Պոլսից պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը Ամենայն հայոց կաթողիկոսին գրած 1903 թ. հուլիսի 15-ի գրության մեջ իր զարմանքն արտահայտելով Հունիսի 12-ի օրենքի առթիվ, դատապարտում էր այն իբրև

---

43 Տե՛ս Մխիթար վարդապետ, *Հայերը Ռուսաստանում*, Վաղարշապատ, 1906, էջ 37։

ոանձգությունն հայ եկեղեցու գարավոր իրավունքների դեմ։ Նա պատրաստակամություն էր հայտնում համաձայնվել մնալ հայ եկեղեցու սկզբունքներին. «...նկատելով, որ մեր եկեղեցին մի և անբաժանելի լինելով, ազգն համոզեն, որ ի սիրտս աշխարհի մասնակից կը զանվի անոր ընդհանուր շահերուն և իրաւանց...»։ Այն բանից հետո, երբ Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանը համոզվեց, որ ոչ միայն մայր աթոռի, այլև Անդրկովկասի, Կայսրության և արտասահմանի (Ամերիկա, Թուրքիա, Պարսկաստան և այլ երկրներ) հայ եկեղեցիները միաբանությամբ են ասդորված, 1903 թվականի օգոստոսի 4-ին սինոդին հրամայեց չհրապարակել հունիսի 12-ի օրենքը, իսկ օգոստոսի 21-ին կոնդակ ուղարկեց բոլոր թեմերին, ունեցվածքը բաղաքացիական իշխանություններին չտալու կարգադրությամբ՝ մինչև իր կողմից հատուկ թույլտվություն չլինի։

Խրիմյանը կարծում էր, թե նորին մեծությունը թյուրիմացության մեջ է, առանձին մարդիկ նրան մոլորեցրել են, ազերատարների միջոցով, կամ էլ, անձամբ, եթե Պետերբուրգ մեկնի, իրեն կհաջողվի վերացնել այդ օրենքը և նորին արժանանալ թագավորի ողորմածությանը։ Նա խոնարհաբար մի խնդրագիր մյուսի հետևից էր ուղարկում ցարին և ազերսում նրա արքայական շնորհները։ Իսկ ցարը՝ զոհ էր նյութած դավադրությունից, ներքին գործերի մինիստր Վ. Պլևեի միջոցով իր գայրույթն էր թափում «ատածո անհնազանդ ծառայի» գլխին։ «Ի հավելումն Ձերդ օգոստոսի 12-ի հեռագրին,— 1903 թ. օգոստոսի 13-ին գրել է Պլևեն կաթողիկոսին,— պատիվ ունեմ հայտնելու, որ թագավոր կայսրը տեղեկանալով Ձեր օգոստոսի 7-ի հեռագրի մասին, հաճեց Ձերդ ուշադրությունը հրավիրել Ձեր սրբության անկանոն գործողության վրա, այս տարվա հունիսի 12-ի Մինիստրների կոմիտեի հրապարակած օրենսդրության վերաբերմամբ։

Օգոստոսի 4-ի Ձեր կոնդակը ոչ այլ ինչ է, եթե ոչ առաջարկել էջմիածնի սինոդին՝ հրաժարվելու ի կատար ածել ամենաբարձրագույնի կամքը, որ նշանակում է ծանր կերպով մեղանչել ամենահպատակության պարտքի դեմ։

Նորին մեծությանը հաճո էր յուր կայսերական ուշադրությունը դարձնել նույնպես այն հանգամանքի վրա, որ վերջին վարմունքը միակ դեպքը չէ հանդիսանում, որ էջմիածնի պատրիարքը շեղվում է հայ լուսավորչական եկեղեցու նախկին ներկայացուցիչների օրինական... գործողությունների շրջանից, այս

պատճառով նա հրամայել է ինձ հայ լուսավորչական հոգևորականության ավելի տեղական անհնազանդության դեպքում մատնել այն մասին, թե արդյոք որ չափով ռուս միապետության կառավարությանը նվիրված հայ լուսավորչական եկեղեցու կազմակերպությունը շարունակում է համապատասխանել պետության շահերին:

Պարտք եմ համարում կցորդել սրան, որ Նորին մեծությունը բարեհաճել է տալ իմ ձեռքը օգոստոսի 10-ի Ձեր հեռագիրը, մերժելով միևնույն ժամանակ Ձեր անձամբ ներկայանալը այս գործի առիթով: Սակայն եթե ապագայում Ձերդ սրբազանությունը գտնի, որ անհրաժեշտ է Ձեր Ս. Պետերբուրգ գալը բացատրելու համար գործողության եղանակը, ապա պիտի այս առիթով խընդրամատույց լինենք Կովկասյան բաղաքացիական մասի կառավարչապետի միջոցով»[44]:

Ժողովրդական ցասման և պոռթկումների ազդեցությամբ դաշնակցությունը վերանայեց իր տակտիկան, սկսեց «խրախուսել» տարբերային կարգով հակացարական պայքարի ելած մասանեերին, զեկավարվելով այն գիտակցությամբ, թե հարկավոր է կռվել «ոտնահարված ազգային իրավունքների և ամբողջ ազգին հասցված վիրավորանքների» համար: Սկզբնական շրջանում դաշնակցությունն այդ անում էր «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեի» անվան տակ, իսկ հետո՝ իր անունից: Դաշնակցությունը հարկադրված հայտարարեց, թե «համազգային» «թուրքահայ հարցի» կողքին ճանաչում է նաև «ռուսահայ հարցի» առկայությունը: Նա իր կազմակերպություններին հարազ հայ բանվորներին նույնիսկ այդ օրերին շարունակեց մասնակցելու բանվորական կոմիտեների նշանակած գործադուլներին և ցույցերին:

Իսկ ինչպես պատահեց, որ,— ինչպես գրել է Ստ. Շահումյանը,— տասներեքամյա գործունեությունից հետո դաշնակցությունն այդպիսի դիրք դրավեց, կապիտուլյացիայի ենթարկվեց[45]:

Ամենից առաջ դաշնակցությունը հարկադրված եղավ հաշվի

---

44 Տե՛ս «Ռևոլյուցիոն կուշեր և թուցիկներ (1902—1921)», Ժողովածու, 1960, Երևան, էջ 661։ ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն, որ սկզբից ևեթ բացեց աշխատավորների աչքերը, առանձին թերթիկով, 1903 թվականի օգոստոսին հրապարակեց «Դիմակը պատռված է» կոչը Պլեհվեի նամակի համապատասխան մեկնաբանություններով։ Պլեհվեի նամակը հասարակությանը ոչ միայն շատարափեցրեց, այլ ավելի զրգռեց։

45 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 285։

տոնել XX դարի սկզբին կովկասահայության կյանքում առաջացած խոր տեղաշարժերը: Ուստի նա ջանում էր հայ աշխատավորության աչքում չկորցնել վստահությունը: Երկրորդ՝ նա ստիպված էր այդ անել. «...առավել ևս այն պատճառով, որ մանր ու միջին աշխատավորների հենց այն մասսան, որի վրա նա հենվում էր, տարերայնորեն ներգրավվել էր նոր շարժման մեջ և նրան հետ պահելու ոչ մի հնարավորություն»[46] չկար: Երրորդ՝ «նա մի քայլ արեց դեպի առաջ, արթնացող ժողովրդի հետևից միայն այն նպատակով, որպեսզի հետ պահի նրան»[47], ժողովրդական շարժումներին ազգային բնույթ տա, պահի ազգային շրջանակներում: Չորրորդ՝ նա առաջադիր խնդիր ուներ հայ պրոլետարիատին մեկուսացնել ռուս, վրաց, ադրբեջանական և Անդրկովկասի մյուս ժողովուրդների բանվորների՝ ինքնակալության դեմ մղվող համատեղ հեղափոխական պայքարից, պրոլետարական շարժումը զրկել դասակարգային բովանդակությունից, պայքարել հանուն «ընդհանուր հայրենիքի»: Դաշնակցությունը ժողովրդական մասսաների դասակարգային ինքնագիտակցությունը նենգափոխում էր ազգային ինքնագիտակցությամբ: Նա հավասարության նշան էր դնում ցարական կառավարության և ռուս ժողովրդի միջև, արգելակում էր հայ ժողովրդի դասակարգային պայքարին, ազատագրական շարժմանը:

Դաշնակցության շրջադարձը 1903 թվականի հունիսի 12-ի օրենքի և այդ կապակցությամբ ծավալված հեղափոխական շարժման քաղաքական արդյունքներից էր:

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին, մանավանդ հեղափոխության տարիներին, սաստկացավ հնչակյան կուսակցության շարքերում կատարվող բայքայումը: Առանձին կազմակերպություններ, իսկ որոշ տեղերում՝ շատ անդամներ, համակրանք տածելով սոցիալ-դեմոկրատների նկատմամբ, տարածում էին նրանց գրականությունը: Բազմաթիվ հնչակյան բանվորներ ներգրավվելով հեղափոխական շարժման մեջ, մտան ՌՍԴԲԿ շարքերը, ակտիվորեն մասնակցեցին բանվորական շարժումներին: Բայց 1903—1904 թվականներին հնչակյանները հունիսի 12-ի օրենքի կապակցությամբ տեռորիստական տակտիկայով աշխատավոր մասսաներին շեղում էին դասակարգային պայքարի ուղուց:

---

46 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 285։

47 Նույն տեղում։

ինչ վերաբերում է հայ լիբերալ բուրժուազիայի օրգան «Մշակ»-ին, ապա այն, պերազասելով հարազատ մնալ իր սկզբունքներին, քար լռություն պահպանեց հունիսի 12-ի օրենքի նկատմամբ։

Բոլորովին այլ դիրք բռնեց հայ իրականության մեջ նոր ծիլեր արձակած սոցիալ-դեմոկրատիան։ Մինչև 1903 թվականի հունիսը երկրամասում հաջող ծավալված բանվորական բազմաթիվ քաղաքական ցույցերը, գործադուլները և մասսայական լայն ագիտացիան հեղափոխականացրել էին աշխատավոր մասսաներին։ Ռուսական առաջավոր պրոլետարիատի և Անդրկովկասի մարքսիստների օգնությամբ աշխատանք էր ծավալվել ժողովրդի տարբերայնորեն բռնկված շարժումը դասակարգային պայքարի ինտերնացիոնալ հունի մեջ մացնելու և ռուս պրոլետարիատի գլխավորությամբ ինքնակալության դեմ գրոհելու համար։ Հայկական գյուղերում ձևավորված սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, սերտ կապ հաստատելով ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի և Անդրկովկասի լենինյան-իսկրայական կոմիտեների հետ, կազմակերպում էին աշխատավոր մասսաներին, հասարակական կարծիք մշակում ընդդեմ հունիսի 12-ի օրենքի։ Նրանք իրենց մարքսիստական պրոպագանդայով «պայծառ ճառագայթի նման» թափանցում էին հայկական գավառի «մթին թաղավորությունը» հայ մասսաների քաղաքական գիտակցությունն ուղղում ինքնակալության դեմ պայքարելու։

Կովկասյան միութենական կոմիտեն, ՌՍԴԲԿ Բաքվի, Բաթումի, Ալեքսանդրապոլի կոմիտեները, լենինյան «Իսկրա»-ն, բոլշևիկյան «Վպերյոդ», «Պրոլետարի», «Պրոլետարիատի կռիվը», «Պրոլետարիատի կռվի թերթիկը» և կուսակցական այլ օրգաններ մերկացնում էին ցարիզմի գաղութատիրական քաղաքականությունը, նրա սահմանադրակային ռուսականացման ձգտումների էությունը, հունիսի 12-ի օրենքի և նրա հետ կապված կողոպուտի նպատակը։ Բոլշևիկյան կոմիտեները հեղափոխական պրոկլամացիաներով ոգողեցին Կովկասը։ «Դիմակը պատռված է», «Բանվորներ և գյուղացիներ», «Ընկերներ» և այլ թռուցիկներում Կովկասյան միութենական կոմիտեն կոչ էր անում համախմբվել պրոլետարիատի դրոշի տակ։ «Մենք չենք կարող և չպետք է թույլ տանք, որ մեր երկրի ամեն ծայրում տեղի ունեցող տարերային ընդհարումները կառավարության հետ չդառնան մի հուժկու փոթորիկ,—ասված է Միութենական կոմիտեի «Ընկերներ» կոչում,—

որը պետք է ջախջախի կայսեր միապետի արյունոտ գահը և վերջ տա նրա բազմաթիվ դահիճների գոյությանը: Մենք չենք կարող թույլ տալ, որ որևէ մի ուրիշ մարմին, աշխատավոր բազմության հակառակորդ մի ուրիշ դասակարգ ներկա վճռական բոպեին իր վրա վերցնի ղեկավարի դերը և իրավունք ունենա ասելու, թե նա ինքն է, որ կանգնած է կռվողների առաջին շարքերում և ոչ թե սոցիալ-դեմոկրատիան»[48]:

«Ինքնակալությունը և հայերը» թռուցիկում Միութենական կոմիտեն, շարադրելով բոլշևիկների դիրքը հունիսի 12-ի օրենքի նկատմամբ, նշում էր, թե հայերը հատկացան ցարի նենգ պլանները և բարձրացրին պայքարի դրոշը. նրանց արյունն արդեն թափվեց: Միութենական կոմիտեն բոլոր սոցիալ-դեմոկրատներին՝ համաշխարհային մեծ բանակի մարտիկներին, ամեն տեսակ կեղեքման ու ճնշման թշնամիներին կոչ է անում ամենուրեք և միշտ կրծքով պաշտպանել ճնշվածներին: «Կամայականության դեմ հայերի մղած պայքարում մեր տեղը առաջին շարքերումն է:

Թող բոլոր դրոշներից բարձր ծածանի մեր դրոշը»[49],— ասված է Միութենական կոմիտեի կոչում:

ՌՍԴԲԿ Կովկասյան միության մի այլ կոչում ասված էր, թե երևկվա խաղաղ, սարուկ հայ մարդը, այսօր ապստամբության մարտիկ է դարձել: Ո՞վ է պատերազմողը և ո՞ւմ հետ է նա պատերազմում: Սարկական դարավոր քնից արթնացած ժողովուրդն է այդ,— պարզաբանում էր միութենական կոմիտեն,— որ կռիվ է հայտարարել բռնակալությանը: Ժողովրդական բողոքի հսկա ալիքներն են, որ պետք է վերջնականապես ջնջեն, ջախջախեն միապետական ծանր շղթաները: Ժողովրդի սրտում թաքնված զայրույթը երկար ժամանակ ելք չէր գտնում, մինչև որ կարմիր դրոշակը, պրոլետարիատի աներկյուղ կռիվը, արթնացրին մեր երկրի նիհրող ուժերին և ցույց տվեցին բոլորին, որ հարկավոր է կռվել: «Մենք, ընկերներ,— գրված է կոչում,— որ դեպի կյանք ենք կոչել այդ մասսաներին, մենք էլ պարտավոր ենք գիտակցական արտահայտություն տալ նրանց բողոքին: Մենք ճիշտ պետք է թափենք, որ մեր երկրի բոլոր ծայրերում տեղի ունեցող տարերային ընդհարումները կառավարության հետ, դառնան մի հուժկու փոթորիկ,

---

48 См. Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 33, д. 446.

49 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1958, էջ 89։

որը պետք է ջանքերի զորան միասնության արյունոտ գահը և վերջ տա նրա բազմաթիվ դահիճների գոյությանը։

Ուրեմն, ընկերներ, առաջ դեպի մարտ»[50]։

Ազատության ծիլը վազորդյան ցողով չի բարձրանում, այլ արյան շիթերով, դասակարգային անհաշտ պայքարով։

Դրա համար էլ մինչև այդ «անարատությունը կերպով ամեն տեսակ բռնություններ տանող հայ ժողովուրդը,— 1903 թ. գրել է «Իսկրա»-ն,— այժմ սուր կերպով բողոքեց թագակիր ավազակի նոր բարբարոսության դեմ և սկսեց զենքը ձեռքին պաշտպանել իր իրավունքները»[51]։

Հունիսի 12-ի օրենքի դեմ առաջինը ձայն հնչեցրեց Ալեքսանդրապոլը։ Հուլիսի 29-ին, երբ Խրիմյանը քաղաքի առաջնորդարանից մեկնում էր կայարան, բնակչությունը բազմահազարանոց ցույցի ելավ, պահանջելով՝ չհանձնել եկեղեցական ունեցվածքը։ Այնուհետև օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հակացարական հզոր ցույցեր և միտինգներ գումարվեցին Երևանում, Կարսում, Էջմիածնում, Աշտարակում, Բաքվում, Բաթումում, Շուշում, Նոր Նախիջևանում, Իգդիրում, Գանձակում, Ղարաքիլիսայում, Ջալալօղլիում և այլ քաղաքներում ու վայրերում, որոնք վեր էին ածվում զինված ապստամբության։ Օգոստոսի 3-ին Երևանի հաղարավոր բնակիչներ իրենց ձայնը բարձրացրին հունիսի 12-ի օրենքի դեմ, զինված կազակների և զորքի միջամտության պայմաններում հայ ժողովրդին կոչ արին դիմադրել ցարական կողոպտիչներին։ Շատ տեղերում շարժումները կովկասահայ զանգվածին ներգրավում են հեղափոխական շարժման ոլորտը։

Լենինյան «Իսկրա»-ի խմբագրությունը[51] հաճույքով է նշել, որ Կովկասի սոցիալ-դեմոկրատները «...բոլորովին ճիշտ գնահատեցին հայկական եկեղեցական ունեցվածքի վրա ցարական արշավանքի քաղաքական նշանակությունը և իրենց օրինակով ցույց տվեցին, թե ինչպես պետք է ընդհանրապես սոցիալ-դեմոկրատական վերաբերվի ամեն մի նման երևույթին»[52]։

---

50 Քաղվածքը օգտագործվում է «Հայրենիք» հանդեսի 1934 թ. «Դեպի կռիվ» վավերագրերից (տե՛ս № 5, էջ 70—101, № 6, էջ 133—149, № 7, էջ 86—118)։

51 Տե՛ս «Искра», № 49, 1 октября, 1903 г., Բ. Կնունյանց, «Նոր կողոպուտ» (ստորագրությունը «Կավկազեց») հոդվածը։

52 Արժեքավոր է Բ. Կնունյանցի «Նոր կողոպուտ» հոդվածի վերջում զետեղված «Խմբագրության կողմից» ծավալուն մեկնաբանությունը, որտեղ լենին-

«Իսկրա»-ն հավաստիացնում էր, թե՝ մենք հայ պրոլետարիատին կմիավորենք իրար ռուս բանվորների հետ՝ նրանց բոլոր էքսպլոատատորներին էքսպրոպրացիայի համար մղվող պայքարի գործում, թե՝ ոստիկանական բռնությունից մենք պետք է պաշտպանենք և կպաշտպանենք ոչ միայն պրոլետարներին, այլև հասարակության բոլոր դասակարգերին, այդ թվում՝ նույնիսկ քահանաներին: Այնուհետև թերթը պահանջում էր, որ ցարական կառավարությունը չհամարձակվի ձեռք դնել հայկական եկեղեցական ունեցվածքի վրա[53]:

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան հանուն ինքնորոշման ազատության, պահպանելով եկեղեցական գույքի նա ստացման համար ծավալվող շարժումները, ջանում էր հարցը լուծել արմատապես, այդ ունեցվածքն ի վերջո տալ իր իսկական տերերին՝ բանվորներին և աշխատավոր գյուղացիներին:

Բաքվի, Թիֆլիսի և Անդրկովկասի արդյունաբերական այլ քաղաքներում ռուս, վրացի, ադրբեջանցի և այլ ազգերի բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն իրենց համերաշխությունն էին արտահայտում հայկական ազատագրական շարժման նկատմամբ: Շատ տեղերում նրանք միանում էին հայ ցուցարարներին, աջակցում նրանց պայքարին: 1903 թվականի օգոստոսին Վաղարշապատում հայ ցուցարարներին միացան շրջակա գյուղերի ադրբեջանցիները, հայտարարելով, թե իրենց ևս քիչ անախորժություններ չի պատճառել ցարը:

Վրաց և ադրբեջանական եղբայրական ժողովուրդները ջերմորեն պաշտպանեցին ինքնակալության դեմ պայքարի ելած հայ աշխատավորներին: «Բաքվի բոլոր ազգությունների բանվորները,— գրում էր «Պրոլետարիատի կռվի թերթիկը»,— ջերմորեն ողջունում են հայ եղբայրների քաջարի կռիվը: Նրանց խորթ է ազգային ատելության ամեն մի զգացում: Առանց ազգային խբա-

---

յան «Իսկրա»-ն պաշտպանում է հայ իրականության մեջ ծավալված հակացարական շարժումները: Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի առթիվ ծավալված հակացարական շարժումների մասին Կովկասից ստացված նյութերը Բոնչ Բրուևիչը հանձնում էր Լյենինին ծանոթանալու (տե՛ս ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մարքս-Էնգելս-Լենին. պարտ. արխիվ, փաստ. № 28342):

53 «Искра» № 49, 1 октября 1903 г.

ության բոլոր պրոլետարների համերաշխությունը նրանց համար սրբազան պատգամ է» [54]:

Ցարական կառավարության կողմից Անդրկովկասում հրահրվող ազգամիջյան ընդհարումները, որոնք նպատակ ունեին մարել հեղափոխական շարժումների հրդեհը, կանխվեցին:

Այն ժամանակ, երբ դաշնակցությունը և նացիոնալիստական մյուս տարրերը խոսում էին միայն ազգային ինքնապաշտպանության մասին և առաջարկում էին սև գգենա հագնել ու ցույցերի ժամանակ սև դրոշակ բարձրացնել, հեղափոխական մարքսիստները դատապարտում էին պայքարի այդ պասսիվ ձևը, նշելով, որ հարկավոր է ո՛չ թե պաշտպանվել, այլ՝ հարձակվել, ո՛չ թե աղերսել ու լաց լինել, այլ՝ պայքարել, հանդես գալ ոչ թե սգաղրոշով, այլ՝ կարմիր հեղափոխական դրոշով:

Այսպիսին էր այդ պահին սոցիալ-դեմոկրատիայի դիրքավորումը [55]:

Այսպիսին էին հայ իրականության մեջ քաղաքական իրադրությունը և քաղաքական ուժերի դասավորությունը, երբ ցարա-

---

54 *«Պրոլետարիատի կովի թերթիկ», № 3, 1903 թ., (ռուս. հրատ.):*

Այդ օրերին «Իսկրա»-ին գրած նամակներից մեկում ասված է. «Последняя всеобщая стачка сыграла огромную роль в деле сплочения рабочих разных национальностей. Та помощь, которую оказали 2 сентября демонстрациями армянским рабочим в Баку и других местах рабочие других национальностей, яснее всего показывает клич социал-демократии: «Пролетарии всех стран, соединяйтесь!», который не только вошел в сознание, но въелся в плоть и кровь Кавказского рабочего». (См. ЦПА ИМЛ при ЦК КПСС. ф. 24, оп 114. ед. хр. 28342).

55 *Դաշնակցությունը ոչ միայն անցյալում, այլև ներկայումս ջանում է 1903 թվականի հայկական ժողովրդական, հակացարական շարժումները վերագրել իրեն: Երևանում լույս տեսնող դաշնակցության օրգաններից «Ալիքը» 1962 թվականին «Պայքարի ճամփով» խմբագրական հոդվածում գրել է. «Հ. Հ. Դ.-ն վարեց մեկը իր գերագույն պայքարներից, երբ ցարական կառավարությունը փորձեց հափշտակել հայ եկեղեցական, ազգային կալվածքները, ռուսացման, ապաազգայնացման դատապարտելու համար հայ նոր սերունդը, և դաշնակցությունը համազգային պաշտպանության այնպիսի կուռ ու անխորտակելի պատնեշ ստեղծեց, որ նույնիսկ ցարական Ռուսաստանն իր ահռելի կառուցով հարկադրված եղավ նահանջի դիմել և հաշվի առնել դաշնակցության հզորությունը» (տե՛ս «Ալիք», № 221 (7312), 16 հոկտեմբերի, 1962 թ.):*

Այո՛, ցարիզմը նահանջեց: Բայց ոչ թե «դաշնակցության զորության», այլ համառուսական պրոլետարիատի հեղափոխական շարժումների հուժկու ալիքից և ժողովրդական մասսաների հզորությունից սարսափած:

կան սարապները սկսեցին թալանել հայ եկեղեցու ունեցվածքը:

Ցարական գործակալների հետ գույքի բռնագրավման համար առաջին արյունալի ընդհարումը տեղի ունեցավ օգոստոսի 29-ին, Գանձակում: Այդ օրը փոխնահանգապետ Անդրեևը կազակների և զինվորների երկու վաշտի հետ միասին հարձակվեց թեմական առաջնորդի տեղակալի տան շուրջը հավաքված բանվորների, արհեստավորների, գործակատարների, սովորող երիտասարդության և աշխատավորության այլ խավերի վրա: Զինվորները կրակ բացեցին: Սպանվեցին տասնյակ անմեղ մարդիկ, շատերը ձերբակալվեցին: Ելիզավետպոլի արյունոտ սպանդի մանրամասնությունները տարածվեցին Կովկասում: Օգոստոսի 31-ին զինված ընդհարումներ եղան Թիֆլիսում: Վիճակն այնքան ծանր էր, որ քաղաքում ռազմական դրություն հայտարարվեց:

Բաքվում, Անդրկովկասի պրոլետարական այդ կենտրոնում, սեպտեմբերի 2-ին Պարապետի մոտ հայ մանիֆեստարարները ընդհարվեցին զորքի հետ: Կառավարության պահանջով Կասպիական նավատորմը մոտեցվեց ափին: Ահա ձեզ ինքնակալության «ուժն» ու «հզորությունը»,— այդ օրերին գրել է «Իսկրա» թերթը: Երկրամասը դարձավ ռազմական թատերաբեմ: Ամենուրեք շառաչում էր մարակը: Ժողովրդի կողմից ուժեղ դիմադրության հանդիպելով, ցարական կառավարության ներկայացուցիչները և ունեցվածքն ընդունող հանձնաժողովը զինված մեծ ուժերով՝ երկու հարյուր կազակների, զինվորների և պահնորդների մի վաշտի ուղեկցությամբ, մեկնում են էջմիածին՝ կաթողիկոսի մոտ: Խրիմյանը եկեղեցական ունեցվածքը նրանց հանձնելու մասին ասաց. «Համաձայն տված երդման՝ հավատարիմ լինել ցարին, ես չեմ կարող մերժել, բայց հավատարիմ նաև իմ ժողովրդին տված հավատարմության երդման՝ չեմ կարող հանձնել»[56]:

Կառավարությունը, զորքի օգնությամբ կոտրելով ժողովրդի դիմադրությունը, սկսեց իրականացնել հունիսի 12-ի օրենքը: «Ժողովուրդը, որ վաղօրոք անհավատալի չափով էլեկտրականացված էր զանազան ագիտատորների կողմից,— գրել է գյուղատնտեսության և պետական ունեցվածքի մինիստր Ա. Երմոլովը Վիտեին ուղղված զեկուցագրում,— հանդես է բերել այնպիսի հանդուգն, խիզախ դիմադրություն, որ ապավինել ենք զինված ուժի

---

56 Քաղվածքն օգտագործված է ըստ «Իսկրա»-ի № 50-ում հրապարակված տեքստի:

օգնության վրա, ինչպես այդ տեղի է ունեցել Էջմիածնում՝ կաթողիկոսի նստավայրում, Ալեքսանդրապոլ, Կարս քաղաքներում և այլ վայրերում՝ ունեցվածքի ընդունումը անհրաժեշտության դեպքում կատարվել է զինված ոստիկանական պահակախմբի հսկողությամբ»[57]:

Մինչև 1903 թվականի վերջը հիմնականում ավարտվեց հայ եկեղեցական ունեցվածքի բռնագրավումը: Ոչ լրիվ տվյալներով ցարիզմը գրավեց ավելի քան 145 հազար դեսյատին հող և մոտ 12 միլիոն ռուբլի կանխիկ գրամ: Հողագործության և պետական ունեցվածքի մինիստրության տվյալներով Ռուսաստանում, այդ թվում նաև Անդրկովկասում (Տավրիկյան, Խերսոնի, Բեսարաբիայի, Դոնի, Բաթումի, Թերեքի, Կարսի մարզերում, Աստրախանի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի, Բաքվի, Սևծովյան նահանգներում և Զաքաթալայի օկրուգում) բռնագրավվել է 144 605 դեսյատին հող: Միայն 1904 թվականին ունեցվածքից ստացված եկամուտը կազմել է 205 595 ռուբլի[58]:

Ցարիզմը, իր գաղութակալական քաղաքականությունն իրականացնելու նպատակով, որոշել էր հայ եկեղեցու բռնագրաված հողատարածությունների վրա ռուս գաղթականներ բնակեցնել: Կովկասի կառավարչապետ Գոլիցինը 1904 թվականի հուլիսին գրած իր զեկուցագրերից մեկում նշում էր, որ հայ եկեղեցին միայն Կովկասում մոտ 170 հազար դեսյատին հող ունի, որը գերազանցապես լինելով մշակման համար պիտանի, հնարավոր է օգտագործել «...ռուսական գաղութացման նպատակներին»[59]: *Զավթելով եկեղեցական հողերը, ցարական կառավարությունը հեղափոխական շարժումների և զինված ընդհարումների ազդեցության տակ չկարողացավ իրականացնել իր այդ մտադրությունը:*

Եկեղեցական ունեցվածքը զենքի ուժով գրավելուց հետո էլ հարցը չէր սպառվում: Հայ գյուղացիները հրաժարվում էին նվաճված հողերը մշակել, առևտրական, արհեստավորական և այլ ձեռնարկությունները վարձակալել: Այդ է պատճառը, որ ցարական իշխանությունը միայն 1904 թվականին գրաված հայ վանքապատկան հողերից 111 290 ռուբլով պակաս եկամուտ ստացավ,

---

57 См. ЦГАОР СССР, ф. 540, (граф. Витте), оп. 1, д. 992, лл. 1—26.

58 *Տե՛ս* ЦГИАЛ, ф. 1276, оп. 19, д. 2, л. 35. *Նույնը տե՛ս* Ա. Ս. Համբարյան, *Հայոց բռնագրաված գույքի օգտագործումը ցարիզմի կողմից 1903—1905 թթ., «Տեղեկագիր», № 10, 1961:*

59 *Տե՛ս* ЦГИАЛ,ф. 1276, оп. 19, д. 2, л. 51.

քան մինչ այդ ստանում էր վանքը՝ վանքապատկան կալվածքներից։ Բայց ստացված եկամուտների 188 710 ռուբլու յուրաքանչյուր կոպեկի վրա հայ գյուղացու քրտինքի և արյան հետք կար։

Հակացարական ցույցերի ելած հայերը 1903—1905 թվականներին եկեղեցական գույքը բռնագրավելու, հարկերն ու տուրքերը դանձելու, ցարական պաշտոնյաների հետ զինված ընդհարումների ժամանակ քիչ զոհեր չտվին։ Նրանք միաժամանակ դատապատան տեսան ցարի բազմաթիվ գործակալների և այն վախկոտ հոգևորականների հետ, որոնք հաճոյանալով ցարիզմի սպասավորներին, հոժարակամ տրամադրում էին եկեղեցական ունեցվածքը։ Տաշտ գյուղի եկեղեցու դանձապահը, երբ հակառակ համագյուղացիների հորդորանքներին, դավառապետին էր ներկայացել գույքն ու ունեցվածքը հանձնելու, նրա կինը տան շեմքին կանգնելով ասաց.

— Այս դռնով նա ներս չի մտնի...

Վերադարձին դանձապահի ճանապարհը կտրեց մի զինավառ երիտասարդ։ Նրա հարազատ եղբայրն էր։ Վախկոտ և դասալիք պաշտոնյան դարձավ փախստական...

1903 թվականի հոկտեմբերի 14-ին հնչակյան ահաբեկիչները իշխան Գոլիցինի դեմ անհաջող մահափորձ կատարեցին։ Լինելով Կովկասի բաղաքացիական մասի գլխավոր պետ և Կովկասյան զինվորական օկրուգի հրամանատար (1897—1904), նա խիստ, դաժան, ռեակցիոն քաղաքականություն էր վարում։ Նրա միջնորդությամբ էր հաստատվել հունիսի 12-ի օրենքը։ Գոլիցինը երազում էր «Կովկասը տեսնել առանց հայերի»։ Սատրապը վիրավորվեց... հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, դատապարտելով հայ նացիոնալիստների անհատական տեռորի տակտիկան, աշխատավորներին պարզաբանում էր, որ ինքնակալության դահավիժման համար հարկավոր է ժողովրդական ապստամբություն, դասակարգային կռիվ։ «Գոլիցինները և նրա նմանները կանհետանան և ինչպես ծուխ կցրվեն միայն ինքնակալության անկմամբ»,— 1903 թվականի հոկտեմբերի 15-ին աշխատավորներին ուղղված «Գաղանը վիրավորված է» կոչում պարզաբանում էր Կովկասյան միութենական կոմիտեն[60]։

Հայ ժողովրդի ծավալած հակացարական մասսայական շար-

---

60 «Ռեոլյուցիոն կոչեր և թռուցիկներ (1902—1921)» ժողովածու, 1960, էջ 62—65։

ժումը ազգային և դասակարգային խոր արմատներ ուներ։ Դա ոչ միայն հունիսի 12-ի օրենքի, այլև ցարիզմի ամբողջ ազգային-զաղութային ռեակցիոն քաղաքականության դեմ հայ ժողովրդի մեջ տարիներով կուտակված դժգոհության ու ցասման պոռթկումն էր[61]։ Այն իր բովանդակությամբ, իր բնույթով ազգային-ազատագրական ըմբոստացում էր ընդդեմ ցարիզմի վարած ռուսականացման քաղաքականության։

Համաժողովրդական ցասումն ու զայրույթը ամպրոպի նման պայթեց, որի ընթացքում սպանվեցին Գանձակի փոխգնդապետ Անդրեևը, Սուրմալուի գավառապետ Բոգոսլովսկին, սահմանային պահակախմբի գնդապետ Բիկովը, հարկային տեսուչ Շչերբակովը, Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեն, Կարսի ժանդարմական վարչության թարգմանիչ Վասիլի Դրոզդովը և տասնյակ ուրիշներ։

Հակացարական ելույթները գնալով անհանգստություն էին պատճառում ցարական կառավարությանը և նրա տեղական օրգաններին։ Ստեղծված տագնապալի վիճակից դուրս գալու, կառավարության հեղինակությունը փրկելու նպատակով հարկավոր էր վերջ տալ հայ եկեղեցական եկամուտների կողոպուտներին, վերադարձնել եկեղեցուց գրաված ունեցվածքը, դադարեցնել ռեպրեսիաները հայերի նկատմամբ, հնազանդեցնել նրանց։ Ցարական կառավարությունը, զգալով ժողովրդական շարժումը ֆիզիկական ուժով ճնշելու անհնարինությունը, դիմեց նույնիսկ «զաղափարական» ագիտացիայի՝ տարածեց կեղծիքով և երկերեսանիությամբ լի կոչեր։

1904 թվականին Գոլիցինը նա կանչվեց իր պաշտոնից։ 1905 թվականի հունվարի 9-ի դեպքերը և նրան հաջորդած հեղափոխական շարժումները, որ ցնցել էին ցարի՝ առանց այն էլ խարխուլ գահը, հարկադրեցին կայսրին 1905 թվականի օգոստոսի 1-ին օրենք հրատարակել՝ 1903 թվականի հունիսի 12-ի օրենքը վերացնելու, հայ եկեղեցու բռնագրաված գույքը և 1903—1905 թվականներին նրանից ստացած եկամուտները վերադարձնելու մասին։

Դաշնակցության և մյուս կազմակերպությունների նացիոնալիստական ուղեգիծը ռեակցիոն էր և վնասաբեր։ Հակացարական շարժումների ընթացքում հաղթեց հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի կիրառած դասակարգային ուղեգիծը՝ հայ ժողովրդի

---

61 Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պատմություն (1900—1917), Հայկական ՍՍՀ, ԳԱ «Տեղեկագիր», № 5, 1955, էջ 12։

պայքարը համառուսական հեղափոխական շարժման հետ միակցելու ուղեգիծը։

Հունիսի 12-ի օրենքը խարխլեց ցարական իշխանության դիրքերը, քաղաքականապես արթնացրեց և խոշոր չափով բարձրացրեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական և հեղափոխական դասակարգային գիտակցությունը, լայն մասսաներին պայքարի հանեց ինքնակալության դեմ։

Ռուսական առաջին հեղափոխության նախօրեին, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ հայ աշխատավորության ազատագրական պայքարը միահյուսվում է համառուսական պրոլետարիատի հեղափոխական, դասակարգային պայքարին, որի ուղիները լուսավորվում էին մարքսիզմ-լենինիզմի հզոր լույսով։

РЕЗЮМЕ

Перемещение в конце XIX — начале XX вв. центра мирового революционного движения из Западной Европы в Россию возвестило начало нового периода в истории марксистской мысли.

Распространение марксизма в России — исторически закономерный процесс. Оно явилось результатом не механического подражания революционному опыту Европы, перевода и распространения марксистской литературы, а было связано со всем ходом общественно-экономического развития России, самостоятельными и смелыми поискам передовой русской общественной мысли. Марксистское движение в России, имея своими истоками созданную Г. В. Плехановым группу «Освобождение труда», а затем созданный В. И. Лениным петербургский «Союз борьбы за освобождение рабочего класса», впоследствии через первые отряды РСДРП—ленинцев-искровцев распространилось по всей Росии и ее окраинам.

Начиная с 80-х годов XIX в. искры марксистского учения проникают и в армянскую действительность, в Армению. В обстановке острой идеологической борьбы противоположных политических течений и партий, жестоких классовых столкновений, в начале XX столетия в армянской действительности распустили свои первые ростки социал-демократические, ленинско-искровские организации. Конец XIX — начало XX вв. характеризуются формированием и классовой зрелостью пролетариата среди восточной части армянского народа. Главным содержанием этого периода является рост политического самосознания трудящихся масс, правильное понимание ими сущности национально-освободительной борьбы, социально-

классовых столкновений, рабочего революционного и аграрного движений, распространение нового мировоззрения — научного коммунизма. Все это, в конечном счете, привело к установлению Советской власти в Армении, к победе марксистско-ленинских идей и установлению нового общественного строя в Армении, к развертыванию строительства коммунизма в наши дни.

Кроме общих закономерностей, распространение марксизма в Армении имело и свои особенности, обусловленные общественным развитием трудящихся масс обеих частей армянского народа — восточных армян и западных армян. Марксизм проник в Армению, точнее в армянскую действительность, путем трудной идеологической борьбы.

Всестороннее исследование фактов поможет вскрытию истины, показу борьбы двух противоположных идеологий — буржуазной и социалистической, правильному восприятию революционной деятельности и заветов старшего марксистского поколения.

В этом аспекте весьма важно научное, теоретическое и политическое значение имеет разработка проблемы распространения марксизма в Армении.

Настоящая монография ставит перед собою именно эту цель. В ее двух книгах: «Распространение марксизма в Армении (1883—1904 гг.)» и «Борьба за торжество марксистско-ленинских идей в Армении» (Марксистская мысль в Армении) показаны эволюция общественно-политической мысли, ход распространения и развития марксизма в Армении, крутой поворот в истории армянской общественно-политической мысли, революционная борьба армянского пролетариата и трудящихся масс под руководством большевистских организаций, торжество марксистско-ленинских идей в Армении.

В «Предисловии» показана степень научной разработки проблемы, подвергнуты историко-критическому анализу опубликованные и архивные материалы. Несмотря на то, что до сих пор не издано ни одной цельной и фундаментальной монографии, освещающей на основе богатой источниковедческой базы проблему распространения марксизма в Армении, все же в отдельных работах эта проблема рассмотрена в той или

ной степени. Ценные факты и выводы по этому поводу имеются в трудах первых армянских ленинцев — С. Шаумяна, Б. Кнунянца, С. Спандаряна и других. Будучи видными деятелями ленинского этапа развития марксизма, последовательными марксистами, они не только страстно защищали, распространяли и пропагандировали марксистско-ленинское учение, но и явились первыми его историками в армянской действительности.

Первый раздел настоящей книги — «Социально-экономические предпосылки распространения марксизма в армянской действительности» — состоит из трех глав, в которых широко рассмотрены процесс развития капитализма в Закавказье, в том числе и Восточной Армении, формирование армянского пролетариата и первые шаги рабочего движения.

История армянского народа XIX в. ознаменовалась важными социально-политическими событиями. Внешние факторы и внутренние назревшие предпосылки, хотя и медленно, но втягивали Армению в водоворот капиталистических отношений.

«Русский капитализм,— писал В. И. Ленин,— втягивал таким образом Кавказ в мировое товарное обращение, нивелировал его местные особенности — остаток старинной патриархальной замкнутости,— **создавал себе рынок** для своих фабрик. Страна, слабо заселенная в начале пореформенного периода или заселенная горцами, стоявшими в стороне от мирового хозяйства и даже в стороне от истории, превращалась в страну нефтепромышленников, торговцев вином, фабрикантов пшеницы и табака...» [1].

Вместе с появлением армянской буржуазии образуется и армянский пролетариат, делает свои первые шаги рабочее движение.

Экономическая отсталость Армении того периода, отсутствие железных дорог, специфические особенности края явились основной причиной того, что армянская крупная буржуазия первоначально образовалась в главных промышленных очагах Закавказья, а затем в самой Армении.

---

1 **В. И. Ленин,** Полное собрание сочинений, изд. 5, т. 3, стр. 594—595.

Разложение крестьянства, развитие товарооборота в городах, строительство железных и шоссейных дорог, проникновение европейского и русского капитала, рост городского населения, использование местных сырьевых ресурсов, энергетической базы и дешевой рабочей силы явились широкой предпосылкой для развития капиталистических отношений и формирования рабочего класса.

Численность организованного промышленного армянского пролетариата в крае составляла 35—40 тысяч. Значительные отряды армянских рабочих были сосредоточены в городах Баку, Тифлис, Батум, Эривань, Алаверди, Кафан и др. местах.

Рабочее движение в Армении развертывалось по примеру крупных рабочих очагов. Так, в 1868 и 1875 гг. на экономической почве произошли вспышки недовольства в соляных приисках Кохпа, в 1895 г.— в типографиях Александрополя, а в 1876—1897 гг.— на строительстве железных дорог Тифлис—Карс, Александрополь—Эривань.

Наряду с развитием социал-демократического движения социалистические идеи постепенно проникали в сознание рабочих, способствовали превращению «рабочих в себе» в класс «рабочих для себя».

Второй раздел книги — «Идеологические предпосылки распространения марксизма в армянской действительности»— также состоит из трех глав, в которых изложена история проникновения марксистских идей в Россию в 40—70-х гг. XIX в., в частности рассмотрена роль изданий группы «Освобождение труда». Большое внимание уделено изложению истории армянской общественной мысли домарксистского периода, в частности истории общественно-политического развития армян в 70—80-е годах XIX в.

Благодаря деятельности группы «Освобождение труда» и ее руководителя — одного из первых крупных русских марксистов Г. Плеханова, с 80-х годов в русском освободительном движении возникло марксистское направление.

Изменения в общественной жизни России оказали большое влияние и на освободительную борьбу армянского народа.

Основоположник новой армянской литературы, великий

просветитель и мыслитель Хачатур Абовян (1809—1848) вывел армянскую общественную мысль и культуру на широкий простор прогресса и демократического просвещения. Он был страстным поборником нового армянского языка (ашхарабар), и на этом языке написал свой вдохновенный классический роман «Раны Армении». Главным содержанием как этого, так и остальных произведений Х. Абовяна является идеология национального пробуждения армянского народа, новая оценка исторических ценностей, широкий охват социально-экономических событий своего времени, высокая гражданственность, гуманизм, любовь к народу, просветительно-демократические взгляды и патриотизм. Абовяну суждено было стать знаменосцем политического и культурного возрождения армянского народа, выразителем идей и интересов широких демократических слоев — крестьянства.

Освещена также революционная деятельность первого утописта-социалиста 1840-х годов армянина Дмитрия Дмитриевича Ахшарумова, прослеживаются его связи с петрашевцами и участие в их кружках, выявляется роль, которую он сыграл в пропаганде учения Шарля Фурье в России.

В монографии на основе богатых архивных и опубликованных материалов показана роль армянских общественных противоборствующих течений 50—60 годов XIX в.

Особое место в монографии уделено выявлению роли одного из первых армянских социалистов—великого революционного демократа М. Налбандяна (1829—1866) и возглавляемого им революционно-демократического течения в истории армянского народа и общественной мысли Армении.

М. Налбандян является вершиной армянской общественной мысли домарксистского периода. Продолжив просветительную, критическую национально-демократическую линию Х. Абовяна, М. Налбандян посвятил себя благородному делу освобождения народа, он протянул руку предшественникам русской социал-демократии — русским революционным демократам. Преодолев идеологическую ограниченность, свойственную консервативным и либерально-буржуазным течениям, он разглядел в «простом народе» опору и рычаг возрождения нации, в лице передовой молодежи он увидел носителей

его пробуждения. Национально-освободительные перспективы армянской демократии он увязал в первую очередь с русским революционным движением. «Освобождение России, касательно освобождения всего человечества, большое значение имеет»,— писал М. Налбандян в своей программной работе «Земледелие как верный путь».

Мировоззрение М. Налбандяна сложилось на основе трудов В. Белинского, Н. Чернышевского, Н. Добролюбова, исключительную роль сыграл в этом его идейная общность и политические связи с А. И. Герценом и Н. П. Огаревым, тайной организацией «Земля и воля», его личные встречи и близость с «лондонскими пропагандистами» и другими русскими эмигрантами.

Преисполненный идеями «Земли и воли», воспринявший идеи «Современника» и «Колокола», М. Налбандян в своих трудах «Две строки» (1861), «Земледелие как верный путь» и других работах своеобразно отобразил революционно-демократические идеи своего времени, представляя свою платформу социальной революции. Он подверг острой критике французскую буржуазную революцию за то, что провозглашенное ею требование «Свободы, равенства и братства» осталось на бумаге, не была разрешена аграрная проблема, а трудящиеся массы по-прежнему остались в когтях эксплуататоров, в бедности и нищете. Убежденный в неизбежности крестьянской революции, он пришел к выводу, что вопрос «человека и хлеба» «рано или поздно, хоть и ценой ужасных бурь, должен разрешиться». Отсюда и политические концепции Налбандяна—свобода и возрождение народов Европы и Азии, свержение деспотических режимов революционным путем. В «Земледелии» он защищал идею единства революционной борьбы всех народов России.

Позиция, занятая Налбандяном в крестьянском вопросе, смыкалась со взглядами «лондонских пропагандистов». Он, как и все революционные демократы, считал возможным прийти к социализму в результате аграрной реформы, избежать капитализма, избавить русских мелких производителей от участи стать пролетариями, тем самым оставаясь верным и сильным, и слабым сторонам русской революционно-демо-

кратической мысли. В «Земледелии» он стал на позиции утопического, крестьянского социализма. Программа социальной революции М. Налбандяна явилась боевым лозунгом армянских трудящихся в борьбе против господствующих политических порядков, за землю и свободу. Своими политическими взглядами, идеями освободительной борьбы и революционным вдохновением М. Налбандян сделал очень многое для развития армянской демократической мысли в 60-х годах XIX века.

Тем не менее ни Налбандян, ни его единомышленники и их непосредственные преемники не смогли поднять армянскую общественную мысль до вершин марксизма. Долгое время, вплоть до 1890-х годов, она была в поисках. На перекрестках общественного развития сталкивались различные политические течения, в том числе демократическое, народническое, либерально-буржуазное, консервативное и клерикально-барское. В монографии подробно говорится о всех этих течениях, вводится в научный оборот множество новых фактов и делаются соответствующие выводы. Довольно большое место уделено освещению деятельности народнических кружков Закавказья, действовавших в разных городах России и Европы, представителей армянской разночинной интеллигенции — народников, в частности С. Кардашева, Е. Тумановой, Д. Айвазяна, О. Сафаряна, К. Мамиконяна, Г. Аразяна, Ц. Пирумяна, А. Сафаряна, Т. Адамян-Нерсисян, Ц. Манучаряна и других. Особое внимание уделено освещению деятельности сосланных в Закавказье в разное время русских народников, выяснению особенностей революционного народнического движения в Закавказье, раскрытию его связей с народническими кружками России.

Кружки русских революционеров 60—70 годов XIX в. явились политической и воспитательной школой для передовой молодежи края, которые ставили и национальный вопрос наряду с общероссийскими вопросами. Кроме того, с помощью опубликованных в периодических изданиях («Мегу Айастани», «Нор-дар», «Порц», «Арзаганк»,«Мшак» и т. д.) материалов показано, каким образом проникали либерально-народнические идеи в армянскую действительность. Это преж-

де всего выражалось в различных областях, в развитии капитализма в Закавказье, ликвидации остатков феодализма, развертывании национально-освободительной борьбы, «решении» рабочего вопроса, оценке крестьянского движения и т. д.

В 70—90-х годах армянское национально-освободительное движение вступает в новый этап — этап активной борьбы. Общественно-революционная мысль, до появления марксистских кружков, продолжала свои блуждания. В идеологической борьбе противоположных политических течений возникают национальные организации и партии, претендовавшие на разрешение «Армянского вопроса».

В монографии рассматриваются вопросы возникновения, социальная сущность арменаканов, армянских анархистов, гнчакистов и дашнаков; анализируются и критикуются их программы, недальновидные политические действия. Распространение марксизма и развитие революционного движения в армянской действительности встречали сопротивление и противодействие не только со стороны царизма, но и армянских националистических партий.

В освобождении Западной Армении был заинтересован весь армянский народ. Дашнакцутюн в первый период своей деятельности, столкнувшись с арменаканами, гнчакистами и другими возникшими в армянской действительности буржуазными и мелкобуржуазными течениями, старался взять в свои руки руководство освободительным движением с помощью патриотической пропаганды и повстанческого движения, связать освободительные чаяния армянского народа с европейской дипломатией. Линия дашнакцутюн на «национальное освобождение», на создание самоуправляющего армянского буржуазного государства в восточных вилайетах Турции временно вызвала благосклонное отношение части народных масс. Определенную роль сыграли в этом и народнические идеи первых организаторов этой партии.

Сформированная из различных народнических и либерально-буржуазных группировок, партия дашнакцутюн в процессе своей эволюции сделала вынужденный поворот под влиянием первой русской революци, подверглась метаморфозе, надев на себя социалистическую маску и провозгласив,

что наряду с «вопросом турецких армян» признает также и «вопрос российских армян». Но в сущности она стала агентурой армянской буржуазии, и, придерживаясь недальновидной авантюристической линии, базируя свою программу на лживых обещаниях европейской и царской дипломатии, она повела армянское национально-освободительное движение ошибочными путями. В 1918—1920 гг., придя к власти в Армении, она выявила свое политическое банкротство и впоследствии поступила на службу к международному империализму — антикоммунизму.

Изолированность армянского национально-освободительного движения в Западной Армении, оторванность Турции от общедемократического движения, господствующий в Турции варварский военно-феодальный строй, неслыханно угнетенное положение армян и других национальных меньшинств обрекли эту и без того недальновидную политику на провал.

В общественно-политическом развитии восточных армян велика была роль студенческой молодежи. В монографии особое внимание уделено деятельности революционных студенческих групп, а также освещению откликов в армянской периодической печати на организацию Первого интернационала, Парижскую Коммуну, революционное движение в Европе. Благодаря усилиям революционно настроенной части армянского студенчества, в 1880 годах армянские трудящиеся начали знакомиться с социалистическими идеями.

Первые попытки издания марксистской, социал-демократической литературы на армянском языке принадлежат армянской студенческой молодежи, обучающейся в Европе и центральных городах России. Начиная с 1880-х годов находившиеся за рубежом отдельные армяне-студенты устанавливают личные связи с Г. Плехановым и основанной им группой «Освобождение труда». Одним из первых армянских марксистов был Г. Гараджян (С. Т. Аркомед, 1866—1936). Поборов свои прежние народнические взгляды, он под влиянием группы «Освобождение труда» совершил в 1887 г. поворот к марксизму, стал одним из первых распространителей марксистских идей в армянской действительности. С французского языка на армянский он перевел «Манифест Коммунисти-

ческой партии» К. Маркса и Ф. Энгельса, в 1887—1900 гг. опубликовал ряд статей в «Армении», «Мурче», «Таразе», «Мшаке» и других периодических изданиях. Он пытался подвергнуть марксистскому анализу явления, связанные с армянским национально-освободительным движением. Он понимал смысл социально-политических сдвигов в Закавказье конца XIX века, тенденции развития капитализма в крае, формирования рабочего класса, общественного прогресса восточных армян. Это была эпоха, когда на арене появились первые армянские марксисты, связывавшие вопросы национально-освободительного движения с пролетариатом и, прежде всего, руководимым им общедемократическим движением. В армянской марксистской историографии Г. Гараджян первым подверг критике народнические концепции и первым заметил исторический факт вступления Закавказья в капиталистическую стадию развития, подчеркнул исторически преходящее значение этой стадии и, что главное, освободительную миссию пролетариата в деле уничтожения капитализма и создания социалистического общества. Вспомним, что В. И. Ленин учил: «Признание «творческой» исторической работы капитализма, обобществляющего труд и создающего «социальную силу», способную преобразовать общество, силу пролетариата, такое признание есть разрыв с народничеством и переход к социализму»[2].

В деле перевода марксистских трудов имеет заслуги вышедший из рядов армянских национал-народников 1880 г. социалист Иосиф Атабекянц. В 1893—1894 гг. в Штутгарте он перевел с немецкого на армянский язык «Манифест Коммунистической партии» и книгу Ф. Энгельса «Научный социализм». 1 ноября 1894 г. Атабекянц обратился с письмом к Ф. Энгельсу с целью получения предисловия к армянскому изданию «Манифеста». В монографии приведен текст этого письма, а также ответ Ф. Энгельса Атабекянцу от 23 ноября того же года.[3] В письме Ф. Энгельса И. Атабекянц предстает перед нами как один из представителей армянского национал-

---

[2] **В. И. Ленин,** Полное собр. соч., т. 9, стр. 192.

[3] См. **К. Маркс и Ф. Энгельс,** Соч., изд. II, т. 39, стр. 270—271.

народничества, которые вынашивали идею о том, что следует использовать армянское народно-освободительное движение для пропаганды идей научного социализма среди армян России и Турции. В это время проповедуемый народниками крестьянский социализм начинал уступать свое место пролетарскому социализму.

В книге освещены и другие попытки издания марксистской литературы на армянском языке в 80—90-х годах XIX в. Мы оценили их, внесли ясность в высказанные по отдельным вопросам точки зрения, сделали исправления фактического и другого характера.

В трудах учившихся за границей в 1890-х годах армянских студентов чувствуется влияние учения К. Маркса и Ф. Энгельса. Так, например, в 1894 г. в Лозанне вышла в свет на французском языке книга Акопа Мегаворяна «Юридическое и этнографическое исследование армянской семьи и супружества», которая носит на себе влияние главным образом книги Ф. Энгельса «Происхождение семьи, частной собственности и государства». Труд А. Мегаворяна—одна из удавшихся попыток марксистско-материалистического толкования армянской общественной мысли данного периода.

В 1893—1895 гг. были переведены на армянский язык и опубликованы две главы «Манифеста Коммунистической партии» К. Маркса и Ф. Энгельса, «Что такое заработная плата?» К. Маркса, «Научный социализм» Ф. Энгельса, «Сущность конституции» Ф. Лассаля, «Кто чем живет?» С. Дикштейна, «Право на лень» П. Лафарга и другие книги, история издания и распространения которых изложена в настоящей монографии.

На основе новых материалов описана работа армянских студенческих революционных кружков Европы и России, особенно много страниц посвящено «Материалистическому обществу» армянских студентов Берлина, анализу деятельности «Союза армянских студентов Европы», показаны на конкретных примерах отклики «легального марксизма» в армянской периодической печати и борьба против него.

В 1895 г. была открыта новая страница в развити армян-

ской общественной мысли. Начался период рабочего движения, распространения революционного учения научного коммунизма, соединения социализма с рабочим движением. Необходимо было не заржавелое, а острое оружие, чтобы вывести национально-освободительную борьбу армянского народа с тернистого пути и слить с борьбой общероссийского пролетариата. Этим оружием был марксизм-ленинизм.

Третий раздел монографии—«Начало ленинского этапа развития марксизма и армянская действительность»—освещает генезис армянской марксистской общественно-политической мысли до первой русской революции.

Много бурь пронеслось над Западной Европой, пока К. Маркс и Ф. Энгельс превратили коммунизм из утопии в науку, внесли его в рабочее движение. Великим продолжателем дела К. Маркса и Ф. Энгельса был В. И. Ленин, вступивший на арену политической борьбы в конце XIX в. В книге много страниц посвящено В. И. Ленину, имя которого стало символом нового мира, учение которого—ленинизм, является новой, высшей ступенью марксизма, вершиной русской и мировой культуры.

В Армении и армянской действительности распространение идей революционного марксизма, научного коммунизма тесно связано с именами В. И. Ленина и его верных учеников. На заре коммунистического движения в России вместе с сынами различных народов нашей Родины встали под знамя ленинизма и лучшие сыны армянского народа—И. Лалаянц, Б. Кнунянц, С. Шаумян, С. Спандарян, С. Тер-Петросян (Камо), А. Мясникян, В. Каспаров (Гаспарян), С. Касьян (Тер-Гаспарян), С. Тер-Габриелян, А. Бекзадян, В. Аванесов, Арш. Меликян, Б. Борьян, В. Терян и многие другие. Получив свое политическое крещение в купели русской революции, озаренные ленинским гением, они повели трудящиеся массы к новому, светлому будущему. Начало ленинского этапа развития марксизма в армянской действительности ознаменовалось большим переломом в развитии общественной жизни и мысли. Первыми последовательными распространителями революционного марксизма, идей научного коммунизма в Ар-

мении и армянской действительности были ленинцы, большевистские организации.

В монографии приведены новые факты об интернациональном составе петербургского «Союза борьбы за освобождение рабочего класса», о действовавших в его рядах армянских марксистах — Б. Кнунянце, А. Зурабяне, И. Мелик-Овсепяне, С. Аветисянце, показана их роль в пропаганде марксистских идей в Закавказье, в деле поднятия боеспособности местных социал-демократических организаций. Определенное место уделено в книге деятельности одной из первых армянских рабочих организаций—«Армянской рабочей революционной ассоциации», действовавшей в Тифлисе в 1892—1895 гг. Вводятся в научный оборот программа «Ассоциации» и материалы ее печатных органов—«Азат Айастан», «Крив», революционных воззваний и листовок. Хотя «Армянская рабочая революционная ассоциация» не была революционной социал-демократической организацией, но она своей деятельностью подготовила определенную почву для возникновения социал-демократических кружков. Она стала соединяющим звеном между рабочими демократическими и марксистскими течениями, оставила след в летописи освободительного движения армянского народа. Многие из членов «Ассоциации» впоследствии вошли в первые социал-демократические рабочие кружки.

Сдвиги, имевшие место в армянской общественно-политической жизни в конце XIX—начале XX вв.—развитие капиталистических отношений, возникновение рабочего движения—создали благоприятные условия для распространения марксизма в армянской действительности и организации первых рабочих марксистских кружков. С конца 90-х годов прошлого века в Закавказье, с помощью русских марксистов, возникают первые марксистские группы и кружки, имевшие интернациональный состав. В монографии показаны заслуги созданного в Тифлисе в 1887 и 1888 гг. передовыми рабочими Ф. Гузенко и Ф. Афанасьевым «Рабочего союза», изгнанных на Кавказ русских марксистов В. Курнатовского, Л. Красина, М. Калинина, В. Шелгунова, И. Лузина, Г. Франчески, С. Аллилуева, И. Когана, И. Вацека, И. Фиолетова, М. Монтина,

Н. Козеренко, Г. Соколовского и др., а также работа созданного в 1892 г. в Тифлисе первого социал-демократического марксистского кружка.

Революционное движение в Закавказье, формирование и деятельность социал-демократических кружков связаны с именем В. И. Ленина. Через В. И. Ленина и его верных учеников—ленинцев-искровцев, профессиональных революционеров, были созданы, развивались и укреплялись марксистские организации края, в том числе и Армении. В начале ленинского этапа развития марксизма на горизонте армянской общественно-политической мысли засверкали Ст. Шаумян, Б. Кнунянц и С. Спандарян, посвятившие свою жизнь делу освобождения народа, победы марксизма-ленинизма. В монографии показаны величайшие заслуги Ст. Шаумяна, Б. Кнунянца и С. Спандаряна, значение их теоретических трудов раннего периода, их роль в формировании армянской передовой общественной мысли. Много места уделено освещению истории формирования социал-демократических, ленинско-искровских организаций в Армении, отправки ленинской «Искры» и искровских изданий в Армению, «Союза армянских социал-демократов» и его печатного органа «Пролетариата», возникновения большевистских организаций в Ахпате, Александрополе, Эривани, деятельности подпольных типографий «Нина» в Баку и Авлабарской в Тифлисе.

В состав основанного по инициативе С. Шаумяна, Б. Кнунянца и А. Зурабяна «Союза армянских социал-демократов» входили также А. Хумарян, С. Ханоян, М. Меликян («Дедушка»), Р. Даштоян, Д. Шавердян и А. Ерзинкян. Со страниц «Искры» В. И. Ленин от всей души поздравил появление «Союза», высоко оценил его манифест, особенно достойную внимания попытку правильной постановки национального вопроса, и выразил уверенность, что она будет доведена до конца.

В распространении марксизма, развертывании революционного движения, формировании и укреплении социал-демократических организаций в Закавказье огромную роль сыграли ленинская «Искра» и искровские издания. В 1901—1903 годах ленинская «Искра» и ее издания получались и

распространялись в Эривани, Александрополе, Джалал-Оглы, Еленовке, Карсе и других местах. В этом деле большую роль сыграли как местные, так и российские комитеты партии. В 1902—1903 гг. «Искра» и ее издания пересылались в Эривань и через Австрию.[4] В распространение ленинской «Искры» и социал-демократической литературы внесло свою лепту также русское население Армении.

Процесс формирования марксистской партии в России длился около двух десятилетий—с 1883 по 1903 гг. В монографии широко освещены деятельность большевистских организаций Армении накануне первой русской революции, работа созданной при ЦК после II съезда РСДРП Комиссии по изданию социал-демократической литературы на армянском и грузинском языках, история перевода Шаумяном в 1904 г. «Манифеста Коммунистической партии» К. Маркса и Ф. Энгельса, «Наемный труд и капитал» К. Маркса, деятельность Кавказского Союза РСДРП в 1903—1904 гг., рабочее революционное и аграрное движение. Начало научного издания армянских переводов марксистской литературы положили С. Шаумян, С. Спандарян, Б. Кнунянц и их соратники. Впервые в эти годы из «Искры» были переведены и изданы в газете «Пролетариати крив» «Самодержавие колеблется...» и другие статьи В. И. Ленина.

По инициативе В. И. Ленина, после II съезда РСДРП, в Женеве, 21 февраля 1904 года при издательстве Центрального комитета создается Комиссия по изданию партийной социал-демократической литературы на грузинском и армянском языках. Эта комиссия, состав которой утверждается ЦК партии 22 февраля, уже с 24 февраля приступает согласно утвержденному ЦК РСДРП уставу к издательской работе. Армянская комиссия с целью получения материальной и моральной помощи создает свои группы в Женеве и Берлине. За короткий период женевская партийная типография приобретает армянские литеры и приступает к изданию марксистских листовок, воззваний, брошюр и книг. Только в марте 1904 г.

---

[4] См. ЦГИА Груз. ССР, ф. 39, д. 556, л. 1. ЦГИА Арм. ССР, ф. 122, д. 3, лл. 52, 53, 59, 62, 69, 71 и др.

в женевской партийной типографии были изданы на армянском языке устав РСДРП, «Программа рос. соц.-дем. рабочей партии», принятая на втором очередном съезде, «Извещение о втором очередном съезде Российской с.-д. рабочей партии», резолюции II съезда РСДРП.[5]

Женевские издания распространялись за границей и в России.

Издание «Манифеста Коммунистической партии» К. Маркса и Ф. Энгельса на армянский язык имело благотворное влияние на развитие армянской общественной мысли.

Накануне первой русской революции освободительная борьба армянского народа тесно переплеталась с революционной, классовой борьбой русского рабочего класса, руководимого большевистской партией, вооруженной всепобеждающими идеями марксизма-ленинизма.

---

[5] См. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 18, оп. 34, ед. хр. 35420, лл. 1—14.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Արդուշելիշվիլի—404
Արելյան Ներսես—140
Արեզյան Աբ.—103
Արեզյան Մանուկ—228
Աբովյան Խաչատուր—11, 103—109, 115, 121, 148, 151, 306, 312, 427
Աբովյան Վարդան—103
Աբրահամյան Լ. 18—20
Ադամյան Ա.—145
Ադամյան—Ներսիսյան Թամարա — 139, 140, 429
Ադամյան Սուրեն—228
Ադելյան Ադարի (Դանիելյան)—284
Ադելխանով—60
Ադեր Վ.—202
Ադոյան Ադո—212-214
Ադոնց Մ.—18, 35, 46, 48—50, 57, 64
Ադիզրեկով Մեշադի—255, 370, 373
Աթաբեկյան Ալ.—220, 221, 223—226
Աթաբեկյան Աննա—220
Աթաբեկյան Առլան—220
Աթաբեկյան Լևոն—220
Աթաբեկյանց Հովսեփ—201, 202, 208, 209, 211, 217, 219, 220, 241, 432
Աթաբեկյան Միքայել—220
Աթաբեկյան Մովսես—220
Աթաբեկյան Ներսես—220
Աթաբեկյան Տիգրան—220
Աթանասյան Աշոտ—241, 242, 243
Աթանասյան Սարգիս (Այնալով)—405
Ալավերդյան Ստեփան—257
Ալեքսանդրովսկի Բ.—115
Ալեքսեև Պ.—92, 93, 139, 250, 260, 294
Ալիբեկյան—135
Ալիլուև Ս.—73, 271, 273, 274, 297, 379, 435
Ալիխանյան Ս.—335
Ախվերդյան Դ.—129, 161
Ախշարումով Դմիտրի—103, 110—114, 427
Ախշարումով Ն. Դ.—112
Ակիմով—337
Աղաբաբյան Գ.—145
Աղաբեկյան Մ.—120
Աղայան Ս.—18, 182
Աղայան Ղ.—153, 301, 302
Աղամալյան Արտյոմ—376
Աղամիրյան Սարգիս—166
Աղաջանյան Նինա (Ալաջալովա)—289, 303, 330
Աղաբիրյան Գրիգոր—103
Այվազյան Դ.—136, 139, 429
Այվազյան Հակոբ—261
Այվազով—53
Այվազովսկի—161
Անանյան Միշա—291
Անանով—55
Անանուն Դ. (Տեր-Դանիելյան)—22, 28, 54, 177, 212, 359
Անդերսոն Ուերի—239
Անդրեասյան Անդրեաս—229
Անդրեև (ցարական փոխգնդապետ)—421
Աննենիկով Պ. Վ.—81, 82
Անտլն Ժան—239

Անտոնելի Պ.—112
Ապտեկման Օ.—134, 144
Առաբելյան Համբարձում—154
Աստրյան Ա.—105
Ասկարյան Վահան—103
Արազյան Գրիգոր—139
Արամյանց—53, 55
Արասխանյան Ա.—58, 155, 156, 233
Արարատյան Ա.—119
Արզումով Պ.—98
Արեշիձե Պ. Ն.—336
Արզումանյան Մ.—18
Արծրունի Անդրեաս—103
Արծրունի Գրիգոր—57, 66, 152—155, 185, 196, 198, 303, 313
Արզուբինսկի-Դոլգարուկով—41
Արզուբյան Հ.—176
Արշարունի Ա.—141
Արության Վ.—284
Արփիարյան Արփիար—162, 169, 170
Արևելբցի Մ.—25
Ավագյան Վարդան—228
Ավագյանց Խաչատուր—103
Ավագով—55
Ավալով—403
Ավան-Յուզբաշիև—53
Ավանեսով Վ. (Մարտիրոսյան Ս.)—28, 434
Ավդալբեգյան Թ.—192
Ավդալբեգյան Խ.—33, 50
Ավետիսյան Ավետիս—228
Ավետիսյան Լևոն—288
Ավետիսյան Մ. (Թերլեմեզյան Մ.)—164
Ավետիսյան Վ.—18, 19, 72, 138, 260, 276, 289, 364
Ավետիսյանց Ս.—255, 257, 258, 435
Աուեր Իգնատի—308
Աբիմյանց Գևորգ—103
Աբսելրոդ—96, 97, 166, 191, 341
Աֆանասև Ֆ.—270—274, 435
Աֆոնին Տիմոֆեյ—294
Աֆրիկյան Կ.—44, 45, 55

Բարախանով—55
Բարիկովա Ռոզա (Կնունյանց)—392
Բարսամ Ի. Կ.—82, 83
Բարուշկին—255
Բազալյան Ա.—33
Բազյան Ս.—105
Բալասանյան Հ.—147
Բակունին Մ. Ա.—84, 85, 87, 88
Բայլն Սաոիլ—225
Բայրոն—157
Բաշինջաղյան Ս.—284
Բաջիաշվիլի Ս.—289
Բարաթով Զ. (Բարաթաշվիլի)—401—405
Բարբատի—202
Բարդինա Սոֆիա—137, 138, 221
Բարխուդարյան Գևորգ—103, 118
Բարսեղյան Խ. Հ.—260, 276, 336, 368
Բարտենև Ն. (Վիկտոր Նետով)—86
Բաուման Ն.—268
Բեբել Ավգուստ—97, 187, 202, 236, 239, 241—243, 308
Բեզոբրազով—90
Բեժանյան Շարար—335
Բելինսկի Վ.—79, 81, 111, 123, 124, 200, 283, 302, 427
Բելոբարազով—72
Բեխեր—83
Բեկզադյան Ա. (Յուրի)—9, 27, 288, 289, 290, 301, 303, 392, 434
Բեկզադյան Մ. Ս.—290
Բերբերյան Ռ.—244
Բիկով—421
Բլազոև Դ.—97
Բլան Լուի—249
Բորբովսկի Վ.—330, 381
Բոգոսլավսկի (զավառապետ)—421
Բոգդանով—357
Բոնորիձե Մ.—274, 330, 371, 380
Բոնար Դր.—239
Բոնովիչ Մ.—202
Բորյան Բագրատ—434
Բորն Ուիլիամ—239
Բրեյտերման—44
Բրոդով Ի.—272
Բրուսալ Ժան—165
Բրուսնև Մ.—271, 272
Բրուեիչ Բոնչ—416

Բուլգակով—312
Բունիաթյան Մ.—157

Գարրիելյան Հ.—18—20
Գալոյան Գ.—18
Գալպերին Լ.—373, 375
Գանդրունի Հ. (Վանիկ)—24, 25, 216
Գյոդալյան Գ.—44, 45, 55
Գյոթե—105
Գյուլիքեխվյան Հ.—105
Գոգոբերիձե Ն.—136, 137
Գոգոլ Ն.—110
Գոդուաձե Մակար—381
Գոդվին Ուլյամ—220
Գոլդբալդ—295
Գոլիկովա Ելիզավետա (Կնունյանց)—289, 391
Գոլիցին—409—421
Գորբունովա-Կարուլկովա Մ.—88
Գորգիլաձե Լ.—18, 273
Գոշ Մխիթար—213
Գորկի Մաքսիմ—66, 271, 369
Գնդեշիձե Զինաիդա—388
Գեղ Ժ.—97, 101, 229
Գերասիմով Վ.—270
Գերցեն Ա.—78, 79, 81, 84, 90, 115, 125, 126, 128, 136, 166
Գլազատոն—165
Գլասկո Ա.—144
Գլուշչյան Մկրտիչ—262
Գրավ Ժան—221
Գրիբակին Պ.—255
Գրիգորյան Զ.—33, 34
Գրիգորյան Թևան—289
Գուգենկո Ֆ.—270, 435
Գուլանյան Խ.—18, 19, 21, 45—47, 59, 64, 158, 167
Գուլրանի Գ.—134, 272
Գուլիշամբարով Ս.—49, 53
Գուլիև Ա.—69, 373

Դադիան Մկրտիչ Բեյ—37
Դանդուրով Սա.—273
Դանիելսոն Ն. Ֆ. (Նիկոլայ-Օն)—81, 87, 88, 90, 211
Դանիելյան Սուրեն—284
Դաշտոյան Ռուբեն—16, 298, 301, 303, 379, 436
Դաստակյան Ա.—145, 147, 176, 178
Դավիթաշվիլի Մ.—330
Դարբինյան Արտակ—162, 163, 165
Դարբինյան Ռ. (Չիլինգարյան)—24
Դարոնյան Ս.—125
Դերու Ի.—111
Դեյչ Լ.—95, 96, 134, 166, 191
Դեֆիլիչև—202
Դիդրո—80
Դիկշտեյն Ս.—215, 216, 258, 294, 372, 375, 433
Դյուկլո Ժակ—356
Դորոյյուրով Ն.—79, 80, 124, 146, 283, 302, 427
Դոդոխյան Գեորգ—103, 104
Դոլուխանով—53
Դոստոևսկի Ֆ.—111
Դրոզդով Վասիլի—421
Դուրինսկի-Մուխաձե Ի.—282

Եկարյան Արմենակ—162, 165
Եղիազարյան—54
Եղիազարյան Արտո—134, 200, 201, 226
Եղիազարյան Դավիթ—289
Ենուկիձե Ավել—274, 378
Եվանգուլյան Ալեքսանդր—144
Երզնկյան Արամայիս—298, 301, 352, 358, 436
Երզնկյան Գրիգոր—405
Երզնկյան Շաբար—405
Երզնկյան Սուրեն—231
Երիցյան Ա.—34
Երիցյան Գարեգին—282, 283
Երմոլով Ա.—418

Զալյան Մ.—140
Զախարիաշ Ա.—144
Զապորոժեց Պ.—255
Զասլավսկի Ե.—92
Զասուլիչ Վերա—81, 89, 96—100, 191, 217, 239
Զավարյան Ս.—62, 145, 176, 178

Զարդարյան Հ.—275, 288, 387
Զարյան Ռուբեն—105
Զարյան—284
Զգանովիչ Գ.—136, 138
Զիրեր Ն.—89, 90, 91
Զինգեր—236, 239
Զինովև Բ.—255
Զորյան Ստ. (Թոստոմ)—176
Զուբալով—53
Զուրարյան Արշակ—16, 200, 201, 233, 255, 256, 257, 289, 290, 298, 300, 301, 303, 304, 306, 307, 322, 330, 337, 341, 345, 435, 436
Զուրարյան Ի.—145

Էնգելս Հենրիխ—238
Էնգելս Ֆ.—5, 6, 7, 13, 17, 26, 65, 77—85, 87—101, 110, 156, 158, 173, 187, 192, 193, 195, 196, 201—203, 208—212, 214—217, 228, 231, 232, 234—236, 238—241, 250, 251, 253, 278, 287, 307, 308, 324, 333, 354—356, 363, 366, 372, 382, 432—434, 437, 438
Էնֆիաջյան Հ.—120
Էնֆիաջյանց—60
Էսեն Մ. Մ.—370
Էվլինգ Էդուարդ—239
Էվոյան Սիմոն—335

Թազվորյան Ս.—127
Թադևոսյան—53
Թադևոսյան Հ.—145
Թադևոսյան Հակոբ—291
Թաիրյան Ա.—119
Թաիրյան Ն.—44, 45, 66
Թանդիլյան Մ.—335
Թանդիլյան Պ.—335
Թավլիշյան Պետրոս—276
Թելիա Գեորգի—380, 382, 387
Թոդրիա Ս.—373, 378
Թոիձե Ի.—271
Թոիձե Մ.—271
Թոփչյան Ն.—234
Թոփչյան Էդ.—105
Թոփուրիձե Դ.—322, 341, 342, 344
Թուխունցյան Ն.—23, 24
Թումանյան Անուշավան—291
Թումանյան Աշոտ—291,
Թումանյան Գ.—55
Թումանյան Ն.—138, 429
Թումանյան Հ.—55
Թումանյան Հ. Ն.—34, 50
Թումանյան Հովհ.—107
Թումանով Գ.—134
Թումանովա Հ. Բ.—139

Ժելյարով Ա.—144
Ժիրայր—25
Ժորդանիա Նոյ—321, 341
Ժորես Ժան—97, 236, 241, 244
Ժվանիա Գ. Կ.—383
Ժուկովսկի Յու. Գ.—83, 90

Իգնատով Վ.—96
Իզմիրյան Սարգիս—162
Ինձիկյան Ա.—117
Իշխանյան Բ.—28, 233
Իսահակյան Ավետիք—106, 157
Իսահակյան Արոն (Իսակով)—295
Իսահակյանց—55
Իսմայիլով Մ.—60
Իսրայելյան Կարո—291
Իսրայելյան Սերգո—291
Իսրայելյան Սիմոն—335
Իտենբերգ Բ.—85, 134
Իվանենկո Վ.—32

Լաբինսկի—347
Լազյան Գ.—24
Լալայանց Երվանդ—213
Լալայանց Իսահակ—9, 252, 298, 434
Լասսալ Ֆ.—82, 215, 216, 270, 272, 433
Լավրով (ցարական ստոիկան)—388
Լավրով Պ. Լ. (Միրտով)—81, 83, 92, 99, 146, 166, 380
Լաֆարգ Պոլ—97, 101, 215, 216, 217, 238, 241, 243, 433
Լերնդ—340
Լեգրան Բ.—28
Լեժավա Ա.—271

Վելյաշվիլի Դիզո—371, 372, 381
Վեֆերա Ա.—364
Վենեցկի Վ.—270
Վենին Վ. Ի.—5, 6, 8, 10, 11, 13, 15, 18, 19, 26, 27, 36, 38, 39, 41, 56, 57, 63, 67, 73, 77—81, 85, 92—94, 99, 100, 115, 125, 128, 129, 133, 149, 158, 159, 173, 181, 200, 209, 223, 233, 249—255, 259, 287, 289, 293, 294, 296, 306, 310—315, 320, 323, 324, 333, 334, 339, 340, 342—346, 349—355, 361—370, 372—375, 378, 394, 395, 397, 405, 406, 416, 425, 432, 434, 436, 437
Վեռ—135, 152, 154, 170
Վեսինդ—80, 105, 106
Վեսներ Ֆրիդր—239
Վերմոնտով Մ. Յու.—110
Վիանոզով—53, 54
Վիրկնեխտ Վ.—97, 158, 187, 216, 225, 236, 238, 242, 244, 294, 375, 387
Վիվշից Ս.—134
Վյաշչենկո Պ.—40, 57
Վյուբսենբուրգ Ռոզա—97
Վոնգի Շ.—243, 244
Վոսպատին Գերման—86—88, 91
Վորիս-Մելիքյան Հ.—178
Վուլին Իվան—273, 274
Վունաշարսկի Ա.—367
Վեին Լ.—78, 209

Խաչանասյան Սր.—20, 24
Խաժակ Դ. (Դ. Զաղալյան)—20, 233, 234
Խաժակյան Ա.—71, 260—262, 268, 269
Խալաթյան Դր.—212
Խալեյան Երվանդ—276
Խալտուրին Ս.—92, 260
Խանազատ Ռուբեն—20, 166, 169, 177, 178, 195, 212, 233, 234, 265
Խանիկով Ա.—111
Խանոյան Ս.—16, 27, 182, 260, 266, 298, 303, 318, 330, 436
Խաչատուրով Գ.—40
Խեյաձի Էկ.—372
Խոջամիրով—55
Խորենի Վահան—20
Խրիմյան Մ. (Հայրիկ)—410
Խրոմով Պ.—35
Խումարյան Ա.—16, 27, 240, 259—268, 290, 298, 300, 301, 303, 318, 330, 371, 376, 378, 379, 381, 436
Խումրիկյան Կ.—261
Խուշպուլյան Հր.—177
Խուրշուդյան Լ.—18, 162, 182, 183

Մատուրյան—53
Մատուրյան Ալ.—157
Մերեթելի Դ.—135, 137
Մուլուկիձե Ալեքսանդր—274, 330, 344, 345, 370, 372, 381

Կաղակևիչ Ռ.—134
Կաղարենկո Ն.—375, 392, 436
Կալեկինա Օ.—78, 83, 85, 89, 98
Կալեկչյան Մ.—335
Կալինին Մ. Ի.—255, 274, 435
Կախոյան Ա. (Բանվոր խնչո)—276, 281, 335, 336, 356, 357
Կամպանելլա—249
Կաշկին Ի.—111, 112
Կասյան Ս.—9, 16, 27, 175, 227, 228, 233, 355, 356, 363, 434
Կասպարով Վ. (Սլավա)—9, 27, 434
Կարապետյան Գ.—19, 20, 21
Կարապետյան Համբարձում—290
Կարինյան Ա. Բ.—181
Կարինյան Հ.—119
Կարպելս Դ.—239
Կաուցկի Կարլ—202, 208, 312
Կաֆյան Գարրիել (Շմավոն)—166, 169, 212
Կերբցյան Խաչատուր—169
Կեցխովելի Վլադիմիր (Լադո)—271, 274, 370—375, 377, 378, 382
Կեսրկեզյան Ա.—162
Կիբալչիչ Ն. Կ.—87
Կինճյան Ա.—20
Կիստյան—284
Կիտուր Ա.—20, 24, 25
Կիրակոսյան Ջ.—37
Կիրով Ս. Մ.—395

Կիրպոտին Վ.—95
Կլեզն Է.—272
Կլյավին Յա.—286
Կնիպովիչ Լ. Մ.—294, 372, 373, 375
Կնյազև Վ.—255
Կնունյանց Բ.—9, 13, 16, 20, 26—28, 153—155, 255, 256, 275, 298, 300, 301, 304, 310, 312, 313, 317, 322, 330, 331, 333, 337—341, 363, 370, 372, 378, 381, 391, 394, 407, 415, 425, 434, 435, 437
Կնունյանց Լյուդվիգ—288, 289, 391
Կնունյանց Տիգրան—289, 391
Կնունյանց Փառո (Ռիդել)—289, 290, 303, 391
Կոգան Իոսիֆ—274, 435
Կոլեշ Ս.—144
Կոմիտաս—228
Կոն Ֆ.—134
Կոնդուրով—43
Կոստովսկի Վ.—311
Կոստանդյան Գալուստ—127
Կոտով Վ.—77
Կորոլենկո Վ.—115
Կորվին-Կրուկովսկայա (Ժակլար)—86
Կվանտերա—63
Կվացխելիա Ս.—381
Կրասիլնիկյան Ե.—235
Կրասին Լ. («Նիկիտիչ»)—373, 435
Կրժիժանովսկի Գ.—255, 373
Կրոպոտկին Պ.—220, 221, 223, 226
Կրուպսկայա Ն. Կ.—293, 344, 374, 376
Կուզիկյան Գ. (Նսալեմ)—28, 230, 238, 276, 279, 315, 316, 359, 364, 372
Կոռնատովսկի Վ.—274, 297, 356, 387, 435
Կուցին Մ.—375

Հակոբյան Թ.—40, 68
Հակոբյան Կ.—165
Հակոբյան Հակոբ—232
Հակոբյան Միքայել—226
Համբարյան Ա.—18, 36, 37, 50, 182, 407, 419
Հայկունի Գուրգեն—216
Հարությունյան Արտյոմ (Արտյոմ Գիո)—283
Հարությունյան Արտաշ—291
Հարությունյան Գ.—182
Հարությունյան Մովսես (Արագի)—283
Հարությունյան Սեդրակ—291
Հարությունյան Սուրեն—151
Հարությունյան Վանո—283
Հարությունյանց—55
Հեգել—81, 129
Հերցեր—105
Հյուգո Վիկտոր—189
Հոմերոս—105
Հովզաննիսյան Ա.—109
Հովհաննիսյան Աշոտ—16, 17, 27, 36, 105, 107, 116, 117, 119—121, 126, 130, 154, 161, 164, 181, 182, 202, 203, 208, 312, 331
Հովհաննիսյան Հակոբ—227—229
Հովհաննիսյան Ռ.—18, 37, 141, 142, 163, 182
Հովնան Գուրգեն—364
Հոֆենդաուզեն Ն.—144
Հոֆենդաուզեն Ս.—144

Ձերժինսկի Ֆելիքս—268

Ղազարյան Հ.—18
Ղազիկյան Արսեն—212
Ղարաջյան Գեորգ (Ս. Տ. Արկոմեդ)—14—16, 135, 145, 146, 165—167, 190—201, 216, 219, 231, 241, 259, 273, 276, 296, 297, 317, 319, 381, 388, 389, 394, 431
Ղարդաշյան Ստ. (Կարդաշև)—136—139, 429
Ղարիբջանյան Բ.—27, 28
Ղարիբջանյան Գ. Բ.—18, 257
Ղորղանյան Ստ.—148, 149
Ղուկասյան Ադա—379
Ղուկասով—53

Ճգնավորյանց—392

Մադարաձե Թեոդոր—381
Մադարաձե Միրիման—381

Մաղմանյան Գարեգին—315
Մաթևոսյան Ե.—333
Մաիլով—53
Մաիլով Վ. Ռ.—271
Մալխասյան—70
Մալխասյան Ալեքսանդր (Սաշա)—337, 347
Մալխասյան Ստեփան—214
Մալկլոմ Ջեյմս—165
Մալչենկո Ա.—255
Մալումյան Խ. (Ակնունի Է.)—145, 177
Մախարաձե Ֆիլիպ—271, 274, 330, 381, 387
Մակարով Ա.—47
Մակեև Ն. Յա.—373
Մակինցյան Պողոս—356
Մամիկոնյան Կարապետ—379
Մամիկոնյան Կոնստանտին—139, 429
Մամուլով Նդոր—289
Մամուրյան Մաթևոս—127, 188
Մայորով Ֆ.—273, 274
Մայսուրյանց Խսահակ—103
Մանանդյան Հակոբ—212
Մանդլին Ի.—95
Մանթաշով (Մանթաշյան)—53, 54, 257, 390
Մանջավիձե—279
Մանուչարյան Հովհաննես—139
Մանուչարյան Մ. (Զար)—292, 352, 353, 354
Մանուչարյան Մկրտիչ—166, 169
Մարգարյան—284
Մարգուն Ի.—270
Մարտիկյան Սերգո—28, 260, 261, 265, 267, 268
Մարտիրոսյան Հովհաննես—301
Մարտիրոսյանց—55
Մարտով—337, 341
Մարտով Յու.—255
Մարցխուլավա Ի.—270
Մարուխյան Արարատ—399
Մարուքյան Օ.—335
Մարքս Կ.—5—7, 13, 20, 26, 27, 61, 65, 77—91, 93—101, 156, 158, 173, 181, 187, 189, 191—193, 195, 209, 210—212, 215, 216, 227, 231—236, 238—240, 250—252, 261, 264, 270, 278, 287, 291, 307, 308, 324, 326, 333, 354—356, 363, 365, 366, 372, 387, 391, 432, 433, 434, 437, 478
Մարքս-Էվլինգ (Էլեոնորա)—101
Մեդրելաշվիլի Դ.—134
Մեժլումյան—284
Մեժլումյան Ղևոնդ—228
Մելիք-Ազարյանց Ա.—43, 55
Մելիք-Ազամիրով—53
Մելիք-Գրիգորյան Գերասիմ—291
Մելիք-Կարագյոզյան—219, 228
Մելիք-Ղարագյոզով—55
Մելիք-Հովսեփյան Հ.—255, 258, 259, 392, 435
Մելիք-Յոլչյան Եր.—401
Մելիք-Ստեփանով—55
Մելիք-Փարսադանյան—55
Մելիքյան Արշավիր—285, 288, 289, 434
Մելիքյան Կ.—145
Մելիքյան Հենրիկ—335, 401
Մելիքյան Մելիք—28, 276, 278, 279, 298, 336, 372, 378, 388, 436
Մելիքյան Կամսար—405
Մեհրաբյան Ա.—260
Մեղավորյան Հակոբ—169, 212—214, 433
Մենդելսոն Մարի—239
Մենդելսոն Ս.—239
Մեսխի—136
Մերինգ Ֆրանց—97, 241
Միխայլովսկի Ն.—90
Միկոյան Ա.—28, 291, 292
Միրաբյան Մ. (Շանթ)—28, 295, 381
Միրզաբեկյանց—70
Միրզոյան—53, 66, 69
Միրզոյան Դ.—177
Միրզոյան Հ.—260, 267, 269
Միրիմանյան Գեորգ—103
Միքայելյան Քր.—145, 147, 176, 178
Մխիթար Վարդապետ—406, 409
Մկրտումյան Գ.—73, 276
Մյասնիկյան Ա. (Մարտունի)—9, 16, 21, 26—28, 130, 162, 163, 434
Մնացականյան Ար.—18, 240, 259, 260
Մնացականյան Պ. (Պիեր)—260, 268, 269

Մոնտին Մ.—274, 435
Մովսեսյան Ռաֆիկ—401
Մոր Թոմաս—249
Մորգան Լ.—214
Մռավյան Ա.—16, 17, 27, 28, 257, 335
Մուրադ—25
Մուրադյան Դ.—18, 43
Մուրադյան Հ.—260
Մուրադյան Հր.—105
Մուրադչան Մելքոն—157

Յախնովիչ Լ.—98
Յակովլև Ի.—255
Յարալով—60
Յարոսլավսկի Յեմ.—135
Յուզբաշյան Դ.—148

Նազարբեկյան Ավետիս—166, 170, 173, 175, 216, 238, 239, 243, 265
Նազարեթյան Ա.—176
Նազարյան Ստ.—103, 104, 116—118, 120, 122, 148
Նազարյան Ֆրիդրիխ (Նասյի)—103
Նազարյանց—392
Նաթանսոն Մ.—144
Նաիրի ժիրայր—24
Նալբանդյան Ն.—331, 379
Նալբանդյան Միքայել—11, 102, 116—119, 121—132, 136, 137, 146, 148, 151, 161, 184, 219, 230, 231, 261, 303, 313, 427, 428, 429
Նալչաջյան Արմենակ—388
Նակաշիձե (Բարվի նահանգապետ)—421
Նավասարդյան Վ.—20, 24
Նեժդանով Պ.—312
Նեկրասով—157
Նելլ Դ.—239
Նեսկի Վ.—78, 259
Ներկարարյան Վ.—336
Ներսիսյան Ա.—284
Ներսիսյան Դավիթ—140
Ներսիսյան Մ.—18, 36, 110, 135, 145, 146, 240, 421
Նիկոլաձե Եկատերինա—136
Նիկոլաձե Նիկոլայ—136, 137
Նիկոլաձե Օլգա—136
Նինոշվիլի Է.—271
Նորկ—53
Նովակ Ա.—270

Շաֆիրյան Մ.—176
Շահազիզ Ս.—118, 148
Շահբազ Ստ.—364
Շահվերդյան Դ.—16, 283, 298, 303, 379, 436
Շահումյան Ստ.—8, 13, 14, 16, 19, 21, 26—28, 51, 61, 63, 106, 155, 174, 175, 180, 181, 233, 235, 249, 255, 256, 282—286, 290—292, 298, 300—304, 330, 336, 347—350, 352—356, 358, 360, 362—364, 366, 367, 370, 381, 395, 411, 412, 425, 434, 436, 437
Շամբարյան Ա.—333
Շամբարյան Հ.—335
Շամբարյան Մ.—333
Շանշիև—402, 404
Շամշյան Պ.—120
Շաֆրան Պ.—270
Շելգունով Ն.—83
Շելգունով Վ.—255, 274, 378, 435
Շեպելովսկի Ն.—114
Շեպրով Ս.—73
Շերոպիր Վ.—105
Շրլեգանդ—239
Շիլլեր Ֆրանց—105, 106, 157
Շիրմազանյան Դ.—119, 161
Շիրվանզադե—153, 157
Շխյան Ս.—219
Շոպեն Ի.—35
Շչերբակով (Հարկային տեսուչ)—421
Շվարց—340
Շվեյցեր Զ.—147
Շտիրներ Մաքս—220
Շուստով—45

Ոսկանյան Ս.—284
Ոսկանյան Ստ.—127
Ոսկանյանց Ռ.—239, 240
Ոսկերչյան Արտաշես—105

Զալարով—55

Զախվաշվիլի Լ.—63, 69, 273, 386
Զաշին Բ.—78
Զոզրիաշվիլի Զ.—274
Զոզրիշվիլի Նիկո—380
Զոզրիշվիլի Սանդրո—380
Զոզրիշվիլի Վանո—380
Զոպանյան Ա.—157, 227
Զերաղ Մինաս—166
Զերենկով Ն.—270
Զերնիշևսկի Ն.—79, 80, 81, 83, 85, 90, 93, 124, 125, 136, 137, 249, 270, 283, 302, 428
Զերնյակ Ա.—85
Զերբեզաշվիլի Վ. (Զերբեզով)—220, 225
Զելինսկի—347
Զիլինգիրյան Գ.—127
Զիշերին Բ.—90, 91
Զիշերին Գ.—28
Զիվաձե Շոթա—270

Պաժիտնով Կ.—64
Պալյան Երվանդ—230, 233—238, 314—316, 359
Պատրիցին Ն.—79
Պատկանյան Գ.—116
Պատկանյան Ռ.—103, 104, 116, 143, 164
Պատկանյան Քերովբե—103
Պարոնիկյան Տ.—260, 262
Պարոնյան Ա.—335
Պարոնյան Շ.—335
Պարսամյան Վ.—18, 141, 148
Պարտիզոնի Վ.—105
Պերովսկայա Սոֆիա—260
Պեյարյան Մ.—20
Պետրաշևսկի Մ.—111, 112
Պետրոսյան Ա. (Սանդալ)—145, 147
Պետրոսյան Հ.—156
Պետրովիչ Պ.—61
Պետրովա Ն. Ֆ.—295
Պիճիկյան Գ.—53, 54, 359
Պիսարև—139
Պիսոև—53
Պիրոգով Բ.—270, 272
Պլեխանով Գ. Վ.—7, 13, 15, 81, 94—101, 190—192, 195, 200, 230, 241, 261, 273, 310, 311, 314, 339, 340—343, 345, 351, 354, 365, 367, 394, 422, 431
Պլեհ Վ.—410, 411
Պիասկովսկի Ա.—183
Պոգոդև Վ.—50, 51
Պոլեվոյ Յու.—78, 95, 96
Պոլևտան Ն.—255
Պոլյակով—88
Պոկրովսկի Ս.—78
Պողոսյան Ստ.—364
Պոպով Եգոր—69
Պոսկյանին Օ.—182
Պոստալեսկի Դ.—345
Պոտան Վ.—32
Պրեյս Ի. Ի.—85
Պրուդոն.—82, 220
Պուշկին Ա. Ս.—110, 296

Ջաբադարի Ի.—136, 137, 138, 271
Ջաբաշվիլի Վ.—279
Ջաղեիյան Գր.—218
Ջանիոյաղյան—55
Ջաշի Ռ.—378
Ջափարիձե Ա.—274, 330, 370
Ջուգաշվիլի Ի. (Ստալին)—274, 296, 330, 370, 377, 381

Ռադիշչև Ա.—79
Ռախլին Վ.—271
Ռայնիս Յան—268
Ռասպոպին Վ.—98
Ռիկարդո Դ.—89, 156
Ռյոդիգեր Լ.—83
Ռշտունի Վ.—18, 50, 148, 149, 150, 154, 159, 186
Ռոշին Ա.—57
Ռոստոմաշվիլի Դավիթ—380
Ռոտշիլդ—53, 54
Ռուբենի Ալ. (Ստեփանյան)—331, 359
Ռուգե Ա.—81

Սադաթյան Դարո—260, 269
Սադաթյան Մ.—118
Սաղանով Ն. Ի.—81, 84
Սաժին Ս. Պ.—86, 134
Սահակյան Եղ.—231

Սահակյան Ռ.—37
Սամեղով Վ.—18, 60, 64, 78, 84, 88, 134, 257, 270, 271
Սապան-Գուլյան—24
Սավինչ—347
Սարաչև Ալեքսանդր—135, 336
Սարաչև Դ.—44, 45
Սարգսյան Ն.—37
Սարգսյան Լևոն—156, 157, 178
Սարգսյան Կ.—284
Սարգսյան Ստեփան (Ստեսար)—104, 184
Սարգսյան Քրիստափոր—228
Սարգարյան Կարապետ—262
Սարկիսով Հայրո—389
Սաֆարյան Արշակ—139, 144, 429
Սաֆարյան Կարո—162
Սաֆարյան Վարվառա—144
Սաֆարյան Օլգա—139, 144
Սերգիևսկի Ն.—78
Սերբերյակով Ն.—144
Սեն Սիմոն—249
Սենկևիչ Հ.—157
Սեպկյան Կ.—268
Սերնո-Սոլովևիչ—126
Սիմոնյան Հրաչիկ—335
Սիմոնյան Պետրոս—103, 120
Սիմոնյան Վասիլ—291
Սիրվարդ (Եղիա Գրիգորյան)—24, 25
Սկուրարով—88
Սյունի Բ.—20
Սոխիկյան Ա.—335
Սոխիկյան Արզուման—405
Սոկոլով Պ.—98
Սոկոլովսկի Դ. Ն.—337, 347, 435
Սողոմոնով—55
Սպանդարյան Ս.—9, 13, 16, 19, 21, 26, 27, 160, 181, 233, 286, 287, 298, 336, 363, 370, 425, 434, 436, 437
Սպանդարյան Սպանդար—159, 160, 286, 287
Սպեշնև Ի.—111
Սվազլյան Մինրան—165
Սվաճյան Հ.—127
Ստարկով Վ.—255
Ստեպնյակ-Կրավչինսկի Ս. Մ.—91, 92, 239
Ստեփանյան Տ.—176
Ստոլիպին—383
Ստոյանով Պարսեն—224—226
Ստոպանի Ա. Մ.—350
Սարիբունով Ն.—59
Սարուվ Պ.—233
Ստուչկա Պ.—268
Ստուրա Նիկոլայ—299
Ստուրա Վ.—274, 373, 378, 379
Սրապիոնյան Ս. (Լուկաշին)—27
Սուլթանշահ Անանիա—118
Սուլթանով Մահմեդ Ագա—398
Սունդուկյան Դ.—153
Սուրբոտինա Վերա—138
Սուրբոտինա Օլգա—138

Վագներ Ս.—105
Վալե Մ.—78
Վալերա Պաոլո—239
Վախմինա—347
Վախթանգով Տիգրան—380, 381
Վանեև Ա.—255
Վաչյան—284
Վարանդյան Մ. (Հովհաննիսյան)—20, 24, 176, 178, 219, 233—235
Վարդանյան Ա.—372
Վարդանյան Ալեքսանդր—276
Վարդանյան Անուշավան—378
Վարդանյան Դր.—232
Վարդանյան Հ.—18
Վարդանյան-Նազարբեկյան Մարո—166, 215, 216, 238
Վարդանյան Վասիլ—271, 272
Վարդոյան Գևորգ—296, 297
Վացեկ Ի.—274, 275
Վերմիշյան Ալեքսանդր—144
Վիլինսկայա Ն.—134
Վլադիմիրցև Ի.—182
Վոլգին Վ.—109
Վոլխովսկի—239
Վոյնիչ Է.—224
Վորորյով—337, 347
Վորովսկի Վ. Վ.—85
Վրացյան Ս.—23, 24

Տարոնցի Գլակ—230
Տեր-Ակոպով—53

Տեր-Ավետիքյան—44
Տեր-Բարսեղյան Հ. (Հրաչյա)—149
Տեր-Գաբրիելյան Ս.—9, 27, 28, 434
Տեր-Գրիգորյան Արամ—283
Տեր-Գրիգորյան Սիմեոն—140
Տեր-Գրիգորյան Սրապիոն—140
Տեր-Հարությունյան Արտյոմ—229, 276, 296, 315, 388
Տեր-Հարությունյան Նիկողայոս (Հարս)—229
Տեր-Հովհաննիսյան—284
Տեր-Ղազարյան Ղազար—359
Տեր-Ղազարյան Նարիման—359
Տեր-Ղևոնդյան Ռ. (Ղևոնդյան)—283, 307
Տեր-Մկրտչյան Գ. (Միսրան)—145, 150
Տեր-Մովսիսյան Հ.—148, 149
Տեր-Պետրոսյան Սիմոն (Կամո)—9, 323, 371, 380, 381, 434
Տեր-Սիմոնյան Սիսակ—266—269
Տեր-Ստեփանյան Ս.—260
Տերյան Վահան—284, 434
Տերտերյան Ար.—105
Տկաչենկո Պ.—134, 135
Տկաչով Պ. Ն.—83
Տոլստոյ Լ. Ն.—157
Տոմանովսկայա Վ.—86
Տոնիկյան Ա.—235
Տոտոմյանց Վ.—157—159, 228
Տվեն Մարկ—138
Տրաֆիմով Ա.—135
Տրոցկի—337, 341
Տրուսով Անատոլ—86
Տուրգենև—202
Տուրգենև—230

Բաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան)—151, 153, 315

Բելլյար Էլ.—221
Բեռել Ա.—78, 91

Ցեռկին Կլարա—97, 202, 244
Ցխակայա Միխա—271, 274, 321, 330, 336, 344, 377, 381
Ցուլաձե Վ.—373

Ուլյանով Ա. Ի.—144, 251
Ուլյանով Ի. Ն.—251
Ուլյանովա Մարիա—251
Ուլյանովա Օլգա—251
Ուլենցի Վ.—25
Ուշիկաշվիլի—61
Ուսպենսկի Գ.—70
Ուտին Ն. Ի.—85, 86

Փարամազ—25
Փափազյան Հ. —103
Փիլոսյան Պողոս (Ադամյան Հայկ)—276, 278, 279, 281, 372, 381
Փիրուզյան Ս.—335
Փիրումյան Ա.—139
Փիրումյան Ն.—284, 285
Փոթեյան Վարդան—218
Փորթուգալյան Մ.—161, 165, 192

Քալանթաձե Չիչիկո—381
Քալանթար Ալ.—57, 148, 149, 152
Քալանթար Անուշավան—228
Քալանթար Լևոն—152
Քեյշ Հենրի—239
Քեշիշյան Խ.—276
Քուչերեյան—284

Օրնոսկի Վ.—92
Օգարև Ն.—125, 126, 166, 428
Օհանյան Ա.—40
Օհանյան Քրիստափոր—166
Օհանջանյան Լևոն—103
Օհանջանյան Շահեն—231
Օսվալդ—239
Օրաղվելիձե Կ.—40, 53
Օրմանյան Մաղաքիա—409
Օուեն Թոմաս—249, 291

Ֆեդոսեև Ն.—252
Ֆեոդորով Բ.—140
Ֆիդլեր Վ.—144
Ֆիլիպով Ի.—274, 435
Ֆլաուն Լ.—285
Ֆլերով Ն.—144, 273
Ֆլերովսկի Ն. (Բերվին Ն. Ն.)—93, 271
Ֆոյերբախ Լյուդվիգ—98, 123
Ֆրանչեսկի Գ.—274, 297, 356, 387
Ֆրանս Անատոլ—244
Ֆրեյրբերգ Լ.—239
Ֆուրյե Շարլ—111, 113, 151, 249, 291

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Կարլ Մարքս
2. Ֆրիդրիխ Էնգելս
3. Վ. Ի. Լենին
4. Միքայել Նալբանդյան
5. Կարլ Մարքսի «Կապիտալ»-ի առաջին հրատարակության անվանաթերթը։ Դրքի մեկ օրինակը պահվում է Հայկական ՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում
6. Գ. Վ. Պլեխանով
7. Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմ» գրքի հայերեն առաջին հրատարակության անվանաթերթը
8. Դմիտրի Ախշարումով, Ստեփան Ղարդաշյան
9. Գեորգ Ղարաջյան (Ս. Տ. Արկոմեդ), Հովսեփ Աթաբեկյանց
10. Վիկտոր Կուռնատովսկի, Գեորգի Ֆրանչեսկի
11. Միխայիլ Կալինին, Սերգեյ Ալիլուև
12. Խաչակ Լալայանց
13. Բոգդան Կնունյանց
14. Արշակ Զուրաբյան
15. Ստեփան Շահումյան
16. Լադո Կեցխովելի
17. Սուրեն Սպանդարյան
18. Ալեքսանդր Ծուլուկիձե
19. Մեշեդի Ազիզբեկով
20. Ռիգայի Ստ. Շահումյանի մարքսիստական «Թեորետիկ» խմբակի անդամները
21. Սիմոն Տեր-Պետրոսյան (Կամո)
22. Բանվոր հեղափոխականներ.—Մելիք Մելիքյանց (Դեղուշկա), Ասատուր Կոնոյան (Բանվոր Խեչո), Պողոս Փիլոսյան (Հայկ Ադամյան)
23. Ջալալօղլու Ստ. Շահումյանի մարքսիստական խմբակի անդամները.—Աշոտ Բումանյան, Ստ. Շահումյան, Անուշավան Բումանյան, Սերգո Իսրայելյան, Նիկոլայ Դաղիվանյան, Արտուշ Հարությունյան, Սեդրակ Հարությունյան
24. «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» անդամները.— Ստ. Շահումյան, Ա. Զուրաբյան, Բ. Կնունյանց, Մ. Մելիքյանց, Ս. Խանոյան, Դ. Շահվերդյան, Ա. Խումարյան, Ա. Երզնկյան, Ռ. Դաշտոյան
25. «Հայ սոցիալ-դեմոկրատների միության Մանիֆեստ»-ի ռուսերեն թարգմանության առաջին էջը։ Թարգմանությունը 1902 թվականին կատարել են Վ. Կուռնատովսկին, Դ. Ֆրանչեսկին Միտելի բանտում

26. Դեորգի Սոկոլովսկի. Իվան Լիուդին
27. Մի էջ Կ. Մարքսի «Կապիտալ»-ի Ստ. Շահումյանի ուսումնասիրությունից
28. Ալեքսանդր Բեկզադյան (Յուրի)
29. Արշավիր Մելիքյան
30. Սարգիս Կասյան (Ս. Տեր-Կասպարյանց)
31. Մարտիրոս Մելքաբյան (Բանվոր Շանթ)
32. Մարքսիստական թերթեր, որոնք հրատարակվել են Կովկասում մինչև ռուսական առաջին հեղափոխությունը
33. Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի 1904 թ. Ստ. Շահումյանի թարգմանության անվանաթերթը
34. Վ. Ի. Լենինի «Միապետությունը տատանվում է...» հոդվածը, որը 1903 թվականին «Իսկրա»-ից թարգմանվել և հրատարակվել է ՌՍԴԲԿ կովկասյան միության օրգան «Պրոլետարիատի կոիվը» թերթում
35. ՌՍԴԲԿ Կենտկոմին կից ժնևյան հրատարակչական հանձնաժողովի հայերեն հրատարակությունների անվանաթերթերը

Նկարները վերցված են ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվի, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության Պետական հեղափոխության թանգարանի, Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանի, Սանկտ-Պետերբուրգի Շահումյանի տուն-թանգարանի համապատասխան ֆոնդերից։ Այն արտալուսանկարել են Ս. Պետրոսյանը, Բ. Մավիսակալյանը և Ա. Ահեմյանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան . . . . . 5—11
Ներածություն . . . . . 13—28
Գրականության և աղբյուրների տեսություն . . . . .
1. Գրականություն։ 2. Սկզբնաղբյուրներ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՏՅԱԼՆԵՐԸ

Գլուխ առաջին.—Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը XIX դարի երկրորդ կեսին, XX դարի սկզբին . . . . . 31—51
1. Արևելյան Հայաստանը հայ ժողովրդի համախմբման օջախ։ 2. Երկու քաղաքականություն, երկու ճակատագիր։ 3. Ռուսաստանի դերը արևելահայերի տնտեսական զարգացման գործում։

Գլուխ երկրորդ.—Աշխատանքային հայ պրոլետարիատի ձևավորումը . . . . . 52—64
1. Նախադրյալներ։ 2. Ոչ-հողագործական արտադրություններ։ 3. Երկրամասի հայ բանվորների դինամիկան։

Գլուխ երրորդ.—Բանվորական շարժման նախադրյալները . 65—74
1. Բանվորների դրությունը։ 2. Առաջին ծաղիկները։ 3. Հայաստանի երկաթուղային բանվորների տարեբային պայքարները։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՏՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլուխ առաջին.—Մարքսիզմը՝ ռուսական հասարակական և հեղափոխական մտքի ուղղություն . . 77—101

1. Մարքսիստական գաղափարների թափանցումը Ռուսաստան XIX դարի 40—70-ական թվականներին։ 2. Շրջադարձ դեպի մարքսիզմը։ 3. «Աշխատանքի ազատագրություն» խմբի հրատարակությունները։

Գլուխ երկրորդ.—Արևելահայ հասարակական միտքը հեղափոխական շրջանում . . . . . 102—131

1. Մեծ լուսավորիչն ու մտածողը։ 2. Հայ անդրանիկ ուտոպիստ-սոցիալիստը։ 3. «Հյուսիսափայլ»-ը և նրա դիմաշրջումը դեպի հեղափոխական լուսավորականություն։ 4. Հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքը և նրա առաջնորդ Միքայել Նալբանդյանը։

Գլուխ երրորդ.—Հայ հասարակական-քաղաքական մտքի ուղղումները . . . . . 132—245

1. Հայ նարոդնիկները 1870—1880-ական թվականներին։ 2. Ազգային կուսակցությունների առաջացումը և նրանց քաղաքական ծրագրերը։ 3. Արձագանքներ։ 4. Մարքսիստական գրականության հայերեն թարգմանության նախափորձերը։ 5. Սովորող երիտասարդությունը հասարակական գաղափարների ուղիներում։ 6. «Վերջալույս մարքսիզմ»-ը հայ մամուլում։

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԷՏԱՊԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ առաջին.—Մարքսիստական հայ հասարակական-քաղաքական մտքի զենիթը . . . . 249—319

1. Ռուսաստանը լենինիզմի հայրենիքն է, հեղափոխական մարքսիզմի կենտրոնը։ 2. Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» հայ անդամները։ 3. Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացան։ 4. Ռուս մարքսիստները Դոլիկասում։ 5. Ջալալօղլու Ստ. Շահումյանի մարքսիստական խմբակը։ 6. Լենինյան իսկրայական առաջին կազմակերպությունները երկրամասում։ 7. Լենինյան «Իսկրա»-ի առաքումը Հայաստան։ 8. Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը։ 9. Հեղափոխական մարքսիզմի հայերեն անդրանիկ տպագիր օրգանը։ 10. Վ. Ի. Լենինը «Պրոլետարիատ»-ի մասին։ 11. «Պրոլետարիատ»-ը և նրա քննադատները։

Գլուխ Երկրորդ.—Հայ հասարակական-քաղաքական միտքը բոլշևիկյան ուղիներում . . . . . 320—384

1. Բոլշևիկյան գաղափարախոսությունների ձևավորումը։ 2. Կովկասյան պատգամավորները ՌՍԴԲԿ II Համագումարում։ 3. Ժնևյան մարքսիստական հայերեն հրատարակությունները։ 4. Վ. Ի. Լենինի աշխատությունները հայերեն։ 5. Կուսակցության ընդհատակյա տպարանները։

Գլուխ Երրորդ.—Հեղափոխական փորձի նախօրեին . . 385—422

1. Նախագուշակը։ 2. Բանվորական շարժման վերելքը։ 3. Հայկական գյուղի գարթնումը։ 4. Հաղպատի գյուղացիների 1903 թվականի հեղափոխական ելույթները։ 5. Ժողովրդական, հակացարական շարժումները։

Резюме . . . . . 423—438

Անձնանունների ցանկ . . . . . 439—451

Նկարների ցանկ . . . . . 452—453

ՀԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. Շաղամյան
Նկարչական ձևավորումը՝ Գ. Բ. Տիրատուրյանի
Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. Կափլանյան
Սրբագրիչ՝ Լ. Կ. Հարությունյան

ՎՖ 04500 Հրատ. 2858 Խմբ. 1095 Պատվեր 1647 Տպաքանակ 1000

Հանձնված է արտադրության 29/IV 1967 թ., ստորագրված է տպագրության 31/X 1967 թ., տպագրական 28,5 մամ.,+35 ներդիր, Հրատ. 26-42 մամ.։ Թուղթ № 1 60×90¹/₁₆։ Գինը 1 ռուբ. 86 կոպ.։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 6 տպարան, Երևան, Թումանյան փ. № 51։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220041860

II
नि४१३६०